891. 99 ref.

Pungu

9-12/1990



digitised by A.R.S.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ, ՍՍՀՄ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ, ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ։

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Վազգէն Ա. Կաթողիկոս / Գարեգին Բ. Կաթողիկոս / Նշան Պէշիկեան / Գրիգոր Զանիկեան / Յովհ. Շիրազ / Եղիշէ Սարգսեան / Լեւոն Խիվերդեան / Աւիկ Իսահակեան / Աւետիք Իսահակեան / Համօ Սահեան / Յակոբ Արզումանեան / Գուրգէն Մահարի / Իգնատ Մամեան / Մեսրոպ Արք. Աշճեան / Սերօ Խանզադեան / Ժագ Ս. Յակոբեան / Հենրիկ Մայեան / Ռազմիկ Դաւոյեան / Լեւոն Տէր Պետրոսեան / Իգոր Մուրադեան / Բակուր Կարապետեան / Ռուբէն Յովսէփեան / Վահագն Դաւթեան / Սիլվա Կապուտիկեան / Յակոբ Կարապենց / Դաւիթ Պետրոսեան / Յովիկ Մուսայէլեան / Արտաշէս Ղազարեան / Հրաչիկ Սիմոնեան / Դաւիթ Յովհաննէս / Կամօ Ալեքսանեան / Մկրտիչ Սարգսեան / Դաւիթ Միքայէլեան / Վահէ Օշական / Պարգեւ Եպս. Մարտիրոսեան / Շիրազ Մարտիրոսեան / Միքայէլ Յարութիւնեան / Արտեմ Յարութիւնեան / Ռայա Խասապետեան / Լէոնիդ Հուրունց / Վլադիմիր Դմիտրիեւսկի / Բոգդան Զանեան / Լեւոն Մկրտչեան / Աշոտ Գրաշի / Գուրգէն Գաբրիէլեան / Արմէն Շէկոյեան / Արամ Սարգսեան / Վարդան Յակոբեան / Աշոտ Աղաբաբեան / Հրաչեայ Բեգլարեան / Ռոբերտ Եսայեան / Սերգէյ Սարինեան / Նուարդ Աւագեան / Էռնեստ Եսայեան / Հրանդ Ալեքսանեան / Լեւոն Մկրտչեան / Վարանդ / Զօրայր Խալափեան / Աշոտ Արզումանեան / Քնարիկ Աղախանեան / Ազատ Վշտունի / Սարմեն / Օսման Սարիլելի / Թեւոս Պետրոսեան / Բախտիար Վահաբզադէ / Գէորգ Աղաջանեան / Ռուզան Առաքելեան / Մ. Ա. Գասպարեան / Ռազմիկ Մադոյեան / Վանիկ Սանթրեան / Իլիա Միքայէլեան / Կարինէ Քերոբեան / Սուրէն Մուրադեան / Երուանդ Պետրոսեան / Անտրէյ Սախարով / Ելենա Բոնների-Սախարով / Ալվարդ Ղազիեան / Արշաւիր Դանիէլեան / Նորայր Հայրապետեան / Գէորգ Օհանեան / Սասուն Գրիգորեան / Արտաշէս Սարինեան / Թեւան Ահարոնեան / Յասմիկ Դարեան / Հրաչեայ Թամրազեան / Նորայր Արզումանեան / Գէորգ Էմին։

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԹ. ՏԱՐԻ ԹԻՒ 9 – 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 1990 ՊԷՅՐՈՒԹ

ԱՐՑԱԽԻ ՈԳԻՆ

Ղարաբաղեան հարցին առանձին թիւ մը նուիրելու «Բագին»ի որոշումը նոր որոշում մը չէ, ուրուագծուած էր անիկա հերթական պայթիւններէն վերջինին վաղորդայնին, շուրջ երեք տարի առաջ, բայց դէպքերու հոլովոյթին հետ խմբագրութիւնս առաւ երկրորդ որոշում մը, — բացառիկը լոյս ընծայել հարցին վախճանական փուլէն ետք միայն: Եւ որովհետեւ ակնկալուած արդիւնքը չարունակեց բաղձանքի սահմաններուն մէջ մնալ եւ անհեթեթ պիտի ըլլար չարունակուող իրադարձութիւններուն հետ չարունակել մեծաւ մասամբ արդէն չարուած ու կազմուած էջերուն հրատարակութիւնը յետաձգելու միտքը, նպատակայարմար համարեցինք ներկայ միացեալ թիւերը յատկացնել անոնց:

Խմբագրութիւնս նպատակադրած էր նաեւ Ղարաբաղեան Հարցը ընդգրկել միայն մշակութային դիտանկիւնէն, հնարաւոր սահմաններուն մէջ տալ անոր գրական ու մշակութային երեսներուն ամփոփումը միայն, սակայն պայմաններու ստիպումով չափով մը շեղեցանք այդ նպատակէն, այսինքն՝ արուեստով տրուած գրութիւններուն չափ մեղմէ էջ խլեցին պատմական ու քաղաքական յարակից հարցերը, գրեթէ կրկնելով նկարագիրը Հայաստանի թէ Սփիւռքի մեր մամուլին գրական թեւերուն, որոնց էջերուն մեծ մասը գրաւուած մնացին ու մինչեւ օրս գրաւուած կը մնան անիրաւութեամբ խլուած, անիրաւութեամբ կնճռոտած ու անիրաւ տիրոջներու միացեալ դաւով վտանգի ենթարկուած հայրենի նոյն եզերքին կապուած խռովքներով, խոհերով, տրամաբանութեամբ:

Փաստօրէն, Ռուսաստանը «լենինեան բարեկամութեան արեւի ներքոյ» ապրող իրարահաւասար ժողովուրդներու դիրքերէն

digitised by A.R.A.R.@

չդիտեց Ղարաբաղեան հարցը, այլ անոր նայեցաւ դարձեալ հին ու նոր, սպիտակ թէ կարմիր ցարերու ակնոցով, արդարութեան դինիէն նախամեծար համարելով նաւթային արբեցումը, չատ հոլովուած եղբայրութենէն աւելի ուժ տալով թուրքին ու թրքութեան, բոլորովին ոտնակոխ ընելով պատմական ճշմարտութիւնը, դարերով սրբագործուած իրաւունքը, արդարութիւն ըսուած սրբութիւնը: Այսքան տարի եղբայրութիւն հոլոված եւ առնուազը Աբովեանէն ի վեր անընդհատ օրհներգուած մեր «աւագ եղբօրմէն» կը սպասուէր, որ քիչ մը եղբայրութիւն դնէ իր քաղաքական վարքագիծին մէջ եւ արտօնէ, որ նոյն կուսակցութեան բջիջներէն այս մէկը չիչխէ Ղարաբաղի վրայ, այլ իչխէ այն մէկը, հողին տէրը, պատմութեան տէրը, ճշմարտութեան տէրը:

Խորհրդային կարգերու օրօք մայր հայրենիքին միանալու ղարաբաղեան բաղձանքը 1988 թուականի Փետրուարին չէ, որ դրսեւորուեցաւ առաջին անգամ, այդ բաղձանքը չորս ու թերեւս ալ աւելի առիթներով բանաձեւուեցաւ ու ներկայացուեցաւ Կրեմլի իշխանաւորներուն, բայց ինչպէս ըսուեցաւ, անիկա միշտ ալ բախեցաւ ձգձգեալ կամ կտրուկ մերժումներու, առիթ տալով խոր պատրանաթափութեանց ու դառն յուսաբեկումներու:

Հարցին դրուածքը նոյնը ըլլալով հանդերձ, այս անգամ նախորդ դրսեւորումներուն նկարագիրը չունէր սակայն Ղարաբաղեան պահանջատիրութիւնը, աւելի ուժգին էր անիկա այս անգամ, աւելի վճռական ու ծաւալուն, ներգրաւելով ո՛չ միայն տուեալ տարածքին տառապող բազմութիւնները, այլեւ՝ իր ազգային զգացումին մէջ խորապէս խոցուած ողջ հայութիւնը, ներկայ Հայաստանի մէջ չնչող միլիոններուն հետ իր յորձանքին մէջ առնելով նաեւ ներքին թէ արտաքին Սփիւռքներու միլիոնները: Սարդարապատի ու դուզակլիի միւս ճակատամարտներու օրերէն ի վեր, ինչպէս կը հաստատեն մեր պատմաբաններն ու գրողները, ո՛չ մէկ առիթով եւ ոչ մէկ ժամանակ մեր ժողովուրդը այսքան միաձոյլ ամբողջութեամբ մը չէ ներկայացած պատմութեան եւ դժուար չէ եզրակացնել, որ ներքին այս միութիւնը վճռական անդրադարձ մը ունեցաւ պայքարին երկարակեցութեան վրայ:

Աւելի մանրամասնելով ըսենք, որ նման առիթներու՝

Առաջ հալածանքներ կը շղթայազերծէին մեզի դէմ ու մենք կորագլուխ կ՚ենթարկուէինք բռնաւորներուն կամքին:

Կ՚աքսորէին ու լուռ կը տարտղէինք:

Թշնամին, թշնամիները նոյնն են հիմա, ու թշնամիներուն բարեկամները նոյնն են նորէն, բայց մենք նոյնը չենք: Փոխուած ժամանակներուն հետ վերափոխուած ժողովուրդը այս անգամ

digitised by A.R.A.R.@ 26520-123

2 013

արիաբար ծառացաւ թշնամիին բարձրացուցած սուրին դէմ ու մերժեց ընդունիլ թշնամին հովանաւորող ցօրաւորին փիլիսոփայութիւնը, շարունակելով մնալ պատնէշին վրայ, աղաղակելով անընդհատ. «Այդ հողը մերն է, մերն էլ կը մնայ»:

Ղարաբաղեան պոռթկումին առընչուող երեւոյթներէն ամէնէն ընդգծելին դուցէ այս էր, այս հոգեփոխութիւնը, այս հրաշալին:

Անցնող կէս դարուն ապրիլը մոռցած ու մեռնիլ չգիտցող, մեռնելու փառքին անմասն ու ապրիլը անասնական չրջանի մը վերածած գորշ զանգուածի վերածուած էր մեր ժողովուրդը իր ջախջախիչ մեծամասնութեամբ, զոր Ղարաբաղեան շարժումը մէկ օրէն միւսը վերադարձուց իր էութեան, վերածեց իրաւ ժողովուրդի մը, մեզի ծանօթ հազարամեայ ազգին, կուռ միասնականութեամբ, ինքնուրոյն տեսլականով, պայքարի անկոտրում ոգիով, նոյն առեն ափ ի բերան ձգելով իր ծոցին ծնած ու ամէն օր իրեն հետ չնչող տագնապահար ընտրանին, գրողներու ու արուեստագէտներու խաւը, որ մինչեւ երէկ կոտտացող վէրք մը կը կրէր համատարած այլասերման ի տես, իսկ այսօր առհաւական արժանիքներու ծլարձակման մը հրճուանքը կ'ուեռէ չարունակ...

Իրենց սուրերը մեզի դէմ ճօճող կողմերը եւ ատամները կճրտացնող միւսները մասամբ զգացին մեր մայր զանգուածին մէջ մայր գիծերուն այդ հրաշափառ յարութիւնը եւ օր մը ամէնքը մէկ անպայման պիտի անդրադառնան, որ հայրենիքի մը ճակատագրին հետ խաղալը այնքան դիւրին գործ չէ, երբ արթուն է ազգը, ու ազգային ապրումները հրամանագիրներու հրազէններով կարելի չէ լռեցնել, երբ յանուն արդարութեան ոտքի ելած են խելագարուած ամբոխները:

1988 թուականի Փետրուար 20էն ի վեր, մեր ժողովուրդը, հոն թէ հոս, ամէնուրեք, արցախեան ապրում է, արցախեան խրոովք, արցախեան կանչ, արցախեան հպարտութիւն, արցախեան ողբերգութիւն, զարմանք, ապշութիւն, միասնականութեան կոչ նորէն, յարուցիչ ուժ, մենք մեզ ըլլալու հրամայական:

Այսօր այսպէս է իրականութիւնը, տարբեր չէր երեք քառորդ դար առաջ, վաղը նոյնը պիտի մնայ, որովհետեւ Արցախը դարաւոր ժառանգութիւն է մեզի համար, պատմութիւն է, կրօնք է, գրականութիւն է, արուեստ է, սիրագործ արարքներու շրջթայ.— Հայաստան:

Ու այս ամէնուն մէկ պզտիկ ամփոփումն է «Բագին»ի ներկայ բացառիկը, հայելին, ցոլքը...

digitised by A.R.A.R.@

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

Շուրջ երկու շաբաթներէ ի վեր, խորհրդային իշխանութիւնները բիրտ ճնշումներ ի գործ կը դնեն Հայաստանի մէջ, խափանելու համար հայ ժողովուրդի արդար պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիացուած տեսնելու Մայր Հայրենիքին: Արդարութեան եւ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն պահանջատէր կանգնող հարիւրաւոր հայրենասէրներու ձերբակալութիւնները յայտարար-նշան են Մոսկուայի իշխանութեանց որդեգրած այս խիստ քաղաքականութեան, որուն կ'ընկերանայ՝ մամլոյ եւ տեղեկատուական միջոցներու օգտագործումով, խեղաթիւրումներու եւ ամբաստանութիւններու ճամբով, ակնյայտ ճիգ մը՝ վարկաբեկելու ո՛չ միայն սոսկական շարժում մը եւ անոր ղեկավար անդամները, այլեւ՝ փաստօրէն ամբողջ հայ ժողովուրդը, որ անխտիր ու անվերապահ կերպով զօրավիգ է Արցախեան պահանջատիրութեան:

7 Դեկտեմբերի անմոխրանքաց երկրաշարժի պատճառած ադէտին մէջ, որ իր խլած մարդկային անհամար զոհերով եւ պատճառած նիւթական վիթխարի աւերներով ցնցեց համայն մարդկութիւնը եւ որ հայ ժողովուրդի կրած դարաւոր ողբերգութեանց վրայ եկաւ աւելնալու իբրեւ կոտտացող նոր վէրք, առնուազն զարմանալի կը թուին կեդրոնական իշխանութեանց կողմէ Հայաստանի մէջ շղթայազերծուած հալածանքները: Զարմանալի՝ նաեւ անոր համար, որ Մոսկուայի վարիչներուն մտրակն ու սպառնալիքները կ'ուղղուին այսպէս կոչուած «հայ ազգայնականներու գրգռիչ արտայայտութիւններուն եւ արարքներուն դէմ», որոնք ըստ ամենայնի արդար ընդվզումի պոռթկումներ են հանդէպ Պաքուի եւ Կիրովապատի փողոցներուն մէջ «մա՛հ հայերուն» գոռացող ամբոխներուն: Հանդէպ անոնց՝ որոնք երէկ Սումգայիթի մէջ հայերու դէմ նախնիներ կը սարքէին, Ղարաբաղի եւ Ատրպէյճանի հայաբնակ շրջաններուն մէջ սպանդներ կը գործէին՝ հաւաքական կողոպուտի, երկիզումի, ահ ու սարսափի եւ մահուան սպառնալիքի տակ աւելի քան երկու հարիւր հազար հայեր տեղահան դարձնելով իրենց տուներէն եւ հայրենի բնօրրանէն:

Զարմանալի ըլլալէ աւելի ընդվզեցուցիչ է արդարեւ այն իրողութիւնը, որ կորպաչեւեան վարչակարգի այս օրերուն, Մոսկուա տակաւին անգիտանալ կը ձեւացնէ այս բոլո-

digitised by A.R.A.R.@

բը եւ սաստումի ու զսպումի ոչ մէկ գործնական միջոցառումի կը դիմէ՝ զգաստութեան հրաւիրելու համար Պաքուի փան-թուրանական դեկավարները, որոնք կը հանդիսանան հակահայ գրգռութեանց բուն իսկ կազմակերպիչներն ու պատասխանատուները:

Լեռնային Ղարաբաղի Հայաստանին վերամիացումը հայկական համընդհանուր պահանջ է ե՛ւ հայրենի հայութեան, ե՛ւ սփիւռքահայութեան համար. բայց ամէնէն առաջ անկապտելի իրաւունքն է ան նոյնիսկ Ղարաբաղի հայութեան, որ պարբերաբար ենթարկուած ըլլալով ջարդերու, հալածանքի եւ տեղահանութեանց՝ դարաւոր եւ դառն փորձառութեամբ գիտէ, թէ ի՛նչ կը նշանակէ փան-թուրանական ազգայնամոլներու տիրապետութեան տակ ապրիլը: Հասկնալի է, հետեւաբար, որ ան անդուլ պիտի շարունակէ իր պահանջատիրութիւնը ի խնդիր արդար լուծումի մը՝ վախճանական նպատակը ունենալով իր ազատագրումը այդ անարգ լուծէն:

Հայ ժողովուրդը պարզապէս արդարութեան պահանջ ունի խորհրդային դեկավարութենէն, որ ազգերու միջեւ եղբայրութեան եւ միջազգայնութեան իր առաջադրութեանց սիրոյն իսկ պարտի սրբագրել անցեալի սխալները, այս պարագային, ստալինեան շրջանի հայ ժողովուրդին դէմ գործուած պատմական այս մեծ սխալը: Իսկ այդ սխալը սրբագրելու համար խորհրդային իշխանութիւնները պարտաւոր են նախ հասկացողութիւն ցոյց տալ հայ ժողովուրդի արդարացի ընդվզումին հանդէպ. դադրեցնել ճնշումի եւ հալածանքի քաղաքականութիւնը՝ օրինաւոր ու արդար պահանջներով հանդէս եկող ժողովուրդի հայրենասէր զաւակներուն դէմ եւ, վերջապէս, որոնեն ու գտնեն յարմարագոյն ուղիները, որոնք պէտք է ի վերջոյ յանգին Լեռնային Ղարաբաղի Հայաստանի վերամիացման:

Ա՛յս է մեր համոզումը եւ կը հաւատանք, որ այլ ճամբայ չկայ ազգային հարցի ուղիղ եւ արդարացի լուծման համար:

Այլապէս՝ Կոմկուսի առաջին քարտուղար Միխայիլ Կորպաչեւով սկսած ժողովրդավարականացման եւ վերակառուցման ժամանակաշրջանը դատապարտուած է յատկանշուելու այն բոլոր սխալներով ու ճնշամիջոցներով, որոնցմով կը մեղադրուին խորհրդային նախորդ վարչակարգերը: Խորհրդային իշխանութիւնները իրաւունք չունին խուսափելու արդարութեան կոչին դիրքորոշուելու իրենց այս պատմական պատասխանատուութենէն, որովհետեւ պարզ հաշտարարէ աւելի՝ մեր ժողովուրդը արդարամիտ դատաւորի կեցուածք կ'ակնկալէ խորհրդային ներկայ դեկավարութենէն:

21 Դեկտեմբեր 1988 Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ

digitised by A.R.A.R.@

...Փետրուարի վերջերին Ղարաբաղի հայ ազգաբնակչութիւնը միահամուռ որոշումով ցանկութիւն յայտնեց միանալ մայր Հայաստանին: Այդ որոշումը սահմանադրական էր եւ օրինական: Սովետական Հայաստանի եւ արտասահմանի հայերը, հիացումի արժանի միասնութեամբ, պաշտպան կանգնեցին ղարաբաղցիների արդար սպասումներին: Երկու ամիս շարունակ տեղի ունեցան հաւաքական գանգուածային ցոյցեր՝ միշտ համազգային միասնութեամբ ու կարգապահութեամբ, առանց որեւէ չափով խանգարելու մեր երկրի բնականոն կեանքի ընթացքը, ամէն ոք իր աշխատանքին լծուած մնաց:

Այս օրինական պահանջը իր գագաթնակէտին հասաւ Յունիսի 15ին, երբ մեր հանրապետութեան վերին իշխանութիւնը պաշտօնապէս հաւանութիւն տուեց Ղարաբաղի մարզի Սովետական Հայաստանի միացման եւ դատապարտեց Սումգայիթում տեղի ունեցած ոճիրները հայերի դէմ:

Մեր հայրենի պետութիւնը արանից աւելին չէր կարող անել այս պահին: Սակայն ես քաջ տեղեակ եմ, որ բոլոր հնարաւոր ճանապարհներով այս հարցի արդար լուծումը պիտի շարունակուի հետապնդուել, մա՛նաւանդ՝ որ կենտրոնական վերին մարմինները եւս լրջօրէն մտահոգուած են եւ ցանկանում են նպաստել հարցի լուծման, սահմանադրութեան նախատեսումների ու ժողովուրդների բարեկամութեան ուխտի հիմքի վրայ:

Այսպիսով, ահա, լիակատար միասնութիւն է ստեղծուել մեր հայրենի պետութեան եւ ժողովրդի միջեւ Ղարաբաղի հարցում: Նաեւ այսուհետեւ անհրաժեշտ է արբութեամբ պահպանել այդ միասնութիւնը, որը միակ յուսալի ճանապարհն է ապագայ յաջողութիւնների համար («Հայրենիքի ձայն», 1988, թիւ 29):

ՎԱՉԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

digitised by A.R.A.R.@

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ահա թէ ինչո՛ւ անցնող տասնամեակներուն, անիրաւուած ժողովուրդը այսպէս յանկարծ պոռթկաց եւ պահանջեց, ու կը շարունակէ պահանջել, բլլալ ինք իր տէրը, խորհրդային իշխանութեան կառուցուածքին մէջ, եւ միպտանդուիլ իր Մայր Հայաստանին, որուն գաբէրով պատկանած է ու կը պատկանի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը։

Ազգութիւնքներու կողմէ գործադրուած փայլակ ու անժամանակային ոճիրներն անգամ Սու մոյիքի մէջ, եւ Ղարաբաղի, Չիրչան եւ անկարելի է, որ յաջողին կասեցնել Հայութեան պահանջքի հոսանքը։

Ա. Ամուսնած զոյգերուն եւ առ ժողովուրդն մեր հիացումի գոյացումներով կ'ողջունենք Ղարաբաղի, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ եւ անիրաժանելի Հայութեան միասամ եւ հաստատակամ կեցուածքը՝ անբեղ մէջ ու անչեզ հեռուստակոնուութեամբ եւ հաստատամութեամբ շարունակելու իր արդար պահանջներուն հետապնդումը, մինչեւ անոր ամբողջական պսակումը՝ Ղարաբաղին միացումը Խորհրդային Հայաստանին։

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս տարին, 1988ը, համայն հայութեան կեանքին մէջ պատմականօրէն հարուստ եւ հիմնականօրէն եղափոխիչ տարի մըն է։ Անցնող Փետրուար ամիսէն ասդին թէ՛ Ղարաբաղի, թէ՛ Մայր Հայաստանի, թէ՛ Խորհրդային Միութեան եւ թէ Սփիւռքի տարածքին ապրող ողջ հայութեան կեանքը առանձնայատուկ շեշտուածութեամբ որպէս էական առանցք եւ համայնական սեւեռակէտ ունեցաւ պատմական Արցախի կամ Ղարաբաղի Խորհրդային Հայաստանին վերամիանալու համընդհանուր եւ վճռական կամքը, որ աչքնչելի, համբուրելի միասնականութեամբ ու գիտակցական բարձրագոյն աստիճանի կարգապահութեամբ ու լրջախոհ ողջմտութեամբ արտայայտուեցաւ, եւ կը շարունակէ արտայայտուիլ։ Հաղորդակցութեան միջազգային բոլոր միջոցներով — մամուլ, ձայնասփիւռ, հեռատեսիլ — ամբողջ աշխարհ հիացումով վկայեց, թէ հայութիւնը իր իրաւունքներու գիտակցութիւնն ու պահանջքը գիտէ արտայայտել միահամուռ ուժգնութեամբ, երբ մա՛նաւանդ կ'անդրադառնայ, որ այդ իրաւունքները անտեսուած են այս կամ այն անար-

digitised by A.R.A.R.@

դարանալի պատճառներով: Բոլորդ ալ ծանօթ էք այն դէպքերուն եւ երեւոյթներուն, որոնք տեղի ունեցան եւ դրսեւորուեցան անցնող ութ ամիսներուն ընթացքին:

Ղարաբաղի հարցը դեռ չէ գտած իր արդար եւ վերջնական լուծումը: Տագնապը կը շարունակուի: Հայ ժողովուրդի կամքը կը մնայ անխախտելի եւ անբեկանելի, որովհետեւ բնական ու արդար է անոր պահանջքը: Շուրջ եօթանասուն տարիներէ ի վեր Ղարաբաղի հայութիւնը կ'ապրի այնպիսի՞ վարչական դրութեան մը եւ կացութեան մը մէջ, որ պարզապէս արուեստական է եւ պատմականօրէն ու իրողականօրէն անբնական, անտանելի եւ անհանդուրժելի: Ապրիլ քու հայրենական հողին վրայ, ինքզինքդ աշխարհագրականօրէն, պատմականօրէն եւ այժմէականօրէն ու իրողաբար զգալ մաս եւ բաժին՝ ապրած հողին հետ, արիւնիդ, միսիդ, ոսկորիդ ու շունչիդ պէս հարազատ, եւ սակայն վարչականօրէն, պետականօրէն մաս չզգալ ինքզինքդ քու հայրենական պետութեանդ՝ Խորհրդային Հայաստանին, ինքզինքդ զրկուած տեսնել ազգային ինքնարտայայտութեանդ բնատուր իրաւունքներէն՝ ընվզեցուցիչ երեւոյթ է անկասկած: Ահա թէ ինչո՛ւ անցնող տասնամեակներուն, անիրաւուած ժողովուրդը այսպէս յանկարծ պոռթկաց եւ պահանջեց, ու կը շարունակէ պահանջել, ըլլալ ինք իր տէրը, Խորհրդային իշխանութեան կառուցուածքին մէջ, եւ միազանգուիլ իր Մայր Հայաստանին, որուն դարերով պատկանած է ու կը պատկանի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը:

Անցնող ամիսներուն, Ղարաբաղի ժողովուրդին եւ Ինքնավար Մարզի վարչական օրինական իշխանութեան կամքը, որ կամքն է համայն հայ ժողովուրդին, իրագործուած նաեւ Խորհրդային Հայաստանի պետութեան կողմէ, բախեցաւ եւ դեռ կը բախի անտեսումի եւ մերժումի, Խորհրդային վերին իշխանութեան եւ Ադրբեջանի պետութեան կողմէ: Եւ սակայն կամքը եւ պահանջքը այնքան բնական եւ արդար են, վէրքը այնքան խոր է, որ ոչ մէկ անտեսում կրնայ զանոնք բեկանել կամ նոյնիսկ թուլցնել ու տկարացնել:

Ադրբեջանցիներու կողմէ գործադրուած վայրագ ու անմարդկային ոճիրներն անգամ Սումգայիթի մէջ, եւ Ղարաբաղի, չկրցան եւ անկարելի է, որ յաջողին կասեցնել հայութեան պահանջքի հոսանքը: Մենք կը հաւատանք, հակառակ ցարդ գործադրուած կարգ մը անբաւարար եւ անյուսալի վերաբերումներու եւ տնօրինումներու, որ հրապարակայնութեան (կլասնոսթ), վերակառուցումի կամ բարենորոգումի (փերեսթրոյքա) եւ ժողովրդավարութեան (տեմոքրաթիզասիոն) խոստաւէտ գնահատելի քաղաքականութեան լոյսին տակ, Խորհրդային իշխանութիւնները պիտի տնօրինեն արդար վճռահատութիւնը կատարուած ոճրային արարքներուն եւ սահմանեն համապատասխան պատիժներ: Այլապէս, խնդրոյ առարկայ կը դառնան ամբողջ ոգին եւ հաւատալիութիւնը այս նոր քաղաքականութեան, որուն այնքան արդարօրէն յոյս կապած է Խորհրդային Միութեան ամբողջ ժողովուրդը:

digitised by A.R.A.R.@

Այս օրերուն, երբ հարցը առաւել սուր հանգամանք ստացած է եւ Ղարաբաղի մէջ կրակմարի դրութիւն հաստատուած ու Երեւանի մէջ սովետական զօրքերու ներկայութիւնը զօրացուած, երբ հայ ժողովուրդը թէ՛ Ղարաբաղի եւ թէ Հայաստանի իր կամքը հետեւողական ուժգնութեամբ եւ արժանավայել լրջութեամբ կ'արտայայտէ, Մենք դարձեալ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Մեր խօսքը կ'ուղղենք մեր սիրեցեալ, քաջարի եւ պատուական ժողովուրդին՝ ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Հոգեկան անհուն գոհունակութեամբ եւ բարձրագոյն աստիճանի գնահատութեամբ կ'ողջունենք Սփիւռքի հայ երեք ազգային-քաղաքական կուսակցութիւններու միասնական յայտարարութիւնը, որ երէկ հրապարակուեցաւ հայկական մամուլով եւ հաղորդակցութեան այլ միջոցներով: Վստահ ենք, որ այդ կորովի եւ զգաստ խօսքը իր դրական արձագանգը կ'ունենայ մեր ժողովուրդին մօտ՝ թէ՛ Մայր Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ:

Առ Աստուած գոհութեան եւ սո ժողովուրդն մեր հիացումի զգացումներով կ'ողջունենք Ղարաբաղի, Հայաստանի եւ Սփիւռքի մէկ եւ անբաժանելի հայութեան միակամ եւ հաստատասիրտ կեցուածքը՝ անընդմէջ ու անշեղ հետեւողականութեամբ եւ հաւատարմութեամբ շարունակելու իր արդար պահանջքներու հետապնդումը, մինչեւ անոր ամբողջական պսակումը՝ Ղարաբաղի միացումովը Խորհրդային Հայաստանին:

Կը սպասենք, որ Խորհրդային Հայաստանի պետական-քաղաքական իշխանութիւնները առաւել թափով յառաջ տանին իրենց ջանքերը՝ ի խնդիր Հայութեան իրաւունքներու գործնապէս ճանաչումին եւ Ղարաբաղի դատին լրիւ յաղթանակին:

Հայրական սիրոյ մեր խօսքը մասնաւորապէս կ'ուղղենք Ղարաբաղի եւ Հայաստանի մեր ժողովուրդին.—

Սիրելի՛ք, հարազատ որդիք Հայկազնեան ցեղի,

Քաջ գիտենք, որ ձեր սիրտն ու միտքը, կամքն ու կեանքը ծանրագոյն պահերէ կ'անցնին: Հետեւեցանք ձեր բոլոր տագնապներուն, մասնակից զգացինք Մենք զՄեզ ձեր ապրումներուն, անձկութեան, տառապանքին, խռովքին եւ միանգամայն արի ու վճռամիտ կեցուածքին, միասնական դիրքորոշումին, արարատանման կամքին: Այո՛, արդար է ձեր դատը, որ մերն է, ինչպէս բոլոր անոնց՝ որոնք Հայկի նոյն արիւնը ունին իրենց երակներուն մէջ, Ս. Լուսաւորչի սուրբ հաւատքն ունին իրենց հոգիներուն մէջ, Ս. Մեսրոպի ոսկի գիրն ունին իրենց ճակատներուն եւ մեծասքանչ Հայոց լեզուն՝ իրենց շրթներուն, Ս. Վարդանի արի արանց ժառանգ եղող կայծն ունին իրենց կամքերուն մէջ, սարդարապատեան շունչն ունին իրենց կուրծքերուն տակ: Ձեզի հետ ենք եւ ձեզի հետ պիտի մնանք ու պիտի գործենք:

Ձեր դատը ո՛րքան նուիրական է, նոյնքան եւ դժուար՝ տուեալ

digitised by A.R.A.R.@

իրականութեանց շրջագծին մէջ։ Հարկ է արիութեան հետ ցուցաբերել խոհականութիւն, քաջութեան հետ՝ իրատեսութիւն, հաւատարմութեան հետ՝ տոկունութիւն, անձնանուիրութեան հետ՝ զգաստութիւն, նախանձախնդրութեան հետ՝ շրջահայեցութիւն, խանդավառութեան հետ՝ ծանրախոհ հանդարտամտութիւն, պահանջքին հետ՝ յարգանք դէպի օրինական կարգերն ու հաստատութիւնները։ Ասոնք հանրային հասունութեան հասած ազգի մը բարացուցիչ յատկանիշներն են։

Ձեր քրտինքով հայրենի հողը շէնցուցիք, Հայաստանը «երկիր դրախտավայր»ի վերածելու սուրբ եւ պաշտելի զոհողութիւններով։ Շարունակեցէ՛ք ձեր ստեղծագործական կեանքի ընթացքը։ Թող ձեր մէջ չմտնեն որոմ ցանող մարդիկ, մեր ժողովուրդի չարիքը կամեցող տարրեր։ Գործը, աշխատանքը, դպրոցը, մշակոյթը, հանրային սպասարկութիւնը սուրբ են եւ կենսական։ Թող չդադրին հայոց գործարաններն ու աշխատատեղիները. թող չկասի հայոց դպրոցներու մեղուաջան մեղրագործութիւնը. թող վերջ գտնեն այնպիսի արտայայտութիւններ, որոնք կը խռովեն ու կը խանգարեն համայնական-հասարակական կեանքը մեր պաշտելի հայրենիքին։ Կարգն ու կանոնը տիեզերական աստուածադիր օրէնք են։ Ստեղծագործականութիւնը անոնցմով պայմանաւոր է։ Քաոսին մէջ խաւա՛րը միայն կը տիրէ։

Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, որ հայկական ջարդերէն վերապրած ձեր հայրենակիցներուն եւ անոնց որբ զաւակներուն ձեռքերով է շինուած, սրտանց կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Իր լոյսը շողարձակէ մեր բոլորի միտքերուն եւ հոգիներուն մէջ, զօրացնէ ձեզ եւ մեզ հաւասարապէս մեր սուրբ եւ արդար գործերուն մէջ, անխռով եւ ապահով պահէ մեր հողն ու ժողովուրդը Հայաստանի մէջ, Ղարաբաղի մէջ եւ աշխարհի չորս ծագերուն վրայ, լոյս հագուեցնէ մեր երազներուն, արդարութեան պսակը շնորհէ մեր իրաւունքներուն, խաղաղութեան շունչը տարածէ ողջ աշխարհի եւ մեր հայաշխարհին վրայ, եւ մեր հայրենիքի ու ժողովուրդի միացումն ու միասնական արտայայտութիւնը ընէ նաւահանգիստ՝ մեր այնքան տառապագին ու ալեխռով կեանքի ուղեգնացութեան։

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

2 Հոկտեմբեր, 1988
Անթիլիաս, Լիբանան

digitised by A.R.A.R.@

Կարմիր հրապարակում դամբարանական ճառ ասաց նաև Լ. Բերիան, ևս Ցարս-Թիւնեանի հետ կանգնած էր Լենինի դամբարանի մոտ: Բերիայի ճառի ժամանակ Գր. Ցարս-Թիւնեանն ասաց. «Կատուած ոչ անի, որ Բերիան առաջին դէմքդառնայ»: Հնց այսուհետև նա ինձ պատմեց, թէ ինչպէս է այդ դահիճը կնդակահարել իր մեծ եղբօրը և կնոջ եղբօրը: Մի՞թէ այսքանից յետոյ հասկանալի չէ, որ Ցարս-Թիւնեանը Բերիային համակրել չէր կարող («Իրատես», 1990, թիւ 7, էջ 53):

ԱՆՏՈՆ ՓՈՊԻՆԵԱՆ

...Գնին, Խորհրդային Հայաստանի դեկտեմբեր Ցարս-Թիւնեանը միայնակ համակ է դրել Ստալինին, որովհետև ան Լենինի Ղարաբաղը միացնի Հայաստանին: Միայնակ, առանց այդ մասին որևէ խօսք ասելու նոյնիսկ իր բիւրոյի անդամներին: Եւ Ստալինն Ադրբէջանի դեկտեմբեր Բաղիրովին էր ստորագրել նամակը: Ուստի էր, որովհետև այս հիւսիսի Ղարաբաղը Հայաստանի տնէրս միջոցներ հայթայթի («Ազգակ», 11 Յունուար 1989):

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԵԱՆ

Համակ(ր) կ կենդանի

ԲԱԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Խորին վիրաբերմամբ.

Հայաստանի ստրատեգին յարգ Լենինին Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1923 թուականից մտնում է Ադրբէջանական ԽՍՀ կազմի մէջ:

Այդ մարզի բնակչութիւնը հիմնականում հայկական է:

153 հազար բնակչութիւնից 137 հազարը հայեր են:

Լենինին Ղարաբաղի զիւղատնտեսութիւնը յար և նման է Հայաստանի Լենինի մասի զիւղատնտեսութեանը: Հայաստանի կազմի մէջ Լենինին Ղարաբաղի մտնելը մեծապէս կը նպաստէ նրա զարգացմանը և կը բարելաւ տնտեսութեան զեկավարումը:

Մայրենի լեզուով բնակչութեան կուլտուր-մասսայական և քաղաքական ապահովումը կ'ուժեղանայ Հայաստանի հանրապետական մարմինների կողմից զեկավարման դէպքում:

Հայաստանի կազմի մէջ Լենինին Ղարաբաղի մարզի մտնելը անգամեան կարելիութիւն կը տայ շարունակել բարգաւաճումը կրթութիւնը մայրենի լեզուով Հայաստանի բարձրերում: Միւս կողմից հայկական ԽՍՀ-ն կը կարողանայ ազգային կարիք ստանալ Լենինին Ղարաբաղի Մարզից, որտեղ ոչիչ էն մնկոում է իրենց զարգացումը-թեամբ և նեղկայում մ, բնականաբար, չէն կարող լրիւ ապահովուել Ադրբէջանում:

Ելնելով զրանից և Լենինին Ղարաբաղի բնակչութեան ցանկութիւնից, կենսունական կամքաէն և Հայաստանի ժողովրդրդ Համակ(ր) կ կենդանի և միութենական կառավարութեան քննարկման են ներկայացնում ադրբէջանական ԽՍՀ Լենինին Ղարաբաղի Ինքնավար Մարզը հայկական ԽՍՀ-ի կազմի մէջ որպէս Ղարաբաղի մարզ մտցնելու հարցը:

Այդ հարցի դրական լուծման դէպքում կենդանիմբ և Հայաստանի ժողովրդրդ կառավարութեանը առաջարկութիւն կը ներկայացնեն Ղարաբաղի նախկին կենսունի՝ Շուշի քաղաքի վերականգնման մասին, որն ստեղծել էր խորհրդային իշխանութեան հաստատումից առաջ:

Հայաստանի կ(ր) կ կենդանիմ քարտուղար

ԳՐ. ՑԱՐՈՒԹԻՆՈՎ

(«Խորհրդային Հայաստան», 17 Յունիս, 1989)

digitised by A.R.A.R.@

ՄԻ՞ԹԷ ԱՅՍ ԱՆԴԱՄ ԷԼ

Ինքնապաշտպանութեան փորձ կատարողները տեղնուտեղն էին նահատակւում: Իսկ Մարտունու շրջանի չատ գիւղերի դպրոցներում սովորական դարձան այնպիսի սպանութիւնները, որոնց հետքերը գնում-հասնում էին աղրբէջանական օջախները: Այս ժամանակ էր, որ ցեղակից պատժիչներին միացան նաեւ ուսուցիչներն ու բժիշկները՝ քաղաքակիրթ աշխարհում ամենամարդկայնական ու ամենանախազգալ յորջորջուած այդ մասնագիտութիւնների սպասաւորները: Մարզային հիւանդանոցի գլխաւոր բժիշկ տեղակալ Ածդար Աբրասովն իր տանը, հիւրասիրութեան սեղանի շուրջ, մահադեղ տալով սպանեց մարզմիլիցիայի պետի տեղակալ մայոր Սավազ Աբրահամեանին: Իսկ Մարտունու շրջանի Ղարադաղլու գիւղի ինտերնացիոնալ դպրոցի տնօրէնուհի Արշաղ Մամեդովը չարագործութիւնների պատմութեան մէջ չեղած-լսուած եղանակով՝ գանկի մէջ մեխեր խփելով սպանեց ինը տարեկան իր աշակերտին՝ Նէլսոն Մովսիսեանին: Եւ երբ քամնելի չարագործին Ստեփանակերտում սպանեցին (խեղճ, ողորմելի պատիժ նրա հրէշագործութեան համար), վրայ հասան Ադրբէջանի քաղաքական ու բարոյական ուժերը: Ղարաբաղ եկաւ հանրապետութեան դեկավարներից ու հոգեւորականներից բաղկացած ազգու մի պատուիրակութիւն՝ մինիստրների խորհրդի նախագահ Ալիեվանովի գլխաւորութեամբ: Մարդակերի դին հողին յանձնուեց հանրապետական չուքով եւ գերեզմանի վրայ կանգնեցուեց գրքով եզրափակուող յուշակոթող: Դիրքը այն գարհուրելի չարագործութեան հեղինակի գերեզմանի՞ն: Եղե՞լ է աւելի անհնթեթ ու գաւեշտական յուշակոթող: Դիրքը երբեւէ ենթարկուե՞լ է նման ահաւոր ծաղր ու ծանակի:

Բայց ո՞վ կարող էր ձայն հանել, քաղաքակիրթ ու կրթասէր հանրապետութեան դեկավար մարմինների կամքն էր այդ...

Հիմա նոյն հանրապետութեան մտաւորականութեան հասարակութեան ներկայացուցիչների ժողովը կոչ է անում, որպէսզի միահամուռ, միանական ճակատով ասպարէզ ելնեն իրենց էրարոյական, քաղաքական ու ֆիզիքական ուժերը»: Նրա՞նք, որ առանց այդ կոչի էլ շրջափակման մէջ են արել Լեռնային Ղարաբաղը, պարբերական սպանութիւններով, կոդոպուտներով ու աւերածութիւններով կանում են ծունկի բերել իր ազգային ինքնութեան համար անդինում պայքարի ելած արցախահայութեանը:

(Հատուած) ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԻԲԵԱՆ

ԲԱԳԻՆ

ԱՐԻՒՆԸ ԱՐԻՒՆԷՆ...

Ղարաբաղցի քաջարի մտաւորական ու գրագէտ Ուլուբաբեանի քովի սիւնակին մէջ սեւագրած այս երկու արիւնարբուները, իր հիւրը «մահադեղով մեռցուցած Ածդար Աբասով կոչուած այս բժիշկը եւ իր աշակերտը բեւեռով սպանած Արշաղ Մամեդով անունը կրող այս տնօրէնը ոստիկանական վէպերու հերոսներ չեն, այլ կը հանդիսանան ազգերի արիւնկզակ խառնամբոխին քնագդները անձնաւորող ներկայացուցչական տիպարներ:

Հայ մարդուն համար որքան ալ անառարկելի ըլլայ «մարդակեր գազան մարդ»ուն մասին եղած փորձառական հաստատումը, ան դարձեալ իր մտքին մէջ դժուար կը տեղաւորէ հիւրընկալութեան ու ուսուցչութեան նուիրական հասկացողութիւնները հիմնովին հերքող ու սրբապղծող այս արարածները, որոնք ուղղակի աշակերտած կը թուին իրենց ցեղակից հրէշներուն, ապաբէզով նորէն բժիշկ ու ուսուցիչ տոքթոր Նազըմներուն ու Պեհաւտտին Շաքիրներուն:

Ու թեաւ զարմանալի չէ, որ Նազըմ-Շաքիրներու աշակերտները պարզ աշակերտ չմնացին, այլ իրենց կարգին բուծանեցին դեռահաս ճիւաղներ, Կամար Ջաֆարով անուն, Իլգամ Իսմայիլով անուն եւ սումգայիթեան փողոցներէն կացին ի ձեռին արնածարաւ խուժանները առաջնորդող ասոնց ընկերը, որ կը կոչուի Ահմեդով Ահմեդ Իմանի Օղլի:

Զուր չէ ըսուած արիւնը արիւնէն ու ոսկրը ոսկրէն:

Իր աշակերտը բեւեռախողխող ըրած տնօրէն Արշաղ Մամեդովի արարքը օրին խոր յուզում առաջացուց Հայրենի թէ Սփիւռքի մեր զանգւածներուն մէջ ու այդ առիթով հրապարակ եկան մեր մաքրարիւն բոլոր գրողները, ընդորս եւ Նշան Պէշիկթաշլեան, որուն գրութիւնը, դառնութեամբ ու իմաստութեամբ թաթաւուն, կը յանձնենք նոր սերունդներուն ուշադրութեան:

Մեզի պէս հաւանաբար չատեր չէին գիտեր իր աշակերտը խողխողած դահիճին վախճանական ճակատագիրը, որ Ուլուբաբեանի հաւաստումով՝ եղած է իր ուսուցիչներուն ճակատագրին յար եւ նման,— սատա՛կ մը:

digitised by A.R.A.R.@

Արդէն թաթարներուն ուզածն այ ա՛յդ է,— Հայոց գաղթը: Կը թունաւորեն կեանքը Հայոց, կը դարձնեն անհանդուրժելի: Որպէսզի թաթարներուն թողուն դարաւոր, հայրենաւանդ հողը եւ հեռանան ընդմիշտ, հարցը լուծելով բռնացողին ի նպաստ:

Տեսնենք. թէ Կրեմլիի իշխանաւորները գոնէ մէկ անգամ Հայոց հանդէպ պիտի ցոյց տա՞ն ասպետական արդարութիւն, պաշտպանելով տկարը, ու դատապարտելով բիրտ անիրաւողը:

Այդ տխրահռչակ Ախուլնտովը թունաւոր ազգայնամոլ մըն է: Համայնավարութիւնը իր դիմակն է: Ներքնապէս թուրք է ու դրդուած թուրքերէն: Ախուլնտովի ախտը ազգայնամոլութիւնն է,— համաթուրանականութիւնը:

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂ = ԱՐՑԱԽ

Արցախի նահատակուող Հայոց սրտակեղեք ահազանգը, կարեվէր կոչը կարդալով՝ հայ հոգիները ալեկոծուած են:

Մինչեւ ե՞րբ անողորմ անիրաւութեան եւ վիշապի վայրագութեան արշաւները մեր եղբայրներուն վրայ: Մինչեւ ե՞րբ մեծերուն փոքրոգութիւնները: Եւ մինչեւ ե՞րբ ապատ հայերուն համակերպութիւնն ու համբութիւնը:

***

Առածը կ՝ըսէ·

— Երբ դրացիդ գէշ է, հեծիր ձիդ ու քշէ:

Այս առածը կը պատշաճի անհատի կամ ընտանիքի: Ի մի բան՝ վարձակալի:

Բայց ժողովուրդ մը ինչպէ՞ս կրնայ լքել իր տոհմական

digitised by A.R.A.R.@

տունը, իր հնագոյական հայրենամոռ հողը, ու հեռանայ:

Արդէն թաթարներուն ուզածն այ ա՛յդ է,— Հայոց դպիր: Կը թունաւորեն կեանքը Հայոց, կը դարձնեն անհանդուրժելի: Որպէսզի թաթարներուն թողուն դարաւոր, հայրենատոռ հողը եւ հեռանան ընդմիշտ, հարցը յուծելով բռնացողին ի նպաստ:

Բնակարանդ ու բնակոխդրդ, ամբողջ նահանգ մը, յանձնելի հարեւանիդ, եւ կրկնապատակելով կատարուած անիրաւութիւնը՝ քեզ նեղէ, նուաստացնէ, նահատակէ, բացարձակ բռնութիւնով, եւ դուն ճարահատ ստիպուիս ազդակել՝ «օդնութի՛ւն»...

***

Բայց սկիզբէն ինչո՞ւ եղան հողային հրէշային անիրաւութիւններ հանդէպ Հայոց:

Համայնավար քաղաքագէտները ուզեցին նախ հարուի հարեւանին հաճոյք պատճառել, յետին նպատակով: Փափաքեցան շահիլ հաւատարմութիւնը Ատրպէյճանի, ուր կը գտնուին գլխաւոր նաւթահորերը: Միւս կողմէ՝ ցանկացին զոհունակութիւն պատճառել վրացիներուն: Գալով հայերուն, անոնց խօսքը չ'ըլլար ու անոնց խօսքը չի լսուիր: Անոնք տկար են, գլուխէն զարնուած մարդիկ են, վարժ են անիրաւուելու: Կը գոհանան քիչով: Ո՛չ միայն կը գոհանան, այլեւ այդ քիչին համար կը փառաբանեն մեզ՝ համայնավարներս: Անոնց մէջէն դժգոհութեան եւ ըմբոստութեան ընդունակները հեռացած են: Մնացածներէն վախ չկայ: Նոյնիսկ մնացողները ու հեռացածները կը հանենք իրարու դէմ: Մնացածներուն քիչ հող տալով՝ կը ստիպենք, որ շարաչար աշխատին: Քարերուն վրայ գարուններ ծաղկեցնեն: Եւ այսպէս, Կովկասի երեք կարեւոր ժողովուրդներուն մէջ կը սիրէ եղբայրական սէրը, եղբայրական համաձայնութիւնը, եղբայրական անգորրութիւնը:

***

Ղարաբաղ — Արցախի շարունակուող սղբերգութեան ահեղեկանալէս շաբաթներ առաջը, կարդացի երկու լուր:

Ահաւասիկ առաջինը.

— Երեւանի հայ իշխանութիւնը, Ղարաբաղի դժբախտ դէպքերը կը տեղեկագրէ կեդրոն, Մոսկուա, ուր կը գտնուի Ատրպէյճանի կոմկուսի քարտուղարը՝ «ընկեր» Ախունոսով, որ եղերական եղելութիւնները կը պահէր գաղտնի:

Տեսնենք, թէ Կրեմլինի իշխանաւորները գոնէ մէկ անգամ Հայոց հանդէպ պիտի ցոյց տա՞ն ասպետական արդարութիւն, պաշտպանելով անիրաւուած տկարը, ու դատապարտելով բիրտ

digitised by A.R.A.R.@

անիրաւոյր։ Եւ սրրոպրելով գոնէ երկրորդ անիրաւութիւնը, այսինքն՝ Ատրպէյճանի իշխանութեան թաթարական վերարերում հանդէպ Արցախի մեծամասնութիւն կազմող բնիկներուն՝ հայերուն։

Այդ ախրահոչակ Ախունտովը թունաւոր ազգայնամոլ մըն է։ Համայնավարութիւնը իր դիմակն է։ Ներքնապէս թուրք է ու դրդուած է թուրքերէն։ Ախունտովի ախտը ազգայնամոլութենէն աւելի բան մըն է — համաթուրանական է։ Համայնավարութեան շահը կը պահանջէ, որ ախտաւոր Ախունտովները չնորհազրկուին, երբ մա՛նաւանդ գաղտնօրէն զէնք կը ստանան Թուրքերէն։

Եւ ահաւասիկ երկրորդ լուրը, որ ինծի կը թուի թէ՛ հեգնանք, թէ՛ մխիթարութիւն, թէ՛ անհրաժեշտութիւն, թէ՛ ապարդիւն ձեռնարկ։

Լուրը կու գայ Սովետ. Հայաստանէն.

— Տեսէք, թէ ինչե՞ր կը կատարուին մեր հայրենիքին մէջ, յանուն ժողովուրդներու բարեկամութեան։ Աննախընթաց ձեռնարկ. հիմնուած են համալսարաններ, յանուն եղբայրութեան։ Արդէն իսկ Հայաստանի բազմաթիւ շրջաններուն մէջ կը գործեն ժողովուրդներու բարեկամութեան համալսարաններ, ուր կը դասախօսեն որակաւոր գիտնականներ, ինչպէս նաեւ պետական ու երիտասարդական դէմքեր, մինչեւ իսկ զեկավարներ։

Յառաջիկային, իւրաքանչիւր դասընթացք պիտի նուիրուի Խորհրդային Միութեան տասնհինգ հանրապետութիւններէն մէկուն։

Հոկտեմբերեանի շրջանի Արտաշատ ու Թալին գիւղերը գտնուող համալսարանները, նաեւ Իջեւանի գործագործարանին մէջ բացուածը, միշտ ժողովուրդներու բարեկամութեան համար, ողջունուած են խանդավառութեամբ։ Դասախօսութիւնները տեղի կ՝ունենան բերնէ բերան լեցուն սրահներու մէջ։ Իբրեւ ունկնդիր մեծամասնութիւն կը կազմէ երիտասարդութիւնը։

Արդէն իսկ տեղի ունեցած են ժողովուրդներու բարեկամութեան նուիրուած տասնեակներով դասախօսութիւններ Անդրկովկասի հանրապետութիւններու տնտեսական, մշակութային եւ ներքին կացութեան մասին։ (Որոնց արդիւնքը եղող եղբայրութեան ու բարեկամութեան պտուղները լիովին ճաշակած են Ղարաբաղի հայերը)։

Եւ դեռ աւելին — Ո՛չ միայն հայեր, այլեւ Վրաստանի ու Ատրպէյճանի դրացի շրջաններէն երիտասարդներ եւ երիտասարդուհիներ կ՝երթան Հայաստանի Նոյեմբերեան շրջանի Դեբատաշէն աւանին համալսարանը, հետեւելու համար դասախօսութիւններուն։

Բայց, անտարակոյս, այս դասախօսութիւններուն ընթացքին, խօսք չ՝ըլլար Ղարաբաղ — Արցախի հայութեան ենթարկը-

digitised by A.R.A.R.@

ւած ոչ–եղբայրական, ոչ–բարեկամական, այլ թրքական–թաթարական վայրագ վերաբերումներուն մասին: Անկասկած, ոչ մէկ խօսք կ'ըլլայ՝ Հայաստանէն խլուած հողերուն մասին: Այդ խնդիրները խօսքի նիւթ ընելը հակահեղեղական, հակաբարեկամական, հակայեղափոխական է:

Եւ դասախօսութիւններու ներկայ եղող ապերիներն ու վրացիները բարեկամնե՞ր են, թէ լրտեսներ...

Ինչո՞ւ Կրեմլինի ղեկավարներն ալ չիսօսին կամ չունկընդրեն այդ համալսարաններուն մէջ, մաքրելով իրենց խելքն ու խիղճը, որքան որ կարելի է:

Ինչո՞ւ Ատրպէյճանի մէջ ալ չեն հիմնուիր ժողովուրդներու եղբայրութեան կամ բարեկամութեան նուիրուած համալսարաններ, որոնք պէտք է կոչուին Կայէնեան Համալսարան: Եւ կամ ազերիները ժողովուրդներու բարեկամութիւն, ժողովուրդներու եղբայրութիւն ըսելով՝ կը հասկնան միայն թուրքին ու թաթարին հե՞տ զինակցիլ:

***

Հայաստանի բարեկամութեան համալսարաններուն բեմերուն պատերուն վրայ չորս լեզուով (ռուսերէն, վրացերէն, հայերէն ու թաթարերէն) մեծատառ արձանագրելու է հայկական պատարագի ընթացքին ըսուող սա խօսքը.

— «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. իսկ որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք»:

Այսինքն՝ թարգմանելով ու պարզաբանելով ներկայացընենք իմաստը.

— «Մուրբ պահ է: Բարեւեցէք զիրար սրբութեան համբոյրով, նման եղբօր, նման բարեկամի: Իսկ եթէ եղբայրութեան դէմ դատանացած կամ բարեկամութեան մէջ մեղանչած ըլլալով՝ չէք կրնար անարժանաբար հաղորդուիլ աստուածային խորհուրդով, դուրս ելէք, դուռը ելէք ու աղօթեցէք, յանուն ապաշաւի»:

Ցաւախ զացած եմ եկեղեցի, սկսեալ պատանութենէս, սակայն, երբեք չեմ պատահած քրիստոնեայի մը, որ «ողջոյն տուք միմեանց»ի պահուն դուրս ելլէ տաճարէն, ու դրան առջեւ աղօթէ, յանուն քաւութեան մեղաց:

Անկասկած, նոյնը պիտի պատահի բարեկամութեան տաճարին մէջ ալ...

Եւ սակայն, անհրաժեշտ է այդ արձանագրութիւնը իրեւ կուռ, բովանդակալից, բարոյացուցիչ...

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԽԼՈՒԱԾ...

Ամբողջ անցեալ տարուայ ընթացքում եւ այս տարուայ սկիզբին մենք ամէն օր իմանում էինք, թէ ինչպէս է յուզւում Հայաստանի կազմից ապօրինաբար խլուած Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որի կեղեքումները տեւում են արդէն տասնամեակներ:

...Եթէ խորամուխ լինենք Ղարաբաղի հարցին, ապա պարզ կը դառնայ վէճի նաեւ պատճառը: 20ական թուականներին Հայաստանի կազմից Ղարաբաղի ապօրինի, հակասահմանադրական խզումը հայ ժողովրդի գիտակցութեան մէջ նաեւ ելնում էր այն սկզբունքից, որ գլխաւորը իրաւունքի զաւթումն է: Այդ տարածքի հայաթափումն սկսելը: Իսկ երբ հայաթափումն աւարտուի, ինչպէս դա արդէն արուել է Նախիջեւանում, ապա թող դրանից յետոյ ինչ են ուզում ասեն: Միեւնոյն է, գործն արդէն արուած կը լինի: Լեռնային Ղարաբաղի դրութեան վերջնական նորմալացման հարցը կարելի է լուծել ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրայ միայն: Ինքը կեանքն է ցոյց տուել, որ ազգերի ինքնորոշման լենինեան սկզբունքը նման հարցերի լուծման միակ եղանակն է: Եւ դա, ի հարկէ, կը համապատասխանի վերակառուցման ոգուն:

...Առաջին: Երբ արտաքին գործերի մինիստր (ի հարկէ, նախկին) Մոլոտովը իր ժամանակին հայ ժողովրդի անունից յայտարարեց, թէ նա հրաժարւում է Կարսի մարզի եւ այն տարածքի վերադարձման պահանջներից, որտեղ կատարուեց 1915 թուականի ցեղասպանութիւնը, որը լաւ յայտնի է ամբողջ աշխարհին, նա ստում էր: Նա անգթօրէն ոտնահարում էր Խորհրդային Միութեան ժողովրդներից մէկի զգացմունքներն ու շահերը («Գրական թերթ», 1989, թիւ 24):

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Վիկտոր Համբարձումեան

***

Հաւանօրէն ձեզանից ոչ մէկը ուշադրութիւն չի դարձրել համագումարում ՆՍՀՄ ժողովրդական դեպուտատ Վիկտոր Համբարձումեանի ունեցած հոյլթի վրայ, որը պահանջեց քննարկել Կարսի պայմանագիրը չեղեալ յայտարարելու հարցը: Չէ՞ որ խօսքն այն մասին չէ, որ անհրաժեշտ է անմիջապէս պատերազմ յայտարարել Թուրքիային: Խօսքն այն մասին է, որ այդ պայմանագրի համաձայն հայկական խորհրդային հողերը միացուցին հենց նոր ստեղծուած թուրքական սոցիալիստական կազմաւորմանը, որն ստացաւ Ադրբէջան անուանումը, որտեղ մուսլիմաններն իրենց յատուկէն թուրք են անուանում («Վանգարդ», 6 Հոկտեմբեր, 1989):

ՋՕՐԻ ԲԱԼԱՍԵԱՆ
ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Սահմանակիցների մասին մի մասամբ, բարձր լեռի վրայ կանգնած է փառահեղ մի կոթող։ «Մենք ենք, մեր սարերը» — իրենց ասպանդաստանը ստեղծագործելիս են այդպես են կոչել մեծանուն մենակը Հեղինակ, Հայկ։ Ամեն փառատիպ ոչ նկարիչ, քանդակագործ Սարգիս Բաղդասարյանը եւ Հարությունյան Եւրի Բանբիանը։

Հոկտեմբերյանի լրանկատոյն տուֆից կերտված քանդակը ներկայացնում է երկու տարբեր դարաշրջանների։ Մարդ ու կին են նրանք, ուստի հպարտ ու անլսելի։ Նրանց ոչի պատասխանելան չկա։ Ասես յուրաքանչյուրը հեռք է տալիս, եւ նրանք այդ հեռքից են բարձրացել, կանգնել՝ ուրիշը իրան հայրենի հոգի մեջ։

Ցաղման խորությամբ եւ չափերի մեծամեծությամբ եկեղեցական սինքքի վերանում են ու նի այս կոթողը։ Նայիր, եւ նա քեզ կը պատմի դարաշրջան հերոսական կենսագրությունը, յարատեւման մեծ գաղտնիքը («Գրական թերթ», 1967, թիւ 49)։

* * *

... Այս եստակիի ստեղծագործությունն մեջ մի առանձնայատուկ տեղ է գրաւում «Դարաբաղցիներ» («Մենք ենք, մեր լեռները») կոթողը, որն արդեն յայտնի է մեր երկրում ու նրա սահմաններից դուրս եւ հեղինակում որ ժամանակների կոչմից, իրատացիորեն, պահանջում է որպես ոգեշունչ մի հիմն՝ աշխատաւոր, արդար, ընտանիքին, մարդկային իմաստությանն ու երեւակայությունը («Գարուն», 1975, թիւ 4)։

Մշակութային կոպերը Երեւանի հետ վճռականորեն մերժում էին, «Մենք ենք, մեր սարերը» հոյակապ արձանակոթողի հեղինակ, Հայաստանի ժողովրդական նկարիչ, հանրապետության Պետական մրցանակի դափնեկիր, ծագումով զարաբաղցի Մ. Բաղդասարյանին, որը յիշեալ ստեղծագործության համար կոժարում ոսկի մեդալի էր արժանացել, կեղծիքով բարձր ամբիոնից խարազանում էր՝ որպես «դաշնակցական գաղափարախոսության տարածողի, ժողովուրդների բարեկամության դեմ պայքար վարողի»։ Նա բացմիցս այս յուշակոթողը ոչնչացնելու հարց բարձրացրեց եւ միայն մարդիկամի անդամների ու հին կոմունիստների տոկուն դիմադրությունը խանգարեց դրան («Հայրենիք», 19 Օգոստոս 1988)։

Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Գ. ՋԱՆԻԿԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿԻ ՓՇԵՊՍԱԿԸ

... Այդ օրը Օպերայի հրապարակից ետն վերադառնալիս նա երջանիկ էր այն մարդու երջանկությամբ, որն անսպասելի գտնում է գլխի իր նուիրական երազները առանց ճանապարհը:

Այդ պահին, թաչի կ, դու վերջնականապես համոզուեցիր, որ ոչ մի հայ իրաւունք չունի հեռուից նայելու այն ամէնին, ինչ տեղի է ունենում Երեւանի Թատերական հրապարակում, Ստեփանակերտում, Մոսկայիթում:

Եղան պահեր, երբ բոլորս չատ, չափազանց չատ զարթաղցի դարձանք, այնպէս՝ ինչպէս, եթէ առիթը ներկայանայ, պիտի զատանք ակնցի, գլխարնցի, մուսալեցի:

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ

Ասում են՝ բոլոր նահատակները մահանում են փշեպսակով: Ինչպէս Յիսուս Քրիստոսը: Փշեպսակը լուսապսակի է փոխւում այն պահին, երբ իրականանում են նրանց երազները...

Նա ծնուել էր Երեւանում, մանկապարտէզ, դպրոց, պատանի տեխնիկների կայան, ուսումնարան յաճախել ու միշտ երազել էր Մուսա լեռ գնալ, տեսնել վահանաձեւ լեռը, որի լանջին կռուել է պապը, մայրիները, ձիթենիները, որոնց կարօտում էր տատը: Քանի դեռ Արմենակ պապն ու Վիկտորիա տատը ողջ էին, Մուսա լեռը մօտ, չատ մօտ էր թւում: Հենց նրանք էին պատմել, որ իրենք եղել են ամենաերջանիկ արեւմտահայերը, քանի որ կռուել, յամառել ու Առաջին աշխարհամարտից յետոյ դեռ երկար ապրել են իրենց արծուաբներում: Նրա՛նք էին աւելացրել, որ իրենք եղել են ամենաղժբախտ արեւմտահայերը, որովհետեւ վերջինն են թողել հայրենիքը: Ո՛չ, ո՛չ, իրենց գէնքով ծնկի չբերին, լեռների պէս նախնական, հպարտ ու չիտակ մարդկանց ցաքուցրիւ արին դիւանագիտական սադրանքները: Արմենակն ու Վիկտորիան եօթ երեխայ զրկած, չալակած, ուսերին առած՝ քայլում էին տօթ անապատով եւ չզացին նոյնիսկ, թէ ինչպէս քարաւանը թեքուեց դէպի Լիբանան... Արաբ ժողովուրդը պարզ ու սրտաբաց էր, Այնճար գիւղը, որ հիմնեցին իրենք, բարեբեր հող ու հիւթեղ խնձորներ ունէր, բայց ի՞նչ օգուտ: Մուսալեռցիք չէին կարողանում հայրենիքից հեռու ապրել, գաղթականութեանը վարժուած չէին: Արմենակն ու Վիկտորիան հազիւ եօթ տարի դիմացան ու հենց ներգաղթը սկսուեց, առաջին քարաւանով Հայաստան եկան...

Վերջացա՞ւ ուրեմն, անհետ կորա՞ւ Մուսա լեռը: Ի հարկէ, ոչ: Պապն ինչո՞ւ էր թոռանը նահատակուած եղբօր անունը դրել ու հետը միայն Մուսա

digitised by A.R.A.R.@

Թափառի ուղիներ ինչպիսիներ էին քայլում, յուրաքանչյուր-յուրաքանչյուր ուղղություն ու ազգիկներ էին սփռում քո վերջին հանապարհի վրայ: Այդպես բեկ ուսման քո յոլերի հրապարակն ու, չնայած վիշտը խեղդում էր, ցոյց-ընկերներիցդ ոչ մեկը լաց չեղաւ: Առերեսո՛ւթ գոնէ: Ընդհակառակը, Օպերայի հրապարակի սգահանդէսից յետոյ քեզ այնքան բարձր, յարիմանորէն պրկուած թեւերով էին ձեռքից ձեռք անցկացնում, որ թւում էր, թէ վերջալոյսի բոցերի միջով հասցնելու են Մուսա լեռ: Ի՛նչ, Մուսա լեռ չհասցրին, բերին ձեր տան մօտ՝ Շահումեան չրջանի գերեզմանոցն ու հոգին պահ տալուց յետոյ կ՚սպասեն նակեցին սպոյ երթը: Զէին կարողանում ցրուել, հանգստանալ...

Այդպէ՛ս իմ քաղաքը հրաժեշտ տուեց վեցերորդ հացի գործարանի բեռնող բանուոր Խաչիկ Զաքարեանին:

լերան բարբառով խօսում, տատն ինչո՞ւ էր անընդհատ հերոսամարտերի երգերը, ոտանաւորներն ու անգամ ազգականները սովորեցնում: «Ֆրանսիա-ՍՍՀՄ» հանդէսի գլխաւոր խմբագիր Պատրիկ Բերկոն, որ մասնակցում էր Երեւանի եւ Մոսկուայի փետրուարեան ցոյցերին, հանդէսի՝ այդ իրադարձութիւններին նուիրուած յատուկ համարում գրում է. «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցեղասպանութեան զոհ դառնալուց ի վեր, հայերն զգայուն, չափազանց զգայուն են դարձել այն ամէնի նկատմամբ, ինչը վերաբերում է իրենց հայրենիքին, ազգութեանը»:

Երբ Խաչիկը բանակից վերադարձաւ, պապն ու տատն արդէն չկային, եւ Մուսա լեռը հեռացաւ, միանգամից շատ հեռացաւ: Նա առանց այն էլ ինքնամփոփ տղայ էր, աւելի լռակեաց, անհաղորդ դարձաւ: Օրերով սենեակում փակուում, զբաղւում էր գունային երաժշտութեան սարքերով: Երեւի վախենում էր, որ եթէ փողոց դուրս գայ, ընկերներին պատմի իր կարօտի՝ Մուսա լեռան մասին, որ չի էլ տեսել, կը ծիծաղեն վրան, ձեռ կ՚առնեն: Բայց երբ առաջին անգամ ճանապարհից, թէ՞ հետաքրքրութիւնից Թատերական հրապարակ մտաւ, սարսռաց, նոյնիսկ աչքերին չէր հաւատում: Շուրջն այնքան տղաներ, աղջիկներ կային, որոնք իր նման կարօտ ու ձգտում ունէին: Ինքն այլեւս մենակ չէր...

Բանակից յետոյ Խաչիկը ո՛չ միայն անհաղորդ, այլեւ դիւրագրգիռ էր դարձել: Նա ծառայում էր Սիբիրում, այնպիսի տեղ, որ արձակուրդ գալու մասին չմտածեց էլ: Տուն վերադառնալուց յետոյ, սակայն, կեանքը չհեշտացաւ: Ուզում էր աշխատանքի անցնել ուսումնարանում ստացած մասնագիտութեամբ, չէր կարողանում: Ամէն տեղ նոյնն էին ասում՝ տեղ չունենք: Զլինի՞ փող էին ուզում: Ա՛յդ էր պակաս, ունենար էլ չէր տայ: Զեռքը թափ տուեց, սկսեց հերթափոխային՝ ծանր, ֆիզիկական աշխատանք անել: Բայց

digitised by A.R.A.R.@

այդ օրը Օպերայի հրապարակից տուն վերադառնալիս նա երջանիկ էր այն մարդու երջանկությամբ, որն անսպասելի գտնում է դէպի իր նուիրական երազները տանող ճանապարհը։

Ու հաւատում է դրան։

Մնողները զարմացել էին, չէին էլ հասկանում, թէ ինչ է կատարուում իրենց որդու հետ։ Նա առաւօտ չուտ յոգնած վերադառնում էր հերթափոխից, բայց մահճակալի կողմն էլ չէր նայում։ Արագ սափրուում էր, աւելի արագ մի բան ուտում, նետուում Թատերական հրապարակ։ Ճիշտ է, նա կարող էր նստացոյցերին ժամերով ոչ մի բառ չասել ու այդպէս էլ ոչ մէկի հետ մտերիկից չծանօթացաւ, բայց ի՞նչ նշանակութիւն ունէր, իրեն թւում էր, թէ բոլորին ճանաչում է զատ-զատ, բոլորին սիրում է։ Այն աստիճանի, որ այդքան թանկագին դէմքերը, թանկագին պահերը չկորցնելու համար լուսանկարչական ապարատ ձեռք բերեց ու սկսեց ամէն ինչ լուսանկարել, ամէն մանրուքի մէջ իմաստ, նպատակ տեսնել··· Ուշ գիշերին միայն, յիշելով, որ առաւօտ չուտ հերթափոխի է, ապարատը նետում էր ուսը, ելնում տեղից։

Բայց ոտքերն առաջ չէին գնում, աւելի շուտ՝ ինքնաբերաբար տանում էին հացագուլաւորների կողմը։ Նա նայում էր իւրաքանչիւրի գունատ, լարուած դէմքին ու ամաչում, որ գնալու է տուն, ուտելու է մօր պատրաստած համեղ խորոտիկներն ու մինչեւ լոյս քնելու է տաքուկ, փափուկ անկողնում։

Դրանք ծանր, ճակատագրական, բայց անմոռաց օրեր էին, Խաչիկ։ Ցիշո՞ւմ ես, գիշերային մի ցոյցից յետոյ պատահական աւտոբուսով վերադառնում էիր տուն, մէկ էլ մի մարդ փակեց աւտոբուսի ճանապարհը։ Սկզբում վարորդը նրան հարբածի տեղ դրեց, ուզում էր շրջանցել, բայց տղամարդը կիսաբաց դռնից ներս խցկուեց, գոռաց.

— Ժողովուրդ ջան, ձեր հոգուն մեռնեմ, մէջներդ սումգայիթցի, ղարաբաղցի չկա՞յ, իմ էք, տուն տանեմ։ Ես էլ եմ հայ, չէ՞, ե՛ս էլ եմ ուզում ձեռիցս եկածը անել։

Այդ պահին, Խաչի՛կ, դու վերջնականապէս համոզուեցիր, աւտոբուսում բոլորը համոզուեցին, որ ոչ մի հայ իրաւունք չունի հեռուից նայելու այն ամէնին, ինչ տեղի է ունենում Երեւանի Թատերական հրապարակում, Ստեփանակերտում, Սումգայիթում։ Եթէ անգամ ինչ-որ տեղ, ինչ-որ ակընթարթ ժողովուրդը սխալ է, դարձեալ իրաւունք չունի··· Եղան պահեր, երբ բոլորս շատ, չափազանց շատ դարաբաղցի դարձանք, այնպէս՝ ինչպէս, եթէ առիթը ներկայանայ, պիտի դառնանք ակնցի, զէյթունցի, մուսալեռցի։ Մենք այնքան համախմբուած ու միաձոյլ էինք, որ չեմ հասկանում, թէ ինչպէս զոհ տուինք քեզ։ Այն էլ քեզ։ Ախր այդ օրը, քո կեանքում գոնէ, ոչ մի անակնկալ չպէտք է տեղի ունենար։ Դու նոյնիսկ ցոյցի չէիր մասնակցում, որովհետեւ ներքուստ ընդվզել էիր այն ամէնի դէմ, ինչ նախորդ օրը տեսել էիր օդակայանում։ Մեն-մենակ նստած երաժշտական ընկալուչ էիր քանդում-հաւաքում, մէկ էլ ականջիդ աղմուկ-աղաղակ, պայթիւնի ձայներ հասան։ Թէ՞ քեզ թուաց։ Ցամենայնդէպս, խիղճդ տանջում էր։ Ձեր տնից ոչ հեռու, Արգաւանդի խաչմերուկում քո ընկերները ծեծում-ծեծուում էին, իսկ դու··· Լա՛ւ երաժշտութիւն լսելու ժամանակ էր։ Ցոհանոց մտար։

— Մա՛մ, ուտելիք տուր։

— Ի՞նչ ես ուզում, բալիկ ջան։

— Ի՞նչ ուզում է լինի, միայն շուտ արա։

Մայրդ գիտէր, որ վաղահաս կարտոֆիլ շատ ես սիրում։ Տապակեց ու քանի որ տանն արդէն շոգ էր, ներքին թակում սեղան պատրաստեց։ Ուտում

digitised by A.R.A.R.@

էիր, իսկ նա ձեւացնում էր, թէ գործ է անում, աչքի տակով անընդհատ նայում էր քեզ: Ոտքի ելար, վերցրիր ապարատը:

— Ու՞ր ես գնում:

— Այստեղ եմ, շուտ կը գամ...

Փողոցում կռուի, աղմուկի ձայները սաստկացան: Դու արագ կտրեցիր Հարաւ-Արեւմտեան թաղամասը, որ մտքում միշտ Անդրանիկի անունով էիր կոչում, յետոյ չդիմացար, սկսեցիր վազել եւ երբ հեւ ի հեւ խաչմերուկ հասար, սարսափեցիր այն ամէնից, ինչ կատարւում էր շուրջդ... Կ'անցնեն օրեր, եւ ինժեներ Աբգարեանը զանգ կը տայ Աշտարակից, կ'ասի. «Ես չեմ պահանջում զինուորական գաղտնիքներ բացել, ուղղակի այդ գործողութիւնները ղեկավարած հրամանատարից ուզում եմ իմանալ, մի՞թէ հնարաւոր չէր դիմել այլ՝ աւելի մեղմ, մարդկային միջոցների...»: Ասենք՝ դա յետոյ էր, այն ժամանակ դու ուզում էիր ինչ-որ բան անել, բայց ի՛նչ, ի՛նչ, ի՛նչ... Ցիշեցիր ապարատդ: Արագ պատեանից հանեցիր, որպէսզի մի օր, մի ամիս, մի տարի անց մարդիկ ճշմարտութիւնն իմանան կատարուածի մասին: Քանի՞ կաղր էիր նկարել, ընդհանրապէս հասցրե՞լ էիր նկար անել, թէ մենք այդպէս էլ չենք իմանալու ճշմարտութիւնը...

Սրանք արդէն ուրիշ ապարատի, ուրիշի լուսանկարներ են, որ անվերջ ձեռքից ձեռք են անցնում: Ահա Խաչիկը թեք ընկել է գետնին, ճակատի վրայ սեւ, կլոր բիծ (զարմանալի է, արիւնը բերանի անկիւնից է հոսում): Ահա նրան գրկում են, դնում պատգարակի վրայ: Ահա երկու հոգի փութկոտ փախցընում են զինուորների ոտքերի արանքից: Ահա մոցրել են շտապօգնութեան մեքենան, բայց թեւը կախ է ընկել դուրս: Հրաժեշտի ինչ ահաւոր տեսարան է...

Երեկոյեան մուսալեռցիների աւանդական սովորութեամբ ողջ ընտանիքը հաւաքուել էր ներքին բակում: Իւրաքանչիւրը գիտէր, ուր էլ լինի, ընթրիքին անպայման պիտի հասնի տուն:

— Խաչիկն ո՞ւր է,— ափսէն մօտ քաշելով հարցրեց հայրը:

— Ասաց՝ շուտ կը գամ,— մայրը չքմեղացաւ, իսկոյն պաշտպանութեան տակ առաւ բացակայ որդուն,— երեւի ուր է, ուր չէ, ներս կը մտնի:

Քո կամքից անկախ, Խաչիկ ջան, դո՛ւ էլ, Աջափնեակի հիւանդանոցում, արիւնոտ, ցեխոտ, աչքերդ յաւիտեան փակած-չփակած, խորհրդանշանի վերածուեցիր: Գիտե՞ս ինչու: Մենք բոլորս մեղաւոր էինք զգում քո մահուան համար, մեզ թւում էր, որ դու նահատակուել ես իւրաքանչիւրիս փոխարէն: Չէ՞ որ Երեւանում այժմ պաղպաղակ ուտող, ծիծաղող, սիրահարուող ամէն քսաներկու տարեկան կարող էր քո ճակատագիրն ունենալ, իսկ դու...

Դրա՛ համար էր երեւի այդպէս սգում ողջ քաղաքը: Եթէ աչքերդ բացէիր, չէիր էլ հաւատայ: Օր ու գիշեր յուսահատ վայում էին մեքենաներն ու անզօրութիւնից մերթ այս, մերթ այն փողոցը նեռւում: Բոլոր մայրուղիների ծառերին սեւ ժապաւէններ էին յայտնուել ու թւում էր, թէ նոր բողբոջած, մահ չտեսած տերեւներն անդամ դողում են յուզմունքից: Իսկ երբ թաղումն սկսուեց, ոչ ոք չկարողացաւ տանը մնալ, բոլորը յորդեցին փողոց:

Թափօրի առջեւից ջահակիրներ էին քայլում, յետոյ զոյգ-զոյգ սեւազգեստ տղաներ ու աղջիկներ ծաղիկներ էին սփռում քո վերջին ճանապարհի վրայ: Այդպէս քեզ տարան քո յոյսերի հրապարակն ու, չնայած վիշտը խեղդում էր, ցոյց-ընկերներիցդ ոչ մէկը լաց չեղաւ: Առերեւո՛յթ գոնէ: Ընդհակառակը, Օպերայի հրապարակի սգահանդէսից յետոյ քեզ այնքան բարձր, յաղթականօրէն պրկուած թեւերով էին ձեռքից ձեռք անցկացնում, որ թւում էր, թէ վերջալոյսի բոցերի միջով հասցնելու են Մուսա լեռ: Ո՛չ, Մուսա լեռ

digitised by A.R.A.R.@

չհասցրին, բերին ձեր տան մօտ՝ Շահումեան շրջանի գերեզմանոցն ու հողին պահ տալուց յետոյ էլ չարունակեցին ագոյ երթը։ Չէին կարողանում ցրուել, հանգստանալ...

Այդպէ՞ս իմ քաղաքը հրաժեշտ տուեց վեցերորդ հացի գործարանի բեռնող բանուոր Խաչիկ Զաքարեանին։ Իսկ լենինականցի երիտասարդները, որոնք չէին կարողացել յուղարկաւորութեանը ներկայ լինել, քաղաքի կենտրոնում տեղադրել էին նրա մեծ դիմանկարն ու փոխն ի փոխ, սեւ թեւկապներով պատուոյ պահակ էին կանգնում։

Ճիշդ է, մահացածներին չեն յանդիմանում, բայց քեզ չեմ կարող չասել՝ Խաչի՛կ, դու իրաւունք չունէիր մեզ նման վիշտ պատճառելու։ Մանաւանդ՝ ծնողներիդ։ Քարագործ հայրդ, որ ողջ կեանքում ֆիզիկական աշխատանք է կատարել ու յոգնութիւն չի զգացել, մի գիշերում ճերմակեց, անզօր ծերունի դարձաւ, իսկ մայրդ, որին աշխատավայրում՝ մետաքսի գործարանում ոչ ոք ակնոցով չէր տեսել, գրեթէ կորցրեց տեսողութիւնը։ Փոքր եղբայրդ՝ Ցովսէն անգամ չի կարողանում քո դատարկ սենեակին նայել, մերթ այս, մերթ այն բարեկամի տանն է գիշերում։ Բայց միեւնոյն է, ամէն երեկոյ հարազատներդ հաւաքւում են ներքին բակում, այն սեղանի շուրջը, որի մօտից դու գնացիր ու էլ չեկար։ Վերջին անգամ, երբ լուռ ու մունջ նստած էինք, նկատեցի, որ փողոցի դուռը կրնկի վրայ բաց է ու ոչ ոք չի փակում։ Ուզեցի պատճառն իմանալ, մայրդ հառաչեց.

— Խաչիկս հարսնացու ունէր, կարող է տեսնի, որ դուռը բաց է, մտնի ներս։ Միշտ խնդրում էի, որ ծանօթացնի, ասում էր, ո՞ւր ես վռազում, մի օր կը գայ, էլի։ Խեղճը չհասցրեց...

Հօրդ հայեացքը ինքնաբերաբար սահեց երկրորդ յարկի կիսաւարտ պատերի վրայում.

— Էն սենեակը շարում էի, որ Խաչիկիս պսակեմ, տուն-տեղ դարձնեմ։ Չհասցրի...

Մեծ եղբայրդ՝ քո նման բարետես, բարեկազմ Արմէնը, գլուխը կախեց.

— Երկու տարի բանակ էի, մինչեւ եկայ, Խաչիկին տարան։ Չորս տարի իրար չէինք տեսել։ Մտածում էի, լաւ է, երկուսով էլ տանն ենք, կարգին ախպէրութիւն կ'անենք։ Չհասցրինք...

«Չհասցրեց, չհասցրի, չհասցրինք...»։

— Հերի՛ք է,— բարկացաւ հօրեղբայրդ ու երեւի յուզմունքը թաքցնելու համար ոտքի կանգնեց,— ելէք գերեզման գնանք, մէկ է, որ օրը մի քանի անգամ շիրիմը չեմ տեսնում, չեմ հանգստանում։

«Չհասցրեց, չհասցրի, չհասցրինք...»։

Նրանք գիտէին, թէ ինչ չկարողացան անել քեզ համար, բայց գիտէի՞ն, թէ դո՛ւ, դո՛ւ, ի՞նչ երազներ ունէիր, որ չիրականացրիր։ Քսաներկու տարին տարի՞ք է, որ...

Ձեր տնից մինչեւ քո հողաթումբը ոտքով էլ կարելի է գնալ, բայց ծանօթ-անծանօթ անընդհատ կանգնեցնում էին մեքենաները, ուզում օգտակար լինել։ Իսկ գերեզմանոցում, այդ ուշ ժամին անգամ, չնայած չափազանց շատ մարդ էր հաւաքուել, անընդհատ գալիս, նորէն էին գալիս։ Նրանք քո չիրմին ծաղիկ էին դնում, կողքկողքի, կողքկողքի գլխահակ կանգնում։ Ու չնայած լուռ էին, թւում էր, թէ պինդ սեղմուած, համարեա՝ պրկուած շրթունքներով բոլորն էլ նոյնն են ասում.

— Հանգիստ քնիր, Խաչի՛կ ջան, մենք քեզ կը տանենք Մուսա լեռ։ Մեր երազներում քեզ արդէն տեսնում ենք լուսապսակով... (յապաւումներով)։

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@



***

Արցախի ներկայ վիճակն ընդամենն այն է, որ նրանով բացատրում է ազգանական երկրում խորհրդային բանակի «խաղաղություն» ստեղծելու ինքնամեայ արիւնալի գործունէութեան նոր էջը: Կուռում էին: Ո՞վ էր նրանց ետեւից կարմիր խնձոր ուղարկել: Տասնեակ հազարաւոր խորհրդային մայրեր այդպէս էլ չտեսան իրենց զաւակների վերադարձը եւ փոխարէնը՝ հարիւր հազարաւոր մայրեր Ադրանստանում զրկուեցին իրենց զաւակներից: Հիմա էլ ազգանական կիսատ մնացած գործերը խորհրդային բանակի զինուորները հանդով շարունակում են Արցախում, Հայաստանում: Մեր հողի վրայ էլ նրանք իրենց համար հեշտութեամբ «դուշմանները» են ճարում, ամէն մեղադրանք բարդում հայերի վրայ՝ իբր իրենք խաղաղ բնած էին, երազ էին տեսնում եւ հայերը···: Այո, Սումգայիթով սկսուած ցեղասպանութիւնը շարունակւում է (*«Հայրենիքի ձայն»*, 1990, թիւ 39):

ՀՐԱՉԵԱՑ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ՂԱՐԱԲԱՂԻ ՈՂԲԸ

Ղարաբաղը մաքս կանչն է՝
Ինձ կանչում է յոյսով արտում,
Ղարաբաղը իմ կակաչն է՝
Կարմիր, բայց սեր ու հի որսում:

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

Դու էլ դառած կռուածադիկ, իմ բալիկն ես, ա՜յ Ղարաբաղ,
Մեզրդ օտար մեղուին տուող, իմ ծաղիկն ես, հա՛յ Ղարաբաղ,
Հայաստանից ֆեզ պոկողը Հայաստանի եղբայրը չէ,
Երկուսիս մէջ դու էլ մոլոր, իմ բալիկն ես, վա՜յ Ղարաբաղ:

Քանի՜ բաժան դաժան տարի հայ բեբանիս ախ ես դառել,
Փոխել հայոց անունդ Արցախ, օտար Ղարաբաղ ես դառել,
Դառել օտար ցաղացին ցուր, ազգիդ սրտին դաղ ես դառել,
Էլ չեմ կարող վիշտս լռել, վա՜յ ինձ ու ֆեզ, հա՛յ Ղարաբաղ:

Դեռ էն գլխից հայոց հոգ ես, աստուածրնծայ իմ լեռնաձոր,
Քո դրախտից ձեռ ֆաշոգ հայն հայոց վայն է, ո՛վ մեզրածոր,
Թէ եղբայր են, ինչո՞ւ են ֆեզ մեր մէջ դարձրել կռ... ախնձոր,
Աստուածրնծան ինչպէ՞ս թոգնես սատանային, վա՜յ Ղարաբաղ:

Կր թառամես անտիրական, այգեպանիդ ձեռֆից զատուած,
Շիֆեաստի ես խաբուած լսում՝ Կոմիտասիդ երգից զատուած,
Քեզ չի թոգնի իշխան մնաս՝ մայր Սեւանիդ գրկից զատուած,
Քեզ կուլ կր տան մուղամները, լաոգ կ'առնեն զառ, Ղարաբա՛ղ:

Դու չես ցոկուել, խլել են ֆեզ, որ մոռանաս երգերն հայոց,
Ցորերիդ պէս խորացել են ֆո կորուստով վէրֆերն հայոց,
Ախ, երբ պիտի լեռներիդ պէս վեր բռունցֆուենն ձեռֆերն հայոց,
Որ չդառնայ հայոց արծիւն օտար ծովին նայ, Ղարաբաղ:

digitised by A.R.A.R.@

Բաց աչքերդ, անգունդը տես, եկ, մի ձուլուիր օտար գարմին,
Իմ տարագիր հայոց կոուկ, եկ, խառնուիր քո երամին,
Մեզ չի կարող մահն էլ գասել, մի ոգի ենք ու մի մարմին,
Դու իմ Ղարսի, Իմ Սասունի, իմ Մասիսի բալ, Ղարաբաղ:

Մենակ դու չես, որ դիմանամ, եօթը դրախտ ունեմ խլուած,
Վանայ ծովը, Ղարսն ու Վանը, Միփան սարը, Անին խլուած,
Հայկ Նահապետ Մասիսի հետ դեռ բանտում են ծունկը ծալուած,
Տարտարոս է Տարօնը դեռ, ո՞ւր ես, Աւարա՛յր Ղարաբաղ:

Ա՜խ, ե՞րբ պիտի ելնես բանտից՝ Նախջեւանի ձեռքից բռնած,
Ջուն գաս յաւէտ Մասիսի հետ, Ղարս ու Վանի ձեռքից բռնած,
Որ ազգովին Մասիս ելնենք, քարաւանիս ճառից բռնած,
Նորից ազգի աւազանում հայ մկրտուես, հա՛յ Ղարաբաղ:

Ասում են՝ թէ չէն է կեանքդ, առանց ազգի չէնն ի՞նչ անեմ,
Երբ չի զնգում հայոց լեզուով՝ գինով թասի ձէնն ի՞նչ անեմ,
Հիւսիսն ինք էլ սառցալուռ է, էլ իմ անգօր քէնն ի՞նչ անեմ,
Գինիդ օտար թասն է խմում, արցունքդ՝ հայր, վա՜յ Ղարաբաղ:

Բարեկամը, որ քեզ խլեց, էլ թշնամին բան կը տա՞յ ետ,
Թէ լուռ մնայ քար աշխարհը՝ չարը Ղարս ու Վան կը տա՞յ ետ,
Ի՞նչ դուռ բախեմ, որ ծիծաղեմ, ասեմ՝ Նախջեւանը կը տայ ետ,
Մոլորուել եմ ես էլ քեզ պէս, պիղծ է աշխարհն, ա՜յ Ղարաբաղ:

Քանի իմ հողն ինձ չէք տուել՝ ձեզ յեղուզակ պիտի ասեմ,
Աւարայրի Վարդան դառած՝ ես ձեզ վասակ պիտի ասեմ,
Երբ իմ բոլոր հողերն ինձ տաք՝ ձեզ հրեշտակ պիտի ասեմ,
Պիտի պաշտեմ ոգջ ազգերիդ, երբ որ չասեմ վա՜յ Ղարաբաղ:

Դու էլ հայոց գրկից խլուած իմ բալիկն ես, իմ հեռաւոր,
Պոնկաշուրբ բախտիս ոտքին, խաղալիք ես, ի՛մ լեռնաձոր,
Բայց ինչքան էլ, բալիկիս պէս դու էլ մնաս կռուախնձոր,
Շիրազն ասաց՝ աշխարհն անցիր, հայ գալիք ես, հա՛յ Ղարաբաղ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՀԱՐԱԶԱՏ Է ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՆՈՒՆԸ

Երբ սովետական երկրում Իսահակեանը տեսաւ իսկական արդարութեան ուղին, ժողովուրդների ազատութիւնն ու եղբայրութիւնը, սրտանց ողջունեց սոցիալիստական հասարակարգը եւ բացագանչեց. «Սովետների իշխանութիւնը... բերեց մեր ժողովուրդների համար ազգային ազատութիւն, սեփական հայրենիք, պետութիւն, ազգային եւ համամարդկային կուլտուրայի անարգել զարգացման բոլոր պայմանները»:

Տարիներ շարունակ Իսահակեանին մտահոգել է անդրկովկասեան ժողովուրդների, այն թւում՝ հայերի եւ ադրբեջանցիների բարեկամութեան ու եղբայրական յարաբերութիւնների ամրապնդման հարցը:

Հետագայում, Հոկտեմբերեան յեղափոխութեան յաղթանակի շնորհիւ ստեղծուած ազգամիջեան խաղաղութիւնն ու եղբայրութիւնը խորապէս ուրախացրին բանաստեղծին եւ նա մեծագոյն հրճուանքով գրեց. «Այդ նուիրական օրից անցել է միայն 20 տարի, բայց նախկինում աւեր Հայաստանը դարձել է միանգամայն անճանաչելի: Նա իրաւահաւասար անդամ է Սովետական Միութեան ժողովուրդների ընտանիքում: Օրէց օր ամրապնդւում են սիրոյ եւ բարեկամութեան կապերը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ժողովուրդների միջեւ, որոնց ցարիզմը հրահրում էր միմեանց դէմ»:

Աւետիք Իսահակեանը հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների եղբայրութեան իմաստն ու նպատակը տեսնում էր կոմունիստական հասարակութեան կառուցմանը նրանց համատեղ մասնակցութեան մէջ («Գրական թերթ», 1975, թիւ 24):

(Հատուածներ)

ԱՔՊԵՐ ԵՐԵՒԱՆԼԻ

Բաղին

ՀԱՐԱԶԱՏ-ԱՆՀԱՐԱԶԱՏ

Ազերի գրող Աքպեր Երեւանլիի «Իսահակեանը հարազատ է Ադրբեջանում» անուն յօդուածէն քաղուած քովի սիւնակին հատատումները անպայման պիտի չոյին ընթերցողին զգացումները, մղելով զայն մինչեւ անգամ հաւանական ընդհանրացումներու, թէ՝ ազերիները միայն ջարդեր կազմակերպող արիւնախումներու խառնամբոխ մը չեն, Ջիւանշիրներու, Նարիմանների, Բաղիրովներու, Ախունտովներու ու արիւնկալ Ալիեւներու արիւնէն սերած սոսկական ցեղախումբեր չեն, այլ հրմիգներու, աւերիչներու ու աւարառուներու կողքին ունին գեղեցիկը սիրող խաւ մը, Իսահակեանի «երգիր»ով սիրեալ նալու ընդունակ ու «վերք»երով մարդանալու սոսկոր հողեղէններ:

Այս էջին վրայ այսպէս պիտի մտածէ ընթերցողը, մինչեւ որ անոր աչքերը հանդիպին դիմացի էջին, ու յաջորդներուն, ու այլուր արտադրուած հատուածներու, ուր «Ադրբեջանում» հարազատ համարուող բանաստեղծը իր հայրենի եզերքներէն Ղարաբաղի մէջ անհարազատ կը նկատուի, ստանալով նոր վէրքեր, որոնց առթած հառաչանքները երգերու հետ բնաւ աղերս չունին այս անգամ...

— Ոտքս կոտրուէր, այս խառը ժամանակներում չգնայի Արցախ...

Ղարաբաղին տուած Իսահակեանի պարգ այցելութեան առիթով փրցուած բաղիրովեան հաւարին չարժառիթը պարզ չէ՞ միթէ:

Երեւի սովորական յանցապարտը եւ իշխանաւոր յանցապարտը կը կրեն նոյն հոգեվիճակը, կ'ապրին ներքին մեայուն խուճապ մը, սարսափելով իրենց զոհին ներկայութենէն, այսինքն՝ կողոպտուած արդարէն, անիրաւուած իրաւատէրէն, իմա՛՝ ազգային ու պատմական ժառանգութիւններուն ամբողջէն կառչած հատուածէն, մարդերէն, որոնցմէ մէկը, հակառակ իր սոցիալիստական հռետորութիւններուն ու ստալինեան գեղգեղանքներուն՝ համայնավար իշխանութիւններուն կողմէ չարունակ համարուեցաւ ինքը՝ Աւետիք Իսահակեան, իրենց բնորոշումով՝ «Դաշնակցական գաղափարներով տոգորուած պոետը»:

digitised by A.R.A.R.@



Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄՕՏ ԱՆՑԵԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Բապիրովը մեծ կապ չաւորութիւն էր ցուցաբերում գրականութեան եւ արուեստի հայ գործիչների Լեռնային Ղարաբաղ մուտք գործելու խնդրում. դա փաստօրէն արդիւնած էր:

Եւ ահա, չգիտես ինչ հնարամտութեամբ, 1947 թուականին Արցախ այցելու թեան է գալիս մեծ Վաբպետը՝ Աւետիք Իսահակեանը: Ամենայն հաւանականութեամբ Բապիրովը պտեմ այդ «յանդուգն» քայլի մասին չի իմացել, թէ չէ գանգ չէր տայ կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար Տիգրան Գրիգորեանին ու գազազած չէր ասի.

— Ո՞վ է այդ գաշնակ թափթփուկին թոյլ տուել այցելել Ղարաբաղ: Ո՞ւր է ձեր քաղաքական զգօնութիւնը:

Եւ կարմանալի չէ, որ դրանից յետոյ տարբ ի՞նչ է մատուել Տիգրան Գրիգորեանի գլխին: Մեծ գրողն արժանացել է տառն ընդունելու թեան եւ հոգով դատնացած դուրս եկել մարդկանի չէնքից:

Իսահակեանի այցն իրենց գործակալների միջոցով անմիջապէս վերահսկում էին պետական անվտանգութեան մարզային կոմիտէի նախագահ Զիալովն ու ներքին գործերի փաբչութեան պետ Կասպարովը, որոնք երկուսն էլ մարդ աշխատանքի էին ուղարկուել անձամբ Բապիրովի երաշխաւորութեամբ եւ ունէին տարբ գրպայքներ լարելու, «ժողովրդի թշնամիներին» խուզանդելու, նրանց նկատմամբ անօրէն պատասխանատուութիւն սանելու մեծ

digitised by A.R.A.R.@

փորձ: Ամենայն հաստատակամությամբ նրանք համոզված են եղել, թե «գաղտնի թափթփուկը» ինչ-որ տեղ թույլ կը տայ անխոհեմ քայլ, եւ իրենք իրաւունք կ'ունենան կայանելու նրան:

Աւետիք Իսահակեանի դնալուց յետոյ էլ այդ աստիճանները հանդիսաւոր չեն թողել պոետին: Մարդային կաուսակցական կոնֆլիքտներում մուտքած իրենց էլույթներում նրանք մարդկի ատաջին դէմք-դիկտատորներին բացիրատիան սեռով մեղադրել են զգոնությունն բացակայելուն մէջ՝ այն բանի համար, որ նրանք, ճիշտ է, «չնորհքով», բայց դաշնակցական զգուշաբարներով ապաստաւած պոետին թոյլ են տուել այցելել Ղարաբաղ: Իսահակեանը, իբր, մարդ է եղել դաշնակցական արտաքին հմտանեան կենսաբանի յանձնարարությամբ՝ Ղարաբաղը միացնելու Հայաստանին. այդպիսին է եղել երիտասարդի եղրակացությունը:

Տեսանելի կրակահերթից հետաքրքիր թողանցիկությունն անցած ապրիշների նպատակը մի կաթիլ ջրի պէս պարզ էր՝ Իսահակեանի ձերբակալմանը հասնել հենց Հայաստանում:

Դէպքերի ու իրադարձությունների յստակ տրամաբանությունը յուշում է, որ Բաղիրովն այս ծրագրի մասին տեղեակ է պահել Մոսկուայի իր հսկանաւորին՝ Լավրենտի Բերիային:

Մեծ դրոշի հացէին բարձրացուած վայնասունն ու վայրահաչությունը դադարեցուցին միայն այն բանից յետոյ, երբ մեծ Հայրենականի չրջանում գրած հայրենաչու նշ բանաստեղծությունների շարքի համար նրան շնորհուեց ստալինեան մրցանակ: Սատրապներին մնում էր միայն բաւարարուել փոքրիկ «չնորհներով» եւ իրենց ողջ մաղձը թափել Աւետիք Իսահակեանին Արցախում ստեղծած բանաստեղծ Բոգդան Ջանեանի եւ Ամերիկայից նոր հայրենադարձուած Զաքարի Սուրավեանի վրայ: Երկուսն էլ կեղծ մեղադրանքներով ձերբակալուած, դատուած են, երկար տարիներ անցկացնում բանտախցերում: Ասում են՝ Վարպետը ծանր է տարել իրեն ու դիմացողների ձերբակալությունը եւ դառնորեն ասել.

— Ոտս կոտրուէր, այս խառ ժամանակներում չգնայի Արցախ...

Թէկուզ մեծ որսի դուրս եկածներն ստիպուած էին բաւարարուել փոքր «սրսուով», այնուամենայնիւ, նրանք հասել էին իրենց նպատակին՝ շճոնաշել ոչ մի մեծություն, Ղարաբաղը պահել «անեղծ» վիճակում, թույլ չտալ, որ անգամ հուշն իր թեւով անցնի նրա սահմանը: Եւ, իսկապես, երկար տարիներ այլեւս ոչ մի «ստանձնություն» չկար («Նորք», 1989, թիւ 12):

Ե. ՍԱՐԳՍԵԱՆ

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ամենքը գիտէին այն վշտալի պատմությունը, որ կատարուած էր Լեռնային Ղարաբաղի հետ: Վարպետն իր կնոջ՝ Սոփիա Իսահակեանի հետ միասին, իր մտերիմ, գիւղատնտես Զաքարի Սուրավեանի մեքենայով 9 օր (1948ի Յուլիսի 15ից 24ը) շրջել էր Ղարաբաղում: Այս Սուրավեանը նոյնպէս ղարաբաղցի էր եւ հենց նոյն 1948ին Ամերիկայից ներգաղթել էր Հայաստան:

digitised by A.R.A.R.@

Իսահակիանը Ղարաբաղում եղել էր մէկ էլ 1910ին, կնոջ հետ, ամուսնութիւնից անմիջապէս յետոյ: Նորապսակները եղել էին Շուշիում, ուր ապրում էին Սոփիա Բոյարեանի (բանաստեղծի կնոջ օրիորդական ազգանունը) հինգ հօրեղբայրները եւ հօրաքոյրը՝ իրենց ժառանգներով. նրանց մեծ մասը դարձել էր Շուշուայ 1920 թուի Մարտի 22–23ի կոտորածի զոհը:

Իսահակեանի զարարաղեան շրջագայութիւնը ծանր, շա՜տ ծանր հետեւանքներ ունեցաւ: Հայածանքները եւ ոգեւոր հիւրընկալ մտաւորականների դէմ: Շատերը բանտարկուել են, վտարուել աշխատանքից, մարվից առհասարակ: Ինչպէս Զաքար Սուրմալեանն աքսորուել է Սիբիր:

Բանաստեղծ Բոգդան Ջանեանը (Ադրբէջանի գրողների միութեան Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի այն ժամանակուայ պատասխանատու քարտուղարը), որ եղել էր Իսահակեանի զարարաղեան շրջագայութեան ուղեկիցը եւ այդ պատճառով ենթարկուել հալածանքների, շատ տարիներ անց՝ միայն 1988ին հնարաւորութիւն ունեցաւ հրապարակել իր վկայութիւնները:

Աւելաք Իսահակեանը նկատել է, որ իրենց հետեւում են եւ ասել է զայրացած.

— Կարծես թէ մեզ հետեւում են, բայց ինչո՞ւ, գո՞ղ ենք, թէ աւազակ:

Իսկ երբ նրան յայտնի են դարձել իր շրջագայութեան հետեւանքները, դառնացել է խորապէս.

— Ուրեմ կոտրուէ՛ր Ղարաբաղ չդայի...

Բանաստեղծը թղթին է յանձնել զարարաղեան շրջագայութիւնից ստացած մեայլ տպաւորութիւնները: Ահա դրանցից մի քանիսը:

ԻՍԱՀԱԿԵԱՆ— Ընդհանրացումներից մէկն էլ այն է, որ վայ թէ մի կնոջ, հայ ղարաբաղցի կնոջ հարցնես, թէ ո՞նց ես, ասում է լաց լինել եւ ասել իր կորուստների մասին: Ղարաբաղում տուն չկայ, որ պատերազմի զոհ տուած չլինի: Գոնէ մի մարդ: Մայրեր կան երեք–չորս տղայ են կորցրել: Ուզղակի քամել են հայ ժողովրդին, քամել են...

— Ղարաբաղը բացարձակ կտրուած է Հայաստանից՝ ո՛չ թերթ, ո՛չ գիրք: Դասագիրք չունեն՝ հայերէն, բաքու չեն տպում հայ դասագրքեր, նոյնիսկ մայրենի լեզուի:

— Լեռնային Ղարաբաղի աւտոնոմեան բացարձակ սուտ բան է («Վարքի մեծաց», Երեւան, 1990):

Լ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

ՎԱՐՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ուղիղ քառասուն տարի առաջ, ծանր մի ժամանակ, Վարպետը ուղեւորուեց Ղարաբաղ: Դա 1948 թուականի Յուլիսն էր, աւելի ճիշտ՝ Յուլիսի 15–24: Ստալինիզմի մոլեգնութիւնների ամենաթունդ շրջանն էր, մի քանի ամիս անց սկսուելու էր նոր «1937»ը՝ 1949 թուականը, աքսորի ուղեւորութիւնների զարհուրելի տարին:

Լեռնային Ղարաբաղում տիրում էր Միրզաֆար Բաղիրովի՝ ստալինեան ամենասեւ դահիճներից մէկի դիկտատուրան:

digitised by A.R.A.R.@

Այսօր դժուար է գուշակել, թէ ի՞նչը մղեց Խաչակեանին հենց այդ ժամանակ բռնելու Ղարաբաղի ճամբան, ուր նա չէր եղել 1910 թուականից ի վեր...

Մի բան է միայն յայտնի, որ Խաչակեանը գնաց Ղարաբաղ սրտի թելադրանքով, իսկ բանաստեղծի սիրտը զգում էր, որ այդ դժուարին ժամանակ ինքը պէտք էր իր ժողովրդին, պէտք է բորբոք պահի նրա յոյսն ու հաւատը: Նա, յիրաւի, գիտակցում էր, որ հենց իր ներկայութիւնը ուժ ու աւիւն կը տայ հայրենաբաղձ դարաբաղցուն: Եւ վերջապէս բանաստեղծին անհրաժեշտ էր մի անգամ եւս, կեանքին հրաժեշտ տալուց առաջ տեսնել իր հայրենիքից բռնութեամբ պոկուած այդ հատուածը:

Եւ այսպէս, 1948 Յուլիսին Զանգեզուրով Ղարաբաղ են գնում Աւետիք Խաչակեանը, Սոփիա Խաչակեանը եւ Զաքարի Սուրաւեանը: Վերջինս ծագումով բնիկ դարաբաղցի էր, երկար տարիներ ապրել էր Միացեալ Նահանգներում, գարձել անուանի գիւղատնտես, հենց 1948ին էլ ներգաղթել Հայաստան՝ իր հայրենիքին պիտանի լինելու բարի երազներով:

Հենց Զաքարիի անձնական «Ֆորդ» աւտոմեքենայով էլ նրանք ճամբայ են ելնում (աւելորդ է գրել, թէ այդ տարիներին ի՞նչ տպաւորութիւն կը թողնէր ամերիկեան այդ վերջին մոդելի մուգ կարմիր «Ֆորդ»ը մեր գիւղացու վրայ):

Մինչեւ օրս համարւում էր, որ Վարպետը այդ ուղեւորութիւնից գրաւոր որեւէ վկայութիւն չի թողել, քանի որ ոչ մի յիշատակութեան չենք հանդիպում ո՛չ նրա «Ցիշատակարան»ում, ոչ էլ նամակներում: Մնացել են միայն ականատեսների վկայութիւնները. գրող Բոգդան Զանեանի արժէքաւոր յուշերը բոլորովին վերջերս տպագրուեցին «Սովետական Հայաստան»ում:

Այդ ուղեւորութեան մասին մեր տանն էլ յաճախ է խօսուել. աղօտ կերպով յիշում եմ պատմութիւնն այն մասին, որ Խաչակեանը Շուշի մտնելով եւ տեսնելով հայկական այրուած թաղամասերը, տակնուվրայ արուած գերեզմանները, երկու ափերով փակել է աչքերը ու դառն հեկեկացել:

Բայց եթէ տխուր յուշերի շարանը դրանով աւարտուէ՞ր: Այն դարաբաղցիները, որ ուղեկցել կամ հիւրընկալել էին բանաստեղծին (այդ թւում եւ Բոգդան Զանեանը) ձերբակալւում են եւ տարբեր ժամկէտներով դատապարտւում, որպէս «նշանաւոր ազգայնականի գաղտնի, պատակտիչ նպատակներ հետապնդող այցի մասնակիցների»:

Վերադարձից քիչ անց ձերբակալւում եւ տասը տարով սիբիրեան ճամբարներ է աքսորւում Զաքարի Սուրաւեանը: Նրա կարմիր «Ֆորդ»ը բռնագրաււում եւ «էտապաւորւում է Թբիլիսի»՝ պատժիչ ապարատի բարձրատիճան չինովնիկների փափկասուն տիկնանց սպասարկելու համար:

Սակայն այդ դրամատիկ իրադարձութիւնների քողից այն կողմ կար եւ յաղթանակը. ժողովուրդը հանդիպում է իր բանաստեղծին, լսում նրա իմաստուն խօսքը, շօշափելիօրէն զգում, որ կայ հայ գրականութեան կենդանի կաղնին, հօ՞ չէին կարող Խաչակեանի տեսած բոլոր դարաբաղցիներին բռնադատել: Բոգդան Զանեանը, Բագրատ Ուլուբաբեանը, Արտաշէս Պօղոսեանը, ինչպէս նաեւ հանգուցեալ Միքայէլ Ցարութիւնեանը վկայում են, որ Վարպետի ստեփանակերտեան օրերը կարծես քաղաքն արթնացրին լեթարգեան քնից, ոգեւորեցին, խանդավառեցին, յոյս ու հաւատ ներշնչեցին...: Իսկ ընդդիմադրել դրան անկարող էին ա՛նգամ ժամանակի «ամենակարող հերոսներ»ը («Գրական թերթ», 1989, թիւ 46 — յապաւումներով):

ԱՒԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Մարդկութեան, մեծ ազգերի, լուսաւոր ազգերի աչքերի առաջ մի ողջ ժողովուրդ հայրենազրկւում է, երեայ է դառնում, բայց ոչ ոք ձեռք չբարձրացրեց կասեցնելու բարբարոսի հարուածները, դաժան գործը, միմիայն մղուած էգոիստական, գազանային բնազդներից, հաշիւներից...

Ընդհանրացումներից մէկն էլ այն է, որ վայ թէ մի կնոջ, հայ ղարաբաղցի կնոջ հարցնես, թէ ո՞նց ես, սկսում է լաց լինել եւ ասել իր կորուստների մասին: Ղարաբաղում տուն չկայ, որ պատերազմի զոհ տուած չլինի: Գոնէ մի մարդ: Մայրեր կան երեք-չորս տղայ են կորցրել: Ուղղակի քամել են հայ ժողովրդին, քամել են...

Ղարաբաղը բացարձակ կտրուած է Հայաստանից՝ ոչ թերթ, ոչ գիրք: Դասագիրք չունեն՝ հայերէն, Բաքու չեն տպում հայ դասագրքեր, նոյնիսկ մայրենի լեզուի:

Սա անհոգութե՞ան արդիւնք է, թէ՞ սիստեմ, քաղաքականութիւն:

Խեղճ ղարաբաղցիք կարծում են, թէ իրենք ապրում են թուրք պատմական հողերի վրայ, ոչ թէ՝ ընդհակառակը: Խաւար երկիր, իշացած:

Լեռնային Ղարաբաղի աւտոնոմիան բացարձակ սուտ բան է, նա Բաքուին ենթարկուած մի բան է: Ադրբիջանը իշխում է ամէն բանի մէջ:

Ստեփանակերտ ոչ մի հայ գիրք չի տպւում:

Մի ողորմելի թերթ:

Տեղական երիտասարդները վառւում են, ուզում են արտայայտուել, ոչ մի հնար չկայ:

Ստեփանակերտ· հլու-հպատակ, ձեւական աւտոնոմիա, ֆիկցիա, իրաւազուրկ գրեթէ, ինքնավար չէ բնաւ, ամէն բանի մէջ, ամենաչնչին բանի մէջ ենթարկուող Բաքին...

Մեռնենք էլ, չենք խառնուի իրար հետ՝ հայ, վրացի, թուրք տարբեր են, սոցիալիզմը չի կարող միացնել նրանց («*Գրական թերթ*», 1989, թիւ 46):

— ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

***

Վերջին երկու տարին շատ բան խլեց մեզանից, բայց, փառք Աստծոյ, տուածը խլածից շատ է: Մենք սկսեցինք մեզ ճանաչել, մեր ուժին եւ պնդութեանը հաւատալ: Վերջապէս ազգովի գլխի ընկանք, որ աւագ եղբայրը խորթ է եղել: Մենք հայ քրիստոնեայ ենք եւ միշտ թոյլին ենք պաշտպանում եւ արդարութեան կողմն ենք: Թւում էր՝ մեր աւագն էլ նոյնպիսին պիտի լինի: Բայց աւագը երկու տարի մեզ խաբեց ու դեռ շարունակում է խաբել: Նա անցաւ ուժեղի կողմը, արհամարհեց մեր արդար պահանջը, փորձեց ու դեռ փորձում է ալխարհի համար երեք հազար տարի տներ չինած մի ազգի հաւասարեցնել երկուայ վաչկատուն ցեղերին:

Չէ, այդ չի լինելու, ինչպէս ասում են, վերեւն Աստուած կայ...

Թող Բելով-Բոնդարեւ-Ռասպուտինները մտածեն ալխարհի երեսից ի սպառ ջնջուած իրենց երկու հարիւր հազար գիւղերի մասին, Եւրոպայի տարածքից մի քանի անգամ աւել իրենց մեռած հողերի մասին, ցամաքած լճերի մասին ու մահամերձ գետերի: Եւ թող իմանան, որ դրա մեղքը հրեաներինը չի եւ ոչ էլ միւս ազգերինը: Թող նրանք չմտածեն ուրիշ ժողովուրդների հաշուին աւելի անպարագիծ ու մեծ Ռուսաստան ստեղծելու մասին, այլ այնպիսի Ռուսաստանի, որ ազատ լինի, ապահով, հարուստ եւ հարեւան ժողովուրդների համար ոչ թէ հովանի լինի, այլ նոյն ծառի հովին հացի նստած ընտանիքի հաւասար անդամ... («Գրական թերթ», 1990, թիւ 1):

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ԾԱՌՍ ԵՍ ԼԻՆՈՒՄ

●

Քո քարեղէն հողին կապուած,
Բիրտ ցեղերով շրջապատուած,
Նորից խարուած, հիասթափուած,
Արիւնոտուած, խոցուած, խայթուած,
Վերքիդ ցաւից մի քիչ խախտուած,
Ծառս ես լինում դու առ Աստուած,
Քո Միսրոպեան մտքի լոյսով,
Արդարութեան մի բուռ յոյսով:
Քո քարեղէն հողին կապուած-
Մենա՞կ ես դու... Սո՛ւտ է ասուած,
Սփիւռք ունես առ քեզ հակուած,
Աշխարհով մէկ հատուած-հատուած,
Ովկիանոսներով քեզնից զատուած,
Բայց միշտ քեզ հետ, քեզնից պաշտուած,
Լցուած քո մէջ, քեզնով բացուած,
Մի երդ, մի բերդ, մի երթ դարձած...
Էլ ի՞նչ ցնցում, էլ ի՞նչ կաթուած,
Պարզած ձեռքդ վերուստ հաստուած,
Ծառս ես լինում դու առ Աստուած,
Քո Նարեկեան խղճի լոյսով,
Արդարութեան մի բուռ յոյսով:

***

Ուզում եմ կորչել, չքուել յաւիտեան
Այս շրջապատի անտարբերութեան
Սառուցեալ դաշտից,
Այս համատարած մտքի երաշտից,
Այս զրահակիր սնափառութեան
Համաճարակից,
Այս ամէն տեսակ ախտ ու վարակից
Ուզում եմ չքուել, կորչել յաւիտեան:
Ուզում եմ փրկուել
Փրկութիւն կոչուող այս գերութիւնից,
Ամենակարող այս տէրութիւնից
Եւ այս տէրութեան անտէրութիւնից,
Նրա վաղաժամ այս ծերութիւնից,
Իմ համբերատար համբերութիւնից,
Իմ թուլութիւնից, իմ թերութիւնից,
Ուզում եմ փրկուել — պրծնել յաւիտեան:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մեզ մի Նժդեհ պիտի փրկի,
Մի դաւանանք ցեղակրոն,
Հզօր ոգին Անդրանիկի
Պիտի լինի փառքի դրօշ…

ԴԱՒԻԹԻՆ ՆԺԴԵՀ

ԱՐՑԱԽԵԱՆ ԵՐԳԵՐ

∴

Արցախական վանքերս
Փակուած դռներն են բացում,
Մատաղական զանգերս
Զօդանչում են խնկաժուխ…
Ու ուխտաւոր հաւերս
Ծլլում են, թռւածում,
Մամուռ կապած քարերս
կարմիր արդան են լացում,
Դուման հազած սարերս
Որոտում են՝ միացո՛ւմ…

∴

Բերդաշէնի՞կ, Շէնիկաբե՞րդ…
Դարպասն է գոռ մեր աշխարհի,
Այստեղ ամէն քարափ ու բերդ
Մի-մի բերդ է անպարտելի,
Ամէն աստղի ցոլք ու զօդանչ,
Աղբիւրի զանգ, ամպի որոտ,
Առասպելի շունչ է ու կանչ,
Ոգու թռիչք, արտի տրոփ…
Լենքիմուրն է չոքել այստեղ՝
Հորդաններով աշխարհաւեր,
Փշրուել են սուր ու աշտէ,
Ցորդացել են արեան գետեր…
Ցօրինուել են ասք ու տաղեր,
Առասպելներ հակասական՝
Բերդաշէնիս փառքին վայել՝
Դիւցազնական ու յաղթական…

∴

Ախ, այս պստիկ աշխարհն ունի
Հազար ու մի ցաւի եզերք,
Աշխարհ-աշխարհ պիտի ելնենք,
Որ մի Արցախ աշխարհ պահենք…
Արցախ-Արցախ, շէն ոստանով
Փաղանգ-փաղանգ, Սասուն-Սասուն,
Աշխարհազօր Հայաստանով
Պիտի պահենք մեր Տունը սուրբ…
Ոգէ աշխարհը ամպած ու մութ,
Խառնարան է սեւ-մութ ուժի,
Գայլերը նենգ վոհմակներով
Խրախճում են մէգ ու մուժին…
Մեզ մի Նժդեհ պիտի փրկի,
Մի դաւանանք ցեղակրօն,
Հզօր ոգին Անդրանիկի
Պիտի լինի փառքի դրօշ…
Հայկեան նետի սոյլն է հզօր
Մեր արեան մէջ ու մեր եռքի,
Բոցավառուեն պիտի այսօր
Ոգէ հայութեան սիրտն ու ոգին…
Այդ բոցերից պիտի թռչեն
Հուր ոգիներ վահագնահեր,
Նոր փառքերով պիտի հնչեն
Ցաղթանակի երգերը մեր…

ՑԱԿՈԲ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱՆԱԴԱՆ-ԲԱԲԱԴԱՆ

Ժամբարային գրականութեան հայկական թեւի գլուխ-գործոցներէն համարուող Գուրգէն Մահարիի «Մաղկած փշալարեր»էն առնուած է պարագայական խորագիրի մը տակ զիմացի էջին տրուած գրութիւնը, ուր ընթերցողը պիտի գտնէ դարերու կնիքը կրող հոգեբանութեան մը մէկ հարազատ ճիշը:

Նաեւ՝ այդ հաստատմամբ հոգեբանութիւնը խախտել նկրտող կարմիր խորշակին առթած ողբերգութեան մէկ արարը:

Ղարաբաղեան հոգեբանութեան եւ անոր տրուած հերթական հարուածներէն այս մէկուն առիթով կ'արժէ ընդգծել արձակագիր Մահարիի ամէնէն յատկանշական մէկ կարողութիւնը, որ որացուած լուռ շարժումի մը կամ հազիւ լսելի արտայայտութեան մը ատաղձով գիտէ հանդերձել անմահ տիպար մը, Բալունց Հեթումը, որ Միպերիոյ սառոյցներուն ծոցը կամ վրան «նստած»՝ գարմանալով կը գարմանայ իր աքսորին պատճառը ստուգել ուզող գրագէտին հարցումին ի լուր. «Բա զարաբաղցուն էլ կը հարցնե՞ն ինչ գործով ա նստած»:

Ամէնուն՝ այո, բայց զարաբաղցո՞ւն էլ...

Տարեց ընթերցողները գիտէին ու նորերը նոր գիտցան, որ զարաբաղեան պատկանելիութեամբ աշխարհ եկած ըլլալու սոսկական մեղքին համար տեղահանուեցան ու Միպերիոյ ցրտաշունչ բեւեռներուն տարտղնուեցան հազար-հազարով Բալունց Հեթումներ, որոնք սակայն ա՛նգամ մահուան մանգաղին տակ հաւատարիմ մնացին իրենց էութեան, աւանդներուն, խղճին, զարաբաղեան սրբութիւններուն: Իրենց հոգին մաքուր պահած բոլոր մարդոց համար չշափելի ըլլալու չափ իրական արժանիքներ են ասոնք: «Բալունց Հեթում, որ ասում են, ես եմ, իմացած կաց...»:

Բնութիւնը դեր ունեցած է եւ ունի մարդու մը, նոյնիսկ հատուածի մը, մինչեւ իսկ ժողովուրդի մը բնաւորութեան կազմութեան մէջ: Գիւտ մը չենք ըներ հարկաւ, հազար անգամ հաստատուած ճշմարտութեան մը կրկներեւոյթը կ'ուզենք դարձեալ ուշադրութեան յանձնել, թէ՝ դաշտի մը մէջ ծնած ու հարթութիւններու սովոր անձը հազիւ թէ նմանութեան եզրեր ունեցած ըլլայ լեռան մը լանջին ծնած ու լեռնային իրադարձութիւններու մօտ ու մէջ ոսկոր կապած անձին հետ: Հիմա չխօսինք առաջինին մասին, երկրորդը լաւ ծանօթ է մեզի, առասպելական Ղարաբաղի բարձունքներուն առասպելներ կերուած զարաբաղցին...

Ի դէպ, նման տիպար մը վերջերս ներկայացուց նաեւ հայրենի արձակագիր Գէորգ Դեւրիկեան, հրապարակագրական էջի մը մէջ, Իվան Աթայեանը, որուն «Ամա մարդիկ են մնացել Արցախի խիղճը եւ խիղճն այդ յաղթանակել է: Այդ նրա Ամա մարդիկն են հպարտութեամբ ասել՝ մենք զարաբաղցի ենք եւ այդ հպարտ գիտակցութեամբ էլ հաւատարիմ մնացել հայրենի հողի սրբութեան ու մայրենի լեզուի յաւերժութեանը: Հաւատաւոր մնացել արդարութեան յաղթանակին» («Հայրենիքի ձայն», 1980, թիւ 28):

Ո՛չ միայն մէկ Իվան Աթայեան, այլ բիւրաւոր Աթայեաններ ունեցաւ եւ ունի Արցախը, իր երկինքին տակ, երկինք ու աստուած չունեցող վայրերու մէջ, ու անոնց ներկայացուցչական տիպարը իր փշալարերուն մէջ ծաղկեցուցած Մահարիի հիանալի բարունակը՝ Բալունց Հեթումը, որ ճակատագրական մեղք մը ունի, անքաւելի՝ մեր հարեւաններուն ու անոնց հովանաւոր բռնակալներուն համար, անտեղիտալի ու համբուրելի՝ բոլոր հայերուն համար, որովհետեւ «էն Բոռին ինչ է, նա էլ գիտի, որ Ղարաբաղը է՛ է՛ է՛, անադան-բաբադան Հայաստան է եղէ ու Հայաստան էլ կայ...»:

digitised by A.R.A.R.@

Գուրգէն Մահարի

— ... Ինձ ասել են՝ թե ես ուզում եմ Ղարաբաղը պոկեմ Ադրբեջանից ու Հայաստանին կցեմ: Ա՛յ քեզ, մատաղ, ես ի՞նչ կոտոշ-կլոշ եմ: Չի՛նչը կապեմ, ի՛նչը կցեմ: Վա՜ ասելու բա՞ն ա...: Բա որտե՞ղ համոզ մարդու կը հանեն ունից, հոգից, աշխատանքից ու Սիբիրն՝ը կը քաշեն, այ քէ մատաղ... էն բոլշէն լինչ է, նա էլ գիտի, որ Ղարաբաղը է՛ է՛ է՛, անպզան-բարեղան Հայաստան է եղել ու Հայաստան էլ կայ...

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

Գ. ՄԱՀԱՐԻ

ԱՆԱԴԱՆ-ԲԱԲԱԴԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ Է...

... Ձիւնը սառել է լարերի ու երկաթէ փշերի վրայ եւ մի բոպէ թւում է, որ նրանք ծաղկել են ինչպէս խնձորենին է ծաղկում գարնանը: Եւ ճիշտ այդ բոպէին ինձ մօտենում է հնամաշ շորերի մէջ կորած մի բուռ կալանաւոր: Ես ուշադրութեամբ նայում եմ նրա նիհար, սեւ, մազակալած դէմքին եւ մեծ բանաստեղծի ասածի պէս՝ նրա աչքերում յառնում է նա, հեռու ու հարազատ երկիր Նայիրին:

— Հա՞յ ես, քէ մատաղ,— հարցնում է նա, անհուն մի ցաւով նայելով դէմքիս:

— Հայ եմ,— պատասխանում եմ ես, վախենալով, որ տեսածս տեսիլք կարող է լինել:

— Հայ եմ,— հաստատում եմ նորից,— ո՞րտեղացի ես...

— Ղարաբաղցի եմ, քէ մատաղ, դարաբաղցի...

— Ի՞նչ գործով ես նստած...

— Ինչ գործո՛վ,— հեգնում է նա ցրտից սրբսրբալով,— ինչ գործո՛վ...: Բա՛յց դարաբաղցուն էլ կը հարցնե՞ն ինչ գործով ա նստած...

digitised by A.R.A.R.@

— Բա ինչո՞ւ չեն հարցնում,— հարցնում եմ ես:

— Բա դու Բալունց Հեքումի անունը չե՞ս լսել…

— Չէ, չեմ լսել,— պատասխանում եմ ես եւ իսկապէս չեմ լսել:

— Էդ ես եմ, որ կամ… Բալունց Հեքումին, որ նստացրել ոչ՝ աշխարհը վաղուց դարմադաղան էր եղէ, էէ մատաղ…

— Աշխարհը՝ չէ, գուցէ Ղարաբաղը,— անցնում եմ ես բանակցութեան:

— Բա Ղարաբաղն աշխարհ չի, ի՞նչ է…: Ինձ ասել են էի ես ուզալ իմ Ղարաբաղը պոկեմ Ադրբեջանից ու Հայաստանին կցեմ: Այ էէ մատաղ, ես հի՞նչ կտրող-կցող եմ: Հի՞նչը կտրեմ, հի՞նչը կցեմ: Վա ասելու բա՞ն ա…: Բա սրա համար մարդու կը հանեն տնից, հողից, աշխատանքից ու Սիբիրնե՞ր կը քաշեն, այ էէ մատաղ…: Էն քոռփէն ինչ է, նա էլ գիտի, որ Ղարաբաղը, է՛է՛է՛, անադան – բաբադան Հայաստան է եղէ ու Հայաստան էլ կայ…: Ե՞ս պիտի կտրեմ – կցեմ…: Բօօ,— անդրադարձաւ նա ատամները ցրտից չխչխկացնելով,— ցուրտը ջանս մտաւ …: Ես գինացի…: Տաքերն ընկնեն՝ կը նստենք, կը խօսենք…: Ասում եմ՝ տաքերն ընկնեն, միտքս լաւ հասկացի…: Բալունց Հերքում, որ ասում են, ես եմ, իմացած կաս…

Ու քամու հետ գլորուելով, նայիրեան ոգին, տեսիլքի նման դիւթական՝ անհետացաւ մօտակայ գետնափոր բարաքներից մէկում (*«Մաղկած փչայարեր»*, Պէյրութ, 1986, էջ 176–177):

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

ՄԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐՆ ԵՆՔ

— Գանձասա՞ր։ Այս ուշ ժամի՞ն...

— Այո,— խնդրեցի։ Օրը դեռ չի մթնել, դեռ կը հասցնեմ տեսնել, ինչ հարկաւոր է։ Մտադիր չեմ նկարագրել վանքի պատմական չքեղութիւնն ու անձեռակերտ պատկերների խորհրդաւոր համայքը։ Դա վաղուց է արուած, եւ՝ հրաշալի յաջողութեամբ։ Ես ուզում եմ Գանձասարի վանքը տեսնել իր մենութեան մէջ, երբ հնամեայ սալքարերին մարդկանց ոտնաձայները չկան, երբ սրահները լցուած են հալոց-վերջացող մոմերի ազատ արտացոլանքով։

Գանձասարի գմբէթներից Արցախ աշխարհի վրայ զանգեր չեն զողանջում. զանգերը հանուած են, բայց ասում ենք Գանձասար, եւ Արցախի, ամբողջ Հայաստանի լեռնաձորերը լցւում են յաւերժական զանգերի ոգեշունչ զողանջով։ Վանքի մթնող սրահներում ես ուզում եմ լսել խորհրդաւոր չշուկներ՝ սրբազան այրերի չիրիմներից բարձրացող, բազմախորհուրդ խաչքարերի նախշերից ու աստուածակերպ դէմքերի չուրթերից յառնող չշուկներ։ Մրտադող հաւատացեալի ազերանքով ես ճգնում եմ, որ այս մեծ սրբավայրի խորհուրդներից ինձ հաղորդուի սպասման օրերի գաղտնիքը։ Գայթա՛ռ գաղտնիքը։ Իմ միտքի պատկերացմամբ այդ աւրնչութիւնը միայն այստեղ՝ Գանձասարում է հնարաւոր։ Որովհետեւ այստե՛ղ է գրուել Ռուսաստանի կայսր Պետրոս առաջինին ուղղուած անդրանիկ նամակը, որով զարթաղցիները Ռուսաստանի օգնութիւնն են խնդրել արեւելքի բարբարոսներից ազատագրուելու համար։ Վանքի այս կամարակապ ելքից է, որ Հայոց աշխարհի ցաւատանջ ու մենաւոր դեսպան Իսրայէլ Օրին ճանապարհ ընկաւ դէպի մեծ Ռուսաստանի յուսաշող տափաստանները։

Ցանկարծ Գանձասարի թախծախորհուրդ լռութիւնը լցւում է կապտաւուն մի թռչնակի, հաւանաբար օրուայ վերջին թեւաւորի, աքանչելի գեղգեղանքով։ Մեծ ու դատարկ սրահներում, կապտամուգ խորաններում, փոքրիկ երկնային նուագը հնչում է որպէս աստուածային չարական։ Եւ միտքիկ հաւատացեալի իմ չուրթերը չեն կարողանում չչնչալ. ո՞ւմ ոգին ես դու, կապտաւուն թռչնակ, Հասան-Ջալալի՞, որ «Շինեցէք եկեղեցի մի գեղեցկագարդ յօրինուածով գմբէթարդ երկնանման տաճար ի փառսն Աստծոյ», ազգային-ազատագրական շարժման մեծ գործիչ Եսայի կաթողիկոսի՞, որ Գանձասարից հնչեցնում էր իր խրոխտ, առնական զինակոչը, թէ՞ մեր Իսրայէլ պատգամաւորի...։ Եւ ի՞նչ ես ասում ուշ-իրիկնային այս գեղգեղանքով, երբ վաղուց ջնջած են աշխարհի բոլոր թռչունները...

Խորհրդաւոր թռչնակի իրիկներգով գուցէ սպասման օրերի գաղտնի՞քն էր հաղորդում, որին հասու չեղաւ իմ խեղճ հոգին։ Կամարակապ ելքից դեռ երկար նայում էի այն ուղղութեամբ, ուր երեք դար առաջ հեռացել է Հայոց թախծագէմ պատգամախօսը։

— Ջգնա՞նք,— ասում է ուղեկիցս՝ տեղացի արձակագիր Կոմիտաս Դանիէլեանը։

— Գնանք։ Միայն խոստացիր, որ էլի մէկ անգամ այս նոյն ժամին ինձ կը բերես Գանձասար («Գրական թերթ», 1988, թիւ 22)։

ԻԳՆԱՏ ՄԱՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

ՔԱՐԵՂԷՆ ԵՒ ՈԳԵՂԷՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարբեր էր երէկը, տարբեր էր Հայաստանը։ Աւարայրեան ոգին էր այնուհետ, սարդարապետեան միասնութեան ոգին կը թափէր հոգիներուն վրայ։

Ու, այս առթիւ ինք՝ Հայաստանի հայութիւնը, հոգեփոխուած էր։ Նոր երիտասարդութիւն մը ծնունդ առած է, եւ մաքրագուտած, րիւրեգոյնած, արթնցո՛ւն հայութիւն մը։

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

Երեքշաբթի 5 Յուլիսին, այցելութիւն մը տուինք Մատենադարան, ուր ընդունուեցանք Մատենադարանի տնօրէն Սէն Արեւշատեանի եւ Փրոֆ. Յակոբ Փափազեանի կողմէ։ Անգամ մը եւս հպարտացանք մեր մշակոյթի սքանչելի վկայութեանց ի տես։ Յատկապէս տպաւորիչ էր ձեռագիրներու կողքին տեսնել Ղարաբաղէն բերուած քանդակ-վիմական արձանագրութիւն մը, որ հրապարտօրէն ի տես դրուած էր Մատենադարանի ցուցասրահին մէջ։ 13դդ. դարու վիմական արձանագրութիւն մըն էր. հաւանաբար հոն դրուած էր, որպէսզի այլխարհի բոլոր կողմերէն եկող զբօսաշրջիկները տեսնէին — եթէ պէտք է — Ղարաբաղի ՀԱՅ ըլլալուն քարեղէն վկայութիւնը։

Բազմաթիւ առիթներ ունեցանք երթալու, եւ ըլլալու ժողովուրդին հետ։ Տակաւին Օփերայի հրապարակին տպաւորութեան տակ եմ, եւ բառեր չեմ կրնար գտնել, արտայայտելու համար այն յուզումը, որ իմս էր, երբ տեսայ, թէ ինչպէս հարիւր հազարաւոր բռունցքներ կը բարձրանային օդին մէջ՝ օրուան ճառախօսներուն այս կամ այն հարցումին ի պատասխան։ Չեմ կրնար մոռնալ առաջին՝ բոպէս, յա՛տկապէս՝ երբ արցունքի կաթիլներ իջան այտերէս, երբ տեսայ ժողովուրդը։ Ֆիլմերուն մէջ տեսեր էինք Հռոմի ժողովուրդը, յետոյ՝ Ս. Պետրոսի հրապարակը՝ Վատիկանի մէջ։ Բայց Օփերան տարբեր էր։ Ամէնքը հայ էին, հա՛յ։ Ժողովուրդի կարօտ մեր սրտերուն սպեղանի էր տեսնել այնքան համախմբուած հայ։ Ինչպէ՞ս ըսեմ, հոն էին ծերը, երիտասարդը, մանուկը, գրագէտը, նկարիչը, ամէ՛ն հայ հոն էր։ Օփերայի աստիճաններէն հռետորները կը խօսէին եւ ժողովուրդը անմիջապէս կը պատասխանէր, կ՚արձագանգէր անոնց...

Այս բոլորին կիզբոնն էր Ղարաբաղը։

Հայաստանը՝ Ղարաբաղով։

digitised by A.R.A.R.@

Եւ ինչ որ կ'ընէ հայաստանցին՝ Լեռնային Ղարաբաղի համար է. մեծով, պզտիկով, մանուկ թէ ծեր, ակադեմիկոս թէ կթուոր կին՝ մէկ մտասեւեռում ունին — Ղարաբա՛ղ։ Կրնամ ըսել, որ ամբողջ ազգ մը հիփնոսացած էր այս անունով՝ Ղարաբաղ։ Ղարաբաղը, ինք զրեթէ ապստամբ վիճակի մէջ է ու մէկ բան գիտէ — պէ՛տք է վերապրիլ եւ միանալ Հայաստանին։ Որովհետեւ, կ'ըսեն, եթէ այս անգամ Ղարաբաղի հարցին լուծում չտրուի՝ ա՛լ Ղարաբաղը ապագայ չունի։ Ղարաբաղի վերջն է տնտեսապէս եւ նաեւ ազգագրական տեսակէտէն։ Եթէ Ղարաբաղը չարունակէ մնալ Ադրբէջանի իշխանութեան տակ՝ ժողովուրդի տեղաշարժով, նոր բնակիչներու յաւելումով, Ղարաբաղի բնակչութեան կազմութիւնը կը խախտի, հայերը, որոնք 90 առ հարիւրէն իջած էին 75 առ հարիւրի, կրնան իջնել յիսուն տոկոսի եւ հարցը ինքնաբերաբար կը լուծուի։

Մենք Հայաստան գացեր էինք՝ Էջմիածնայ եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեանց յարաբերութեան գործով. բայց հոգեպէս անհուն կերպով ուրախ եմ, որ այս այցելութիւնս Մայր Հայրենիք՝ զուգադիպեցաւ նման օրերու։ Տարբեր էր Երեւանը, տարբեր էր Հայաստանը։ Աւարայրեան ոգին էր այնտեղ, Մարդարապատեան միասնութեան ոգին կը թեւածէր հոգիներուն վրայ։ Ղարաբաղը, Հայաստանի «պուճուր» եղբայրը, կ'ուզէր միանալ, միաւորուիլ Մայր Հայրենիքին. եղբայրական այդ կանչին ալ արձագանգ եղած էր Հայաստանը՝ եւ 70 տարիներու հեռաւորութենէ մը վերագտած Ղարաբաղի հերոսական ժողովուրդը։ Եւ, այս առթիւ ինք՝ Հայաստանի հայութիւնը, հոգեփոխուած էր։ Նոր երիտասարդութիւն մը ծնունդ առած է. նոր հայութիւն մը ծնած է, եւ մաքրազտուած, բիւրեղացած, սրբացա՛ծ հայութիւն մը։ Մանաւանդ հայ տիկնոջ մը դիպուկ բնութագրումով՝ միւռոնուած էր Հայաստանի հայութիւնը ազգային կամքին մէջ։

Ես կը հաւատամ, որ ի՛նչ ալ ըլլայ Ղարաբաղի հարցին լուծումը՝ հայը այլեւս նոյնը չի կրնար ըլլալ։ Բարոյականի, սրբութեան, հոգեկան աքանչելի գիծերու դրսեւորումը քեզ կը լեցնէ հպարտութեամբ։ Ես երբեք այնքան հպարտ չէի եղած իմ հայութեամբս, որքան եղայ Երեւանի մէջ։ Երջանիկ եմ, որ զաւակն եմ այդ Հայաստանին։ Միակ մաղթանքս է, որ Արցախի լեռներէն մինչեւ Երեւան հասած այդ ոգին հասնի Սփիւռքի հայութեան եւ Սփիւռքն ալ հասնի իր բիւրեղացման, հոգիի մաքրազտման այդ հանգրուանին։ «Հայեր, միացէ՛ք» կոչը մեզի ուղղուած է. մենք պիտի լսե՞նք արդեօք սրտակեղեք այդ աղաղակը, չեմ գիտեր։ Բայց ականջիս կը հնչէ ղարաբաղցի հայուհիին ձայնը, երբ Մոսկուայէն կապուեցանք Ստեփանակերտ, եւ յայտնեցինք, թէ իրենց հետ ենք. այդ տիկինը չէր հաւատար մեր խօսքին.— «Մարմինս փշաքաղուում է. չէի սպասում, որ Սփիւռքի մի հայ պիտի հեռախօսի եւ յայտնի, թէ մեր հետ են Սփիւռքի հայերը։ Շնորհակալութիւն. պիտի չարունակենք պայքարել»։

Սփիւռքի հայութեան կը մնայ՝ առանձին չթողուլ Հայաստանը։ Գործով, բարոյական քաջալերութեամբ եւ նիւթական զոհողութեամբ։ Ղարաբաղը՝ Հայաստանին, մենք բոլորս՝ Հայաստանին՝ «Ոգու հզօրութեամբ», ինչպէս գրուած էր Օփերայի մուտքին։ Ոգո՛ւ հզօրութեամբ։

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ——— 1988 Թ. ՅՈՒԼԻՍ 20ԻՆ

Սիրելի գուակներս.

Ինչ-որ չափով ես ցոյս ունէի, թէ մեր ձեռքերով ստեղծուած, մեր արիւնով փրկուած ՍՍՀՄ Գերագոյն իշխանութեան բարձրագոյն մարմնի նախագահութիւնը մարդասիրաբար կը լուծէր Լ.Ի.Մի ու ողջ հայ ժողովրդի ամենահամեստ ու արդար խնդիրը 20ական թուականների սկիզբներին ստալինիզմի ու պանթուրքիզմի ժանիքներով Սովետական Հայաստանից խլուած ու ստրկացուած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը իր մօր գիրկը վերադարձնելու պահանջով:

Բայց մեր յոյսերին ոչ թէ ջուր, այլ սեղ կարկուտ թափեցին:

Գերագոյն սովետի նախագահութեան Յուլիսի 18ի նիստը ցոյց տուեց, որ նաեւ հայ մարդու արիւն-քրտինքով ստեղծուած, հայ զինուորների բափած արեամբ փրկուած մեր պետական Գերագոյն իշխանութիւնը այն ժողովրդականը չէ, որին սպասում էինք: Պարզուեց, որ Գերագոյն սովետի նախագահութեան անդամների մեծագոյն մասը անտարբերութեամբ, նաեւ՝ բշնամութեամբ է լցուած ՍՍՀՄ ամենահնագոյն, ամենազրկուած, 65 տարի Ադրբեջանական ՍՍՀին ստրուկ դարձած Հայաստանի զեղեցիկ մի պատառիկ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Պարզուեց, որ հայ ժողովուրդը չի գտնուում պետական գերագոյն իշխանութեան՝ սասծս նախագահութեան հովանաւորութեան տակ:

Նախագահութեան նիստում հայ պատուիրակների բռնած դիրքը ինձ հպարտութիւն պատճառեց: Նրանք խօսում էին մարդկային խղճի ու արդարութեան անունից: Դոհ մնացի նաեւ մի երկու օտարազգի ընկերների ելոյթներից: Սակայն նրանք փոքրամասնութիւն մնացին՝ մեծամասնութեան ստոցակալած պատի առջեւ:

Իմացէք, սիրելիներս, վերջապէս մեր հանրապետութեան կառավարութիւնը մեզ հետ է՝ ժողովրդի հետ, թէեւ աննիրելի ուշացումից յետոյ: Հաստատած եմ, որ նա՝ մեր ղեկավարութիւնը, կը գլխաւորի ժողովրդի արդար պայքարը: Ուրեմն, պաշտպան կանգնենք մեր հանրապետութեան արդի ղեկավարութեան բռնած դիրքին: Պէտք է հպարտութեամբ ասել նաեւ այն, որ Ղարաբաղի պէս փոքրամարմին, բայց եւ Ղարաբաղի պէս վեհ ու անընկճելի Հենրիկ Պողոսեանն իր ազնուութեամբ ու արդարամտութեամբ ընկճեց հակահայ տրամադրութեամբ մոլեգնած, Ղարաբաղեան պրոբլեմին բոլորովին անգիտակ որոշ «վոժդիկների»:

Երբ նայում էի ՍՍՀՄ Գերագոյն Սովետի նախագահութեան նիստի դահլիճին, ինձ թուաց, թէ տեսնում եմ 1921 թուականի Յուլիսին կայացած Կովբիւրոյի այն նիստը, որը ղեկավարեց ժողովուրդների դահիճ Իոսիֆ Ստալինը եւ հակառակ բանականութեան, հակառակ մարդկային տարրական խղճի, Լեռնային Ղարաբաղը զրկեց Հայաստանից ու նետեց ստրկութեան: Այո: 1921 թուականի Կովբիւրոյի նիստն ու 1988 թուականի Յուլիսին Գերագոյն Սովետի նախագահութեան նիստերը նոյն չար արմատի ծնունդն են:

digitised by A.R.A.R.@

Մեզ համար ոչինչ չի փոխուել: Ղարաբաղի հայութեան համար չկայ ո՛չ դեմոկրատիա, ո՛չ վերակառուցում:

Նախագահութեան նիստում մեր պատուիրակները փաթեցին ցոյց տալ, որ Սումգայիթում հայերի ցեղասպանութիւն է կատարուել: Սակայն նրանց այս այդպէս պահանջը ետ արհամարհուեց: 1915ին թուրք վայրենիների կազմակերպած ցեղասպանութիւնը շարունակուեց 1988 թուականին:

Բայց բոլոր իրենց քիւանոներին ստալինեան փրփուր դրած Ղարաբաղի հարցի դէմ յոխորտացող մարդիկ իմանան, հասկանան, որ հայ ժողովուրդը, որը Թալեաթ ու Էնվէր է տեսել, երբեք չի ընկճուի ո՛չ մի սպառնալիքից:

Ղարաբաղը չի ընկճուի այսօրուայ Թալեաթ-Թաթլիեաի ոռնոցներից:

Շունը հաչում է, քարաւանը գնում...

Նախագահութեան համաժողովը ինձ համոզեց, որ սումգայիթեան սպանդը կազմակերպուել է պետականօրէն, նաեւ այդ նախագահութեան որոշ անդամների ձեռքով:

Լեռնային Ղարաբաղի ազատութեան հարցը համահայկական է: Ես չեմ կարող իմ գոհունակութեան խօսքը չասել «Լոռունկ» եւ «Ղարաբաղ» կոմիտէի կատարած ազնիւ, հայրենասիրական վիթխարի գործի մասին: Նրանց արդար գործը լենինեան ազգային քաղաքականութեան բարի ծնունդն է, եւ որ կուսակցութեան 27րդ համագումարի ոգու զաւակը:

Ճշմարտութեան ու խղճի դիրքերից ելնելով, սնանկ ու տմարդի են երեւում Մոսկուայի ու Բաքուի մամուլի եւ ինֆորմացիոն այլ միջոցների այն պնդումները, որոնք հայերիս մեղադրում են նացիոնալիզմի, էքստրեմիզմի, հակավերակառուցողականութեան մէջ: Ասել եմ ու կը կրկնեմ, հայ ժողովուրդը երբեք չի եղել նացիոնալիստ, այժմ էլ նրա մէջ այդ արատը չկայ: Ստացուում է այսպէս, մէկը ուզում է իրենից խլած տունը ետ առնել զաւթիչներից, ուզում է իր ստրուկ զաւակներին փրկել բռնակալից, բայց ահա ո՛չ բռնութիւն տեսած, ո՛չ ցաւ ապրած մէկ կամ մի քանի օտարները այդ մէկին նացիոնալիստ են կոչում:

Ցաւալի է, ոչ այսօրուայ մեր պետական ու կուսակցական բարձրաստիճան ղեկավարներից ոմանք Ղարաբաղեան հարցում կառչած են մնում ստալինեան բռնակալութեան մեթոդներից, հլու-հնազանդ մնում բրեժնեւեան սահմանադրութեան շղթաներից:

Այսպէս՝ նախագահութեան անդամ Շալաեւը սպառնաց՝ հայերը, հնազանդ եղէք, չէ որ ձեր կերած իւղի 90 տոկոսը մենք ենք տալիս: Կարծես թէ այս Շալաեւն իր լեփ-լեցուն ախոռից է մեզ ողորմութիւն ուզարկում: Շալաեւը մոռացել է, որ երկրի ազէտալի տարիներին՝ 1942 թուականին հայ մարդիկ տանկային շարասիւն եւ օդանաւերի խմբեր ստեղծեցին իրենց հացի վերջին պատառը ծախսելով ու դրանք նուիրեցին Սովետական երկրին՝ ֆաշիզմի դէմ յաղթանակ տանելու համար: Շալաեւը եւ նմանները թող չմոռանան, որ երկրի ռազմական հզօրութեան պողպատը անխոցելի է դաւանում նաեւ հայկական մոլիբդէնի շնորհիւ: Մոլիբդէնի մէկ կիլոգրամը արժէ տասը տոննա իւղ:

Անխղճութիւն է դեմոկրատիա հոչակած երկրում պատժիչ միջոցների դիմել վերակառուցման ոգով ապրող, գործող մի ժողովրդի նկատմամբ: Սումգայիթի, Մասիսի, Զուարթնոցի իրադարձութիւնների մեղքը Հայաստանից վեր գտնուող պետական մարմինների խղճի վրայ է, ոչ թէ հայ ժողովրդի: Այո, ոչ թէ հայ ժողովրդի:

digitised by A.R.A.R.@

Ադրբեջանի պետական բանդիտները Սումգայիթում եւ այլ տեղեր տասնեակ հայ կանանց ու աղջիկների են բռնաբարել, խոշտանգել, սպանել: Առաջս նախագահությանն որոշ անդամներ (Շչերբիցկի, Զայկով), որոնք Լեռնային Ղարաբաղը նորից նետեցին Ադրբեջանական ՍՍՀ-ի կրունկի տակ, ինչ կ'ասեին, եթէ այդպէս զազանաբար բռնաբարուէին իրենց կանայք, աղջիկները, քոյրերը: Զարմանալի է այն, թէ ինչու ՍՍՀՄ Գերագոյն Սովետի նախագահությունը իր նախագահ, Ստալինի պնակը լիգող Գրոմիկոյի թերանով, ան արդէն քառասուն տարի է միջազգային դիւանագիտական ասպարէզում, անկեղծ ասաց, վտանգաւոր դիրք է բռնել հայ ժողովրդի արդար դատի նկատմամբ, այսօր յարգանքով է խօսում Նախիջեւանի հայութեան ոչնչացրած, Լեռնային Ղարաբաղը ծայրայեղ թշուառութեան հասցրած, Սումգայիթի հայերի կոտորածը կազմակերպած Ադրբեջանի ղեկավարների մասին:

Իմաստուն է ռուսական առածը: — Ասա ով է քո բնկերը, ասեմ ով ես դու:

Սիրելիներս,

Արդարութեան եւ ազնուութեան անունից, լենինեան ազգային քաղաքականութեան անունից մենք՝ Սովետական երկրում ապրող հինգ միլիոն հայերս, մերժում ենք ՍՍՀՄ Գերագոյն Սովետի նախագահութեան որոշումը, մերժում ենք Ղարաբաղին խոստացուած կենսաթոշակը: Հայ ժողովուրդը իրեն համակրող սովետական երկրի եղբայր ազգերի հետ պահանջում է փրկել սրախողխող լինող հայկական Ղարաբաղը: Այս է բանականութեան պահանջը:

Մենք յուսալիք ենք, բայց ոչ յուսահատ: Մենք կը շարունակենք մեր արդար պայքարը՝ Ղարաբաղը ազատագրելու վճռականութեամբ, մենք մեր պայքարի տէրն ենք:

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

Վերջերս յաճախ եմ լինում այնտեղ...: Եւ ամէն վերադարձիս՝ ուզում եմ գոռալ տիեզերքով մէկ, ասել՝ եթէ ուզում էք ճանաչել աշխարհի այն կէտը, ուր բոլոր մարդիկ, առաջին դեկավարից մինչեւ վերջին գեղջուկը, մի տեսակ են մտածում, մի տեսակ են խօսում եւ, մա'նաւանդ՝ գործում են մի տեսակ, գնացէ'ք Արցախ:

Եթէ ուզում էք տեսնել, թէ Ղեկավարն ինչպէ'ս է վառում, որպէսզի շուրջն անխարդախ լոյս լինի ու մարդկային ջերմութիւն, գնացէ'ք Արցախ:

Եթէ ուզում էք տեսնել, թէ որքա'ն խելօք է մարդու բնագդը, եւ ի'նչ թռիչքների է ընդունակ նրա բանականութիւնը, գնացէ'ք Արցախ:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՇԱՒ. Արդար, ճարտար, համբերող և ապառող ձեռքեր...
Լուսանկար՝ Լ. ԱՐՍԵՆՅԱՆՑԻ

Երեւանեան ցոյցերէն տեսարան մը

digitised by A.R.A.R.@

Հենրիկ Պողոսեան

Իմացէք, սիրելիներս, վերջապէս մեր հանրապետութեան կառավարութիւնը մեզ հետ է՝ ժողովրդի հետ, թէեւ աններելի ուշացումից յետոյ: Հաւատացած եմ, որ նա՝ մեր ղեկավարութիւնը, կը գլխաւորի ժողովրդի արդար պայքարը: Ուրեմն, պաշտպան կանգնենք մեր հանրապետութեան արդի ղեկավարութեան բռնած դիրքին: Պէտք է հպարտութեամբ ասել նաեւ այն, որ Ղարաբաղի պէս փոքրամարմին, բայց եւ Ղարաբաղի պէս վեհ ու անընկճելի Հենրիկ Պողոսեանն իր ազնուութեամբ ու արդարադատութեամբ ընկճեց հակահայ տրամադրութեամբ մոլեգնած, Ղարաբաղեան պրոբլեմին բոլորովին անգիտակ որոշ «Վոժդիկների»:

1988

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

Դէհ, տայ Աստուած, որպէսզի իրականանան այն ցանկութիւնները, պահանջները, որոնք արտայայտել է Ղարաբաղի հայութիւնը: Ես ծանօթացայ կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանի հետ, մի հետաքրքիր մարդու, որը բոլոր նրբերանգներով զգում է ժամանակի ընթացքը: Նա ամէն ինչ յոտակօրէն ու գիտակցուած է ընկալում: Նա իսկական կոմունիստ է: Ինձ թւում է, որ այս ցանկութիւնները կարող են իրականանալ, եւ առանց դրանց անհնար կը լինի շարժումը, կեանքը:

1988

ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ

digitised by A.R.A.R.@

Սուրէն Յարութիւնեան կը զրուցէ արցախցիներուն հետ

— Սուրէն Գուրգէնովիչ, սա արդէն ձեր երկրորդ այցելութիւնն է Լեռնային Ղարաբաղ: Ուղեւորութեան նպատակները յայտնի են ՏԱՍՍի հաղորդագրութիւնից: Ի՞նչ տպաւորութիւն ստացաք այդ ուղեւորութիւնից:

— Ռեգիոնում ստեղծուած բարդ ու լարուած իրադրութեան պայմաններում, երբ երկու հարեւան ժողովուրդների փոխյարաբերութիւնների վրայ, ցաւօք, ընկել է օտարացման ստուերը, երբ գրեթէ ամէն օր պրոբլեմներ են ծագում, հանրապետութիւնների ղեկավարութեան ներկայացուցիչների կանոնաւոր հանդիպումները յատկապէս անհրաժեշտ են: Նման հանդիպումներն արդէն աւանդոյթ են դառնում: Սա արդէն Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովի հետ երրորդ հանդիպումն է եւ երկրորդը՝ Արցախի հողում:

Տպաւորութիւններս շատ-շատ են, եւ դրանց մասին կարելի է երկար պատմել: Ի դէպ, «տպաւորութիւն» բառն անկարող է ամենայն խորութեամբ արտայայտել զգացմունքների այն ամբողջ խորութիւնը, այն յուզմունքը, որ ամէն անգամ զգում ես, ոտք դնելով այն հինաւուրց հողը: Ցէ որ մեզ՝ հայերիս համար Լեռնային Ղարաբաղը՝ Արցախը, լոկ պատմական կամ աշխարհագրական հասկացութիւն չէ: Այստեղ դարերով ապրել եւ այժմ էլ ապրում է մի հպարտ ու իմաստուն, սեփական գաղը քրտինքով իր հոգեւոր ու հանապազօրեայ հացը վաստակող ժողովուրդ՝ մեր հայրենակիցները: Բայց եթէ, այնուամենայնիւ, իմ ներկայ ուղեւորութիւնը Ստեփանակերտ համեմատելու լինենք յուլիսեան այցելութեան հետ, ապա այժմ առաջին բանը, որ աչքի էր զարնում՝ մարդկանց դէմքերին յայտնուած ժպիտն է: Դա արիա-կամ մարդկանց ժպիտ է, որը, սակայն, ի վիճակի չէ թաքցնել յոգնութիւնն ու տագնապը: Բայց գլխաւորն այն է, որ մարդիկ ասես աւելի վառահ են դարձել, տրամադրուել լաւատեսօրէն, թէեւ զարաբաղցիներին այդ յատկանիշները միշտ էլ բնորոշ են եղել («Հայրենիքի ձայն», 1988, թիւ 45 — առաջին հարցումին պատասխանը):

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

digitised by A.R.A.R.@

Ժ. Ս. ՑԱԿՈԲԵԱՆ

ԲՌՈՒՆՑՔՆԵ՛ՐԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ...

Օ՛ ծագէ ծագ
Բիւր բազուկներ
են բարձրացեր ու խոյացեր
Որպէս նիզակ
Եւ հողմակոծ դարձեր են ծով
Իրենց ուռած կոհակներով
Փրփրակուտակ,
Չի բռնաւոր ուժին ընդդէմ՝
Անոնք անգէն
Բռունցքներն են դարաբաղեան։

Փրփրահոլով
Կոհակներն են ովկիանի
Մը մարդկային,
Որուն սրտին
Տրոփներովն ու ապմրոպով
Կը փոթորկին
Բռունցքները դարաբաղեան։

Հազար հազար հազար թեւեր
Որպէս սուին երկի՛նք ցցուեր,
Բայց սուր չունին

Իրենց ձեռքին,
Մահակ են, բայց ո՛չ մահաբեր,
Ընբռստացեալ թէպէտ կռուի՝
Չե՛ն երբեք ռումբ,

digitised by A.R.A.R.@

Ուժ են թէեւ մեռածին,
Բայց չարիքի ո՛չ պայքուցին,
Ո՛չ ուժանակ են վրէժի,
Շանթո՛վ յղի՝
Կարծէք հի՛մա պայքին պիտի
Հայ զայրոյթի հրանոցին
Մէջ շիկացած ումբանման
Բռունցքները դարաբաղեան։
Ծագերն ի վեր
Երկնակարկառ իրրեւ ցորեան
Կը սրսփան, կը ծփծփան,
Հազար ճիւղեր
Ճառագայթած իրրեւ անտառ
Կը տատանին,
Դրօշի պէս կը ծածանին
Զանգերու պէս կը սասանին
Բազուկները բռունցքավառ։
Բիւրալեզու որպէս հրդեհ
Համատարած,
Որպէս անտառ բոցավառած,
Կարծես մթին ուրականէ
Հալածական՝
Կ'երթան առա՛ջ
Բռունցքները դարաբաղեան։

Բռունցքները դարաբաղեան՝
Համակ պողպա՛տ, ռսկր ու մկան,
Թէեւ ըլլան զինաթափուա՛ծ
Անզօրութեամբ մը ակամայ,
Զինուա՛ծ են, բայց
Անպարտելի
Զէն ու զրահով, որ կը կոչուի
Հայու Ոգի։
Եւ ա՛յս ուժով, ուժո՛վ արեան
Արմենական,
Մոնչօրէն ե՛տ կը կանչեն
Հողերն իրենց հայրենաւանդ,
Շառաչօրէն կը պահանջեն
Իրաւունքը իրենց ժառանգ՝
Բռունցքները դարաբաղեան։

Բռունցքները դարաբաղեան,
Որոնք ունին իրենց բուռին
Դաւիթ Բեկի սիրտն հայաբորբ,
Որոնք կարմիր կը բռնկին
Անդրանիկի սիրտով ումրոտ,
Որոնք ահա՝ իբրեւ սկիհ
Ողջակիզման՝
Վիրամբարձիկ կ'ընծայաբերուին
Ցանուն Նորին Արդարութեան...

digitised by A.R.A.R.@

Բռունցքները դարարաղեան,
Մինչ կ'ամբաստանան
Դէպի արեւն Ազատութեան՝
Մինչեւ հասնին անոր լոյսին
Երջանկաբար,
Բողոքի երգ են ռազմեղէն
Անո՛նց դէմ, որ կը խափանեն
Լոյսի ուղին
Եւ գայրոյթի ճիչ են արդար
Անո՛նց դէմ, որ կը խաւարեն
Ցոյսի ճամբան,
Աղաղակ են իրաւունքի
Անո՛նց դէմ, որ կը խարդախեն
Արդարութեան մաքուր գինին
Եւ պատգամ են եղբայրութեան՝
Բռունցքները դարաբաղեան։

Թէեւ բռո՛ւնցք ընդվզումի
Եւ ցասումի՝
Ընդդէմ ամէն սուտ ու չարին
Այս աշխարհի,
Եղբայրական
Սիրոյ ողջոյն են նոյն ատեն
Մարդո՛ց համայն,

Պայծառ յոյսի ծիածան են
Դրախտային վաղուան համար
Ու եաւատի ջահեր անշէջ՝
Արցունք եւ սուգ օրերուն մէջ,
Բռունցքները դարաբաղեան։

Բռունցքները դարաբաղեան,
Թէեւ կոփուած
Որպէս շղթայ՝ գերութեան մէջ,
Բայց փողփողէջ
Դրօշակ են խաղաղութեան՝
Մարդոց դիմաց,

Աւետումն են արշալոյսի
Մը նորաբաց,
Ուր շղթաները ա՛լ փշրին
Եւ բռունցքները բողբոջին
Պիտի շուշան՝ փոխան փուշի։
Եւ վերջապէս, Աստուա՛ծ, վերջին
Ու վերջնական յաղթանակին
Ծափն են թնդուն, բոմբիւնն են բամբ

Ցաղթ ովսաննա՛ն՝
Բռունցքները դարաբաղեան։

digitised by A.R.A.R.@

Մինչեւ այդ օրն երաշխ սակայն,
Իրենց գինով
Բաղոքներուն ալիքներով,
Ծովու նման
Դեռ կ'աղաղեն,
Կը փոթորկեն շառաչելէն
Ամբողջ Սփիւռքն ու Հայաստան՝
Պահանջագէն —
Բռունցքները, բռունցքները դարաբաղեան...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Փասատենա

digitised by A.R.A.R.@

Հ. ՄԱԼԵԱՆ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ ԵՍ ԼՍԵՑԻ ԻՄ ԱԶԳԻ ՃԻՉԸ

Մինչեւ հիմա մենք գիտէինք, որ մեր ազգը գարմանալիօրէն գիտէ եւ կարողանում է միայն անջատուել, մասնատուել:
Հիմա մենք իմացանք, որ մենք հրաշալիօրէն գիտենք եւ միաւորուել:
Միաւորուել համընդհանուր մի գաղափարի շուրջ:

Հ. Մ.

Երբ ողջ ազգն է նչում՝ դա ողբ չէ, խնդրանք ու աղերսանք չէ:

Դա նախ եւ առաջ պահանջ է:

Պահանջ է հինգհարիւրց մի ժողովրդի, որ դարերի ընթացքում բազմիցս ու անդադար կողոպտուել է:

Կողոպտուել է իր թշնամիներից ու նաեւ իր բարեկամներից, իր փոքր ու մեծ եղբայրներից:

Կողոպտել են մեր մագաղաթեայ ու քարէ յուշարձանները, մեր լեռներն ու արօտավայրերը, մեր Արարատներն ու Վանայ լիճը, մեր մշակոյթը, մեր պատմութիւնը, մեր անցեալը, մեր երէկը եւ նաեւ այսօրն ու վաղը:

Հայաստանի տարածքը արդէն վաղուց դարձել է տարբեր պետութիւնների բազմատեսակ դաշինքների առուծախի առարկայ:

digitised by A.R.A.R.@

Մեր հողերը շռայլօրէն բաշխել են իրար, համբերութիւն ու խաղաղասիրութիւն քարոզելով մեզ:

Եւ մենք հաշտուել ենք, հաշտուել ենք վիրաւորուած, խեղդուած կոկորդներով ու բռունցքներս սեղմած, բայց միշտ յոյսի հաւատով ու հաւատով Աստծոյ:

Վայ թէ Աստուած էլ է մեզ խաբել:

Եւ հիմա, ցուրտ ու տաքի այս փետրուարեան օրերին, հայութիւնն անսպասելիօրէն միաւորուեց, ձուլուեց ու ճչաց:

Մինչեւ հիմա մենք գիտէինք, որ մեր ազգը զարմանալիօրէն գիտէ եւ կարողանում է միայն անջատուել, մասնատուել:

Հիմա մենք իմացանք, որ մենք երաշխաւորէն գիտենք եւ միաւորուել:

Միաւորուել համընդհանուր մի գաղափարի շուրջ:
Լեռնային Ղարաբաղ:

20ական թուականների շփոթ տարիներին, անօրէն, առանց որեւէ տրամաբանութեան յանձնուեց նորաստեղծ ադրբեջանական հանրապետութեանը···: Նորի՞ց կողոպուտ, նոր ու արդար կեանքի հենց առաջին հեւքի հետ:

20ական թուականների այն շփոթ տարիներին, երբ հայը լոկ իր ֆիզիկականն էր մի կերպ փրկում, երբ նոր-նոր ստեղծւում էին եղբայրական հանրապետութիւններ, մենք եղբայրաբար էլ չխորացանք այդ անօրէն փաստի հետեւանքների մէջ, համոզուած լինելով, որ դա լոկ օրերի ու ամիսների ուժ կարող է ունենալ··· Այդպէս էին հաւաստիացնում մեզ նաեւ մեծ կոմունիստները՝ Կիրովը, Օրջոնիկիձէն, Նարիման Նարիմանովը···: Բայց 20ական թուականների արհաւիրքը եղաւ: Ապա Հայրենական մեծ պատերազմը, յետոյ նոպատերազմեան փորձութիւնները, հ՝ այսպէս 70 տարի···: Եւ բոլոր այդ տասնամեակների ընթացքում փոքրիկ Հայաստանը ներդրուեց լիուլիօրէն, զոհասեղանի վրայ դնելով նորից ու նորից իր ֆիզիկական ու հոգեւոր բոլոր կարողութիւնները···

Իսկ մեր ինտերնացիոնալ հարեւանի մտքովն էլ չէր անցնում, որ լռելեայն իրացրել է իր հարեւան եղբօր տարածքը:

Եւ մեր կուսակցական ու հոգեւոր հայրերը համրացել էին, կուսական անմեղութեամբ ամաչում էին բերան բացել այդ հարցի շուրջը, չնայած այն հանգամանքին, որ նոյնիսկ դժուարագոյն այդ տարիներին կար, այնուամենայնիւ, ինչ-որ օրենք, ինչ-որ սահմանադրութիւն:

digitised by A.R.A.R.@

Բոլոր այդ տարիներին Ղարաբաղը, ղարաբաղցին ապրում էր խորթ զաւակի կեանքով:

Եւ մի՞թէ Խորհրդային Ադրբեջանում վերացել է մեծ լենինեանները Ազիզբեկովի ու Նարիմանովի շունչը եւ ոգին, եւ մինչեւ օրս իշխում է Բաղիրով-Ալիեւ շովինիստական տրամադրութիւնը:

Այնինչ մեզանից բոլորը պահանջում են եղբայրութիւն ու ինտերնացիոնալիզմ:

Եղբայր՝ այո, ի հարկէ, մեծագոյն սիրով եւ ոգեւորութեամբ, բայց եղբայր իմ, նախ ձեռքդ հանիր գրպանիցս:

Եղբայրների ձեռքերը դրուում են իրար ուսերի վրայ:

Մի՞թէ ադրբեջանցի կոմունիստն այսօր միայն ու միայն ադրբեջանցի է եւ երբեք ու երբեք ոչ կոմունիստ:

Մի՞թէ դեմոկրատիայի ու վերակառուցման այս մեծ օրերում անհնար է մեր երկրում իրականացնել մեր իսկ երկրի իմաստուն սահմանադրութիւնը:

Իմ Ղարաբաղ, իմ եղբայրներ ու քոյրեր, զաւակներ ու ծնողներ:

Դուք յաւերժօրէն անբաժան էք ինձանից, մեզանից:

Պատմական մեծագոյն իրադարձութիւնները մեծագոյն քննութիւն են ազգի համար:

Հայութիւնն այս օրերին պատուով ու հպարտութեամբ կրեց այդ քննութիւնը: Բոլորը, բոլորը առանց բացառութեան:

Մենք յաղթանակեցինք, որովհետեւ միացած էինք, մենք յաղթանակեցինք, քանզի վերջապէս, հենց այս տասը օրերի ընթացքում ճանաչեցինք ինքներս մեզ («Գարուն», 1988, թիւ 6):

ՀԵՆՐԻԿ ՄԱԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՂԱՐԱԲԱՂ

Ղարաբաղ, դու համայն հայութեան
տենչերի ոսկեայ բանալի,
քեզնով փակ դռները կը բացեմք
Թորգոմի, Հայկի, Արամի·—
Դու ոսկեայ բանալին նաեւ
Մասեաց եւ Ագռաւու քարի,
մեր ոգու զարթնումը շքեղ
եւ հայոց քնած քանքարի:

Երբ բացուի Քարը Ագռաւու,
Մեռելը կ'ելնի ասպարէզ,
Ղարաբաղ, դու նրա առջեւ
կը դոփես զետինն ու կը պարես·—
Կը դառնաս նժոյգը նրա՝
հրեղէն՝ ամպերից պոկած,
կը թռչէք վանի վրայով,
դարաւոր ցաւերդդ ամոքած:

Ղարաբաղ, լապտեր դու ոսկեայ՝
մեր հողը փնտռող մեր ձեռին,
երբ հողը գտնեմք, Ղարաբաղ,
կը գտնեմք եւ ազգի մեծերին·—
Նրանց հետ, նրանց պատգամով
եւ արդար օրէնքով նրանց
կը կցեմք ազգի մատեանին
պատմութեան էջերը քո գրած:

Ղարաբաղ, զոհերիդ առջեւ
ի՞նչ գլուխ, մեր սիրտն եմք
խոնարհում,
դու հլար պատիւդ պահելու
գործերով մաքուր, անարիւն·—
Բայց անգէն քո որդոց վրայ
յարձակուեց խուժանը վայրի՝
որ կոտրի քո կամքը զրնգուն,
որ թեկի քո ոգին արի·

Ինչպէս որ տասնրհինգ թուին,
ինչպէս որ տասնուք-քսանին···
էլ պէտք չէ արիւն տալ, Ղարաբաղ,
մեր արեան տենչավառ գազանին:
Ազգովին գալիս եմք, ահա,
եւ մեզ հետ ազգերը բարի՝
համբուրեմք նակատը քո սեգ,
քո ոգին, քո կամքը արի:

Փետրուար 88 թ. ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

Հարցի քաղաքական կողմը այն է, որ հայ ժողովուրդը, հայ ժողովրդի որեւէ մասնիկ չի ուզում մնալ ադրբեջանցի թուրքի լուծին տակ։

Մեր համոզմամբ Մոսկուան շատ անլուրջ վերաբերմունք ցուցաբերեց Ղարաբաղի հարցին։

Ո՛չ միայն Ղարաբաղի հարցը, այլեւ մեր ազգային բոլոր խնդիրները կը լուծուին, եթէ իսկապէս մեր երկրում հաստատուի իրական ժողովրդավարութիւն։

Լ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

* * *

Քաղաքական գործունէութիւնը սկսել է 1960-ական թուականներից. մասնակցել է ուսանողական շարժումներին, 1966ին ենթարկուել 10տարեայ բանտարկութեան։ 1938 թ. Փետրուարից ղեկավարել է մատենադարանի «Ղարաբաղ» կոմիտէն, նոյն թուականի Մայիսից ընդգրկուել է Ղարաբաղեան շարժման Հայաստանի կոմիտէի կազմում։ 1988 թ. Դեկտեմբերի 10ից մինչեւ 1989 թ. Մայիսի 31ը Արցախեան շարժման միւս առաջնորդների հետ բանտարկութիւն է կրել Մոսկուայում։ («Հայրենիքի ձայն», 1990, թիւ 32)։

Արցախի հարցը նոր հարց չէ, դա մեր պատմութիւնն է նոյնիսկ 20-ական թուականներին։ Հայերը միշտ դժգոհ են եղել այսպիսի կարգադրութիւնից եւ գիտեմ Միասնիկեանի բռնած դիրքը այս հարցի առթիւ։ Շատ մարդիկ, նոյնիսկ 20-ական թուականներին, տուժել են այս պայքարի ընթացքում։ Այս հարցը բարձրացաւ յետոյ, 60-ական թուականներին եւ շատ բարձր մակարդակի վրայ։ Պէտք է այստեղ ընդգծել նաեւ Ցակոր Զարոբեանի անձնական շնորհը այս հարցում եւ 1965 թուականի յայտնի ցոյցերը, որ տեղի ունեցան։

Արցախի հարցը առաջ բաշուեց եւ մի շարք պատմաբաններ, գիտնականներ բազմաթիւ փաստաթղթեր պատրաստեցին եւ ուղարկեցին Մոսկուա, եւայլն։

Սակայն Բրեժնեւի օրոք, երբ Խրուշչեւի ձեռնարկած դեմոկրացիան զգալի նահանջ կատարեց, մեր ժողովուրդը ստիպուած եղաւ լռել։

Ի հարկէ, չի կարելի չընդգծել, որ այս շարժումը սկսուեց եւ այսպիսի ծաւալ ստացաւ Գորբաչեւի որդեգրած նոր քաղաքականութեան, դեմոկրատացման քաղաքականութեան շնորհիւ։ Մենք դա ընդունում ենք։ Սակայն, դեմոկրատացման քաղաքականութեան այս շնորհը տրուած էր Խորհրդային Միութեան բոլո՛ր ազգութիւններին, հայ ժողովուրդը եղաւ առաջինը, որ կարողացաւ օգտուել դրանից։ Սա հայ ժողովրդի շնորհիվն է, որովհետեւ պատրաստ էր օգտուելու առաջին իսկ հնարաւորութիւններից։ Սա պէտք է ընդգծել։

digitised by A.R.A.R.@

Ի հարկէ, այս հարցում իր տեղը ունի նաեւ հայ ժողովրդի պատմական անցեալը: 70 տարի շարունակ հայ ժողովուրդը Խորհրդային Միութեան մէջ գտնւում էր արհամարհուած պայմաններում: 1920 թուականին, հայ ժողովուրդը փաստօրէն զոհ էր գնացել համաշխարհային յեղափոխութեան գաղափարին եւ նուաստացած դիրքի մէջ էր, մա՛նաւանդ Անդրկովկասի հանրապետութիւնների համեմատութեամբ:

Ստանալով դեմոկրացիայի հնարաւորութիւնը, հայ ժողովուրդը վերջապէս առիթ ունեցաւ թափելու իր մաղձը, արտայայտելու իր բոլոր դժգոհութիւնները, որոնք կուտակուել էին 70 տարի շարունակ: Սա, ի հարկէ, առանց մի հզօր գաղափարի կարելի չէր իրականացնել: Այդ գաղափարը դարձաւ Արցախի վերամիաւորման հարցը:

Ուրեմն, այս մեր պայքարի հզօրութիւնը բացատրուած է դրանով, որ հայ ժողովուրդը հնարաւորութիւն ունեցաւ առաջին անգամ արտայայտելու իր մէջ կուտակուած նուաստացումը: Սա եարցի հոգեբանական կողմն է:

Իսկ հարցին քաղաքական կողմը այն է, որ հայ ժողովուրդը, հայ ժողովրդի որեւէ մասնիկ չի ուզում մնալ ադրբեջանցի թուրքի լուծին տակ: Ինքնին արդէն այս հարցը խորագոյն վիրաւորանքն է, խոցող վիրաւորանք ցանկացած հայու համար:

Այստեղ հարկ է ընդգծել ղարաբաղցիների դիրքորոշումը, որով հանդէս բերեցին անօրինակ վճռականութիւն: Եւ դա էլ հասկանալի է, որովհետեւ նրանք իրենց մաշկի վրայ էին զգում ադրբեջանցիների լուծը: Փաստ է, որ ադրբեջանցիները 70 տարի շարունակ արել են ամէն ինչ, որպէսզի հայերին Ղարաբաղում գրկեն ազգային զարգացման բոլո՛ր հնարաւորութիւններից, ստեղծեն այնպիսի պայմաններ, ուր հայերը լքեն Ղարաբաղը եւ Նախիջեւանի օրինակով իրացնեն նաեւ հայկական այդ հողամասը:

Ինչ վերաբերում է այն մտքին, թէ հայերը հիասթափուած են դեմոկրատացման քաղաքականութիւնից եւ Գորբաչեւից, սա էլ բնական է: Մեր համոզմամբ, Մոսկուան շատ անլուրջ վերաբերմունք ցուցաբերեց Ղարաբաղի հարցին: Շատ անլուրջ, մա՛նաւանդ՝ իր առաջին որոշմամբ: Գիտէք, Փետրուար 20ին, Ղարաբաղում տեղի ունեցաւ մարզային խորհուրդի նստաշրջանը, որը պահանջեց Ղարաբաղը միացնել Հայաստանի եւ երեք ժամ յետոյ, Մոսկուայում, բիւրոն, առանց հարցը քննելու, կտրականապէս մերժեց այս պահանջը եւ հայ ժողովրդին որակեց որպէս ծայրայեղական, ազգայնական:

Դրանից յետոյ, Կենտրոնական իշխանութիւնները եւ Մոսկուան ստիպուած եղան քայլ առ քայլ նահանջել եւ որոշ զիջումներ անել հայ ժողովրդին, մինչեւ Յուլիս 18ի ծանօթ որոշումը, որով ընդունուեց, որ իսկապէս գոյութիւն ունի Ղարաբաղի խնդիր եւ դա պահանջում է քաղաքական լուծում:

Սակայն, անկախ այն բանից, որ մենք հիասթափուած ենք դեմոկրատացման քաղաքականութիւնից թէ ոչ, մեր յոյսերը, յամենայնդէպս, կապուած են դեմոկրատացիայի հետ: Եթէ չլինի դեմոկրատացիա, ապա Ղարաբաղը չի կարող միաւորուել Հայաստանի հետ: Եւ մեր պայքարը դուրս է եկել նեղ շրջանակից եւ զուտ ղարաբաղեան հարցից եւ իր մէջ ընդգրկում է նաեւ հասարակութեան դեմոկրատացման խնդիրները, որովհետեւ մենք համոզուել ենք, որ ո՛չ միայն Ղարաբաղի հարցը, այլեւ մեր ազգային բոլոր խնդիրները կը լուծուեն, եթէ իսկապէս մեր երկրում հաստատուի իրական ժողովրդավարութիւն, եւ եթէ իսկապէս Հայաստան դառնայ Խորհրդային Միութեան իրաւահաւասար անդամ («Ասպարէզ», 24 *Դեկտեմբեր* 1988 — հատուած՝ հարցազրոյցէ մը):

ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹԻՒՆԸ

*

1921 թուականից մինչեւ 1988 թուականը հայ ժողովրդին երբեք չի լքել ազգային անկախութեան գաղափարը: Զուր չէ, որ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի տառացիօրէն իւրաքանչիւր առաջին քարտուղար, լինի դա Միասնիկեանը, Խանչեանը, Թովմասեանը, Զարոբեանը, Քոչինեանը, Դեմիրճեանը, այսպէս թէ այնպէս, հրապարակային ելոյթներում մեղադրանքներ են թափել «Դաշնակցութեան» գլխին, այն կուսակցութեան՝ որի հետ հայ ժողովուրդը միշտ կապել է քաղաքական անկախութիւն ձեռք բերելու յոյսերը, թէեւ այդ գաղափարը մեկնաբանուել է որպէս խռովարարական: Ի դէպ, Խորհրդային Հայաստանի գրեթէ բոլոր ղեկավարները, միաժամանակ, կենտրոնի կողմից մեղադրուել են նացիոնալիզմի կամ դրան մօտիկ ինչ-որ բանի մէջ: Դրա հետ մէկտեղ (սա պէտք է նշել շատ սկզբունքօրէն) տասնամեակներ շարունակ Հայաստանի հայերի զգալի մասի, այդ թւում մտաւորականութեան համար խորթ է եղել անկախութեան գաղափարը, նոյնիսկ մասնաւոր շփման մէջ: Միայն ընտրեալներն են կրել այդ գաղափարը, աւելի յաճախ յուզականօրէն այն պաեելով մինչեւ մեր օրերը:

Ներկայումս անկախութեան, յամենայն դէպս սուվերենութեան «նուիրեալներ» են դարձել նոյնիսկ պահպանողական սոցիալական խմբերը, այդ թւում նրանք, որոնք երկար տարիներ հաւատով ու խրոխտով ծառայել են ապարատին: Նրանց մի-

***

21 Փետրուար 1989ին Մոսկուայի մէջ 17 երիտասարդներ, իսկ Երեւանի մէջ ութ ուրիշներ եօթնօրեայ հացադուլ յայտարարած են, պահանջելով կիրովականի մէջ արգելափակուած Իգոր Մուրատեանի ազատ արձակումը:

Երեւանի մէջ հացադուլի դիմողներն են՝ Արսէն Գրիգորեան, Արմէն Սարգսեան, Ցարուքիւն Խաչատրեան, Կարօ Մկրտչեան, Ալեքսան Սաֆարեան, Բաֆիկ Ցովակիմեան, Լեւոն Միրզոյեան եւ Գագիկ Սաֆարեան:

Հացադուլը պիտի շարունակուի մինչեւ 27 Փետրուար 1989 («Ազատ օր», 27 Փետրուար 1989):

այն անհանգստացնում է ապագայ Հայաստանի իշխանութիւնը պահպանելու հարցը: Հայաստանի հասարակական շարժման մի շարք ղեկավարների այն յայտարարութիւնները, թէ Սփիւռքի քաղաքական ուժերը դէմ են անկախութեան, սնանկ են եւ չեն արտացոլում գործերի իսկական վիճակը: Նոյնիսկ խորհրդային կարգերին անկեղծօրէն նուիրուած Արցախում երկու կարծիք չկայ բառիս լայն իմաստով Հայաստանի անկախութեան հարցում: Չգիտեմ, մեզ կը յաջողուի՞ արագօրէն սլացող գնացքից ցատկել «*Անկախութիւն*» կանգառում, բայց «*Անկախ Արցախ*» կանգառում մենք արդէն ցատկել ենք («*Խորհրդային Հայաստան*», 24 Յուլիս 1990 — *հատուած*):

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԵՐԱԴԱՐՁ...

Մայիսի 29ին Մոսկուայի Բուտիրեան բանտից ազատուեց Արցախեան շարժման ակտիւ գործիչ Արկադի Մանուչարովը։ «Գրական թերթ»ի պատուէրով ազգակցիր Բակուր Կարապետեանը հանդիպեց Ա. Մանուչարովին եւ զրոյց ունեցաւ նրա հետ («Գրական թերթ» 1990, թիւ 24)։

Բ. Կ.— Ֆրանսիացի գրող Մարսել Պրուստը գրում է, որ նոյը աշխարհն աւելի լայն ճանաչեց այն ժամանակ, երբ 40 օր փակուած էր տապանում եւ իր փոքրիկ պատուհանից դուրս էր նայում։ Ինձ միշտ թւում էր, որ դուք եւս բանտախցի Ձեր պատուհանից երեւի աւելի խորն էք ընկալել այսօրուայ քաղաքական երեւոյթները, Արցախին, ողջ հայութեանը վիճակուած ճակատագիրը։

Ա. Մ.— Երբ Արցախում տեսնում էի մեր ժողովրդի նկատմամբ կիրառուող ռազմական խտրականութիւնը, երբ անաչառ լկտիութեամբ ասում էին՝ դու հայ ես, օտար ես, իսկ ես ազրբեջանցի եմ, այս հողի տէրն ու տնօրէնն եմ, ես չէի կարող չլծուել ժողովրդի ազատագրութեան պայքարին։ Եւ ահա յայտնուեցի կալանավայրում։ 44 օր ինձ պահեցին Շուշիի բանտում, այն դէպքում, երբ ազրբեջանցիներն ու հայերը փաստօրէն պատերազմի մէջ էին։ Ասեմ, որ ռազմական ուղղաթիռով ինձ սկզբում Աղդամ բերեցին, որտեղ բազմահազարանոց ամբոխը օդակայանում հաւաքուած սպասում էր։ Ուղղաթիռից զրահամեքենայ տեղափոխելու ընթացքում տեսնելով խրախճանքից պլուխը կորցրած բազմութիւնը, հասկացայ, որ երկրի ղեկավարութեան ու ԽՍՀՄ ՆԳ մինիստրութեան գիտութեամբ յատուկ ինձ Աղդամ են բերել՝ ազրբեջանցիներին ցոյց տալու, որ նրանց կամքը կատարւում է։ Իսկ թէ Շուշիի բանտում ազրբեջանցիներն ինչպէս վարուեցին ինձ հետ, դժուարանում եմ պատմել։ Մահապարտ մենախուցն էին յատկացրել ինձ, որտեղ ցուրտ ձմրանը ո՛չ ջեռուցում կայ, ո՛չ պատկելու տեղ։ Ինձ համար սոսկալի է խօսել կրածս վայրագութիւնների, խոշտանգումների մասին, գոհ եմ, որ հիմա ազատութեան մէջ եմ։ Իսկ մենախցից աշխարհը չատ աղօտ էր երեւում։

Բ. Կ.— Իսկ յետո՞յ...

Ա. Մ.— Յետոյ փոխադրեցին Մոսկուա եւ 24 օր պահեցին ՊԱԿի բանտում։ Մթնոլորտն այնտեղ միանգամայն այլ էր։ Հիմնական «մեղքոյը» հոգեբանական ճնշումն է։ Որոշ ժամանակ անց տեղափոխեցին Մոսկուայի Բուտիրեան բանտ։ Հասկացայ, որ խորհրդային բանտում մէկ տարի գտնուելուց յետոյ մարդը կորցնում է քայլելու ընդունակութիւնը, կերպարանափոխւում է, երկու տարի յետոյ կորցնում է խօսելու ընդունակութիւնը, իսկ երեք տարի յետոյ վերածւում է նեարդային կծիկի եւ կարող է զրկուել բանականութիւնից։ Ինչպէս տեսնում էք, ես տարուէջից յետոյ չեմ կորցրել քայլելու ընդունակութիւնս։ Թէեւ մէկուէկէս տարի աշխարհից կտրուած էի ու նոյնիսկ չունէի աշխարհին նայելու նոյի այդ նեղ պատուհանը, իսկ Շուշիում թերթի մասին մտածել անգամ չէի կարող, բայց պայքարի, ազատութեան գաղափարը միշտ ինձ հետ էր (ետառուած)։

digitised by A.R.A.R.@

ՂԱՐԱԲԱՂ ԿՈՄԻՏԷԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ԽՈՒՄԲ ՄԸ

Ղարաբաղ Կոմիտէի ձերբակալուած անդամներէն խումբ մը։ Ձախէն աջ՝ Վանօ Սիրադեղեան, Վազգէն Մանուկեան, Աշոտ Մանուչարեան, Դաւիթ Վարդանեան եւ Սամուէլ Գէորգեան։ Աւետիք Իշխանեան, որ «Մաշտոց» միաւորումի ղեկավարներէն է, ձերբակալուած չէ։

*

Ինչուէ՛ն, երեւան բերուեց բազմաքանակ զօրամասեր, արտակարգ վիճակի ռեժիմ հաստատուեց հանրապետութիւնում եւ, որ յատկապէս ամօթալի էր, ձերբակալուեցին «Ղարաբաղ» կոմիտէի անկաշառ անդամները, ժողովրդի նուիրեալ զաւակները, որոնք շարժման ամբողջ ընթացքում չլքեցին իրենց դժուարին գործը, շարժումը տարան սահմանադրական ուղիով, զգուշօրէն փորձեցին խուսանաւել ստորջրեայ խութերից, մի բան, որի դրական արդիւնքները դրսեւորուեցին թէկուզ այն բանում, որ մեզանում տեղի չունեցաւ այնպիսի մի արիւնահեղութիւն, ինչպէս հարեւան Վրաստանում, ժողովրդական հզօր շարժման եւ համազգային բողոքների շնորհիւ, հաւանաբար, հաշուի առնելով միջազգային կարծիքը, իշխանութիւնները ազատ արձակեցին կոմիտէի անդամներին, որոնք նորից ժողովրդի հետ են, նրա կոչին («Գրական թերթ», 1989, թիւ 46)։

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ռ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԼՈՅՍ՝ ՀԵՌԱՒՈՐ ՈՒ ՄՕՏ, ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ ՍՏԵՂԾՈՒՈՂ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ

... ԵԹԷ խոր վերլուծելու լինենք, այսօր հայից նեղացած, վիրաւորուած շարքային ազգրեկցանցին այնքան էլ մեղք չունի: Արդէն քանի՞ շրջանաւարտ է դպրոցից կեանք մտել՝ սերտած նորագոյն պատմութեան ազգրեկցանական տարբերակը:

Ցաւոտ պիտի խոստովանենք, որ ոչ մէկը Ազգրեկցանի մասնագիտութիւններից չհամարձակուեց ասել ճշմարտութիւնը: Ընդհակառակը, ոմանք չասպիսին, յաւագոյն դէպքում, մեղադրել Հայաստանի մասնագիտութիւնը՝ հրաւիրման մէջ, դարաբագեան շարժումը կազմակերպելու մէջ:

ԱՌԻՐԷՆ ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԵԹԷ ժամանակին բացայայտուած լինէին 37, 20 թուականների բարդ հանգոյցները, եթէ պատմութիւնը չընդհատուէր, լինէր շարունակական, թերեւս չէին լինի այն իրազարձութիւնները, ինչը մամուլի որոշ օրգանների թեթեւ ձեռքով կոչուեց «Իրազարձութիւնները Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջը»: ԵԹԷ ժամանակին բացայայտուէին պատմութեան մութ, սեւ անկիւնները, թերեւս չէին ծնուի ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարը իւրովի ընկալող պաշտօնեաները եւ նրանց գգուշաւորութիւնից սնուած կեղծարարները: Ի վերջոյ, մեր սերնդի աչքի առջեւ ծնուեց ու աճեց, ակադեմիկոս դարձաւ Բունիաթովը, որին սկզբում, առաջին յօդուածի հրապարակումից յետոյ չէ՞, որ աւելի հեշտ էր սատակը: Բայց գգուշաւոր պաշտօնեան մեզանում չէ՞, որ աւելի հեշտ էր սատակը: Բայց գգուշաւոր պաշտօնեան մեզանում արդէն վարժուել էր սատակել իւրայիններին. չի կարելի, ձեր պատասխանը հարուած կը հասցնի ինտերնացիոնալիզմին: Աւելի լաւ է՝ լռել, համբերել, մենք մտածում ենք, մի բան կ'անենք: Մինչեւ մտածում էին՝ բունիաթովները նորանոր յօդուածներ էին գրում, յօդուածները դառնում էին դիսերտացիաներ, գրքեր, գիտութիւն էր ստեղծւում. «Նոր պատմութիւն»: Ի վերջոյ, եթէ խոր վերլուծելու լինենք, այսօր հայից նեղացած, վիրաւորուած շարքային ազգրեկցանցին այնքան էլ մեղք չունի: Արդէն քանի՞ շրջանաւարտ է դպրոցից կեանք մտել՝ սերտած նորագոյն պատմութեան ազգրեկցանական տարբերակը: Եւ, ահա, նրան, շարքային այդ ազգրեկցանցուն, ասում են՝

digitised by A.R.A.R.@

գիտե՞ս, այ օղուլ, հայերն ուզում են քո հողը խլել։ Ասում են՝ Ղարաբաղը մեր հանրապետության սիրտն է, մենք ո՞նց ապրենք առանց սրտի։ Ո՞վ լինի՝ որ չնեղանայ։ Ինչպէ՞ս թէ իմ հայրենիքը բաժան-բաժան անես։ Բա սա եղբայրութի՞ւն է։ Եթէ այս բոլորին զուգահեռ տրուի նաեւ տեղեկութիւն, թէ հայերը հիւրընկալ Ղարաբաղում հրաշալի են ապրում, նոյնիսկ աւելի հրաշալի, քան ադրբէջանցին՝ այլ վայրերում, պատկերը լրիւ պարզ կը լինի։ Եւ այստեղ էր, որ քաջութիւն պիտի ունենային ոտքի կանգնելու Ադրբէջանի մտաւորականները (ոչ՝ բունիաթովները), գիտակ մարդիկ եւ ասէին ողջ ճշմարտութիւնը։ Թէ՞ նրանք չգիտէին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման պատմութիւնը։ Չգիտէի՞ն, թէ Ղարաբաղը, Զանգեզուրը Ադրբէջանին միացնելու նպատակով քանի-քանի միլիոն էին շրջանառութեան մէջ գցել յեղափոխական դիմակ հագած նախկին մուսաւաթականները... Չգիտէի՞ն, թէ Ստալինի անմիջական մասնակցութեամբ ու ճնշմամբ ինչպէս է գրչախիվայր փոխուել բանուորա-գիւղացիական (բոլշեւիկների) կուսակցութեան Կովկասեան բիւրոյի կենտկոմի բառացիօրէն նախորդ օրուայ որոշումը։ Եւ ինչպիսի՛ ձեւակերպումով. ազգամիջեան խաղաղութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնից հնչելով... Այս ձեւակերպումը պէտք է կարդալ այս կերպ՝ կը խախտուէր ազգամիջեան խաղաղութիւնը, եթէ Ղարաբաղը մնար Հայաստանի կազմում։ Եւ ընդհակառակը՝ կը պահպանուէր, եթէ միացուէր Ադրբէջանին... Ցիրաւի՝ խորթափանց մի ձեւակերպում, որի ընթերցումը այսօր էլ այժմէական է հնչում։

Ադրբէջանի մտաւորականները տեղեակ չէի՞ն, թէ ինչպէս է «ազգամիջեան խաղաղութեան» այս տարիներին ապրել հայ ժողովրդի մի հատուածը Ղարաբաղում։ Եթէ ապրել է հրաշալի, ապա էլ ինչո՞ւ ամենաբարձր մակարդակով Լեռնային Ղարաբաղի տնտեսութիւնը եւ հոգեւոր կեանքը բարելաւելու ծրագիր մշակուեց։ Սուտը չէ՞ որ պոչ է ունենում, որն ինչքան էլ փորձես՝ չես կարող թաքցնել։ Ցաւով պիտի խոստովանենք, որ ոչ մէկը Ադրբէջանի մտաւորականներից չհամարձակուեց ասել ճշմարտութիւնը։ Ընդհակառակը, ոմանք շտապեցին, լաւագոյն դէպքում, մեղադրել Հայաստանի մտաւորականութեանը՝ հրահրման մէջ, Ղարաբաղեան շարժումը կազմակերպելու մէջ։ Մտաւորականութիւնը, առհասարակ, այո, կազմակերպող ուժ է եւ՝ զարաբաղեան, եւ երեւանեան ցոյցերում, իրօք, կայ հայ մտաւորականութեան մասնակցութիւնը, սակայն ոչ այն մեկնաբանութեամբ, ինչով հանդէս են գալիս մեզ մեղադրողները։ Մտաւորականութիւնը կազմակերպում է ժողովրդին իր ստեղծագործութեամբ, իր մտաւոր աշխատանքով, իր վեհ գաղափարներով, իր մարդասիրութեամբ եւ, այո, իր ինտերնացիոնալիզմով։ Եւ մեր մտաւորականութիւնը հպարտանալու իրաւունք ունի, որ իր մասնակցութեան արդիւնքը եղաւ այսպէս գեղեցիկ ու այսքան քաղաքակիրթ։ Ադրբէջանական ժողովրդին վիրաւորող եւ ոչ մի կոչ չի հնչել բազմահազարանոց ցոյցերում։ Ես անձամբ այս ամէնը հպարտութեամբ եմ ասում։ Իսկ ի՞նչ կ'ասի Անարը՝ Ադրբէջանի մտաւորականութեան կազմակերպած ցոյցերի մասին։ Ո՛չ Անարը եւ ոչ էլ ոեւէ մէկը ադրբէջանցի մտաւորականներից, սումգայիթեան արիւնոտ օրերին ու օրերից յետոյ, չկարողացաւ յաղթահարել իրեն, ցաւակցական գոնէ մի հեռագիր ուղարկել Հայաստան, ներողութիւն խնդրել իրենց (թող այդպէս կոչուեն) խուլիգանների ու բանդիտների համար։ Թէ՞ նրանք, այդ բանդիտները Ադրբէջանի քաղաքացիներ չեն, ներմուծուած են այլ երկրից, եւ դրանց համար կարելի է պատասխան չտալ։ Ի դէպ, ասեմ, որ Հայաստանը սրբերի հանրապետութիւն չէ, մեզանում էլ կան խուլիգաններ ու բանդիտներ, բայց ես նրանց համար էլ եմ. հպարտ, որ ոչ մէկը ձեռքը,

digitised by A.R.A.R.@

նոյնիսկ, ճիպոտ չառաւ։ Գլուխը քարը ցաւակցութիւնը, ներողութիւնը,— լռութիւնը նոյնպէս կը յարգուէր ըստ պատշաճի,— բայց Անարը, գրողը, գրողների միութեան առաջին քարտուղարը, ի լուր ողջ Միութեան, նաեւ՝ աշխարհի, չյիշելով իրադարձութիւնների սկիզբը, պատճառը, Սումգայիթը, չյիշելով կոտորուելու սարսափից Հայաստան փախած հազարաւոր հայերին, յայտնում է, որ ամէն օր Ադրբեջանի գրողների միութիւն են գալիս Հայաստանից փախած ադրբեջանցիներ, պատմում են իրենց գլխին եկածը եւ ո՞վ,— հարցնում է պաթետիկ,— ո՞վ պիտի նրանց մասին ասի ողջ ճշմարտութիւնը, եթէ ոչ՝ գրողը։ Գուցէ Անարը անտեղեա՞կ է սումգայիթեան անցքերին, գուցէ նա չգիտէ՞, թէ պրովոկացիոն ինչ նպատակներով են որոշ ադրբեջանցիներ «փախչում» Հայաստանից, որտեղ նրանց մազին անգամ չեն դիպչում։ Ընդհակառակը՝ պահում, պահպանում են նրանց լքած տներն ու գոյքը։

Գուցէ նա անարդար ոչինչ չի՞ տեսնում սումգայիթեան դատավարութիւն-ֆարսում, որտեղ դատւում են (անկախ պատժաչափից) խուլիգանները միայն, իսկ մեղաւորները, թերեւս նոր դաւեր են նիւթում՝ հաստատելու խորթափանց այն ձեւակերպման այժմէական հնչեղութիւնը։

Ալլահն իր հետ, բայց չի կարելի, չի կարելի խօսել ինտերնացիոնալիզմից, եւ առհասարակ՝ ոչ մի «իզմ»-ից, եթէ տէրը չես այդ գաղափարի։ Գլուխը քարը ցաւակցութիւնը, ներողութիւնը, բայց ինչպէ՞ս բացատրել այն փաստը, որ երբ մենք մղկտում էինք վիրաւորանքից, ցաւից, Անարը մի մեծ խմբով շրջագայում էր Թուրքիայում, գուցէ եւ մասնակցում խրախճանքների։ Եթէ նոյնիսկ վաղօրօք ծրագրուած միջոցառում էր՝ հրաժարուելը մե՞ծ քաջութիւն էր պահանջում։ Եւ՝ որտե՞ղ։ Թուրքիա... որի քաղաքացին, ոմն Օրխան Գեարաքեազիմ դեռ վերջերս բարբաջում էր, թէ՝ «Ատուած հայերի ճակատագիրը թուրք ազգի ձեռքն է տուել. յաւ իմացէք՝ ձեզ ո՛չ Քրիստոսը, ոչ էլ ուրիշ ազգ, մեր ձեռքից չի ազատի»։

Մեր եղբայրը, գրողը, Անարը, Թուրքիայում շրջագայելիս փնտռե՞ց, գտա՞ւ Օրխանին, օրխաններին, առա՞ց այն խօսքերը, որ ասում են եղբօրը վիրաւորողին, սպանողին։ Եթէ ոչ՝ ինչպէ՞ս է նա երազում Ղարաբաղը ինտերնացիոնալիզմի սիմվոլ դարձնել։ Ջաւել այսօր այս մասին, նշանակում է կրկին կոծկել ճշմարտութիւնը, ի վերջոյ՝ պատմութիւնը, որը մենք փորձում ենք դարձնել շարունակական։ Մեր մեծ ողջ երկիրն է փորձում եւ մենք ետ մնալու իրաւունք չունենք։

Սխալ է՝ ի շահ ներկայի պատմութիւնը կոծկելու ճիգը։ Պատմութեան ամենադառը, ամենաարիւնոտ էջերն էլ պիտի չկոծկուեն։ Պատմութեան դառը, արիւնոտ էջերը, մանաւանդ, նման են կենսունակ ուռիճների. որքան խորն ես թաքցնում ու պատում խաւարով, այնքան արագ են բազմանում ու խցկւում ներկայ օրդ։ Նրանց լուսաւորել է պէտք։ Ուռիճներին սպանում է միայն լոյսը... («Գրական թերթ», 1988, թիւ 22)։

ՌՈՒԲԷՆ ՑՈՎՍԷՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ընագին

ԱՄԷՆԻՑ ԱՒԵԼԻ...

«Երեկոյեան Երեւան»ի 15 Սեպտեմբեր 1989 թուակիր համարի էջերուն, հայրենի քննադատ Դաւիթ Գասպարեանի մէկ գրութեան մէջ ի միջի այլոց արձանագրուած է սուլիեանի մոայլին ուղղակիօրէն առընչուող սա խրոխտութիւնը.

«Գրական թերթ»ի 1938 թ. Մայիսի 31ի թիւ 25ում տպագրւում է «Նոր Արարկիրի դպրոցի գերազանցիկ աշակերտ» պիոներ Վ. Դաւթեանի «Մեր ձայնը քեզ, մեծ առաջնորդ» բանաստեղծութիւնը՝ գրուած ընտրութիւնների առթիւ եւ այն վստահութեամբ, որ ժողովուրդը անպայման իր ձայնը կը տայ Ստալինին: Այսպէս, գրական նոր սերունդը աչքը բացում է բռնաւոր մթնոլորտում»:

Ուղիղ կէս դար, 1938էն մինչեւ 1988, ուրիշներու կարգին՝ նաեւ Վահագն Դաւթեան, ի հարկէ՝ կեանք առնելու պատրանքի կառչած՝ «ձայն» տուաւ առաջնորդին, առաջնորդներուն, առաջնորդները առաջնորդած կամ առաջնորդներէ առաջնորդուած կոմունիզմին, կոմունիստներուն: Գրեց շատ գովաբանուած, շատ արտասպուած, շատ արտասանուած, շատ պակներ խլած «Կոմունիստները» անուն ուռանաւորը եւ կոմունիստական ուրիշ քաներ, մաղթերգներ գրեց, խոստումներ տրուաւ, երդումներ ըրաւ, տառապեցաւ յոյժ, կռուեցաւ նոյնիսկ:

Ու խղճմտանքի դէմ եղած կ'ըլլայ, եթէ ըսենք, որ կեդծիքն էր այդ ամէնուն մղիչ ուժը: Ինք, Վահագն Դաւթեան, ինչպէս իր նախորդները, հաւակակիցներն ու յետնորդները պարտադրուածին քով յանախ համոզումով հիւսեցին իրենց տողերը, այն հաւատքով, որ կոմունիստական իրենց ամենազոր պարտիան արգարութիւն պիտի ընէ նաեւ հայ ժողովուրդին եւ օր մը պիտի նպաստէ մեր բգկտուած հայրենիքի վերամիաւորման:

Այդ հաւատքն էր, որ վերջին անգամ դրձնալ «դէմ առաւ» Կրեմլի պարիսպներուն ու Վահագն Դաւթեան եւ իրեն հետ մեր ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը անդամ մը եւս զգաց, որ կոմունիստական կառավարութեան կուրծքին տակ էքար է դրուած տեղ խղճի», եւ այդ խիղճը «ամէնից աւելի հայ ժողովրդի բախտն ու ճակատագիրն է հեգնել», իր ժպիտը շարունակ շայլելով «մեր հարեւաններին»...

∴

Նոյն ժպտիրի երկու հատուածներուն միջեւ ժամանակին ստուգիւնան ձեւքով ոսկեցդուած 7 կիլոմեթրանոց պատուարը ոսկի պատուար չէ, այլ ամօթալի խարան կիմոիրտութեան, ապիկարի ինքնասիրման լենինեան սիպրտների եւ միջազգային իրաւունքի ճակատին:

Եւ եթէ յուսով եմ, որ հետաւ չէ այն օրը, երբ երկրի կիմոկրատական ուժերը վճռական պրոցի կը դնան վերակառուցման ծպտեալ ու բացայայտ թշնամիներուն դէմ, եւ ճշմարտութիւնն ու արդարութիւնը իրենց մաքուր ձեւքերով կը քանդեն այդ եւ այդ կարգի բոլոր արհեստական պատուարները, կը ջնջեն նման ամօթալի խարանները:

Ուրեմն կրկին յիշենք. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւատական ուժի մէջ է»: Աւելի քան կէս դար տասնամեակներու զգաստութեան գազանածաւալ լեզուով այս պատգամը յղեց մեզ մեր վերջին մեծագոյն բանաստեղծն ու մարգարէն...: Եւ հիմնականում այդ պատգամի համար էր, որ յուղայօրէն մատնուած մարգարէն բարձրացաւ խաչի...

Հաւատարիմ լինենք այդ մեծ խաչելի, մեծ նահատակի սրբազան պատգամին («Երեկոյեան Երեւան», 31 Օգոստոս 1989):

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

∴

Մի ականատես պատմում էր, որ երբ Բաքւում զիշերային խարոյկների վրայ հայ կանանց, ծերունիների, երեխաների էին այրում, լենքերից մէկի ճակատին խարոյկների բոցից ցոլցլում էր ոսկեհուռ խոշոր տառերով գրուած այն հանրայայտ ասոյթը, թէ կոմունիստական կառավարութիւնը «մեր դարի միտքը, պատիւը եւ խիղճն է»: Ես պատկերացնում էի այդ տեսարանը, երբ այն ինձ համար խորհրդանշական իմաստ էր ստանում: Ինձ թւում էր, թէ 70 տարի շարունակ բոլոր դահիճների ճակատներից, բոլոր մայրուղիների վրայ կախուած պատատներից հեղոյ այդ ասոյթը յանկարծ վերջին «խիղճ» բառով ամէնից աւելի հայ ժողովրդի բախտն ու ճակատագիրն է հեգնել («Խորհրդային Հայաստան», 24 Ապրիլ 1990):

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Վ. ԴԱՎԻԹՅԱՆ

ԻՄ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻՆ

Մի խրախճանքէ այդպէս վաղաժամ,
Մի չարախնդաք նման չախկալի,
Վախկոտն է կեանքում լոկ այդքան դաժան,
Եւ հոգով թոյլն է այդքան նողկալի:
Երկու զէնք ունէք՝ քծնանք ու դանակ·
Հաւասարի դէմ քծնանքն է հանում,
Իսկ երբ դառնում էք խուժանի քանակ,
Դանակ էք սրում ու «հերոսանում»···
Այդպէս էլ արիր, Բաղիրով դու ենգ՝
Արժանի զաւակն այն սատակածի,
Սումգայիթ հասար մոլլաներիդ հետ,
Սրելով այնտեղ լոմեր ու կացին:
Սրելով այնտեղ մոլուցք ու ժանիք,
Հեռց ինքդ դժնի ջարդն այդ վարեցիր,
Ինքդ միացար տասնեօթ խուժանի,
Ու հայ աղջկան բռնաբարեցիր···
Արնոտ երախով, արնոտ թաթերով
Ներխուժում էիք դուք ծննդատուն,
Մանկանց գլուխներ զարկում պատերով
Եւ յղի կանանց որովայն հատում···

Դուք դար ու դարեր այդ նոյնն էք արել,
Դուք դար ու դարեր հեղել էք արիւն···
Դուք ենգ մի դաւով Արցախն աւարել
Ու ենգ մի ստով ձերն էք համարում:
Բայց երբ Թուրանում դեռ վայրի ֆոչով

digitised by A.R.A.R.@

Դուք խմում արիւն, խիղճ էիք ծախում,
Մենք աստուածային ու վսեմ ոճով
Տաճարներ էինք կերտում Արցախում:
Երբ ծանօթ չէիք դեռ համին հացի
Եւ խժռում էիք միայն միսը հում,
Աստծուն հաւասար մի Նարեկացի,
Աստծու հետ նստած զրոյց էր անում:
«Կարա Կոյուն» էր անունն այն ցեղի,
Ստալինը փոխեց, դարձրեց «ազեր»,
Ախր այդ «կարա»ն նիշդ էր ու տեղին
Եւ լաւ էր իրենց նակատին սազել:

Հոգու աղքատներ, ուղեղներ ամուլ
Եւ սակայն հմուտ դուք գանձագողեր...
Որ պարսիկներից խլում Նիզամուն,
Մեր սուրբ քարերից ջնջում էք տողեր...
Բայց տողերը ի՞նչ, մասունքներն այդ թանկ
Մեր հանճարն ունեն ամէն բեկորին...
Խաչքա՞ր էք ուզում... Մի քանիսը տանք,
Բայց խաչը ինչպէ՞ս դնէք ձեր *գէոր*ին:
Ձեր ինչի՞ն է պէտք քարն այդ լուսաւոր,
Մէկ է, չէք կարող դուք աշակերտել,
Ինքներդ գիտէք, արեան էք սովոր,
Սովոր սպանել ու կաշի քերթել:
Ու երբ քարերն են անխօս վկայում,
Թէ մենք ենք արդար տէրերն այդ հողի,
Ու երբ ձեր անզօր կեղծիքն է վայում,
Մաղձից խենթանում, փոխւում էք ոխի:
Եւ սկսում էք ձեր պիղծ թաթերով
Ջարդել, հրդեհել, քանդել, աւերել,
Մանկանց գլուխներ զարկել պատերով,
Եղեռնագործել ու բռնաբարել...
Սակայն մի հրնուէք այդպէս վաղաժամ,
Կարն են ոտքերը ստի ու չարի,
Ձեր դաշնակիցը մոլուցքն է դաժան,
Մեր դաշնակիցը լոյսն է հանճարի:
Եւ դուք չէք կարող ոնիրն այդ թաղել,
Այն պիտի յանձնենք մարդկութեան դատին,
Որքան էլ փորձէք ստել խարդախել,
Մէկ է, ձեր այդ պիղծ, այդ նեղ նակատին
Պիտի ընդունէք թուքը մարդկութեան,
Թուքը սուրբ խղճի ու արդարութեան:

digitised by A.R.A.R.@

Իսկ դո՛ւ ժողովուրդ, դու իմ հանճարեղ,
Ցաղթել ես քանզի յաղթել է ոգիդ,
Անարատ պահիր քեզ, որպէս արեւ,
Որ սրտիդ վրայ մաղձը չչոքի...
Գիտես, որ եթէ ձայն տայիր յանկարծ,
Կ'ելնէին հազար խիզախ ֆիդայի,
Բայց զսպեց իրեն ոխդ փոթորկուած,
Զպղծեց իրեն սուրբ ձեռքը հայի...
Եւ դրանով էլ առաւել զօրեղ
Դու ապտակեցիր ոսոխին քո ենգ...
Փառք քեզ, իմ հպարտ, փառք, իմ հանճարեղ,
Դու՝ դաս վեհութեան, դու՝ խղճի օրէնք...
Հողի սուրբ տէրը արմատն է խորին,
Զպոկուես հողից, իմ խրոխտ ԱՐՑԱԽ,
Առաւել ամուր կառչիր այդ հողին:
Թոյլ չտաս երբեք այդ վայրի քոչին,
Որ գայ գողէգող, քո հողին չոքի,
Քարիդ կարծրութեամբ վանիր անկոչին,
Մի բուռդ անգամ չտաս ոչ ոքի:
Դու այդ հողի տէրն, այդ հողի գերին,
Այդտեղ ես ծնուել, որ յարատեւես,
Որ արծուի նման հսկես լեռներին
Եւ արծուի նման տիրաբար թեւես...

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԻՄ ՈՒ ԻՄ ՄԻԶԵՒ

ԱՌԱՋԻՆ ԶԱՅՆ

— Ես ինքս պիտի իջնեմ իմ խաչից,
Ես ինքս պիտի հանեմ ձեռքերիս, ոտքիս գամերը
Ու նորից, դարձեալ իջնեմ իմ հողին,
Այս անգամ արդէն յոյսի, սթափման փոշ հնչեցնելու:

Այն ո՞վ է ասում, որ ատելութեան
Դեղնախտն է դարձել իմ դաւանանքը,
Որ սպանելն է դարձել հաւատամք:
Դա պահ է միայն,
Ցասումի, ցաւի կուտակումներից՝
Ցանկարծ դուրս թռչող վայրկենական նիշ,
Փլուզումների կոյտերի վրայ կանգնած կոյր փոշի,
Աչքի սլացքը փակող մառախուղ,
Որ պիտի անցնի,
Որ կ'անցնի՛ անշուշտ:
Չէ՞ որ Տէր-Զօրի անապատներում,
Անիւների սեւ մոխիրի վրայ
Կեանք առաւ, փռուեց, ծածանուեց, ծփաց
Ծաղկից, ծիծաղից ու ծիածանից ծնուած ծիրանին,
Որ սարեանական հրա՛շք է կոչւում:
Աշխարհովը մէկ, որպէս զարթնումի կոչնակ ու շառաչ,
Զնգաց, զրնգաց
Խաչատուր որդուս՝
Սրերի շաչը սրերի պարո՛վ խլացնող որդուս
Ցաղթանուա՛գը:

Իսկ Փետրուա՛րը,
Ութսունուք թուի Մեծ Փետրուա՛րը,
Մի նոր, մի հզօր Աւարա՛յր էր դա,
Եօթհարիւր հազար իմ արիների զօրք-զօրահաւաք՝
Անտես, բայց անկանգ
Ինձ վրայ եկող փիղ-բաբանի դէմ,
Որ յամառում էր պահել իր թաթը
Արցախ աշխարհի փրկութեան կանչող շուրթերի վրայ,
Լռեցնել ձայնը իմ արդարութեան,

digitised by A.R.A.R.@

Ուր խլուած հողիս ձայնը չէ՛ր միայն,
Այլ իմ ոտնահար իրաւունքների,
Լկուած ինքնութեան,
Վիրաւոր հոգուս աղաղա՜կն անհուն:

Ու բարձրացայ ես միակամ ու ձոյլ
Մայր Հայաստանից մինչեւ հեռուներ,
Ու մինչեւ Սփիւռք,
Ու թատերական հրապարակն ասես
Մի նոր Աղաւնու վանք էր, առասպե՜լ,
Որ ներս էր առնում
Անքիւ, անհամար, անքանակ հայեր
Ու նորից դէպի բացերն էր թողնում՝
Փոխարկած ոգու՛, դարձրած թեւաւո՜ր...

Ու տեսաւ աշխարհն,
Որ անվերջ եմ ես, անսկիզբ եմ ես,
Որ ամէն մի պահ նորից եմ ծնւում
Եւ անհնա՜ր է ինձ մեռցնելը...
Որ մարմնից աւել՝
Ես հոգի՛ եմ, շո՛ւնչ, այրուող էութիւն,
Որ գիշերի մէջ լոյսը տեսնելու
Ինձ վերապահուած շնո՜րհն ունեմ ես՝
Իմ Լուսաւորչի կանթեղն անապակ:

Իմ Լուսաւորչի կանթե՜ղը, իմը,
Արագածից վեր,
Անպարան կախուած երկինքների մէջ
Ահա վառո՜ւմ է
Մէջը՝ ձէթի տեղ հաւատ ու ոգի,
Վառւում խորշակի, հողմ ու քամու դէմ
Ու երեւում է միայն ինձ՝ հայի՛ս,
Իր սուրբ խորհրդին աղօթող հայի՛ս,
Ու ցոյց է տալիս ապրելուս նամբան:

Սեւն ու խաւարը լոյսով յաղթելն է իմ ճանապարհը,
Լոյս արարելն է լինելութեան իմ կերպը յաւէտ...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց. ԿԱՐԱՊԵՆՑ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՏՂԱՍ★★★★★★★★★★★★★★★ԱՍՏՂԵՐՆ ԷՐ ՈՒԶՈՒՄ,★★★ԻՍԿ ՀԻՄԱ՝ ՂԱՐԱԲԱՂԸ★★★

Ժամանակին տղաս կատաղն էր բարձրանում եւ ասողների հետ բաներ փոփոխում։ Մտածում էի, որ նրանից մի բան դուրս կը գայ։ Կամ բանաստեղծ եւ կամ էլ մի երկրորդ Համբարձումեան։ Ես ի՛նչ իմանայի, որ Վայրենի Ցակորի ձայնը Ղարաբաղի լեռներից պիտի հառնէր Նիւ Եորք եւ խենթացնէր տղային։

Ց. ԿԱՐԱՊԵՆՑ

Այս բոլորի պատճառը տատիս տատն է եղել, այլապէս Նիւ Եորքում ծնուած որդիս ի՞նչ գործ պիտի ունենար Ղարաբաղի հետ։

Ցեւոյ՝ այս խնդրում կարեւոր դեր են ունեցել նաեւ Մեղրիի գիշերները, երբ տատիս տատը Փոքր Թաղի իր քարակերտ տանը քաշուած բաներ է պատմել իր զաւակներին Արցախի ու Սիւնիքի մասին, Դաւիթ-Բեկի, Մխիթար Սպարապետի, Թորոսի, Բայանդուրի, էլ ի՛նչ գիտեմ, Տէր-Աւետիքի, Փարսադանի, Գապի, Աւթանդիլի եւ, ի հարկէ, իր ամուսնու՝ Վայրենի Ցակորի մասին, ո՞վ գիտէ, ինչպիսի սխրագործութիւններ վերագրելով նրան։ Խնդիրը այդ չէ, այլ ա՛յն, որ այդ պատմութիւնները, զարաբաղցիներին յատուկ վառ երեւակայութեան բովից անցնելով՝ առասպելական տարածք են ստացել եւ եկել ու վրդովել իմ որդու հանգիստը։

— Ես Ղարաբա՛ղն եմ ուզում,— պահանջում է նա։

— Ինչո՞ւ Ղարաբաղը։

— Որովհետեւ պապերիս տունն է։

Դէ՛, արի՛ ու էշը ցեխից հանիր։

Ես ինչո՞ւ պիտի ստէի ու մերոնցից լսածներս որդուս պատմէի։ Մի՞թէ աշխարհում այլ հեքիաթներ չկան։ Ցեւոյ՝ ո՞վ ասաց, որ աշխարհի կենտրոնը Ղարաբաղն է։ Զէ՛, սխալուել են Սիմոնն ու Կարապետը, Թոմասն ու Արշաւիրը եւ ամէնից չատը՝ հենց ինքը, Վայրենի Ցակորը, որը խոփ ու գութան թողած՝ Մոսւ լեռն է բարձրացել ու վիթխարի քարեր գլորել պարսիկ խաների գլխին։ Եղածը եղել, անցել է։ Ես ինչո՞ւ պիտի նստէի եւ երկու հարիւր տարուայ գաղթը պատմէի որդուս։ Դէ, եղել ենք, էլի՛։ Եղել է Թաւրիզ։ Եղել է Մուժամբար։ Եղել է Մեղրի։ Եղել է Մեծ Սղնախ։ Եղել է Փոքր Սղնախ։ Եղել է Դաւիթ-Բեկ ու ապստամբութիւն։ Այդ է եղածը։

digitised by A.R.A.R.@

— Ես Ղարաբաղի լեռնե՛րն եմ ուզում,— պահանջում է որդիս։

— Դէ, որ ուզածդ լեռ է, գնանք Բաթսկիլ։

— Ես Ղարաբաղի՛ լեռներն եմ ուզում։

Ցամառ է որդիս՝ ճիշտ իր պապի պապի պէս, եթէ ի հարկէ, չի չափազանցել տատիս տատը, երբ ծմրան զիշերներին, տաք թոնրի շուրջ հաւաքուած՝ իր զաւակներին բաներ է պատմել իր նահատակ ամուսնու մասին։ Տոհմական բանահիւսութիւնից դատելով բարի մարդ է եղել Վայրենի Ցակոբը։ Նոյնիսկ խաղաղ։ Չէ՞ որ հողագործ էր։ «Վայրենի» պիտակը կպցրել են նրան այն տարուայ աշնանը, երբ Ջիւանշիր ցեղերի դէմ Դաւիթ-Բեկի հրամանատարութեամբ Իւշթափայում տեղի ունեցած ճակատամարտում նա մի հարւածով թշնամու երեք գլուխ է թռցրել։ Ըստ մեր գերդաստանի պատմիչների, իսկական ածգահար է եղել Վայրենի Ցակոբը։ Ժայռակերտ մարմին, երկաթեայ թիկունք եւ անկարագրելիօրէն մազոտ, ա՛յն աստիճան, որ դժուար է եղել զանազանել նրա գլխի խուռ մազերը բեխ ու մօրուքից։ Եղել է արծուաքիթ։ Ունեցել է ահռելի կզակ եւ անդրդուելի կամք, որն այս դէպքում նշանակում է յամառ բնաւորութիւն։ Ասածի տէրն է եղել։

Ղարաբաղի ազատագրումից յետոյ Վայրենի Ցակոբը մտնում է Թորոսի ջոկատի մէջ, արշաւում է Սիւնիք, լեռ բարձրանում, լեռ ճեղքում եւ կանգնում մահմեդականութիւն ընդունած մելիք Բաղրի ամրոցի առջեւ՝ Տաթեւի շրջանում։ Ասում են, թէ երկօրեայ գրոհներից յետոյ դաւաճան Բաղրին արաքսողող անողը նա է եղել։ Յետոյ Թորոսի ու Բայանդուրի ջոկատների հետ պապիս պապը, Ջավնդուր գաւառում պարսիկ խաների մէջքը կոտրելուց յետոյ՝ անասելի քանակութեամբ գինի է խմում եւ մինչեւ լոյս պարում լեռների վրայ։ Պարում է, սակայն ուշն ու միտքը՝ Մեղրի։ Որովհետեւ Մեղրիում էր թողել իր երիտասարդ կնոջը՝ Մարիամին։ Այս կէտում մեր տոհմի պատմիչները հակասութիւնների մէջ են։ Յայտնի չէ, թէ Վայրենի Ցակոբը ե՞րբ է ամուսնացել կոյսն Մարիամի հետ։ Իւշթափայի ճակատամարտից առա՞ջ, թէ Մեղրիի շրջափակումից յետոյ։ Ամէն պարագայի, այդ այնքան էլ կարեւոր չէ։ Փաստն այն է, որ զարաբաղցի Ցակոբը Սիւնիքի ապստամբութեան արանքում մի կերպ ժամանակ էր գտել հայրանալու, չորս անգամ։

Հետագայ զարգացումները եւս մասամբ պղտորուած են, սակայն ոչ թէ տղայիս համար։ Նա արդէն գծել է մեր տոհմի ծառը իր բազմազան ճիւղաւորումներով՝ Ղարաբաղից տարածուելով Երեւան, Մեղրի, Թաւրիզ, Թեհրան, Ժընեւ, Լոնդոն, Ամերիկա եւ դեռ, Աստուած գիտէ ո՛ւր։ Երկրաչափական գծերի գլխին Վայրենի Ցակոբն է, իսկ ստորին ծայրամասում ինքը՝ վերջին չառաւիղը։ Իմ տեղը, հենց այսպէս, միջանկեալ է։ Տղաս ուզում է տէր կանգնել Ղարաբաղին։ Քարտէսագրում է, պատմական տուեալներ ժողովում եւ թեւերը մէջքին կանգնած՝ մտասեւեռ քայլում սենեակի մէջ ծայրից միւսը։

— Ե՞րբ պիտի վերադառնանք Ղարաբաղ,— ասում է որդիս։

— Չգիտեմ։ Երբ ժամանակը գայ։

— Ես հիմա՛ եմ ուզում։

Նոյն ժայռի կտորն է։ Ոչինչ գլուխը չի մտնում։ Նրա մօտ երկուութիւններ գոյութիւն չունեն։ Կա՛մ այս, կա՛մ այն։ Դանդաղ է մտածում, բայց երբ հասնում է եզրակացութեան, ոչ ոք կարող է նրան փոխել իր ընթացքից։ Ծայրայեղութիւնների տոպրակ է։ Միջին ճանապարհ չկայ։ Ամէն ինչ մեծ է իր մօտ։ Սիրում է մեծապէս, ատում է մեծապէս։ Աւելի ապրում է, քան մտածում կեանքի մասին։ Եւ ամենայատկանշականը։ Նրա համար յետադարձ չկայ։ Այդ ազբիւրն է թէ՛ երջանկութեան եւ թէ դժբախտութեան։ Գերադասում է վարար գետը ցատկել, քան սպասել խաղաղ ջրերի գալստեան։

digitised by A.R.A.R.@

Տատիս տատը իր թոռներին է պատմել, թոռները իրենց զաւակներին։ Պատմել են երկար ճանապարհների պռունգին։ Պատմել են քարերին, դաշտային ծաղիկներին եւ աներեւոյթ գնփիւռներին, իսկ երբ պատմութիւնը Թաւրիզ է հասել, ծիածանի երանգ է ստացել։ Իմ մանկութիւնը անցել է այդ ծիածանի տակ։

Երբեմն մտածում եմ, որ այդ բոլորը թերեւս լոկ ընտանեկան շարահիւսութեան արդիւնք է, բայց միեւնոյն ժամանակ գիտակցում, որ յօրինումը նստակեաց մարդու գործ է։ Մերոնք լեռնականներ են եղել՝ լեռից լեռ ցատկող խենթեր, որոնք գուպարի մէջ են մտել փոթորիկների հետ եւ անդունդների երախում թաղել իրենց վիշտն ու ցասումը։ Երբեւէ դարաբաղցի բանաստեղծ, տեսե՞լ էք, իսկ զօրականներ ինչքան որ ուզէք։ Այլ կերպ չէր կարող լինել Վայրենի Ցակոբը։

Դաւիթ-Բեկի ուժերը իջնում են հարաւ։ Ապստամբութիւնը իր հրէ թեւերը տարածում է Սիւնիքի ներքնագաւառների վրայ։ Իր զինակիցների հետ Վայրենի Ցակոբը հասնում է գետի ափին։ Նրա աչքերից կրակ է թափւում, կամ գուցէ գետն է ճաճանչում նրա աչքերում։ Լոյսի սլաքների հետ խաղեր է խաղում։ Սակայն Նախիջեւանի խանը անցնում է հակայարձակման՝ հանդիպելով հայկական ջոկատների բուռն դիմադրութեան։ Թշնամին գետի միւս ափն է չպրտւում եւ նահանջի ճամբան բռնում։ Բայց հենց այդտե՛ղ է, որ հայերը ծուղակն են ընկնում։ Խանը շուռ է գալիս ու ջարդ տալիս հայերին։

Դաւիթ-Բեկը կորցնում է մի ճակատամարտ, սակայն ո՛չ պատերազմը։ Նախիջեւանի յաղթանակից գօտեպնդուած ոտքի են ելնում Օրդուբադում ծըւարած խաները։ Վայրենի Ցակոբը ափիճի պէս է եղվարդի ճակատամարտում եւ անխախտ պահում հայոց թեւը բարկուչատում։ Մարտի դաշտում ընկնում է Թորոս զօրավարը։ Ըստ թաւրիզեան տարբերակի, այդ ճակատամարտում զոհւում է նաեւ Վայրենի Ցակոբը, ինչպէս սովորութիւն է ասել, թուրը ձեռքին։ Սակայն աւելի հաւաստի պատմիչներ վկայում են, թէ նրա կեանքի թելը կտրւում է Մեղրիում՝ Սաֆի Ղուլի խանի զօրքերի ներխուժման օրերին։

Այսպէս թէ այնպէս, տղայիս խելքին չի պառկում վախճանականը։ Վայրենի Ցակոբը այնքան կենդանի է, որքան կենդանի են Սասունցի Դաւիթն ու Դաւիթ-Բեկը։ Նա հիմա շատ բան գիտէ։ Նա գիտէ Ֆաթալի խանին ու մելիք Ֆրանգուլին։ Իսկ ամէնից լաւ գիտէ Պապ զօրավարին, որի աչ թեւն էր դարձել Վայրենի Ցակոբը։

— Մենք պէ՛տք է վերադառնանք Ղարաբաղ,— հրահանգում է նա։

— Մի օր, մի գուցէ։

— Այդ մի օրը ուշ է։ Այսօ՛ր։

Ասում են, թէ տատիս տատը Մեղրիի ծաղիկների պէս սիրուն է եղել, մի իսկական Սիւնեաց գեղուհի, կաթներես ու ծովաչեայ։ Պապիս պապը երբ նրան տեսել է, եօթ օր, եօթ գիշեր հանդեր է ընկել եւ իր կոչտ մատներով պսակ հիւսել։ Պսակ է հիւսել եւ երասխը նետել ու ամէն մի պսակի մէջ իր սիրտը դրել։ Սակայն լեռնականին ո՞վ աղջիկ կը տայ։

Ինչե՛ր են ասում...

Հրդեհը հասնում է Մեղրի։

Ֆաթալի խանը իր յաղթանակից արբեցած՝ որոշում է ասպատակել հայկական գիւղերը, սակայն իր քաջերով ու քաջերի մէջ, քաջերի կողքին՝ Վայրենի Ցակոբը։ Մինչ այդ սակայն Սաֆի Ղուլի խանը պաշարում է Մեղրին ու ներխուժում Փոքր Թաղ։ Այստեղ արդէն հերոսական լայնք են ստանում իրադրութիւնները։ Ամէն ինչ ցցուն է, գրեթէ հոմերոսական։ Ժողովուրդի առաջն անցած անմահութիւն է կերտում Վայրենի Ցակոբը՝ իր ամէն մի քայլը

digitised by A.R.A.R.@

մի-մի լեգենդ։ Արեւ ու արիւն է թորում նրա թուրից եւ որքան ջարդում է, այնքան բազմանում է Թշնամին։ Ջրերից վեր, մռայլ հորիզոնում կանգնում է Մարիամը, իսկ նրա փէշից կառչում են մանուկները՝ Վարդանոյշ, Սաթենիկ, Աստղիկ ու Սիմոն։ Եւ յետոյ՝ ամբողջ Մեղրին ու Մեղրիի հետ ամբողջ ազգն ու ցեղը։ Խենթանում է Վայրենի Ցակոբը եւ խենթութեան մէջ լուսաւորւում է նրա միտքը։ Մէջքը տալիս է կամուրջին եւ խորտակում կամուրջը։ Խանի զօրքը մրջիւնի պէս գետն է թափւում։ Թշնամին նահանջում եւ սկսում է լիզել իր վէրքերը, բայց երբ խաւարը վրայ է պրծնում, մեղրեցիները փայտ, մահակ, բահ ու բրիչ վերցրած յարձակւում են Թշնամու վրայ եւ դուրս շպրտում նրան քաղաքից։ Մեր գերդաստանի դիտապակուց նայելով՝ այդ շարժման գլուխն է կանգնած լինում Վայրենի Ցակոբը։ Բայանդուրին ու Ստեփանոս Շահումեանին օժանդակ դերեր են վիճակուած, չնայած նրան, որ ասողներ կան, թէ առանց յիշեալ զօրավարների անվեհեր ջոկատների, հրոյ ճարակ դարձած կը լինէր Մեղրին։

Տղաս մատիտը վերցրել ու Ղափանը կապել է Ղարաբաղին։

Հուչակել է Ղարաբաղի իշխանութիւն։ Մայրաքաղաքը՝ Գանձակ։

Բացատրում եմ ու բացատրում, սակայն բան դուրս չի գալիս։

Ո՛չ միայն յամառ, այլեւ՝ չորգլուխ։ Արդէն իշխանական հովեր է առել եւ մեծ ծրագրեր է որոճում։ Որ իրեն թողնէք, Հայաստանի սահմանները մինչեւ Վլադիվոստոկ ու Բուխարիատ կը տարածի։ Նրան խօսում են պատմական հոլովոյթների ու աշխարհաքաղաքական ազդակների մասին, որոնց պատասխանում է երեք տառանի մի անվայել բառով եւ հայեացքը Նիւ Եորքի երկնաքերներին ուղղում։

— Առանց Ղարաբաղի Հայաստան չի՛ լինի,— եզրակացնում է նա։

— Ինչո՞ւ չի լինի։

— Որովհետեւ Ղարաբաղը Հայաստանի գլուխն է։

Դէ՛, արի ու տակից դուրս արի։

Ժամանակին խելօք տղայ էր։ Ժամանակին տղաս կտուրն էր բարձրանում եւ աստղերի հետ բաներ փսփսում։ Մտածում էի, որ նրանից մի բան դուրս կը գայ։ Կա՛մ բանաստեղծ եւ կամ էլ մի երկրորդ Համբարձումեան։ Ես ի՞նչ իմանայի, որ Վայրենի Ցակոբի ձայնը Ղարաբաղի լեռներից պիտի հասնէր Նիւ Եորք եւ խենթացնէր տղայիս։ Հիմա օրն ի բուն նա Ղարաբաղի մասին է մտածում։ Հիմա, նա աստղերը ծալել մի կողմ է դրել եւ չարունակ Ղարաբաղն է տենչում։

Թերեւս այս բոլորի պատճառը տատիս տատն է եղել։

ՑԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

digitised by A.R.A.R.@

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՕՐԵՐ — 1988

I

Այդ պահին սպասում էինք Ալարայրից ի վեր։
Եւ դարերի սմբակների տակ անողոքաբար տրորուելով,
Եւ յայտնութեան հրաշքներ կերտելով մագաղաթների վրայ կորացած,
Յիսուսի պէս խաչուելով ամէն օր եւ ըմբերանելով հաւատի մաքուր շիթը,
Եղեռնական թիւը մեր մէջքին դաջելով ու զարկուելով ոնիրների նորօրեայ
յեսանին.

Այսպէս անյուսօրէն մեխուած մեր բախտի կայմին՝
Սպասում էինք եւ··· չէինք սպասում Ալարայրից ի վեր։

Մեր մէջքը շտկուեց մի պահ, ցասումը ցոլացաւ անկոր,
Արիւնը մաքրուեց մի պահ խեղճութեան դարաւոր նիրհից,
Այդ ի՛նչ հրաշք էր, որ յառնեց հայեացքում հայի գլխիկոր.
Խենթացած Ոգին էր այդ մեր ցած իջել յանկարծ երկնքից։

Բոլորը վանկարկում էին նոյնը, դարձած մի մարդ ու մի անուն,
Քայլերը համբուրում էին հողը, ճախրում էին ձայներն անարգել,
Խորշակն էր սասանել - օրէցօր աւերակ դարձող մեր Տունը,
Մենք ելել էինք ինքնակամ՝ որպէս մի հսկայ շանթարգել···

II

Օպերային թատրոնի հրապարակ· բազմութիւն,
Բարձրացող ձեռքեր, ձայներ կամ
Վիրաւոր ազգի մռնչիւն։

Քաղցած եմ· անծանօթ մի քոյր թխուածք է մեկնում սիրալիր,
Վերցնում եմ· հայեացքս ինքնակամ
Հիւսում է բնական մի տեսիլ·
Մարտադաշտ, գթութեան քոյր, հայ ռազմիկ···
Սթափւում եմ քիչ յետոյ «Հայեր միացէք» յանկերգից·
Գոչում եմ ինքս էլ հաստատուն
Եւ խեղդւում ալիքուող յուզմունքից·
Ղարաբա՛ղ··· թւում էր՝ մեռնում ենք,
Ցուսախաբ, յոգնատանջ, ծերացող,
Ղարաբա՛ղ··· մեր Գայլը ոռնում էր
Հիւծախտի բացի՛լից մեծացող···
Սթափւում եմ· հրաշք մի մանուկ
Նստած ուսերին իր հօր՝ թաթիկը դարձրել է բռունցք·
Օ՛, անմեղ մանուկներ՝ Տէր-Զօրի
Դժոխքում բիրտօրէն լլկուած,
Ես ձեզ եմ տեսնում այս պահին,
Աչիկները ձեր՝ չփակուած···
Սթափւում եմ· միտինգը եռում է կրկին,

digitised by A.R.A.R.@

Խօսում է պատուարժան մի հայ եւ այնպէ՛ս,
Որ խօսքը գործ է թւում,
Եւ այնպէ՛ս,
Որ ես տէր եմ դառնում
Իմ նախնիների չփակուող վէրքին,
Իմ նախնիների
Չփակուող վէրքին...

ԴԱՒԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂ

Ինձ չեն ծնել:
Ես պոկուել եմ արցունքահամ քո քարերի
Հառաչանքից,
Արեան գոյնից քո սահմռկած յիշողութեան
Ես պոկուել եմ որպէս բեկոր,
Ու մնացել անուանդ մէջ բնկղմուա՜ծ...
Ես քո հոգի արձագանգն եմ՝
Նախորդակերպ իմ ինքնութեամբ,
Ընդվզումը քո լեռների,
Եւ լոյսի մի փոքրիկ շեղբով
Արեւնե՜ր եմ արդ վերծանում,
Որ իմ նախնեաց անունները
Քո գոյութեա՜մբ ի մի բերուեն...
Լուսաբացդ գուլալ կանչ է վերածման,
Իսկ գիշերդ՝ բարի ծերուկ,
Որ քո օրուայ յոգնած կոպը
Անմահութեան ասքերո՜վ է արդ ծանրացնում:
Քո ծառերը երկինքներ են պահում իրենց ստինքներին,
Ու... նեղո՜ւմ են թռչունները:
... Ղարաբա՜ղ,
Ես թարգմանում եմ
Վերքածրար լռութիւնը քո քարերի,
Որ մոռացման դագաղների ծանրութիւնը
Քո ուսերը չզգաց երբեք,
Քո ուսերը չզգա՜ն երբեք:

ՅՈՎԻԿ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽ-ԾԻՆԵՐ...

Արցախ աշխարհում իմ անցկացրած օրերին, յոյսի եւ յայտնութեան դէմ ինձ երբեք մենակ ու անհասցէ չթողեց՝ գրող Արմէն Ցովհաննիսեանը։ Իրրեւ մարզկոմի պատասխանատու աշխատակից, նա ամէն ինչ անում էր, որ ես ձեռնունայն չվերադառնամ։ Համեստ, քչախօս, առինքնող այդ արցախցու ժպիտն եմ յիշում՝ բեւեռուած ինձ, իր շրջապատին, աշխարհին։ «Մեր Արմէնը»· արցախեան շատ տներում ես լսեցի ի խորոց սրտի ասուած արտայայտութիւնը, ու ես կրկին հաստատեցայ, որ յարգանքն ու սէրը երբեք չեն պաքտագրւում, այլ նուաճւում են շիտակութեամբ, ջինջ ու առաքինի վարքով։ Մեր անընդմէջ զրոյցների ընթացքում իր մասին նախընտրում էր լռել, բայց ներմ ու պերճախօս էր դառնում, երբ հարցը վերաբերում էր ուրիշներին։ Ասենք նաեւ, որ նրա համար ուրիշ չկար, բոլոր իսկական արցախցիները նրա համար հարազատ էին ու սիրելի... Ցաւախառն սէրը, յանախ շրջիկ գուսանի կերպարանք առած, անցել է շէնից շէն, տնից տուն, շուրթին անլռելի պատուիրանը՝ «Գինդ մնացէք եւ պինդ մնալով տիրութիւն արէք...»։

Ինչ խօսք, դժուար է մեծ սիրոյ տէր լինել, դժուար է, բայց հնարաւոր։ Անհնարինութեան ատիճան դժուար է մեծ տառապանքին տէր կանգնելը։ Եւ մեծ սիրոյ տէր էր իրեն զգում գրող եւ քաղաքացի Արմէն Ցովհաննիսեանը...

... Դարեր ի վեր ապաստակողները իրենց ամբակների ու կնճղակների տակ տրորել են քեզ, Արցախ աշխարհ։ Եւ մեր վիրաւոր մարմինը փոխ առած, արնամած վէրքից տնքացել եւ ահեղաձայն մռնչացել է հողը, անլափելի, անկշռելի, բազմաշաղախ մեր գոյը, նիւթեղէնացած մեր ցաւը, հառաչանքն ու տենչերը, ընդվզումն ու կանչը, սպասումն ու սէրը։ Գուցէ յաջողակ, կորուստներից չերեքացող ազգի համար դու ընդամէնը կենսական տարածք ես, բնակատեղի, լաւագոյն դէպքում՝ կերակրող ձեռք, իսկ մեզ համար (վկայ է պատմութիւնը) դու եղել ես իրրեւ սրբավայր, աղօթատեղի, շատ յաճախ նաեւ՝ զոհասեղան։ Ջրի մշտական սակաւութիւն զգացող այս լեռնաշխարհում քո անմնուրաց որդիները միշտ էլ պարզել են բաց երակներն իրենց... Արցախեան հող, ես քեզ եմ դիմում, միայն քեզ, եւ եթէ դու իմ ձայնի մէջ ու բառերում կեղծիքի ու երեսպաշտութեան անչնչան երանգ կ'որսաս, խստագոյնս դատիր ինձ, որպէսզի կողքիս ու թիկունքիս կանգնածները զգաստանան...

Մօտենում է հրաժեշտի պահը։ «Կը գամ, կը հանդիպեմ», — կրկնում եմ մեքենայաբար եւ ինձ այնքան մեղաւոր եմ զգում, մեղաւոր ու անգօր...

Ինքնաթիռը Արցախ աշխարհի երկնքում է։ Վերադարձի ճանապարհին, հող, երբ ես չտապեցի վրձնել քո դէմքը յիշողութեան կտաւին, արիւնս չիկացաւ երակներիս մէջ, խռովեց։ Խամրած թուացին այն նրբերանգները, որոնք այնքան բնորոշ էին քո արքենիմելիքական դէմքին, Արցախ աշխարհ։ Ես վերադառնում եմ անից փախած զաւակի մեղաւորութեամբ, դառնացած, սակայն զօրաւոր մի յոյս զօտեպնդում է ինձ, յուշում. «Գալու է Արցախ աշխարհի իսկական գարունը՝ լանջաթաց ու կենսատէր, վարարուն ու պտղաբեր» («Հայրենիքի ձայն», 1988, թիւ 36)։

ԱՐՏԱՇԵՍ ՂԱԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՅՈՒՇԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ԱՒԵՐԱԿՆԵՐ

19–20րդ դդ. սահմանագլխին Շուշին ունէր քաղաքաշինական, առեւտրատարդիւնաբերական, մշակութային ինքնատիպ դիմագիծ: Նրա ճարտարապետութեան տարողութիւնը, կառուցողական ձեւն ու ոճը տոհմիկ հայկական էին, գալիս էին հայկական մոնումենտալ ճարտարապետութիւնից: Այս առումով յատկանշական էր քաղաքի կենտրոնը, որի տարբեր մասերի ճարտարապետական կմախքներից յատկապէս առանձնանում էին գմբէթաւոր վեց եկեղեցիները:

Ցաւով պիտի նշել, որ այս ամէնից չատ քիչ բան է մնացել:

Այս աւերակները պահպանում էին շուրջ 40 տարի եւ շարունակ վկայում վայրենի ջարդարարութեան էութիւնը: Թէեւ Շուշին վերականգնելու վերաբերեալ կար կուսակցութեան Անդրբերկրկոմի պլենումի 1922 թ. Դեկտեմբերի 20ի որոշումը, սակայն դրա իրագործման փոխարէն Ադրբեջանի իշխանութիւնները 1950–60ական թթ. սկզբում փոքր ինչ քաշուելով, ապա աւելի ու աւելի ագրեսիւ համարձակութեամբ երկրի երեսից ջնջեցին մօտ 7 հազար հայկական յուշարձան եւ դրանց տեղը հապշտապ կառուցեցին լուցկու տուփեր յիշեցնող շէնքեր:

Այժմ արդէն Շուշիում՝ հայկական մարզի հայկական քաղաքում, հայ չի ապրում: Մի չտեսնուած ու չլսուած յամառութեամբ սրբապղծում, աւերում ու ձեւափոխում են հրաշքով պահպանուած հայկական յուշարձանները: Զեն խնայել նոյնիսկ ծնունդով շուշեցի՝ Բաքուի 26 կոմիսարներից Բագրատ Աւագեանի, Կոստանդեանի, կրկնակի հերոս Նելսոն Ստեփանեանի, պետական գործիչ Յովհաննէս Թեւոսեանի յուշարձանները: Մի խօսքով՝ նպատակ է հետապնդւում ջնջել Շուշիի հին, ողբերգութիւններով լի պատմութիւնը, ի սպառ ոչնչացնել այն ամէնը, ինչ հայկական է: Ցաւալի է, որ դա կատարւում է մեր ժամանակներում, շուշեցի հին սերնդի դեռ կենդանի ներկայացուցիչների աչքի առաջ, իշխանութիւնների թողտուութեան պայմաններում («Գրական թերթ», 1990, *թիւ* 49):

ՇԱՀԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ

***

... Ազարբեջանում «սպիտակ» ցեղասպանութիւնը սկսուել է նրա խորհրդայնացման առաջին տարիներից: Դեռեւս 30–40 թթ. հիմնովին քանդեցին Բուդաղեան տաճարը Բաքուում, որը Անիի մայր տաճարի կրկնօրինակն էր: 40–50 թթ. փակուեց Լ. Երամեանի անուան պետ. դրամատիկ թատրոնը, որի բեմի վրայ փայլատակել են Աբելեանը, Ժամմեանը, Փափազեանը եւ բեմարուեստի առաջին մեծութեան բազմաթիւ աստղեր: 50–60 թթ. փակուեցին հայկական մի շարք դպրոցներ Բաքուում եւ արուարձաններում: 60–70 թթ. փակուեցին մայրաքաղաքի վերջին հայկական միջնակարգ դպրոցները, Վ. Ի. Լենինի անուան մանկավարժական ինստիտուտի հայկական մասնաճիւղը՝ իբր թէ Ստեփանակերտում ինքնուրոյն ինստիտուտ բացելու կապակցութեամբ: 70–80 թթ. փակուեցին Բաքուի մի շարք հայկական գրադարաններ, գրականութեան, գրողների միութեան հայկական մասնաճիւղը, իսկ մշակոյթի օջախներում արգելուում էին միջոցառումներ անկացնել, համերգներ ունենալ, յոբելեաններ նշան («Գրական թերթ», *1990, թիւ 6)*:

ԳԷՈՐԳ ԱՂԱԽԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի ԿՈՂՈՊՈՒՏԸ

... Մեր հարեւանների մի հերթական կեղծիքը ես ոչ միայն քմծիծաղով, այլեւ խղճահարութեան մօտիկ ինչ-որ զգացումով ընդունեցի:

Թէեւ այդ կեղծիքի մասին «Երեկոյեան Երեւան»ը ժամանակին գրել է, բայց աւելորդ չեմ համարում իւրովի անդրադառնալ դրան: Այսպէս, բարեկամներիցս մէկը յուզուած ու վրդովուած եկաւ ինձ մօտ ու գրասեղանիս մի չբեղ ալբոմ դնելով, ասաց.

— Թերթի՛ր...

«Ադրբեջանական գորգ»,— կարդացի ալբոմի վրայ ու սկսեցի թերթել:

Գորգարուեստից համարեա՛ ոչինչ չհասկանալով, բայց ժամանակին ոչ միայն կարդացած, այլեւ ինչ-որ չափով ուսումնասիրած լինելով լուսահոգի Ասատուր Մնացականեանի «Հայկական գարդարուեստը» կոթողային աշխատութիւնը, ինչ-որ չափով ծանօթ լինելով նաեւ պարսկական գարդարուեստին, նկատում էի, որ «Ադրբեջանական գորգ» կոչուող երեւոյթը, մասնակի բացառութիւններով, հայկական ու պարսկական գորգարուեստի մի բացարձակ կողոպուտ է:

— Իսկ ինչո՞ւ ես այդքան զայրացած,— ասացի,— մեր հարեւանների աւանդական սովորոյթը նորութի՞ւն է քեզ համար: Մանր խաչքար, վանք ու եկեղեցի գողացողի համար թեթեւ գորգ գողանալը ինչ է որ...

— Դու թերթի՛ր, թերթի՛ր...

Թերթում եմ, յանկարծ զարմանքից քարանում, բայց յաջորդ վայրկեանին սկսում ժպտալ:

— Զայրանալու փոխարէն ժպտո՞ւմ ես...

— Հապա ի՞նչ անեմ...

digitised by A.R.A.R.@

Ալբոմի մեծագիր էջի կէսը մի գորգ է բռնել, որի վրայ Մայր Հայաստանը Անիի աւերակներին նստած իր սուգն է անում: Ցակն էլ մեսրոպեան խոշոր տառերով «Հայաստան» է գրուած: Ճանիկ Արամեանի յայտնի նկարն է, որ հայուհու ձեռքով ընդօրինակուած, «Ադրբեջանական գորգ» է դարձել...

Ճիշտն ասած, ամէն կարգի գողութեան մասին լսել էի, բայց մտքովս իսկ չէր անցնի, որ ինչ-որ մէկը ցանկանայ գողանալ քո սուգն ու տառապանքը...

Բացում եմ ալբոմի առաջին էջը. «Ադրբեջանական ԽՍՀ գիտութիւնների ակադեմիա»: Ուրեմն մեր սգի ու տառապանքի գողութիւնը ոչ թէ ինչ-որ անգէտ մարդկանց ձեռքով է կատարուած, այլ ակադեմիական մակարդակով եւ մտածում էի. ինչքա՜ն անանկ պիտի լինի մարդ, բայց նաեւ ինչքան ագահ, որ դիմի նոյնիսկ այդպիսի գողութեան:

Եւ մի՞թէ այդ գողութիւնից շատ է տարբեր Ղարաբաղեան քարերի պահպանած «հազարամեակների յուշերի» գողութիւնը («Երեկոյեան Երեւան», 31 Օգոստոս 1989):

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՅՏ

ԽՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի եւ կուլտուրայի մինիստրութեան «Սովետսկի մուզէյ» հանդէսի այս տարուայ երրորդ համարում (Մայիս–Յունիս) ուշադրութիւնս գրաւեց դպաբ բանաստեղծ Օլվան Սուլէյմէնովի եւ բանաստեղծ, քննադատ Վալեխ Ռզաեւի գրոյցը, որուն «մտահոգութիւն է արտայայտում» երկրի անցեալի եւ ներկայի պատմութեան ուսումնասիրութեան, մշակութային արժէքների գնահատման ու պահպանման, թանգարանագիտութեան վիճակի մասին, արում են մի շարք առաջարկութիւններ: Քանի որ գրոյցը բաւական ծաւալուն է, մենք կ'անդրադառնանք նրանում չօշափուած միայն մի քանի խնդիրների:

Այսպէս, Վ. Ռզաեւին մտահոգում է, որ 20–30ական թթ. մեր երկրից վաճառահանուել են մեծանուն վարպետների կտաւներ, պատմական եւ գեղարուեստական բարձրարժէք ստեղծագործութիւններ: Եւ որպէսզի սերունդները շպախարակեն, նա առաջարկում է պարզել մեղաւորներին, սովորել անցեալի սխալներից...: Բայց գրոյցում իրեն հումանիստ ներկայացնող, համաշխարհային քաղաքակրթութեան հոգսերով տապակուող Ռզաեւը, բնական չէ՞ր լինի, որ իր բողոքի ձայնը բարձրացնէր նաեւ հայկական գորգերի թալանի եւ «ադրբեջանականացման», նաեւ այն բանի դէմ, որ Ճանիկ Արամեանի, դեռեւս 1860 թ. Փարիզում հրատարակուած, «Հայաստանի ոգին» կամ «Մայր Հայաստան» կոչուող հանրայայտ նկարի վերարտադրութիւնը հանդիսացող գորգը, իր «Հայաստան» հայատառ մակագրութեամբ հանդերձ, վերջերս թաքուում հրատարակուած «Ադրբեջանի նիւթական մշակոյթի յուշարձաններ» մատենաշարի երկրորդ գրքում (ընդհանուր խմբագիր՝ Փեւուսա Ազիզբեկովա) ոչ աւելի, ոչ պակաս, ադրբեջանական է յայտարարուած: Ի հարկ է, Ճանիկ Արամեանը Վերածնունդի շրջանի նկարիչ չէ, ու երեւի միայն այդ պատճառով չի արժանացել Վ. Ռզաեւի թանկագին ուշադրութեանը («Խորհրդային Հայաստան», 22 Օգոստոս 1989):

Ս. ՎԱՐԴԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Հ. ՍԻՄՈՆԵԱՆ

ՏԱԳՆԱՊՆԵՐԻ ԵՒ ՑՈՑՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

...Այլեւս անհնար էր ապրիլ չորսհազարամեայ հայրենի հողի վրայ։ Եւ «ստալինեան արեւի տակ» սկիզբ առաւ հայ ժողովրդի այս հատուածի հալոցքը։ Հէյդար Ալիեւի՝ քաղաքական այդ ոճրագործի բռնապետութեան տարիներին գործնականօրէն աւարտուեց Նախիջեւանի հայաթափումը եւ ադրբեջանականացումը։

...Բրեժնեւեան-Ալիեւեան տարիներին Լեռնային Ղարաբաղը կանգնեց Նախիջեւանի բախտին արժանանալու իրական վտանգի առջեւ։ Դատարկւում էին հայկական գիւղերը, արագօրէն աւելանում էր ադրբեջանցիների թիւը։ 1921 թ. 95 %ից հայութեան թուաքանակը 70ական թուականների վերջերին իջաւ 75 %ի։ Մէկը միւսի յետեւից փակւում էին հայկական դպրոցները, հայոց լեզուն, պատմութիւնը, մշակոյթը ենթարկւում էին անսքող քամահրանքի եւ ծաղրի, իսկ մարզի կառավարիչ Բորիս Կէորկովը հլու-հնազանդ պնակալէզի ստորաքարշութեամբ լուռ ու մունջ կատարում էր տէրերի կողմից իրեն յատկացրած դերը։

Ադրբեջանի ազգայնամոլ իշխանութիւններին օգնութեան հասաւ ադրբեջանական «գիտութիւնը»։ Հրապարակ իջաւ Զիա Բունիաթովը, որը ձեռնարկեց Ադրբեջանի պատմաշինութեան գործը՝ ոտնատակ տալով գիտական էթիկայի բոլոր կանոնները։ Նրա շուրջը համախմբուեց գիտութեան հետ ոչ մի առընչութիւն չունեցող գիտնականատիպ մի խառնախումբ, ստեղծուեց, այսպէս կոչուած, գիւտարարական պատմաշինական դպրոցը։ Լայն ճակատով սկսուեց հարեւան ժողովուրդների նիւթական ու մշակութային արժէքների իսկական կողոպուտը։

Դեռ պատերազմի նախօրեակին, Ստալինի հովանաւորութեամբ եւ Միրջաֆար Բաղիրովի ջանքերով ադրբեջանցիներին յաջողուել էր սեփականել պարսիկ մեծ բանաստեղծ եւ մտածող Նիզամի Գեանջեւուն։ Ապա մէկը միւսի յետեւից «ադրբեջանցիներ» յայտարարուեցին քուրդ Ֆիզուլին, արաբ Նազիմին, 11-13րդ դարերի պարսկական բանաստեղծական դպրոցի ուրիշ ներկայացուցիչներ։

Բայց ադրբեջանցիների մշակութային էքսպանսիայի գլխաւոր թիրախը հայ ժողովուրդն էր, նրա պատմութիւնը եւ մշակոյթը։ Ըստ որում, արշաւի գլխաւոր ուղղութիւնը պատմութեան ասպարէզն էր։ Ազուանական-ադրբեջանական յայտարարուեցին հայ միջնադարեան մտքի խոշոր գործիչներ Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Գոշը եւ շատ ուրիշներ։ Բանը հասաւ այնտեղ, որ Ադրբեջանի արեւմտեան սահմանը յայտարարուեց Արաքս գետը՝ իր վերին ակունքներից սկսած։ (Նկատենք, որ թուրքերն էլ իրենց հերթին Արաքս գետը համարում են իրենց վաղեմի արեւելեան սահմանը։ Այլ խօսքով՝ արեւի տակ Հայաստան չկայ, հայերը, անարմատ մի ցեղ, չգիտես որտեղից են յայտնուել այս կողմերում)։

Զուգահեռաբար սկսուեց հայկական յուշարձանների աւերումը ամենաբարբարոսական եղանակներով։ Զաւթիչները լաւ գիտէին, որ միեւնոյնն է, հայ ժողովուրդը վաղ թէ ուշ բարձրացնելու է Ղարաբաղի եւ Նախիջեւանի խնդիրը։ Եւ այդ մարզերը հայկական հող լինելն ապացուցող հազարաւոր յուշարձանները՝ այդ լուռ վկաները, պէտք է վերանային ուղղակի ոչնչացման

digitised by A.R.A.R.@

միջոցով։ Փորձի դրուելցին բուլգարերենը ու պայքարելիք նիւթեր, աւելակների վերածուելցին տասնեակ եկեղեցիներ ու վանքեր, հազարաւոր խաչքարեր փշրուելով խճի վերածուելցին՝ շինանիւթ դառնալով ճանապարհաշինարարների համար։

Բայց եկաւ մի պահ (դա 70-ական թուականների սկզբին էր), երբ Ադրբեջանի կառավարիչների եւ «գիտութեան այրերի» ամբոխին երեւակայութիւնը մի չրջադարձային յայտնագործութիւն կատարեց. իսկ ինչո՞ւ ոչնչացնել վանքերը, եկեղեցիները ու խաչքարերը։ Ինչո՞ւ դրանք ուղղակի չյայտարարել ազգանական, հետեւապէս նաեւ՝ ազրբեջանական։ Տեսնելով, որ իրենց ցանած սերմերն արդէն բերք են տալիս, կեղծարարները էլ աւելի յանդգնեցան դարձան, ազգանական-ազրբեջանական յայտարարեցին ո՛չ միայն Ադրբեջանի տարածքի այլեւ՝ Ղարաբաղի, Նախիջեւանի, հենց ներկայ Հայաստանի շատ չրջանների վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու միւս ճարտարապետական կոթողները։

Ժամանակին անհետացած ազգանական ժողովուրդի հետ էթնիկական-մարդաբանական եւ լեզուա-մշակութային ոչ մի կապ չունեցող թուրք-ազրբեջանցիները, որոնք մինչեւ յեղափոխութիւնը հիմնականում քոչուոր կեանք էին վարում, գարեր շարունակ խաչը դիտել են իբրեւ անհաւատների խորհրդանիշ, բայց ահա անսպասելիօրէն փարուեցին այդ խաչին եւ խաչքարը յայտարարեցին իրենց հոգեւոր ազգային արժէքներից մէկը։

Բայց հայ ժողովրդի մշակութային արժէքների դէմ էքսպանսիան դրանով չաւարտուեց։ Արժանի հակահարուածի չհանդիպելով, ինչպէս Հայաստանի պատմաբանների եւ մշակոյթի միւս բնագաւառների ներկայացուցիչների կողմից, միաժամանակ ստանալով կենտրոնի գիտական հիմնարկների, մասայական ինֆորմացիայի միջոցների, իշխանութեան վերին մարմինների հովանաւորութիւնը, կողոպտիչները գնալով աւելի յանդուգն դարձան, աւելի ընդլայնեցին իրենց աւերմունքի ասպարէզը։ Ադրբեջանական յայտարարուեցին հայկական գորգագործական դպրոցները, սկսեցին ոտընձգութիւնները տոպոնիմիկայի բնագաւառում, եւայլն («Գրական թերթ», 1989, թիւ 46)։

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բագին

ՆՊԱՍՏԸՆԿԱԼՆԵՐՈՒ ՁՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս բոնարէն ստրկացուած ժողովուրդներուն, նաեւ մանկութի ճակատագրէն զարնուած որոշ անձերու մէջ անխուսափելիօրէն կը յայտնուի նպաստընկալի հոգեբանութիւն մը, որ բոնակալին կամ շնորհաբաշխին կողմէ եղած փոքրագոյն նպաստն անգամ խոշորցնելու տրամադրութեան մը կը սպասարկէ։ Բոնակալներն ու շնորհաբաշխները քաջատեղեակ են այս հոգեբանութեան եւ հիշդ ատոր համար ատենը հեղ մը փոքրիկ շնորհ մը կ'ընեն ենթականերուն, առանց արհամարհելու, անշո՛ւշտ, մեքենականօրէն փոխադարձուող լորձնաշուրթն ուղերձներուն հաճոյքը։

Պատմութեան թէ գրական էջերուն մէջ մարդիկ շատ հանդիպած են փոքր բաներով կաշառուող ու կաշառող գործոններուն այս փոխյարաբերութեանց, որոնց նը-մանակները անանխընթաց առատութեամբ մը փթթեցան մասնաւորաբար համայնավար կարգերուն տակ, եղբայրութեան սուտ վարդապետութեան մը խաբուսիկ դիմակին ներքեւ։

Ու եթէ հայ մարդը որոշ հասկացողութիւն մը ցուցաբերեց ու յաճախ ներողամտութեամբ դիմաւորեց այդ սակաւապետութեան օրօք ճնշուած մեր եղբայրներուն «հրախտագէտ» ելոյթները, երբեք չկրցաւ սակայն իր ապրումներուն ու մտածումներուն հետ հաշտեցնել ազատ աշխարհի մէջ ապրած մարդոց նպաստընկալի սանձաբեկ զեղումները։

Այս վերջին դասուն մէկ ուշացած ներկայացուցիչը եղաւ, ցաւօք, Անդրանիկ Մառուկեան, որ ի չափու հասեալ տարիքի մը ապշեցուցիչ դիւրահաճութիւն մը ցուցաբերեց մուրճ-մանգաղին տակ տեղի ունեցած ամէն բանի հանդէպ։

Նշուած տկարութեան մէկ ցայտուն փաստը Սեւանայ լիճին նուիրուած ադրբեջանական զրոսանաւն է, զոր «Նայիրի»ի էջերէն պատկերազարդ հեշտանքով մը ներկայացուց ընթերցողին, սովետական «եղբայրութեան» լակերտները վերցնելու լռելեայն յորդոր մըն ալ տալով անոնց՝ ինչպէս ցոյց կու տայ նկարներուն ընկերացող գրութիւնը։

Նախորդ երկու էջերուն ու անոնց նախորդին մէջ չօշափուած հարցերը պատկերացնող մարդը ապշահար պիտի մնայ այս պատկերին դիմաց, դժուարանալով ըմբռնել «Ի պատիւ սովետական իշխանութեան» լուսլոյսած շնորհաբաշխիներն ու անոր ստեղծած «սիրալիր» կապերուն արդիւնք գրօսանաւուն պատճառած գրօսաշրջիկային հաճոյքը։

Ու մտածել տակաւին, որ Ադրբեջանի կողմէ Սեւանին եղած այս «սպիտակ» նուէրին ժամանակը կը զուգադիպի Հէյդար Ալիեւի քոնութեան բուռն տարիներուն, երբ «48 դպրոց փակուեց, հազարաւոր ընտանիքներ մարզին տեղահան եղան։ Մարզի հայ բնակչութիւնը 96 տոկոսէ իջաւ 76 տոկոսի։ Լաւագոյն մտաւորականութեան մի մասը նման ճնշումների չդիմացաւ, հեռացաւ մարզից («Երեկոյեան Երեւան», 5 Հոկտեմբեր 1988)։

Այս բոլորը ու անոնցմէ աւելի մեծ կորուստները՝ ոչի՛նչ։ Ասոնք ի՛նչ կ'արժեն այն սպիտակ նուէրին քով, զոր Ալիեւի ցեղախումբը ըրած է Սեւանին...

Հայ մարդը, կրկնե՛նք, իր դժուար ճակատագրին բարդութիւններէն շատ բան պիտի ըմբռնէ ու ըմբռնածներուն մէկ մասը հաւանաբար պիտի փորձէ մոռնալ, բայց չենք կարծեր, որ կարենայ մոռնալ սրբազան երկրամասեր ու ուրիշ սրբութիւններ յափշտակած մարդոց չնչին խայծերով կաշառուող հոգիներուն նպաստընկալի զեղումները...

digitised by A.R.A.R.@

ՆԱԻԸ ԼԵՌԱՆ ՎՐԱՅ...

*

Մի՞դք որ կոստան Զարեանը ներկայ չէ այս տեսարանին։ Իր օրն էր։ Բայց այս նաւը Երեւանէն չէ որ կը բարձրանայ վերը, այլ կու գայ հասաւելիք հեռուներէն եւ վարէն, Գաքուէն։ Ա-զրբէյճանի նաւէրն է Հայաստանին, խորհրդայնացման Ցիսնամեակին առիթով։

Կէս մը եւս մառնաչելը աւելորդ չէ կը կարծենք ի տես այս նաւէր-նաւին— Կովկասի երեք ժողովուրդները, հայ, թաթար, վրացի՝ թշնամանքի եւ փոխադարձ անվստահութեան անցեալ մը ունին։ Ի պատիւ Սովետական Իշխանութեան, պէտք է ըսել, թէ ամէն կերպով կ'աշխատուի հին բարքերը մոռցնել տալ եւ սիրալիր կապեր ամրացնել։ Կարելի չէ ըսել, թէ այդ երեք ժողովուրդները իրենց բոլոր թաւերով անդարձօրէն մոռցած են անցեալը — հինգ հարիւր եւ աւելի տարիներու քէնները քիսուն տարիէն չեն չքանար — բայց «եղբայրութիւնը» կրկնուելով ու կրկնուելով, ժամանակի ընթացքին կրնայ կոծանցնել իր... չակերտները։ Մենք որ կոստանդպոլսեն ենք Կովկասէն — չսիլոս համար տիարպէքիր — գոհ պէտք է մնանք մթնոլորտէն... (*«Նայիրի»*, *1971*, *թիւ 31–32*)։



Սիրուն, սպիտակ այս գրօսանաւը...

Այս ձորերէն ու լեռներէն...



Եկաւ հասաւ կապոյտ Սեւան...

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԱԿԱՆՔ

(«ՏԱԳՆԱՊՆԵՐ» ՇԱՐՔԻՑ)

Այսպէս, արթնանում ես յանկարծ քնից,
նստում անկողնում, սրտումդ-տագնապ,
եւ խորհում նորից՝ ի՞նչ պիտի լինի
այս ամէնի վերջը··· Եւ մի անկապ,
անտրամաբանական մի կապ է կապում
այս ամէնը իրար – Հայաստան, Արցախ,
ցոյցեր, գործադուլ, Երեւան, Բաքու
եւ հնի վրայ աւելացած նոր ցաւ:

4/6/1988

Ես քնած էի, ինչպէս մանկուք,
եւ արթնացայ յանկարծ այս օրերին,
եւ գոչում եմ ահա·– Հայ ժողովո՛ւրդ,
դո՞ւ ես իմ միակ հաւատը վերին,
հոգիդ մաքրուած, վախդ վանած,
դարձած մի մարմին քիւրաբռունցք,–
եւ քեզնից պիտի սարսի հիմա նա,
ով փորձում էր քեզ բանտե՛լ ըռում:

5/6/1988

Գործը ձեռքիցս ցած է թափւում:
Ո՛չ ուտելու սիրտ կայ, ո՛չ խմելու:
Սիրտս անընդհատ մտքիս դուռը թակում
եւ հարցնում է՝ ի՞նչ է լինելու
հրապարակում նստած ջահելների
կամ հացադուլի պառկածների հետ,
ո՞վ պիտի նրանց տառապանքը ների,
երբ անգո՛ւթ եղաւ հայրը որդու հանդէպ:

6/6/1988

Ամէն ապրողի հետ ես ապրում եմ, այո՛,
եւ մեռնում ամէն մեռնողի հետ կրկին,
ախ, ինչքան շիրիմ ունի Հողը Հայոց,
նոյնքան անգամ էլ մեռել է իմ հոգին,
եւ նոյնքան անգամ ես ինձ հարց եմ տուել,–
ինչպէ՞ս է, որ դեռ ապրում եմ ու կամ:
Մի՞թէ նրանք, ովքեր հանգեան ի Տէր,
ինձ զօրավիգ են··· գերեզմանի՞ց անգա՛մ:

7/9/1988

ԴԱՒԻԹ ՅՈՎՀԱՆՆԷՍ

digitised by A.R.A.R.@

Ախ, երբ պիտի լեռներիդ պես վեր բռունցքուին ձեռքերն հայոց···

ԱՐՑԱԽ

Արցախ հինաւուրց,
Դու միայն եռդ չես, ոչ էլ խիզ ես դու,
Մեր սրբութիւնն ես, երգ ու խիզդ ես դու,
Պատմութիւնն ես մեր,
Որ զօրանչում է
Ցուշարձանների լցուած լռութեամբ։
Պատիւն ես, Արցախ, դու ամէն հայի,
Դու ամէն հայի անիւն ես խղճի,
Որ երբեք, երբեք ետ չի պտտուում.—
Որդիների հետ զռեւում է մի օր,
Ցառնում են կրկին որդիների հետ···
Դու յաւերժութեան երկունք ես, Արցախ։

ԿԱՄՕ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Աղետեալ Լենինականի օգնութեան հասնող արցախցիներէն խումբ մը։
Լուսանկար՝ ՕՇԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Տասնամեակներով բարոյական կտտանքների ենթարկուած եւ տնտեսապէս կեղեքուած մեր փոքրիկ Արցախի օգնութիւնը Մայր Հայրենիքին ինքնազոհութեան եւ հերոսութեան պայծառ օրինակ է։

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՐՑԱԽԻՆ

Ասում են թէ՝ անիմաստ է
Քեզ պահանջելը արդէն,
Զուր յոյսերով, պատրանքներով
Հոգին տանջելը արդէն,
Բայց երբ կամքդ են ուզում կոտրել,
Ոթել արիւնը քո թանկ,
Ուրեմն քաջ անիմաստ է
եւ նահանջելը արդէն...

⁂

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս մոռանամ
եւ նահանջը պապերիս,
Արդէն բոզոքն առ Աստուած
եւ պահանջը պապերիս,
Զարուրիւնը գետնելու
Ճամբան մէկ է՝ խիզախել,
եւ կամ կրել յաւիտեան
Ծանր խաչը պապերիս...

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

... ՈՒ ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ՂՕՂԱՆՋԻ ՕՐԸ

Արցախի առաւօտը բացւում է մեսրոպատառ հայերէնով, ու հենց մեծ հայի սուրբ անուան հանդէպ եղած համաժողովրդական սիրոյ թելադրանքով է քաղաքի մուտքից մինչեւ Ցաղքանակի հրապարակը ձգուող պողոտան այսօր վերակոչուել հայ գրերի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի անունով։

ԴԱՒԻԹ ՄԻՐԱՑԷԼԵԱՆ

Ստեփանակերտ։ Ուրիշ, բոլորովին ուրիշ զգացումներ են այսօր համակում, երբ մայրուղին ցեղ բերում է մարզկենտրոն։ Հիւսքանչ յուշարձանից արցախցի տատ ու պապի հպարտ, խորհրդաւոր հայեացքները զգաստացնում են՝ ամենք ենք, մեր սարերը։ Ամէն ինչ այստեղ նոր չունչ ու իմաստ է առել։ Արցախի առաւօտը բացւում է մեսրոպատառ հայերէնով, ու հենց մեծ հայի սուրբ անուան հանդէպ համաժողովրդական սիրոյ թելադրանքով է քաղաքի մուտքից մինչեւ Ցաղքանակի հրապարակը ձգուող պողոտան այսօր վերակոչուել հայ գրերի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի անունով։ Ժողովրդական զեկուցաներների Ստեփանակերտի քաղաքային սովետի գործկոմի այդ որոշմանը մենք վաղուց էինք սպասում։ Չէ՞ որ իրերն, ինչպէս ասում են, իրենց անունով է անհրաժեշտ կոչել...

Գալիս ենք ահա սիրելի պողոտայով ու խորհում. ինչ իմանաս, գուցէ Մեծն Մաշտոցն իր ժամանակին եկել-անցել է այս վայրերով, այցելել մեր նախկին քաղաքատեղին, հմայուել հայկական չինուածներով, հայ չինականների ծաղկուն այգիներով, նրանց իմաստուն զրոյցներով։ Իսկ ինչո՞ւ կասկածել. չէ՞ որ եկել, Ամարասի վանք է հասել, այդտեղ բացել հայերէն առաջին գպրոցը, այբուբեն ուսուցանել արցախցի մանուկներին, որ չմոլորուենք, չկորցնենք մեր հաւատը, մեր պետականութիւնը, մայրենին...

Պողոտան Մեսրոպ Մաշտոցի անունով կոչելը մեր ժողովրդի ազգային վերաբերմունքն է, մեր խոհերի ու ապրումների արձագանգը, մեր նախնիների պահանջը... Անչափ ողջունելի է քաղաքային սովետի գործկոմի որոշումը։ Ամենքս նենք, որ դա սկիզբն է այն լաւ ու բարի գործի, որ ծաւալել է պէտք ո՛չ միայն Ստեփանակերտում, այլեւ մարզի միւս բնակավայրերում՝ քաղաքներում, աւաններում, գիւղերում։ Այդ դէպքում միայն մենք կ'ունենանք մեր ճիշտ հասցէն , հպարտութեամբ կը կրենք մեր անունը։

Ինչպէս մեզ հաղորդեցին քաղաքային սովետի ճարտարապետական բաժնից, պողոտայի վրայ ապագայում կը կառուցուեն հեռաքրքիր, ինքնատիպ յուշարձաններով մշակութային, կենցաղային նշանակութեան նոր շէնքեր եւ օբյեկտներ (հիւրանոց, աւտոկայան, եւայլն)։ բնակելի տներ, իրենց թեւերը, կը տարածեն մանկական սպորտային համալիրը, մշակոյթի եւ հանգստի նոր գրօայգին։ Ինչքան տեղին կը լինէր, եթէ կանգնեցուէր նաեւ հենց իր՝ Մեսրոպ Մաշտոցի յուշարձանը. ամէն տարի աշնանը ժողովուրդը կը հաւաքուէր, կը մեծարէր իր գրերի հիմնադրին, իր ոգու յաւերժական ուղեկցին, ու տօնը կը դառնար աւանդական...

Ամէն առաւօտ լոյսի հետ տնից կ'ելնենք ու կը քայլենք մեր սիրած պողոտայով։ Ու ուր էլ որ չտապալու լինենք, անպայման կը հացնենք հիւթեղ հայերէնով բարի լոյս մաղթել Մեծն Մաշտոցին ու նոր միայն շարունակել մեր ճանապարհը։ Ու առօրեայ հոգսերի հետ մեզ կ'ուղեկցի նրա կենդանի անունը։ Հայերէն կը ղօղանջի օրը...

ԴԱՒԻԹ ՄԻՐԱՑԷԼԵԱՆ

Արցախ,

«Սովետական Ղարաբաղ»

թերթի խմբագրութիւն

digitised by A.R.A.R.@

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԱՐՑԱԽԻ ԶՈՀԵՐՈՒՆ

Պէ՞տք է հողը տիւ ու գիշեր արիւն ծծէ
ճմլէ պատռէ մարմինները երազները
լափէ անյագ ախորժակով
զաւակները՝
որ մայրանայ յոյլ ու պարարտ ընկողմանի
տէրը դառնայ գիտակցութեան հորիզոնին
մաքասանենգը թաց լուցկիներ
գետին թափէ
բայց մենք նորէն ուրուականը պիտի տեսնենք
երկվայրկեան մը պիտի ապրի մեր սրտին մէջ
թակարդներ կան խորը ինկեր
մենք ի՞նչ գիտնանք
ինչ ըսել է մահուան վախը թուրք խուժանը
չէ այցելած օտարութեան խոզակին մէջ
կծկուեր ենք կ'ուզենք շնչել
մինչեւ ծայրը
ժամանակի կոյր աչքերէն թելեր եկեր
հեռու լեռներ՝ հազիւ դպեր կեանքի բիբին
սեւ մկրատը արդէն կտրեց
պիտի մեռնի՝
հոս եմ հո՛ս եմ ինծի՛ անցուր ե՛ս ալ հայ եմ
քեզի նման ոգիներու բաժականառ
պիտի խօսինք կոտրած փեղկեր
շաչեն պատին
ուրուականին փաթթուեր եմ ես ալ քեզ պէս
ծուղակին մէջ լոյսի կոճակ մը կը փնտռեմ
ա՞յս է ծայրը քու յոյսերուդ
տառապանքիդ
գաղտնիքը տուր՝ յետո՛յ գնա հողին փեսայ
կամ ողջակէզ՝ ես չեմ գիտեր խեղճ մարդ մըն եմ
երակներէս բառ կը հոսի ու շուք չունիմ ոչ ալ հոգի
քեզի տալիք միայն սիրոյ բուրվառ մը հոն օդէն կախուեր
պիտի ճօճուիմ բուրեմ երգեմ նոյնիսկ սուլեմ
հայու նաթած համբերութեան թաղարին մէջ
յիշատակդ դալար մնայ
պայծառանայ գեղեցկանայ
մահէն անդին։

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Պարգեւ եպս. Մարտիրոսեան

... Այս արքազան, հայրենանուէր ու ազգաշէր շարժումը արդարութեան ու քաջութեան խորհրդանիշ է, որը արդէն իսկ մեծ ու անգնահատելի դեր կատարեց հայ ազգին ու մեր հաւատի արթնացման ու միասնականացման համար, որի պակասի պատճառով մինչ տառապել ենք։ Այս հսկայ շարժումը փրկեց մեր օրերում բազում հայ զեկավարներին ժուլման վտանգից և՛ այստեղ, և՛ Սփիւռքում։ Մի նոր, ազնիւ ոգի ներշնչեց, որը դեռ երկար տարիներ առաջնորդելու է մեր ազգային գիտակցութիւնը։ Հերոս արցախցիների շարժումը պարգեւեց մեզ մի նոր թեմի ծնունդ՝ Արցախի Հայոց թեմ, որի մասին դեռ հինգտաս տարի առաջ մարդիկ նոյնիսկ չէին համարձակւում երազել։ Վերջերս արցախեան շարժումը պսակուեց Ազգային խորհրդի ծնունդով։ Սա մի մարմին է, որը իր մէջ ամբողջացնում է համայն լեռնային Արցախի ժողովուրդը, լաւագոյն օրինակ է ժողովրդավարութեան ու միասնութեան։ Ինչպէս առաջինը արցախցիները սկսեցին այս շարժումը, նոյնպէս եւ իրենք օրինակ տուեցին, որ անհրաժեշտ է ունենալ նման տիպի մի բան, որը այստեղ կոչւում է Ազգային խորհուրդ։ Ինձ թւում է, որ այս հարցում եւս որոշ ռեպրոնեներում արցախցիների այդ իմաստուն եւ փրկարար քայլը դեռ մեծ ու անկրկնելի օրինակ կը ծառայի։ Ընդհանուր առմամբ, այս շարժումը ազնիւ ու արդար շարժում է, իսկ արդարութեան համար յամառ ու անդադար պայքար է պէտք, պայքար հաւատքով եւ յոյսով։ Ի զուր չէ ժողովրդական իմաստութիւնն ասում. «Ով հաւատով պայքարի, նա յաղթանակ մեռք կը բերի» («Երեկոյեան Երեւան», 5 Հոկտեմբեր 1989)։

ՊԱՐԳԵՎ ԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

digitised by A.R.A.R.@

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Խոստումներով մենք երկար ենք ապրել, եւ դա որպէս հասարակական խթանիչ ուժ իրեն սպառել է:

Այդ հարցերի հետ սերտօրէն կապուած է նաեւ ազգային յարաբերութիւնների կատարելագործման հրատապութիւնը, հին սխալներից հրաժարումը, նոր լուծումների ապահովումը: Այդ նպատակին է ուղղուած ՍՄԿԿ Կենտկոմի առաջիկայ լիագումար նիստը: Գլխաւորն է չբաւարարուել գաղափարաքաղաքական ճիշտ ընդհանրացումներով եւ ձեւակերպումներով, ինչպէս եղել է մինչեւ այսօր, այլ հետամուտ լինել կոնկրետ խնդիրների լուծմանը, որը բխում է վերակառուցման ոգուց: Անկասկած է, որ Լեռնային Ղարաբաղի հարցն այդ խնդիրների թւում ամենաանյետաձգելին է: Վերջապէս մեր քաղաքական մտածողութեան մէջ պէտք է մեխուի, որ ազգային հարցին անդրադառնալը ոչ թէ կարգից շեղում է, այլ՝ հրամայական, մշտական պահանջ: Չէ՞ որ բազմազգութիւնը մեր հասարակական-պետական կեանքի բնորոշ, էական յատկանիշն է: Ինչպէս անհատական կեանքում չի կարելի խուսափել սեփական ես-ից, այնպէս էլ հասարակական կեանքում չի կարելի շրջանցել ազգային խնդիրը (*«Հայրենիքի ձայն»*, 1988, թիւ 48):

***

Դեմոկրատիա չեն հայցում կամ մուրում, դեմոկրատիան ձեռք են բերում: Եօթանասունամեայ մեր գոյութեան ընթացքում եզակի հնարաւորութիւն է ստեղծուել մեր սեփական կեանքը ազատօրէն դրսեւորելու համար: Այսօր բարձրագոյն հայրենասիրութիւնը պահանջում է զօրավիգ կանգնել դեմոկրատիային, որպէսզի այն պետական ուժ դառնալով ծառայի ժողովրդին: Այսօր ժողովուրդն իրաւունք չունի ասելու, որ իր ձեռքում ոչինչ կայ: Կայ եւ դա գերագոյն խորհրդի առաջիկայ ընտրութիւնների բախտն է եւ հետեւաբար իր սեփական բախտը:

Մենք պատմական պահով կոչուած ենք կերտելու մեր ճակատագիրը, իսկ դա հնարաւոր է միայն մի ձեւով՝ ձայն տալով նոր մարդկանց, ովքեր ուժ ունեն, եռանդ ու ցանկութիւն ունեն եւ, որ գլխաւորն է, նոր գաղափարներ ունեն կեանքի որակապէս նորացման համար:

.....

Ժողովո՛ւրդ, գիտցիր, եթէ դու չտնօրինես քո ճակատագիրը, ապա դա կ'անեն ուրիշները եւ այնժամ բողոքելու տեղ չես ունենայ (*«Աւանգարդ»*, 18 Ապրիլ 1990):

ՇԻՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

***

Սիրելի Միքայէլ, ե՞րբ անցան տարիները: Ստուերները ե՞րբ այդքան երկարեցին: Ե՞րբ հասանք այս սահմանին, որ մեզնից այնքան հեռու էր: Եօթ սարի հետեւ էր, եօթ ծովից այն կողմ: Կարծես մի շաբաթ առաջ էր, մի օր առաջ էր, մի ժամ առաջ, երբ առաջին անգամ հանդիպեցինք քո հայրենի քաղաքում: Ես երեսունն էի անցել, դու՝ քսանվեցը: Գարուն էր Ղարաբաղում: Մենք գարնան մէջ էինք, գարունը մեր մէջ էր:

... Զորս օր միասին էինք: Այդ օրերն ինձ համար ադապտացիայի շրջան եղան: Զորս տարուայ զինուորական կեանքի անկշռայնութիւնից յետոյ ընտելանում էի հայկական խաղաղ կեանքի ժողովական ուժին: Ձեր աչքին ինձ հիւրասիրից այն ամէնով, ինչ իմ երազանքն էր եղել չորս տարի չարունակ:

... Ինձ ցոյց էիր տալիս Ստեփանակերտը, սիրելի Միքայէլ, եւ հաճալում էիր, չորս տարում ոչինչ չի աւելացել... Չէ՛, աւելացել է... ողբերգութիւնը: Չէ՛, պակասել է... մարդիկ են պակասել... յետոյ՝ «Զախորդ օրերը ծմրան նման կու գան ու կ'երթան»:

Յետոյ կարդացինք քո բանաստեղծութիւնները: Հիացմունքս պահել չկարողացայ: Արտակարգ եւ արտասովոր էին ինձ համար այդ բանաստեղծութիւնները: Ինչ-որ անորսալի մի ղարաբաղցիութիւն կար նրանց մէջ, թէկուզ լեզուն մինչեւ անգամ արեւմտահայերէնի երանգներ ունէր: Այդ բանաստեղծութիւններն առանձին գրքով լոյս տեսան Ստեփանակերտում: Յետոյ լոյս տեսան ուրիշ ժողովածուներ, որոնք ապահովեցին քո տրոյն տեղը սովետահայ պոեզիայում («Գրական թերթ», 1978, թիւ 46):

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Արտեմ եւ Միքայէլ Ցարուբիւնեաններ

Բանաստեղծ, թատերգիր եւ թարգմանիչ Միքայէլ Ցարուբիւնեան ծնած է 27 Հոկտեմբեր 1918ին, Շուշի քաղաքը: 1941ին կ'աւարտէ Երեւանի համալսարանի բանասիրական ամպիոնի հայ լեզուի եւ գրականութեան բաժինը: 1942-44 կը վարէ Ադրբէջանի գրողներու միութեան Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղարի պաշտօնը: 1944-46 իրրեւ գրական աշխատող կը պաշտօնավարէ «Սովետական Ղարաբաղ» թերթերթին, ապա՝ 1946-50՝ Լենինականի «Բանուոր» թերթի մէջ: 1951-70 կը պաշտօնավարէ «Հայաստան» հրատարակչութեան մէջ՝ իրրեւ ուղղագրիչ, 1970-71՝ ՀՍՍՀ մամուլի պետական կոմիտէի գրասենեակին մէջ՝ իրրեւ գլխաւոր տուղար, իսկ 1972-83 մաս կը կազմէ «Հայկական սովետական հանրագիտարան»ի խմբագրութեան՝ իրրեւ գլխաւոր գրիչ:

1940ին սկսեալ՝ Միքայէլ Ցարուբիւնեան հրատարակած է աւելի քան 20 բանաստեղծական հատորներ եւ գրքոյկներ: Անդրկովկասի թատրոններու բեմերուն վրայ բեմադրուած են իր «Երկու հանդիպում» եւ «Ժամանակի ստուգում» թատերախաղերը:

ԶՈՒԱՐԹ ԵՐԳ

Ինչ որ լաւ է այս աշխարհում,
Կա՛յ բոլորն էլ Ղարաբաղում,
Բոլորն էլ կայ եւ ուելին,
Սար չի հասնի մեր սարերին...
Ինչպէս մայրն իմ ողջ աշխարհի...
Մայրերից էլ լաւն է, բարի·
Այդպէս եղն իմ Ղարաբաղի,
Քաղցր է, եւ թող Աստուած պահի,
Եւ կը պահի, մի՛ կասկածի,
Աստուած էլ է Ղարաբաղցի...

***

Օ՛, իմ լեռնաստան,
Տխրութեանս մէջ քո ծանրութիւնն է,
Երբ հառաչում եմ,
Հոգուս ամպերով երկինքդ պատում
Մինչեւ տեսնում եմ գագաթները քո
Մաքուր կապոյտում...
Օ՛, իմ լեռնաստան, իմ համբերութիւն,
Քեզ եմ հաւատում,
Խնդութեանս մէջ քո ծիածանն է,
Դու՝ ես եմ, ես՝ դու...

digitised by A.R.A.R.@

ԼԵՐՄՈՆՏՈՎԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Պոե՞տ, սիրահար փոթորիկների,
Ցոգնած բանսարկու քաղաքներում,
Հոգով ապստամբ, բայց բախտին գերի,
Խարիսխ նետեցիր մեր լեռներում:
Նոյնն էր Արցախը՝ աշխարհը հայոց,
Արիւն-արցունք էր սար ու ձորում,
Բերդը Շուշիի՝ վիթխարի մի օձ,
Լեռների սիրտն էր թունաւորում:
— Աւա՜ղ,— շուրթերդ մրմնջացել են,—
Այցիներ լինեն թէ անապատ,
Ամէն տեղ ահեղ խորշակն անցել է,
Որտեղ էլ լինի, դժբախտ է մարդ:

Ու քեզ ռուսապաշտ Ղարաբաղցին է
Դիմաւորել սուրբ աղ ու հացով·
Արեւից քամած օղին յցրեր է,
Երդուել լեռների լուսաբացով,
Որ շղթաները պիտի կործանի,
Որ լեռները ազատ պիտի մնան,
Եւ դու, հայորդուն՝ հոգով արծուենի,
Ապաւինել ես եղբօր նման:
— Դու պիտի ապրես, հայոց լեռնաստան,
Քո ձեռքով ես դու ճամբաղ հարթում.
Վէրքի սարեր կան սրտիդ մէջ նստած,
Եւ սարերից մեծ՝ համբերութիւն:
Կը շողայ Շուշին՝ գոհարը լերան,
Բոլոր ազգերը սեղան կը բացեն
Եւ զարաբաղեան գինով հուրիրան
Սուրբ եղբայրութեան սուրբ կենաց կ'ասեն...
Ու հաւատում էր պոետն հանճարեղ,
Որ մոխիրներից եւած կրկին
Շուշին կ'ունենայ մի արդար արեւ,
Մի կապոյտ, կապոյտ, կապոյտ երկինք...

Պոետն անցել է ու մնացել են
Լեռները՝ որպէս լուռ վկաներ.
Նրանք տեսել են, նրանք լսել են,
Նախանձում եմ ձեզ, հպարտ լեռներ...

ՄԻՔԱՅԷԼ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

***

Բանաստեղծ Միքայէլ Ցարութիւնեանը չգարձաւ 70 տարեկան։ Մէկ տարի չբաւականացրեց։ Իսկ այդ մէկ տարում ինչեր ասես, որ չքաշեց նրա սիրելի Ղարաբաղը, համայն Հայաստանը։ Այդ մէկ տարուայ ինն ամսում ասես մի ամբողջ հարիւրամեակի ծանրութիւն ընկաւ մեր ժողովրդի ուսերին։ Եւ, ի զարմանս մեզ ու ամբողջ աշխարհի, այդ ծանրութեան տակ մեր նիհարիկ ուսերը ոչ թէ ճկուեցին, այլ պրկուեցին ու տոկունացան։ Միքայէլ Ցարութիւնեանի այնքան գովերգած Արցախ-Ղարաբաղը հաւատաց զօրեղներին, որ հինգ հազարամեայ հայկական այս հողակտորի հայութիւնն ունի իր քաջարի նախնիներին բնորոշ արժանապատուութիւն եւ արեւի տակ իր դիմագիծը պահելու օրինական իրաւունք։

Շատ էր սիրում իր ծննդավայրը։ Տարին երկու-երեք անգամ «պոկւում էր» Երեւանից եւ յայտնւում Արցախում։ Վերադառնում էր բանաստեղծական նոր շարքերով, հոգեպէս լիցքաւորուած, քնքշացած։ Նրա համար ամենաթարմը սարը Արցախի Մոսուն էր, ամենայորդառատ գետը՝ Տրտուն։ Հոգու խորքից է բխել նրա հետեւեալ երկտողը.

Ինչ-որ լաւ բան կայ աշխարհում,
Բոլորը կայ Ղարաբաղում...

Իր կենսափիլիսոփայութիւնն ունէր։ Նրա կարծիքով իւրաքանչիւր մարդու ապրած կեանքի հաշուեկշիռը պիտի գնահատուի նախ եւ առաջ այն բանով, թէ նա ինչ է արել ուրիշներին երջանիկ պահեր պարգեւելու եւ վհատներին յոյսեր ներշնչելու համար («Գրական թերթ», 1989, թիւ 33)։

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@



ԳԻԻՂ ԱՒԵՏԱՐԱՆՈՑ (ԱՐՑԱԽ)

Բարձրավայրի գոյներ, կապտակող, յամառ,
նուրբ երանգների մէջ՝ համարեա՛ ապառաժ,
բայց սրտի տրոփիւնը անդունդի վրայ է,
եւ բարձրութեան վախը ծաղիկ է դառնում,
լերան ստորոտում՝ հոսող կապոյտ:
Սարահարթը թոչում է
կէսօրուայ ահազնութեան մէջ,
լեռնային գոյների հետ ձեռք ձեռքի տուած,
հսկայ արեւի ոտքի տակ, որ հալչում է դանդաղ
զենիթում:
Ո՞ւմ խօսքն է այստեղ իրական, նման այս շեմի
բիբլիական մաքրութիւնը·
եւ մի թարմութիւն հեռահար,
ուր անհնար է ներխուժել,
եւ երկակի է ու անտես, ինչպէս երազը ուրիշի,
ինչպէս մի ամպրոպ թափանցիկ,
որ միշտ նախահօրն է իր փնտռում,
բարձրաւանդակի դէմ դիմաց:

ԱՐՏԵՄ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՅՐՈՒԵԼՈՎ ՍՊԱՌՈՒԵՑ...

Լեոնիդ Հուրունցի սիրտը չդիմացավ իր հայրենիքի ու հայրենակիցների նկատմամբ Ադրբեջանի ազգայնամոլ ու հայատեաց ղեկավարների, կեղծաբար դիտնականների անսահմանափակ ոտնձգությունների դեմ դրած յատակ, անզոր ու երկպառակ մարտերում: Բայց այդ սիրտը չէր դիմանալ եւ ուրախությունից կը պայթի, եթէ նա ապրէր ու տեսնէր 1988ի Փետրուարի 20ը, դրանից էլ առաջ լրանալիք մարզիսորհրդի նստաշրջանի անեկդայ վճիռը Հայաստանի հետ վերամիաւորուելու վերաբերեալ: Նա գրոյցներում շատ յաճախ էր զարմանում ու զայրանում զարարայցիների այն տարիների քաղաքական պասիւությունի ու երկչոտությունի վրայ, ի հարկէ, գիտենալով դրա պատճառները: Մէկ-մէկ կասկած էր յայտնում, որ եթէ յարմար պահը գայ, արդեօ՞ք զարարազցիք միահամուռ ու անելիր կը կանգնեն Հայաստանի միանալու դիրքորոշման վրայ, չե՞ն գաւառանի նախորդ սերունդների եղբարդանքին: Ժամանակն ու բարքերն այնքան էին ազատուել մարդկանց հոգեբանությունը, որ նա իրաւունք ունէր այդպէս կասկածելու. եթէ կէորկոմների ահից համագիւղացիներն անգամ խոյս էին տալիս իրենից, երբեմնց հրաժարում նրա հետ ազգական լինելու հանգամանքից, քանի որ մարզկոմի քարտուղարը հաշուէյարդար է տեսնում նրանց հետ, այն տարիներն ոտնձգաբաղկ, որ խեղճերը թողնում-հեռանում էին Ղարաբաղից, ապա մի՞թէ բռնատիրոջ պահին նրանք կը կարողանան արիական լինել: Ափսոս, հազար ափսոս, որ չտեսաւ կատարուածը: Մէկ էլ մտածում եմ՝ լաւ է, որ յոգրեց ու չիմացաւ Սումգայիթի, Գանձակի, Բաքուի, Բաքուի ջարդերի, շրջափակման մասին, չէմ կարողանում պատկերացնել, թէ ի՞նչ կը լինէր նրա վիճակը այդ ամէնը տեսնելուց եւ լսելուց յետոյ:

Ընթերցողներին ներկայացուող այս մատուցումները քաղուած են գրողի օրագրային գրառումներից, որ նա կատարել է հիմնականում 1974-80 թթ.: Շուրջ 300 մեքենագիր էջից աշխատել եմ ընտրել, ընդհանրացնել, մի առանցքի շուրջ հաւաքել Ղարաբաղին վերաբերող դատն ու տագնապալի խոհերը: Դրանք ընթերցողին պատկերացում կը տան, թէ հայրենասէր գրողի սիրտն ինչպէս է մխացել ժողովուրդների բարեկամութիւնը, ինտերնացիոնալիզմը համակեցութիւնն օրէնք հռչակած երկրում իր ժողովրդի հալածական վիճակի ամէն մի նոր դրսեւորման առիթով, ինչպէս է մերկացրել ալիւնների ու կէորկոմների սուտ ծրագրերը, ինչպէս է անգօրութիւնից չարացել թէ՛ ժամանակի ու մարդկանց, թէ՛ հայրենակիցների ու օտարների դէմ, հաւատացել, խարուել...: Ոմանց կարող է թուալ, թէ այսօր այլեւս նորութիւն չեն գրառումների փաստերն ու յարուցած ապրումները, քանի որ արդէն յայտնի են 1920 թ.ի վեր Ղարաբաղի դէմ կիրառուած գրեթէ բոլոր սադրանքները: Բայց եկէք յիշեանանք, որ Հուրունցը հոգու տառապանքները զրի է առել մեզնից չատ-չատերի քար անտարբերութեան չրջանում, իր վրայ առնելով Ղարաբաղի թշնամիների ատելութիւնն ու հետապնդումները: Բայի այդ, արանք վկայում են նաեւ, որ չի զադարել մեր ժառանգականութեան արդար ընդվզումը հայկական այդ երկրամասին պատճառուած անլուր չարագործութիւնների դէմ: Հուրունցը թերեւս ամենասկիզբն է մեր արդար պահանջատիրութեան, մերկացնողը այն սուտ ու կեղտոտ գործարքների, որ այժմ էլ կատարում են երկրի պաշտօնատար անձերից չատերը: Նա այսօր ի չար աշխարհի նորից կ'ազդարարէր, որ հայաղաւ գործողութիւնների դեկը պտաքուայ պէս գտնում է Հէյդար Ալիեւի ձեռքում, եւ նրա կառքին լծուած են մթութենական միտիարներ ու նախագահներ, որ մեր ժողովրդի դէմ ժղուղ այս կեղտոտ ու անազնիւ պայքարը ինչ-որ տեղ արդիւնք է նաեւ մեր անհետաոնութեան, անմիաբանութեան, միայն ճշմարտութեանը ապաւինելու, քաղաքականութեան կշեռքից օգտուել չկարողանալու եւ ուրիշ չատ բաների: Հուրունցի այս տագնապները ահազանգում են, սթափութեան են կոչում բոլորիս՝ թօթափուել սին ու ետակենարոն նկրտումներից, մանրախնդրութեան ճահճում չթաղել սուրբ ու միակ նպատակը: Նրա կենդանի հոգին, մորմոքը թելադրում, պարտադրում են ձեռքից բաց չթողնել պատմական այս եզակի պահը եւ հակամէտ, իրարամերժ շահերից վեր դասել միակը՝ ժողովրդինը (գնորէ, 1990, թիւ 9):

(հատուած)

ԲԱՑՈՒ ԽԱՄԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼԷՈՆԻԴ ՀՈՒՐՈՒՆՑ

Արձակագիր Լեոնիդ Հուրունց (աւազանի անունով՝ Լեոնիդ Ափանէսովի) ծնած է 7 Մարտ 1913ին, նոր Շէն (այժմ՝ Լենինի Մարտունի շրջան) գիւղը։

Նախնական կրթութիւնը գիւղի վարժարանին մէջ ստանալէ ետք, կը փոխադրուի Բաքու, ուր կը ստանայ իր միջնակարգ կրթութիւնը։ Կ'ուսանէ Ադրբիջանի Հանրապետութեան պատմութեան բաժանմունքը։

1941–45 տարիներուն զինուորական իր ծառայութիւնը կատարելէ ետք, կ'աշխատի Բաքուի Ճայնասփիւռի կոմիտէին մէջ, մինչեւ 1949, երբ փրկնակոսով կը յղի Ադրբիջան եւ կը հաստատուի Երեւան։ 1949–52 կը պաշտօնավարէ Երեւանի ռուսերէն «Կոմունիստ» թերթին մէջ՝ իբրեւ խմբագիր։ Կը մահանայ 21 Նոյեմբեր 1982ին, Երեւան։

Մոսկուայի, Բաքուի եւ Երեւանի մէջ ռուսերէնով լոյս տեսած են Լէոնիդ Հուրունցի «Գաշտային փոստը», «Վարաքաղեան պոեմ», «Նրանց մասին, ովքեր ծովում են», «Հաղորդութիւն ձեզ, մարդիկ», «Փշատենի», «Բարձր լեռներ», «Իմ օջախի քարերը» եւ «Իմ գիւղի տանիքից» հատորները, իսկ հայերէնի թարգմանուած են իր պատմուածքները, վիպակներն ու վէպերը ամփոփող երկու հատորներ։

***

Իբրեւ լեզու ռուսերէնը օգտագործած դարաբաղցի գրող Լէոնիդ Հուրունցի գրեթէ բոլոր գործերը թարգմանուեցան Հայաստանի մէջ եւ Լիբանանի լաւ օրերուն մեր ընթերցողները եւս բախտ ունեցան ստանալ անոնցմէ քանի մը հատոր՝ «Հայրեր»ը, «Ազմկում է Որոտանը», եւայլն։

Ադրբէջանի եւ յատկապէս անոր իշխանապետութեան տակ գրուած Ղարաբաղի մէջ ծնած, մեծցած եւ ստեղծագործական իրենց սկիզբը ըրած գրողներէն ոեւէ մէկը հանգիստ կեանք մը չկրցաւ ապրիլ եւ հանգստաւէտ պայմաններու մէջ ստեղծագործելու հնարաւորութիւններ չունեցաւ, բայց անոնց մէկ զգալի մասին ճակատագրէն բոլորովին տարբեր ճակատագրի մը ենթարկուեցան Բագրատ Ուլուբաբեան, Զօրի Բալայեան եւ Լէոնիդ Հուրունց, որոնք իրենց ողջ կեանքը նուիրեցին արդար Ղարաբաղին արդարութիւնը վերահաստատելու պայքարին։ Այս դէմքերուն քիչ մը ընդարձակ բռնուած կենսագրականներէն գիտենք եւ գրական ու հրապարակագրական էջերու մէջ եղած ակնարկութիւններէն իմացած ենք, որ անոնք կրած են ղարաբաղեան ոգորումին բոլոր հետեւանքները՝ հալածանք, աքսոր, նուաստութիւններ, մա՛նաւանդ Հէյդար Ալիեւի թրքացուցած ժամանակին եւ անոր դրածոյ սատրապին՝ հայազգի Կէորկովի մականին տակ։

Ինքն է, այս վերջին վատաբերածը, որ առիթով մը մարզի մշակութային գործերու պատասխանատու Լեւոն Մկրտչեանին կը հրահանգէ.

«Եթէ գրախանութները ստանան Բագրատ Ուլուբաբեանի «Ոսկեշղթայ», Զօրի Բալայեանի «Օջախ» եւ Լէոնիդ Հուրունցի «Իմ գիւղը» գրքերը, ապա արգելել դրանց վաճառքը։ Ընդհանրապէս, այդ երեք հեղինակներից ոչ մէկի գիրքը չվաճառել»։

Ողբացեալ Հուրունցի ձգած գրաւոր ժառանգութեան մէջ կայ ղարաբաղեան ապրումներուն ու փորձառութիւններուն նուիրուած ընդարձակ բաժին մը, որմէ ապրումներ ընտրած, թարգմանած ու «Նորքի մէջ լոյս ընծայած է Հայա Խաչատուրեան։ Հետագայ էջերուն կու տանք գրականագէտին մեկնաբանութիւններէն հատուած մը եւ գրագէտէն երեք տարբեր կտորներ, որոնք ղարաբաղեան սէր են ամբողջ, ղարաբաղեան վէրք, ղարաբաղեան արուքիւն, տենչ, երազանք...

digitised by A.R.A.R.@

ՊԱՏԱՍԽԱՆ ՏՈՒՐ ԻՆՁ

Հայերին հայի ձեռքով բնաջնջելը Ադրբէջանում սիրուած եւ ընդունուած ձեւ է: Ահա դրա մի վկայութիւնը: Իմ «Ղարաբաղեան պոեմ» վէպը Մոսկուայում լոյս տեսաւ Ադրբէջանում ազգայնամոլութեան կատաղի վերելքի շրջանում, երբ հայերին «անյուսալիութեան» գանազան պիտակներով քշում էին բաքուից եւ հանրապետութեան միւս շրջաններից, քշում էին ուղիղ հիւսիս եւ Սիբիր: Ասում են՝ այդ «անյուսալիների» ցուցակն են ընկնում երկու տարեց, վչտից խելակորոյս ամուսիններ, որոնց չորս զաւակները զոհուել էին Հայրենական պատերազմում: Վէպի լոյս տեսնելն այդ ժամանակ հաւասարապար էր մեծ, ցաւած յանցագործութեան, եւ էլ ընկայ «սեւ ցուցակ», եւ եթէ աքսորից խոյս տուի, ապա միմիայն պատահականութեան շնորհիւ: Ադրբէջանցի գրողները՝ Սամէդ Վուրգունը, Միրզա Իբրահիմովը, Մէհտի Հիւսէյնը սկսեցին ամէն մէկն իր ձեւով ինձ «մշակել»: Վուրգունն այն ժամանակ Ադրբէջանի գրողների միութեան նախագահն էր, եւ մեր մէջ տեղի ունեցաւ այսպիսի խօսակցութիւն.

— Այ ծծկեր, պարոն Հուրուեց (միւս որակումներն անտեսում եմ), ինչ է, ուզում ես Ղարաբաղը տալ հայրենակիցների՞դ:

— Ինչի՞ց է դա երեւում, Սամէդ: Այդ մասին մի՞թէ գրքում խօսք կայ:

— Դու հօ յիմար չե՞ս, որ այդ մասին գրես:

— Ուրեմն էլ բանն ի՞նչ է:

— Իսկ այդ ինչո՞ւ ես Ղարաբաղը վերցրել, ինչ է, ուրիշ տեղեր չկա՞ն: Ի՞նչ ես գլուխդ գցել «Ղարաբաղ, հա Ղարաբաղ», էդ խելառ պառաւի հետքերով ես գնում, հա՞ (խելառ պառաւը Մարիեառա Շահինեանն էր, որի գլխ այդ ժամանակ բաղիրովը գազազած էր. սա մի ուրիշ առիթով): Նաւ ես նստել ու նաւավարի հետ ես կռւում, հա՞: Թէ Բաքուում վատ ես ապրում, քեզ համար կարող եմ լաւ տեղ գտնել...

Ասաց ու գլխով ցոյց տուեց ՆԳՄ շէնքը, որը գտնուում էր Գրողների միութեան դիմաց, հրապարակի միւս երեսին:

Գրողների միութեան միւս ղեկավարը՝ Մէհտի Հիւսէյնը, որն այդ ժամանակ ադրբէջանական գրական ամսագրի խմբագիրն էր, մի անգամ մտաւ ռուսական ամսագրի խմբագրութիւն, որտեղ այդ պահին ես էլ էի: Սենեակում ինձնից բացի նստած էին Ցուս. Գրանինը եւ Ի. Օրատովսկին, երկուսն էլ՝ իմ լաւ բարեկամները:

Մէհտի Հիւսէյնը դարձաւ նրանց.

— Ընկեր ռուս գրողներ, մասնաւորապէս Գրանին եւ Օրատովսկի, բարեւ ձեզ...

Դա, բնականաբար, ինձ դուր չեկաւ:

— Ընկեր Մէհտի Հիւսէյն, այնպէս ես ասում, կարծես ես Ֆրանսիացի գրող եմ:

Նա թէ՝

— Դու ոչ Ֆրանսիացի ես, ոչ ռուս... Դու դաշնակ ես:

— Մուսաւաթականից եմ լսում:

Վէճ, փոխադարձ վիրաւորանքներ: Եկան հարեւան սենեակների աշխատակիցները, գրողները: Նրանց մէջ էր, յիշում եմ, Միրզա Իբրահիմովը, որն իսկոյն էլ դարձաւ վէճի մասնակից եւ, ինչ խօսք՝ ոչ իմ կողմից:

Եւ այդ ամէնը՝ «Ղարաբաղեան պոեմ» ի պատճառով, որը նրանցից եւ ոչ մէկը չէր կարդացել: Վերնագիրը միայն կատաղեցրել էր բոլորին: Այդպէս իմ առաջին գրքից ոչ մի ուրախութիւն չստացայ, դառնութիւն էր, որ ճաշակում էի («Նորք», 1990, թիւ 9):

digitised by A.R.A.R.@ ԷՄՈՆԻԴ ՀՈՒՐՈՒԻՆՑ

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՍԻՄՖՈՆԻԱ

Իր յիշողութիւններում Շալեապինը Վրուբելի նկարներից առացած առաջին տպաւորութիւնն մասին գրել է. «Կտաւներից մէկում պատկերուած է Միկուլա Սելիանովիչը՝ դիւցազն Վոլգայի հետ: Նկարը շատ տարօրինակ էր. ինչ-որ բազմերանգ խորանարդիկներ էին, շատ խայտաբղէտ ու անկապ: Հետագայում համարեա՝ ամէն օր Շալեապինը յաճախում էր Վրուբելի արուեստանոցը, ուելի ու ուելի տարուելով զարմանալի այդ նկարչի արուեստով:

Վա՜, բազմերանգ խորանարդիկներ... Մեծ երգչի այս բնորոշումն ես յիշում, երբ կարդում-ուսումնասիրում ես Լէոնիդ Հուրունցի «Պատմութիւն իմ գիւղի մասին» եւ «Իմ գիւղի սանիթիցց» գրքերը: Դրանք բաղկացած են վառ, խայտաբղէտ, առաջին հայեացքից իրար հետ այնքան էլ չառընչուող նովելներից: Բայց ահա ես ընթերցել-ուսումնասիրել եմ գրքերը եւ թուում է, թէ տեղափոխուել եմ գրողի հայրենիքը՝ Լեռնային Ղարաբաղ, եւ ո՛չ միայն տեսնում եմ այն, այլեւ շնչում եմ նրա սուր-բուրմնաւէտ օդը, քայլում եմ նրա լեռնային արահետներով եւ ահա-ահա հասնում եմ Նորշէն, որը, ա՜յ, ծուարել է լեռների արանքում, տներն իրար վրայ թառած, մաքուր ու յարմարաւէտ, թիթեղապատ տանիքներով ու սպիտակ ներկած պատերով: Ես տեղ եմ հասել ու ծանօթանում եմ տարբեր սերունդների պատկանող տասնեակ մարդկանց հետ, որոնց ինձ է ներկայացնում Նորշէնքի Լէոնիդ Հուրունցը: Ես նրանց բոլորին էլ սիրեցի: Այլ կերպ էլ հնարաւոր չէր, որովհետեւ դրանք բարի եւ քաջ, ուրախ եւ լուայլ հոգու տէր մարդիկ են, որ ընդունակ են ուշնել, իսկ հանգստի պահին՝ հոգին դատարկել մինչեւ յատակը:

Այո՛, ես ուզում էի լինել Լեռնային Ղարաբաղում, նրա կենտրոնում՝ դեռ համարեա՝ պատանի քաղաք Ստեփանակերտում, իսկ այնտեղից գնալ լեռները, լինել շահ-թութի կանաչ այդիներում, որ հսկում է արդէն ծերացած Հայկ քեռին, քայլել արտերի եզերքով եւ տեսնել, թէ ինչպէս է հասկաւորւում սպիտակահատիկ տարեկանը, որ «մոլախոտից» ազատել է հրաշագործ Գէորգի Տրոֆիմովիչ Իլիենկոն, իսկ յետոյ բարձրանալ Նորշէնի տներից մէկի կտուրը եւ այնտեղից Հուրունցի օրատես աչքերով դիտել գրքի աշխարհը: Աշխարհ, որ լի է բարութիւնով, ուրախութիւնով եւ վշտով. այդ աշխարհը լուի ու լուսաւորի համար պայքարի թատերաբեմ է, իւրաքանչիւր անհատի սիրաղարծութեան թատերաբեմ:

Իսկ իրո՞ք հնարաւոր է գիւղի մի տան կտուրից տեսնել գրքի աշխարհը:

Այո՛, հնարաւոր է, պատասխանում է Լէոնիդ Հուրունցը: Ցեսնելու, զգալու եւ շօշափելու համար բաւական է միայն տաք ու անհանգիստ սիրտ ունենալ:

Ես լիովին համաձայն եմ Հուրունցի հետ եւ կը փորձեմ դա ապացուցել, թէեւ գրախօսութեան սահմանները ինձ հնարաւորութիւն չեն տալիս վերապատմելու, վերլուծելու հարեւրաւոր գունագեղ «խորանարդիկները»՝ փոքրիկ նովելները, որոնցից բաղկացած են գրողի երկու գրքերը:

Ինչպիսի՞ն է Լէոնիդ Հուրունցի գեղարուեստական վարպետութեան զէնքը: Գրողի լայն, երկայրի սուրը նշմարտութիւնն է, միմիայն նշմարտութիւնը: Նրա մարտական տապարը ձուլուած է բարութիւնից, իսկ կապարճում բազմապան ու բազմաթիւ նետեր ունի, որոնք իրենց ալացքի հետ շատ բան են բերում ժողովրդական բանահիւսութեան անսպառ չտեմարանից՝ հումոր, որը մերթ ստիպում է ծիծաղից թուլանալ, մերթ տխուր քմծիծաղել, պատկերաւորութիւն, սիմեստային լայնաձայութիւն, հայրենասիրութիւն եւ քնքուշ քնարականութիւն: «Սիրելի, լեռնային իմ երկիր Ղարաբաղ: Իմ մանկութիւն մաքուր, բարձր երկիմ: Ինչ էլ այսուհետեւ պատահի ինձ հետ, ինչ էլ ինձ բաժին հասի փոփոխամիտ բախտը, միեւնոյն է, երբեմ չեմ մոռանայ դէպի քեզ բերող ճանապարհը»:

Սա ամենեւին էլ դեկլարատիւ յայտարարութիւն չէ, այլ՝ գրողի հոգու հիշը՝ ժամանակի մէջ կատարած երկա՞ր, քաղցրութեամբ ու դառնութիւններով լի մի երկա՞ր համբորդութիւնից յետոյ. այդ ժամանակը մոռացութեան գիրկն է նետել ամէն ինչ, բայց գրողի յիշողութեան մէջ պահպանել է յստակ, անկորնչելի հետքեր-պատկերներ:

Առաջին գրքում մեծ ուշադրութիւն է դարձրած Նորշէնի ոչ-հեռաւոր անցեալին: Ընթերցողի աչքի առջեւով անցնում է գիւղի սրախօս եւ կատակասէր մարդկանց մի ողջ դասակ՝ Բուլդի Մուկուչը, Սեդրակ Մատուրեանը, Նուրաբ Հաճին, Սամուէլ Ցարութիւնեանը, գրողի պապը, իր պատանեկութեան տարիներին ընկեր Վասակը եւ շատ ուրիշներ,

digitised by A.R.A.R.@

որոնց մի մասը գրպարտց հեռացել է կենդանից։

Պատմելով այդ մարդկանց հետ իր հանդիպումների, նրանցից լսած ուրախ եւ տխուր, սովորական եւ համարեա՝ անհաւատալի պատմութիւնների մասին, գրողը բազում հնչիւններից հիւսում է ներդաշնակ մի ամբողջութիւն, ասես ստեղծելով նորչէնեան սիմֆոնիայի պարտիտուրան։ Իսկ յետոյ, երբ արդէն աւարտւում է այդ սիմֆոնիան, հեղինակը չատ տաղանդաւոր անցնում է։ Նա ուզում է, որ իր սիմֆոնիան, խառնուելով սովետական ողջ երկրի, ողջ երկրագնդի բազում ու բազմաձայն հնչիւններին, ո՛չ միայն չկորցնի իր հընչողութիւնը, այլեւ առաւել եւս հզօրանայ, քանի որ նրա թեման հայրենիքն է։ Եւ Ղարաբաղի, հայրենի գիւղ Նորչէնի շուրջ հիւսելով պատումի չրջանակը, Հուրունցը պատմում է Մոսկուայի եւ Երեւանի մասին, Հեռաւոր Արեւելքի եւ Տաջիկստանի, Հեռաւոր Հիւսիսի եւ Ղարաբաղին կպած Զանգեզուրի մասին։ Եւ այդ ամէնը գրողը համարում է իրե՛նը, այսինքն՝ սովետական երկրի ամէն մի անկիւնում, նոյնիսկ եղբայրական Բուլգարիայում եւ Մոնղոլիայում ինտերնացիոնալիստ Լեոնիդ Հուրունցը կոդքից դիտող չէ, այլ այն ամէնի ակտիւ մասնակիցը, որ կատարւում է իր շուրջը։ Բայց այդպէս ընդարձակելով իր գործունէութիւնը, Հուրունցը նորից վերադառնում է հայրենի եզերք, նորից է հնչեցրնում իր սիմֆոնիան, որ հիմա եւ ուզում եմ անուանել Ղարաբաղեան։ Եւ մենք՝ ընթերցողներս, նորից ենք հետեւում գրողին, նրա հետքերով անցնում ենք Ղարաբաղի երբեմն անանցանելի կածաններով, ուրախանում ենք այն ամէն լաւով, որ տեսնում ենք ճամբին, տխրում չարի գանազան դրսեւորումներից հետո։(«Սովետական գրականութիւն», 1977, թիւ 12)։

ՎԼԱԴԻՄԻՐ ԴՄԻՏՐԻԵՎԻԿԻ
Լենինգրադ

●

●... Լեոնիդ Հուրունցը ինձ միշտ զարմացրել է իր գրաւիչ երիտասարդութեամբ։ Երիտասարդական այդ նոյն աւիւնը, հարաւային այդ տաք խառնուածքը փոթորկւում է նաեւ բարութեամբ, մարդկայնութեամբ մեզմ հումորով ներծծուած նրա վէպերում, վիպակներում ու պատմուածքներում։ Եւ ահա՝ հիւսիսցիս, նրա ղարաբաղեան գիւղացիների մէջ ճանաչեցի իմ հայրենակիցներին, իմ եղբայրներին ու քոյրերին։

Լեոնիդ Հուրունցը գրում էր ռուսերէն, բայց նրա յոյզերի լեզուն, նրա հոգու լեզուն ճշմարիտ հայկականն է։

Նրա ստեղծագործութիւններում շատ է Հայաստանի արեւը («Գրական թերթ», 1983, թիւ 5)։

ՖԵՈԴՈՐ ԱԲՐԱՄՈՎ

●

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊՈԵՄ

... Շատ տարիներ առաջ էր։ Հայրենական մեծ պատերազմի աւարտից անցել էր ընդամէնը երկու տարի։ Պատերազմի թոհուբոհից, հրանօթների որոտից, ռազմաճակատային սարսափելի պատկերներից յետոյ տուն վերադարձած զինուորներս ուզում էինք կարդալ քնարական մեղմ երգեր, աւելի մօտիկից զգալ հայրենի բնաչխարհի չունչը։ Եւ ահա, այդ օրերին ժեռքս ընկաւ Լեոնիդ Հուրունցի «Ղարաբաղեան պոեմ»ը, որ հենց նոր էր լոյս տեսել ռուսերէն։ Հեղինակն ինձ անծանօթ էր, սակայն երբ կարդացի առաջին մի քանի էջը, թուաց, թէ լսում եմ մի չատ մօտիկ մարդու ձայն, զգում նրա սրտի բաբախը, նրա չունչը։ Վարպետ քնարականութեամբ յագեցած այդ արձակ երկը իսկապէս մի յուզիչ պոեմ է Լեոնային Ղարաբաղի, նրա մարդկանց ճակատագրի մասին։ Անդնդախոր կիրքերում, երկնաքեր լեռների ծոցում բնակութիւն հաստատած հայ ժողովրդի այդ հատուածը չատ տառապանքներ է կրել, գիմագրաւել օտար բռնակալներին, միշտ վառ պահել իր հայրենի օճախը։ Վիպակում վառ ու ճշմարտապատում գոյներով է պատկերուած սովետական իշխանութեան հաստատումը Լեոնային Ղարաբաղում։ Նոյն աղբիւրից ջուր խմող, նոյն հողը

digitised by A.R.A.R.@

մշակող հայն ու ազգբնջանցին, ձեռք ձեռքի տուած կառուցում են նոր կեանք, ստրում նոր սրերի շեղում, չենացնում հարազատ երկիրը:

Այդ վիպակը, որ միանգամից յայն հռնդում ընթերցողներին, յոլս անդամ հրատարակուել է միայն ռուսերէն, թարգմանուել շատ լեզուներով: Քիչ աւելի ուշ, հայ ընթերցողները հնարաւորութիւն ունեցան մայրենի լեզուով կարդալու իրենց ազգանդամը հայրենակցի այդ նշանակալից ստեղծագործութիւնը, ապրել նրա հերոսների ճակատագրով («Գրական թերթ», 1973, թիւ 5).

(Հետաւուած)

ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

●

●... Լէոնիդ Հուրունցին առաջին անգամ հանդիպել եմ քառասունեօթ թուականին: Եւ բոլորովին վերջերս միասին էինք մերձմոսկովեան Ֆերեզելկինոյում, ուր ես բնակւում եմ, իսկ նա սիրում էր լինել յաճախակի: Այստեղ, գրողների ստեղծագործական տանը, նա լաւ էր աշխատում, սիրում էր իրեն շրջապատող փշատերեւ անտառը, այն արահետները, որոնցով քայլել են Ֆաղեւը, Ֆեդինը, Զուկովսկին, Տիխոնովը...

Հուրունցը գրող-ինտերնացիոնալիստ էր, նրան յուզում էին մեր մեծ երկրի եղբայրական ժողովուրդների կեանքի պրոբլեմները:

Լ. Հուրունցի «Գոյներ», «Ղարաբաղեան պոեմ», «Խօսում է Որոտանը» եւ ուրիշ շատ գործեր դեռ երկար կը յուզեն ընթերցողների սրտերը: Իսկ ինձ համար ամենասիրելին նրա «Իմ պատանութեան ամպերը» գիրքն է: Իմ կարծիքով, նրա բոլոր գրքերը կարելի էր ամփոփել այդ խորագրի տակ, քանի որ գրանք ներծծուած են պատանեկան եռանդով ու կենսասիրութեամբ («Գրական թերթ», 1983, թիւ 5):

ՍԵՐԳԷՅ ԲԱՐՈՒԶԴԻՆ

***

Ղարաբաղ, իմ սէր, իմ մշտաբխուն ցաւ...

Ես երգուել եմ, քանի դեռ կենդանի եմ, արար ուշիմարին պատմել, թէ ինչ է կատարւում իմ թշուառ հայրենիքում: Ուշքի եկէք, մարդի՞կ, բարեկամութեան մասին բոլոր ճառերն ու յոյսերդ նրբ փուչ խօսքեր են, յաւագոյն դէպքում՝ բարի յոյսի նիշեր: Մենք դեռեւս պատրաստ չենք իրագործելու այն վեհ իդեալը, որով մեզ օրօրում են ուռնամեակներ շարունակ, չկամենալով ուշիկ նայել կեանքի աչքերին:

Արեւածագիկը արեւի կողմն է շրջւում ծաղկած, հասունութեան շրջանում: Բարեկամութեան շարշրկուած գաղափարը դեռեւս խանձարուրի վիճակում է, չի՝ հասունացել, դեռ չի՝ շրջում արեւի կողմը: Դրա վկայութիւններից մէկը Ղարաբաղում եւ Ադրբէջանի հայաշատ վայրերում տիրող վիճակն է, որ կարելի է բնորոշել որպէս 60 տարի շարունակուող սուտ փուս ցեղասպանութիւն. ահա սա՝ է մեր «բարեկամութիւնը»:

...Ճշմարտութի՞ւն, արդարութի՞ւն. իրը թէ սրանք են մեր կեանքի չափանիշները: Բայց ապէ՝ կա՞ն, գոյութիւն ունի՞ն դրանք: Մէկնումէկը դրանց երեսը տեսած կա՞յ երէկ, նախանցեալ օրը: Գուցէ դրանք եօթ փակի տա՞կ են եւ սպասում են, որ մենք ազատենք, լոյս աշխարհ հանենք:

Ղարաբաղի համար մղուող կռիւը այդ ճշմարտութեան եւ արդարութեան չգոյութեան վառ ապացոյցն է, որը վաւերացրեց ինքը՝ «Գրականդան» (29 Մայիսի 1975 թ.), պաշպանութեան տակ առնելով Ալիեւի սուտը, կէորկովի սուտը: Եւ այդ ստի դէմ մեր բոլոր բողոքները Մոսկուան ուղարկում է Հայաստանի կոմկուսի կենտկոմ՝ պարզաբանելու եւ «միջոցներ ձեռնարկելու» համար:

... Ես ծանր ինֆարկտ եմ տարել, որը ցանկացած պահին կարող է կրկնուել ու հակատադրական դառնալ: Այդ դէպքում չէ՞ որ կը գնայ, կը կորչի, ինձ հետ այն աշխարհը կը գնայ տարիներով կուտակուած մտքերի բեռը: Չէ՞, համաձայն չեմ, այն աշխարհում էլ ես պիտի կռուեմ Ալիեւների ու Կէորկովների, իմ Ղարաբաղի պաշտպան ու արժանապատուութիւնը ոտնահարողների, իմ ժողովրդի մահը երազողների դէմ: Բայց չե՞մ թողնելու նրանց օձիքը, եւ թող չմտածեն, թէ մենք խոտակեր ոչխար ենք:

Մեր ցաւը էլ ո՞վ պիտի պատմի, եթէ ինքներս չասենք: Մենք, որ կապուած ենք այս անկատար դարաշրջանի ձիու պոչից...

(«Նորք», 1990, թիւ 9): ԼԷՈՆԻԴ ՀՈՒՐՈՒՆՑ

digitised by A.R.A.R.@

ԻՄ ԱՐՑԱԽԻ ՀՈՎԻՏՆԵՐՈՒՄ

Իմ Արցախի հովիտներում
Եւ սարերում արեւաւոր
Մի ծաղիկ է նրբին ծաղկում,
Որ բնիւշ է, սակայն ոչ պերն,
Նրա բոյրը լոկ ես գիտեմ,
Լոկ ես գիտեմ նրա տեսքը
Հազար տեսակ ծաղկունքի մէջ:

Մի՛ խնդրէք, տեղը նրա
Ես չեմ ասի, ձեզ չեմ ասի,
Վախենում եմ գնա՛ք, պոկէք,
Ա՜խ թէ պոկէք, հաշուէք նաեւ
Նրան սիրող սի՛րտս էլ պոկել,
Ա՜խ թէ պոկէք հողիս սիրտը,
Գիտէք՝ ինչպէս պիտի ցաւի,
Ինչքա՜ն պիտի ազատանան
Իմ Արցախի հովիտները
Եւ սարերը արեւաւոր,
Եւ ծաղկունքը հազարաբոյր:

ԲՈԳԴԱՆ ԶԱՆԵԱՆ

*

ԱՐՑԱԽԵԱՆ ԵՐԳԵՐ
ՔՈՆԸ ՄՆԱՑԻՆ

Դու Արցախ էիր մի յոգնասահման
Քո բարձունքներով, փառքերով անհաս,
Դու երկիր էիր, աշխարհ արցախեան,
Այս ինչպէս դարձար փոքրիկ երկրամաս:

Քեզնից խլել են, անվերջ խլել են,
Անվերջ խլուելով պիտի որ վաղուց
Դու արդէն անդարձ խլուած լինէիր,
Տարուած լինէիր անվերջ տարուելուց:

Զար հատումներից նորացել ես դու,
Բայց մնացել ես նոյն անտառը հին,
Ուր կաղնիներն են լոկ աճում անդուլ,
Կուրծք տուած դաժան հողմ ու կայծակին:

digitised by A.R.A.R.@

Քեզ ինչքան ցրել՝ դու թանձրացել ես
Խաչենահովտի գոյների նման,
Ինչքան դառնացրել, դու քաղցրացել ես,
Մարել են՝ նորից դարձել ես վառման...

Ձայներ են խառնել ձայներիդ զուլալ,
Որ ուրիշ էին, ուրիշ, խառնածին,
Այդ ձայների մէջ ամենահնչեղ
Ձայները էլի քոնը մնացին:

Հոգուդ անհաղորդ այդ ձայների մէջ,
Աղմուկների մէջ ահեղնադղորդ,
Քո Տրտու գետի ձայնը սոսկ ձայն չէր՝
Ոգի էր նաեւ եւ ոգու որոտ:

Եւ այսպէս անվերջ, ինչքան նեղել են՝
Դու կարծրացել ես, պահել անունդ,
Ինչ գոյնով էլ քեզ նրանք ներկել են՝
Փայլել է միայն ԱՐՑԱԽԵԱՆ ԳՈՅՆԴ:

*

ՂԱՐԱԲԱՂԻՍ ՀՈՐՈՎԵԼԸ

Աղմուկներով ժխորաձայն,
Իրարանցման մէջ խելավագք,
Ուր գուր ջանք է խաղաղ մի տեղ,
Անկոխ մի տեղ որոնելը,
Ցանկարծ հնչեց իմ ականջին
Ղարաբաղիս հորովելը:

Ասես քնած էի խորունկ
Եւ արթնացայ.
Եւ հասկացայ՝ մարմին ունեմ,
Գլուխ ունեմ եւ ձեռք ու ոտք,
Եւ սիրտ ունեմ,
Եւ սիրտս էլ ունի կարօտ,
Որ խօսում է միայն երգով՝
Ղարաբաղիս հորովելով:

Խօսում է նա,
Կանչում է նա,
Ցանում, տանում,
Ասես քրտնած իմ ճակատին
Ես զգում եմ Տողասարից
Փչող հովի մեղմ հպումը,
Ասես շուրթս սուզել եմ ես
Կաթնազբիւրի ակունքի մէջ
Եւ լեզուիս էլ առել, ասես,
Իմ արցախեան
Ցորեն հացի յատուկ համը...

Ասես ահա տեսնում եմ ինձ
Մշաձորի մեր արտի մէջ,
Տեսնում եմ ինձ՝
Ձեռքիս նիպոտ ճկուն ու պինդ,
Տեսնում եմ ինձ
Զոյգ եզների արանքում նեղ,
Իսկ իմ հայրը,
Մանկա՞լ հայրը,
Գլուխը բաց, ձեռքը դրած
Հին արօրի մաշուած մանին,
Ոտքերը թարմ ակօսի մէջ,
Փայլում է ու յորդորում ինձ,
Ինձ՝ իր փոքրիկ մինուճարին,
Որ հստակ է դարձել փոքրիկ,
Յորդորում է, պատմում ապա
Իր ցաւը մեծ, հոգսերը շատ,
Պատմում է մեղմ ու հոգեթով
Ղարաբաղիս հորովելով...

ԲՈԳԴԱՆ ՋԱՆՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ ԿԱՆՉՈՒՄ Է

Միայն վերջին 15 տարում 46 գիւղ է դատարկուել եւ դեռ այդքան էլ վտանգի տակ է։ Այդ գիւղերը որպէս բնակավայր ջնջուել են Ղարաբաղի քարտէսից, իսկ անունները մնացել են որպէս ծանր յուշ, պատմութիւն։

«Ղարաբաղը քանդում է»։ Ղարաբաղը քանդում են նրանք, ովքեր լքել են իրենց հայրենի հողը, պապենական օջախները, երկար ռուբլիներ վաստակելու համար չուել են հեռո՛ւ–հեռուները...

Այս նեարդային լարուած պայքարում մարդիկ կան, որ լեռ դիմանում եւ յաւտատօրէն ասում են.— Եթէ մեր պահանջը չկատարուեց, կը թողնենք Ղարաբաղն ու կը հեռանանք։ Այսինքն այն, ինչ ուզում են մեր պահանջի հակառակորդները։ Ո՛չ։ Երբե՛ք։

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Անցած տարուայ աշնան վերջին օրերին էր։ Անձնական գործով Երեւան էի գնացել։ Բարեկամիս տանն էի մնում։ Ուշ երեկոյեան հեռախօսը զանգեց։ Ինձ էին ուզում։

— Վաղը հրաւիրում եմ մեր տուն։

Զանգողը ուսանողական տարիների իմ ընկերներից էր՝ Գէորգը։

Գէորգը մեր կողմերից է։ Ինստիտուտը աւարտելուց յետոյ մնաց Երեւանում, աշխատեց տարբեր բնագաւառներում, յետոյ դասաւորուեց առեւտրական ցանցում։ Կառուցեց երկյարկանի սեփական տուն՝ իր բոլոր յարմարութիւններով։

...Սեղանի չուրջ նստած էին մօտ տասը մարդ, բոլորն էլ՝ ղարաբաղցիներ։ Նրանցից չատերին վաղուց էի ճանաչում։ Տարիներ առաջ աշխատում էին Ղարաբաղում, ո՛րը ուսուցիչ էր, ո՛րը՝ բժիշկ...

Մթնոլորտը ջերմ էր, ընկերական։ Բոլորն էլ ինձ էին ուզում լսել։

Խօսեցի Ղարաբաղի այսօրուայ ծանր կացութեան մասին, երիտասարդութեան հասունութեան, մեր գիւղերի քայքայման, աւերի մասին։ Միայն վերջին 15 տարում 46 գիւղ է դատարկուել եւ դեռ այդքան էլ վտանգի տակ է։ Այդ գիւղերը որպէս բնակավայր ջնջուել են Ղարաբաղի քարտէսից, իսկ անունները մնացել են որպէս ծանր յուշ, պատմութիւն։ 216 հայկական դպրոցներից մնացել է ընդամէնը 129 դպրոց, վերացել է «զուգահեռ դասարաններ» տերմինը, գիւղական չատ դպրոցների ամէն մի դասարանում 5–6 երեխայ է սովորում։ 1970 թուականի համեմատութեամբ մարզի դպրոցականների թիւը նուազել է 13 հազարով։ Միայն Հադրութի շրջանում, որը Ղարաբաղի ամենախիտ բնակուած շրջանն էր, այսօր 42 հազար բնակչից մնացել է ընդամէնը 14 հազար մարդ, այն էլ՝ հիմնականում տարիքն առած մարդիկ։ Շրջանի հայկական դպրոցներում սովորում են ընդամէնը 1700 երեխաներ, իսկ 9–10րդ դասարաններում սովորող աշակերտների թիւը 300ի է հասնում։ Մարզի չատ գիւղերում

digitised by A.R.A.R.@

հարսանիքը եւ ծնունդը դարձել են երեւոյթ։ Երիտասարդ ընտանիքները մատների վրայ կարելի է հաշուել։

— Դէ ասա քանդում էք էլի Ղարաբաղը,— քլունգի պէս խփեց Բենոն։

— Ղարաբաղում ապրողները Ղարաբաղը չեն քանդում, Ղարաբաղից փախչողներն են քանդում,— վրդովուեցի ես։

Այո՛, յետպատերազմեան տարիներին սկսուեց ղարաբաղցիների մասսայական հոսունութիւնը, նախ դէպի Սումգայիթի, Մինգեչաուրի նորակառոյցները, յետոյ՝ դէպի Բաքու քաղաքի արուարձանները։ Այդ քաղաքների բանուորական ուժը համալրւում էր ղարաբաղցիներով։ Իրենց արձակուրդներին նրանք գիւղ էին գալիս, վայելում Ղարաբաղի բարիքները։ Նրանց տեսնելով չարժւում է համագիւղացիների նախանձը։

— Ինչո՞ւ պիտի Պետրոսի տղան քաղաքում ապրի, իմը՝ ո՛չ,— գիւղացու հոգեբանութեամբ ասում էր Պողոսը։

Այսպէս, գիւղի արու զաւակները, մէկը միւսին թիկունք դարձած, հերթով տեղափոխւում են քաղաք, աշխատանքի անցնում, զօտեպնդւում։ Յետո՞յ։ Յետոյ գալիս են գիւղ, իրենց ընտրած աղջիկը առնում տանում եւ մշտական բնակութիւն հաստատում քաղաքում։

Ու այսպէս՝ տարիներ շարունակ։

Մնողները ծերանում են, մնում մենակ ու նոր հասկանում իրենց սխալը։ Նրանք աղաչում են մոլորուած զաւակներին վերադառնալ գիւղ, շարունակել պապենական օջախի ծուխը, բայց ի զուր...

— Ուշ է, երեխաներս ռուսական դպրոցում են սովորում, վերադառնամ գիւղ ի՞նչ պիտի անեմ,— բացատրում են խաբուած որդիները։

«Գիւղում ինչ պիտի անեմ», կարծես նրանք քաղաքում մի այնպիսի մասնագիտութիւն են սովորել, որ գիւղում չեն կարող աշխատել։ Հարցնող լինի՝ բանւոր մարդ ես, գիւղում աշխատած՝ քաղաքում, մէկ չէ՞։ Դեռ գիւղն ունի իր առաւելութիւնները՝ մաքուր, կենարար օդը, զուլալ աղբիւրների ջուրը, բնութեան հարուստ բարիքները եւ ամենակարեւորը, որ վառ կը պահես քո պապենական օջախը, ձեր սրբացած գերեզմանները։

— Երեխաներս ռուսական կրթութիւն են ստանում, գիւղում ի՞նչ պիտի անեն,— նորից պատճառաբանութիւն։

Քաղաքում ձեր երեխաներն էլ ձեզ՝ բանուորներիդ փոխարինողներն են, մի՞թէ դա ճշմարտութիւն չէ։ Այո, նրանց երեխաների 99 տոկոսը ընտրում են իրենց հայրերի ճանապարհը։ Նրանց համար ուրիշ ճանապարհ չկայ։

Բայց հետաքրքիր է, ո՞ւր մնաց ղարաբաղցու ինքնասիրութիւնը, ազգային հպարտութիւնը... Զէ՞ որ նրանք իրենց աղաւաղուած ազգանունով եւ անցագրով են յիշեցնում, որ հայ են։ Ինչպիսի՛ դըժբախտութիւն, ինչպիսի՛ մոլորուածութիւն...

Եւ այսպէս, գիւղից փախածները հերթով գալիս են գիւղ, վախճանուած ծնողներին հողին յանձնում եւ ընդմիշտ կըտրում կապերը իրենց պապենական օճախի հետ։ Տարիներ գլորւում են, անցնում, նրանք մոռանում են ե՛ւ հայրենի գիւղը, ե՛ւ ծնողների գերեզմանները։

...Յիսնական թուականներին, երբ սովորում էի Երեւանում, այստեղ Ղարաբաղից ընդամէնը հինգ ընտանիք էր բնակւում։ Այսօր Երեւանում աւելի շատ ղարաբաղցիներ են բնակւում, քան բուն Ղարաբաղում։ Այդ ինչպէ՞ս եղաւ։ Մի՞թէ նրանց համար Ղարաբաղում աշխատանք չկար, ապրելու պայմաններ չկային։ Ինչք չունեմ, Երեւանում շատ ղարաբաղցիներ կան, որոնք իրենց գիտելիքներով, արժանիքներով ու մասնագիտութեամբ պէտք է որ գործեն մայրաքաղաքում։ Իսկ ղարաբաղցի այն չինարարը, ծեփողը կամ հենց այն շարքային ծառայո՞ղը...։ Մի՞թէ Ղարաբաղը այնքան նեղ էր նրանց համար, մի՞թէ այդ նոյն աշխատանքը չի կարելի կատարել Ղարաբաղում, իրենց հայրական տուն-դրանը։

Զէ՞ որ մենք միասին, միաձոյլ կամքով կարող ենք չէնացնել մեր Ղարաբաղը եւ աւելի լաւ ապրել։

«Ղարաբաղը քանդում էք»։ Ղարաբաղը քանդում են նրանք, ովքեր լքել են իրենց հայրենի հողը, պապենական օջախները, երկար ռուբլիներ վաստակելու համար

digitised by A.R.A.R.@

չուել են հեռո՛ւ-հեռուներ... Միջին Ասիա, Հիւսիսային Կովկաս, օտար շատ ու շատ քաղաքներ։ Ջուել են ու մոռացել իրենց հայրենիքը, իրենց ծնողներին, ապ ու պապերի գերեզմանները թողել փուչ ու տատասկի մէջ կորած։ Վաղուց կորել է այդ գերեզմանները տանող միակ արահետը։ Նոյնիսկ մի շարք «խելօք» զաւակներ էլ վաճառել են հայրական տունը, իրենց մանկութեան օրրանը։ Ամօ՛թ նրանց։

Ջուել են, գտել մի տաքուկ անկիւն։ Երբ մէկ-մէկ Ղարաբաղի մասին խօսք է լինում, կանգնում են մի խաչմերուկում ու հրացանի փողը ծռում դէպի մեզ. կրակում, հա՛ կրակում, որ մենք չենք կարողանում պահել Ղարաբաղը, գիւղերը քանդում ենք, դպրոցները փակում, այգիները լաւ չենք մշակում...։ Տեսէք, տեսէք հայրենասէրներ են, մտածում են իրենց ծննդավայրի մասին։ Նրանց ձայնը տաք տեղից է դուրս գալիս։ Տղամարդ էք, եկէք միասին չէնացնենք Ղարաբաղը։

Այո՛, մենք քիչ ենք մնացել Ղարաբաղում։ Մեր անելիքը շա՛տ են ու շա՛տ։ Պատահում է, այս փոքրութիւնից մեծ սխալներ են թոյլ տալիս, հասկանում ենք այդ, բայց չենք կարողանում շտկել, որովհետեւ քիչ ենք, չի հերիքում մեր ուժը, կարողութիւնները։

Ղարաբաղը պէտք է պահենք միայն ու միայն մեր գոյութեամբ, մեր շնչով, մեր աշխատանքով։

Այսօր ղարաբաղցին կանգնել է, իսկ երբ ղարաբաղցին կանգնում է, նա չի նստում, մինչեւ...

Այս տարուայ փետրուարեան օրերից սկսած վիրաւոր գազանի պէս մռնչում է ամբողջ Ղարաբաղը։ Պէտք է տեսնել Արցախ աշխարհի կանանց, աղջիկներին, Անահիտի, Ռուզանի, Գայիանէի յեռնորդներին, իրենց լեռների պէս կարծր ու ժեռ արու զաւակներին, թէ ինչպէս են Արցախի գոյատեւման համար պայքար տանում, իրենց բողոքի ու ցասման խօսքն ասում։

Դժբախտաբար վերեւնեղում պիտ մեկ չեն հասկանում կամ հասկանում են, բայց սխալ մեկնաբանում...

Այս նեարդային լարուած պայքարում մարդիկ կան, որ չեն դիմանում եւ յուսահատօրէն ասում են.— Եթէ մեր պահանջը չկատարուեց, կը թողնենք Ղարաբաղն ու կը հեռանանք։

Այսինքն այն, ինչ ուզում են մեր պահանջի հակառակորդները։ Ո՛չ։ Երբե՛ք։ Եթէ, Աստուած մի արասցէ, մեր պահանջը չկատարուի՝ մենք էլ, միեւնոյն է, պէտք է մեր հողում աւելի ամուր կանգնենք, չատանա՞նք, չատանա՞նք...։ Խնդրենք, որ վերադառնան արցախաչունչ մեր զաւակները, մեր քոյրերը եւ եղբայրները, որ մեզ թիկունք կանգնեն, ամրապնդենք, չէնացնենք մեր Արցախ աշխարհը։

Լեռնային Ղարաբաղը աղատօրէն կարող է տեղաւորել ու իր բարիքներով կերակրել մէկ միլիոնից աւելի մարդ։ Ղարաբաղից դուրս մօտ մէկ միլիոն ղարաբաղցի է ապրում երկրի տարբեր վայրերում։

Ա՛խ, եթէ այսօր մեր մարզում ապրէր դրա թէկուզ եւ կէսը...

Անհատի պաշտամունքի եւ լճացման ժամանակաշրջանի հարուածից ուշքի է եկել ղարաբաղցին, նա այլեւս չի թողնի իր մայր օրրանը, իր պապենական Արցախ աշխարհը։ Նրանք լաւ գիտեն, ով թողնում է իր բոյնը, չւում հեռուներ, ապա այդ քնին օտար հաւքն է տիրանում։

Արցախ աշխարհը սպասում է իր մոլորուած, օտար երկնքի տակ ապրող զաւակներին...

Վերադարձէ՛ք ձեր պապենական տունը, իմ հայրենակիցներ (**«Աւանգարդ»**, 13 *Յուլիս* 1988)։

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ

Ստեփանակերտի Քաղաքային Սովետի Կուլտուրայի Բաժնի Վարիչ, ՍՍՀՄ Ժուռնալիստների Միութեան անդամ։

digitised by A.R.A.R.@

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

Բանաստեղծ եւ թարգմանիչ Աշոտ Գրաշի (ստացած անուն՝ Աշոտ Գրիգորեան) ծնած է 9 Մայիս 1910ին, Բաքու։ 1929ին կ'ուսանէ Բաքուի Ալ. Մասնիկեանի անուան հայկական մանկավարժական վարժարանը, իսկ 1933ին՝ Երեւանի համալսարանի պատմագրական բաժանմունքը։

1933–40 տարիներուն Աշոտ Գրաշի կ'աշխատի Բաքու՝ իբրեւ գրագրանի վարիչ, Ազգային գրականի գրասենեակ միութեան հայկական բաժանմունքի քարտուղար եւ հայերէն «Կոմունիստ» թերթի արուեստի եւ գրականութեան բաժնի վարիչ։

1940ին կը տեղափոխուի Երեւան, ուր կ'ապրի մինչեւ իր մահը՝ 28 Փետրուար 1973։

Աշոտ Գրաշի հրատարակած է 18 անուն գիրքեր՝ որոնց մէջ նշենք՝ «Գարնանային», «Կոմունկ», «Իմ գարունը», «Մանուկի հոգը երգը», «Կոմունկների ազգիւրը», «Իմ սիրոյ պոեմը» եւ «Երկերը երկու հատորով»։ Թուսերէն եւ այլլեզուներէն ան նաեւ թարգմանած է 22 հատոր գիրքեր, ոմանց ալ թարգմանիչներու աշխատակցութեամբ։

ՃԱՄԲԱՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ

Ա՜խ, ես ինչպէս մոռանամ ճամբաները Ղարաբաղի,
Իմն են թէկուզ հեռանամ, ճամբաները Ղարաբաղի։

Նրանց հետ եմ մագլցել ես գագաթը Մուռ սարի,
Նորից պիտի սլանամ ճամբաները Ղարաբաղի։

Գարնան զուարթ ֆոչի հետ՝ մրմունջ-տրտունջ իմ երգերով,
Թող նորից սար բարձրանամ ճամբաները Ղարաբաղի։

Ցաւերժ ջահել կը մնան սրտիս ոսկէ ցնորքներում,
Եթէ անգամ ծերանամ, ճամբաները Ղարաբաղի։

Դեղձանիկնե՛ր, արտոյտնե՛ր, ծիծեռնակնե՛ր, մոշահաւե՛ր,
Դարձրիք գարնան երգարան ճամբաները Ղարաբաղի։

Վայրի վարդերն են բուրում նրանց կանաչ եզերքներին,
Վառ են ինչպէս ծիածան՝ ճամբաները Ղարաբաղի։

Ձե՛զ եմ թողնում աշխարհի քառուղիներն աղմկաեր,
Սրտիս մէջն են միմիայն ճամբաները Ղարաբաղի։

digitised by A.R.A.R.@

ՔՈ ՂԱՐԱԲԱՂԻ ԺԱՅՌԵՐԻ ՆՄԱՆ

Քո Ղարաբաղի ժայռերի նման ամուր մնա՛, սիրտ,
Միշտ բարի մարդկանց կեանքի դաշտերում զեփիւռ մնա՛, սիրտ։

Թող գետերը գան ու աղմկածայն անցնեն քո միջով,
Նրանց ափերին բերդերի նման դու կուռ մնա՛, սիրտ։

Տօթից ու տապից, սառնամանիքից, խոլ մրրիկներից
Մի՛ ճեղքուիր, փլուիր, քո Մռաւ սարին դու քոյր մնա՛, սիրտ։

Ախոյեանները դուզում են տեսնել քեզ փոշիացած,
Դու նրանց հանդէպ երկնքի անխախտ լազուր մնա՛, սիրտ։

Ուզում են նրանք քեզ հողմահարել որպէս ձիւնահիւս,
Դու անհաս սարի սառցէ ապառաժ ու թուր մնա՛, սիրտ։

ԻՄ ՍՐՏԻ ՄԷՋ

Ման եմ գալիս ես աշխարհով, Ղարաբաղը իմ սրտի մէջ,
Նրա բոյլ-բոյլ ծաղիկների շողն ու շաղը իմ սրտի մէջ։

Բարձր, բարձր եթերի հետ խօսք է խօսում խորհրդաւոր
Մշուշների ձիւնը խրուած Մռաւ թաղը իմ սրտի մէջ։

Լեռներից վեր՝ երկնի ծովում՝ արծիւներն են սուզւում լռին,
Ես լսում եմ նրանց հպարտ կանչն ու տաղը իմ սրտի մէջ։

Զմեռն անգամ, երբ ճախրում են ձիւներն, ինչպէս ճերմակ հաւքեր,
Բողբոջում է կոկոններով վարդի թաղը իմ սրտի մէջ։

Կանանչ է քան մշտադալար դափնիների պուրակը պերճ,
Մանկութեանս շաղաթաթախ թթաղը իմ սրտի մէջ։

Աղջիկները երամ-երամ այգիներն են գնում զուարթ,
Միրգ հեղեղեց երջանկածով այգեքաղը իմ սրտի մէջ։

Ուր էլ լինեմ, թէկուզ անջուր անապատում, հնչում է յար
Մեր ձորերի աղբիւրների ջինջ ծիծաղը իմ սրտի մէջ։

digitised by A.R.A.R.@

ՔՈ ԳԻՐԿՆ ԵՄ ԳԱԼԻՍ

Ղարաբաղ, նորից
Ես քեզ եմ գալիս,
Քո գիրկն եմ գալիս՝
Սուրբ ու անձկալի։
Գալիս եմ առնեմ
Սէրս մոգական
Քո գգուանքներից
Ջերմ ու մայրական։

Գալիս եմ՝ Քիրսիս
Կարոտը առնեմ,
Խինդի արցունքս
Թարթառին խառնեմ։
Մի քանի օր է
Բաժանում ինձ, քեզ,
Բայց տարիներ են
Ես թեւել կարծես։
Դու այդ ի՞նչ եղող ես,
Ի՞նչ ջուր ես տեսել,
Որ դեռ կէս ճամրից
Ես կանչում մեզ։

Դու ուրիշ հող ես,
Դու ուրիշ խաղ ես,
Ուրիշ շող-շափաղ
Ու Ղարաբաղ ես։

ԱՐԻ ԳՆԱՆՔ ՂԱՐԱԲԱՂ

Ընկե՛ր, բացուեց կանաչ գարուն,
Մով մարգերում, զով սարերում
Կարմիր մորին է հուրհրում-
Արի գնանք Ղարաբաղ։

Սարե՛ր, սուզուած ծով կանաչում,
Աղրիւրները մեղմ կարկաչում,
Հաւքերի պէս հիւր են կանչում-
Արի գնանք Ղարաբաղ։

Սուսում են ամրուլ սեղ,
Հիւսում, փռում գորգեր պէս-պէս,
Մռաւ սարի լանջին բեհեզ-
Արի գնանք Ղարաբաղ։

Խոլ ձորերով շաղաթաթախ
Լուռ լռում են ամպ-շամանդաղ,
Թաւալում է Թարթառը պաղ-
Արի գնանք Ղարաբաղ։

Այգիներով ծաղկածիծաղ,
Ջեռքին բռնած մրգով լի մաղ,
Եկաւ ամառն արեւաշաղ-
Արի գնանք Ղարաբաղ։

Թեւերի տակ հովիկների,
Կապոյտ գրկում հեռուների
Փողն է հնչում հովիւների-
Արի գնանք Ղարաբաղ։

Կարոտել եմ հողին նրա,
Կանաչ-կարմիր շողին նրա,
Մարգարտահիւս ցողին նրա-
Արի գնանք Ղարաբաղ։

Կանաչ գարուն, հովեր տուր ինձ,
Այրուեց սիրտս, զովեր տուր ինձ,
Ծիծեռնակի թեւեր տուր ինձ,
Թռչենք, գնանք Ղարաբաղ։

ՂԱՐԱԲԱՂ

Այդ ինչ հեւք ու հնար ունես,
Այդ ինչ երգ ու քնար ունես,
Որ քեզ մի օր տեսնողն ասես
Քոնն է դառնում քո որդու պէս։

Կարոտում է քո Քիրս սարին,
Քո Թարթառին, Գանձասարին...
Դու երգ ու տաղ, դու բերք ու բաղ,
Դու մօր պէս թանկ մեր Ղարաբաղ։

digitised by A.R.A.R.@

⁂

Թափառական քո գուսանն եմ, Ղարաբա՛ղ,
Իմ վրանը որտե՞ղ խփեմ աշխարհում,
Քո հազարան բլբուլների բաղչա, բաղ,
Քո կարոտով երգեր կապեմ աշխարհում:

Բարով տեսանք, ձիւնոտ սարե՛ր հայրենի,
Մանկութիւնից ծանօթ սարե՛ր հայրենի,
Իմ օրօցքն էք, ծաղկոտ սարե՛ր հայրենի,
Ա՛խ, առանց ձեզ ինչպէ՞ս ապրեմ աշխարհում:

Մանուշակնե՛ր, սիրած սարս զարդարէք,
Ամպեր հագած Ղաշխա քարս զարդարէք,
Ոլոր-մոլոր ճանապարհս զարդարէք,
Ձեզնից յաւէտ չբաժանուեմ աշխարհում:

Փունջ-փունջ հարսնե՛ր, ո՞ւր էք գնում դուք ծէգին,
Կուժերն ուսած ջուրն էք գնում դուք ծէգին,
Այծեամի աղբիւրն էք գնում դուք ծէգին,
Ձեր սէրն անհուն երկնով չափեմ աշխարհում:

ԵՐԳ

ՊԱՊԻ ՄԱՍԻՆ

Ծերուկ պապս գինի քաշեց
Ղարաբաղի կանաչ այգում,
Մայրամուտի պէս նռնագոյն,
Կարմրակռնակ գինի քաշեց:
Իր վշտերը գինով քշեց
Հին ենձանում, կաղնու շուքում,
Ծերուկ պապս գինի քաշեց
Ղարաբաղի կանաչ այգում:

Հաց չէր կտրում առանց հիւրի,
Հիւրեր կային միշտ իր հիւղում:
Ղարաբաղի ուրախ հողում
Հաց չէր կտրում առանց հիւրի:
– Հաւքը խմի ջուր աղբիւրի,
Հիւրը՝ գինի, վառ, շողշողուն,
Հաց չէր կտրում առանց հիւրի,
Հիւրեր կային միշտ իր հիւղում:

(հատուած)

⁂

Ծիծեռնակն իր սրնգով
Սրտիս երգն է նուագում-
Ղարաբաղն է գովերգում
Ծիծեռնակն իր սրնգով,
Ճախրում նրա երկնքով,
Իջնում արտում, պուրակում,
Ծիծեռնակն իր սրնգով
Սրտիս երգն է նուագում:

⁂

Ո՛ւր էլ, ո՛ւր էլ ես գնամ,
Ղարաբաղն է իմ սրտում,
Հետս ժպտում է, տրտում,
Ո՛ւր էլ, ո՛ւր էլ ես գնամ:
Ինձ հետ գարունը վառման
Աշխարհով է ճամբորդում,
Ո՛ւր էլ, ո՛ւր էլ ես գնամ,
Ղարաբաղն է իմ սրտում:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

digitised by A.R.A.R.@

Բանաստեղծ Գուրգէն Գաբրիէլեանն իր ժողովրդի հետ

ՂԱՐԱԲԱՂ

Գրչեղբօր՝ Ե. Օհանջանեանին

Եթէ մեռնեմ, եթէ մեռնեմ,
Եթէ մեռնեմ բեզնից հեռու,
Սիրած հաւքիս դու տուր թեւեր,
Թռչի, անցնի լեռ ու առու:

Թռչի, անցնի լեռ ու առու,
Գայ հասնի իմ շիրմաքարին,
Շիրմիս հողից առնի մի բուռ,
Բերի, խառնի հողիդ անրիծ:

Բերի, խառնի հողիդ անրիծ,
Տեղը բռղած մի փունջ ծաղիկ,
Որի բոյրից զարթնեմ նորից,
Նորից մեռնեմ յանուն հողիդ:

Իմ Ղարաբաղ, իմ մայր, իմ հող,
Քեզ համար եմ ապրում, հռում,
Քեզ համար էլ մեռնեմ թող որ՝
Թէկուզ բեզնից մի քիչ հեռու:

ԳՈՒՐԳԷՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

***

Ցաբիներ առաջ գրծով մի քանի շաբաթ անցկացրի Սուփանակերտում։ Ղարաբաղցի ընկերներիս հոգածութեան շնորհիւ կարողացայ տեսնել Շուշին ու Գանձասարը, այցելեան շատայլ թեռութիւններ։ Շրջուեցի մշակութային կեանքի հետ, մի անգամ եւս համոզուեցի, Սուփանակերտը կարող էր լինել հայ մշակոյթի մի այնպիսի կենտրոն, ինչպիսի ժամանակին եղել է Շուշին։ Սուփանակերտում եւ շրջաններում չաւ մասնագիտութիւն կայ, գրողներ, արուեստի մշակներ կան, որոնք վառ են պահում հայ մշակոյթի ջահը։ Դժբախտաբար, մենք այնքան ալլաւ չդիտենք Ղարաբաղի գրական կեանքը։ Թէեւ վերջին տարիներին փորձում ենք աւելի ուշագիր լինել։ Գուրգէն Գաբրիէլեանը ասացաւ ՀՍՍՀ գրողների միութեան ամենամեծ մրցանակը մանկական գրականութեան ասպարէզում, գրքոյկ իսկ հատատուելով իր ստեղծագործութեան համաշոյաստանեան արժէքը։

(«Գրական թերթ», 1988, թիւ 17)։

ԱՂԱՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ.

ԱՐՑԱԽ



Արցախում առաջին դպրոցը՝ Ամարասը։ Մեսրոպ Մաշտոցի հիմնած դպրոցի սանները այստեղից են հայոց այբուբենը սփռել այդ աշխարհում։

Լուսանկարները՝
ՋԱՎԵՆ ԲՕՅԻԿՅԱՆԻ

ԱՄԱՐԱՍ

Քո լուսինն է վերում լողում՝
ցուցանելով մեր ուղին։
Սուրբ Մեսրոպի հետքն է շողում
վանքապատկան քո հողին։

Եւ վերստին սիրտն է բացւում,
եւ էլ հոգին չի տնքում.
եւ ճախրում են ու թեւածում
քո պաշտպանեալ երկնքում։

ԱՐՄԷՆ ՇԷԿՈՅԵԱՆ

●

ԱՄԱՐԱՍ

Այստեղ է եղել Մաշտոց անունով սուրբ
երանելին,
Այստեղ, այս վանքի կամարների տակ,
Եւ դեռ այսօր էլ
Զգում եմ նրա շունչը խնկաբույր։
Այստեղ, այս վանքի կամարների տակ,
Արցախ աշխարհի մարդկանց սրտերում
Նա լույս է ցանել
Ու վառել ջահեր.
Եւ կտակել է,
Որ հաղորդ լինեն իմաստությանը
Եւ հանճարներին լինեն ունկնդիր...
Ամարաս, եթէ դուն մինչեւ այսօր
Կանգուն ես տեղում,
Եւ յաւիտեան էլ կանգուն կը մնաս,
Ապա դու միայն այն բանի համար,
Որ քո տաք գրկում
Եղել է նաեւ
Մաշտոց անունով սուրբ երանելին...

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԴԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԵՍՐՈՊ — ՄԱՇՏՈՑՆ — ԱՄԱՐԱՍՈՒՄ —

...Եւ յանկարծ նորից աղմուկ–աղաղակ,
նորից՝ կոտորա՜ծ,
աւե՛ր, ա՜խ ու վա՛խ:
Անապարում է բռնակալն ինքը՝
Լենկթեմուրը նենգ,
ամէնից առաջ այդ վանքը խուժել...
Նա վաղուց արդէն լուր ունէր, գիտէր,
որ յունաց երկրի կայսեր դստեր «հովանու» տակ են
հենց այդ նոյն վանքից
բռնագրաւուած գանձ ու գանձանակ՝
գաւազանը սուրբ Գրիգորիսի
եւ խաչը ձեռաց—
մաքրափայլ ոսկի՛,
որի հայախօս ակների թիւը
հայոց գրերի
քանա–թուի հետ դաշն կը խօսի,
որ է՝ պատուիրուն գրին, Մաշտոցին,
եւ, առհասարա՛կ,
դպրութեա՛ն, լոյսի՛ն:
Ու խուժեց, ահա՛:
Կամարների տակ արեւոտ վանքի,
սուրբ մկրտութեան աւազանի մօտ սուրբ ջրով օծուն,
կնքում էր տէրը
նոր աշխարհ եկած,
թմբլիկ ու թխլիկ
ջուխտ պուլուլներով մի ամարասցու,

digitised by A.R.A.R.@

իսկ կողմին խոնարհ մէրիկն է նրա,
նայո՛ւմ է կնքուող իր առաջնեկին:
Թեմուր... Լե՛նկ-թեմուր... Թրի մի հարուած՝
եւ գլխատում է մէկտեղ երեքին,
հրոսակներով քաղաքն աւերում,
վանքը աւերում հրոսակներով, ,
ամէն, ամէն ինչ գոփում-աւարում,
ու քար չի թողնում նա քարի վրայ:
Թողնում-գնում է: Եւ եօթ օր չանցած, չանցած եօթ գիշեր,
մոլուցքը նորից այստեղ է բերում:
Ու ի՞նչ է տեսնում,
— Նահլա՛թ, սատանա՛յ...
Կամարների տակ հենց այն նոյն վանքի,
սուրբ մկրտութեան աւազանի մօտ
սուրբ ջրով օծում,
կնքում էր տէրը
(նոյն տէրը՝ ինքը)
նոր աշխարհ եկած,
թմբլիկ ու թխլիկ
ջուխտ պուլուլներով մի ամարասցու
(եւ մանչուկը նոյն՝ ջուխտ պուլուլներով),
եւ կողքին խոնարհ մէրիկն է նրա
(Ալլահի պատիժ նոյն հուրի-փերին),
նայում է կնքուող իր առաջնեկին...
Թեմուր... Նե՛նգ-Թեմուր... Թրի մի հարուած՝
եւ գլխատում է մէկտեղ երեքին,
հրոսակներով քաղաքն աւերում,
վանքը աւերում հրոսակներով,
ամէն, ամէն ինչ գոփում-աւարում,
ու քար չի թողնում նա քարի վրայ:
Եւ որ Ամարաս քաղքի ու վանքի
վերակերտուելու,
վերայառնելու
հրաշքը նորից չգայ աշխառաջ,
գինուորներին իր շարքի է բերում՝
որ հայոց վանքի
վանքից մինչ Արաքս,
որ հայոց վանքի
քարերը բոլոր թափեն գետի մէջ.
— Հայոց գետի մէջ շատ ենք հայ նետել,
թող այս հայագիր քարերն էլ հիմա
ջրի մէջ նրանց յուշաքա՛ր լինեն...
Վայրի մոլուցքն էր ծորում ծաղրանքից:

digitised by A.R.A.R.@

Եւ ապա նորից բողնում-չքւում է:
Եւ հօր օր չանցած,
չանցած հօր գիշեր,
մոլուցքը նորից այստեղ է բերում:
Կամարների տակ հենց այն նոյն վանքի,
սուրբ մկրտութեան աւազանի մօտ
սուրբ ջրով օծում,
կնքում էր տէրը
(նոյն տէրը՝ ինքը)
նոր աշխարհ եկած
թմբլիկ ու թխլիկ
ջուխտ պուլուլներով մի ամարասցու
(եւ մանչուկը նոյն՝ ջուխտ պուլուլներով),
իսկ կողքին խոնարհ մէրիկն է նրա
(Ալլահի պատիժ նոյն հուրի-փերին)
նայում է կնքուող իր առաջնեկին...
— Նահլա՛թ, սատանա՛յ...
Գլուխը առնում, բողնում-չքւում է,
ու հաւաքում է փէյղամբարներին
ու գիտուններին.
— Սա ի՞նչ հրաշք է...
Հօր օր, հօր գիշեր խելք խելքի տուած
ու գլուխ գլխի,
տքնում են երկրի փէյղամբարները
ու գիտունները:
Երբ լրանում է ժամը սահմանուած,
գնում են նրանք,
խօսում անհեթեթ ու անկապակից,
կցկտուր բաներ:
Եւ բռնակալի վնիռն է հնչում.
— Գլխատե՛լ դրանց...
Ու նրանց հետքով, նրանց ճամբէքով
գնում են բազում գիտուն-փէյղամբար,
գաղտնիքը սակայն,
առեղծուածը մեծ հանգիստ չի տալիս.
— Ի՞նչ անել, Ալլա՛հ...
Եւ պատուիրում է մի նոր գիտունի՝
հենց նոյն վայրկեանին ճանապարհ ընկնել,
հասնել Արցախայ երկիրը հայոց
եւ ամէն գնով գաղտնիքն իմանալ:
Գալիս գիտունը հօր օր, հօր գիշեր,
գիւղաքաղաքն է հասնում Ամարաս...
Իրիկնադէմ էր... Ու վանքի առաջ ծնրադիր էին

digitised by A.R.A.R.@

ստուերները մուգ
ու ծանրածաւալ:
Դէմքը՝ գորշ քաքաւ, միտքը՝ քողարկուած,
գիտունը կանգնեց ու հարցում արաւ
վանքից դուրս եկած մի շինականի,
թէ՝ ինչո՞ւ, ասէ՛ք, այսպէս ու այսպէս...
Մարդը հասկացաւ՝ բանն ինչ է,
գիտունի թեւից բռնեց ու տարաւ,
ցոյց տուեց վանքի քարերը բոլոր
եւ նրան ասաց.
— Մաշտոցի գիրն է ամէն մի քարի...
Ցոյց տուեց վանքի խաչերը բոլոր
եւ նրան ասաց.
— Մաշտոցի գիրն է ամէն մի խաչի...
Ցոյց տուեց հանդի ծառերը բոլոր
եւ նրան ասաց.
— Մաշտոցեան գիր է ամէն մի արմատ...
Եւ այս ամէնը,— շինականն ասաց,—
մեր հոգու մէջ են, ոգի՛ն են հայի...
Ժողովուրդը, որ տառեր է գրում անգամ իր քրին,
աշխարհում նրան յազթող չի լինի,
առաւել եւս՝
ժողովուրդն այդ չի՞ մնայ գերի...
Եւ վերադարձաւ գիտունը, պատմեց՝
այսպէս ու այսպէս...
Եւ այդ օրուանից
հայոց աշխարհի ոսոխները նեռ
երբ թոյնով-քրով
արշաւել են մեր սուրբ հոգի վրայ,
ոչ թէ միայն մեզ,
այլ մեր ծառերը,
այլ մեր քարերը,
այլ մեր վանքերը,
մեր հոգու պէս ջերմ
մեր հողն են անգամ զարկել-քրատել:
Բայց... միեւնոյն է,
դեռ ոչ մի քրից,
դեռ ոչ մի սրից հայը չի պարտուել,
վասնզի թուրը չի հասնի ոգուն...
Մեր բնոյթը մեր հոգից ենք առել,
եւ հողն Արցախայ, բնաւ էլ, հո՛ղ չէ,
իմաստնուքի՛ւն է,
հաւատի՛ հոգ է,

digitised by A.R.A.R.@

կացին էլ առնեն՝
արցախցու կող է,
եւ գուզար ամէն՝
բոնիարէժ պո՛ղ է։
Եւ սիրայօժա՛ր,
եւ սիրամեծա՛ր
բո՛ր սրտի բոց է՝
թէ առաքեալը Մեսրոպ Մաշտոցն է,
ժպիտ է ոսկեայ, շափիւղայ-շող է,
կարմիր որդա՛ն է,
թէ Մաշտոցի հետ
ինքը՝ Վարդա՞ն է։
— Քեզ բիւր փառք, Արցա՛խ, եզե՛ր անմուան
քեզ սէր եւ պատիւ,
եւ··· յաւերժութի՛ւն։

ՎԱՐԴԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Եթէ փորձենք մէկ նախադասութեամբ բնութագրել Յակոբեանի բանաստեղծութիւնների բովանդակութիւնը, ապա պիտի է ասենք, որ այստեղ ցայտում է ժամանակակից հայ մարդու հոգին՝ իր կարարտակուն ինքնատուն կրքով (Գրական թերթ, 1988, թիւ 17)։

ԱՂԱՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Մարգեղանում է բնութիւնը Վարդան Յակոբեանի երգերում, եւ դա ամէն մի գեղեցիկ հարթութիւն մէջ ուռնում է մի խոնարհութիւն, կարող ես ծնրադիր դառնիլ, մեծ սար Զիթարթիւ սեանիկ ու նոր վիճութիւն գուժարիկ դրան։ Ամէն ինչ հարթագոյն է, արցախարար (Հայրենիքի ձայն, 1988, թիւ 12)։

ՀՐԱՉԵԱՑ ՄԱՔԵՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ԱՂԱԲԱԲԵԱՆ

ԲՌՈՒՆՑՔ

— Երբ դեռ տղերքս չէին եկել, ձեռս բան չէր բռնում: Հիմա եկեղն էլ մտոս եմ, մատներս ուժ են առել: Ձեռս բռունցք է դառել, գերդաստանի բռունցքն է, ու այդ բռունցքն էսօր բան է բռնում, գերանդի է բռնում, ու թէ հարկ ըլի՝ կը պաշտպանի այս հողը, որ հայրենիք է կոչւում:

ԱՇՈՏ ԱՂԱԲԱԲԵԱՆ

Թալիշում ուրիշ ճաղարեաններ չկան: Այս մի տունն է, մի գերդաստանը: Կեանքը այնպէս էր դասաւորուել, որ Կոլեայի հինգ արու զաւակներից չորսն ապրում էին Հայաստանում: Բարգէնը՝ Նոյեմբերեանում, Սերժիկը՝ Արզնիում, Աշոտը՝ Հրազդանում, Վիտալին՝ Երեւանում: Եւ միայն Արթուրն էր մնացել գիւղում:

— Գատկերացնո՞ւմ էք, տարիներ շարունակ օջախը լիքն էր երեխէքի լաց ու ծիծաղով՝ իսկական հայի տուն էր: Զիմացանք աչքներս ոնց բացինք – փակինք՝ մէկ էլ տունը միանգամից դատարկուեց, մնացինք մարդ ու կին ու մէկ էլ Արթուրս: Ո՞նց կը լինի, երբ մարդու ձեռքի հինգ մատներից չորսը չկայ: Ձեռքը մի ճկոյթով բռունցք կը դառնա՞յ,— բարձրաձայն խորհում էր Կոլեան:

Առաջինը Թալիշից հեռացաւ Բարգէնը: Աւարտեց Երեւանի մանկավարժական ինստիտուտը: Դիմեց ռեկտորատ, մինիստրութիւն, որ իրեն Ղարաբաղ գործուղեն, սակայն նրա առաջ բիւրոկրատի պատն էր:

— Մենք Ղարաբաղի համար չենք մատնապէս պատրաստում,— ասացին:

Ցեռոյ Բարգէնը էլի չատ դռներ ծեծեց, բայց՝ ապարդիւն: Գործուղեցին Շամշադին: Զգնաց: Թողեց ամէն ինչ եւ եկաւ Թալիշ: Մի օր էլ Հայաստանից Մարտակերտի շրջժողկրթբաժնի վրայ գրութիւն եկաւ, թէ Բարգէն Ճաղարեանը լքել է դասերը, գործ չտաք:

Ճաղարեանների ընտանիքում գործը լքող չեն դաստիարակում: Եւ վիրաւորանքը կուլ տալով, Կոլեան որդուն համոզեց յետ գնալ: Բարգէնը աշխատանքի անցաւ Նոյեմբերեանում: Աշխարհագրութիւն էր դասաւանդում: Նրա արշաւախումբը յայտնի դարձաւ Հայաստանում, մասնակցեց միութենական մրցումների: Այդտեղ էլ ամուսնացաւ Սուսանի հետ: Երկու դուստր ունի՝ Անին ու Վանուհին: Շրջկենտրոնում տուն ստացաւ ու հիմնաւորուեց: Մօտաւորապէս նոյն ճակատագրով Սերժիկը բնակութիւն հաստատեց Արզնիում, Աշոտը՝ Հրազդանում, Վիտալին՝ Երեւանում:

Եկաւ 1988ը: Նուիրական երազանքի համար ոտքի ելած արցախեան ժողովուրդը դառնօրէն համոզուեց, որ իր որդիները դրսում մի քանի անգամ աւելի չատ են, քան թուն Արցախում:

Այդ օրերին էր, որ Նոյեմբերեանում հանդիպեցի Բարգէնին, խիստ ոգեւորուած էր, նաեւ՝ նեարդայնացած:

— Գնում եմ մեր երկիրը, ասաց,— հիմա իմ տեղն այնտեղ է:

Ցաջորդ օրը մեկնեց Արզնի ու Հրազդան՝ հանդիպելու եղբայրներին: Զորս

digitised by A.R.A.R.@

եղբայրներով որոշեցին վերադառնալ հայրենի օջախ։

Իրիկուն էր, երբ հարսներով, երեխէքով Թալիշ մտան։ Հայրը բակում քարին նստած թունդ-թունդ ծխում էր։ Զկանգնեց, դէմ ու առաջ չնկաւ, չկարողացաւ Միայն ձայնեց կնոջը.

— Նունիկ, խոխէքը եկան։

Եւ տղերքը առաջին ու միակ անգամ իրենց հօր աչքերում արցունք տեսան...

***

Թիթ օղին թունդ էր, տանտիրոջ խօսքերը՝ աւելի։ Հարսները սեղանը փորձում էին է՛լ աւելի հարստացնել մառանի գունչուպուճախում պահած բարիքներով։ Կոլեան շարունակում էր խօսքը.

— Երբ տղերքը յետ եկան, հինգ աղջիկ-թոռ ունէի։ Եկան, օջախում անդրանիկ արու զաւակը ծնուեց, անունն էլ զօրավարի պատուին Անդրանիկ դրի։

Ուշ գիշեր էր, երբ պառկեցինք քնելու։ Վաղ առաւօտեան աքլորականչի հետ ոտքի վրայ էինք։ Բակից խօսակցութիւններ էին լսւում, տղերքը գիշերուայ «հերթապահութիւնից» նոր էին վերադարձել։ Վիտալին եւ Արթուրը նստարանին նստած ծխում էին։ Սերժիկը գերանդի էր սրում։

— Էսօր խոտհնձի ենք գնում,— ասաց։

— Գիշերը հանդի՞ստ էր,— հարցրի։

— Հա, այս գիշեր հանդիստ էր,— կարճ կապեց Սերժիկը։

Ցեռոյ տղերքը ցոյց տուեցին այն հողամասերը, որ իրենք ստացել էին տուն կառուցելու համար։ Աշոտն արդէն իր հողամասում այդի էր դցել, տնատեղը հօր տրակտորով հարթեցրել։ Մէկ տարի անց գիւղի այս թեք լանջին, ուր դեռ փուչ ու տատասկ է աճում, կը կառուցուի չորս տուն՝ իրենց մէջ առնելով հայրական օջախը։

Եղբայրներից Բաբգէնը գիւղում չի ապրում, աշխատում է Ասկերանի չրջանի Բաղաբայի միջնակարգ դպրոցում.

— Երբ գիւղ եկայ ու համոզուեցի, որ Թալիշում աճ կայ, որոշեցի գնալ այն գիւղերը, որտեղ հայերը քիչ Թիւ էին կազմում,— ասաց Բաբգէնը։ Հիմա նա դասաւանդում է ե՛ւ Բաղաբա, ե՛ւ Արցախաշէն, ե՛ւ Խանցք գիւղերում։ Այստեղ գալու առաջին ամիսներին ժողկրթբաժնի վարիչ Ալեոշա Գարրիելեանի, Բաղաբայի դպրոցի դիրեկտոր Արմէն Ավանէսեանի հետ որոշեցին ութամեայ դպրոց բացել Խանցքում, ուր միայն մինչեւ երրորդ դասարան էին պարապում։ Հիմա արդէն Խանցքն ութամեայ դպրոց ունի։

... Օրեր են անցել, վերադարձել եմ Հայաստան, բայց ականջներս մէջ եկեղեցու զանգի պէս դեռ հնչում են Կոլեա Ճաղարեանի խօսքերը.

— Երբ դեռ տղերքս չէին եկել, ձեռս բահ չէր բռնում։ Հիմա հինգն էլ մօտս են, մատներս ուժ են առել։ Ձեռս բռունցք է դառել, գերդաստանի բռունցքն է, եւ այդ բռունցքն էսօր բահ է բռնում, գերանդի է բռնում, ու թէ հարկ ըլի՝ կը պաչուպանի այս հողը, որ հայրենիք է կոչւում։

Գիւղամիջում մենք սպասում էինք Մարտակերտ մեկնող աւտոբուսին։ Կոլտնտեսութեան աւտոմեքենաները բանուորներին աշխատանքի էին տանում։ Ուղղակի զարմանալ կարելի էր՝ այդ օրն աւելի քան հարիւր տղամարդ էր գործի դուրս եկել։ Թալիշ բերող հանապարհին առաւօտի ցոլքեր էին, թւում էր, թէ այդ ցոլքերի միջով գալիս ու գալիս են գիւղի հեռացած որդիները։ Գալիս են բռունցք դառնալու...(«Գրական թերթ», 1989, թիւ 38)։

ԱՇՈՏ ԱՂԱԲԱԲԵԱՆ

(հատուած)

digitised by A.R.A.R.@

ՄԵՐ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Համբերել ենք հազար տարի
Եւ աւելի,
Համբերել ենք, նմանուելով
Այն մեծ սարին,
Որի գլխին ձիւն է մաղում
Սառը քամին,
Իսկ այդ պահին,
Իսկ այդ պահին
Փոթորկւում է
Սարը ներսում
Եւ ուզում է այնպէս ճչալ,
Որ սարսռի սիրտն աշխարհի:

ՀԱՅԿԵԱՆ ՆԵՏԸ

Մեր պատմութեան սկիզբն, այո,
Սկսուել է Հայկեան նետով,
Ու երկարել,
Ու երկարել
Սերունդների անվերջ երթով:
Հերթը հիմա մեզ է հասել,
Ոչ մի ատուած մեզ չի ների,
Թէ որ նետը,
Հայկեան նետը
Չփոխանցենք սերունդներին:

ՀՐԱՉԵԱՑ ԲԵԳԼԱՐԵԱՆ

Այրարատի գրական կոմիտէի կազմակերպութեան 1990 թուականի «Նորուոյ յուսոյի գրքի» մրցանակներին Ազգային տուն մրցանակը շնորհուած է Հրաչեայ Բեգլարեանին՝ «Մարիամ թուիր» մանկական գիրքի համար («Գրական թերթ», 1990, թիւ 48):

Ղարաբաղցին ազգի է ընկնում իր աշխատասիրութեամբ, յամառութեամբ, քաջութեամբ, հպարտութեամբ, միհանձնութեամբ, ինքնասիրութեամբ, ճշմարտախօսութեամբ, հաստատակամութեամբ: Նա հաւատարիմ եւ անդուլաճան ընկեր է, բնութագրւում է հայրենասիրական բարձր կպացու մեկով: Ղարաբաղցի հայի կերպարը չատ դիպուկ է բնութագրուած այս լեռնաշխարհի բանաստեղծ կաւակի՝ Հր. Բեգլարեանի բառերով ու նոյն լեռնաշխարհի մէկ այլ կաւակի՝ Ալեքսէյ Հէքիմեանի երաժշտութեամբ ստեղծուած հետեւեալ երգում («Լեռնային Ղարաբաղ», Երեւան, 1990).

ՍԵՐԳԷՅ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂՑԻՆ

Պատուել գիտի միշտ իր եիւրին,
Գիտի՛ գինը աղ ու հացի.
Միշտ հիւրասէր ու միշտ բարի —
Մի՛շտ սրտաբաց ղարաբաղցին:

Ո՞ւր էլ լինես, ի՛մ բարեկամ,
Դու նրա հետ ընկերացի՛ր,
Լաւ ընկերոջ համար՝ անգամ —
Կեա՞նքը կը տայ ղարաբաղցին:

Կուռ՛ւմ լինի, աշխատանքո՛ւմ՝
Խիզախո՛ւմ է ինչպէս արծիւ,
Վաստակն արդար, խի՞զճը մաքուր,
Արդարադատ ղարաբաղցին:

Մշակ է նա ու շինարար.
Բայց... հասարակ մարդ մի կարծիր —
Գիտնական է ու զօրավար
Բազմավաստակ ղարաբաղցին:

Խաղաղ է նա, համբերատար...
Բայց գու հոգով թէ դառնացրիր —
Ամպի նման կը որոտայ
Շանթ ու կրակ՝ ղարաբաղցին...

digitised by A.R.A.R.@

Արցախի գրական կայմանկերպությունն 1990 թվականի «Մարտ» յուսալի ամսագրի էջերին մշակված է Ռոբերտ Եսայանի՝ «Ցենակտեր» բանաստեղծությունները ժողովածուին համար («Գրական թերթ», 1990, թիվ 48)։

●

Լեռնային Ղարաբաղից Ռոբերտ Եսայանի պոեզիան արժանի է սեւեռուն ուշադրության։ Այն նրա հասակակիցների կողմից իսկույն թարգմանուեց ռուսերէն ու հրապարակուելու երաշխաւորուեց մոսկովեան ամսագրերում։

Հայ մշակոյթը իրաւունք ունի հպարտանալու իր զաւակով։ Խորհրդային ժողովուրդների պոեզիայի երկնակամարում յայտնուել է եւս մի աստղանդ («Սովետական Ղարաբաղ», 1989, թիվ 139)։

ՊԵՈՏՐ ԿՈՇԵԼ

ԽՍՀՄ գրողների միութեան անդամ

ԱՐՑԱԽ

Երազի քարայրներից յառնեց հայոց ոգին
Ու մեզ ալեկոծեց կարօտով նախնական,
Ցառնեց՝ որպէս այն հին նետի սլացքն Հայկի,
Ցաւը ցաւով բեկուեց, բայց մենք... ամբողջացանք։

Պիտի ապրենք յոյսի պաշարներով զնգուն,
Գգուենք վահանի պէս դարին խենթացնող,
Երբ հաւատն է ապրում ձիւն երազի խորքում,
Վրէժ պիտի առնենք միայն... օրօրոցո՛վ...

Պիտի մեր շարքերը խտացնենք այնքան,
Ինչքան ծառերն են վեհ բառի մէջ հայրենիք,
Որ մեր շնչից հալուի ձիւնը այն սուրբ լերան,
Որ արիւն է ճերմակ ու բողոք է քարէ։

Ազգահաւաք կանչ է Արցախն աստուածային,
Այդ կանչի մէջ Հայկն է իր աղեղը լարում,
Երկրաշարժի վէրքն է փակւում այն կանչի մէջ,—
Չկայ ուրիշ հաւատ, չկայ ուրիշ այրում...

ՌՈԲԵՐՏ ԵՍԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԺԱՆ ԱՆԴՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գեղեցիկ, հմայիչ, խոհուն պատանի էր։ Աւարտելով Շուշիի մանկավարժական ինստիտուտն ու աշխատանքի անցնելով «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրութիւնում, շուտով դառնում է մարզի ճանաչուած մտաւորականներից մէկը։ Ակտիւօրէն մասնակցում է մշակութային կեանքին, հանդէս գալիս գրականութեան, թատրոնի հարցերին նուիրուած յօդուածներով ու դասախօսութիւններով, որոնք յատկանշւում են առաջադէմ հայեացքներով, լայն իմացութիւններով եւ քննական վերլուծութեամբ։ Ապա առաջադրւում է բարձր պաշտօնի՝ մարզխորհրդի գործկոմի կուլտուրայի վարչութեան պետ։ Այստեղ ժան Անդրեանը մեծ ջանքեր է ներդնում մարզի ազգային մշակոյթի գործը նորոգելու, ակումբներ, գրադարաններ, թանգարաններ, երգչախմբեր կազմաւորելու ուղղութեամբ։ Գատմում էր, թէ բիւրոկրատական ինչպիսի քաշքշուկների ու մղձաւանջային խոչընդոտների է ենթակայ իր ամէնօրեայ աշխատանքը եւ ինչպիսի գոհէրկ կամայականութիւններով ու տգէտ ազդամոլութեան կապանքներով է ծանրացած ամենասովորական հարցի լուծումը։ Եւ դրանցից մէկը ճակատագրական եղաւ։ Ադրբէջանցի վերադաս պաշտօնեան յուշարձանների պետական պահպանութեան ցուցակից ջնջում է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, պատճառաբանելով, թէ իմաստ չունի պահպանել մի յուշարձան, որտեղ «քարոզուել են կրօնական յետադէմ գաղափարները»։ «Իսկ ի՞նչ է, ձեր մեչիդներում մարքսի՞զմ էին քարոզում»,— հակադրւում է Անդրեանը։

Սա արդէն սոսկ համարձակ պատասխան չէր, այլեւ յանդուգն արարք, որ չէր կարող անհետեւանք մնալ։ Եւ կարճ ժամանակ անց վարչութեան պետը հեռացւում է աշխատանքից։ Բայց դա սկիզբն էր միայն։ Շուտով մարզի ղեկավարութիւնն անցնում է Ալիեւի դրածոյ Եէորկովին, որը յանձնառութիւն ուներ մարզի հոգեւոր մթնոլորտը «մաքրելու» անցանկալի խմորումներից։ Այդ տգէտի «տեսական» հայեացքներն ամփոփուեցին կուսակցութեան մարզային պլենումին տուած նրա զեկուցման մէջ, որն ամբողջապէս ներծծուած էր մուսաւաթական պանթուրքիզմի հակահայկական բարբաջանքներով։ Ահա այստեղ է, որ նա թիրախ դարձրեց ժան Անդրեանին, վկայաբանելով նացիոնալիզմի, դաշնակիզմի եւ հակախորհրդային այլ միտումների առկայութիւնը մարզի մտաւորականութեան շրջանակներում։ Հետեւանքներն ինքնին ենթադրելի են, ժան Անդրեանը հեռացւում է կուսակցութիւնից եւ դրւում բանսարկութիւնների, հետապնդումների, սպառնալիքների այնպիսի անելանելի կացութեան մէջ, որ նա ստիպուած թողնում է Ղարաբաղը եւ ապաստան գտնում Երեւանում։ Այստեղ նա բանասիրութեան գծով պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա, վարում «Խորհրդային մանկավարժ» ամսագրի պատասխանատու քարտուղարի պաշտօնը, ապա դասախօսական աշխատանքի անցնում պոլիտեխնիկական ինստիտուտի նախապատրաստական բաժնի հայոց լեզուի եւ գրականութեան ամփոփումում, հրատարակում «Մեր գրական օջախը» եւ «Միխայէլ Կորգանեան»

digitised by A.R.A.R.@

գրքերը՝ արցախեան պոեզիայի ու թատրոնի մոտիւներով։

Խորին տագնապներով էր վերապրում արդի ազգային շարժման իրադարձութիւնները, անձնական հպարտութեամբ էր համակուած «Ա։ հտեաց երկիր» բնօրրանի հանդէպ։ Վերջին ամիսներին կանխագծելով անխուսափելին, տեղափոխւում է Սանէփանակերտ, բայց արդէն՝ անհաղորդ երկրային կեանքի «կայ ու չկայ»։ Եւ այդպէս էլ նա աւանդում է հոգին՝ հայրենի հողի «դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր»։

Նրանք, ովքեր մօտիկից ճանաչում էին Ժան Անդրեանին, իրենց յուշերում մըշտապէս կը պահեն նրա մարդկային անփոխարինելի հմայքն ու ազնուական նկարագիրը՝ հայեացքին մէջ մի անանց թախիծ եւ շուրթերին մի անշշուկ հարց, թէ, այնուամենայնիւ, «ինչո՞ւ այսպէս ամարդաբար է կառուցուած աշխարհը» («Գրական թերթ», 1989, թիւ 44)։

ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆ

***

Պիտի ասեմ, որ Ղարաբաղի պատմա-մշակութային յուշարձաններից չի բերում յատկապէս եկեղեցիների բախտը։ Դրանք բոլորն էլ «հեղինակաւոր» յանձնաժողովների կարծիքով գիտական որեւէ հետաքրքրութիւն ու արժէք չեն ներկայացնում եւ պահպանութեան ենթակայ չեն։ Իսկ Շուշուայ միակ մզկիթը, պարզւում է, անչափ արժէքաւոր է եւ վերածուել է թանգարանի։ Բաքուից մինչեւ անգամ թուրք է ստացուել, ուր մասնաւորապէս նշուած է հայ եկեղեցիներու խաղացած մասնաւոր դերը, այն է, որ քարոզել է կրօն, որը հաշիշ է ժողովրդի համար։

Այդ թուղթը կարդում է մարզխորհրդի մշակութային վարչութեան պետ, բանասիրական գիտութիւնների թեկնածու Ժան Անդրեանը եւ, իբր, ասում են, կատակով նկատում է. «կարելի է կարծել, թէ Շուշուայ մզկիթում մարքսիզմ է պրոպագանդուել»։

Է, կէորկովին էլ ի՞նչ էր պէտք հերթական «ազգայնամոլի» հետ հաշուեյարդար տեսնելու համար։ Ժան Անդրեանը հեռացւում է աշխատանքից, վտարւում է կուսակցութեան շարքերից։

Ղարաբաղում ահա այսպէս են արմատախիլ անում «հայկական նացիոնալիզմը»(«Նորք», 1991, թիւ 2)։

ԼԻՈՆԻԴ ՀՈՒՐՈՒՆՑ

digitised by A.R.A.R.@

ՂԱՐԱԲԱՂ

Դու՝ երկինքն իմ հոգու,
Դու՝ իմ խիզճ մաքուր,
Քո ամպի մէջ, ոգում՝
Ես թափուելիք անձրեւ,
Քու անուդից անջատ՝
Անդիմական, անձրեւ...
Երաշտերիս գոլեռով կանաչ իմ լեռ,
Իմ լեռ արդար։
Ես քո պարզկայ ակունքներից ելած առու՝
Զէմ նեղբռուում երբեք ծով չընկնելու մաքից,
Քո խոտերի փոչին լուանալով անդամ...
Լաւ եմ զգում ես ինձ։
Ես՝ քո հանդի ճնճղուկը փոքրիկ,
Որ ցրտերին երբեք թեւ չի շրջում հարաւ.
Նախընտրելով մրսել ձիւների մէջ՝
Նախընտրում է մնալ... քո քիւրի տակ։

ՆՈՒԱՐԴ ԱՒԱԳԵԱՆ

✱

Մարզկոմի առաջ հաւաքուած տասնեակ հազարաւոր միտինգաւորները անդիմում պահանջում էին՝ մեցուում, իսկ այդ յոգուածով ինձ առաջարկուում էր ցեխ շպրտել նրանց երեսին, ասել՝ դուք ճիշտ չէք, մի խարխլէք այն ադրբէջանի կազմում Լեռնային Ղարաբաղի մնալը յոգուածում համարուում էր մեկ ճիշտը, լենինեանը, երկրամասի «ծաղկումը» համեմուում էր հարիւրաւոր թուերով։

Ես կորուկ հրաժարուելի տպագրել թերթին հրամցուող այդ կեղծիքը եւ դուրս եկայ մարզկոմից։

Սակայն, մէկ է, նորից կանչեցին։ Այս անգամ գնացինք ամբողջ խմբագրիայով։ Գահանը նոյնն էր՝ անպայման տպագրել յոգուածը։ Ինչ մեթոդների ասես, որ չէին դիմում՝ խնդրանքից մինչեւ ահաբեկում։ Միայն մէկը՝ Ասատովը, հենց սկզբից վերցրել էր ըստ իրեն միակ ճիշտը՝ ահաբեկման տակտիկան։ Եղաւ մի պահ, երբ նա դիմեց իր գինանոցի վերջին միջոցին եւ ոչ թէ ասաց, այլ մեր երեսին շպրտեց հետեւեալ խօսքերը.

— Գիտէ՞ք, որ մարզի սահմանամերձ Ադամի շրջանում հարիւր հազարաւոր ականներ են կանգնած՝ պատրաստ ներխուժելու Ղարաբաղ։ Դա է՞լ ձեզ ոյժնչ չի ասում։

— Ասում է, ինչպէս չի ասում,— շրջուելով դէպի կուռք պատրաստ հիւրը, ասաց խմբագրութեան կրթութեան բաժնի վարիչ, բանաստեղծուհի Նուարդ Աւագեանը։— Պատրաստ են, որովհետեւ պատրաստողները դուք էք։ Բայց մոռացել էք մի բան. հիմա 1915 թուականը չէ... («Նորք», 1989, թիւ 12)։

ԵՂԻՇԷ ՄԱՐԳՍԵԱՆ

ԱՆՔՆՈՒԹԻՒՆ

Թող չքուայ բառս անզօր,
Եւ չքուան մտքերս խորք,
Անմնութեան մէջ եմ այսօր...
Անձրեւի հետ հողը մտած հատիկի պէս։
Իմ խորքերում ծլում է արդ
Մի սուրբ աղօթք՝ քեզ առաքուած.
Ինչ գարման եմ ես քո ցաւին,
Թէկուզ այստեղ, քեզ մնացող,
Թող գրչի տէր, թող գրքի տէր՝
Բայց պարտական կերած հացով...
Քեզ պահողը մշակն է լոկ, մշակն, այո,
Որ եղել է ու կը լինի գերաստուածը
հողի հայոց։
Անմնութեան մէջ եմ այսօր,
Անմնութիւն է սոսկալի.
Հոգիս մերկ է նախամարդու մարմնի պէս
Ու խոցոտուած հազար տեղից,
Շուրթին առած ցաւը լեղի.
Պատից հանուած մեր այս քարը
Ե՞րբ պիտի, երբ տեղը դրուի...
Ով է տեսել՝ առանց կռուի
Մարդն իր տուն ու տեղը լքի...
Տեղահան եմ լինում իմ մէջ
Արմնի պէս ծանր մտքից։
Անմնութեան մէջ այս անտակ
Ինձ օրօրելն իմաստ չունի,
Քո բախտն ինձ կարմիր մանդատ՝
Ես մտնում եմ ատեան գատի.
Մեր այս գորդեան հին հանգոյցը,
Զբացուող ու պինդ հանգոյցը
Ով պիտ հատի,
Ո՞վ պիտ հատի, եթէ ոչ մենք...
Բնօրրանի մահը գիտենք, սեւ կնիք է,
Զորանում են արմատները՝
Զորանում է ծառը ինքն էլ...
Այնուհետեւ չի լինելու թողնել-գնալ,
Մեր գնալը՝ ճշան մահուան
Եւ մնալն է փրկութեան յոյս,
Զի՛ լինելու ցաւին ընդդէմ անբառ մնալ,
Զի թէ լռենք՝ կը դատարկուի Տունը,
հարկաւ,
Կը նմանուի հարս-չքերի,
Եւ նոր օրն էլ հարսի համար...
Երկուսնի տեղ անմնութեան ցաւ կը բերի։

ՆՈՒԱՐԴ ԱՒԱԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԴՐԱՆՈՎ ԵՄ ԵՍ ՄԻՇՏ ՀՊԱՐՏ...

Քեզ չլքեց լեռն՝ իր պարսով,
Սատար եղաւ ձիգ հաւատիդ,
Եւ երկինքդ՝ հոգսից պարզուող,
Սպեղանի էր ճակատիդ։

Քեզ չլքեց աղբիւրն անլուռ,
Ակունքիդ բոյրն առած երգով,
Եւ հոգսերիդ բեռը սառոյց
Առաւ ուսին՝ ծարաւ հերքող։

Քեզ չլքեց ծառը իմ տան,
Դուռդ՝ հանգոյն անձնազրի,
Որպէս ապուպապու մաղթանք,
Աչքը՝ ապրող երգ ու գրիդ։

Եւ հիմա էլ կանգնած լեռան
Ու ծառիդ պէս՝ երգով անբառ,
Թող խոռվքդ առնեմ ձեռամբ,
Իմ հիճաւուրց տուն Ղարաբաղ...

Դու տեղահան չեղար, իմ տուն,
Ժամանակի հոգմերի տակ,
Մի արեւոտ յաւերժութիւն
Քո եզերքի ծաղկմամբ գտած։

Դու տեղահան չեղար, իմ դուռ,
Ինձ միշտ կանչող մայրենի աչք,
Հոնոցիդ ասքերն անլուռ
Ունկիս պահած որպէս հրաշք։

Դու տեղահան չեղար, իմ ծառ,
Ապուպապու շահ թթենի—
Միշտ տեղացիր ինձ պէս՝ քրծուած
Իմ հաւատով անհատնելի։

Ես տեղահան չեղայ՝ էլ ի՞նչ—
Ապրելով հանց ծառ, դուռ ու պատ,
Դրանով եմ անցեալելի,
Դրանով եմ ես միշտ հպարտ։

*
* *

Իմ մէջ կարօտների երանգներ են կաթում
Քո արեւից, հողից եւ կաթնահունց հացից,
Որ ամէն օր քեզնով լցուած գամ տուն,
Որ ամէն օր տնից ելնեմ արեգնավարք,
Գնամ տրուեմ հողի՛դ, ջրերիդ ու մարդկանց,
Եւ բոյրերով ցրուեմ շռայլ
Ու անհաւաք
Եւ բոյրերով նորից լցուեմ այնքան։
Եւ քո՝ իմ մէջ կաթող որդան երանգներով
Նկարեմ քեզ՝ ծաղկող իմ աչքերի լոյսով,
Ինչպէս կաս՝ բարգաւան,
Ու անթերի,
Իմ երազի նման՝ երգով հիւսուող։
Իմ Ղարաբաղ աշխարհ, բացուեմ մաքրամաքուր,
Ինչպէս հանքն է բացուում ծնող հողից...
Թող քեզ մնան գանձերն իմ մտքի եւ նոգու,
Իսկ արարման
Տառապանքը՝ թող ինձ...

ԷՌՆԵՍՏ ԵՍԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Ի ԼՈՒՐ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Դու Արցախն ես-
լեռնոտ, քիրտ ու քնքուշ,
դու Արցախն ես-
ազնիւ ու միամիտ,
քեզնով հիացողներ շա՛տ են եղել,
եւ քեզ ուրացողներ - քիւրապատի՛կ:
Սակայն անկաշառ մղումով մի
Դու յենուել ես միայն նրանց ուսին,
ովքեր ո՛չ հիացել եւ ոչ ուրացել են,
այլ քո երազներից հիւսել են կեանքը:
Նրանք քո ջղերն են, քարերն ու հողը,
նրանք քո վաղուայ փայլն են մաքուր,
ինչպէս Օրին պայծառ,
ինչպէս Կնունեանցը,
որոնց համար չկայ մոռացումի փոշի...

digitised by A.R.A.R.@

Դու Արցախն ես–
փոքրիկ մի Հայաստան,
Քո անկրկնելի քա՛յլք ու ծայնով,
Օ՛, քեզ հայաստանեան սէրե՛ր են պլտք,
որ շողշողայ միշտ անուշդ ջինջ։

Դու Արցախն ես–
փխրուն մի արարած,
ա՛խ, քո արցունքները սրբել կարող է
միայն Մա՛յրդ բարի,
ուրիշ – ոչ ոք…
դու թարգմանւում ես
պարզ արդարութեան բոլոր կանոններով,
փոքրիկ քայլդ իսկ–
խորհրդանշա՛ն,
խղճի սահմանները անվերջ ճշգրտող։–

…Արցախ, այսինքն հայի մաքառում
ու երազ դժուար,
եւ սփոփանք վառ։–
Նրանցից ո՞րն է պահում քեզ մաքուր
ու նենգ աղճատման յաւէտ չենթակայ…
Արցախ, այսինքն ձուլուածք հնամեայ՝
հայեցի բախտի ո՛ղջ մասնիկներով
եւ փայլում է նա առանց աղօտման
հողմերի քովում, անդորր վայրկեանին…
Արցախ – հոծ պարիսպ
սեւ կրքի առաջ,
որ մոլեգնումի ուժով վարակուած,
կրկին զարկւո՛ւմ է սրտիդ նախնիներով,
բայց դու պատկե՛ր ես անսահմանութեան
եւ յամառութեան դողանջ վիթխարի,
Արցախ – անյայտի կոկորդը սեղմող,
որ կամենում է կանչերդ մարել։–
Բոլոր բառերդ արմա՛տ են գտնում
Հայաստան երկրի վառուող հոգու մէջ։–
ո՞վ է քեզ երում խորքը լռութեան,
ո՞վ է մտմտում տենչանքդ կեղծել։–
Արցախ, ասել է՝ ճամբայ անվախճան,
որ արդարութեան տարածքն է տանում։
Այդ ճամբից դուրս են շպրտուել վաղուց
ուրուականները ստի ու ահի…

(*Սուեփանակերտ*) ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԳՐԱԿԱՆ ԱԾՈՒՆ

Այն բոլոր հայերի պատկերացում մեջ, որքան ինձ յայտնի է, ովքեր գոնէ նու ազագոյն չափով տեղեակ են հայոց պատմու թեան ու հայ իրականու թեան առաւել հիմնական տուեալներին, «Ղարաբաղ» եւ «ղարաբաղցի» արտայայտու թիւնները անպայման կապուած են կենսական տոկու նու թեան, մարտունակու թեան ու յարատեւ պայքարի ըմբռնումների հետ: Ընդ սմին, այդ համբաւը չի պայմանաւորուած որեւէ առանձին պատմական ու արտասովոր ճակատամարտով, այլ ներկայանում է իրրեւ ինքնին հասկանալի ընդհանուր իրողու թիւն: Երեւի նրա՛ համար, որ Արցախի ու արցախահայու թեան յիշեալ հաւաքական յատկու թիւնները զրաւորուել են դարեր շարու նակ, անընդհատ, ամբողջ պատմու թեան ընթացքում, երբ մարդիկ իրերի բերմամբ հարկադրուած լինի կոնուել «միշտ պատրաստ» վիճակում:

Արցախահայու թեան մարտունակու թեան համբաւը այնքա՛ն է տարածուած, որ մի պահ տուէրի տակ են մնում ու համարեա՛ անտեսում նրա միւս ոչ պակաս ակնյայտ յատկու թիւնները մշակոյթի՝ արու եստի, գրականու թեան եւ գիտու թեան ասպարէզներում: Մինչդեռ այդ ուղղու թեամբ եւս արցախահայու թիւնը իր որոշակի ներդրումն ունի հայ իրականու թեան մէջ: Բայց որովհետեւ խորհրդահայ ժամանակակից հետազօտական միտքը գործում եւ զարգանում է ոչ թէ անպայման ինքնուրոյն ու նպատակասլաց ծրագրումների հունով, այլ փերուստ չնորհուած պարապայական հնարաւորու թիւնների սահմանափակ շրջանակում, հայկական բաղկացուցիչ երկրամասերը եւս իրենց հերթին տուժում են, յաճախ մնալով անճանաչ, անդէմ ու անդիմագիծ, լքուած դերում:

Այդ կացու թիւնը յայտնի է շատերի: Վերջին տարիներս հայաստանեան մամուլում նոյնիսկ առաջարկուեց, որ գոնէ այսու հետեւ ուշադրու թիւն դարձրի մշակոյթի գործիչների իր տեսակի տեղագրական քարտէս կազմելու վրայ: Այսինքն՝ ցոյց տրուի, թէ որ բնա–պատմական շրջաններից ինչքա՛ն եւ ինչպիսի՛ մշակու թային գործիչներ են բիւել, որպէսզի գիւրանայ մշակու թային ընդհանուր վիճակագրու թիւնը եւ հետազօտական որոնումներու թիւնը: Եւ, իսկապէս, դա միանգամայն ցանկալի է՝ ոչ թէ ինչ–ինչ մասնակի փառաբրաբական հովեր սնու ցանելու, այլ հենց գիտու թեան, կենսա–մշակու թային օրինաչափու թիւններ յայտնաբերելու համար, եթէ դրանք կան: Ուրեմն, երբեւէ այդպիսի մի բազմակողմանի աշխատանք կատարուելու դէպքում կը պարզուի նաեւ արցախահայու թեան մշակու թային լրիւ պատկերը, պատմական ու այժմէական հաւասար տուեալների օգնու թեամբ:

digitised by A.R.A.R.@

Ի հարկէ, ինչպէս ամբողջ Հայաստանում ու աշխարհի որևէ այլ քաղաքակիրթ երկրում, այնպէս էլ Արցախում, մշակոյթի բաղկացուցիչ մի դերը չեն ներկայացել նոյն ծաւալով ու խորութեամբ, պատմական իրար յաջորդած այլեւայլ փուլերի ընթացքում: Եթէ մանաւանդ կերտուածքային ու կոթողային արուեստը, ասենք, կարող է դրսեւորուել նաեւ գրականութեան ու գիտութեան բացակայութեան դէպքում, վերջիններս պայմանաւորուած են հասարակութեան զարգացման առաւել բարձր մակարդակով, համապատասխան նախապայմանների ու նախապատրաստական աստիճանների առկայութեամբ:

Ինչի՞ց կարելի է որոշել Արցախի անցեալի քաղաքակրթական պատկերն ու մթնոլորտը: Պարզ է՝ առաջի հերթին հնութեան յուշարձանների քանակից ու որակից, որոնք փոուած են երկրամասի մի ծայրից միւսը, կանգուն կամ աւերուած վիճակում: Ու նաեւ, բնականաբար, մատենագրական վկայութիւններից, որոնք պարունակում են ժառանգութիւն մնացած պատմագրական եւ այլ երկերում: Ինչպէս եւ բանաւոր ճանապարհով սերնդից սերունդ ու բերնէ բերան փոխանցուած աւանդութիւններից ու պատմութիւններից: Այսինքն՝ այն ամէնից, ինչ որ առհասարակ կարող է օգնել պատմութիւնը վերականգնելու, իմաստաւորելու եւ հասկանալու գործին:

Արդ, պատմական մատչելի վկայութիւնները անուերկբայօրէն ցոյց են տալիս, որ արցախահայութեան անցած քաղաքակրթական ճանապարհը ըստ էութեան համահայկական ընդհանուր ճանապարհի բաղկացուցիչ օղակներից մէկն է, տեղական համապատասխան գունաւորումներով հանդերձ: Ինչպէս որ երկրամասի հայութիւնը համազգային պատմութեան մէջ կարող է տեսնել նաեւ իրեն, այնպէս էլ համայն հայութիւնը երկրամասային պատմութեան մէջ կարող է գտնել իր բարոյական ներկայութիւնը, հոգեւոր հարազատութեան օրէնքների համաձայն: Ուրեմն, առկայ է քաղաքակրթական որոշակի ընդհանրութիւնը ամբողջի եւ նրա մաս կազմող բաղկացուցիչ օղակների, տուեալ դէպքում Արցախի համար, որքան էլ որ անցած ճանապարհները բերուած ու տարբերութեամբ հատուածներ աւելնան, հանգամանքների բերմամբ:

1988ի արցախահայութեան ինքնորոշման շարժման կապակցութեամբ, ադրբէջանցի ծաւալապաշտներից ոմանք ի լուր ամէնքի յայտարարեցին, թէ Ղարաբաղը ոչ մի դէպքում չի կարող հայկական լինել, քանի որ, իբր, «ադրբէջանական մուսուլմանական կէսը այնտեղից է»: Այդ յայտարարութիւնը իրականում կարող է միւս անհամար ու արտառոց շափազանցութիւններից մէկը լինել: Բայց կարող է եւ ակամայից ու անգիտակցաբար արտացոլել մի այնպիսի երկդիմի կացութիւն, որը ադրբէջանցիների օգտին չի վկայում, եթէ իսկապէս քննական դիրքերից մօտենանք հարցին:

Արդ, ի՞նչ արժէք ունի այն ազգը, եթէ նա ազգ է համարուում, որի «մուսուլմանական կէսը» հրապարակ է գալիս մի այնպիսի աշխարհագրական նեղ գօտուց, որտեղ հենց ադրբէջանցիներն իրենք անչնչան թիւ են կազմում ադրբէջանական ամբողջ բնակչութեան համեմատ, իսկ առաջներում է՛լ աւելի անչնչան են եղել: Շիշտ է, նաեւ հայկական եւ այլազգի հասարակութիւններում բոլոր խաւերը անպայման նոյնպիսի ընդունակութիւններ չեն ցուցաբերում: Հենց պատմական ու այժմեան Հայաստանի օրինակով կարելի է համոզուել, որ որոշ վայրեր ու գաւառներ խիստ աչքի են ընկնում արտասովոր արուեստասիրութեամբ, ուրիշները՝ գրական ու իմացական նախասիրութիւններով, երրորդներն ու չորրորդներն էլ՝ ուրի՛շ ձիրքերով: Բայց չենք կարող ցոյց տալ հայկական որևէ առանձին բնակավայր ու գաւառ, որը բոլորովին գուրկ լինի որևէ ստեղծագործական ձիրքից կամ ձիրքերից, ա՛յն աստիճան, որ մենք էլ մեր հերթին ստիպուած լինենք «հայ մուսուլմանական

digitised by A.R.A.R.@

կլոր» ծագում մը վերագրել որեւէ հայարնակ գաւառի, նրա վրայ բարձրելով համապետական մշակոյթի հոսքերի բերը, իր մեծագոյն կամ նշանակալի մասով:

Իսկ ԷՔ, այնու ամենայնիւ, ազգրիջանցի գրոց-բրոցների գոյութիւնը ու ձեւաւորուել է Հայոց արցախական աշխարհում, դրա ամենատիպին բացատրութիւնն այն է, որ այդ աշխարհը, ի տարբերութիւն կամ ի հակադրութիւն բուն ազգրիջանական «գաստկոն» երկրամասերի, հանդիսացել եւ հանդիսանում է ժողովրդական քաղաքակրթութեան որոշակի կարգացած միջավայր, որն ու դղակի կամ անու դղակի ճանապարհներով իր բաժին գրոյցն է դնում նաեւ այնտեղ ապրող օտարների, նոյնիսկ Թրքածին ազգրիջանցիների մշակութային արտաքին վարքի վրայ: Կասկած չկայ, որ այդ միջավայրը, իրրեւ այդպիսին, միշտ էլ գոյութիւն է ունեցել Արցախում, թէեւ անպայման մշակութային ակնառու արժէքներ չեն ստեղծուել այնտեղ բոլոր ժամանակներում, շատ հասկանալի պատճառներով: Մինչդեռ ազգրիջանական միջավայրում մշակոյթի մարդիկ, իրրեւ կանոն, անողոքաբար հարուածուել ու «պատժուել» են: Այսօր ժամանակ առ ժամանակ յոյս տածող որոշ յոդուածներում կարելի է կարդալ, օրինակ, թէ այժմ ազգրիջանցի համարուող այսինչ կամ այնինչ բանաստեղծն ու գրողը իր ողջութեան օրօք վայելել է ոեւէ հայի բարեկամութիւնը, թէ որոշ դէպքերում այդ հայե՛րն են պահպանել ազգրիջանցի ստեղծագործողների ձեռագրերը, դրանով իսկ կորուստից փրկել, ու նոյնիսկ յետմահու հրատարակել, առանց որեւէ ակնկալութեան, անապով միայն իրենց խղճի ձայնին: Սրանք այնպիսի յաստատ իրողութիւններ են, որոնց կողքով չի կարելի անցնել: Մի կողմ դրած միւս աւելի կամ պակաս հնարաւոր հանգամանքները, որոնք խորագոյնին հետազօտութեան կարիք ունեն:

Այսպէս թէ այնպէս, Արցախի եւ նրա հայ բնակչութեան քաղաքակրթական միջավայրում վառ են պահուել մշակութային հակումները, դրսեւորուել բաստ ժամանակի հնարաւորութիւնների եւ պահանջների: Բանահիւսութեան ճանապարհով ստեղծուել ու պահպանուել են ժողովրդական գրոյցները, նաեւ հեքիաթները, առածները ու առակները: Նոյնպէս ներբ բաւարարել են լայն զանգուածների երաժշտական առօրեայ եւ մնայուն կարիքները, ապասարկելով նաեւ օտարներին: Իսկ վանական եւ նման ակունքներում գոյատեւել է հայկական ուսումնական եւ գրաւոր մշակոյթը, իր հնարաւոր հիւղերով: Խօսքը վերաբերում է արցախահայութեան մշակութային բնածին հակումներին, զգացողութեանը ու նախասիրութիւններին, այլ ոչ թէ չբնանառութեան մէջ դրուած ստեղծագործական արտադրանքի քանակին ու որակին, որը չէր կարող լաւ ցայտուն լինել այն ժամանակ, երբ առօրեայ գոյապայքարը խլում էր մարդկանց ժամանակի եւ ջանքերի մեծագոյն մասը, նեղացնելով բուն ստեղծագործական ասպարէզը:

Թէ ինչպիսիք են արցախահայութեան մշակութային ներուժ կարողութիւնները, դա առաւել ցայտուն թեամբ երեւաց 19րդ դարավերջին ու մանաւանդ մեր դարում: Բաւական է ասել, որ իր ժամանակ Արցախի կենտրոն Շուշի քաղաքը, մշակութային զանազան հաստատութիւնների իր ցանցով ու գործիչների թուով, ըստ էութեան առաջին տեղն էր բռնում Անդրկովկասի բուն հայաբնակ գաւառներում: Նրան յաջորդում էին Ալեքսանդրապոլը (Գիւմրին) եւ միւս քաղաքային բնակավայրերը: Տուեալ դէպքում հաշուի չեմ առնում արտահայրենական մշակութային կէտերը (Թիֆլիս, Մոսկուա, Նորնախիջեւան, եւ այլն): Շուշու անուան հետ են կապուած կովկասահայ մամուլի գարգացման որոշակի փուլը, հրատարակչական նկատելի աշխուժութիւնը ու մանաւանդ դպրոցական կեանքը: Հայ բազմաթիւ մանկավարժական գործերի կենսագրութեան մէջ կարծես թէ պարտադիր հանգրուան էր ծառայում Շուշին, իրրեւ իւրայատուկ վկայական նրանց համար:

digitised by A.R.A.R.@

Տառաձևակից տառաձևակ գնալով աւելի պարզուեց, որ արցախահայու թիւնը ժողովուած է ստեղծագործական կարողութիւններով, մշակութային կեանքի անխախտ բոլոր բնագաւառներում: Այսօր յիշողութիւնը փոփոխուում կամ հրաժարուում թիւնը սրիւս կարիք չկայ՝ արցախածին մշակութային գործիչներ գտնելու եւ թուարկելու համար: Առանց հիպի կարելի է յիշել արցախածին կամ արցախարու թառաջնակարգ երաժշտագէտների ու երաժիշտների, նկարիչների ու քանդակագործների, նարտարապետների եւ այլնի, ու մանաւանդ գիտնականների: Այդ գիտնականները յայն համբաւ ունեն թէ՛ իրրեւ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ ու յարակից մասնագէտներ եւ թէ իրրեւ հասարակագէտներ, որքան որ դա հնարաւոր է խորհրդային երկրում: Ընդ սմին, յատուկ տեղ են բռնում արտակարգ կարողութիւնների աէր մարդիկ, որոնք հանրաճանաչ են դառնում անմիջապէս:

Արդ, իւրաքանչիւր հասարակութեան մշակութային կեանքում իր տեղն ունի եւ գրականութեան ասպարէզը, իր յայտ ու նեղ իմաստներով: Այդպէս էլ՝ արցախահայութեան պարագայում: Այսօրուայ դիրքերից դիտած, արցախահայ ակունքներից բխած բուն գեղարուեստական գրականութեան մասին կարելի է խօսել միայն 19րդ դարի երկրորդ կէսի եւ մեր դարի կապակցութեամբ, բնաշրջական համապատասխան ընթացքի անհրաժեշտ հաշուառումով: Բնականաբար, գրականութիւն կարող է մշակել գեղարուեստական զգացողութեան ու գիտակցութեան որոշ հիմքի վրայ: Հայ իրականութեան մէջ եւ Արցախում այդ զգացողութիւնն ու գիտակցութիւնը անպայման գոյութիւն ունէին վաղուց, դարերից ի վեր, բայց աւելի առաջ դրանք չէին կարող մարմնաւորուել այնպէս՝ ինչպէս որ սկսեցին մարմնաւորուել 19րդ դարասկզբին, հասարակութեան կեցութեան արոչակի փոխում ու պայմանների, ապպային ընդհանուր գաղթօնքի օրօք:

Ըստ էութեան, եթէ չկաշկանդուենք ժեւական նկատառումներով, գեղարուեստական գրականութեան մասն կարելի է համարել եւ այն, ինչ որ թողեց Արցախում Գրիգոր Գուդին (1731–1810) 18րդ դարից: («Գրիգոր–Գուդի»ն արցախեան բարբառի կանոններով նշանակում է «Ինքնիշխան–Գողգոս»): Բանն այն է, որ նա եղել է Վարանդայի մելիքական տան «պաշտօնական» գուսանը, կատակերգակը, յօրինել է կատակներ, որոնք տարածուել են բանաւոր հանդէսարհով ժողովրդի մէջ: Ժողովուրդը իւրացրել ու պահպանել է այդ կատակները, իսկ Գրիգոր–Գուդուն համարել իր առաւել ներկայացուցչական հանրաճանաչ դէմքը: Եթէ կատակերգակը իր ստեղծագործութիւնները կրի տուել, այսօր կը համարուէր հայ երեւելի երգիծաբաններից մէկը: Բայց նրա փոխարէն հուրիշնե՛րն են գրի առել դրանք, մահից յետոյ: Նրա անունով լոյս տեսած հատորները տուտջին անգամ տպուել է 1883ին, պարունակելով 189 գուսանական խօսութիւն եւ առակ: Իսկ հետագայում արցախցի կատակերգակը գրաւել է նոր հետազօտողների ուշադրութիւնը:

Զուտ գեղարուեստական գրականութեան ասպարէզում առաւել ցայտուն կրողը Մուրացանն է (Գրիգոր Տէր–Յովհաննիսեան, 1854–1908), որը յայտնի է իր բարձրորակ եւ նպատակասլաց ստեղծագործութիւններով, պատմական ու հեղինակի ապրած ժամանակին վերաբերող վէպերով ու պատմուածքներով: Նշանաւոր պատմաբան, գրականագէտ ու հրապարակախօս Լեոն (Առաքել Բարխուդարեան, 1860–1932) իր գործունէութիւնն սկսել է գեղարուեստական երկերով, որոնց մի մասը ժամանակին յայտնի համբաւ ու ժողովրդականութիւն է ապահովել հեղինակի համար: Մեր դարի սկզբին համեմատաբար գրական ժառանգութիւն են թողել գեղագիր Սողոմոն Մելիք–Շահնազարեանը (1862–1942) եւ Արշակ Աթայեանը (1877–1938), որն իր սեփական ստեղծագործութիւններից աւելի յայտնի է կատարած թարգմանութիւններով:

digitised by A.R.A.R.@

նաւթիններով, մանաւանդ Մաքսիմ Գորկուց եւ Օմար Խայեամից: Գիւղատնտես Կառանդին Մելիք-Շահնազարեանը (1857–1940) ժամանակին «Մշոյ Խաչան» գրչանունով (արցախեան բարբառի կանոններով՝ «Թմբկահար Խաչատուր») հրատարակել է երգիծական նշանակալի երկեր, Շուշի քաղաքի հանրային ու կենցաղային բարքերի վերաբերեալ, այն էլ՝ Արցախի բարբառով: Նոյն բարբառով որոշ թուով բանաստեղծութիւններ է գրել եւ բժիշկ ու հանրային գործիչ Լեւոն Ալթարեկեանը (1875–1918):

Բարբառով գրելը եւ տպագրելը հայ իրականութեան մէջ նաեւ ուրիշ նախընթացներ ունի, որոշակի հասարակութեան անմիջական պահանջներին արձագանգելու միտումով: Գաբրիէլ Սունդուկեանը գրել է Թիֆլիսի, իսկ Ռափայէլ Պատկանեանը՝ Նոր-Նախիջեւանի բարբառով: Ուրիշ ոչ՝ Գոյքնի գոկերը գոկերն երգիծաթերթ էին հրատարակում Թիֆլիսում: Ի հարկէ, նրանցից ոչ ոք մտադիր չէր բարբառը գրական լեզու դարձնել, երբի նոյնիսկ Սունդուկեանը, քանի որ բոլորն էլ գրական լեզուի քաջ գիտակներ էին: Սակայն բարբառը գործածումը էր իրեն գրական պատկերագարդումի կամ համեմունք:

Արցախի ծնունդ հանդիսացող յիշեալ գրողների պարագայում, այդ կարգի հանգամանքներից բացի, հաւանաբար որոշ դեր էր խաղում եւ տեղական հայրենասիրութիւնը: Քաջ յայտնի է, որ արցախահայերի մօտ խիստ չեշտուած է հայրենասիրութիւնն այդ տեսակը: Հայ իրականութեան մէջ նրանց հետ կարող են մրցել միայն երբեմնի վանեցիներն ու նրանց ժառանգորդները: Տարօնի կամ Սասունի ասրբերբակները փաստօրէն ինքնամփոփ թաթոմներ են միայն: Իսկ Գիւմրու ասրբերբակը նոյնիսկ տեղական կամ գաւառական չէ, այլ՝ զուտ քաղաքային:

Արդ, սովորաբար քամահրանքով է խօսուում տեղական կամ գաւառական կոչուող հայրենասիրութեան մասին: Տողերիս գրողը բոլորովին այլ դիրքերից է նայում այդ երեւոյթի վրայ: Լաւ խ, իսկական տեղական հայրենասիրութիւնը ինքնավստահութեան, որոշակի հաւաքական ուժի առկայութեան եւ գիտակցութեան նշան է: Դա նշանակում է, որ բնոյ հանուր ազգային հայրենիքի տուեալ հատուածը իր մեծութեամբ այնքան զօրեղ եւ ինքնարար է, որ հարկ եղած դէպքում կարող է փոխարինել մեծ հայրենիքին՝ որոշ առումով: Ցաւալին, հետեւապէս, տեղականի առկայութիւնը չէ, այլ դրանով սահմանափակուելն ու դրա վրայ կանգ առնելը: Եւ շատ անգամ նկատուած է, որ կանգ չառնողները ի վերջոյ համազգային ծառայուն չարժումների ամենաեռանդուն կրքոտ մասնակիցներն են եղել: Այդ չափանիշերո՛վ պէտք է դնահատել եւ արցախահայութիւնն ու նրա ծոցից ելած որոշ գրողների տեղական հայրենասիրութիւնը, մայրենի բարբառը գրչի պէս ծածանելու եւ անզգուշութիւնն չդատապարտելու նախանձախնդրութիւնը:

Եթէ նախախորհրդային պայմաններում՝ հայութիւնը ո՛չ միայն ռուսական կայսրութեան սահմաններում, այլեւ նրանից դուրս գտնուող անթափթր բոլոր աշխարհագրական գօտիներում, բարոյապէս ու մշակութային իրաւասու էր իրեն միասնութիւն համարելու եւ առնուազն եկեղեցական պատկանելիութեան ճանապարհով միասնութիւնը պահպանելու ուղիներ որոնելու, խորհրդային օրէնք ու անդրանկան կարգը դիմիմայր չրջուեց եւ նոր ու արմատոց կարգեր սահմանուեցին: «Ազգային-մշակութային ինքնավարութեան» սկզբունքը կտրականօրէն մերժելու եւ ամէն ինչ «տերիտորիալ» (տարածքային) արհեստական յատկանիշներով պայմանաւորելու հեռանքով՝ փակուեցին կեանքի ու գարգացման լաւ հանապարհներ, մանաւանդ վարչա-քաղաքական կամայական սահմաններ դնելու պատճառով:

Նոր կացութիւնից առաջ մանաւանդ հայութիւնը, քանի որ անհա-

digitised by A.R.A.R.@

մեծաս մեծ թիւ էին կազմում արտաքսուածներ վայրերում բնակուող հայերը: Հայրենաբնակ հայու թեան նեղում էր իր հերթին շաբաշոր ատ մեց արցախահայու թիւնը, ոչ փոքրաքան հայրենի հողի վրայ, իրրեւ պատմու թեան հեղնանք, կրկին ստորի ծանր լուծը: Եւ ահա այդ անընդհատն պայմաններում չէր կարող այս կամ այն չափով չխամրել հենց արցախահայ մշակոյթը, ընդհանրապէս, ու նրա գրական ոճաւոր՝ մասնաւորապէս: Ինքնաբար մարդում հեռու ազգականներն խափանուեց այն ամէնը, ինչ որ կարող էր գէթ որեւէ չափով նպաստել հայ բնակչութեան լիարժէք ստեղծագործական կեանքին: Ու սա՛ նրա մասնաւոր ու ժերը կա՛մ ցրուեցին կամ էլ անդրայլի գաղութներուն: Հայրենի երկրամասից խոյս տուած արցախցիները մէկ կողմից, Բաքուի վրայով, ապաստանեցին Մոսկուայում, Լենինգրադում եւ այլուր, մերուելով ռուսական միջավայրին: Միւս կողմից էլ՝ նրանք խուսափեցան Երեւանում: Ի հարկէ, այդ անգամ թիւ ները մասամբ անանցի չէին եւ նոյնպէս անցի կ՚ենենային, եթէ նոյնիսկ Արցախն իր չքնաղագոյն հայկական հանրապետութեան մաս կազմէր սկզբից եւ էջ: Բայց դրանք կը լինէին ո՛չ այսօրուայ ձեւով ու չափով, ոչ էլ բուն Արցախը անաւրուն թոզնելու եւ նրա հոգեւոր միջնադարեայ ազգաստացնելու պայմանով:

1920ական եւ 1930ական թուերի առաջին կէսին ստեղծուած էին նախախորհրդային որոշ սովորութիւններ՝ «ազգային-մշակութային ինքնավարութեան» իմաստով: Այնու հետեւ գրանք արդնթաց արագութեամբ վերացան: Դա որոշ ատ մասով վերաբերում է եւ Արցախին, որի նախաստիրն աւելի՛ մոայլուեց Անդրկովկասեան վրիպած դաշնակցութիւնը վերանալուց յետոյ ու մանաւանդ վերջին տասնամեակների ընթացքում: Ինքնաբար համարուող մարզը, ինչպէս յայտնի է, մեկուսացուեց բոլոր կողմերից, այդ թուում եւ հոգեւոր: Մարզի որոշ ղեկավարներ ժամանակին փորձել են ստեղծելու տեղական հրատարակչական խարիսխ, խրախուսելու տեղական մասնաւորուժերի գործունէութիւնը: Բայց փորձերն ապարդիւն են անցել: Մարդոյին մասնաւորուժերը գրական ուժերը գնալով աւելի են կախման մէջ դրուել Բաքուից: Արցախածին որոշ գրողներ ապրել ու գրել են Բաքուում, որոնցից առաւել յայտնի են բանաստեղծներ Սամուել Գրիգորեանը (1907–1987) եւ Աշոտ Գրաչիկը (Գրիգորեան, 1910–1973): Նրանցից ոմանք մնացել, ոմանք էլ ասիճանաբար ցրուել են որոշակի ուղղութեամբ: Մի խօսքով՝ արցախարնակ ու ապրբէջանարնակ հայ գրողները միշտ էլ գանուել են յատուկ անորոշութեան վիճակում:

Արցախահայ գրական բնաւորի մեկուսացումը աւելի էր ծանրանում նրանով, որ հայկական հանրապետութիւնը եւս չէր գրաւում նրա ճակատագրով, քանի որ փոխադարձ կապը անթոյլատրելի մեղք էր համարուում ապրբէջանցի թուրքերի կողմից: Ոչիչ է, վերջին քառասնամեակում Հայաստանի գրական հասարակայնութեան մէջ եւս ասիճանաբար խմորուեց ինչ-որ կապեր հաստատելու տրամադրութիւն: Բայց արդի նշանները չատ քիչ էին կամ պարագայական, մինչեւ 1988 յիշարժան թուականը:

Արցախահայ գրողների հանդէպ հայաստանեան վերաբերմունքի բնաչրջումը ինքնաբերաբար արտացոլում է Հայկ Խաչատրեանի կազմած «Գրական տեղեկատուի յայտարարական էջեր հրատարակութիւնները: Այսպէս, այդ տեղեկատուի 1975ի հրատարակութիւնը ամբողջովին նուիրուած է միայն հայաստանարնակ գրողներին՝ «Հայաստանի սովետական գրողների միութեան» հին ու նոր անդամներին: 1981ի հրատարակութեան մէջ արդէն արտաքսուածներ որոշ հայ գրողներ, միայն թէ՝ յանկերգաբանել են եւ

ներն էլ (որոնց հարկ է համարում մոցնել գիրք) գասաւորում են այրբենական կարգով, իրրեւ միասնական բնատնիք: Սա ցոյց է տալիս, որ միասնականութեան գիտակցութիւնը եկել է միւս, իսկ գիտակցութիւնը նոր թափանցել է աստիճանաբար, փուլ առ փուլ:

Անկախ տիրող պայմաններից, արցախահայութեան ծոցից ծնում են տարբեր մակարդակի գրողներ ու գրականագէտներ: Նրանց մի մասը բնակութիւն է հաստատել Բաքուում եւ գործել «Հադրութեանահայ գրականութեան» շրջանակում: Աւելի ստուար մասը՝ մեկ ու կէսսունեան աւագան: Նոյնքան էլ՝ խառնուել հայաստանեան գրական ընտանիքին: Որոշ չափով էլ մնացել հայրենի երկրամասում: Հայրենարնակ արցախահայ գրողները իրենց թուով քիչ չեն եղել եւ այժմ էլ չեն: Բայց քաղաքական ու հոգեւոր ծայրաստիճան կաչկանդուածութիւնը նրանց պահել է անուանելի սեղմուած վիճակում, զրկել աճելու եւ պտղաւորուելու բաւարար հնարաւորութիւնից:

Արցախահայ գրողների ու լրագրողների ստեղծագործութիւնները այս կամ այն չափով տպուել են Բաքուի «Գրական Ադրբեջան» երկամսեայ հանդէսում ու «Կոմունիստ» օրաթերթում: Ինչպէս եւ մարզային «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում, թերեւս նաեւ շրջանային թերթերում: Գրականութեանը նուիրուածները մեծ մասամբ բանաստեղծներ են, բայց բան իս առուել կշիռ ունեն արձակագիրները: Խիստ գդալի է գրականագիտական ու գրաքննադատական մաքի բացակայութիւնը: Այդ ասպարէզում առաւել ներկայացուցչական դէմքը Գուրգէն Անտոնեանն էր (1911–1984), որը դասախօսել է նախ Բաքուի, իսկ ապա՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (հաստատութեան) մէջ: Կան նաեւ ուրիշներ, որոնք բան երեւոյթին ի վիճակի չեն միմոլորա ստեղծել, գոնէ մինչեւ հիմա, ընդհանուր իրաւազրկութեան պայմաններում:

Արցախում ապրած եւ ստեղծագործած հեղինակների շարքում իր ժամանակ ամենից շատ ժողովրդականութիւն էր վայելում բանաստեղծ Գրիգոր Ներսիսեանը (1887–1937), իր ինքնատիպ ու համարձակ երկերով: Թէեւ նրա կենսագրութիւնը համարեա՝ լիովին կապուած էր նոր կարգերին ու իրականութեանը, «գատուեց» ու գատապարտուեց իրրեւ ազգայնական («նացիոնալիստ»), շատ ու շատ ուրիշների նման:

Ինչպիսի՞ն է արցախահայ գրական ածուի այսօրուայ վիճակը:

Այլեւայլ առիթներով պարբերաբար առում է, թէ Արցախում ներկայումս ապրում են 30ից աւելի գրողներ՝ արձակագիրներ, բանաստեղծներ, որոնց գդալի մասը միաժամանակ զբաղուում է տեղական լրագրութեամբ: Նրանք պատկանում են տարբեր սերունդների եւ դրսեւորում տարբեր կարողութիւններ: Գրողները տարիներ շարունակ զժգոհում էին այն բանից, որ իրենց կազմից քչերն են ընդունուել գրողների միութեան մէջ, ազգրբէջանական յատուկ խարսկան քաղաքականութեան պատճառով: Դժգոհում էին նաեւ, որ իրենց պատրաստի ու տեղը ոչ վրայ հաստատուած գրքերի տպագրութիւնը ձգձգում է Բաքուում, եւ այլն:

Արդ, երեսունից աւելի գրողների մասին, որոնց անունները ու երկերը ժամանակ առ ժամանակ երեւում են գրական կամ այլ ամսագրի էջերում, տուեալ դէպքում անկարելի է քիչ թէ շատ հիմնաւոր, նոյնիսկ թռուցիկ խօսք ասել: Բայց կարելի է յիշել որոշ, յատկապէս աչքի ընկած գրողների, որոնց անունները աւելի ներկայացուցչական են, ի հարկէ՝ պայմանականօրէն, քանի որ այսպիսի դէպքերում բոլորովին անիմաստ է դասակարգումները կատարելը որեւէ նկատառումով:

Արցախահայ գրական անդաստանում իր յատուկ տեղն ունի Գուրգէն Գարրիէլեանը (ծնուած 1927 թ.): Նա հիմնականում մանկագիր է, բայց նաեւ

digitised by A.R.A.R.@

ինքնուս երգահան, բազմաթիւ երգեր է նվագակցուցել սեփական եւ ուրիշների շափածոյ երգերի հիման վրայ, որոնք պատշաճ ժողովրդականութիւն են վայելում: Բանաստեղծը գրում է բանաստեղծութիւններ ու երգեր նաեւ տեղական բարբառով, իրեւ համեմունք, հատանաբար կենդանի բարբառի վարկը բարձր պահելու համար:

Նմանապէս իր յատուկ տեղն ունի եւ հանգուցեալ Վազգէն Օվեանը (Օհանջանեան, 1932–1987), այն իմաստով, որ հատասաք եռանդով գրագրել է բանաստեղծութեամբ, արձակագրութեամբ եւ թատերագրութեամբ, բոլոր դէպքերում ցուցաբերելով որոշակի բարձր մակարդակ:

Արցախահայ գրողները գրականութեամբ զբաղւում են հիմնականում լրագրական կամ մանկավարժական գործունէութեան հետ միաժամանակ՝ զուգահեռաբար: Բացի այդ, շատերը միաժամանակ աչքի են ընկնում թէ՛ բանաստեղծութեան եւ թէ արձակագրութեան ասպարէզում: Բայց եւ այնպէս, իւրաքանչիւր պարագայում գերակշռողը մէկնումէկն է: Բանաստեղծութեան ասպարէզում որոշակի վաստակ ունեն Վարդան Յակոբեանը, Սոկրատ Խանեանը, Նուարդ Աւագեանը, Արմէն Յովհաննիսեանը: Արձակագրութեան ասպարէզում՝ Միսակ՝ (նաեւ Մաքսիմ) Յովհաննիսեանը, Կոմիտաս Դանիէլեանը: Այս շարքում պէտք է յիշել եւ Լեւոն Աղեանին, որը թէեւ Արցախից դուրս է ապրում (գոնէ մինչեւ վերջին խառնակութիւնները), բայց նրա կենսագրութիւնն ու ստեղծագործութիւնը սերտօրէն կապուած են Հայրենի օրրանի հետ: Աղեանն արձակագիր է, որն աչքի է ընկնում եւ իր թարգմանութիւններով:

Ինչպէս որ ասուեց, արցախահայ գրական անդաստանում այսօր ներկայ են տարբեր սերունդների պատկանող գրողներ, առաւել կամ պակաս եռանդուն մասնակցութեամբ: Բայց իւրաքանչիւր գրականութեան զոյատեւման հիմնական երաշխիքը նորահաս սերունդն է: Այդպէս է եւ Արցախում: Զանազան նշաններից դատելով, այնտեղ գոյութիւն ունի այդ նորահաս սերունդը, որի շարքերը գնալով աւելի են խտանում եւ որի որակային յատկանիշներն ու տարբերութիւնները արդէն ուշադրութիւն են գրաւում:

Թէեւ այդ սերունդի գործունէութիւնը եւս արժէք ներկայացնել յատուկ ուշադրութեամբ, իրականում ինքս ինձ իրաւասու չեմ համարում անհատական դատողութիւններ անել նրա մասին: Բայց, բարեբախտաբար, Ստեփանակերտի «Սովետական Ղարաբաղ» թերթի 1987թ Յունիսի 30ի համարում զետեղուած է Գուրգէն Գաբրիէլեանի բաւական հանգամանալից յօդուածը հենց նոյն նորահաս գրական երիտասարդութեան մասին: Յօդուածագիրը նախ համառօտաբար ուրուագծում է երկրամասի իրաւ յաջողած գրական սերունդների էական յատկանիշները, իսկ ապա կենտրոնանում է նորերի՝ «փոխարինողների» վրայ: Ուստի եւ՝ արժէ համեմատաբար ընդարձակ հատուածներ արտագրել այդ յօդուածից, իրեւ վաւերական գրաւոր աղբիւր:

Այսպէս, թերթի յօդուածագիրը գրում է.

«Ցնծոյ, տարիներ անց մեր աչքերի առջեւ սկսեց ձեւաւորուել երիտասարդ գրողների այն յուսալի ջոկատը, որի համար էլ ես գրիչ եմ վերցրել շարադրելու ներկայ յօդուածը:

«Իմ աւագ գրչեղբայրների եռամիաձայն հպարտանում եմ այս նոր սերնդով: Իր ստեղծագործական ակտիւութեամբ եւ անուանների բազմազանութեամբ այդ սերունդը յիշեցնում է իմ սերունդը, սակայն իր ձեռագրով ու ոճով, իր ուրոյն հոգեբանութեամբ ու ժամանակակից մաճեռանիներով:

«... Իմ կարծիքով, մեր ամէն մի երիտասարդ ստեղծագործող, գուցէ եւ դեռ ոչ լիովին ձեւաւորուած, բայց արդէն ունի իր ձեռագիրը, եւ ոչ ոքի չես կարող շփոթել այլոց հետ:

digitised by A.R.A.R.@

«Մարսել Պետրոսեանի մանկական պատմուածքներն ու հեքիաթները իրովի ծրանգներով սկսել են գրաւել մանուկ ու պատանի ընթերցողներին ու ուսուցիչներին: Ժանիա Բեզլարեանը առաջուայ պէս հարազատ է մնում «Սպիտակ բանատեղծութեան» իրեն յատուկ պատկերներին: Կիմ Գաբրիէլեանը գնալով աւելի է ծաւալում իր բազմաշխատական ակտիւութիւնը, Դաւիթ Միքայէլեանը շարունակում է հնչեցնել իր գրած ճնճղուկ թրթիռները, Ռոբերտ Եսայանը, որ անցեալ տարի արժանացել է արհմիութիւնների մարզային խորհրդի եւ գրողների միութեան մարզային բաժանմունքի մրցանակին, ուրախացնում է իր ուսանողական նկրտումներով, Նարեկ Գասպարեանը թեմաներով աւելի է մօտենում մեր երկրամասի պատմութեանը, Հրանտ Ալեքսանեանը ընթերցողին է ներկայանում ո՛չ միայն ճնարական, այլեւ մանկական օրիգինալ բանաստեղծութիւններով, Աւիկ Յարութիւնեանը գնալով աւելի է յստակւում եւ դառնում հոգեզէն, Սիրվարդ Մարգարեանի եւ Նուշա Ասկերովայի մօտ հաճելիօրէն զգացնել է տալիս մայրական լարը, իսկ Սենոր Սարեանի մօտ՝ հայրականը: Արձակում իրենց յուսատու քայլերն են անում Սէյրան Բալայեանը եւ Վարդգէս Օվեանը»:

Այնու հետեւ, իրրեւ եզրակացութիւն, ասում է հետեւեալը.

«Կայ գրական սերունդը, այն իր գոյութեամբ ուրախացնում է բոլորիս: Նրա անին այս կամ այն չափով նպաստում են անցկացուող մրցոյթները, միւս միջոցառումները: Երիտասարդ մեր ստեղծագործները մասնակցում են գրողների միութեան մարզային բաժանմունքի կողմից անցկացուող ասուլիսներին, գրական երեկոներին ու ճնճարկումներին, «Սովետական Ղարաբաղ» թերթը իր էջերը լայնօրէն է բացում նրանց լաւագոյն ստեղծագործութիւնների առաջ: Մի խօսքով՝ բաժանմունքը վերջին տարիներին զգալիօրէն ակտիւացրել է երիտասարդների հետ տարուող աշխատանքը:

Բայց, դրանով հանդերձ, անկարելի է շրջանցել նաեւ հետեւեալ քննադատական խօսքերը.

«Հարազատ կուսակցութեան վերակառուցման խորհրդանշանութեան կուրսը,— *գրում է Գաբրիէլեանը,*— այսօր իրաւունք է տալիս մեզ չմեղանչել ճշմարտութեան դէմ եւ համարձակօրէն ասել, որ յեռաշխարհում ապրող երիտասարդ գրողների ստեղծագործական աճի ճանապարհին չեն ստեղծուած անհրաժեշտ հնարաւորութիւններ: Բաւական յոյս տեսնող «Գրական Ադրբեջան» հանդէսը, որ գրական սերունդներ աճեցնելու գործում անուրանալի աւանդներ ունի, համարեա՝ ինքնահեռացել է այդ կարեւոր խնդրից»:

Սա, եթէ կարելի է այսպէս ասել, նախաթեորուարեան յատկանշական վկայութիւն է: Իսկ 1988թ. Փետրուարից յետոյ ասուիճանարար աւելի պարզուեցին արցախահայ կեանքի, ընդ ամին եւ գրական կեանքի ներքին մանրամասնութիւնները, տարիներով կրած դժուարութիւնները ու որոշակի քայլականութեան տխուր հետեւանքները: Այդ կապակցութեամբ էլ ահա արժէ մէջբերել եւս մէկ վկայութիւն, այս անգամ ոչ թէ ներսից, այլ՝ դրսից, տեսնողի դիրքերից:

1988թ. Մայիսին ռուս գրող Միխայիլ Դուդինը առաջին անգամ Արցախ այցելեց ու շրջագայեց, ստակաւթիւ հայ մտաւորականների ուղեկցութեամբ: Այդ ասթիւ էլ Բակուր կարապետեանը հարցազրոյց ունեցաւ նրա հետ, որը եւ հրապարակուեց «Գրական թերթ» եւ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթերում: Արդ, այդ բաւական ընդարձակ ու տպաւորիչ հարցազրոյցի որոշ մասը վերաբերում է արցախահայ գրողներին:

digitised by A.R.A.R.@

Լրագրողի այն հարցին, թէ «Դուք հանդիպեցիք նաեւ Ղարաբաղի գրողների հետ», Դուք ինչ պատասխանեց հեռուեալը.

«Անշուշտ. նրանք ունեն մեծ ուշադրութեան, յարգանքի են արժանի: Նրանք գրկուած են եղել հրատարակուելու իրաւունքից: Առանց սեփական գրական մամուլի, ամսագրի, տարօրինակ, կարծես նախապատմական իրավիճակում են յայտնուել: Այո՛, ինքնավար մարզ է, բայց հրատարակուելու հնարաւորութիւն չունի: Էլ ի՞նչ գրող, եթէ հրատարակուելու, ընթերցողի հետ խօսելու հնարաւորութիւն չունի: Եւ տեղին է նրանց բողոքը, պահանջը: Ինձ թւում է, երկրի գրողների միութեան վարչութիւնը կ'օգնի Լեռնի գրողների կազմակերպութեանը: Հարկաւոր է, որ Հայաստանի գրողների միութիւնը, որը բաւականին հզօր կազմակերպութիւն է, ունելի տնտեսական, գործնական օգնութիւն ցոյց տայ Ղարաբաղի գրողներին: Երեւի հարկաւոր է հայ գրողների մի խումբ ուղարկել Ղարաբաղ, որը ո՛չ միայն գրական հանդիպումներ կ'անցկացնի, այլեւ գործնական օգնութիւն ցոյց կը տայ: Մոսկովեան կազմակերպութեան առջեւ անհրաժեշտ է բարձրացնել նաեւ որեւէ հրատարակչութիւնում «Լեռնային Ղարաբաղ» խորագրով այնմանէ հրատարակելու հարցը:

«Այո՛, մենք տեսանք ինչպիսի գեղեցիկ դաշտերով է ծածկուած Ղարաբաղը, ինչ լաւ, առատ բերք են ստանում այդ դաշտերում, այգիներում, ինչպէս են առատին ծիլերը ուժ հաւաքում: Ահա այս կեանքը զարնան հետ լցնում է զարաբաղցու հոգին հաստատակամութեամբ, այն համոզմամբ, որ կեանքը չի ընդհատուել: Իսկ այն, որ զարաբաղցիք կը հասնեն իրենց նպատակին, դրանում ոչ մի կասկած չկայ: Ես դրանում համոզուեցի հենց մեր գրական երեկոյի ընթացքում: Այս ժողովուրդը վճռական է, լաւ է զգում ժամանակը: Պէտք է հասկանալ նաեւ այս իրադարձութիւնների անհրաժեշտութիւնը»:

Ինչպէս արցախահայութիւնը ինքը բնդհանրապէս, այնպէս էլ նրա կեանքի մաս կազմող գրականութիւնը այսօր գտնւում է պատմական խաչմերուկում: Հասարակութեան կացութեան փոփոխութիւնը, անկասկած, իր հետքը պատասխան ներգործութիւնը կ'ունենայ եւ արցախահայ մշակոյթի տարբեր բնագաւառների, այդ թւում եւ գրական ասուի վրայ: Հիմքեր ունենք յուսալու՝ դրական ուղղութեամբ եւ ստեղծագործական անկաշկանդ մթնոլորտի երաշխիքներով:

ԼԵՌՆ ՄԿՐՏՉԵԱՆ

26. 2. 1989 թ.
ՄԻՆՍԿ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽ — 88

Այո՛, բեզ պիտի
Դարից ճանաչել,
Դարերից յետոյ,
Դաւերից յետոյ,
Թէ չէ մոռնչդ կը դառնայ...մայիւն,
Շաչդ՝ բառաչել,
Այսքան յօշոտող
Ցաւերից յետոյ:

Թէ բեզնից զատեն
Իմաստը ՀԱՅ—Ա՝
Կը դառնաս ՍՏԱՆ,
Նենգ ու խաբեբայ.

Թէ բեզնից հատեն
«Կակաչդ սեւաչ»—
Չես կարող աճել՝
Կարգին ճանանչել...
Քո Այգու մէջ ենք
Կարող կանաչել
(Քո Սեւ Այգու մէջ),
Քո հայելու մէջ ենք
Կարող մենք մեզի,
Բայց եւ մանաւանդ
Բաբեկամներիդ լրիւ ճանաչել...

Զգո՛յշ, ուզում են
Քեզ նորից խաչել...

ՎԱՐԱՆԴ

digitised by A.R.A.R.@

Զ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

ՀԱԻԱՍԱՐ ՆԺԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ներահնում է նշանաւոր 1988 թ. Փետրուարի 20ի երկրորդ տարեդարձը: Անգամ Գորբաչովը չի կարող ստիպել, որ Արցախի ժողովուրդը փոխի այդ օրն ընդունած իր որոշումը, չի կարող ստիպել, որ մի ժողովուրդ մէկ այլ ժողովրդից ստրկական կախման մէջ լինի:

Կը գայ ժամանակը ու թերեւս Փետրուարի 20ը աշխարհի օրացոյցների մէջ մտնի որպէս նոր դարաշրջանի առաջին օր, չէ՞ որ Արեւելեան Եւրոպայի ու մեր երկրի աշխարհացունց այս իրադարձութիւնները սկիզբ առան այդ օրուանից, հայոց փոքրիկ Արցախից ու տարածուեցին աշխարհով մէկ:

ԶՕՐԱՅՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Արցախին վերաբերող վերջին որոշումից արդէն արեան ու պատերազմի հոտ էր գալիս: Արցախի նկատմամբ Ադրբէջանի գերիշխանութիւնը վերահաստատող այդ վճիռը կարելի էր իրագործել միայն ուժի ու ջարդերի միջոցով: Հենց դա էլ նախաձեռնեց Ադրբէջանը:

Նրանք արդէն արբեցած էին անպատժելիութեան մտքից: Գիտէին, որ պատիժ չի լինելու: Երեւի մեծ ելուզակներից մէկը փոքրերին ասել էր՝ կոտորէք, կողոպտէք, պետական սահմանները տապալէք, ես գիտեմ այս կարգերի ուղնուծուծը, պատժել ձեզ՝ նշանակում է պատժել ամբողջ հանրապետութիւնը:

Այժմ Ադրբէջանում այն իրավիճակն է, որով ժամանակին կենտրոնին ահաբեկելով, Նարիմանովը ստացաւ թէ՛ Արցախը եւ թէ Նախիջեւանը: Հեռագիր Լենինին. «Եթէ Նախիջեւանն ու Ղարաբաղը մէկ չտրուեն, Ադրբէջանում պլուխ կը բարձրացնեն հակախորհրդային տարրերը»: Դա նշանակում էր՝ հայերի ու ռուսների կոտորած, քաոս, պետական յեղաշրջման փորձ, հարեւան պետութիւններից մէկի հետ միաւորուելու սպառնալիք, խորհրդային կարգերի վարկաբեկում, եւայլն: Այժմ Ադրբէջանում հենց դա է կատարւում, որը հարեւան հանրապետութեան աւանդական ահաբեկչական քաղաքականութեան դրսեւորումն է:

Կենտրոնական մամուլը Բաքուի ջարդերը տաք-տաք անուանեց միջնադարեան վայրագութիւն: Ոչինչ, կը սառեն, կ՝օգտագործեն աւելի մեղմ արտայայտութիւններ՝ Ադրբէջանի ժողովրդին չվիրաւորելու համար: Մենք դա գիտենք Սումգայիթից: Մարդասպանութիւնների, բռնութիւնների եւ ապա պետական յեղաշրջման փորձի համար Բաքուում արտակարգ դրութիւն է

digitised by A.R.A.R.@

մացու՝ Հայաստանում և Արցախում ոչ մի բանաթիւն չի եղել, բայց ըստ հատուածի նժարների քաղաքականութեան, կը սկսեն հայերի մէջ եւս մեղաւորներ փնտռել։ Այդ բաները մեզ ծանօթ են։

Մի կողմ թողած, թէ որքան բարոյական է մարդասպանին ու իր զոհին նոյն նժարի վրայ դնելը, այդ քաղաքականութիւնը կաթուածահար է արել երկրի հասարակական միտքը, մեկուսացրել նրան հարցն արծարծելու ու ելք որոնելու հնարաւորութիւնից։

Բայց կարող է նաեւ վատթարը լինել։ Արցախի մարզկենտրոնի քաղաքապետարանի տանիքին զինուորները կրկին բարձրացրել են Ադրբէջանի դրօշը։ Ստեփանակերտ է բերուել հանրապետութեան ներկայացուցչութիւնը։ Իրավիճակը ծայրայեղ լարուած է, յայտարարուել է համաքաղաքային գործադուլ, որն արգելուած է արտակարգ դրութեան օրէնքներով։ Ամէն ինչ մազից է կախուած։

Ելուզակութեամբ (զաչազուրթեամբ) կարելի է տուն պահել, եւ դարերով պահում են, բայց ելուզակութեամբ ու ահաբեկչութեամբ հանրապետութիւն չես պահի։ Եթէ այս թոհուբոհի մէջ «ժողովրդական ճակատ» յորջորջուող ելուզակներին ու ահաբեկիչներին յաջողուէր իշխանութեան հասնել, թերեւս Ադրբէջանը յայտարարէին Թուրքիայի կամ Իրանի մի մասը։ Սակայն ո՞ւմ գիրկն են նետուում։ Թուրքական «Գիւնայթրն» լրագիրն այս օրերին գրում է. «Պանթուրքիզմը նոյնքան վտանգաւոր է մեզ համար, որքան ռասիզմը Եւրոպայում։ Ադրբէջանից մեզ հասած հատուկենտ լուսանկարներում, թուրքականին նմանուող դրօշակները միայն վախ են յարուցում։ Մտածո՞ւմ են արդեօք, թէ ո՞վ ստատար կը լինի նրանց, ովքեր անուում են խորհրդային, իրանական ու թուրքական ադրբէջանցիներին միաւորելու միջոցով ցնորական «մեծ Ադրբէջան» ստեղծելու յաւակնութիւններով» («Իզվեստիա»)։

Մեզանում պանթուրքիզմի մասին սարսափ չեփորողները մոռանում են, թէ ինչ ստացուեց պանարաբիզմից. միայն փոխադարձ խորթացում ու թշնամանք։ Ժամանակակից բազմաթիւ արաբական պետութիւններին ոչ ոք չի խանգարում միացնել արաբական մէկ պետութիւն ստեղծելու, բայց ահա չեն ստեղծում։ Իսկ եթէ, այնուամենայնիւ, ադրբէջանցիները սեփական Ադրբէջանում առաջին տեսակի ադրբէջանցի լինելուց գերադասում են Թուրքիայում երկրորդ տեսակի թուրք լինելը, դա էլ նրանց գործն է։

Առայժմ Ադրբէջանը շրջափակելով Հայաստանն ու Վրաստանը, փաստօրէն իր կողմից եւս վաւերացրել է այդ երկու ժողովուրդների անխախտելի միասնութիւնը, եւ դրանով իսկ՝ ինքն

digitised by A.R.A.R.@

իրեն մեկուսացրել է Այրկոմկասում: Արժէ, թերեւս, դրա համար չնորհակալ լինել:

Մարդասպանաթիւնների, բռնաթիւնների ու պետական յեղաշրջման փորձի համար Բաքուում արտակարգ դրութիւն է մացուել: Թէ ուր կարող է հասնել ահաբեկչութիւնն ու հրատակութիւնն ապպային քաղաքականութեան տոպիհանի հասցնելը, ցոյց տուեցին Ադրբէջանի վերջին սպրերդական դէպքերը: Աւանդական այդ քաղաքականութիւնը դրսեւորուեց Արցախեան շարժման ամենատաքին օրերից, երբ Ադղամից հրատակների տուաջին խումբը քայլեց դէպի Ստեփանակերտ՝ հայերին պատժելու, սարսափեցնելու եւ դատարակելու, կարծես միայն իրենք են տղամարդ, իսկ դէմն առնուազն երէկուայ երեխաներ են: Որտեղի՞ց է ուղմատենչութեան այդ յատկութիւնը, երբ վերջին պատերազմը ճիշտ դրա հակառակն է ապացուցել: Այդ ուղմատենչութեամբ կարելի է միայն մարշալների արձաններ ջարդել:

Սպառնալիքից՝ ահաբեկում, ահաբեկումից՝ ջարդեր, ջարդերից՝ շրջափակում, շրջափակումից՝ ռազմարշաւ Արցախի դէմ: Ահաբեկչութեան զինանոցը կարծես պիտի սպառուէր պատերազմով: Թէ՞ էլի բան ունեն: Իսկ ի՞նչ կարող է լինել պատերազմից այն կողմ: Գետաշէնի, Մանասքաղի ու Նախիջեւանի ընդհարումները մի՞թէ խրատ չեղան կողոպուտների, անզէն մարդկանց սպանութիւնների ու բռնութիւնների սիրահար վարձու հայրենասէրներին:

Ահաբեկումով չի, շրջափակումով չի, եղուզակութեամբ չի, պատերազմով չի, դրանում կարծես համոզուեցին: Արցախեան հարցի լուծման միայն մէկ ուղի կայ. քաղաքակիրթ երկխօսութիւն: Պատերազմից այն կողմ՝ հենց դա է:

Մօտենում է նշանաւոր 1988 թ. Փետրուարի 20ի երկրորդ տարեդարձը: Անգամ Գորբաչովը չի կարող ստիպել, որ Արցախի ժողովուրդը փոխի այդ օրն ընդունած իր որոշումը, չի կարող ստիպել, որ մի ժողովուրդ մէկ այլ ժողովրդից սարկական կախման մէջ լինի:

Նշենք այդ օրը, որպէս ապպային տօն ու գոհերի յիշատակի օր: Եւ դա կը լինի մեր պատասխանը եղուզակներին ու մարդասպաններին: Կը դայ ժամանակը ու թերեւս Փետրուարի 20ը աշխարհի օրացոյցների մէջ մտնի որպէս նոր դարաշրջանի առաջին օր, չէ՞ որ Արեւելեան Եւրոպայի ու մեր երկրի աշխարհացունց այս իրադարձութիւնները սկիզբ առան այդ օրուանից, հայոց փոքրիկ Արցախից, ու տարածուեցին աշխարհով մէկ («Գրական թերթ» 1990, թիւ 6):

ՉՈՐԱՅՐ ԽԱՎԱՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Քաղին

ԱԶԵՐԻԱԿԱՆ ՀՐԱԺԱՐՈՒՄՆԵՐ...

Վերջին երկու-երեք տարիներուն, ազերիներու մտայնութեան ու բարքերուն մասին շատ բան իմացաւ ներսի թէ դուրսի ընթերցողը, մարդկայիներ հերքող բազում ու բազմապիսի արարքներ, որոնցմէ մէկը արձանագրած է հայրենի քննադատներէն Դաւիթ Գասպարեան.

«Ընդամէնը մի քանի ամիս առաջ, որպէս ժողովուրդների բարեկամութեան առհաւատչեայ, նրանք վկայակոչում էին ինտերնացիոնալ ընտանիքի օրինակներ: Իսկ այսօր Շուշիից ադրբեջանցի ամուսինները ֆշում են իրենց հայ կանանց, իրենց «ինտերնացիոնալ» որդիների մայրերին: Ո՞ւր են երէկուայ գեղեցկախօս մեկնաբանները, ինչո՞ւ են սպկուել» («Անանգարդ», 16 *Օգոստոս* 1989):

Կիներր, ինչպէս էրիկները «քչելու» պատճառները չատ են ու ոեւէ ժողովուրդի մէջ բացառուած չեն անոնք, թող ուրեմն պատճառներէն մէկն ալ «ինտերնացիոնալիզմէն» յանկարծօրէն մերկացած նորին փոքրոգութիւն մարտնչող «նացիոնալիզմը» ըլլայ:

Ոչինչ:

Սարսափելին իրենց մայրերն ու հայրերը «քչող» որդիներուն երեւոյթն է, որ պատահեցաւ այս տարիներուն, ազերի խաժամուժին մէջ:

Իսկ անկէ առաջ...

Այո՛, կա՛յ անկէ առաջ մը:

Նոյնինքն համայնավարութեան չրջանը եւ մասնաւորաբար Ստալինի տիրապետութեան սահմռկեցուցիչ երեւնամէնակը, երբ յատուկ քաղաքներնքի արժանացան հայր, մայր, քոյր ու եղբայր, ու մտիկ-մերձաւորներ մատնող ու ուրացող մոլախոտները:

Այխարհի սկիզբէն ի վեր բացասական ուժերը անպակաս եղած են մարդկային պատմութեան մէջ, բոլոր ժամանակներուն, բոլոր երկինքներուն տակ ու բոլոր ժողովուրդներուն մօտ, բայց պատմութիւնը թերեւս չի յիշեր վարդապետական ուրիշ ուժ մը, որ Լենինի ու Ստալինի կուսակցութեան չափ նպաստաւոր հող ստեղծած ըլլար յորովայնէ քսու, նենգ, գաւաչիր, փառամոլ, ոճրամէտ ու արիւնարբու արարածներու, որոնց թիւը հաշիւ չունեցաւ ու «հունձքը» հասաւ միլիոններու: Անքնական ուսմունքը ընդունելի դարձնելու միտումով լրտեսելու, դաւելու, մատնելու «սապարէզներուն» մէջ առանձին քաղաքներնքի արժանացան նոյնիսկ պատանիները, որոնց նեբրակուած թոյնը քիչ ազէտներու դուռ չբացաւ:

Ըստուածը համայնավարութեան եղած ձրի վերագրում մը մի համարէք: Ամենեւին: Վերագրումներու սճը համայնավարներու մենաչնորհն է ու ազերիներու: Մեր խօսքը կը վերաբերի արձանագրուած իրականութիւններու: Ու փաստերը չատ են հոս: Անգամ մը իմանալէ ետք, ա՛լ ո՞վ կրնայ մոռնալ, օրինակ, իր մատնութեամբ հօրը ոչնչացման պատճառ դարձած Պավլիկ Մորոզովը, որուն արձանը կանգնեցին մարդիկ երեք հարիւրէ աւելի քաղաքներու մէջ, ի փառս կատարած այդ մատնչութեան, յօրինակ կարմիր կայսրութեան բիւրաւոր պիոներներուն...

Մորոզովեան յաւելեալ մէկ երկու պատկեր, առաջինը՝ նորոգ հանգուցեալ գրող Նաչիկ Հրաչեանին գրչով.

«Շուտով հանդէս եկաւ Պավլիկ Մորոզովը: Նոյնպէս «մերկացրեց» սնփական հօրը:... Պավլիկի մասին գրքեր գրուեցին, բանաստեղծութիւններ ու պոեմներ: Արձաններ կանգնեցին մանուկ «հերոսին»: Պիոներական լաւագոյն ճամբարները հպարտութեամբ կրում էին նրա անունը» («Նորք», 1989, *թիւ* 7):

digitised by A.R.A.R.@

Իր հայրը «մերկացուցած» Պավլիկ Մորոզովի մասին գիրք, բանաստեղծութիւն ու պոեմ, ու արձան, ու ճամբարներ՝ ի՛ր անունով։

Սարսափելի է։

Ու աւելի՛ն, որուն ակնարկած է այս անգամ Վլադիմիր Դանիէլեան.

«Այդ հարցի մասին ես այլեւս չխօսեցի ոչ մէկի հետ։ Թէեւ ինձ դաստիարակել էին Պավլիկ Մորոզովի օրինակով. ես հասկանում էի, որ հայրս իրաւացի էր··· եւ լռեցի» («Նորք», 1989, *թիւ* 8)։

Տեղի ունեցաւ նոյնիսկ այդ մէկը, Պավլիկ Մորոզովի օրինակով հայր ու հարազատներ մատնելու դաստիարակչական գործընթացը, որ ապաբարոյ հերոսներու ծնունդ տալով՝ դուռ բացաւ ահարկու ողբերգութեանց։

Մորոզովեան տիպի վիժուկ մը առանձնացուցած է նաեւ գրագէտ Մկրտիչ Արմէն, իր «Պատուիրեցին յանձնել ձեզ» անուն համբարձին շարքին մէջ, «Երգ-երգոց» կտորի վերջին էջին, զուտ համայնավար միջավայրի ծնունդ պատանի մը, իր կարգին անմոռանալի, որ «Քնչական մարմինների ձեռքն էր յանձնել իր հարազատ եղբօրը, հրաժարել էր իր հարազատ հօրից, լքել իր հարազատ մօրը՝ միայն այն պատճառով, որ այդքան տարի իր կողքին հանդուրժել էր այդպիսի ամուսնու» (էջ 226)։

Ստալինեան «37»ին եւ բերիական յաջորդ տարիներուն մեր մօտ ալ պատահեցան նոյնանման հրաժարումներ։ Դուք կը յիշէք հարկաւ այս ամսագրին մէջ անգամ մը ուշադրութեան յանձնուած Թոթովենցի ողբերգութեան մէկ երեսը, որ զարհուրելի համեմատութիւններու հասաւ ա՛յն առեն մանաւանդ, երբ բանտային միջավայրին ու մթնոլորտին մէջ՝ «Կինը հւ միակ տղան եկել էին քննիչի մօտ եւ յայտնել, որ հրաժարւում են հակայեղափոխական ամուսնուց եւ հօրից»։

Հայաստանի մէջ պատահեցան նման դէպքեր, մուրճ ու մանգաղի սպառնալիքին տակ, կամ «արեգնացեալ» կացինին, այլ շատ քիչ անգամ ուժմունքին թելադրանքով։

Ուժմունքը եւ կացինը։

Երբ մէկը ազդեցութիւն չէր գործեր, իսկոյն գործադրութեան կը դրուէր միւսը։

Ստեղծուած այս միջավայրին մէջ դժուար չէ այլեւս պատկերացնել, թէ հոգեկան ինչ կազմութիւն կրնայ ունենալ մէկը, որ կը կրէ նաեւ ազգի արիւն։

Քնարգատ Դաւիթ Գասպարեանի տողերուն ընթերցումով դուք պատկերացուցիք իրենց հայ կիները քշող ազգի ամուսինները, բայց չենք կարծեր, որ պիտի կարենայիք պատկերացնել «ազգայնամոլ» նոյն պատճառներով իրենց հայ մայրերէն հրաժարած ազգի որդիները, եթէ մեզի յաջողէր հոս մատնանշել անոնց քաջագործութեան նկարագրութիւնը։

Հայ աղջիկներուն չէր բաւեր կարծէք ազգրիներու հարսնացած ըլլալու դժբախտութիւնը, զոր հազարապատկելու պէտքը զգացած են իրենց արգանդներուն մէջ չնչաւորուած այդ գեռատի արարածները։

Մարդ իր մայրը չ'ընտրեր, բոլոր պարագաներուն մայրը մայր է, անփոխարինելի ու անկրկնելի ըլլած են իմաստունները, առանց իրենց միտքէն անցընելու հաւանաբար, որ օր մը համայնավար ուժմունք մը կը պարտադրուի միլիոններու եւ ազգերներ կրնան յայտնուիլ մեր դժբախտ մոլորակին վրայ···

digitised by A.R.A.R.@

Ա. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

«ԻՆՔԸ՝ ԱՍՏՈՒԱԾԸ» ԵՒ ԵՍ

— Ի՞նչ է, 37 թիւ կրկնում է, ու ես տեղա՞ց չեմ։ Գրքի պատասխանատու՞ ես եմ, ես էլ պատասխան կը տամ... (Անատոլի Սոֆրոնով)։

«Լիտերատուրնայա գազետա»յի սոյն թուի սեպտեմբերեան համարներից մէկում տպագրուած Արկադի Վագսբերգի «Բուռն ծափահարութիւններ» ակնարկում կարդացինք Աղրբէջանի ժողովրդական գրող Սուլէյման Ռահիմովի բնութագիրը Հէյդար Ալիեւի մասին. «Եթէ հաւատանք Աստծուն, կարելի է ասել, որ յանձին Հէյդար Ալիեւի մեր առջեւ կանգնած է ինքը՝ Աստուածը։ Մեր ժողովրդին Աստուած ինքն է ուղարկել այդ քաջարի զաւակին...»։

Այս տողերը ինձ ակամայ յիշեցրին 1982 թուի իմ հանդիպումը «մեր առջեւ կանգնած Աստծոյ» Հէյդար Ալիեւի հետ։

Նոր էի վերադարձել Ֆրանսիայից, ուր մեկնել էի «Օգոնեոկ» հանդէսի յանձնարարութեամբ՝ Ֆրանսահայ գաղութի մասին նոր նիւթեր ժեռք բերելու նպատակով։ Հեռախօսով կապուեցի «Օգոնեոկ»ի գլխաւոր խմբագիր Անատոլի Սոֆրոնովի հետ։ Նա աչքերի վիրահատութիւնից յետոյ անշարժ պառկած էր տանը։ Իմանալով, որ զանգահարողը Փարիզից վերադարձած հեղինակն է, նա խնդրեց բժիշկների սահմանած կարգը եւ տիկնոջ միջոցով խնդրեց անմիջապէս այցելել իրեն։

Առաջին հարցը, որ ուղղեց ինձ Սոֆրոնովը, հետեւեալն էր. «Ի՞նչ նոր նիւթ ես բերել Ֆրանսահայ գաղութի կեանքից»։

Պատմեցի, որ հայրենիքից հեռու ապրող հայերից շատերը չեն կորցրել իրենց ազգային ինքնատիպութիւնը, իսկ առաւել ընդունակներն իրենց տաղանդով ու հանրաճանաչութեամբ ամենուին չեն զիջում այն երկրի «աստղերին», որը նրանց ապրելու եւ ստեղծագործելու հնարաւորութիւն է տուել։ Նրանցից մէկը ականաւոր քանդակագործ Յակոբ Գիւրջեանն է, որը հայրենիքից հեռու, Ֆրանսիայի պէս մի երկրում չկորաւ աւազահատիկի պէս, այլ վաստակեց համընդհանուր ճանաչում։ Դրա վկայութիւններից մէկն այն է, որ Փարիզի կենտրոնում՝ Լ. Տոլստոյի անուան պուրակում, տեղադրուած է նրա կերտած Տոլստոյի սպիտակ մարմարեայ կիսանդրին։ Գիւրջեանն իր այդ գործը նուիրել է Փարիզին՝ իբրեւ հայ արուեստագէտի երախտագիտութեան արտայայտութիւն այն բանի համար, որ ֆրանսիական ժողովուրդն իր հողում տեղ է տուել ցեղասպանութիւնից փրկուած հայ գաղթականներին։

Այստեղ Անատոլի Սոֆրոնովն ընդհատեց ինձ.

— Կարող ես չշարունակել, Յակոբ Գիւրջեանին նուիրուած ակնարկը կը տանք «Օգոնեոկ»ի առաջիկայ համարում, գնա՛, փակուիր ու աշխատիր։ Յաջողութիւն քեզ...

Եւ այսպէս, 1982 թուականի Դեկտեմբեր ամսուայ «Օգոնեոկ»ի 50րդ համարում լոյս տեսաւ իմ «Քանդակագործ Յակոբ Գիւրջեան» ակնարկը։

digitised by A.R.A.R.@

Ակնարկը սկսում է հետեւեալ տողերով. «Քանդակագործ Յակոբ Գիւրջեանի ձեւաւորման եւ հաստատման տարիները անցել են հայրենիքից հեռու։ Նա ծնուել է 1881 թուականի Դեկտեմբերի 5ին, Հայաստանի գեղատեսիլ վայրերից մէկում, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում» (ընդգծումը մերն է — Ա. Ա.)։

Դժուար է նկարագրել այն ամէնը, ինչ տեղի ունեցաւ «Օգոնեոկ»ի էջերում ակնարկը լոյս տեսնելուց յետոյ։

«Ինքը Աստուածը»՝ Հէյդար Ալիեւը, որի թուրը այն ժամանակ կտրում էր աջ ու ձախ, կատաղօրէն յարձակուեց «Օգոնեոկ»ի գլխաւոր խմբագրի վրայ։ Անհերեւակայելի մեղադրանքներ ու լուտանքներ թափուեցին ամսագրի ու ակնարկի հեղինակի հասցէին։ Գլխաւոր խմբագրի կառավարական հեռախօսով հնչեցին ինքնակալի հայհոյանքներով համեմուած սպառնալիքները։

— Ո՞վ է իրաւունք տուել ակնարկի հեղինակին եւ «Օգոնեոկ»ի խմբագրութեանը վերանայելու Սովետական Ադրբէջանի պետական սահմանները։ Այդպիսի պրովոկացիոն ելոյթի համար գլխով պատասխան կը տաք թէ՛ դուք, թէ՛ ձեր հեղինակը։

Ալիեւը չբաւարարուեց հեռախօսային սպառնալիքներով, նա կազմակերպեց Ադրբէջանից ուղարկուող զրպարտիչ ու թունոտ նամակների հոսք ՍՄԿԿ կենտկոմի եւ «Օգոնեոկ»ի հասցէով, ինչի հետեւանքով ամբողջ խմբագրութիւնը գտնուում էր տենդային վիճակում, իսկ ակնարկի հեղինակը ստիպուած էր գրաւոր եւ բանաւոր բացատրութիւններ տալ այն հանրայայտ իրողութեան մասին, որ Արցախը Հայաստանի գեղատեսիլ մասերից մէկն էր, որ տակաւին 1722 թուականին Ղարաբաղը ռուսական քաղաքականութեան շնորհիւ հռչակուեց հայկական անկախ մելիքութիւն։

Օգտուելով «Աստծոյ» իր դիրքից, Հէյդար Ալիեւը հասաւ այն բանին, որ «Օգոնեոկ»ում, գլխաւոր խմբագիր Ա. Սոֆրոնովի կամքին հակառակ, տպագրուեց պատմական իրողութիւնը կեղծող, Լեռնային Ղարաբաղը Սովետական Ադրբէջանի մարզարիտը համարող փոքրիկ մի յօդուած։

Այդ օրերին «Օգոնեոկ»ի յաւելուածով հրատարակութեան էին պատրաստւում «Արարատից մինչեւ Մոմբլան» իմ Ֆրանսիական նոթերը։ Բաժնի վարիչը, ներկայանալով Սոֆրոնովին, ասաց.

— Այս գէպքերից յետոյ Ձեր անունից կարգադրութիւն եմ պատրաստել Աշոտ Արզումանեանի գրքի շարուածքը ցրելու մասին։

Մտազբաղ ու յոգնած Սոֆրոնովը ցածր ձայնով հարցրեց.

— Ի՞նչ է, 37 թիւը կրկնւում է, ու ես տեղեա՞կ չեմ։ Գրքի պատասխանատուն ե՛ս եմ, ես էլ պատասխան կը տամ...

Եւ, իրօք, որոշ ժամանակ անց գրքոյկը լոյս տեսաւ հարիւր հազար օրինակ տպաքանակով։

...Այս լարուած օրերին յիշողութեանս մէջ կրկին վերադառնում են հայրենի Ղարաբաղի հետ կապուած անցքերը։ Աչքիս առաջ շարունակ 1920 թ. Շուշուայ կոտորածն է, երբ տատս Քարեւանկ գիւղի անգունդ գահավիժող «Ծի կամանով» վեցամեայ մանչուկիս աղջկայ շորերով, դիակների ու հրդեհի միջով դուրս հանեց քաղաքից։ Կարելի՞ էր, արդեօք, ենթադրել, որ չուրջ 70 տարի անց նման ոճրագործութիւն պիտի կրկնուի Սումգայիթում...

Կարծում եմ, ժամանակի թելադրանքով մեր երկրում իրագործուող նոր ապրելակերպն ու մտածողութիւնը արմատախիլ կ'անեն հակամարդկային ոճիրները («Գրական թերթ», 1988, թիւ 44)։

ԱՇՈՏ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Հաւատացած եմ նաեւ, որ կը գայ ժամանակը, երբ բարձրաձայն կը խօսուի շատ ահաւոր բաների մասին, կը խօսուի այն գնդակահարուած Բաղիրովի օրօք սկսուած մեծապոյն կաշառակեր ու հրապարակային լկտիութեամբ կաշառք տուող Ալիեւի (որ, չգիտես ինչու, սովետական օրէնքներով չի տրուում դատի) եւ այսօրուայ Բաղիրովի ջանքերով Ադրբէջանում շարունակուող հայկական գենոցիդի մասին··· Այո, այո, գենոցիդի··· («Հայրենիք», 9 Յունիս 1988)։

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

Ալիեւը հրթիռի արագութեամբ կարողացաւ գրաւել Բրեժնեւի եւ Սուսլովի վստահութիւնն ու համակրանքը։ Նա կենտկոմի դեկավարներին համոզեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցի արծարծումն իսկ նացիոնալիզմ է, իսկ արծարծողները՝ նացիոնալիստներ («Գարուն», 1989, թիւ 7)։

ԱՆՏՈՆ ՓՈՂԻՆԵԱՆ

ԹԱԹԱՐ ԱԼԻԵԻԻ ԹՐՔՈՒԹԻՒՆԸ···

Ադրբէջանի համայնավար կուսակցութեան առաջին քարտուղարի պաշտօնին բարձրացուած Նարիմանովներուն, Բաղիրովներուն, Ախունտովներուն թէ աւելի ուշ նոյն պաշտօնով հանդէս եկած շարագործներուն մէջ չկայ թերեւս մէկը, որ մարդկային բացասական կողմերը այնքան թրքացուցած ըլլայ, որքան թրքացուց 70ական թուականներէն քիչ առաջ իշխանութեան հասած ու յաջորդ տասնամեակին անարգել թրքացած Հէյդար Ալիեւը։

Իր՝ Ալիեւի օրով ու օրինակով էր, որ կուսակցական, քաղաքական ու մտաւորական խաւին մէջ առաւելագոյն չափով մը արմատ նետեցին ու ծաղկման բարձրագոյն աստիճաններուն հասան խարդաւանանքն ու ասոր ազգակից բնաւորութեան ա՛յն գիծերը, որոնք մարդ մը դուրս կը չպրտեն նուիրագործուած հակացողութիւններու շրջածիրէն ու զայն կը մատեցնեն Աստուծոյ պատկերը հերքող արարածներու դասուն։

Հակառակ այս բոլորին, հակառակ սուտը, կեղծիքը, քծնանքը, կաշառակերութիւնը, ստորաքարշութիւնը, կեղեքումները, կողոպուտներն ու միւսները բացայայտօրէն անձնաւորուած Ալիեւին, ազերիներէն մէկը, այն ալ գրո՛ղ, կանխող զոյգ էջերուն արտագրուած գրութեան առիթ տուող Սուլէյման Ռահիմով, զայն Աստուա՛ծ կը յորջորջէ. «Եթէ հաւատանք Աստուծոյն, կարելի է ասել, որ յանձին Հէյդար Ալիեւի մեր առաջ կանգնած է ինքը՝ Աստուածը»։

Շատ զարմանալի պէտք չէ թուի սակայն այս յորջորջումը, տրուած ըլլալով, որ ազերիներն ու անոնց ցեղակիցները սովորութիւն ունին ոճրագործները աստուածացնելու եւ աստուածները խաչելու։ Զարմանալին հայրենական եզերքի մը տէր կանգնելու Ալիեւի մոլուցքն է, Լեռնային Ղարաբաղը «Հայրենի գեղատեսիլ վայրերէն մէկը» համարող մարդոց կարդացած իր սպառնալիքը մա՛նաւանդ, որուն յանախ կը դիմէր, ինչպէս կը պարզուի վերը նըշուած հատատումէն, ընդ հովանեաւ Հայաստանի հանդէպ ռոմանովեան քաղաքականութեան հաւատարիմ կարմիր ցարերէն վերջընթերին, Ստալինի թունդ ժառանգորդներէն Լէոնիդ Բրեժնեւի՝ «ճամոլ» ու ազերիամիտ···

digitised by A.R.A.R.@

...Հայաստան եկաւ Անաստաս Միկոյեանը: Ես շատ մեծ յոյսեր էի կապում նրա հետ, կարծելով, ազգասիրութիւնը կը վերականգնի: Հապարաւոր բնոտնիքներ դիմել էին Միկոյեանին, սակայն նրա այցը ոչնչով մեզ չօգնեց («Դարուն», 1990, թիւ 10):

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹԵԱՆ

...Հարցը պատրաստում էր լայն քննարկման, սակայն Միկոյեանը համոզում է Խրուշչովին, թէ այդ խնդրի արծարծումը կարող է խոչընդոտել երկու «եղբայրական» ժողովրդների բարեկամութիւնը եւ ժամանակը չէ այն բարձրացնել: Եւ դա այն ժամանակ, երբ 1962 թ. Մրութիւնում դրչի մէկ հարուածով լուծուեցին բազմաթիւ վիճելի տարածքային հարցեր («Աւանգարդ», 13 Ապրիլ 1990):

Ա. ՍԱՃԱՐԵԱՆ

...ԵՒ ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆԻ ԹԱԹԱՐՈՒԹԻՒՆԸ

Ազերի համայնավարները յատկապէս մեր սահմաններուն վրայ ու հայրենական եզերքներու պորտին շարունակ միջազգայնականութիւն յեղյեղեցին ու խաղացին եւ կիրարկեցին բացառապէս ազգայնամոլ քաղաքականութիւն մը, մինչդեռ մեր համայնավարները Հոկտեմբերեան յեղափոխութեան վաղորդայնէն սկսեալ բոլորանուէր կիրքով մը ծառայագրուեցան կարմիր ցնորքներուն, յանուն համաշխարհային յեղափոխութեան անտեսելով եւ երբեմն բոլորովին ուրանալով ազգը, ազգային իրաւունքները, սրբութիւնները:

Դասակարգը ազգէն վեր դասող ու հայրենիքի հասկացողութիւնը համաշխարհային յեղափոխութեան բանդագուշանքներուն ստորադասող այդ մտայնութեան նուիրուած մեր առաջամարտիկներուն՝ Մուսայէլեաններուն, Միասնիկեաններուն, Նուրիջանեան Ալիխ ու Աթարբեկեան Գէորգ անուն արիւնարբուներուն մէջ, զարմանալի նկարագիր մը կազմեց յատկապէս Անաստաս Միկոյեան կոչուած հարուածային համայնավարը, որ պալատական ներքինիի մը պէս լրտեսեց իր վերադասներուն քաղաքական քայլերը ու ամէնէն առաջ ի՛նք մտաւ անոնց արիւնոտ ոլորտին մէջ, բնաւ հաշուի չառնելով զինք ծնած ժողովուրդին տառապանքներն ու արեան պատգամները:

Անգամ մը եւս կարդացէք միջազգայնականութեան նշանախօսքեր հոլոված Հէյդար Ալիեւի ազգայնամոլութիւնը հաստատող աճապարանքը եւ անոր եռեւէն անմիջապէս պատկերացուցէք Խրուշչեւի առիւ Միկոյեանի ազգադաւ քծնանքը, եւ ապա՝ Ղարաբաղի առընչութեամբ ճշդեցէք, եթէ կրնաք, տարբերութիւնը թաթար Ալիեւին ու հայ Միկոյեանին:

Անաստաս Միկոյեան անուն-մականունը կրող այս պարոնը ազերիներու հաշուոյն միայն Ղարաբաղին չդաւաճանեց, թուրքերուն հաշուոյն Հայաստանի միւս եզերքներուն առիթով ալ չերկնչեցաւ դաւաճանական ելոյթներէ եւ ձեռնարկներէ, դաւաճանեց Ջարենցին ու 37ին յանիրաւի զնդան նետուած մտաւորականներուն, եւ չենք գիտեր ուրիշ քանի անգամ մեր ժողովուրդի տարբեր հատուածներուն:

Պատեհ առիթով մը «Բագին» պիտի բանայ քաղաքական այս ներքինիին թղթածրարը...

digitised by A.R.A.R.@

Բաղին «ԳՆԱՑԷՔ ԱԴՐԲԵՋԱՆ...»

Հանգուցեալ քննադատ Սուրէն Աղաբաբեան, որ իր սերունդի միւս մտաւորականներէն չատերուն պէս սուտ տեսութիւններու վրայ կառուցեց իր բոլոր աշխատանքները, չուրջ երկու տասնամեակ առաջ, «Սովետական գրականութիւն» ամսագրին (1974, թիւ 1) մէջ, լենինական ազգային քաղաքականութեան անխախտականութեան իբրեւ առհաւատչեայ՝ կը մէջբերէր Զարենցի մէկ տպաւորութիւնը.

— Ինձ թւում է,— ասում է Զարենցը Ադրբեջանի ժողկոմխորհում 1935ին ունեցած հոյլթում,— չափազանցութիւն չի լինի եթէ ասեմ, որ Լենինի ազգային քաղաքականութիւնը ամբողջութեամբ առած Խորհրդային Միութեան մէջ, պատմական մեծագոյն նշանակութիւն ունի ամբողջ աշխարհի համար: Ու եթէ ինձ հարցնեն կոնկրետ ո՞ր օրինակով կարելի է ակնառու կերպով ցոյց տալ ազգային քաղաքականութեան վեհութիւնը, ապա ես կը պատասխանէի՝ «Գնացէք Ադրբեջան»:

Զափածոյ իր չռայլութիւններէն զատ, Զարենց Ադրբեջանի հաշուոյն շաղ տուած է յորդորական ուրիշ շռայլութիւններ եւս, որոնց մէկ ուրիշը յորդած է Քնարիկ Աղախանեանի գրութեան մէջ.

Բաժակաճառային մթնոլորտներու մէջ ըսուած բաժակաճառային այս խօսքերը, որոնք յայնարէն չահարկուեցան ինտերնացիոնալիզմ խաղացող քաղաքական թէ մտաւորական պաշտօնեաներուն կողմէ, մեր հատուածներէն մէկուն համար երէկ զուրկ էին նշանակութենէ, իսկ այսօր ոչ ոք կրնայ կու տայ անոնց, որովհետեւ ամէն ոք, ամէնքը, ամէ՛նքս, «գնացէք Ադրբեջան» ու հաստատեցինք «Լենինի ազգային քաղաքականութեան» բովանդակ սնանկութիւնը...

Ադրբեջանէն ետք, եղանք Նաւ Ղարաբաղ ու հոն եւս զգացինք ինտերնացիոնալիզմի քղամիթ հագած ազգայնամոլներուն վերաբերումը, որ կ'արգիլէր մինչեւ անգամ իր՝ այնքան շատ Ադրբեջան հոլոված Զարենցի յոբելեանը նշել, ինչպէս ցոյց կու տայ վարի վկայութիւնը...

ԲԱ, ՉԱՐԵՆՑԻ՞Ն ԷԼ...

Ղարաբաղցիները հառաչեցին, վրդովուեցին, խլրտացին, բողոքեցին:

— Քիչ են ցոյց տալիս, քի՛չ...: Մի հաւատաք: Այսօր էլ Ադրբեջանական ԽՍՀում մէկ միլիոն հայ կայ: Մէկ միլիոն, ո՛չ պակաս...

Նորից են աղմկում, ասում, թէ եթէ բոլոր հայերը միասին լինէին, եթէ հայից խլած հողերի գոնէ կէսի կէսը յետ տային...: Մէկը ահռելի զղջով լսնիս մ է. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

— Զարենցը...Զարե՛նցը: Ողորմի հոգուն: Եօթանասուներեակ արին, ութսունամեակ արին: Մեզ ժամ՝ Ղարաբաղում չթողին, որ գոնէ մի կիսանգրի գնենք Զարենցի յիշատակին...: Չթողին:

Լեռները զղջում են, ձորերը հառաչում են, ժայռերը փլւում են:

— Տէր Աստուած,— ձեռքերը տարածելով աղաղակում է Հելսինկիի քոյրիկը:— Բա Զարենցի՞ն էլ...: Անգթորէն վիրաւորում են մեր արժանապատուութիւնը («Նորք», 1989, թիւ 11):

Մ.Խ.

digitised by A.R.A.R.@

Բագին

ԴԺՈՒԱՐ Է ԴԻՄԱՆԱԼ...

Բացայայտ իրողութիւն է այլևս, որ մասնագիր, օրէնսդիր, քերթող, բազմաստուածեան խաչքար, հին մատեաններ, նոր կապանքներ, ու հարիւրաւոր ու հարիւրաւոր յիշատակարաններ իւրացնելու ազերիներու մոլեգնութիւնը սահման չճանչցաւ ու չի ճանչնար: Անոնք սկսած են ասպատակել նոյնիսկ Հոկտեմբերեան յեղափոխութեան գծած սահմաններէն ներս, ու երբ դժուար կ'ըլլայ իրենց իւրացումը, կը դիմեն ցեղախմբային հին եղանակներուն, պղծութեան ու աւերումի:

Ազերիներու ազերիութիւնը աւելի հասկնալի է սակայն հոս, քան հայ համայնավար դէմքերու յուշարձանները պղծող վանդալներուն հանդէպ առա համայնավար ջոջերուն ձեւացուցած անտեղեակութիւնը կամ ցոյց տուած ցուրտ ձեռնպահութիւնը:

Պարզ ակնարկ մը նետեցէք քովի սիւնակին արտագրուած երկու արձակագիրներուն, մանաւանդ Զօրի Բալայեանի տողերուն վրայ եւ արդէն պարզ կը դառնայ պաշտպանութեան նախարար Եազովի մատնած անտարբերութեան ողջ չնչականութիւնը:

Կրնայի պետը, եւ իր նախարարները, եւ իր գաղափարախօսները եթէ յանուն համայնավարութեան նահատակուած գործիչներուն ու համայնավարութեան լուսնէլից յաղթանակներ ապահոված մարաքիսներուն յիշատակին ալ տէր պիտի չկանգնին, ալ ո՞ր օրուան եւ որո՞ւ համար կը շարունակեն արդեօք կարմիր լաբերու վրայ կարմիր եղանակներ նուագել...

Կը թուի, թէ Ղարաբաղի մեր հասուածը բոլորովին լքուած է կեդրոնէն ու ձգուած թուրք ազերիներու ու ազերի թուրքերու ազգայնամոլութեամբ բորբոքած կամայականութիւններուն: «Հետաքրքիր է,— պիտի ըսէր զարմեալ Զօրի Բալայեան,— թէ այդ դէպքում ինչպէս վարուել ռազմաճակատում զոհուած քսանմերկու հազար դարաբաղցիների յիշատակի հետ» («Աւանգարդ», 11 Փետրուար 1990):

Արցախեան այսքան մեծ զոհաբերութիւններէն ու մեծաթիւ զոհերէն ետք, դժուար է իրապէս դիմանալ վերնախաւին ցուցաբերած ապերախտ վերաբերումներուն ու պարարանութիւնի չըլլալ բոլորովին...

ԿԱՆԽԵԼ ԿԱՐԵԼԻ Է ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Նրանց երկիրսութիւնը բաւական երկար տեւեց: Նրանից յետոյ Վաչագան Գրիգորեանը եւ նա մատնցանք պաշտպանութեան մինիստր Դ. Տ. Եազովին: Ես անմիջապէս հարց տուեցի. «Դիմիտրի Տիմոֆէեւիչ, արդեօք դուք գիտէ՞ք, որ արդէն իմն տմիս է անցել այն օրից, ինչ Կիրովաբադում աւերել ու պղծել են Խորհրդային Միութեան մարշալ Ց. Բ. Բաղրամեանի յուշարձանը»: «Առաջին անգամ եմ լսում»,— ասաց մինիստրը: «Այդ ինչպէ՞ս է լինում,— խստակցութեանը միջամտեց Վաչիկը,— որ երկրում պղծել են Խորհրդային ակամատոր զորավարի յուշարձանը եւ երկրի պաշտպանութեան մինիստրը այդ մասին ոչինչ չգիտէ»: Եւ պաշտպանութեան մինիստրը անկեղծորէն հաստատեց իր անտեղեակութիւնը: Ես երեսն ասացի, որ այդ մասին հաղարաւոր հեռագրեր են ուղարկուած երկրի պաշտպանութեան մինիստրի անունով: Դիմիտրի Եազովը ուսերը վեր քաշեց եւ պատասխանեց. «Չեմ ստացել»: «Իսկ հեռագրեր չէ՞ք ստացել, որ եայկական Շուշի քաղաքում պղծուել է Խորհրդային Միութեան կրկնակի հերոս Նելսոն Ստեփանեանի յուշարձանը»: Այդ մասին էլ չգիտէր մինիստրը («Աւանգարդ», 9 Օգոստոս 1989):

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

***

Շահումեանը կուրծքը դէմ տուած Թաքուն էր պաշտպանում մուսաւաթականներից, որպէսզի այսօր մուսաւաթականների յետնորդները նրա անունը ջնջեն Թաքուի կոմունայի պատմութիւնից, անարգելով խարդուիչուր անեն Թաքուում կանգնած նրա արձանը... («Գրական թերթ», 1990, թիւ 16):

ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Զարգացնելով անցեալի դեմոկրատական գրականութեան լաւագոյն աւանդները, սովետահայ գրողներն իրենց ստեղծագործութիւններում արտացոլել են հայ եւ ադրբեջանական ժողովրդների բարեկամ ապրելու համակարծակցութիւնը, նրանց համատեղ պայքարը սոցիալիզմի կառուցման գործում: Այս տեսակէտից ուշադրութեան արժանի են Յակոբ Յակոբեանի, Եղիշէ Չարենցի, Ակսել Բակունցի, Նայիրի Զարեանի, Դերենիկ Դեմիրճեանի, Թաթուլ Հուրեանի, Արշաւիր Դարբնու, Մովսէս Արազու, Մարգար Դաւթեանի եւ այլ հայ գրողների երկերը:

...«Ինտերնացիոնալ երեկոյի կենաց»*ում (1936 թ. Յունուարի 7) Չարենցը գրում է.* «Հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ ես տեսայ մի թրքուհի, որն ինստիտուտի պրոֆեսորի ասիստենտն էր, թրքուհին–բժշկուհի, թրքուհին–օդաչու, բանաստեղծուհի, այսինքն՝ ես տեսայ թուրք կնոջ, որ ադրբեջանական կուլտուրական կեանքի բոլոր բնագաւառներում հսկայական քայլ է արել դէպի առաջ: Դա ինձ համար ինչ–որ մի հերիաթային երեւոյթ է, ամենաարժանաւորն է այն ամէնից, ինչ ես տեսել եմ այստեղ՝ Բաքուում...»:

Ագատ Վշտունին 1923 թ. «Ազրբաջան» *բանաստեղծութեամբ ջերմ չնչով երգեց բիւրաւոր շահերով լուսաւորուած, ջահել ու իգիտ Սովետական Ադրբեջանը: Այդ բանաստեղծութիւնը լայն տարածում է գտել նաեւ որպէս երգի տեքստ (երաժշտութիւնը՝ Ա. Տէր–Ղեւոնդեանի): Ա. Վշտունին գովերգում է սոցիալիստական Ադրբեջանը, փառաբանում նաւթաշխարհի մարդկանց:*

Ադրբեջանին եւ ադրբեջանական ժողովրդին նուիրուած լաւագոյն բանաստեղծութիւնների շարքում իրենց տեղն ունեն Դ. Սարեանի «Ադրբեջան», «Բաժակ եղբայրութեան», «Կրզ–Կալասի» *ստեղծագործութիւնները:*

Հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամութիւնը իր վառ արտայայտութիւնն է գտել Ա. Բակունցի «Եղբայրութեան ընկուզենիները» *պատմուածքում: Գրական այդ հոյակապ կոթողի մէջ Բակունցը համոզիչ գոյներով տուել է դաշնակցականների եւ մուսաւաթականների ողջ էութիւնը, որոնք թշնամանք էին սերմանում անդրկովկասեան ժողովուրդների միջեւ: Ադրբեջանցու վերածնունդը Դ. Դեմիրճեանը պատկերել է իր* «Նիզեար» *վիպակում: Նկարագրելով ադրբեջանուհու դառը կեանքը, գրողը միաժամանակ ցոյց է տուել նոր կեանքի հերոսուհուն՝ Նիզեարին, որը, փշրելով յետամնաց սովորութիւնները, տնտեսական կապանքները, քայլում է նոր, լուսաշող ճանապարհով:*

Բաքուի 26 կոմիսարների հերոսական կեանքը պատկերող մի շարք արժէքաւոր երկեր է ստեղծել սովետահայ անուանի բանաստեղծ Նայիրի Զարեանը:

Տաղանդաւոր գրող Գարեգին Սեւունցը մօտիկից ճանաչում էր Բաքուն, նրա մարդկանց: Այդ է վկայում նրա «Մովախորշում» *վէպը, որի մէջ գրողը ցոյց է տուել հայ եւ ադրբեջանական ուլխատաւորութեան պայքարը դաշնակցականների եւ մուսաւաթականների դէմ, ապա, սովետական տարիներին Բաքուի արդիւնաբերութեան զարգացման ասպարէզում ռուս, հայ, ադրբեջանցի բանուորների ստեղծագործ աշխատանքը* («Գրական թերթ», *1970, թիւ 40):*

ՔՆԱՐԻԿ ԱՂԱԽԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բագին

ՎՇՏՈՒՆԵԱՆ ԱՆՀԵԹԵԹՈՒԹԻՒՆ

Հայրենի մեր մամուլին հին թիւերը այլ անցընելու պատեհութիւն ունեցող մարդերը յաճախ կը հանդիպին սովետականացած Ադրբէջանին եւ ի՛րր թէ սովետականացած ադրբէջանցիներուն ու ուրիշներուն նուիրուած բազմաթիւ գրութիւններու, որոնց մէկ պզտիկ հանրագումարը կազմուած է դիմացի էջին:

Քնարիկ Ազախանեանի յիշատակած չափանոներէն երկուքը՝ Զարենցի «Ոդոյն»ը եւ Գեղամ Սարեանի «Ադրբէյճան»ը տեսանք «Բագին»ի անցեալ տարուան վերջին համարին մէջ, իսկ ի փառս Ադրբէջանի հիւսուած զովերգներէն իրրեւ ցայտուն նմոյշ այսօր կ՚անդրադառնանք Ազատ Վշտունիի «Ադրբայջանը», որ, ըստ Ազախանեանի՝ ո՛չ միայն իրրեւ բանաստեղծութիւն լայն տարածում գտած է, այլեւ արժանացած է երգի վերածուելու փառքին:

Համայնավար մթնոլորտին մէջ մարդիկ վշտունեան որքա՞ն այսպիսի անհեթեթութիւններ դուրս տուին եւ այդքան ափսոս ու ժամանակ արժած այդ թիւածքներուն ազախանեանական ի՞նչ պակներ հիւսեցին տուրիչներ:

Հակառակ հանրայայտ հարկադրանքներուն, խորհրդային կարգերու հպատակ խոնարհները շարունակ ձեւացուցին, որ տէրն են եղբայրութեան մը, հակադրաբար աւելի վաղ շրջաններու, երբ դաշնակցականներն ու մուսաւաթականները «թշնամանք էին սերմանում անդրկովկասեան ժողովուրդների միջեւ»:

Նման ձրի հաստատումներու դէմ բնաւ հարկ չկայ այսօր վէճ յարուցանելու: Անցնինք, յիշեցնելով միայն, որ Ղարաբաղն ու Հայրենի միւս եզերքները մուսաւաթականներու Քրքութեան դէմ պայքարող դաշնակցականներուն զէնքին շաչիւնները աւելի արդիւնաւոր էին՝ քան ձոյլ ֆնարով յղած Զարենցի «Ոդոյն»ները, ու աւելի հայրենասիրական՝ քան Գեղամ Սարեանի սուտգայթեան սէրերը, ու աւելի ազգու՝ քան իշչի-ֆահլային, իգիթներուն, ֆաթիմաներուն ու հիւսդներ չաղախած միւսներուն ուղղած Վշտունիի սալամները...

ԱԶՐԲԱՅՋԱՆ

Զա՜ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Իգիթ ես հիմի,
Զահել:
Վառել ես բիւրավառ ջահեր.
Վառել ես վառ շէմս-արեւ:

Զա՜ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Սարսահ խե՛ր,
Սայա՛մ,
Բարե՛ւ:

Գարգել ես բազուկդ կուռ
Դէպի ապագան լուսեղ,
Քանդում ես աշխարհը հին,
Քանդում ես շղթայ,
Կապանք:

Դրել ես դու մի խան Ալի
Գոդպատէ սալի վրայ,
Ծծում ես մուրճովդ ամուր
Ու շինում
Անիւ,
Մատոր:

Խփի՛ր խաւարի դռան
Կոանդ հուժկու
Ու կուռ,
Քանդի՛ր պարիսպները փակ,
Քանդի՛ր լուսամուտ
Ու դուռ,
Թող ահի-մահի երկրում
Տարածուի բերկրում,
Ցնծում.
Թող ցոլք
Ու ցասում ծիլայ
Իշչի-Ֆահլայի սրտում:

Զա՜ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Զահակիր,
Զահել
Զիւան,
Կանգնել ես աշխարհի դիւան—
Կրծքաբաց,
Ալ կապած,
Պարթեւ:

digitised by A.R.A.R.@

Նոր Արեւելքին-Շարքին
Վառում ես ալ վառ հլդեհ:
Հէգի
Ու մէգի հոգում
Փառում ես ասպղեր հրթեռ:

Ջա՜ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Քո Ֆաթիմային սալա՛մ,
Որ երեսին էլ քող չունի,
Որ շարիաթից էլ դող չունի:

Որ եթէ ցանկայ,
Ուզի—
Կը յուզի սրտերն իգիթ,
Որ հիմա
Չի դնում հինա,
Մազերին,
Ձեռքին,
Խելքին:

Քո Ֆաթիմային սալա՛մ:
Քո Էմինէին սալա՛մ:
Քո Նեշիքէին սալա՛մ:
Սաբահ խե՛ր,
Սալա՛մ
Ու սէր:

Իմ երգը հարեմ չունի,
Հարեմի դուռն է բանդում,
Ուր հազար սրտեր կանաչ—
Խամրում են անօդ բանտում:

Իմ արեւ կրքում,
Գրկում,
Իր կարմիր գրքում,
Բա՛ցի,
Եռում է հուրը շէմսի,
Տենչանք
Ու պայքար քաջի:
Հէ՛յ,
Բաքո՛ւ,
Բաքո՛ւ,
Բաքո՛ւ,
Բա՛ց ու՛ր,
Բա քու հորերը նաւթի՞,
Ի՞նչ,
Սրբ Քոքս կ՝ուզի գաւթի՞:
Բո՞քս խաղալ կ՝ուզի քեզ հետ:
Ապա թող գործի,
Թող փորձի,
Որ զգայ ուժը բոքսիդ:

Հէ՛յ,
Բաքո՛ւ,
Բաքո՛ւ,
Բաքո՛ւ,
Բա քու փանտանները զարկող,
Բա քու խոր հորերը սարքող
Ռաբոչի-իշչի-բանուոր:
Այն, որ
Խոր հորերդ է փորում,
Այն, որ
Նոր օրերդ է բերում,
Ինչպէս չասեմ ես Արանց.
— Վա՛ր օ՛լ, է՛յ եոլդա՛շ Հասան:
— Բարե՛ւ քեզ, ընկե՛ր Սաքօ:
— Գամա՛րջոբա, ամխա՛նազօ Սոսօ:
— Զդարո՛վօ, տավա՛րիշչ Իվան:

Ջա՛ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Իգիթ ես հիմի,
Ջահել:
Վառել ես բիւրավառ ջահեր:
Վառել ես վառ շէմս-արեւ:
Ջա՛ն,
Ազրբայջա՜ն,
Այ ջա՜ն,
Սաբահ խե՛ր,
Սալա՛մ,
Բարե՛ւ:

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

1923—Մայիս,
Թիֆլիս

digitised by A.R.A.R.@

Բագին

ՍԱՐՄԵՆԵԱՆ ԷՔՍՊՐՈՄՏ

Արեւմտեան Հայաստանի Ռշտունիք գաւառին մէջ ծնած, ծնողներուն ու մօտիկ-մերձաւորներուն սպանութեան ականատես կամ ականջալուր պատանի, հետագային Սարմեն վերամկրտուած Արմենակ Սարգսեան, իր հասակակիցներուն պէս մեր ժողովուրդին վիճակուած ճակատագրի ելեւէջներուն մէջ ունեցաւ կանխահաս երիտասարդութիւն մը, ու սկսած էր արդէն բանաստեղծութիւն գրել ու տպագրել տալ, երբ 1918 Սեպտեմբերին, Ադրբեջանի ներքին գործոց նախարար Պէյ-պուտ Խան Ջիւանշիրի հրահանգով Բաքուի մէջ տեղի ունեցաւ զանգուածային վերջին ջարդը, որուն զոհ գացին 25 հազար հայեր, Բաշխի Իշխանեանի հաշուումներով՝ 29 հազար։

Կենսագրական այս դիծերուն ու անոնց զուգահեռ պատմական անցուդարձերուն ակնարկեցինք, աւելցնելու համար, որ ան, Սարմենը, չէր կրնար ծանօթ չըլլալ Բաքուի սպանդին, եւ անպայման լսած էր նաեւ, որ նշուած ողբերգութենէն տարի մը ետք, Դաշնակցութեան երեւելեան համագումարին, մեծ սպանդին կազմակերպիչ մեծ ճիւղերուն կարգին, մահուան դատապարտուեցաւ այդ մասնակի սպանդը կազմակերպած Ջիւանշիր ճիւաղը, որուն մահապատիժը գործադրուեցաւ 1921 Յուլիսի կէսերու կէս գիշերին, ոճրագործներու ոստան Գոլսոյ մէջ, Միսաք Թորլաքեանի համբուրելի ձեռքով։

Վանելով ադրբեջանական միւս յանձախանձները եւ մտաբերելով միայն 1918 Թուականի Սեպտեմբերեան սպանդը, մարգ դժուար կը հաշուի «էքսպրոմտ» գրելու Սարմենի տրամադրութեան հետ, որ ոճիրներու որջը իրեւ սիրելի ու մտերիմ քաղաք մը կը ներկայացնէ հայ ընթերցողին, կարօտ հրահրող քաղաք մը, լոյսերու քաղաք, բարի խօսք ըսող քաղաք, հիւրընկալ քաղաք...

Ձենք հասկնար, դժուար կը պատկերացնենք։

ԷՔՍՊՐՈՄՏ

Ողջո՛յն, Բաֆո՛ւ, իմ սիրելի, իմ մտերիմ,
Քո կարօտի կրակներն ինձ գիրկըդ բերին,
Ու դու հիմա յաւերժական լոյսեր վառած՝
Ինձ հետ խօսում, զրուցում ես՝ լեզու առած։
Խօսում ես դու այնպէ՛ս ծանօթ, այնպէ՛ս քարի,
Կարծես այստեղ ապրել իմ ես հազար տարի։

Շրջում եմ ես քո զովաշունչ պուրակներում,
Ուր երփներանգ ծաղիկներն են շռայլ բուրում,
Ուր զնգում է մանուկների ծիծաղն արծաթ,
Ու երգում են շատրուանները լուսացայտ։
Ամէն կողմից պայծառ աչքեր են ինձ ժպտում,
Կարծես ես նոր դուռը բացել, մտել եմ տուն։
Չէ՛, ես հիւր չեմ, այլ իսկական զաւակը քո,
Դու, հարազատ, մշտազուարթ իմ Նումգայիթ։

ՍԱՐՄԵՆ

Փորձենք աւելի թարմ օրինակի մը վրայ ձեւուած հարցումով մը բացատրել մեր միտքը։— կարելի՞ է երեւակայել հայ բանաստեղծ մը, որ այսօր կամ վաղը, քառորդ դար ետք կամ դար մը ետք նատի ու Նումգայիթի մասին լիջօրէն ու հանդիսաւորապէս «էքսպրոմտ» հիւսէ ու ըսէ.

Չէ՛, ես հիւր չեմ, այլ իսկական զաւակդ իգիթ,
Դու, հարազատ, մշտազուարթ իմ Նումգայիթ։

Ոչ, կարելի չէ, որովհետեւ կարելի չէ հաւատալ, որ կը կրկնուի կուսակցական ու պետական այն համակարգը, որ կեղծիքի վրայ հիմնեց իր դրոյթները ու մուրճ ու մանգաղին սպառնալիքներուն տակ ստիպեց մարդոց, որ իրենց կարգին չարունակ սուտեր հիւսեն, իրենց խորագոյն ապրումներուն բոլորովին անյարիր երգեր երգեն, աւելն վատնեն, ժամանակ վատնեն, անուն, արժանապատուութիւն, վատնուին յումպէտս, Սարմենները, իրենց կէսերը, աւելին...

digitised by A.R.A.R.@

Պագին

Զարմանքի ապրիլիանական ապիլինները, Սարեանի սուտ գայթքեան սիրերն, Վլասների ապատմանները, Բաքուի ասֆալտ Սարմէնի ասեմարկ գեղատեսները ու միտեները նոյնահման գայլայլները քոմֆ ի վեր, ընթերցողը հայրենի մամուլին մէջ անպայման հանդիպած պիտի է բլլայ ապրիլեանցի գրողներու եղբայրական գեղեցկանքները, որոնց յափսոսոյ մէկ նմոյշը կը հանդիսանայ Օսման Սարիկլլիի «Երեք լեռ», իսկ գաղափարախոսական օրինակը կը կրէ Սալլյման Թուսոսոմի ստորագրութիւնը.

«Սովետական իւրաքանչիւր բանաստեղծի սրբազան պարտքն է՝ իր ստեղծագործութիւններում փառաբանել մեր եղբայրական ժողովուրդների բարեկամութիւնը: Մեր հզօր, անխորտակ ուժը այդ տեսա բարեկամութեան մէջ («Գրական թերթ», 1972, թիւ 52):

Բայց որքան դիւրին է եղբայրութեան մասին այսպէս երգել երգելը, երբ եղբայրներուն Ահմեդի հայրենիքին սահմանները ընդարձակուած են Արշակի հաշուոյն, այս վերջինին հարկադիր լռութեան ատեն...

Պատահեցաւ, որ Արշակը բիւր բիւրաւոր Արշակներու հետ խորտակեց լռութեան պատը յանուն Արշակուհիներու զարաւոր ժառանգութեան ու մենք տեսանք եւ մեզի հետ աշխարհը տեսաւ, թէ Ահմեդը ինչպէս դրսեւորեց իր եղբայրութիւնը...

Ցաւորդող էջերուն դուք կը տեսնէք ազերի խառնամբոխին ներկայացուցչական դէմքերէն քանի մը տրիչներ եւս...

ԵՐԵՔ ԼԵՌ

Երեք հարեւան ենք մենք,—
Երեք եղբայր սրտակից՝
Ահմեդն, Արշակն ու Շոքան,
Մի կտոր հացն ենք կիսել,
Իրար սրտի խօսք ասել՝
Որդիների պէս մի տան:

Երեք հարեւանի պէս,
Եղբայրների պէս երեք
Ծանր պայմար ենք մղել,
Երբ մեր ճամբին մերթ հրաշտ,
Մերթ փոթորիկ ու հրդեհ,
Ու մերթ հեղեղ է եղել:

Ու ինչքան էլ սեւ օրեր,
Սեւ գիշերներ են եղել,
Հաւատացել ենք լոյսին,
Ապաւինել ենք միայն
Մեր սրտերի համար թանկ
Եղբայրութեան մեծ յոյսին:

Իրար նեցուկ ենք եղել,
Երբ ոսոխն է մեզ նեղել,
Մտել հողը մեր ծաղկուն...
Փշալարեր ենք տեսել,
Խրամատում ենք մրսել,
Բայց իրար չենք նայել ծուռ:

Եւ տասնհինգ քաջերի
Շարքերից է միշտ հնչել
Մեր՝ երեքիս խօսքը ջերմ,
Ու երկիրը յանձին մեզ
Ունեցել է Կովկասում
Երեք որդի, երեք լեռ:

Հայաստանից ցած իջնող
Վճիտ ջրերն են գալիս
Ու խառնւում Քռի հետ.
Մեր դրացը ծովանում,
Մեր սրտերին հով անում՝
Որպէս բրոջ ու մօր ձեռք:

Ու ամէն օր առտուան
Մենք դաշտ ու հանդ գնալիս
Շոքա, Բաբեկ ենք երգում.
Սայաթ-Նովան իր երգն է
Սերմնացանի պէս շռայլ
Շաղ տուել եւ մեր հերկում:

Մենք երեք լաւ հարեւան,
Երեք եղբայր սրտագին,
Մի ձայնով ենք երգում միշտ.
Ու հնչում է մեր երգը
Այն մեծ, այն մեծ ցնծութեամբ,
Որ էլ չունենք եռգս ու վիշտ:

Ունենք երկիր մի լուսէ
Եւ ամէնուր երգ ու սէր,—
Եղբայրական ընտանիք,
Ու ապրում ենք եղբօր պէս,
Հարեւանի պէս երեք,—
Հաշտ ու խաղաղ, երջանիկ:

ՕՍՄԱՆ ՍԱՐԻԼԵԼԼԻ

Թարգմ. Վլ. Աբրահամեան

digitised by A.R.A.R.@

ՌԱՖԻԿ ՆԱԴԻԵԻԸ...

...Բայց Ռաֆիկ Նադիեւը լռում է: Լռում են նաեւ ադրբէջանցի մեր միւս ծանօթ գրողներն ու լրագրողները: Եւ մենք ուրախանում ենք, որ գոնէ լռում են: Որովհետեւ Խորհրդային Ադրբէջանի մասուրականութեան մեծ մասի ձայնը այսօր ոչնչով չի տարբերուում խաղաղ ու անմեղ հայերի տների դռները խորտակող, անզգնական ծերերին ու մանուկներին խոշտանգող, նրանց ունեցած-չունեցածը փախցնող վայրագ խուժանի ագուցակներից:

Եւ ամենատարաբախելին թերեւս դա է:

Մոլեռանդ ու ագէտ ամբոխի գազանային բնազդները իրացնելու փոխարէն, մասուրականներից շատերը, գրողներից ու լրագրողներից շատեր իրենք են գրգռում, վազվզեցնում նրան, մղում վանդալիզմի եւ մարդասպանութեան: Ինչո՞վ: Խաբէութեամբ: Տգէտ ու մոլեռանդ ամբոխին հաւատացնելով, թէ նրանց շահերը ոտնահարուում են, թէ բռնաբարուում են նրանց պապենական հողերը, թէ պղծուում են նրանց սուրբ մասունքները:

Կեղծիք, սուտ, խարդաւանք, իրականութեան լրիւ հակառակը: Բայց նրանց համար այդ ստախօսութիւնը հայրենասիրութեան դրսեւորում է: Եւ կեղծիքն ու ստրկանքը նրանց ամենայուսալի զէնքերն են:

Հին իմաստութիւններից մէկն ասել է. «Սուրբ է հայրենիքը: Իւրաքանչիւր քաղաքացի պարտաւոր է կռուել ու մեռնել իր հայրենիքի համար, եթէ հարկ լինի: Բայց նրան չի կարելի ստիպել, որպէսզի նա խարի ու ստի թէկուզ յանուն հայրենիքի»:

Դժբախտաբար, ոչ մի այդպիսի իմաստուն ադրբէջանցի մեր ընկեր լրագրողների մէջ չկայ: Եւ որքան էլ զարմանալի լինի, գրեթէ չկայ նաեւ կենտրոնական մամուլում եւ հեռուստատեսութիւնում («Խորհրդային Հայաստան», 6 Փետրուար 1990):

ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

ՄԱՔՍՈՒԴ ԻՊՐԱՀԻՄ ԲԵԿՈՎԸ...

Ադրբէջանցի մի գրող, մոսկովեան իմ դասընկերը՝ Մաքսուդ Իբրահիմ Բեկովը, որին մինչեւ վերջերս ես համարում էի ազնիւ մարդ եւ վատահ էի, որ եթէ վախից անգամ ձայնը չբարձրացնի, գոնէ կը լռի, «Դրուշբա Նարոդով» ամսագրի 1989 թ. թիւ 11ում գրում է. «Այն, որ Հայաստանը ցանկացաւ իր տարածքն ընդարձակել հարեւան հանրապետութեան հաշուին, բնաւ էլ նորութիւն չէ»: Ապա թուրքական սովորական անամօթութիւնների ուղղութիւնը շարելուց յետոյ, Մաքսուդը, իմ դասընկերը, որի հետ երկու տարի նոյն հանրակացարանում ապրել ենք կողք կողքի եւ ընկերութիւն արել, Սումգայիթը համարում է հմտօրէն պլանաւորուած աքցիա: Պարզ է՝ հայերի կողմից: Փաստօրէն կրկնում է մեր միւս դասընկերոջ՝ Անարի խօսքերը, որ հայերը մաղոխատ են: Էլ ի՞նչ ուժ կարող է ինձ զսպել չկրկնելու իմ ժողովրդի դարաւոր փորձից բխող համոզմունքը՝ թուրքը մնում է թուրք:

«Այո, մենք ինչ-որ տեղ ենք գնում,— մտա հարիւր տարի առաջ ասել է ռուս խոշոր թատերագիր Օստրովսկին,— ինչ որ տեղ են մեզ տանում: Բայց ո՛չ մենք գիտենք, թէ ուր են մեզ տանում, ոչ էլ նրանք, ովքեր տանում են մեզ: Եւ ինչո՞վ կը վերջանայ այս ամէնը»:

Հարիւր տարի առաջ տրուած այս հարցը արդիական է հնչում նաեւ այսօր, հենց ա՛յս պահին, 1990 թ. Փետրուարի 6ին: Որովհետեւ այսօր էլ այդ հարցը խորհրդային երկրում պատասխան չունի («Խորհրդային Հայաստան», 1990, թիւ 30):

ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿԷՕԹԷ...ԵՒ ՀԻԴԱՅԱԹ

Մտաւորական մարզին մէջ նորանոր կողմերով փայլող հայրենի մեր մտաւորականներուն ծանօթ խումբին վրայ վերջին տարիներուն յայտնուեցան նոր (կամ մեզի համար նոր) անուններ, որոնցմէ մէկը անպայման կը հանդիսանայ բանասիրական գիտութիւններու թեկնածու Թեւոս Պետրոսեան:

Այս ստորագրութեան մենք առաջին անգամ հանդիպեցանք Համօ Սահեանի, Ռազմիկ Դաւոյեանի եւ այլ գրողներու նորագոյն հատորներուն անդրադարձող, ինչպէս նաեւ զարաբաղեան հարցեր վերլուծող գրութիւններու տակ, ուր առաջին ակնարկով իսկ մարդ կը հաստատէ զգալու եւ բանաձեւելու իւրայատուկ շնորհ մը, որ երգիծական երանգի մը յաւելեալ արժանիքով անմիջապէս ուշադրութիւն կը գրաւէ:

Մենք կասկած չունինք, որ ստորեւ տրուած գրութենէն ետք, ընթերցողը միշտ պիտի փնտռէ Թեւոս Պետրոսեան ստորագրութիւնը:

... Մեր Հիդայաթն ուրիշ է: Նա իր երէկուայ հայրենակիցների դէմ մահու եւ կենաց կռիւ է յայտարարել, կռիւ՝ ներկայի, անցեալի, ապագայի դէմ...: Նա ի բնէ մերժում է այն ամէնը, ինչ կապուած է Հայաստանի եւ հայերի հետ, ընդհուպ մինչեւ իր կեանքի երեւանեան քառասուն տարիները: Նա հայերի ինքնորոշման իրաւունքը համարում է ագրեսիա: Ի՞նչ Արցախ, ի՞նչ բան: Երեւանն էլ բնիկ Թուրքական քաղաք է եղել դեռ էն գլխից՝ Արգիշտի խանլիի ժամանակներից: Իսկ այն, ինչ պնդում են հին աշխարհի ոմն Հերոդոտոս, Ամմիանոս, Պլուտարքոս, Ստրաբոն կամ հայերի պատմահայր հռչակուած Խորենացին՝ արդիւնք է, անշուշտ, յունա-հռոմէական սենատորների վրայ հայկական լոբբիի ազդեցութեան: Իսկ Տիգրան Թագաւորը դիտամբ փող է կտրել, որպէսզի ապացուցի հայերի հին ազգ լինելը: Զո՛ւր յոյսեր: Մեր պատմահայրը Զիա Բունիաթովը ապացուցել է, որ մենք ենք աշխարհի ամենահին ազգը, ամենաինտերնացիոնալիստը, որովհետեւ մեր կառուցած յուշարձանների վրայ մշտապէս գրում ենք ուրիշ ժողովուրդների լեզուով՝ սկսած Գանձասարից, վերջացած Երեւանի մարզահամերգային համալիրով, որի կառուցողները, ինչպէս ապացուցել է Ֆարիդա խանումը, աղուանցի մեր նախնիների ժառանգներից են...: Կամ մտէք մեր պատմութեան թանգարանը: Այն հեռու է թալանի պահեստ լինելուց, այնտեղ ինչ կայ՝ մերն է: Շատ ցուցանմոյշների վրայ դուք օտար լեզուների գրեր կը տեսնէք՝ արաբերէն, պարսկերէն, հայերէն: Այսպէս, ամենահին ցուցանմոյշներից է Ցրդ դարի աստղադիտակը, որի վրայ ամէն մի ուշիմ այցելու կարող է կարդալ ազերական ճարտար վարպետի անունը՝ գրուած հին հայերէն կոչուած տառերով՝ Թաղիանոս: Ադրբեջանի մարգարիտ Ղարաբաղի գորգերի վրայ խանում-խաթուն գործողները նոյնպէս հայերէն են գրել՝ ելնելով, անշուշտ, ինտերնացիոնալիստական մղումներից: Ցեղիս ինտերնացիոնալիզացիայի հետքերը հասնում են դարերի խորքը, տարածւում ներկայիս Ադրբեջանի ամբողջ տարածքի վրայ: Մեր բարի մտադրութիւնների կենդանի վկան է Զուլֆայի գերեզմանոցը, որտեղ թաղուած տարբեր ազգութեան ննջեցեալների վրայ, այդ թւում՝ առաջին հերթին, ադրբեջանցիների, գցուած են հայատառ տապանաքարեր: Ուշագրաւ պատմական փաստ է նաեւ մեր հողի վրայ հայկական աշխարհագրական գուգահեռների գոյութիւնը. Նախճաւան-Նախիջեւան, Լեռնքեարան-Փայտակարան, Քեալբաջար-Քարավանաւ,

digitised by A.R.A.R.@

Լրացու իմ բառաուն տարին: Այդ տարիների ընթացքում իմ կեանքի ամենալաւ յուշերը, ամենասրբազան բոպէները, յաջողութիւնները կապուած են Հայաստանի եւ իմ հայ բարեկամների հետ:

ՀԻԴԱՅԱԹ

Մեր Հիդայաթն ուրիշ է: Նա իր երէկուայ հայրենակիցների դէմ մնաց եւ կենաց դէմ է յայտարարել, կռիւ՝ ներկայի, անցեալի, ապագայի դէմ...: Նա ի բնէ մերժում է այն ամէնը, ինչ կապուած է Հայաստանի եւ հայերի հետ, ընդհուպ մինչեւ իր կեանքի երեւանեան բառաուն տարիները:

ՀԻԴԱՅԱԹ

ԹԵՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բաքու–Բակուրակերտ, Ղարաբաղ–Արցախ, Գեանջա–Գանձակ, եւայլն: Ինտերնացիոնալիստական մղումներից ելնելով միմիայն հայերէն են ստեղծագործել ադրբէջանցի գրողներ Մխիթար Գոշը, Մովսէս Կաղանկատուացին, Արիստակես Լաստիվերտցին եւ ուրիշներ: Եւ ընդհակառակը. պարսկերէն է գրել մեր բոլորիս կողմից սիրուած եազըչը Նիզամին եւ ուրիշներ:

... Ոչ, ընթերցող, ես մեր հացն ու ջուրը Հիդայաթի երեսով չեմ տալիս: Հարամն ու հալալը թող ինքը որոշի: Ոչ էլ ուզում եմ հին օրերի առքով ամօթանք տալ: Նպատակս է, ուժերիս չափով, մեր ճակատագրական հարեւանների ողջախոհ մասին հեռու պահել հիդայաթական սինդրոմից՝ խոհեմութեան իմունոդեֆիցիտից: Որովհետեւ համոզուած եմ, որ բոլոր դէպքերում պէտք է պատուհան թողնել սերունդների հաղորդակցման համար: Իսկ ինչո՞ւ է ջանում դրկից ազգերի միջեւ բոլոր պատուհանները փակել Հիդայաթը: Գուցէ Հայաստանում նրան նեղացրե՞լ են, պաշտո՞ն չեն տուել, գրքե՞րը չեն տպել, մրցանակներն ու կոչումնե՞րն են պակաս եղել, թէ՞ թէկուզ մէկ ադրբեջանցու ազգանունն ենք փոխել՝ ակամայ վշտացնելով նրան: Ցամենայնդէպս արժէ, որ թուցիկ ծանօթանանք նրա Հայաստանեան կեանքի էջերին:

Ասես երէկ էր, որ Հիդայաթը Հայաստանի ու հայերի մասին ոտանաւորներով բարեկամութեան ջատագովի անուն էր հանել, դափնիներ էր կորզում Հայաստանի գրողների միութիւնից, թարգմանւում ու հրատարակւում Մաշտոցի լեզուով: Եւ դեռ Հայաստանի կուլտուրայի վաստակաւոր գործի՛չ (24 տարեկանում), Երեւանում տպուած չորս գրքե՛ր (վեցից), Երեւանի Զաբարլու անուան թատրոնի տնօրէ՛ն...: Թերթենք թէկուզ 1986 թուականի հայերէն լոյս տեսած նրա «Ակունք» ժողովածուն: Գրքի առաջաբանից մեզ է ներկայանում ոտից գլուխ սոցինտերնացիոնալիստ ու սոցռեալիստ բանաստեղծի բարձր հասակը: Այդպէս հասակով մէկ կանգնած էլ նա ներկայանում է ճրդ էջից եւ ի լուր ամէնքի յայտարարում. «Լրացաւ իմ բառաուն տարին: Այդ տարիների ընթացքում իմ կեանքի ամենալաւ յուշերը, ամենասրբազան բոպէները, յաջողութիւնները կապուած են Հայաստանի եւ իմ հայ բարեկամների հետ»: Մասնաղարանին ձօնած բանաստեղծութեան մէջ Հիդայաթը բարեբանում է «Մաշտոցեան գրի հրաշքը»՝ «անցեալ ու գալիք բոլոր դարերի սրբութիւն–սրբոցը», յիշում, որ Հագիգիի ու Նասիմիի արաբատառ մատեանները հայի ձեռքով փրկուել ու պահւում են այս սուրբ տաճարում:

Հայ–ադրբէջանական ժողովուրդների դարաւոր բարեկամութեան մասին քիչ տողեր չի հեղինակել նաեւ Ձեր, Հիդայաթ, աւագ գրչակից Բախտիար

digitised by A.R.A.R.@

Վահարպաղէն։ Նոյնիսկ մրցանակ է ստացել Հայաստանի գրողների միութիւնից, հայերէն հրատարակել «Մի սրտի մէջ չորս եղանակ» բնաբոյ վերնագրով ժողովածուն։ Եւ ինչ. ժողովուրդների բարեկամութեան սոյն ջատագովն արցախեան փորձութեան առաջին իսկ օրերին նոյն ձեռքով յօրինեց «Հողից բաժին չեն տայ» հայհոյական ձօնը, որտեղ իր երբեմնի «դրաւոր եղբօրը», քաղաքակրթութեան բոլոր կանոններով, եամբ-անապեստեան չափ ու ռիթմով զգուշացնում է՝ թէ հող ես ուզում՝ «էր տամ այքիդ թայը կը հանեմ»։ Ինչքան էլ որ զարմանալի լինի՝ այսպիսին է Ագբ. ԽՍՀի գիտութեան կաճառի թղթակից անդամի, պրոֆեսորի, պետական մրցանակի գափնեկրի չափածոյ գեղումը։ Մինչդեռ «Արեւի կենացը» պաթետիկ ոտանաւորում նա գրել է, «Բայց լսիր, մարդ,— խօսքն էլ ախր հաւատ ունի, եւ գին ունի,

Ինչո՞ւ ընտել այն աղբի մէջ,
Լաւ, մարդկութիւնն էլ ո՞ւր մնաց»։

Իսկապէս, մարդկութիւնն էլ ո՞ւր մնաց...

Էլ ինչ պահանջես այսօրինակ պոեզիայի հողի վրայ աճած թունաւոր ծաղիկներից, այն ժողճակատայիններից, որոնք Գեանջայի ծերանոցից պառաւներ են առեւանգել ու գազանաբար խոշտանգել, իսկ «Լիգիթներին» մէկ ուրիշ վոհմակ էլ պարզապէս խորովել ու լափել է մի ռուս կնոջ միսը։ Էլ չասած Սումգայիթի փողոցներում բռնաբարութեան համար հերթերի մասին։

Դուք ահա, Հիզայաթ, Ձեր վերջին հրապարակումներում յամառօրէն ձգտում էք յետ չմնալ այս խաժամուժից եւ դա, ցաւօք, ձեզ յաջողւում է։ Ձեզ յաջողուեց դառնալ պատգամաւոր, յաջողուեց ոչ այնքան ծանր զոհողութիւնների գնով։ Պարզապէս հարկ եղաւ դէն նետել քսաներորդ դարի մարդու դիմակը։ Պարզապէս հարկ եղաւ ուրանալ հայերի հետ կերած աղն ու հացը, որի մասին, ի դէպ, գրել էք նաեւ ձեր սիրելի մայրիկին ձօնած ոտանաւորում, յիշո՞ւմ էք. «Գիւղում ճաշակած համն աղ ու հացի՝ չեմ փոխի պատուի հետ բիւր բաղամների...»։ Եւ այդքան հեշտ, այդքան չուտ հրապուրեցիք ջարդարար ամբոխի էժանագին պատիւներով։

(...) Թերթեցէք «Բակինսկի ռաբոչի» թերթի հաւաքածուն, Հարիւրաւոր ու հարիւրաւոր յօդուածների, դիմումների, արձագանգների կը հանդիպէք։ Գրում են մեծ ու փոքր, պաշտօնեայ ու շարքային, ցեկիստ ու չեկիստ, ճակատայիններ՝ հին ու նոր, ակադեմիկոսներ ու թեկնածուներ, բանաստեղծներ ու պատմաբաններ, գրում են առանց սեռի, տարիքի, ազգութեան, խղճի ու խելքի խտրութեան։ Գրում են անդամ «հայեր», որ չեն ուզում Ղարաբաղը, գրքեր, որ երջանիկ են ասիմիլիացուած լինելու համար, թալիչներ, որ զգում են ինքնավարութիւնից ու ազատութիւնից։

Գրում են, նայած պահանջարկին, ընդ սմին, որքան մեծ է հեղինակի պաշտօնը, տիտղոսը, այնքան մեծ է հնարած սուտը։ Աստուա՛ծ իմ, այս թերթի էջերից ի՞նչ ստեր են տարածում կենտրոնի ներկայացուցիչները՝ Դեմիչեւից մինչեւ Լիգաչով եւ Վելիչկոյից մինչեւ Գուլեանինչիկօ։ Ամենայն իրաւամբ այս ստերը կարող ենք որակել իբրեւ կենտրոնական ստեր։ Գրողները էպիկական ստեր են թխում, ակադեմիկոսները՝ ակադեմիական, բանաստեղծները՝ բանաստեղծական, պատմաբանները՝ պատմական, ադրբեջանահպատակ ռուսները՝ մեծապետական, փոքրաթիւ այլազգիները՝ քծնական ստեր։ Թղթի վրայ ստեր, իսկ դաշտերում՝ արիւն, գիւղերում՝ կողոպուտ ու անմեղ զոհեր («Գրական թերթ», 1990, թիւ 47 — յապաւումներով)։

ԹԵՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Թագին ՄԻԱՅՆ ԹԷ...

Մարդու տեսակ մը կայ, տոհմի տեսակ մը կայ ու կան ցեղերու եւ ժողովուրդներու տեսակներ, որոնք բնաւորութեան էական գիծերով կը տարբերին իրարմէ, որքան ալ մօտ ապրած ու երկար ապրած ըլլան իրարու հետ։

Մէկը ստեղծագործ խառնուածքով մը կու գայ աշխարհ, միւսը՝ քանդիչ բնազդով։

Մէկը պատմութեան համար առարկայական ճշմարտութիւնը նախապայման կը համարէ, միւսը տուտի վրայ կը հիմնէ իր պատմութիւնը։

Մէկը երկիւղած պաշտամունք մը կը տածէ մարդուն հրաշակերտած մէն մի գեղեցկութեան հանդէպ, միւսը կը հեշտանայ նոյն գեղեցկութիւնը քանդելու արարքով։

Եւայլն, եւայլն։

Մենք, մեր կարգ մը գրացիները։

Խաչքարը, «խաչդաշը»։

Ու «խաչդաշ»էն առաջ խաչքարերը ոչնչացնելու ազերիական մոլուցքը, զոր իբրեւ դաս ժառանգեցին իրենց պատմութենէն, ցեղակիցներէն, հին ու նոր Թուրքերէն, Ամաթիւրքէն. «Դուք գիտէք, անշուշտ, որ Գեմալի կառավարութիւնը հրաման է տուել իր զօրքերին թնդանօթի բռնել բոլոր կառուցուածքները, բոլոր եկեղեցիները, որոնք մնացել էին ամայացած երկրում եւ որոնք վկայում էին մեր ցեղի հանճարը» («Նաւը լեռան վրայ», 1943, էջ 340)։

Թուրքերը այսպէս, ցեղակից ազերիները՝ նոյնպէս։

Հայրենի յօդուածագիրներէն Վազէ Գեւորգեան իր մէկ գրութեան մէջ կը հարցնէ ուկրաինացի նկարիչ Օրեստ Կարէյին.

«— Իսկ Հայաստանի, հայերի մասին ի՞նչ գիտէք։

«— Հայաստան...— լսում է,— այն գիտեմ, որ ազերիները ուզում են ապացուցել, թէ խաչքարերը այն խաչդաշներն են, որ ստեղծել են «բնիկ» ազերիները, իսկ հայերը ոչինչ չեն ճանդակել։ Մի հայից իմացայ, որ Երեւանի համալսարանի աստանողները նամակ են ուղարկել Բունիաթովին, գրել են. «Ցարգարժան Դոկտոր, մենք լրիւ համամիտ ենք ձեզ հետ, որ խաչքարերը զուտ ազրբեջանական են, միայն թէ մենք էլ հին ժողովուրդ ենք, արուեստ ու մշակոյթ սիրող, եւ խնդրում ենք ձեր խաչքարերն ու վանքերը չաւերէք ու չքանդէք» («Անդրադարձ», 1990, թիւ 2)»։

Երբեմն չնչող բոլոր գեղեցկութիւններուն դիմաց ու բոլոր ժամանակներուն ի զօրու է Սողոմոն իմաստունին իմաստութիւնը, հաբաստին նախանձախնդիր ճիչը անհարազատին բռնակալ արբութեան գէմ,— քեզի թող ըլլայ նորածիւնը, միայն թէ ապրի թող ան,— ձերը համարեցէք խաչքարը, միայն թէ մի քանդէք զայն, թող կանգուն մնայ, չնչէ, չնչաւորէ...

Բայց Զիա Բունիաթովը եւ իրեն առաջ ամսական տուող, ու տխմարութեան լայն ազատութիւն պարգեւող, ու ակադեմական ձրի տիտղոսներ շռայլող ազգայնամոլները որքան ալ փորձեն խաչքարը ազերիական խաչդաշով կնքել, չեն կրնար հանդիստ ընել, հետեւաբար պիտի ժպրհին ոչնչացման ձեռնարկել, որովհետեւ անբարոյական վանդակ յայտարարութիւններով խաչքարերը խաչդաշ չեն դառնար ու կենդանի մնացած հայկական հրաշակերտները կը շարունակեն արթուն պահել իրենց ծնունդ տուած հայկական հրաշակերտները, ոգին, արուեստն մթերքը, արդարութեան ապտուած ժողովուրդին յիշողութիւնը, բոլոր մեր ամբոխները, զորս Բունիաթովի ցեղախումբը դժուար թէ կարենայ քանդումներով ու աւերումներով չորցնել...

digitised by A.R.A.R.@

Բ. ՎԱՀԱԲԶԱԴԷ

ՀՈՂԻՑ ԲԱԺԻՆ ՉԵՆ ՏԱՅ

Մօտիկ եմք եղել, հնում շատ մօտիկ,
Այնքան մօտիկ, որ մեր սէգ լեռներին
Շուրջն ընկնում էր ձեր լեռների վրայ
Եւ հիմա... հիմա...

Ես մեր անցեալին աւաղ եմ ասում,
Բախչու նուագից խաբւում էինք մենք,
Դուք՝ Ջաբբարի երգից:
Բարեկամ էին մեր պապերն իրօք
Եւ չէին ասում այդ մասին մի բառ,
Իսկ մենք իրար դէմ ատամ սրելով,
Ճառում եմք անվերջ բարեկամաբար:
Սա ինչ ազօթերգ, ծէս է դառնալի,
Որ ստատանան է խառնւում երկին:
Ասում են դրսից մէկը երեւի
Մատը դրել է վադեմի վէրքին:
Քեզ հնչպէս ընկեր, եղբայր անուանեմ,
Որ ինձնից հող ես պահանջում հիմա:
Քանի անգամ եմ աչքերդ հանել
Հողի վրայ աչք գցելու համար...
Մի՞թէ դա երբեք դաս չի լինելու
Թէ՞ արեւ-արիւն ունես հեղելու:
Եղբայր ես ասում դու ինձ արտաքուստ
Եւ ասեղի պէս ծուտտում թաքուն:
Ես միշտ եղել եմ պարզ, հաւատաւոր,
Իսկ դու՝ խորամանկ, կաւատ, ահաւոր,
Թէ թշնամի ես՝ մի՛ խորամանկի:
Քեզ հետ կերած իմ աղու հացն անգին,
Քեռուացութիւնս հարամ լինի քեզ,
Ե՞րբ քոնը դարձաւ Ղարաբաղս իմ վէս,
Նրա անունն իսկ թող վկայի դա:
Հողը կամաւոր ոչ ոքի չեն տայ,
Արեամբ են կնքում ու զօռով առնում,
Դու աչք ես տնկել Նախիջեւանին,
Գուցէ Թաւրիզն էլ, Արաքսն էլ քոնն են:
Այն երկրներն ուր կայ Վարդան անուն,

Բագին

«ԱՐՆԱԲԱՇ»Ը ԵՒ ՄԻԻՍԸ...

«Բագին»ի ներկայ թացառիկին տարբեր էջերուն վրայ ընթերցողը անպայման հանդիպեցաւ Բախտիար Վահաբզադէ անունին ու իր տխրահռչակ «բանաստեղծութեան» խորագրին, «Հողից բաժին չեն տայ»:

Որպէսզի խորագիրին առաջացուցած խորհրդաւորութենէն դուրս գայ անիկա եւ հայ մարդուն մուք չմնայ հոն մը-թընցած մուք ոգին, որոշեցինք տալ ամբողջութիւնը, զայն արտագրելով քաղաքիս «Արարատ» օրաթերթի 24 Յունիս 1988 թուակիր համարէն։

Ըստուեցաւ արդէն, որ «Հողից բաժին չեն տայ» չափածոյին հայրենի մեր մը-տաւորականները տուին սպանիչ պատասխաններ, մէկը՝ Իգնատ Մամեանի կողմէ, բանաստեղծութեամբ, ուր «դահճային արնոտ բառերը» հնչեցուցած «արնաքաշ»ին ըստուեցաւ.

Ինչքան էլ, սակայն, թոյնդ չառաչի,
Ինչքան էլ առնայ ոեխդ արնաքաշ,
Իմ գանձասարը չի դառնայ մեչիդ,
Իմ սուրբ խաչքարը չի դառնայ խաչդաշ:

digitised by A.R.A.R.@

Բանաստեղծ Իշխան Մամեանէն ետք մեզի հանօթ հակահարումներէն ամէնէն ուժգինը առաւ Գէորգ Աղաֆանեան, որուն «Բաց նամակ»ին յատկանշական մասերը դուք կը կարդաք առաջիկայ։

Վահրազդէն առանձին չէ Ադրբէջանի հայուհոյն Ղարաբաղի հարցը աւարտած համարող ազերի բանաստեղծներուն մէջ։ Կան եւ հատընտիր ուրիշ չափաբերողներ։ Դեռ երէք տարի առաջ, «Դրօշակ»ի էջերուն լոյս ընծայած Լեւոն Մկրտչեանի մէկ ուսումնասիրութեան մէջ մենք հանդիպեցանք ուրիշ ազերիօղլիի մը, Սուլէյման Ռուստամի, որուն «Ղարաբաղնամէ» ոտանաւորին մէջի մէջի այլոց կարդացինք եռատողեմար սա յայտարարութիւնը.

Դու միշտ իմն ես, իմ Ղարաբաղ,
Հայրենիքս ես, հայրենիքս ես,
Հայրենիքս ես, իմ Ղարաբաղ։

Արդարին, ճշմարիտին, իրաւին ըսպասարկելու կոչուած կոչեցեալներ են բանաստեղծները, մինչ ազերի բախտիարներն ու Սուլէյմանները հիմնովին կը հերքեն նուիրագործուած այդ իմացումը եւ մարդ իրենց տողերուն դիմաց բանաստեղծներէ աւելի արիւնկալ ամբոխներ առաջնորդող վիժուկներու հանդիպած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենայ...

Դուցէ թէ նոյնպէս քեզ են պատկանում։
Իմ մեղքը ո՞րն է, մարեմ փուշի պէս,
Որ ցանուել ես դու աշխարհում այդպէս։
Իմ հոսող առուին ջրբանդ մի՛ դարձիր,
Դա արեան կոիւ, հողի կռիւ է,
Եւ ամենուին արծիւ մի կարծիր,
Քո բնում ապրող ճնշուկներին էլ։
Իմ նախնիները անիւն առ անիւն,
Իմ փառ-պատիւն են այս հողում հանգչում։
Չե՛ս խնդայ վրաս,
Թէ ապուպապիս հողից բաժին տամ,
Չխնդաս, պապս վրաս կը խնդայ,
Ու ձեռ կ'առնի ինձ։
Դու ինձ միամիտ, քնած չկարծես,
Հօ պարտական չէ Բարէկ Դաւթին։
Ձեռ առնելով ինձ, դու լաւ իմացիր,
Կտրում եմ աչքդ արիւն է կոխել,
Իմ տան բաղձանքով դու քեզ չտանջես,
Այսօր ինձանից հեռ ես պահանջում,
Վաղը նամուսս պիտի պահանջես,
Խաբուլաղիս գլգլանքները,
Զարբարի, Սէյիդի, Խանի երգերը,
Բարիկի Ղամբանն ինչպէ՞ս բաժին տամ։
Գազան են կտրել գիւղէքը դարձեալ,
Ինչքան տուել եմ քիչ է երեւի,
Ինձնից գանգատ են գրում վերեւին,
Պահանջում են, որ էլի բաժին տամ...

ԲԱԽՏԻԱՐ ՎԱՀԱԲԶԱԴԷ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԲԱԽՏԻԱՐ ՎԱՀԱԲԶԱԴԷԻՆ

Ահա քանի տարի է պանթիւրքիզմի հայր Զիա Գէօքալպի արժանի հետեւորդ Զիա Բունիաթովը պատմական փաստերը դիտաւորեալ խեղաթիւրելով, ժողովուրդներին խառնակելով, իսկական թուրքութիւն է անում պատմագիտութեան ասպարէզում, իսկ «եղբայրական Ազարբայջանում» մէկը չկայ, որ նրա կեղտոտ գրիչը ձեռքից խլի եւ... իսկ ո՞վ պէտք է անի դա, եթէ ոչ ամէնից առաջ դուք՝ ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամութեան հանիանք քմբկաներ բարեկամութեան հարներդ»։ Բայց դուք լռում էք։ Աւելի՛ն. ազգային հերոսի, ակադեմիկոսի, չգիտեմ էլ ինչ տիտղոսներով էք պճնել նորին ազգատամութիւն Զիա Բունիաթովի անունը, գործել նրա գաղափարական «զամքաչը»։ Եւ նա այսօր մենակ չէ։ Կեղծարարութեան հոգեւոր հօր տեսակէտները «զարգացնում» են Մ. Նասիրլին, Ֆ. Ալիեւը, Մ. Հէյդարովան, Ռ. Գէուշեւը, Ռ. Ալիեւը, Ֆ. Մամեդովան, Մ. Նէյմաթովան, Մ. Ախունդովը, Նորաթուխ Մ.

digitised by A.R.A.R.@

Ռուստամխանլին... չատե՛ր: Մէկն էլ հենց դուք, Բախտիար միւլլիմ:

1988 թուականին, Ղարաբաղեան շարժման սկզբներին, ինչ որ թիւածք մատուցուեց հայրենակիցներիդ նուիրուած բայրամի սեղաններին, անունը՝ «Հողից բաժին չեն տայ», ներքոյ՝ ձեր ստորագրութիւնը: Զարմացայ, կասկածեցի, բայց չափ ու ձեւը, յանգ ու վանկը մատնում էին, որ դրա հեղինակը դուք էք: Համոզուելու համար մի քանի անգամ զանգահարեցի ձեր տուն, գրողների միութիւն, բայց ձեզ չգտայ: Ձիլան ասած, ուզում էի «այո»ն կամ «ոչ»ը ձեր բերանից լսել: Ցաւօղուեց: Դուք այդ օրերին դարձել էիք չտեսնուած եռանդուն, մոլի, թունոտ, բացարձակ հայատեաց: Գրեթէ ամէն օր եկոյթ էիք ունենում հեռուստատեսութեամբ, եւ ձեռքից ձեռք անցնող այդ թիւածքից, որ իրօք ձերն էին համարում վարպետ «համտեսողները», դուք չէիք հրաժարւում հրապարակորէն, չէիք ժխտում, որ ձերն է:

Միւլլիմ, քանի որ մի ամբողջ տարի ձեր ստնտուն եղել է մի հայ մայրիկ՝ Մանուշակը (դուք ինձ ասում էիք. «Մանուշակ չէ՝ Մնեշակ, մերոնք Մնեշակ էին ասում ստնտու մօրս»), եւ երախտագիտութեամբ էիք խոստովանում դա, սիրով ու ցաւով էիք խօսում ձեր ուսանողական ընկեր Պարոյր Սեւակի մասին (Մոսկուայում միասին էք սովորել) եւ ինձ հետ էլ բարեացակամ էիք, ապա ես, ի՞նչ թաքցնեմ, չէի ուզում վատ խօսել ու մտածել ձեր մասին: Բայց որոշեցի ձեզ վատութիւն անել՝ թարգմանել «Հողից բաժին չեն տայ» թիւածքը ու ներկայացնել հայ ընթերցողներին: Ցայտնի պատճառներով Երեւանի թերթերը չտպագրեցին, բայց «Թեւաւոր» յօրինուածքը Թուաւ-հասաւ Փարիզ, Գէյրութ եւ տեղ գտաւ «Աշխարհ» ու «Արարատ» թերթերում: Ասել է թէ՝ դրանով աշխարհի հայութիւնը ճանաչեց Բ. Վահրամագդէին ուեւլի, քան Երեւանում լոյս ընծայուած նրա հայերէն ժողովածուներով:

«Հողից բաժին չեն տայ» չափածոյ զառանցանքով դուք կռուի, արիւնահեղութեան էք կոչում խուժանին՝ «ձեր սուրբ Ղարաբաղը թշնամուն չտալու» համար, Ղարաբաղը, որը ոսկորի նման մնացել է բռնատիրութեան մոլուցքով փոթորկուող պանթիւրքիստների ամենակուլ կոկորդում:

Ամէնից քստմնելին ու վտանգաւորն այն է, որ դուք ձեզ զինուորագրել էք «մարմնաւորուած չարիքին»՝ սատան: Սրտում էք աջ ու ձախ: Սատում էք գրքերում, երգերում, եթերում: Ձեր ժողովրդի մի առողջ մասն այսօր իսկ հարց է տալիս. «Բունիաթովը, Վահրամագդէն պնդում են, որ Ղարաբաղի հայերը «ներմուծուել» են 100-150 տարի առաջ: Լաւ, բա 1ին, 4րդ, 7րդ, 13րդ, 17րդ դարերում կառուցուած վանքերն ու եկեղեցիները ո՞վ բերեց-դրեց այդ հողում»: Իսկ ուրիշ ազգերի ողջախոհները ուրիշ հարցեր էլ են տալիս. «Ինչպէ՞ս եղաւ, որ ազարբայջանցին այդպիսի ատուածաշնորհ մարդասիրութիւն հանդէս բերեց «գեաուրների» մի հատուածի նկատմամբ՝ նրան նուիրելով Ազարբայջանի ամենասքանչելի տարածքը՝ Արցախը, նախօրօք ուելի քան 1600 վանք, եկեղեցի, խաչքար, բերդ կառուցելով այնտեղ...: Այդ «մաղամակիրք» ազարբայջանցիները ինչո՞ւ չմտածեցին գոնէ մի մզկիթ էլ իրենց համար կանգնեցնել ալլահի աչքի առաջ»:

Իրօք, ինչպէ՞ս եղաւ, թէ ձեր պապերը եւս «ինտերնացիոնալիզմի» զոհեր են եղել:

Ասում էք՝ ղարաբաղցիները ձեր հաւատափոխուած-հայացած նախնիներն են: Ուրեմն՝ արիւնակից եղբայրներ ենք: Բա եղբայրը եղբօրը կը սպանի՞, որ դուք այսօր սպանում էք ղարաբաղցուն: Բա եղբայրը եղբօրը բաժին չի՞ տայ, որ ասում էք՝ հողից բաժին չեն տայ: Ձեզ համար ի՞նչ նշանակութիւն ունի՝ ղարաբաղցի, հարիւնակից եղբայրը» ձեզ հետ միասի՞ն է ուզում ապրել, թէ՞ առանձին: Ինչո՞ւ էք արգելում, բռնանում եղբօր կամքին: Թէ չէ ժողովրդին իրար էք խառնել ու մի գլուխ «նամուս, նամուս» էք գոռում («Գրական թերթ», 1990, թիւ 6):

ԳԷՈՐԳ ԱՂԱՋԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բաղին

«...ՍՈՐԱԲԱՐ»

Ազգային ու հայրենասիրական ապրումները երկար տարիներ մահացու մեղքերու շարքին դասուեցան խորհրդային սահմաններէն ներս ու սրբագործուած բարոյական այդ ժառանգութիւններուն հանդէպ դրսեւորուած ամէն նախանձախնդրութիւն համարուեցաւ ազգայնամոլութեան նշան, հետեւաբար՝ դատապարտելի, ու յաճախ պատճառ աքսորի ու գնդակահարութեան:

Բնաւ զարմանալի չէ, որ ազգային ու հայրենական ապրումներ կրող ու պաշտպանող մարդերը խորթ տարր ու թշնամի համարող համակարգին ամէնէն մոլեռանդ հետեւորդները եղան անոնք, որոնք կը ճգնէին հաբեան ժողովուրդէն բռնօրէն խլուած եւ իրենց ծիրօրէն տրուած անձեռակերտ ու ձեռակերտ հարստութիւններուն տէր դառնալ:

Ընթերցողը քաջ գիտէ այլեւս անոնց անունները, մէկը կը վայելէր Լենինի հովանաւորութիւնը, Նարիմանով. միւսը՝ Ստալինի, Բաղիրով. երրորդը՝ Բրեժնեւի, Ալիեւ. չորրորդը՝ Գորբաչովի, Բաղիրով Բ., եւայլն:

Ամէն անգամ, որ անիրաւուածները յիշեցուցին իրենց արդարութիւնը, այդ կարմիր ցարերը եւ իրենց շնորհընկալ մանկաւարկները միասին ու միաժամանակ ալեկոծեցան ու դիմեցին զինաթափող ամէնէն ազդու զէնքերուն, որոնցմէ մէկը եղաւ ու մինչեւ վերջ մնաց դաշնակցականութեան պիտակը: Քանի՛-քանի՛ հազարներ ատացան այս վարանդն եւ քանի ուրիշ հազարներ ուշնացուեցան նոյն «մեղքին» համար:

Համայնավար աշխարհին մէջ խաւօրէն ձեռնտու այդ «զէնքը» պիտի չարաշահէր ու չարաշահեց նաեւ պատմական ճշմարտութիւնները նենգափոխելու ժպրհութեամբ ծանօթ տխրահռչակ Զիա Բուենթիովը, որուն գառանցանքներէն մէկ-երկու նմոյշ արձանագրած են մեր մտաւորականները:

«Զիայիլ ho գիտէ?,— պիտի ըսէր Թ. Գեւորգեան,— տեղով մէկ ալբիմիկոս է, ոչնչից կարող է բան ստեղծել, բանից էլ ոչինչ: Կարմիր պրոֆեսորի բնաւորութիւն է»:

Իրապէ՛ս: Եթէ այսպէս չըլլար, հաւատով մէկ ալքիմիկոս չըլլար», քիչ մը մարդ ըլլար, ու ցիչ մը պատասխանատուութիւն զգար ըսածին համար, հազարաւոր քիլոմէթր անդին առնուած նկարի մը մէջ դաշնակցականներ որսալու ճիգ չէր ըներ եւ, բնական է, «ստորագրած չէր ստի, թէ Սումգայիթը դաշնակցականների ձեռքի գործն է»:

... Ապա խոսելով իրենց ժողովրդի դէմ նրանց տիչտաւոր պատքերի մասին, անոգասիրաբար նրանց հասցնում էին. «Փոմանակ դեռ կ'ապրուցի, որ ներկայիս ԽՍՀՄ ժողովրդական դեկուտատներ Զորի Բալայեանը, Գագիկ Հասրաթովան եւ Հենրիկ Իգիթեանը ճոյեկոս գաշնակցական զրպիչներ են» («Գրական թերթ», 1990, թիւ 1):

ԹԻՒԶԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ

Մշակութային կեդրոնը երեւանի հետ միասին «Մենք ենք, մեր սարերը» հայկական արձանագրութիւնի հիմնադիր, Հայաստանի ժողովրդական նկարիչ, հանրապետութեան պետական մրցանակի դափնեկիր, Ծաղոմանի դարաբաղցի Ս. Բաղդասարեանին, որը յիշեալ ստեղծագործութեան համար կոծարում ստկ մեղայի էր արժանացել, կոորդով բարձր ամբիոնից խարազանում էր՝ որպէս «գաշնակցական զգաստարախօսութեան սարածդի, ժողովուրդների բարեկամութեան դէմ պայքար վարող («Հայրենիք», 19 Օգոստոս 1988):

Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Վերակառուցման մասին իր դիրքը Փարիզ տարած Ա. Դ. Ազատրեկեանի հետ հանդիպած հայ համայնքի ներկայացուցիչներին Զ. Բուենթիովը յայտարարում է դաշնակցականներ, դա հաւանաբար նրա քաղաքական իրազեկուն միտուածութեան արդասիքն է: Անհասկանալի է, սակայն, թէ ինչպէ՞ս է նա կարողանում լուսանկարով կուսակցական պատկանելութիւն որոշել («Գրական թերթ», 1 Յուլիս 1988):

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ,
ՎԱՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴԵԱՆ

... Եթէ չլինէին այդ խաղերը, ապա աշխարհի մէկ վեցերորդ մասի ամենաստոյգ թերթը՝ «Բակինսկի ռաբոչի»ն, չէր յանդգնում տպագրել Ադրբեջանի մայրերի ու կանանց նամակն ուղղուած լեռնային զարաբաղի մայրերին ու կանանց, փարիսեցիօրէն կոչ անելով խաղաղութեամբ ապրել: Եւ, ընդհանրապէս, ադրբեջանական մամուլը չէր յանդգնի տպագրելու իր մտաւորականութեան նամակը, որը լի է նդրայրական հայ ժողովրդի դէմ ուղղուած ինտերնացիոնալիստական սպառնալիքներով: Իսկ ադրբեջանական ժողովրդի թշնամի, այո՛, ոչ այնքան հայ, որքան ադրբեջանական ժողովրդի թշնամի, խորհրդային միութեան հերոս Զիա Բուենթիովը դային միութեան հերոս Զիա Բուենթիովը դային միութեան հերոս ասի, թէ Սումգայիթը դաշնակցականների ձեռքի գործն է («Խորհրդային Հայաստան», 17 Սեպտեմբեր 1989):

ՊԵՐՃ ԶԷՆԹՈՒՆՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ռ. ԴԱՒՈՅԵԱՆ

ՎՏԱՆԳԱՒՈՐ «ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ» ԴԻՐՔԵՐԻՑ

... Հայերն իրենց մէջ արիութիւն ու կամք յայտնաբերեցին՝ Սումգայիթին ի պատասխան Սումգայիթ յատեղծել Հայաստանում: Չէ՞ որ դա մարդկային շատ աւելի մեծ ուժ է պահանջում, քան ստեղծելը: Ոճրագործին կարող է յայտնի չլինել այս բանը, բայց գրողին յայտնի պիտի լինէր անպատճառ:

Մնում է յուսալ, որ ժողովուրդը փորձի ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակել իր մտաւորականութեանն ու ղեկավարութեանը, իր հոգեւոր ու բաղամական, այսպէս կոչուած առաջնորդներին:

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

Խօսքի ազատութեան մեր օրերում, երբ այդ ազատութիւնն էլ չի հասնում բոլորին հաւասարապէս, արտասահմանեան մամուլի թղթակիցներին հարցազրոյցներ տալը սովետական մտաւորականների համար, եթէ չասենք մոդա, ապա մատչելի մի բան է դարձել: Ինքներն սա ողջունելի, դրական երեւոյթ է: Հարցն այն է, թէ ինչպէ՞ս են այդ նորայայտ ամբիոններն օգտագործում մեր երկրի «մտաւորական» արակուած մարդիկ, նրանց խղճի ո՞ր մասն է, որ ուզում է ճշմարտութիւնը բարբառել, եւ ո՞ր մասն է, որ փորձում է ազգային ախտերը թաքցնելով, «մարգարէանալ» ուրիշ ազգերի եւ ժողովուրդների համար: Ես ազրբէջանցիների համար «մարգարէանալու» պարտաւորութիւն չեմ վերցնում ինձ վրայ, բայց ողջ հայ ժողովրդի հետ չեմ կարող անտարբեր անցնել մի հարցազրոյցի կողքով, որ տպագրուել է փարիզեան հանրայայտ «ԼԸ ՖԻԳԱՐՕ» թերթի Հոկտեմբերի 24ի համարում:

Հարցազրոյցի հեղինակը թերթի թղթակից Դենի Լեգրանն է, հարցազրոյցի «հերոսը»՝ Ադրբեջանի գրողների միութեան առաջին քարտուղար Անար Ռզաեւը: Ուղղակի զարմանալի է, որ Ռզաեւը անցած ինն ամիսների ընթացքում սովետական մամուլում եւ ռադիո-հեռուստատեսութեամբ իրեն ընձեռուած բազմաթիւ հնարաւորութիւնները երբեք չօգտագործեց Սումգայիթի հայերի ողբերգական ջարդի մասին մի խօսք իսկ ասելու.— թող դա լինէր դատապարտող մի արտայայտութիւն իր ցեղի ոճրագործների մասին, կամ թէկուզ ցաւակցական մի հեռագիր տուժածների մայր ժողովրդին, որը կը հաստատէր մտաւորականի իր կոչումը,— նման ոչ մի քայլ չանելով,— ահա նա սեւ մարգարէ է դառնում մի ողջ ժողովրդի համար, առանց երկիւղի յայտարարելով՝ «եթէ Սումգայիթ տեղի ունեցած չլինէր, հայերը պիտի ստեղծէին այն: Նրանք մազոխիստներ են: Նրանք փնտռում են մահը եւ դժբախտութիւնը»:

Ուրեմն՝ ի՞նչ: Դուրս է գալիս, որ Անարն ու Սումգայիթի հրոսակները բարի գո՞րծ են կատարում. «մահ եւ դժբախտութիւն փնտռող մազոխիստ» ժողովրդին, առատօրէն մատակարարում են մահ եւ դժբախտութիւն, որպէսզի իրենք սադիստական խնջոյքներ սարքեն, եղբայրութիւնն ու բարեկամութիւնը ծաղրի առարկա՞յ դարձնելով: Մի՞թէ նրանց աչքի առաջ չեն դալիս ոչ

digitised by A.R.A.R.@

իրենց ապրած իսլամներին մէջ այրուող կենդանի հայերի մարմինները (և հոգիները, որ մինչ այդ այրում էին նրանց բռնակալութեան ու անարգարութեան կրակի վրայ), ոչ ձոյլերով ու կացիններով խոչանդուող հայ մարդիկ, կանայք, երեխաներ, բռնաբարուած ու լկտած աղջիկներ ու մայրեր... նրանց ականջներին չե՞ն հասնում իրենց ցեղակիցների վայրենի կանչերը, թէ՝ «Ով քրիստոնեայ հայի արիւն խմի, ալլահը նրան կը վարձատրի դրախտով...»:

Ի զէպ, յայտնի չէ՝ վախո՞վ, թէ՞ հաճոյքով նոյն հարցազրոյցի մէջ դրա հեղինակը, յայտարարելով, թէ՝ «Հայերի կողմից մեծ սխալ է եղել», յատկապէս մատնանշում է՝ «Այս զէպքերը զարկ պիտի տան կրօնական մոլեռանդութեան, եւ Ադրբէջանը կարող է երկրորդ մի Իրան դառնալ»: Կրօնական մոլեռանդութիւնը թողնենք Թզաւերին եւ իր հաւատակիցներին, սակայն ի՞նչ է ակնարկում Ադրբէջանի գրողը, երբ ասում է, թէ «Հայերի կողմից մեծ սխալ է եղել»: Դուցէ ի նկատի ունի ա՞յն, որ տասնամեակներ շարունակ Ղարաբաղի հայ ժողովուրդը ենթարկուելով Ադրբէջանի կառավարութեան անտեսական, հոգեւոր ու բարոյական սարսափելի զրկանքներին ու հալածանքներին, ենթարկուելով բռնապաղթի, յանկարծ համարձակուել է իր սեփական հողի վրայ իր բախտն ինքնուրոյն տնօրինելու իրաւունք պահանջել: Կամ դուցէ ա՞յն, որ հայերն իրենց մէջ արիութիւն եւ կամք յայտնաբերեցին՝ Սումգայիթին ի պատասխան Սումգայիթ չստեղծել Հայաստանում: Չէ՞ որ դա մարդկային շատ աւելի մեծ ուժ է պահանջում, քան ստեղծելը: Ոճրագործին կարող է յայտնի չլինել այս բանը, բայց գրողին յայտնի պիտի լինէր անպատճառ:

Հարցազրոյցն, ինչպէս նշեցինք, լոյս է տեսել Հոկտեմբերի 24ին, եւ վստահ ենք, որ Անարը տեղեակ է դրա հրապարակմանը, եւ եթէ թղթակցի դէմ որեւէ բողոք ունենար իր մտքերն աղաւաղելու կապակցութեամբ, մինչեւ հիմա հանրապետական ու միութենական մամուլի առատօրէն իրեն տրամադրուած էջերում առարկութեան մի տող կը գրէր: Այդպիսի բան չկայ: Ուրեմն՝ համաձայն է: Սակայն ինչո՞ւ թղթակից Լեգրանը Սումգայիթի եղեռնի առիթով ադրբէջանցիների մէջ հոգու տուայտանքներ յայտնաբերեց, իսկ ադրբեջանցի գրողը՝ ոչ: Չէ՞ որ նա պիտի լիներ իր ժողովրդին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակողը, մինչդեռ ըստ Լեգրանի, ադրբէջանցի մայրերն սոխպուած են թաքուն արտայայտել իրենց վշտոտ մեղսակցութիւնը՝ սեւ շալերի մէջ փաթաթուած, գաղտագողի մտնելով Բաքուի հայոց եկեղեցի եւ մոմեր վառելով զոհերի յիշատակին: «Ամէն օր գալիս են աղօթելու: Միայն իրենք չեն: Մահմեդականներ են»— գրում է Լեգրանը Բաքուի հայ եկեղեցու առաջնորդի անունից: Մնում է յուսալ, որ ժողովուրդը փորձի ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակել իր մաւորականութեանն ու զեկավարութեանը, իր հոգեւոր ու քաղաքական, այսպէս կոչուած, առաջնորդներին: Թղթակիցը նշում է, որ Բաքուից հայերի հետ միասին փախչում են նաեւ ռուսները, որոնք քանակով գերազանցում են կրկնակի:

Մեր համառօտ խօսքի վերջում ուզում ենք նշել, թէ ցաւալի է մանաւանդ, որ հայերի «հիւանդութեան» մասին Անարի յայտնած «մխիթը» Անկարայի ամենառեակցիոն զեկավար շրջանները վաղուց ի վեր կրկնում են իրենց հարցազրոյցներում, ռադիոյով ու հեռատեսութեամբ, փորձելով ուրացուել 1915 թուականին թուրքերի կողմից հայերի ցեղասպանութեան փաստը: Նայ 1915 թուականին թուրքերի կողմից հայերի ցեղասպանութեան փաստը: Մեզ կը ի՞նչ ասենք: Ինչպէս մարդը, այնպէս էլ ցեղը կարող է հիւանդանալ: Մեզ կը մնար կողքից նայել ու հիանալ Անարի եւ նրա պէս մտածողների առողջութեամբ, եթէ, Աստուած չանի, իր ժողովրդի կէսից աւելին կոտորէին, եւ իրենք լինէին այդ ահաւոր եղեռնի ժառանգորդը:

ԹԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բագին

ՄԵԾ ՆԵՆԳԱՓՈԽՆԵՐՈՒՆ՝ ..... ՊԶՏԻԿ ԿՈՉ ՄԸ... .....

Կանխող բաժնին մէջ ու տարբեր էջերու վրայ ընթերցողը չափով մը ճանչցաւ ազերի մտաւորականներէն, լրագրողներէն ու գրողներէն քանի մը հատը,— Զիա Բունիաթով, Անար, Մաքսուդ Իբրահիմ Բեկով, Ռաֆիկ Նազիբեւ, Սամեդ Վուրգուն, Միրզա Իբրահիմով, Մէհտի Հիւսէյն, Բախտիար Վահաբզադէ, Հիդայաթ։

Հայաստանի մամուլին հետեւած մարդը այս թիւէն երեք անգամ աւելի ազերի գրողներու հանդիպած է անպայման,— գրողներու քարտուղար, արձակագիր, բանաստեղծ, տեսաբան — Էլչին, Խա Իսմայիլ Զադէ, Սիավուշ Մամեդզադէ, Զինկիզ Ալիօղլի՝ էնվեր Մամեդօղլի, եւայլն, եւայլն։

Այս Զինկիզ Ալիօղլիները, էնվեր Մահմեդօղլիները եւ երկրորդ կարգէն դուրս մնացած ուրիշներ մերիններուն ուշադրութիւնը գրաւած են, անշուշտ, «Լենինեան բարեկամութեան արեւի տակ» եւ հիմնական այդ պատճառով թարգմանած են անոնց գործերը, թարգմանուած են անոնցմէ, բայց գոնէ մենք վճռականորէն չենք կրնար ըսել, թէ վերջին իրադարձութիւններուն ընթացքին լո՞ւռ մնացին անոնք, թէ դարձան մէկ-մէկ Հիդայաթ, մէկ-մէկ Բախտիար Վահաբզադէ։

Արդարեւ, ազերի գրողներու մէջ քիչ մը չատ աւելի ազերի դուրս եկան մա՛նաւանդ այս երկուքը, անոնք՝ որոնք քառասուն ու աւելի տարիներ մեր մէջ ապրեցան, երեւան, եւ առաւելագոյն չափով մը իրենք զիրենք բարեկամ ցոյց տուին հայ ժողովուրդին, օգտուեցան Հայաստանի ընծայած կեցութեան դիւրութիւններէն, պատիւներէն, տիտղոսներէն, մրցանակային ծափողջոյններէն,— Բախտիար Վահաբզադէն ու Հիդայաթը, որոնցմէ առաջինը «Հողից բաժին չեմ տար» խորագրով բանաստեղծութիւն մը սարքեց, «Հայհոյական ձօն» մը՝ պիտի ըսէր մտաւորական Թեւոս Պետրոսեան, զայն «զազրախօսութիւն» պիտի կոչէր բանաստեղծ Իգնատ Մամեան եւ պիտի տար անոր պատշաճ պատասխան մը, նոյնպէս չափածոյ (Տես «Բագին», 1989, թիւ 12)։

Մամեանի բանաստեղծութեան մէջ ամբողջովին իմանալի կը դառնայ Վահաբզադէի բնութագիրը, իսկ ամբողջ քառասուն տարի Հայաստանի օդը շնչած ազերի երկրորդ գրողը լրիւ ճանչնալու համար կ'արժէ երկրորդ անգամ կարդալ «Կէօք է եւ... Հիդայաթ» խորագրեալ գրութիւնը։

Դեռ ո՞ղջ են արդեօք եւ դեռ Հայաստա՞ն կը բնակին հոն ստեղծագործող ազերի գրողներու մանաւանդ ուղին նախագահ կնեազ Միրզոեւը եւ բանաստեղծներ Լաթիֆ Մամեդովը, Հիւսէյն Իսմայիլովը, Հասան Քիրիմովը, եւ ի՞նչ եղաւ իրենց հակազդեցութիւնը արդեօք հայկական նորագոյն շարժումներուն դիմաց։ Երբեւիցէ արդար եղա՞ն ու արդար խօսք մը ըսի՞ն, թէ իրենց հերթին թրքացան՝ Վահաբզադէի պէս, Հիդայաթի պէս, Էլչինիզ Հուրունցը «մշակած» Սամեդ Վուրգունի եւ ընկերակիցներուն պէս, «Ճիկարօ» թերթին մէջ ասոնցմէ մը աւելի լրացած Անարի պէս, ներշնչուելով, ի հարկէ, իրենց «հոգեւոր հայր» թուրք օղլի թուրք Զիա Բունիաթովի նենգափոխութիւններէն եւ Բունիաթովեան էդ թուխակ Ֆարիդա Մամեդովայի ցաւագարութիւններէն։

Ազերիներուն մէջ բնաւ պարկեշտ մէկը չկա՞յ, պիտի հարցնէ այս էջերուն դիմաց մարդկայնական վերաբերումի մը կարօտ ընթերցողը։ Ի՛չ, չկայ, գոնէ՛ գրողներուն մէջ մեզի չէ տրուած հանդիպիլ պատմական ու գիտական պատասխանատուութեան տէր ոեւէ մէկուն։

digitised by A.R.A.R.@

Բագին

ՀԱՅԱԶԳԻ ՎԻՃՈՒԿԸ

Ղարաբաղի ճակատագրին ու այդ ճակատագրին սերտ առնչել եւս քանի՛ցացուցած արարծներուն մասին արտասահմանի ընթերցողին ընդհանուր ծանօթութեան մէջ վերջին տարիներու ելեւէջները բաւական նորութիւններ մուծեցին, այնուամենայնիւ եղած են ու կան կարգ մը գործօններ, որոնք դեռեւս կը մնան ուրուագիծ վիճակի մէջ:

Ըստ հայրենի մտաւորականներու վերջին սեւագրութիւններուն, բացառելով ուազ ճիւղերը, շարժին ամէնէն տխրահռչակը կը հանդիսանայ Հէյդար Ալիեւ արիւնարբուին օրով եւ անոր կողմէ Ղարաբաղի առաջին քարտուղար նշանակուած հայազգի Բօրիս Կէորկովը:

Ալիեւեան տարիներուն անդրադարձող գրութիւններու մէջ մենք յանախ հանդիպեցանք այս վիժուկին, մէկը քսութիւններով ու դաւաճանութեամբ աչքի ընկած այն խաբարուածներէն, որ շարունակ դաւեց ազգակիցներուն, հալածեց, մատնեց, ոխորեց, անընշան պատճառներով պաշտօնէ արձակեց օժտուածները, առանց հաշիւ տալու իր խղճմտանքին՝ որովհետեւ չունէր, գիտի ծնող ժողովուրդին՝ զոր կ'ատէր, պատմութեան՝ որուն պատասխանատու չէր զգար ինքզինքէ...

Մեր տրամադրութեան տակ ո՛չ կենսագրականը ունինք այս վատասերածին, ոչ ալ նկարը, տարբեր գրութիւններու մէջ սեւագրուած կան միայն իր նկարագիրին գիծերը, որոնց դաւաճանական բնոյթը շատ մօտէն կը յիշեցնէ Բակունցն ու իր բախտակիցները կարմիր մանգաղով հնձած Բերիայի դրածոն, Խաչիկ Մղդուսի կոչեցեալը, ա՛յն տարբերութեամբ միայն, որ մինչ Մղդուսին արագ կատարեց իր հուճմը եւ արագօրէն հնձուեցաւ նոյն մանգաղէն, Ալիեւի դրածոն երկար տարիներու վրայ կիրարկեց ահաբեկչական իր պաշտօնը...

Մենք որոշած էինք *«Բագին»*ի ներկայ բացառիկին մէջ տեղ բանալ բացառաբար դաբաբաղեան ոգին բացայայտող գրութիւններու, բայց տարբեր սրբութիւններու առիթով ակամայ յիշատակուած այս սրբապիղծին անունը հարկադրեց մեզ բանալ այս համառօտ էջը, աւելի ընդարձակները ձգելով ուրիշ առիթներու:

ՓՈՐՁՈՒԱԾ ԱՂՈՒԷՍԸ

Փորձուած աղուէս է այդ Կէորկովը, հեռուն կը գնայ:

Ան էլ՝ ի՞նչ փորձուած. գիտի առաջ դնալու բոլոր միջոցները, նրբերանգները: Կարո՞ղ է նա չիմանալ, որ ազգրիչանական ազգայնամոլութիւնը սերտ ազգեցութիւն ունի օսմանեան Թուրքերի նոխնանուն մոլուցքի հետ, բայց պաշտանատենչը, վերբարձրանալու մարմաջը թելադրում է վարուհատոյց լինել ստացած չքաղաքացիի դիմաց, կատարեալ քրել իր իսկ արիւնակիցներին, նորանոր հայ զոհեր մատուցել իրենից վեր կանգնածներին. միայն այդպէ՞ս կարելի է վեր ելնել ազգրիչանական պաշտօնատանդուխտով:

Հնացիանալիստի պիտակ կպցնելն էլ հա մի մեծ բան չի՞. մէկի ազգականն է ապրում երեւանում, մի՞ սր Բաքուն թողած՝ գնում, երեւանում է պաշտպանում իր դիսերտացիան, երբոյրդը Հայաստանին նուիրուած բանաստեղծութիւն է կարդում. մի՞թէ քիչ է: Չէ՞ք հաւատում: Ահա ամենաթարմ փաստը: Զեռքիս չորոտմուռ եմ տալիս դարաբաղցի մի ազատախոհ մարդու աշխատանքային գրքոյկը, որտեղ սեւով ապիտակին գրուած է. «Հեռացուում է «Գորկիզդային Ղարաբաղ» քիրքի բաղակցի պաշտօնից՝ հրապարակով նացիոնալիստական բանաստեղծութիւն կարդալու համար». Հրամանը թիւ 37, 3 Մարտի, 1975 թ.: Մտրաղրութիւնը՝ Թերթի խմբագիր Ա. Արզումանեան:

Ուրեմն թերթի թղթակից եւաս հարազատը ընկերական մի հաւաքոյթում արտասանել է Արամայիս Սահակեանի տպագրուած ժողովածուից մի բանաստեղծութիւն, որուն հեղինակը երազում է Արարատ լեռը տեսնել միւս երեսից: Ուրեմն առհիմն չէ Կէորկովի զայրոյթը. նա, որ իր պաշտպանութեան տակ է առնում թալիւք փաշային, մի՞թէ կը հանդուրժի նման արարքը («Նորք»*, 1990, թիւ 9):*

ԼԵՈՆԻԴ ՀՈՒՐԻՒՆՑ

●

... Եւ պատուեց մի ծանր լրջան, յատկապէս Բօրիս Կէորկովը մարդկոցի առաջին քարտուղար նշանակուելուց յետոյ: Հայահալած քաղաքականութիւն սկսուեց եւ ընդունեց ամենավայրենի ձեւեր, ընդհուպ այն աստիճան, որ եթէ ոչնչիցէ մէկը ասենք հայրենասիրական բանաստեղծութիւն էր արտասանում մի ոչնչիցէ տեղ, ապա նա ենթարկուում էր հալածանքի: Եւ ստեղծուեց այսպէս կոչուած «Ղարաբաղեան նացիոնալիզմ» պիտակը, որով եթէ ուզում էին մէկի հետ հաշուեյարդար տեսնել, այդ պիտակը կպցնում էին եւ հարցը լուծուում էր այս ձեւով («Դիրոշակ»*, 1991, թիւ 20):*

ՄԱՔՍԻՄ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

* * * * * * * * * * * *

Լեռնային Ղարաբաղի շուրջ խմորուած իրադարձութիւններն ինձ եւ, յուսով եմ, այստեղ ներկայ գտնուող շատերին որոշակի ինքնաճանաչման բերին։ Մինչ այդ մենք իբար հա կշտամբում կամ անիծում էինք, հիմա կարծես հոգեպէս թեթեւացել եւ միմեանց հանդէպ մեղմացել ենք։ Եղիշէ Չարենցի եղերական վախճանից ի վեր չէին թոգնում մեզ, եւ մենք չէինք էլ ուզում միաձայնական լինել։ Այսօր ո՛չ միայն ուզեցինք, այլեւ կարողացանք բոլորս մի մարդու պէս ոտքի կանգնել։ Եւ ի՞նչ տեսանք. տեսանք, որ մենք այնքան էլ անզօր չենք, ոչ էլ՝ յուսակորոյս։ Եւ բոլորս միասին ենք փնտռում լուծելու այժմ անլուծելի թուացող բազում հարցեր ու առեղծուածներ («Սովետական արուեստ», 1988, թիւ 12, էջ 16)։

ԱՂԱՍԻ ԱԵՎԱԶԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՐՑԱԽԻՑ

●

Բերգաչէն գիւղի մանկապարտէզի ասնիկների եւ կոլեկտիւի կաթսայած արտերի ողջոյնն եմ յղում Մայր Հայաստանին։

Գրում եմ եւ հագիւ զսպում լացս, ախր, բակում երեխաները միաձայն գոռում են. «Հա՛-յա՛ս-տա՛ն, մի՛-ա՛-ցո՛ւմ, Ղա՛-բա՛-բա՛ղ»։

Ընթերցեցի «Պիոներ կանչ» N° 70ում տպագրուած «Ձեր սրտի ջերմութիւնը» յօդուածը։ Ընդհանրապէս, երբ հայկական որեւէ թերթում ընթերցում եմ գոնէ մի տող մեր մասին, լցւում եմ այն որբուկի պէս, որը թիկունքից զգում է մօր տաք շունչը։

Ներեցէք։ Ինչքան ցանկանում եմ չընդունել հիմնական խնդրից, էլի՛ չի ըստացւում։ Ինչքան գիպուկ էք գրել. այո՛, մենք գրքի քաղց ունենք։ Ձէք պատկերացնում, թէ ինչքա՜ն աղքատ է մեր մեթոդական անկիւնը, եղածը ռուսերէն գրքեր են եւ ամսագրեր, որոնք համարեա՛ չեն օգտագործւում։ Խնդրում եմ, եթէ հնարաւոր է, օգնել գոնէ ծրագիր ձեռք բերելու։ Միթամտէք, որպէսզի մեզ ուղարկեն «Մանկապարտէզի երեխաների դաստիարակութիւն եւ ուսուցման տիպային ծրագիր», կերպարուեստի «Միածան» ուսումնական ալբոմ, Ֆ. Մ. Բաղդասարեանի «Կերպարուեստի «Միածան» ուսումնական ալբոմի մեթոդական ուղեցոյց», մանկագիրների լուսանկարներ։

Ինչով կարող էք՝ օգնէք։

Ներողութիւն եմ խնդրում Ձեզ նեղութիւն տալու համար եւ մէկ էլ խնդրում եմ՝ ինչքան հնարաւոր է ուղարկէք Բ. Ուլուբաբեանի «Զուլցարան» գիրքը։

Վերջնթերցեցի նամակս եւ ինձ թուաց, թէ չատ եմ լացի մասին գրել։ Այն տպաւորութիւնը չստեղծուի, թէ մենք միայն յուզուել, լացել գիտենք։ Ո՛չ։ Մենք կանգուն ենք մեր սարերի պէս, ոչ մի բոպէ մեր հաւատը չի կորչի, եւ մենք պէտք է յաղթանակենք, որովհետեւ մեզ հետ է ողջ հայութիւնը եւ մեր պահանջը արդարացի է։

Խորին յարգանքներով՝
ՌԱՒՍԱ ՊՕՂՈՍԵԱՆ
Բերդաշէն գիւղի
մանկապարտէզի վարիչ

digitised by A.R.A.R.@

ՀԻՄԱ՞ ԷԼ ԼՌԵՆՔ

Նորից դաւն է չոքել մեր դրանը... Նորից ցեղասպանութիւն, նորից ջարդ ու թալան: Այս էլ որերորդ անգամ: Չեմ ուզում հաշուել, չեմ ուզում այլեւս արտասուքով նզովել թշնամուս: Ցաւը կուլ չի դնում, քանզի շատ է մեծ, եւ ցաւ չէ միայն, այլ ազգային արժանապատուութեան վիրաւորանք, ազնիւ ու արդար ձգտումների ոտնահարում: Ուրեմն հիմա՞ էլ լռենք: Մենք հրաշալիօրէն գիտենք, որ լռութիւնը ոսկի է, ոսկի է, սակայն, երբ նատած ես քաղաքակիրթ ու արժանապատիւ, իրենք իրենց յարգող ժողովուրդների, ազգերի հետ: Իսկ երբ սեղանակիցդ, դրկիցդ սպանող է ու թալանչի, գող է եւ աւազակ, ամբարտաւան ու անբարոյական, արդէն վիրաւորական է լռելը: Վիրաւորական ոչ միայն քեզ համար, այլ քո նախնեաց, որոնք ժառանգել են նաեւ հպարտութիւն ու ինքնասիրութիւն, որոնք բարձր ու վեհ ձգտումներով բռնեցին հայոց Մեծ երազին հասնելու ճանապարհը: Եւ այսօր մենք ոչ միայն իրաւունք չունենք ականջալուր չլինելու նրանց՝ Քրիստափոր Միքայէլեանների, Արամ Մանուկեանների, Ռուբէն Տէր-Մինասեանների, Նըժդեհների եւ միւսների ձայնին, այլեւ պարտաւոր ենք քայլելու նրանց հերոսական ճանապարհով՝ մեզ հետ տանելով «յարատեւ կռուի» պատգամը: Պարտաւոր ենք ոչ միայն հպարտանալ նրանց յաղթանակներով՝ Սարդարապատով, Բաշ-Ապարանով, Ղարաքիլիսայով, այլ նորերը ունենալու արժանապատուութեամբ:

Ղարաբաղեան շարժումը ոչ միայն մեզ արթնացրեց նիրհից, այլ վերջնականապէս բերեց մի համոզման՝ մեզ եւ մեր հողը մե՛նք պիտի պաշտպանենք: Դրանում համոզուում ենք գրեթէ ամէն վայրկեան, երբ կրկին մեր դէմ յանուն է ոտքը, երբ ականատես ենք լինում մեր «ինտերնացիոնալիստ» հարեւանների վայրագութիւններին, երբ կրկին պետական ատեանների կողմից միայն անտարբերութեան ենք հանդիպում կամ անորոշ մի որոշման եւ անգամ մերժման:

Պատմութեան դաւը բաժակը այսօր էլ ըմպող ժողովուրդը պիտի համոզուած լինի, որ իր կամքի հաստատումը, ազգային խնդիրների լուծումը յարատեւ պայքարով է եւ ոչ սպասումով:

Բաւական է: Մեր նախնիները մէկընդմիշտ կը նզովեն մեզ, եթէ ունկընդիր չլինենք նրանց պատգամին՝ «յարատեւ պայքար» մինչեւ մեծ նպատակի իրականացումը: Հանճարեղ Չարենցը, երբ ասում էր, թէ մեր ուժը մեր միասնութեան մէջ է, հաւանաբար տեսել է այսօրը:

Քրիստափոր Միքայէլեանի խօսքը պարզապէս պարտաւոր ենք կատարել. «Պատռել է հարկաւոր քարտէսների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծուած սահմանները, ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկայութիւնները, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռուելու անսասան վճռողականութիւն եւ կապուած, միացած է դարերով սնուած ու պահպանուած բարոյական նազդեցութեան եւ զգացմունքների առողջ զարկերով» («Աւանգարդ», 21 Յունուար 1990):

ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

***

Ես գիտակցաբար չեմ ուզում խօսել Ղարաբաղի մասին, որովհետեւ զգում եմ, որ ձեզ մօտ պերգիա է առաջացել, երբ մենք՝ հայերս, խօսում ենք Ղարաբաղի մասին: Ինչո՞ւ է այդպէս: Դուք չէք ուզում ընկալել մեր ցաւը: Ուրեմն, հարց է ծագում, էլ ինչպիսի՞ն է մեր տունը:... Եւ երբ մենք խօսում ենք այդ մասին, ապա պնդում են. «Լսեցէք, ահա դուք այսպէս էք ասում, իսկ ազրբէջանցիներն՝ այնպէս»: Կարծես զոյութիւն չունի գիտութիւն, կարծես զոյութիւն չունի պատմութիւն: Կարծես առհասարակ ոչինչ զոյութիւն չունի: Ցաղթում է ով աւելի բարձր է գոռում, ով աւելի շատ է սպանում: Այսինքն՝ յաղթում է ուժը: Մինչեւ ե՞րբ: Մինչեւ ե՞րբ է Խորհրդային Միութիւնում անպաշտպան մնալու ո՛չ միայն իրաւանչիւր մարդ, այլեւ իրաւանչիւր ժողովուրդ («Դեպուտատսկի վեստնիկ»-«Խորհրդային Հայաստան», 12 *Յունուար*, 1990):

ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆ

ՅԻՇԵՆՔ, ՈՐ...

Այսպիսով, Ադրբեջանում ընդունուած օրէնքը նպատակ ունի ընդլայնել եւ ամրապնդել հանրապետութեան ինքնիշխանութիւնը ի հաշիւ արցախահայութեան ստրկացման: Դա մի կողմից վկայում է, որ Ադրբեջանում իրենց հանրապետութեան վրայ նայում են իրրեւ փոքրիկ կայսրութեան, իսկ միւս կողմից՝ մնում են չափազանց հեռու իրապաշտութիւնից՝ կարծելով, թէ հնարաւոր է ստրկացնել ազատատենչ ու հպարտ, ազգային արժանապատուութեան վեհ զգացումով օժտուած եւ հոգեկան մեծ ներուժ ունեցող, ազատագրական պայքարի ու անկախութեան հարուստ աւանդոյթներով դաստիարակուած, Ռուսաստանին եւ Խորհրդային Միութեանը բազմաթիւ զօրավարներ՝ գեներալներ, մարշալներ, հերոսներ ու աշխարհահռչակ գիտնականներ տուած արցախահայութեանը: Արցախահայութիւնը ստրկացնելու պլաններն առաւել եւս անիրապաշտական են, քանի որ նրա թիկունքին անասան կանգնած է, նրա արդարացի պայքարի զօրավիգ է Խորհրդային Հայաստանի եւ արտաքին եւ ներքին Սփիւռքի հայութիւնը (*«Երեկոյեան Երեւան»*, 11 Հոկտեմբեր 1989):

ՑԱԿՈԲ ՑԱԿՈԲԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Խնդրէս պարզուեց՝ Ադրբէջանի կոմկուսի կենտկոմի աշխատակիցները, մասնաւորապէս Ի. Ղարիբովը գեկուցել էր կենտկոմի բաժնի վարիչ Հ. Ալիեւին այն մասին, որ յուշարձանը կերտուած է Երեւանում եւ հաշնակցական գաղափարներ է արտայայտում։

Լեռնային Ղարաբագի ազգային ատաքնդրում գտնուում են աւելի քան 1,5 հազար հոյակապ պատմա-մշակութային յուշարձաններ, այդ թւում՝ 4դդ, 13դդ եւ 17դդ դարի գլուխ-գործոցներ։ Սակայն նրանց շուրջն այնպիսի մթնոլորտ է ստեղծուած, որ հոյնիսկ ի պաշտպանութիւն գրուեց արտասանուած բառն է պատժուում։

Մարզկոմի աշխատակիցներին սկսեցին հետեւել, տխրահռչակ 37 թուի ամբարներից դուրս հանուեցին գաղափարական գաղափարների գլխ պայքարող ստալինա-բերիական խայտառակ յոգեղեները եւ այդ մեղադրանքներով հալածուեցին ազգային կոմունիստները։

Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Այս տագնապալի օրերին, երբ Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնները յանգեցրին երկու եղբայրական հանրապետութիւնների յարաբերութիւնների սրմանը, իսկ զանգուածային տեղեկատուութեան միջոցները, չկամենալով խոչանալ բանի էութեան մէջ, երեւոյթը մեկնաբանում են՝ որպէս «մի խումբ ծայրայեղականների» եւ «առանձին անձանց» մեքենայութիւններ, իմ պարտքն եմ համարում գրել ձեզ, քանզի հենց դարաբաղեան խնդրոյ բերումով, ես՝ Լ. Ղ. մարզկոմի քարտուղարս, լինելով հանրապետութեան (Ադրբ. ՍՍՀ) Գերագոյն Խորհրդի երիտ գումարների երեսփոխան, Աշխատանքային Կարմիր դրօշի եւ Պատուոյ նշանի կրկնակի ասպետ, ունենալով Գերագոյն Խորհրդի պատուոգրեր ու բազմաթիւ շքանշաններ՝ կուսակցական մարմիններում իմ երկարամեայ բեղուն գործունէութեան համար, ստիպուած եղայ գործից ազատուելու դիմում ներկայացնել, լքել տունս, ընտանիքիս հետ միասին հեռանալ Ադրբեջանից եւ կեանքս զրոյից սկսել։

Ըստ էութեան, Ղարաբաղեան հարցը Խորհրդային Ադրբեջանում հայերի նկատմամբ ծաւալուած խտրականութեան խնդիրն է, որի նպատակն է վռնդել նրանց հանրապետութեան սահմաններից։ Դրա ցցուն օրինակը հայերի անանխադէպ դուրս մղումն էր Նախիջեւանի Ինքնավար հանրապետութիւնից։ Ո՛չ պարսկական դարաւոր լուծը, ո՛չ արաբական տիրապետութիւնը, ոչ էլ թուրքական եաթաղանը կարողացան հասնել այն բանին՝ ինչ ամենակարճ ընթացքում յաջողեցրեց Խորհրդային Ադրբեջանի ղեկավարութիւնը։ Նա-

digitised by A.R.A.R.@

խիջեւանը հայ ժողովրդի բնօրրանն է, նրա մշակոյթի եւ պատմութեան պահպանը, որը, փաստօրէն, բռնանուանուած է, իսկ բնիկ ժողովուրդը՝ վոնդուած ու ամսորուած: Եթէ 1913 թուականին հայ բնակչութիւնն այստեղ 80 տոկոս էր կազմում, 1920ին՝ ցեղասպանութիւնից յետոյ՝ 60 տոկոս, ապա ներկայումս նրանից լոկ տխուր յիշողութիւնն է մնացել՝ դատարկուած գիւղերի, փլատակուած յուշարձանների տեսքով, իսկ հայերը, հազիւ, 1,2-2 տոկոս են հաշուում:

Ստալին-Բերիա-Մ. Դ. Բաղիրովի կառավարման տարիներին հանրապետութեան տնտեսական, մշակութային եւ կուսակցական բնագաւառներից նպատակասլաց եւ անվերադարձ կերպով դուրս մղուեցին ազգութեամբ հայ ղեկավար կադրերը:

Լեռնային Ղարաբաղի աշխատաւորների անհամար ուղերձները, սկսած 20 թուականից, մնացել են անհետեւանք: Այս հարցը բարձրացնող կոմունիստները, համարեա՛, գլխովին հալածուել են: 1937 թուին ու հետագայ տարիների հետապնդումներին զոհ են գնացել անձնուէր կոմունիստ-լենինեաններ՝ Լեւոն Միրզոյեանը, Թադեւոս Միրզոբեկեանը, Թադեւոս Գրիգորեանը, Աշոտ Խոնինեսեանը, Աւանէս Քոթանջեանը, Արարատ Գորբուզովը, Համբարձում Մարգարեանը, Արամ Եսայեանը եւ ուրիշներ: Նրանք ամէնքն արդարացուած են:

Բռնահալած միջոցներով ճնշուեց նաեւ 1965-67 թուականների շարժումը, որն առաւել սրուել էր ժողովրդի զայրոյթով՝ կապուած դպրոցի տնօրէնի կողմից հայ մանկահասակ տղայի գազանային սպանութեան հետ:

Դրութիւնն է՛լ աւելի վատթարացաւ, երբ հանրապետութեան կուսակցական կազմակերպութեան գլուխ կանգնեց Հ. (Էյդար) Ա. Ալիեւը: Դրանում հեշտ է համոզուել, դիմելով վիճակագրութեանը, սակայն ես կ'ուզէի Դաշկեսանի շատ հինաւուրց հայկական Բայան գիւղի՝ փառապանծ յեղափոխական, 1898 թուականից՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան անդամ Մելիքօ Մելիքեանի (մականունը «Դեդուշկա» - պապիկ) ծննդավայրի անունով ցոյց տալ, թէ ինչպէս էր դա կատարուում:

1969 թուականին բայանցիներն անձնական միջոցներով յուշարձան կանգնեցրին Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում զոհուած իրենց 350 համագիւղացիների պատուին: Մի օր առաւօտեան, արթնանալով, նրանք տեսան, որ յուշարձանն աւերուած է: Այդ տարիներին ես հարեւան Խանլարի շրջանի կուսկոմիտէի առաջին քարտուղարն էի: Գիշերուայ կէսին ինձ զանգահարեց Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ալիեւը: Նա յանձնարարեց մեկնել Բայան, բնել կատարուածը եւ հանգստացնել ժողովրդին, իսկ արդիւնքների մասին զեկուցել իրեն: «Այնտեղ թիւրիմացութիւն է տեղի ունեցել»,— ասաց Հ. Ալիեւը:

Գիւղը ցնցուում էր վրդովմունքից, իրենց ամենասուրբ զգացմունքներում վիրաւորուած մարդիկ հրաժարւում էին աշխատանքի դուրս գալ քանի դեռ պատժուած չէին զոհուած եղբայրների, զաւակների, ամուսինների յուշարձանն ինքնագլուխ եւ գաղտնաբար ոչնչացնող յանցագործները: Ինչպէս պարզուեց՝ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի աշխատակիցները, մասնաւորապէս Ի. Ղարիբովը զեկուցել էր Կենտկոմի բաժնի վարիչ Հ. Ալիեւին այն մասին, որ յուշարձանը կերտուած է Երեւանում եւ «դաշնակցական գաղափարներ է արտայայտում»: Վերջինս էլ, առանց փորձելու հարցից գլուխ հանել, անմիջապէս զանգահարում է Շրջկոմի քարտուղար Սուլէյմանովին եւ կարգադրում՝ «յուշարձանը վերացնել»: Սա էլ իր հերթին անջատելով Բայանի եւ հարեւան մի քանի այլ բնակավայրերի էլեկտրականութիւնը, իր

digitised by A.R.A.R.@

շքախումբով գիւղ է ժամանում հ. ալիեւամբ ղեկավարում «գործողութիւնը»: Դիւղի ղեկավարութիւնը, յամենայնդէպս, ձերբակալւում է միլիցիայի կողմից:

Յաջորդ օրն իսկ ես մեկնեցի Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմ (Բաքու) եւ ամէն ինչի մասին զեկուցեցի անձամբ Ալիեւին: Նա խոստացաւ շտապ միջոցներ ձեռք առնել: Ժողովուրդը սպասում էր, այնինչ ո՛չ երկրատեւ, ոչ էլ, մա՛նաւանդ, շտապ միջոցներ գործի դրուեցին: Միայն կենտրոնական մարմինների միջամտութիւնից յետոյ Սուլէյմանովն ու նրա դրածոյ Խաջայեանն ազատուեցին գրաւած պաշտօններից:

Սակայն արդարութեան յաղթանակը կարճատեւ գտնուեց: Գործի դրուեցին ներքին գործոց նախարարութիւնն ու Պետական Անվտանգութեան Կոմիտէն (ԿԳԲ), կոլտնտեսութեան զեկավարութիւնը պարսաւանքի ենթարկուեց ու վռնդուեց, իսկ նրանց յետեւից գիւղի գրեթէ ողջ բնակչութիւնը: Հիմա Բայանի բոլոր զեկավարներն ադրբեջանցիներ են:

Հեռանում են հայերը: Հեռանում են, արմատախիլ արւում իրենց դարաւոր բնակավայրերից: Հեռացել են Նախիջեւանից, հեռանում են Բաքուից, Խանլարից, Կիրովաբադից, Դաշկեսանից, Շեքիից, Շահումեանից, Ղարաբաղից... Զարդախլու գիւղը՝ մարաջախտներ Բաղրամեանի ու Բարաջանեանի ծննդավայրը կիսով չափ դատարկուել է: Այս գիւղի բարդութիւնների մասին, որ չարանենգօրէն առաջ է բերում Շամխորի շրջանային զեկավարութիւնը, գրեց անցեալ տարուայ Դեկտեմբերի 24ի «*Մեյսկայա ժիզն*» հանդէսը: Սակայն բանն այստեղ ոչ միայն ու ոչ այնքան տեղական զեկավարութեան մէջն է թաքնուած: Մի հետեւողական ծրագիր է ի կատար ածւում *երկրի* զեկավարութեան կողմից: Նոյն Ալիեւի ցուցումով Կիրովաբադի Շրջկոմի քարտուղար Հասանովը, քաղաքը շրջանների բաժանելիս, այնպէս է կտրել ու ձեւել քարտէսը, որ հայ բնակչութիւնը լուծուի ադրբեջանական բնակչութեան մէջ եւ իր ներկայացուցիչը չունենայ իշխանութեան մարմիններում. նայէք քաղաքի քարտէսի վրայ նախկին ստալինեան եւ Նիզամու շրջաններն ու այժմեան Կիրովաբադ եւ Գիյանջայ շրջանները: Խանլարի շրջանում 1920ից մինչեւ 1973 թուները Շրջկոմի առաջին քարտուղարներն անընդմէջ ընտրել են հայերը. վերջին քարտուղարը ես էի: Լեռնային Ղարաբաղի մարզկոմ տեղափոխուելուցս յետոյ՝ Խանլարում քարտուղար նշանակուեց ադրբեջանցի: Նոյնը տեղի ունեցաւ մի շարք այլ շրջաններում:

Ղարաբաղեան հարցը բողոք է հայերի խաղաղ, սակայն չտեսնուած հնարամիտ ու անվերադարձ արտաքսման դէմ իրենց հարազատ հողերից՝ սրբացած նախնիների արիւնով ու քրտինքով, հոգեւոր ու նիւթական մշակոյթի անգին յուշարձաններով, որոնք այսօր ադրբեջանցի գիտնականները՝ լիովին համապատասխան՝ վերին զեկավարութեան ուղղման քաղաքականութեանը, յայտարարում են իրենց սեփականը:

Ցայտնի է՝ ազգային հարցի ինչպիսի խորը վերլուծութիւն է պարունակւում Վ. Ի. Լենինի աշխատութիւններում, որը դատապարտում էր ոեւէ ժողովրդի կամ նրա տարածքի բռնակցումը մի այլ ժողովրդի պետական կազմաւորման մէջ՝ ինչ ձեւով էլ զայն փորձեն բողարկել: «*Մահմանները*,— գրում է Լենինը,— *պէտք է որոշուեն ժողովրդավարականօրէն՝ բնակչութեան կամքի եւ համակրանքի համաձայն*» (Վ. Ի. Լենին, «*Ինքնորոշմանը վերաբերող բանավէճի արդիւնքները*», հ. 30, էջ 71): Լենինեան դրոյթներով առաջնորդուելով՝ մեր կուսակցութիւնը ՌՍՖՍՀի եւ ԽՍՀՄի կազմաւորման ընթացքում ազգային-տարածքային բնոյթի բազմաթիւ բարդ խնդիրներ է լուծել, իսկ հետագայում կարեւոր փոփոխութիւններ է մտցրել Ուկրաինայի,

digitised by A.R.A.R.@

Բելոռուսիայի, Լիտվայի, միջինասիական հանրապետությունների վարչական-տարածքային կառույցներում:

Թե ինչպես վճռուեց Նախիջեւանի հարցը՝ ես արդէն նշեցի: Հիմա հերթը Լեռնային Ղարաբաղինն է: Ուրեմն ի՞նչն է թւում զարմանալի եւ հակաօրինական, որ ահա արդէն 70 տարի շարունակ ղարաբաղցի հայերը դիմում են երկրի կենտրոնական մարմիններին՝ խնդրելով օգնել իրենց վերամիաւորուելու մայր հայրենիքին: Ուրեմն, ինչպէ՞ս կարելի է խարազանել նրանց այդ բանի համար, ընդ որում թաքնուելով «լենինեան ազգային քաղաքականութեան» լոզունգի յետեւում, երբ ակնյայտ է լենինեան ազգային քաղաքականութեան սարսափելի, անթոյլատրելի խեղաթիւրումը: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի զեկավար կադրերի ընտրութիւնն սկսեց անցկացուել՝ համաձայն հայերի նկատմամբ խտրականութեան վերեւից չվաւերացուած, սակայն ամենայն հետեւողականութեամբ իրագործուող սկզբունքի, գերակշռող հայ բնակչութեան կարիքների հանդէպ արհամարհանքի եւ փոքրաթիւ «բնիկ» ազգութեան հանդէպ մեծագոյն ուշադրութեան: Դրանում համոզուելու համար բաւական է համեմատել Շուշի եւ Ստեփանակերտ քաղաքների ծախսերը:

Լեռնային Ղարաբաղի ափաչափ տարածքում գտնւում են աւելի քան 1,5 հազար հայկական պատմա-մշակութային յուշարձաններ, այդ թւում՝ 4րդ, 13րդ եւ 17րդ դարի գլուխ-գործոցներ: Սակայն նրանց շուրջն այնպիսի մթնոլորտ է ստեղծուած, որ նոյնիսկ ի պաշտպանութիւն դրանց արտասանուած *բառն* է պատժւում: Ուրեմն, ինչո՞ւ ենք զարմանում, երբ նման մթնոլորտում մարզի երկու պատասխանատու պաշտօնեաներ՝ մարզկոմի 2րդ քարտուղար Վալոդինը եւ մարզկային ՊԱԿի (ԿԳԲի) պետ Բիստրովն ուղղաթիռով մեկնում են Գանձասարի մենաստան, 12րդ դարի այդ յուշարձանը, որի պատմականն ու մշակութային արժէքին հայրենական ու արտասահմանեան գրականութեան հատորներ են նուիրուած, խնջոյք են սարքում եւ, հարբելով, հրաձգութեան վարժութիւններ կատարում՝ որպէս թիրախ ընտրելով հայերի եւ, ընդհանրապէս, բոլոր քաղաքակիրթ մարդկանց համար սրբազան վանքի զարդաքանդակները:

1973 թուականի Ցունուարին, ինձ արդէն, 12 տարի Խանլարի շրջկոմի առաջին քարտուղարիս, նշանակեցին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի քարտուղար: Երեք ամիս անց հրաւիրուեցի Կենտկոմի (Ադրբ. ՍՍՀ) առաջին քարտուղարի մօտ: Երեկոյեան ժամը 8ին ես Ալիեւի աշխատասենեակում էի: Զրոյցն առանց վկաների էր: Ալիեւը հետաքրքրուեց մարզի վիճակով, խոստացաւ լուծել բոլոր խնդիրները, իմ ներկայութեամբ զանգահարեց Կենտկոմի քարտուղար Գէուլիեւին՝ տուն, եւ յանձնարարեց տպագրել դարաբաղեան բանաստեղծների ու գրողների Բաքուի հրատարակչութիւններում 10 տարուց աւելի անշարժ պառկած գրքերը: Այնուհետեւ Ալիեւը մանրամասնօրէն շարադրեց հանրապետութիւնում կարգ ու կանոն հաստատելու ծրագիրը, այդ թւում եւ աշխատաւորների ինտերնացիոնալիստական դաստիարակութեան հարցերում, որոնք, ինչպէս ինքն արտայայտեց, նախորդ զեկավարութեան օրօք բարձիթողի վիճակի են մատնուել: Նա ասաց· *«մենք ձեզ տեղափոխեցինք Ղարաբաղ հետեւեալ հեռանկարով· որոշել ենք ընտրել ձեզ կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղարի պաշտօնում, բայց մի պայմանով···»*,— նա մի պահ լռեց, նայեց աչքերիս մէջ եւ պարզեց բանի էութիւնը: Պայմանը կայանում էր նրանում, որ ի պատասխան բարձրագոյն բարեհաճութեան, ես պարտաւորուելու էի նպաստել իմ նախկին պաշտօնում, այսինքն՝ գաղափարախօսութեան գծով քարտուղար, ադրբեջանցի ընտրելուն:

Մարզային խորհրդի նստաշրջանի նախօրէին կուսակցութեան մարզ-

digitised by A.R.A.R.@

կոմը բիւրոյի նիստ գումարեց, որի անդամներից մէկը՝ մարզի գործադիր կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Երուանդ Բաղդասարեանը հրաւիրուած չէր: Մարզկոմի առաջին քարտուղար Մելքումեանը յայտարարեց, որ վերուից զանգահարել եւ յանձնարարել են Բաղդասարեանի փոխարէն գործադիր կոմիտէի նախագահի տեղակալ ընտրել Աւէրիխանովին: Երուանդ Ա. Բաղդասարեանը՝ տնտեսական գիտութիւնների թեկնածու, Բարձրագոյն Կուսակցական Դպրոցի շրջանաւարտ, փորձառու կուսակցական աշխատող, արտակարգ կիրթ, սկզբունքային, ազնիւ մի անձնաւորութիւն, մարզի ժողովրդական ակտիւի խորը յարգանքն էր վայելում: Այնինչ Աւէրիխանովը՝ Բաքուի բարձր իշխանաւորի հովանաւորութեամբ Ղարաբաղ ուղարկուելուց ի վեր, արդէն հասցրել էր կաշառակերի, հարբեցողի եւ անբարոյական մարդու համբաւ ձեռք բերել (նրա գործունէութիւնն, ինչպէս եւ սպասւում էր, անփառունակ վախճան ունեցաւ. օրինազանցութիւններից յետոյ՝ ձերբակալումից խուսափելու համար, նա ստիպուած եղաւ փախչելու մարզից): Աւէրիխանովի թեկնածութեան դէմ հանդէս եկանք ես եւ մարզի գործադիր կոմիտէի նախագահը: Ես բիւրոյի անդամներին յիշեցրի նրա դէմ ստացուող բողոքների մասի թէ՛ շինարարական տրեստի կառավարչից եւ թէ այլ պաշտօնական անձանց կողմից առաջարկեցի փաստերը ստուգելու համար յանձնաժողով ստեղծել: Մարզկոմի առաջին քարտուղար Մելքումեանը մերժեց առաջարկութիւնս եւ Աւէրիխանովն ընտրուեց: Վերեւներում յատկապէս հետաքրքրուել էին իմ դիրքորոշմամբ ու չափազանց դժգոհ էին մնացել: 1973 թուականի Հոկտեմբերի 12ին մարզկոմի առաջին քարտուղար դարձաւ Բորիս Կէորկովը:

Իր վերջին հովանաւորի օրինակով՝ Կէորկովն էլ սկսեց նորոգել կադրերը: Մարզկոմի աշխատակիցներին սկսեցին հետեւել, տխրահռչակ 37 թուի ամբարներից դուրս հանուեցին դաշնակցական գաղափարների դէմ պայքարող ստալինա-բերիական խայտառակ լոզունգները եւ այդ մեղադրանքներով հայածուեցին ազնուագոյն կոմունիստները: Առաջ քաշուելով, ինչպէս ընդունուած էր լեցման տարիներին, իր անհրաջ՝ Բագատուր Ռզաեւի միջնորդութեամբ, Կէորկովն, օգտագործելով ՆԳՆի (ներքին գործոց նախարարութեան) եւ ՊԱԿի (ԿԳԲ) մարմինները, շատ շուտով մարզում ստեղծեց իր իշխանութեան բռնապետութիւնը, որին զոհ գնացին բազում օրինաւոր, գործունեայ մարդիկ:

Բիւրոյի անդամների կամքին հակառակ՝ Կէորկովը անձնաբար որոշում կայացրեց լիաժողով գումարել՝ «ճուիրուած» մարզի կուսակցական կազմակերպութեան խնդիրներին՝ աշխատաւորների ինտերնացիոնալ դաստիարակութեան հետագայ բարելաւման ուղղութեամբ: Դրա գլխաւոր նպատակը հայկական «նացիոնալիզմի» դիմակազերծումն էր: Ցատկանշական է, որ իր զեկոյցը նա պատրաստել էր ոչ թէ Ստեփանակերտում, իր աշխատանքային ընկերների հետ, այլ՝ Բաքուում, յայտնի «դարաբաղագէտ», Ադրբ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի տնօրէն Կուլիեւի օգնութեամբ: Զեկոյցի քննարկումը բիւրոյում խիստ առարկութիւնների առիթ տուեց, քանի որ հանրայայտ պատմական փաստերն այստեղ միտումնաւոր եւ, ուղղակի, տգիտօրէն էին մեկնաբանուած: Այդուհանդերձ, լիաժողովը կայացաւ ու զեկոյցն էլ ընթերցուեց: *«Ադրբէջանական ՍՍՀի կազմում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հիմնումը մէկընդմիշտ լուծեց չարաբաստիկ ղարաբաղեան հարցը»*,— յայտարարեց մարզի կուսակցական ղեկավարը, միաժամանակ շանք ու կայծակ տեղալով ազգային սահմանափակութիւն դրսեւորող, դաշնակցական գաղափարների ազդեցութեան տակ ընկած, անկախութիւն կամեցող հայերի գլխին:

digitised by A.R.A.R.@

Սակայն, որքա՜ն աւելի վիրաւորական էր խորհրդային Միութեան Դեբագոյն Խորհրդի (Լեռնային Ղարաբաղի գծով) երեսփոխան, Խ. Մ. Պետանվտանգութեան Կոմիտէի նախագահի տեղակալ Ս. Ցուլիգունի ջերմ շնորհաւորանքները լիաժողովի յաջող անցկացման առիթով: «Հայերին այդպէս էլ պէտք է»,— ասաց պետական այդ այրը հրճուանքից փայլող Կէորկովին, բիւրոյի անդամների ներկայութեամբ: Ղարաբաղցիների յիշողութեան մէջ Ցուլիգունը, որը կարողանում էր սարսափելի լարուածութիւն ու «լուութեան գօտի» ստեղծել, մնացել է՝ որպէս լեցման ժամանակաշրջանի ամենաչարաշուն դէմքերից մէկը:

«Հայկական ազգայնամոլութեան» մերկացումը դարձաւ Կէորկովի նախասիրած նիւթը: Դրա համար առիթ էր ծառայում միջազգային ու տեղական նշանակութեան իւրաքանչիւր իրադարձութիւն. սկսած Թեհլիրեանի կողմից հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշայի սպանութիւնից վերջացրած Շուշի քաղաքում հայկական եկեղեցիներից մէկը վերականգնելու անմեղ առաջարկով: Մշակութային կապերը Երեւանի հետ վճռականօրէն մերժւում էին, «*Մենք ենք՝ մեր սարերը*» հոյակապ արձանակոթողի հեղինակ, Հայաստանի ժողովրդական նկարիչ, հանրապետութեան Պետական մրցանակի դափնեկիր ծագումով ղարաբաղցի Ս. Բաղդասարեանին, որը յիշեալ ստեղծագործութեան համար Կոժարում ոսկէ մեդալի էր արժանացել, Կէորկովը բարձր ամբիոնից խարազանում էր՝ որպէս «*դաշնակցական գաղափարախօսութեան տարածողի, ժողովուրդների բարեկամութեան դէմ պայքար վարողի*»: Նա բազմիցս այս յուշակոթողը ոչնչացնելու հարց բարձրացրեց եւ միայն մարզկոմի անդամների ու հին կոմունիստների տոկուն դիմադրութիւնը խանգարեցին դրան:

Անընդունելի էր ա՛յն ամէնը, որ այս կամ այն կերպ նշանաւորում էր հայերին: Այսպէս, օրինակ, երբ Կէորկովին հաղորդեցին մարաջախտ Բաբաջանեանի Ղարաբաղ այցելելու ցանկութիւնը, որի մասին վերջինս շատ էր լսել, սակայն երբեք չէր տեսել, Կէորկովը կոպտօրէն ընդհատեց. «Նա՞ ինչ է կորցրել Ղարաբաղում, նա ղարաբաղցի չէ» (ոչ-ղարաբաղցի Վագիֆի պատուին Շուշիում յուշարձան-դամբարան է կառուցուած): Իսկ երբ մարզային կենտրոն ժամանեց Մոսկուացի լրագրող Մակովսկին, խնդրելով օգնել իրեն՝ այցելելու մարաջախտներ Բաղրամեանի, Բաբաջանեանի, Խուդեակովի (Խանունեանցի) հայրենի գիւղը (Զարդախլու), ես՝ հայրենակիցներիս հետ անձնական բարեկամութեամբ կապուած լինելով, մեծ հաճոյքով արձագանգեցի: Մարզկոմում ինձ դիմաւորեցին զայրոյթի պոռթկումով. «Ի՞նչ կարիք կայ հայ մարաջախտների մասին գրել»:

Կէորկովը սիրում էր, առիթը ներկայանալիս, խօսել Ղարաբաղի փառապանծ յեղափոխական անցեալի, Լենինի գործակից Կնունեանցի մասին, մինչդեռ, երբ հարց ծագեց այդ ականաւոր հայրենակցի անունով կոչել նորաստեղծ շրջաններից մէկը, ապա Ալիեւի կարգադրութեամբ այն անուանեցին Ասկերանի, որն ադրբեջաներէնից թարգմանուած՝ նշանակում է զինուորական: Ի՞նչ է իմաստաւորում այս անուանումը: Ի՞նչ է հաստատում կամ յաւերժացնում:

Իմ արխիւում պահուած է 1982 թուականի Սեպտեմբերի 25ի «*Պրաւդա*»ն, երբ Մոսկուայի Կարմիր հրապարակում, Կրեմլի պատի մօտ հողին էին յանձնում մարաջախտ Բաղրամեանի աճիւնը, իսկ Բաքուում հանդիսաւոր նոխութեամբ դիմաւորում Լ. Ի. Բրեժնեւին: Կովկասում նոյնիսկ պատերազմներն էին կանգնեցնում յարգարժան մարդու մահուան կապակցութեամբ: Կուռող կողմերը, ի պատիւ հանգուցեալի յիշատակի, հաշտութեան դաշինք

digitised by A.R.A.R.@

էին կնքում: Այդ ինչպէ՞ս կարող էր պատահել, որ Բաղրամեանի հայրենիքում, նրա թաղման օրը պարում ու երգում էին, հանդիսութիւն տօնում... ժողովուրդը նման բաները չի մոռանում ու չի ներում:

Այս օրերին ես առանձնայատուկ ձեւով եմ յիշում 1917 թուականից կոմունիստական կուսակցութեան անդամ Մուսէիր Դադաշեւի, այդ սրտամօտ բարեկամի պատմած դէպքը. *«Մի անգամ նաւթագործ բանուորները դիմեցին Շահումեանին, Ջափարիձէին եւ Ազիզբեկովին, խնդրելով պատասխանել, թէ՝ ո՞վ են նրանք ազգութեամբ: Երեքն էլ միաձայն պատասխանեցին՝ մենք կոմունիստ-բոլշեւիկներ ենք»:*

Ազգայնամոլութիւնը ազգերի եսասիրութիւնն է, երբ մի ժողովուրդ ապրում է միւսի հաշուին: Իսկ այդ ո՞ւմ հաշուին ենք ապրում մենք՝ հայերս: Ումի՞ց ենք խլել նրա հողերը: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում մենք կորցրինք նախիջեւանը եւ այժմ փնտրում ենք Ղարաբաղը կորցնելու սպառնալիքի յանդիման:

Թանկագին Միխայիլ Սերգէեւիչ, մենք ծայրայեղականների մի խմբակ չենք, մենք ժողովուրդն ենք, որը երաշխով վերապրել է թուրքական ցեղասպանութիւնը եւ Խորհրդային Ռուսաստանի օգնութեամբ վերածնուել նոր կեանքի համար: Մենք ցանկանում ենք մեր նախնիների հողի վրայ ապրել, մենք պատմական արդարութիւն ենք պահանջում: Մենք հաւատում ենք, ապրում այն մտքով, որ Ղարաբաղեան հարցը կը լուծուի զուտ լենինեան ոգով:

Խորագոյն յարգանքով՝
Խ. Մ. Կոմկուսի անդամ Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼԻՆԵՆՔ ՄԻԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՆՔ ՄԵՐ ԳԱԼԻՔԻՆ

Հայ ժողովրդին ծուռկի բերել անկարարին է:
Մեր ժողովուրդը չի խոնարհուել ու չի խոնարհուի երբեմ:

1988ի Դեկտեմբերին ես Ամերիկայի Միացեալ Նահանգներում էի: Մեծ ազէտին նախորդած դեկտեմբերեան օրերը ինձ համար լարուած ու շփոթանոց հետաքրքիր էին: Այստեղ էր ժամանել մեր տէրութեան ղեկավարը՝ Միխայիլ Գորբաչովը: Ինձ պարզապէս զարմացնում ու հիացնում էր այն ընդունելութիւնը, որ ցոյց էին տալիս նրան ամերիկեան պաշտօնական եւ ոչ-պաշտօնական շրջանները, ա՛նգամ Կապիտալի աշխարհի սանձը կտրածջ լրագրողներն ու հեռատեսիլի մեկնաբանները: Դրուատում էին մեր պրեզիդենտին, յիշատակելով նրա վերակառուցման քաղաքականութեան առաւելութիւնները: Ամերիկան հիացմունք յայտնեց, երբ երկրաչարժի լուրն առնելով Գորբաչովը որոշեց ընդհատել այցելութիւնը եւ մեկնել ազէաի գօտի՝ Հայաստան: Դա այնքան անսպասելի էր ամերիկեան որոշ դիւանագէտների համար, որ նրանք անգամ քաղաքական բնոյթի ծայրայեղ դուշակումներ սկսեցին անել:

Ու եկաւ Հայաստան, եկաւ աւերուած իմ ծննդավայրում՝ Լենինականում: Ցուցուց եւ վերապրեց մեր ժողովրդի, ինձ թուաց նաեւ իր անձնական ողբերգութիւնը: Փլատակներից դուրս եկած տարեց լենինականցին ոչինչ չխնդրեց պրեզիդենտից, ո՛չ տուն, չնայած գլխին ծածկ չունէր, եւ ոչ էլ հաց, չնայած քաղցած էր: Հարցրեց.

— Ընկեր Գորբաչով, ի՞նչ է լինելու Ղարաբաղի վերջը:

Անցել է մի տարի եւ ոչինչ էլ չի եղել, է՛լ աւելի են շփկացել կրքերը, է՛լ աւելի խորն է թաղուել դարաթաղեան հարցը:

Հայ ժողովուրդը այսօր էլ հաւատում է երկրի ղեկավարին, մեր բազմազգ տէրութեան պարլամենտի իմաստութեանն ու արդարամտութեանը եւ վստահ է, որ է վերջոյ արդարամտորէն կը լուծուեն Արցախի ու նրան յարակից բոլոր պրոբլեմները:

Ֆիլմն է աւարտում հաւատի շեչտով: Հայ ժողովրդին ծնկի բերել անհնարին է: Արձակագիր Ստեփան Աչաջեանը մեր ազգի տոկունութիւնն ու հերոսական ոգին ներկայացնող իր վէպերից մէկում հաստատում է, որ «ելեզդները չեն խոնարհուում»: Նա իրաւացի է, մեր ժողովուրդը չի խոնարհուել ու չի խոնարհուի երբեք: Մենք նուիրուած ենք մեր վեհ գործին: Իսկ յաղթելու երաշխիքը հայ ժողովրդի հաւաքական ուժի եւ անխախտ միասնութեան մէջ է՝ Հայաստանից մինչեւ Մփիւռք, շարքայլինից մինչեւ ղեկավար...

Ուրեմն, լինենք միասնական եւ հաւատանք մեր գալիքին («Խորհրդային Հայաստան», 15 Հոկտեմբեր 1989):

ՌԱՉՄԻԿ ՄԱԴՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Միխայիլ Գորբաչով Հայաստանի մէջ, երկրաշարժի օրերուն

Բաղին

ԳՈՐԲԱՉՈՎԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ...

Մեր ժողովուրդը երբեք չի կրնար մոռնալ այն ակնթիւ ժեսթը, որուն ժղուժով կրեմլի վերջին միապետը, ի յուր երկրաշարժին՝ կեռ ձգեց Ամերիկայի իր այցելութիւնը ու փութաց ազէտեալ շրջանները։

Այդ առիթով, սակայն, իրեն եղած հարցում մեներուն այնպիսի՛ պատասխաններ տուաւ ու կատարեց այնպիսի՛ հաստատում մեր, որոնք յաւելեալ շարով մը գարպարելու փոխարէն իր քաղաքական դիմագիծը, կը նսեմացնեն նոյնիսկ ազէտի գօտին այցելելու իր փութկոտութեան մարդկային չարժառիթը։

Հարցումներուն ժէկը, բոլորովին անպատեհին, հրաշալի՛ն, կը գանուի դիմացի էջին վրայ, փյատակներէն նոր դուրս եկած տարեց ու հալումաշ լենինականցիին հոգիէն բխած հարատատ ու սրտառուչ հիշը, իր անձէն վեր սաւառնող ու մեռելներուն ու ողջերուն անդրեր խաչնող սա կիսիչ հայրենասիրութիւնը։

— «Ընկեր Գորբաչով, ի՞նչ է լինելու Ղարաբաղի վերջը»։

Մենք չենք գիտեր, թէ Միխայիլ Գորբաչով ի՞նչ պատասխան տուաւ փյատակներու տակէն հրաշքով ազատած հրաշալի՛ լենինականցիին, բայց փաստ գալու փատագին ենթակայ հայրենի այդ եզերքին ճակատագրով չահագրգիռ ուրիշներու նոյնանքման հարցումներուն ասեն չէ կրցած գոսել զարաբագեան չարժում մին առիթով բարձրացած ժառանգական իր կիրքը, կասարելով սա յարատարութիւնը, որ հայորդու եցաւ խորհրդային պատկերասփիւռներէն։

...«Գիտէ՞ք, ես անոնց շատ կոպիտ պատասխանեցի։ Ըսի այն՝ ինչ որ կը մտածէի։ Ըսի՝ եթէ կ'ուզէք, ես այստեղ կրնամ պատմել ձեզի, թէ ինչպիսի՞ ողբերգու-

digitised by A.R.A.R.@

թիւն ստեղծուած է հայերուն եւ ադրբէջանցիներուն միջեւ, թէ՝ այդ բոլորը ո՞ւր կրնան տանիլ եւ իրապէս ո՞ւր հասած են անոնք...: Արիւն կը թափուի:

«Եւ հիմա, երբ Հայաստանի մէջ այսպիսի ոգեւորութիւն է, իսկ դուք այս պայմաններուն տակ Հայաստանի մայրաքաղաքին մէջ նման հարց կու տաք ինծի՝ ըսեմ, որ ատիկա կը նշանակէ, որ դուք ամբողջովին զուրկ էք բարոյականութենէ»:

Տարբերային ոգեւորութեան ցաւոյ տագնաւորները երկրորդ ոգեւորութեան մը առաջքը առնելու մտահոգութեամբ երբ հետաքրքրութիւնները ցոյց կու տան, իրե՞նք զուրկ կ'ըլլան արդեօք բարոյականութենէ, թէ այդ հետաքրքրութիւնը բարոյականութենէ զուրկ հոշակող իմաստուններն: Համայնավար կուսակցութեան թիւ մէկ իշխանաւորը պէ՞տք է գիտնար, որ հայ ժողովուրդը տարերքէ եկած թէ մարդակերպներու կողմէ տարբեր բազմ ու բազմապիսի աղէտներու ենթարկուած է, բայց անոնցմէ ո՛չ մէկուն առիթով չէ կորսնցուցած իր հաւատարմութիւնը, այլ գիտցած է միւս վեր բարձրանալ դժուն ճակատագրէն ու ամբողջն կաւչի իր անձնուիրած ու ձեռագործ բոլոր սրբութիւններուն:

Գորբաչովեան այս մտեցումը թոյլ չի՞ տար արդեօք ենթադրելու, թէ ինք եւ իր հովանաւորութիւնը վայելող ազգերները, ինչպէս նաեւ հայկական հարցերուն առիթով Անկարայի իր կուսակիցները ներքնապէս հրճուած պէտք է ըլլան Հայաստանի երկրաշարժին դիմաց, ա՛յն մտածումով, որ հայերը տարերային այդ դժբախտութեամբ կը գրգռին ու կը մոռնան իրենց սրտին մնայուն մղձաւանջի վերածուած Ղարաբաղեան պահանջատիրութիւնը:

Պատկերասփռուած նոյն հարցազրոյցին մէջ, Կրեմլի պետը կատարած է նաեւ չգիտութեամբ յատկանշուող կամ գիտութեամբ շաբաթխուած սա յայտարարութիւնը.

«Մէկ գիտնական կ'ապացուցանէ, թէ Ղարաբաղի մէջ հայկական արմատներ կան: Միւս գիտնականը՝ ոչ նուազ յաջողութեամբ, կ'ապացուցանէ, որ արմատները ադրբէջանական են: Եւ պատկերացրէք. երկուքն ալ կը յենին պատմական փաստերու վրայ»:

Եւ պատկերացուցինք...

Բայց գուանք, որ ամէն ինչ իր անունով կոչելու սկզբունք մը որդեգրած ու իր հոշակած հրապարակայնութեամբ հոչակուած Միխայիլ Գորբաչով ո՛չ թէ իր վարդապետութենէն ներշնչուած բերան կը բանայ, այլ մաքիավէլեան ազրիւրներէն կ'առնէ իր տեղեկութիւններն ու համարձակութիւնը:

Այլապէս պիտի չյանդգնէր այսքան դիւրութեամբ հաւասարութեան գիծ քաշել Ղարաբաղեան գարաւոր պատմութեան մը տէր եւ երկու հազարէ աւելի չշափելի յուշարձաններ կանգնած ժողովուրդին եւ նոյն տարածքին վրայ ապրող, պատմական կամ մշակութային ո՛չ մէկ արմատ ունեցող ազգերի եկու որ խառնամրոխին մէջեւ:

Իր մականին տակ ապրող ժողովուրդներուն պատմութեանց գրաւորները կրնայ չգիտնալ կարմիր գահակալը, բայց պատկերասփիւռային հաղորդումներուն վրա՞յ ալ աչք մը նետելու առիթ չէ ունեցած ան, կամ իր տրամադրութեան տակ չունի՞ արդեօք պատմական գիտութիւններու ու մշակութային հաւաստի ու անաչառ խորհրդական մը, որ կը ժարհի այսպէս ձրի յայտարարութիւն ընել ի լուր աշխարհի...

Այս հարցումներուն ու նմաններուն ճշգրիտ պատասխանները անշո՛ւշտ գիտէ Ղարաբաղեան հարցին առընչութեամբ բարոյականութեան լարերու վրայ նուագող Միխայիլ Գորբաչով, բայց գիտցածին ու ճշմարտութեան հետեւելու տեղ՝ իր նախորդներուն պէս կը վարէ թրքամէտ վարքագիծ մը, որուն յարած մարդերը, Կրեմլի պարիսպներուն մէջ գտնուողները թէ Հայաստանը «անպարիսպ» հաշուող միւսները, շատ իրաւունք պէտք չէ ունենան բարոյականութեան մասին առատ-առատ ճառելու...

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽ

Դու մեր գալիքն ես: Դու աստուածածին
Ցոյս ես ապագայ մեր խրախճանքի:
Մենք ո՞նց թոյլ տուինք, որ մեր բնածին
Ցիշողութիւնը մեզ դաւաճանի:

Մեր մոռացումն ու յուշն ես ցաւագին:
Մեր մահն ես ու մեր յոյսն ես յարութեան:
Մենք ո՞նց թոյլ տուինք–ո՞նց մեր զաւակին
Փորձեցինք նենգ ու դաժան փորձութեամբ:

Մեր անյիշաչար սրտերում քարէ
Ո՞նց ամփոփուեցին կարօտ ու տենչանք:
Մենք ո՞նց ապրեցինք–ո՞նց այսքան տարի
Գոյատեւեցինք մեզանից անջատ:

ԱՐՑԱԽԵԱՆ ԶՄԵՌ

Զմրան մշուշ է, եւ ժամն է ուշ,
Եւ ձեան մէջ չկայ դեռ ոչ մի հետք,
Եւ սելն է ցոռում սելւորի հետ–
Շուտով այս պահն էլ կը դառնայ յուշ:

Բայց սայլապանի ձայնը–ցիպոտ
Մշուշի միջով բացում է դուռ:
Տղերքն այնտեղ են՝ սահմանի մօտ,
Եւ շուրջ բոլորը ձմեռ է լուռ:

Եւ ձիւնն է իջնում ուղիղ–անքեք՝
Մեր երազանքը զմռսելու:
Տղերքն իրաւունք չունեն արդէն
Ցուսահատուելու ու մրսելու:

ԱՐՄԷՆ ՇԷԿՈՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Է. ԻՍԱԲԵԿԵԱՆ.

«ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀՈՒԺԿՈՒ ՁԱՅՆ ՈՒՆԻ»

— Վերջին մի քանի տարում շա՛տ բան փոխուեց. շա՛տ...

— Այն էլ ինչպէ՞ս: «*Մանուկներն այս*» կտաւն էլ փոփոխութեան արտայայտութիւններից մէկն է, թէեւ օրգանական շարունակութիւնն է իմ «*Անհանգիստ ձիերը*»ը շարքի, որի համար ես պետական մրցանակ եմ ստացել: Ի վերջոյ, դա ազատասիրութեան, հայրենասիրութեան գովքն է...

— Որով ներծծուած է Ձեր ամբողջ ստեղծագործութիւնը՝ «Պատանի Դաւիթը» դասական երկից, «Պատասխան Յագկերտին» հզօր կտաւից, «Վարդանանք»ի, «Մխիթար Սպարապետ»ի ձեւաւորումներից մինչեւ ահա Ձեր միւս այս նոր գործը, որի վրայ աշխատում էք, աշխատում ու չէք աւարտում:

— «*Արտաւազդ եւ Կլեոպատրա*»: Երեւի թեման է անվերջանալի: Գիտէ՞ք, հենց այդպէս չի լինի՝ նկարակալ ու կտաւ դրնես, վրձին ու ներկեր, թէ նկարում եմ: Ժամանակը պիտի հրամայի սկիզբը, իսկ նախապատրաստութիւնը օր ու ժամի մէջ չի տեղաւորուի: Նախապատրաստութիւնը միշտ քո մէջ է: Եւ երբ գայ հրամայականը, պիտի սկսես:

— Ո՞րն է հրամայականը, Ղարաբաղեան շարժո՞ւմը:

— Այո: Այն էլ որտեղ, ուղիղ դրանս տակ: Իմ արուեստանոցի պատուհանները Թատերական կամ, ինչպէս ժողովուրդն է անուանել, Ազատութեան հրապարակին են նայում: Եւ անցեալ տարուայ Փետրուարից կա՛մ հրապարակում էի, որտեղ մի քանի անգամ խօսքով դիմեցի բազմութեանը, պաշտպանելով մեր արդար պահանջը, կա՛մ վրձինը ձեռքիս, հրապարակի հուժկու ձայնին ունկնդիր, նկարում էի հայոց Արտաւազդ արքայի ըմբոստութիւնը: Սա է իմ մշտական մտածմունքի առարկան՝ մեր ժողովուրդի անընկճելիութիւնը: Փոքրաթիւ ժողովուրդներն էլ մեծ-մեծ հոգսեր ունեն, ու մենք, փոքրաթիւ լինելով հանդերձ դիմացել ենք շատ, ինչքան էլ մեծ տէրութիւններ փորձել են ընկճել մեզ, ինչքան էլ թշնամաբար են նրանք տրամադրուած մեր նկատմամբ, ինչքան էլ դաժան թուրքը ապատակել է մեր երկիրը: Ես հայ հոգու անընկճելիութեան մասին շատ գործեր ունեմ, որոնցից, ի հարկէ, առանձնացնում եմ «*Պատասխան Յագկերտին*» մեծածաւալ կտաւը: Մենք ո՛չ միայն չխոնարհուեցինք հզօր թշնամու առջեւ, այլեւ պատասխանեցինք նրան բացէ ի բաց, ինքնավստահ ու վեհ, վճռական: Պատասխանեցինք, որ մենք չենք ենթարկուի, ինչքան էլ ուժեղ լինեն մեզանից, որ չենք հրաժարուի ո՛չ մեր բռնած ուղուց, ո՛չ հաւատից, ոչ էլ ազգային պատկանելիութիւնից:

digitised by A.R.A.R.@

— Նոյնն է նաեւ այս կտաւը:

— Նոյնն է: Գերուած է հայոց թագաւորը, նա շղթայակապ է, նրա վիճակը շատ ծանր է: Հռոմի ամբարտաւան զօրավար Անտոնիոսը, որը խաբելով է բերել նրան, առաջարկում է, որ խոնարհուի գոռոզ թագուհու՝ Կլեոպատրայի առջեւ: Բայց հպարտ Արտաւազդը չի խոնարհւում...

— Մեր փոքրակայոյզ այս օրերին ես շատ անգամ եմ եղել Խաբեկեանի արուեստանոցում ու անգամ կարող եմ ասել, թէ յոգնատանջ իւրաքանչիւր օրում ինչքան եւ ինչպէս է նա աշխատել այդ կտաւի վրայ: Կլեոպատրայի կերպարը կարծես ստացուել է արդէն, Անտոնիոսը կայ, բայց Արտաւազդը փոխում, հա փոխում էր: Ու բացատրում էր.

— Կերպարը միւս երկուսից աւելի ուժեղ պիտի լինի, անընկճելիութիւնը պիտի շօշափելի լինի, հաստատակամութիւնը՝ նոյնպէս: Ես այն կարծիքին եմ, որ եթէ, Աստուած մի արասցէ, նորից եամաշխարհային ջրհեղեղ լինի, երեւի մէկ կամ մի քանի ազգի հետ մենք ջրհեղեղից փրկուողների մէջ լինենք: Սա ամպագոռգոռ յայտարարութիւն չհամարէք, ուրիշ ազգ կա՞յ, որ այսքան վիշտ ու ցաւ է տանում: Բայց միեւնոյն է, ո՛չ այսօր, ոչ էլ յետոյ ոչ ոք չի կարող մեզ ընկնել:

— Անցած աշնանը «Արտաւազդ եւ Կլեոպատրա» կտաւը դիտեցին մոսկուացիները, եւ ինչպէս դա, այնպէս էլ ԽՍՀՄ նկարիչների միութեան կենտրոնական տանը ցուցադրուած խաբեկեանական միւս գործերը արժանացան երկրի մայրաքաղաքի մարդկանց ու հիւրերի ուշադրութեանն ու գնահատանքին: Սակայն «վերադառնալուց» յետոյ նկարը նորից նկարակալ բարձրացաւ:

Բայց կարծես աւարտուն էր, վարպետ:

Բացատրում է.

— Պայքար ունենք դեռ, պայքարը դեռ չի աւարտուել: Կենտրոնական մամուլի էջերում, «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրի հաղորդումներում շատ ադաւաղումներ եղան, շատ անգամ մեր ազգիս շարժումը ծուռ հայելու մէջ դիտեցին: Ես համոզուած եմ ասում, որ իմ պատմական բոլոր գործերը, ո՛ր ժամանակահատուածին էլ վերաբերին, խիստ այժմէական են, որովհետեւ արտայայտում են բոլոր ժամանակների մեր յոյսերն ու համբերանքը: Վարդանանց ժամանակներում ուզեցել են մեզ կրօնափոխ անել, իսկ հիմա ինչ-որ մարդիկ մեզ ասում են՝ ո՛չ ձեր վանքերն են ձերը, ո՛չ ձեր խաչքարերը, ոչ էլ ձեր գորգերը, դրանց վրայ գրած հայերէնը հայերէն չէ, դրանք ադուանական յուշարձաններ են, քանի որ իրենց ադուանների յետնորդներն են համարում: Ես համոզուած եմ Լեռնային Ղարաբաղի հարցն ինչքան էլ ծանր լինի, դժուար, ինչքան էլ չար ուժերը, վերակառուցման թշնամիները ուժեր հաւաքեն, միեւնոյն է, կը յաղթի արդարութիւնը:

— Պատմէք, խնդրեմ, արցախցիների հետ ձեր հանդիպումների մասին:

— Դրանք բոլորն էլ անմոռաց են: Բայց առանձնացնում եմ անցեալ տարուայ Մայիսին կատարած այցելութիւնս: Ես այնտեղ էի շատ լարուած օրերի, «Արեւիկ» եռատարակչութեան գլխաւոր խմբագիր Գէորգ Դեւրիկեանի նախաձեռնած մի խմբի հետ: Գնացել էինք հանդիպումների, գնացել էինք մեր աչքով տեսնելու, թէ ինչ է կատարւում այնտեղ: Ես այսօր ուզում եմ յիշատակել իմ լաւ բարեկամներին՝ Սոկրատ Խանեան, Գուրգէն Գարրիէլեան, Հրաչեայ Բեգլարեան, Մաքսիմ Յովհաննիսեան, Եուրի Ապրեսեան, միւսները: Տխուր ուղեւորութիւն էր, ի հարկէ, տխուր այն առումով, որ երկիր չէր երեւում, մշուշոտ էր: Բայց մարդիկ հոգեպէս փշրուած չէին, այլ ոգեւորուած, յոյսով էին, յուսաշատ: Արցախցիների մէջ ոգու ամրութիւնը իրենց լեռների ու բերդերի պէս պինդ է նստած (*«Երեկոյեան Երեւան» 15 Սեպտեմբեր 1989 — յապաւումներով*):

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՍ ԾՆՈՒԵԼ ԵՄ ՆՐԱ ԼՈՅՍԻՑ

Մշուշում է նորից հոգիս,
Մղձավանջից տիեզերական,
Բայց ակօսը այս նոր երգիս
Էլի սէրն է արցախական...

Կրկին պիտի նրան երգեմ,
Եւ կսկիծը՝ երկար տարած,
Ինչպէ՞ս-ինչպէ՞ս ես ինձ հերքեմ,
Նրանով եմ ես միշտ հարբած:

Նրանով եմ ես քուն մտնում
Կամ արթնանում սին երազից,
Նրա սէրն է ինձ դարմանում,
Ես ծնուել եմ նրա լոյսից...

ԻԼԻԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԱՐՑԱԽ

***

Այսպէս բաժան, այսպէս դաժան
Բզկտուել է հողն հայրենի,
Ցիրուցան ես եղել, ի՛մ ազգ,
Եւ կոգեակ ես դարձել, Արցախ:

Ու թշնամեաց ծուղակի մէջ
Տառապելով կերտել ես միշտ,
Պահել ոգին քո հայկական
Մասիսի պէս միշտ անվեհեր:

Ամէն վայրկեան ահն ու մահը
Քո գլխին են եղել կախուած,
Բայց ապրել ես ու դու դեռ կ'ապրես
Քո մայր երկրի ձեռքը բռնած:

Երազանքը ամէն հայի
Կը կատարուի մեր իսկ ձեռքով,
Եւ թիզ հողից հայոց ազգի
Հայ հանճարի ուժը կը յառնի:

ԿԱՐԻՆԷ ՔԵՐՈԲԵԱՆ

ԹԹԵՆԻՆ

Ամարասի վանքի մօտ
Դարեր շարունակ
Թթենիներն են աճում
Սեւ ու սպիտակ:

Թութը այնպէս է սազում
Արցախի կրծքին,
Ինչպէս սիրուն սեւ խալը՝
Հայուհու դէմքին:

Դաժան կարկուտն է ծեծել
Ճիւղերը նրա,
Ահեղ կայծակն է կանգնել
Կատարի վրայ:

Փոքրիկներ են տեսել
Ու հողմեր բազում,
Բայց կանգնել է թթենին
Ինչպէս դիւցազուն:

Ինչ կայ այսքան հայկական,
Այսքան բարի, հեզ,
Հայի նման դիմացկուն,
Հայի բախտի պէս:

ՍՈՒՐԷՆ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ԱՐՑԱԽ

Դժուար է քեզ առնել երգի մէջ,
Քեզ, որից կայծեր են ճառագում:
Արծուարոյն, մարմնացող երազ՝
Քո երից դարձած շառագոյն:

Դժուար է քեզ առնել երգի մէջ,
Դժուար է քեզանից օտարուել...
Քեզ արժան մեծ երգը յաւերժող
Էն գլխից նակատիդ է գրուել:

ԵՐՈՒԱՆԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԹԹԵՆԻ

Մամռակալած այս թթենին,
Շատ թթենին,
Հազար կնճիռ ունի դէմքին
Ու շուրթերին՝ այրող խոցեր, վառուող խոցեր։
Բուք ու սելաւ,
Շանթ ու կայծակ
Թրատել են նրա ջլուտ բազուկները
(Այն էլ քանի՜-քանի՜ անգամ)
Ու բաղեղի մաղձոտ խանդից
Խարոյկ վառել
Նրան սատար կենտ ոտքի տակ...
Մէջքը նրա
Հազար տեղից ոլորուել է,
Խորովուել է կրկ նամբած պապիս նման,
Ու սպեղանին նրա վերքի
Միշտ էլ
Բոսոր արեգակի շողն է եղել,
Լուսնից իջած գարնան ցօղը։
Ու թէ ցաւից
Գէթ մի անգամ արտասուել է
Բեղ-մօրուսի թաւ ծալքերում,
Գարձեալ վշտին դիմացել է,
Իմաստնացել...
Ա՜խ, որքան են իրար նման
Գիւղիս տարեց այս թթենին
Ու իմ պապը։

ԴԱՒԻԹ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱՐՑԱԽ

Ի՞նչ եմ կորցրել այս լեռներում,
Այս ձորերում ու հանդերում,
Կածաններում այս քարքարոտ,
Ծաղկունքներում քո շաղշաղոտ.
Չեմ հասկանում...
Ի՞նչն է այդպէս քաշում դէպ քեզ,
Եղեմական դու իմ պարտէզ,
Որ ես այսպէս մտացրիւ
Թափառում եմ գիշեր ու տիւ.
Չեմ հասկանում...
Թէ՞ լեռներդ են ինձ կախարդել՝
Ուրիշ լեռներ շատ եմ տեսել,
Թէ՞ ջրերդ են գերում հոգիս՝
Պաղ աղբիւրներ շատ կան կողքիս
Օ՜, յիշեցի...
Մանկութիւնս է կանչում անխօս,
Գետերդ ջինջ, արագահոս,
Համեղ մոշը, մորին վայրի,
Ցվլոցը մոշահաւի,
Թռվիչ կանչը թռչունների,
Քչքչոցը աղբիւրների,
Որոնք մանկուց իմ մէջ մտան,
Իրենց հաստատ տեղը գտան
Ու այնտեղից դուրս չեն գալիս՝
Մինչեւ այցի քեզ չեմ գալիս։

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@



Ցարմար պահ սպասով, ակադեմիկոսին հարցրի այն մարդկանց անուններիր, որոնք իր հետ մէկուկէս պիտի ստորագրեն նամակը: Նա ասաց, որ հիմա ամէնից առաջ իրեն հետաքրքրում են ինտելիգենտները, դրանք պէտք է լինեն գրականութեան եւ արուեստի, գիտութեան ու տեխնիկայի կոլեգիներ, փիլիսոփաներ ու հոգեբաններ, պատմաբաններ ու տնտեսագէտներ: Այնպիսի՛ անուններ, ինչպէս ակադեմիկոս Թաուչենաթը եւ Օկուջաւան, գրողներ՝ Գելմանը եւ Կավերինը, փիլիսոփաներ՝ Լեւադան ու Կունիցինը, կինոյի ու թատրոնի գործիչները՝ Ռեւզանովն ու Եֆրեմովը: Եւ ուրիշներ: Ու դա պիտի լինի «Մոսկովեան ամբիոն» ակումբի անունից: Ու դա պիտի լինի խաղաղութեան հրաւէր մեր տանը:

Մեր վերջին հանդիպումից մէկուկէս ամիս անց ստացայ նամակը, որի տակ կար մոսկովեան մտաւորականութեան երեսուն ներկայացուցչի ստորագրութիւն: Նրանց թւում՝ ակադեմիկոս Սախարովի:

Նամակը հասել է հասցէատիրոջը: Այն ստացել են նաեւ որոշ խմբագրութիւններ: Նրա որոշ հատուածները հազորդուել են արեւմտեան լրատուութեան միջոցներով: Որոշ հրատարակչութիւններ պատրաստւում են տպագրել նամակի ամբողջական տեքստը: Ես էլ կ'ուզենայի այդ նամակը որոշ կրճատումներով այստեղ մէջբերել որպէս իմ հերոսի դիմանկարի մի իւրօրինակ շտրիխ («Գրական թերթ» 1988, թիւ 49):

ՁՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

ՆԱՄԱԿԸ

Կամակատար լրագրողներն ու մեկնաբանները, կատարուած դէպքերի կեղծիք թաքցնելով, կրքեր բորբոքելու ձեռնարկներ, իրականում՝ մի ողջ ժողովրդի դէմ, որը պաշտպանում է իր օրինական իրաւունքները: Առաւելապէս թաքցուեց ու քողարկուեց այն ամէնը, ինչ վերաբերում է Սումգայիթի ողբերգութեանը:

Ո՛չ Ադրբեջանում, ո՛չ Մոսկուայում անհրաժեշտ լրջութեամբ չդնահատուեց, թէ դէպքերի զարգացման մէջ ինչպիսի խոր սահմանագիծ քաշեց հայերի կոտորածը Սումգայիթում, յուսահատութեան ընդվզման ինչ ալիք բարձրացրեց հայ ժողովրդի գիտակցութեան մէջ, վերաթարմացնելով 1915–1920 թթ. ցեղասպանութեան մասին նրա պատմական յիշողութիւնը:

ԱՆՏՐԷՅ ՍԱԽԱՐՈՎ

«Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանում եւ Հայաստանում տիրող իրավիճակը ծայրայեղ տագնապ է յարուցում: Մինչ այժմ ձեռնարկուած միջոցները ո՛չ միայն չեն լուծել վէճը, այլեւ իրավիճակը չեն հեռացրել այն սահմանագծից, որից այն կողմ դէպքերի ընթացքը կարող է ստանալ աղէտալի բնոյթ:

«Ղարաբաղեան ճգնաժամը բացառիկ լուրջ վտանգ է վերակառուցման, բազմաթիւ անմեղ մարդկանց հոգեկան առողջութեան ու հեռց կեանքի համար: Բոլոր աղէտներից ամենավատթարը բռնութիւնն է: Այն, որպէս շղթայական ռեակցիա, կարող է ներառել ՍՍՀՄ այլ ժողովուրդների, սանձազերծելով ստոր կրքեր ու յարութիւն տալով գժտութեան հին օջախներին:

digitised by A.R.A.R.@

«Բնակչութեան շրջանում էկալացիան կանխելու համար անհրաժեշտ են համարձակ ու անյետաձգելի վճիռներ, պետական մարմինների ու հասարակական ուժերի համատեղ գործողութիւններ: Առաջինը, որ այսօր անչափ անհրաժեշտ է, ճշմարտութիւնն է, լիակատար ու ճշմարիտ լրատուութիւնը այն ամէնի վերաբերեալ, ինչ կատարուել ու կատարւում է ընդհարումների գօտում: Խորացնելով դէպքերի մէջ ներգրաւուած մարդկանց փոխադարձ անվստահութիւնն ու թշնամանքը, մասսայական լրատուութեան միջոցները աղաւաղել եւ շարունակում են աղաւաղել իրական վիճակը: Կամակատար լրագրողներն ու մեկնաբանները, կատարուած դէպքերի էութիւնը թաքցնելով, կրքեր բորբոքեցին «ծայրայեղականների», իրականում՝ մի ողջ ժողովրդի դէմ, որը պաշտպանում է իր օրինական իրաւունքները: Առաւելապէս թաքցրեց ու քողարկուեց այն ամէնը, ինչ վերաբերում է Սումգայիթի ողբերգութեանը:

«Ո՛չ Ադրբեջանում, ո՛չ Մոսկուայում անհրաժեշտ լրջութեամբ չգնահատուեց, թէ դէպքերի զարգացման մէջ ինչպիսի խոր սահմանագիծ քաշեց հայերի կոտորածը Սումգայիթում, յուսահատութեան ընդվզման ինչ ալիք բարձրացրեց հայ ժողովրդի գիտակցութեան մէջ, վերաթարմացնելով 1915–1920 թթ. ցեղասպանութեան մասին նրա պատմական յիշողութիւնը: Ինչպէս այն ժամանակ, այսօր էլ մարդկանց սպանեցին ընտանիքներով, ամբոխի աչքի առաջ բռնաբարեցին կանանց, սպանուածների դիակները եւ տանջահար արուածներին այրեցին խարոյկների վրայ: Ո՛չ Բաքուում, ո՛չ Մոսկուայում չտրուեց տեղի ունեցածի փոխզիջողական գնահատականը, ինչը որ կարող էր կանխել կրքերի բորբոքումը, ոճրագործներին որոշակիօրէն զատել ադրբեջանական ժողովրդից, մեղմելով հայերի ցաւն ու արդարացի զայրոյթը: Ցամաք մեզ, մենք պէտք է խոստովանենք, որ մեզաւոր ենք նաեւ մենք, մոսկուացի մտաւորականներս, ինչպէս եւ բոլոր այն անտարբեր մարդիկ, ովքեր տասնամեակներով վարժեցրել են լռելու:

«Անցեալի ոճրագործութիւնները դատապարտելով՝ չի կարելի սումգայիթեան ջարդերի մասին սահմանափակուել կիսանշմարտութեամբ: Անհրաժեշտ է տալ կատարուած գազանութիւնների քաղաքական, իրաւաբանական եւ բարոյական յստակ ու որոշակի գնահատականը: Բռնաբարիչներին ու մարդասպաններին պէտք է կոչել իրենց իսկական անուններով եւ ոչ թէ «խուլիգանական տարրեր» անուանել: Հասարակութեանը անյայտ մնաց, թէ արդեօք դատի՞ են տրուել քաղաքային ու հանրապետական այն հիմնարկների ղեկավարները, որոնց համարեա՛ եռօրեայ յանցաւոր թողտուութիւնը ազատութիւն տուեց ջարդարարների ձեռքերին: Ոչ թէ ոճրագործութիւններ լռութեան մատնելով, այլ միմիայն դրանցից սահմանազատուելով, այն էլ՝ առաջին հերթին հենց Ադրբեջանում, կարելի է ուղի գտնել դէպի ազգամիջեան հաշտութիւնը:

«Իշխանութեան բարձրագոյն մարմինը Ցուլիսին յայտարարեց, թէ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը կարելի է լուծել միայն փոխզիջման ճանապարհով: Անցած ամիսները, սակայն, ապացուցեցին, որ այն ժամանակ ընդունուած որոշումները փոխզիջում չեն, որի կարեւոր պայմանը կողմերի հաւասարութիւնն է: Փոխզիջումը դեռ նոր պիտի մշակուի, եւ այն գտնելը թերեւս հեշտ չի լինի: Բայց քաղաքական այն վճիռը, որ կարող է իրավիճակը փակուղուց հանել, հարկաւոր է կայացնել անյապաղ:

«Այդ վճիռն արդէն բազմիցս առաջարկուել է. անհրաժեշտ է ԼՂԻՄը հանել Ադրբեջանական ՍՍՀ այսօրուայ ղեկավարութեան վարչական ենթակայութիւնից, ամրապնդելով իրերի փաստական վիճակը, որի առկայու-

digitised by A.R.A.R.@

թեամբ Լեռնային Ղարաբաղը տեղական կուսակցական եւ սովետական մարմինների հետ մէկտեղ ղեկավարում է ՍՄԿԿ Կենտկոմի եւ ՍՍՀՄ Գերագոյն սովետի լիազօր ներկայացուցիչների կողմից։ Նման վճիռը հանգստութիւն կը մտցնէր Հայաստանում եւ չէր վնասի ադրբեջանական ժողովրդի իրական շահերին։

«Բաժանելով հայերի զգացմունքները, մենք հաւատում ենք Ադրբեջանի ժողովրդի ողջախոհութեանն ու արժանապատուութեանը, ա՛յն բանին, որ նրա բարոյական դիրքորոշման ապացոյցները ոչ թէ բռնաբարիչների ու մարդասպանների հետ համերաշխութեան գործողութիւններն են, որոնց մասնակցել են կուրացած մարդիկ, այլ՝ ադրբեջանական այն ընտանիքների քաջարի վարքագիծը, որոնք իրենց հայ համաքաղաքացիներին պատսպարել են ջարդարարներից։ Մենք համոզուած ենք, որ ազգամիջեան հարցերի ճիշտ եւ անխախտ լուծմանը կարելի է հասնել միայն բազմակողմ երկխօսութեան ճանապարհով։ Իշխանութեան եւ հասարակութեան նման երկխօսութիւնը ո՛չ միայն ամենադիմոկրատական, այլեւ ամենագործնական ելքն է փակուղուց դուրս գալու։ Անհրաժեշտ է գիտակցել, որ ինքնագործ այն շարժումները, որոնք արտայայտում են ժողովրդի լայն խաւերի իղձերը եւ պահպանում են քաղաքակիրթ վարքագիծ, վերակառուցմանը օգնող հիմնափոխ ուժ են։ Ժողովրդական դիւանագիտութեան մեթոդը գնալով աւելի լայն իրաւունքներ է նուաճում միջազգային ասպարէզում։ Հարկ չէ՞, արդեօք, այն կիրառել նաեւ ներքին վէճերն ու ընդհարումները կարգաւորելու նպատակով։

«Մենք բոլորին կոչում ենք խաղաղութեան մեր ընդհանուր տանը»։

ԱՆՏՐԷՅ ՍԱԽԱՐՈՎ

digitised by A.R.A.R.@

ԿԱՆԽԵԼ ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ղարաբաղը թերեւս առաջինը հաւատաց «Ամբողջ իշխանութիւնը Խորհուրդներին» կարգախօսին եւ մարզային խորհրդի որոշմամբ հաւանութիւն տուեց ազգաբնակչութեան 75 %ի ընտրած ուղուն, այսինքն՝ Հայաստանի հետ վերամիաւորմանը: Հայաստանն իր հերթին զօրավիգ կանգնեց այդ շարժմանը, որը բխում էր *պերեստրոյկա*ի ոգուց եւ հակադրւում միայն ստալինեան բնոյթի իշխանութեանը, որն ինքն է վճռում, թէ որ ժողովուրդն ո՛ւմ պէտք է ենթարկուի, որտե՛ղ պէտք է ապրի: Այդ բանը չհասկանալով, իշխանութիւնները պաշտպանեցին ստալինեան սահմանադրութիւնն աւելի, քան որեւէ այլ բան, նոյնիսկ՝ իրենց սեփական գոյութիւնը: Մեր երկրում, ոչ մի ուրիշ տեղ, ոչ մի ուրիշ ժամանակ պերեստրոյկան եւ իր լիդերը այնպիսի պաշտպաններ չունեցան, ինչպէս Հայաստանում ու Ղարաբաղում...:

Իմ անձուն գիշերների ընթացքում ես մերթ գրամեքենայի, մերթ էլ ռուսական հանրապետութեան կոմունիստական կուսակցութեան կոնֆերանսը ցուցադրող հեռուստէկրանի առջեւ եմ: Յօթանասուն տարի է նոյն բառերն են հնչում: Դարձեալ եւ միշտ գաղափարախօսութիւնը ամէն ինչից վեր դասելու, ռազմահայրենասիրական հասարակարգ ստեղծելու ջանքեր, Արեւմուտքի վտանգ, դարձեալ եւ միշտ աշխատաւորների շահերի պաշտպանութեան քողի տակ հնչող դատարկախօսութիւն: Դարձեալ եւ միշտ... որի միակ նպատակը իշխանութիւնն ամուր ու մինչեւ վերջ պահելն է, յոյսը՝ գուցէ երկիրը մի անգամ էլ հաւատայ: Բայց հնարաւո՞ր է, որ մի երկրում երբէք հարիւր միլիոն յիմար լինի:

Երբ ես աշխատում կամ դիտում եմ այնքան, որ աչքերս սկսում են շաղուել, անձուն պառկում եմ ու խելագար միտք եմ յղանում գրել Գորբաչովին, առօրեայ, սովորական բառերով բացատրել, որ լաւ կը լինի նա պատմութեան մէջ չմտնի որպէս հայկական երկրորդ ցեղասպանութեան պատասխանատու: Ապա աւելացնել, որ մենք ընդորս մահկանացուներ ենք, իսկ յարիքը մնում է դարէ դար: Նա պէտք է հասկանայ, որ ինքն անձամբ կարող է փրկել Հայաստանն ու հայ ժողովրդին:

Մեր դարում չափազանց շատ արիւն չթափուե՞ց այս մոլորակի վրայ: Երկու համաշխարհային եւ քաղաքացիական պատերազմներ, հայերի 1915 թուականի ցեղասպանութիւնը, հրեաների, Կամբոջայի ցեղասպանութիւնները, մեր Գուլագը: Բաւական չէ՞: Իսկ այն բոլոր ջահել աղրբեջանցինե՞րը, եայի՞ը, ռուսնե՞րը, որոնք սեփական արեամբ ներկեցին Կովկասի վարդագոյն քարերը: Այս ամէնը քի՞չ է աշխարհի ամենամեծ՝ երկրագնդի մէկ վեցերորդ մասն զբաղեցնող երկրի պրեզիտենտի համար: Բայց նա կը լսի՞ որ...: Ո՛չ, այնպէս՝ ինչպէս գերագոյն խորհրդի նիստում չլսեց Անտրէյ Սախարովին, որն ասում էր. «*Ադրբեջանի համար Ղարաբաղը պատուախնդրութեան հարց է, հայերի համար՝ կեանքի ու մահուան*» («*Ֆիկարօ*», 20 Յուլիս 1990 – «*Գրական թերթ*», 1990, թիւ 37):

ԵԼԵՆԱ ԲՈՆՆԵՐ-ՍԱԽԱՐՈՎ

Ֆրանսերէնէ թարգմանեց
Գր. Ջանիկեան

digitised by A.R.A.R.@

Մոսկվիան կազմակերպութեան առջեւ անհրաժեշտ է բարձրացնել նաեւ որեւէ հրատարակչութիւնում վերանայիլն Ղարաբաղ խորագրով այժմանախ հրատարակելու հարցը:

Իսկ այն, որ զարաբաղցիք կը հասնեն իրենց նպատակին, գրանում ոչ մի կասկած չկայ: Ես գրանում համոզուեցի հենց մեր գրական երեկոյի բնթացքում: Այս ժողովուրդը վճռական է, լաւ է ըգդում ժամանակը:

Այն, որ զարաբաղեան եւ սումգայիթեան իրադարձութիւնները բաւարար չափով չեն լուսաբանուել, դա փաստ է:

Դեհ, տայ Աստուած, որպէսզի իրականան այն ցանկութիւնները, պահանջները, որոնք արտայայտել է Ղարաբաղի հայութիւնը:

ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ

«ՏԵՍԱՅ ԳԱՐՆԱՆ ԾԱՂԿՈՒՆՔԸ, ԵՐԲ ԱՄԷՆ ԻՆՉ ՈՒԺ Է ՀԱՒԱՔՈՒՄ...»

Բ. Կ.— Ձեր ամէն մի այցելութիւնը Հայաստան կապուած է եղել ստեղծագործական որեւէ մտայղացման, կոնկրետ նպատակի հետ, մենք միշտ անհամբեր սպասում էինք արդիւնքին: Այս անգամ ի՞նչն է ձեզ Հայաստան բերել:

Մ. Դ.— Իւրայատուկ վերաբերմունքը, սէրը Հայաստանի նկատմամբ, իմ հայ գրչեղբայրների հետ երկար տարիների յարաբերութիւնների, Հայաստան աշխարհի հետ հանդիպումների արդիւնք է, եւ ինձ այստեղ բերողը Հայաստանի, հայ ժողովրդի ու նրա մեծ մշակոյթի նկատմամբ իմ անձնական վերաբերմունքն է: Այն յանկարծ ինձ համար մի մեծ անհրաժեշտութիւն դարձաւ: Ի հարկէ, դա միանգամից չի սկսուել: Երեւի ամէն ինչ սկսուեց հրաշալի պոետ, նրբագոյն լիրիկ, մեծ քաղաքացի, աշխարհը փիլիսոփայօրէն իմաստաւորող եւ գեղագէտի,

digitised by A.R.A.R.@

արուեստագէտի տեղն իմացող Աւետիք Իսահակեանի ծննդեան 100ամեակի յոբելեանական օրերին: Հեռատեսությամբ ես ասընչուեցի Նարեկացու Մատեանի հետ, եւ իմ առջեւ յանկարծ մեծագոյն արուեստագէտը, որը կարող է ասանց թարգմանչի, անմիջականօրէն խօսել Աստծոյ հետ, լուծել մարդկային ոգու դրամատիկ, ողբերգական խնդիրները, ցոյց տալ նրա կատարելութիւնը: Ցեղոյ իմ առաջ աւելի ու աւելի բացուեց Հայաստանի պատմութիւնը, նրա ժողովրդի քաջութիւնը, նրա մեծ մշակոյթը: Եւ Հայաստանը ինձ համար հետաքրքրութիւնից անհրաժեշտութեան վերածուեց: Եւ երբ ինձ հասան այն իրադարձութիւնների մասին տեղեկութիւնները, որոնք ծաւալուեցին սկզբում Լեռնային Ղարաբաղում, ես արդէն որոշեցի իմ անելիքը: Չնայած ես իմ հայ բարեկամների հետ կանխագուշակ էի այդ ամէնը, ի հարկէ, ոչ այդ ծաւալով:

Բ. Կ.— Դուք, ի հարկէ, գիտէք Ղարաբաղը, նրա պրոբլեմները:

Մ. Դ.— Այո՛, գիտեմ: Ես պարզապէս ինքս ինձ պատկերացնում էի, որ դա կարող էր պատահել: Բայց երբ սկսուեցին սումգայիթեան իրադարձութիւնները, ես ինձ չէի կարող հանգիստ զգալ: Ես յիշեցի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան ֆառասուն օրը» հրաշալի գիրքը, որի ռուսական հրատարակութեան համար նախաբան եմ գրել: Ու ես պատկերացրի սումգայիթեան դէպքերն իրենց ողջ նողկալիութեամբ, իրենց ողջ վայրենութեամբ: Ես չէի կարող այստեղ չգալ:

Բ. Կ.— Այժմ Սումգայիթից հայեր Ղարաբաղ են վերադառնում: Հենց Ստեփանակերտի օդակայանում ականատես եղաք 12 ընտանիքների գալուն: Նախորդ օրը 15 ընտանիք եկաւ: Զէ՞ որ նրանք դարաբաղցիներ են, որոնք 50ական թուականներին, ադրբեջանցիների բարեկամական կոչին արձագանգելով, գնացել էին հիմնելու Սումգայիթ քաղաքը:

Մ. Դ.— Այո, ուրեմն վերադառնում են...: Ես զրուցեցի Ստեփանակերտ վերադարձած սումգայիթցիների հետ: Նրանք չատ ոնյարմար բնակարաններում են տեղաւորուած՝ 5 ընտանիք երեք սենեականոց բնակարանում: Ամպրոպից առաջ, այո, թռչունը իր երամի մօտ է թռչում...

Բ. Կ.— Եւ յետոյ՝ դուք Ղարաբաղ այցելեցիք, եղաք Շուշիում, Գանձասարի միջնադարեան վանքում, որը համայն հայութեան համար իւրօրինակ սրբավայր է մնացել: Հետաքրքիր են Ձեր տպաւորութիւնները:

Մ. Դ.— Մինչ այդ Ղարաբաղում չեմ եղել: Հայաստանում ես համագնդեցի ընկերներ ունեմ, որոնցից է նաեւ ձեր չատ լաւ գրող, վիպասան Սերօ Խանզադեանը: Նա կռուել է լենինգրադեան ճակատում, գեներալ Կրապիլովի մօտ: Նա զանգեզուրցի է, ու ես երկու անգամ նրա հետ միասին եմ այցելել, եղել եմ Գորիսում: Իսկ Ղարաբաղ ոչ մի կերպ մենք չկարողացանք այցելել: Եւ ահա այս անգամ ինձ մօտ անյաղթահարելի ցանկութիւն առաջացաւ անպայման լինել Ղարաբաղում եւ ամէն ինչ տեսնել սեփական աչքերով: Եւ ես Սաղաթել Յարութիւնեանի ու ձեզ հետ մեկնեցի: Երջանիկ բերումով մենք Ղարաբաղ մեկնեցինք մեքենայով: Զանգեզուրում ձմրան ամիսներին եմ եղել, իսկ ահա այս անգամ տեսայ գարնան ծաղկունքը, երբ ամէն ինչ ուժ է հաւաքում, ամէն մի առուակը կեանքի մասին իր սեփական խօսքն է ասում: Մենք Գորիսով Ստեփանակերտ հասանք: Չնայած այն այնքան էլ հասարակ այցելութիւն չէր, իմ հոգու մէջ խոր տպաւորութիւն թողեց: Վայելեցի կեանքի զարթօնքի գեղեցիկ զգացումը, ու կարծես եղայ կեանքի ակունքներում, տեսայ կանաչ անտառները, կանաչ լեռները, սարերից գահավիժող առուակները, պղտոր, վարար գետերը, որոնք լեցուն են մեր մոլորակի կենսական ուժով:

Բ. Կ.— Մեր մեծ վիպասան Բաֆֆին ղարաբաղեան գետերը, նրանց ահարկու հոսքը, պայքարը քարերի հետ համեմատել է ղարաբաղցու ոգու հետ ու նմանութիւն տեսել:

digitised by A.R.A.R.@

Մ. Դ.— Այո՛, կարծես թէ դրանք փոխադարձ կապ ունեն: Եւ դա ճիշտ է: Մարդու կերպարը, տեսքը կապուած է այն տեղի հետ, որտեղ ծնուել է, որտեղ դարեր շարունակ ապրել են նրա նախնիները, որտեղ նա առաջին անգամ տեսել է կապոյտ երկինքը, կանաչապատ լեռները, որտեղ նա արել է իր առաջին քայլերը, որովհետեւ առանց բնութեան, հողի հետ կապի անհնար է Մարդու գիտակցուած գոյութիւնը:

Բ. Կ.— Եւ, վերջապէս, մարդը, որը տեսել է Գանձասարի հուչակաւոր բարձրաբանդակները:

Մ. Դ.— Դէ, այստեղ, երեւի, աւելի բարդ է, իսկական հայի վերաբերմունքը այս սրբավայրի նկատմամբ: Այն հայ ժողովրդի հոգեկան գանձարանն է, եւ կարեւոր է, որ վերականգնուի: Միջնադարեան այս կոթողը, որպէս դարերի վկայ, իւրօրինակ նշան, այս աշխարհի հոգեկան ճանաչման կուտակում, անպայման կը կատարի իր դերը:

Բ. Կ.— Դուք հանդիպեցիք նաեւ Ղարաբաղի գրողների հետ:

Մ. Դ.— Անշուշտ, նրանք աւելի մեծ ուշադրութեան, յարգանքի են արժանի: Նրանք զրկուած են եղել հրատարակուելու իրաւունքից: Առանց սեփական գրական մամուլի, ամսագրի, տարօրինակ, կարծես նախապատմական իրավիճակում են յայտնուել: Այո՛, ինքնավար մարդ է, բայց հրատարակուելու հնարաւորութիւն չունի: Էլ ի՞նչ գրող, եթէ հրատարակուելու, ընթերցողի հետ խօսելու հնարաւորութիւնը չունի: Եւ տեղին է նրանց բողոքը, պահանջը: Ինձ թւում է, երկրի գրողների միութեան վարչութիւնը կ՚օգնի ԼՂԻՄի գրողների կազմակերպութեանը: Հարկաւոր է, որ Հայաստանի գրողների միութիւնը, որը բուսականին հզօր կազմակերպութիւն է, աւելի անմիջական, գործնական օգնութիւն ցոյց տայ Ղարաբաղի գրողներին: Երեւի հարկաւոր է հայ գրողների մի խումբ ուղարկել Ղարաբաղ, որը ո՛չ միայն գրական հանդիպումներ կ՚անցկացնի, այլեւ գործնական օգնութիւն ցոյց կը տայ: Մոսկովեան կապմակերպութեան առջեւ անհրաժեշտ է բարձրացնել նաեւ որեւէ հրատարակչութիւնում «Լեռնային Ղարաբաղ» խորագրով ալմանախ հրատարակելու հարցը:

Այո՛, մենք տեսանք ինչպիսի գեղեցիկ դաշտերով է ծածկուած Ղարաբաղը, ինչ լաւ, առատ բերք են ստանում այդ դաշտերում, այգիներում, ինչպէս են առաջին ծիլերը ուժ հաւաքում: Ահա այս կեանքը գարնան հետ լցնում է դարաբաղցու հոգին հաստատակամութեամբ, այն համոզմամբ, որ կեանքը չի ընդհատուել: Իսկ այն, որ դարաբաղցիք կը հասնեն իրենց նպատակին, դրանում ոչ մի կասկած չկայ: Ես դրանում համոզուեցի հենց մեր գրական երեկոյի ընթացքում: Այս ժողովուրդը վճռական է, լաւ է զգում ժամանակը: Պէտք է հասկանալ նաեւ այս իրադարձութիւնների անհրաժեշտութիւնը:

Բ. Կ.— Նրանք շատ ուշադիր լսեցին ձեր ելոյթը, հարցերի պատասխանները:

Մ. Դ.— Այո՛, այն, ի վերջոյ, կեանքի մասին մի իսկական զրոյցի փոխարկուեց: Դա էլ կեանքի թելադրանքն էր, անհրաժեշտութիւն էր:

Բ. Կ.— Բայց եւ կա՛ն այն ուժերը, որոնք լուրջ խոչընդոտ են վերակառուցման գաղափարների առջեւ:

Մ. Դ.— Դուք ունէք մէկ այլ հզօր ուժ եւս: Ինձ թւում է, որ Հոկտեմբերեան յեղափոխութեան գլխաւոր նուաճումներից մէկն էլ ժողովուրդների լենինեան եղբայրութիւնն է, որի էութիւնը երկար ժամանակ մենք մոռացութեան ենք մատնել: Եւ ահա տեղի ունեցան շատ ու շատ թիւրիմացութիւններ, որոնք այժմ, չնայած որոշ յապաղումով, քիչ էլ անհամարձակ մաքրում է մեր վերակառուցումը: Բայց ուղղութիւնը ճիշտ է վերցուած եւ այն, ի վերջոյ, կը բերի տեղի ունեցած երեւոյթի յստակ ու առողջ իմաստաւորմանը: Եւ վերակառուցումը անում է այն միակ եզրայանգումները, որոնք էլ կը բերեն միակ ճիշտ արդիւնքին:

digitised by A.R.A.R.@

Բ. Կ.— Եղաւ Շուշիում:

Մ. Դ.— Այո, մինչ այդ էլ շատ բան էի կարդացել...

Բ. Կ.— 1920 թուականի Մարտի 23ին Շուշիի, իսկ մինչ այդ՝ 1918 թուականին, Բաքուի հայերի կոտորածը, որոնք իրականացրել էին մուսաւաթականներն ու թուրքական ջոկատները, շատերը համեմատում են սումգայիթեան դէպքերի հետ:

Մ. Դ.— Ամէն մի երեւոյթ, ինչպէս եւ անարդարութիւնը միանգամից, ինքն իրեն չի վերանում: Զար ուժերը դեռեւս ապրում են անմիտ գլուխների մէջ: Բայց միեւնոյն է, ողջ այդ ստորութիւնը գատապարտուած է: Կեանքը պէտք է զարգանայ ոչ թէ կոպիտ ուժի թելադրանքով, այլ՝ բանական ճանապարհով: Եւ մարդը մեր մոլորակի վրայ պէտք է տիրութեան փոխարէն մտերմութիւն փնտռի: Սա է մեր միակ ուղին:

Բ. Կ.— Եւ, ի հարկէ, ձեր վերաբերմունքը դեմոկրատացման, հրապարակայնութեան նկատմամբ: Ոչ մի գրող չի կարող իրեն դուրս զգալ այս հզօր շարժումից:

Մ. Դ.— Մեր զրոյցի սկզբում խօսեցինք Գրիգոր Նարեկացու մասին: Ժամանակակից մարդուն անհրաժեշտ է հասկանալ, որ աշխարհի ճանաչումը եւ, ընդհանրապէս, գիտակցութիւնը պատասխանատուութեան բարձրագոյն ձեւն է, գիտեմ, այսինքն՝ պատասխանատու եմ: Այլ կերպ զլուխ չենք հանի եւ արդիւնքում կ'ոչնչացնենք երկրագունդը, եթէ արհամարհենք այն սկզբունքը, որն իր ժամանակ արտայայտել է մեծ Նարեկացին: Գիտեմ, թէ ինչ է ատոմը, ուրեմն՝ պատասխանատու եմ ատոմի համար, այլ կերպ մի նոր Չեռնոբիլ կը ստացուի: Ահա այսպիսին է իրավիճակը աշխարհում:

Բ. Կ.— Այժմ այսպիսի մի հարց· հրապարակայնութիւնն ու Ղարաբաղը եւ հրապարակայնութիւնն ու պոեզիան:

Մ. Դ.— Ստեփանակերտում տեղի ունեցած գրական երեկոյին եւս խօսուելէ այդ մասին: Այն, որ դարաբաղեան եւ սումգայիթեան իրադարձութիւնները բաւարար չափով չեն լուսաբանուել, դա փաստ է: Իսկ պոեզիան չի կարող գոյութիւն ունենալ առանց ճշմարտութեան: Նա ինքը ճշմարտութիւնն է: Միշտ, բոլոր ժամանակներում: Ահա ժամանակակից Ֆրանսիայի հրաշալի պոետներից մէկը՝ Պոլ Էլիւարը, որը դիմադրութեան շարժման մասնակիցներից է, ասել է այն մասին, որ քանի դեռ երկրի վրայ կայ սպանութիւնը, պոետը պէտք է առաջինը զոհուի: Իսկ այս պատասխանը կարելի է արտապատկերել եւ մեր ժամանակակից կեանքի, արուեստի մէջ: Եւ ոչ միայն արուեստի մէջ: Կրկին մարդկային գիտակցութեան, արուեստի պատասխանատուութեան մասին: Ժամանակներն այժմ այնպիսին են, որ բոլոր պրոբլեմները, լինեն դրանք անձնական, պետական, թէ գլոբալ բնոյթի, շաղկապւում են մարդու բարոյականութեան առանցքի շուրջ: Իսկ մարդու այդ բարոյական միջուկը մարդու մէջ ծնուել է տարբեր պայմաններում, տարբեր համակարգերում:

Բ. Կ.— Ուրեմն, կարելի է ասել, որ այս ողջ շարժումը ինչ-որ տեղ պոեզիայի արդիւնք է:

Մ. Դ.— Այո՛, որովհետեւ պոեզիան ճշմարտութիւն է փնտռում, եւ առանց դրա անհնար է նրա գոյութիւնը: Ես նկատի ունեմ իսկական պոեզիան: Հենց թէկուզ մեր մեծ Պուշկինի օրինակը, որը հոգոցով գրել է. «Երբ ժողովուրդները, գժտութիւնները մոռացած, մեծ ընտանիքում միաւորուեն...»: Այս միտքը ապրում է, ինչպէս եւ մեծ Նարեկացին: Իսկ հայկական պոեզիան թէ՛ դարերի խորքում եւ թէ մեր ժամանակներում հզօր ակունքներ ունի: Նրա ուղին շատ հետաքրքիր է: Երբ 1915ին իրականացուեց անմարդկային եղեռնը, ռուս բանաստեղծ Վալերի Բրիւսովը եկաւ Հայաստան...

Բ. Կ.— Դուք Ստեփանակերտում գրական երեկոյին ասացիք. «Ձեր ռուս բանաստեղծ Վալերի Բրիւսովը...»:

Մ. Դ.— Այո՛, այո՛, ձեր ռուս պոետը,

digitised by A.R.A.R.@

ես չեմ սխալուել, նա եկաւ Հայաստան ու ամէն ինչ արեց, որպէսզի քաղաքների հայերին, Հայաստանը, աշխարհին ցոյց տայ տառապանքը: Նա լոյս ընծայեց «Հայկական պոեզիայի անթոլոգիա»ն: Նա դա արեց փայլուն կերպով: Դա շատերի համար եղաւ Հայաստանի յայտնութիւնը, որն էլ Եղեռնից յետոյ օգնութեան կոչ էր:

Բ. Կ.— Այո՛, ողբերգութիւնը համամարդկային էր...

Մ. Դ.— Դա հենց այն կարեկցանքն էր, որի մասին գեռեւս գրել էր Տեռուչեւը. «Մեզ չի տրուած կանխորոշել, թէ արձագանգ կը գտնեն մեր բառերը, եւ մեզ միայն կարեկցանքն է տրուած, ինչպէս մեզ տրուում է երանութիւնը»: Ահա եւ Բրիւսովի մեծ կարեկցանքը: Ճիշտ է, ես առաջ զարմացած էի, բայց այժմ ամենեւին էլ չեմ զարմանում ու բնական եմ համարում, տեսնելով Վալերի Բրիւսովի նկատմամբ հայ ժողովրդի երախտագիտութիւնը:

Բ. Կ.— Ուրեմն կրկին անդրադառնանք պոեզիային...

Մ. Դ.— Ես մի այսպիսի օրինակ բերեմ. մի ժամանակ Թուլասատանում նակսզ-հրովարտակներ էին հրատարակւում՝ ուղղուած չինարարներին. ահա դրանցից մէկը, որը, հաւանաբար, փայտէ եկեղեցու մասին է. «Կերտել բարձրատունը, ինչպէս չափն ու գեղեցկութիւնն են թելադրում»: Եւ այս դարձուածքի հիմքում մեր առջեւ յառնում է այգ կառոյցը իր ողջ հմայքով: Հենց դա էլ իսկական պոեզիան է, որտեղ ամէն բառ իր տեղում է: Գանձասարն էլ, հաւանաբար, Ջալալեան իշխանաց իշխանի մի նակազի արդիւնք է, գեղեցկութեամբ ու չափով մի իսկական կատարելութիւն: Առաջներում ամէն ինչ վարպետների ուսերին է եղել, եւ թող տայ Աստուած, որ միշտ էլ այդպէս լինի: Որովհետեւ միայն վարպետն է ըզդում կեանքի ներդաշնակութիւնը, որովհետեւ նրա մօտ ամէն ինչ ստացւում է: Ի միջի այլոց, վարպետը չրջակայ միջավայրին երբեք ցաւ չի պատճառի:

Բ. Կ.— Այս միջավայրում եւ մարդն է իր հոգսերով, պրոբլեմներով, դարաբաղցին, նրա հայրենիքը...

Մ. Դ.— Դեհ, տայ Աստուած, որպէսզի իրականանան այն ցանկութիւնները, պահանջները, որոնք արտայայտել է Ղարաբաղի հայութիւնը: Ես ծանօթացայ կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Անդրէի Պօղոսեանի հետ, մի հետաքրքիր մարդու, որը բոլոր նրբերանգներով զգում է ժամանակի ընթացքը: Նա ամէն ինչ յստակօրէն ու գիտակցուած է ընկալում: Նա իսկական կոմունիստ է: Ինձ թւում է, որ այս ցանկութիւնները կարող են իրականանալ, եւ առանց դրան անհնար կը լինի շարժումը, կեանքը:

Բ. Կ.— Ի հարկէ, այս ցանկութիւնները, պահանջները կապուած են վերակառուցման ընթացքի, նրա ճակատագրի հետ:

Մ. Դ.— Անշուշտ, ժամանակներն այնպիսին են, որ ամէն ինչ է վերակառուցւում: Եւ ամէնը առաջին հերթին առողջ մտքի, կեանքի զարգացման տեսանկիւնից է վերանայւում:

Բ. Կ.— Ի վերջոյ, ձեր ծրագրերի մասին:

Մ. Դ.— Երեւի կը շարունակեմ իմ ընդունակութիւնների, կարողութիւնների չափով ռուս եւ ռուսալեզու ընթերցողներին ծանօթացնել հայկական պոեզիայի նմոյշների հետ: Իսկ այն, որ ես Ղարաբաղում եղայ, ինձ համար գեղեցիկ եւ հրաշալի օրեր էին: Հաւանաբար, դրանք էլ տեղ գտնեն իմ ստեղծագործութիւններում: Չեմ սիրում նախապէս ծրագրեր մշակել, խոստումներ տալ: Ինքս էլ երբեմն կողքից եմ իմ ընթացքին հետեւում («Գրական թերթ», 1988, թիւ 19):

Հարցազրոյցը վարեց՝
ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Խոսքն մեզի համար

Քանի մը տարի առաջ, Հայաստանի մէջ տեղի ունեցած գրականութեան ու արուեստի օրերու հանդիսաւոր բացման առեն, Ռուսաստանի գրողներու միութեան վարչութեան քարտուղար Մ. Ալեքսէեւ կը յայտարարէր.

«Հայաստանը փոքր երկիր է, բայց բաւական է ներառնել օրինական ու բնական «սովետական» բառը, որ փոքր երկրից այն խոյսն վերածուի աշխարհի մեծագոյն տէրութեան, միաձուլուելով մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ» («Գրական թերթ», 1987, թիւ 22)։

Այսպէս կարծողներուն մէջ Մ. Ալեքսէեւը առաջիններէն չէր, բոլորովին վերջիններէն ալ չէր, բայց վերջին ժամանակները ցոյց տուին, որ «սովետականը» երբեք ալ «աշխարհի մեծագոյն տէրութեան» տէրը եղած ըլլալու ապահով երաշխիք մը չէր «փոքր երկիր» Հայաստանի համար, չեղաւ որեւէ հանգրուանի, չուզեց ըլլալ։

— «Ո՞ւր են մեզ հետ ողջագուրուող ամպագոռգոռ բաժակաճառերով եղբայրութեան երդում տուող մտաւորականները,— *կը հարցնէր «Երեկոյեան Երեւան» թերթի քաղաքական մեկնաբան Ց. Յակոբեան՝ ուրուանկարելով տասնեակ ու տասնեակ այն գէմքերը, որոնք «աղմկաբար ինտերնացիոնալիզմ» յեղյեղեցին չարունակ եւ «նացիոնալ-շովինիստների բանդայի» բացայայտ կոզոզուտներուն զէմ երբեք չփորձեցին բերան բանալ։*

Այդ «ամպագոռգոռներուն» ամէնէն գոռգոռները աղերի գրողներն էին, որոնց հանդիպեցանք այլուր եւ ստուգեցինք անոնց բաժակաճառային եղբայրութեան խորքը։ Բացառուած չէ ասոնց շարքին գասել «օրինական ու բնական» սովետական բառով պճնազարդուած ռուս ամպագոռգոռներէն շատեր, որոնցմէ պէտք է անջատել սակայն Անտրէյ Սախարովը, Միխայիլ Դուդինը, Դուդինցեւը, Աւերինը, որոնք մեր ցաւին առիթով ճշմարտութեան հետ եղան, եւ երբեք չդաւաճանեցին իրենց էութեան, կոչումին, ճշմարտութեան ձայնին։ Այսպէս եղած է միշտ, ռուս գրողներու մէջ միշտ գտնուած են մեզի հանդէպ ձեռնպահներ, բայց նաեւ անոնց շարքին անպակաս եղած են ճշմարիտները, արիները, խղճմտանքի տէր տղանդները եւ հիշդ ատոր համար մեր ժողովուրդը բոլոր պարագաներուն չդադրեցաւ յոյսի ծուէն մը կապել Ռուսաստանին, ռուս արուեստագէտներուն, ժողովուրդին։

Կրկնելով ըսենք, որ մեր ժողովուրդին համար Ռուսաստանը ցարերու Ռուսաստանը չէ անպայման, եւ ցարերու կամակատար հայատեաց Լորանովներու ու Գոլիցիններու Ռուսաստանը չէ, ոչ ալ Լենինի Ռուսաստանն է Ռուսաստանը, ոչ ալ «վերագոյն մաֆիոզներ Սուսլովի ու Բրեժնեւի» Ռուսաստանն է, ոչ ալ բոլորովին Գորբաչովի Ռուսաստանը։

Թոլստոյի եւ Տոստոեւսկիի Ռուսաստանն է անիկա նոյն ատեն,— իմաստութեան Ռուսաստանը։

Վալերի Բրիւսովի ու Մաքսիմ Գորկիի Ռուսաստանը,— խղճմտութեան Ռուսաստանը։

Սոլժենիցինի ու Վալերի Գրոսմանի Ռուսաստանը,— արութեան Ռուսաստանը։

Անտրէյ Սախարովի ու Միխայիլ Դուդինի Ռուսաստանը,— արդարադատութեան Ռուսաստանը։

Ասոնց եւ մարդկային նոյն ու նոյնօրինակ բարեմասնութիւններով օժտեալ բազմաթիւ ուրիշ մեծութիւններու Ռուսաստանն է Ռուսաստանը մեզի համար։ Եւ այս Ռուսաստանը երբեք համեմատելի չէ մեր կարգ մը հարեւան երկիրներուն՝ Թուրքիոյ ու Ադրբէջանի հետ, եւ այս Ռուսաստանի գաւակներուն մեռ կարելի չէ դնել ոչ իսկ մէկ թուրք գրող, ոչ իսկ մէկ ազերի մտաւորական։

Եւ այդ Ռուսաստանն է եւ այդ Ռուսաստանի ա՛յդ գաւակներն են, որ ամուր կը պահեն իրենց հանդէպ ունեցած բարեկամութեան մեր զգացումները ու չեն ձգեր մեզի միրճուել արմատական յուսաբեկութիւններու մէջ...

digitised by A.R.A.R.@

ՇՈՒՇԻ

Հայկական մշակութային, հասարակական կեանքը Շուշիում շարունակւում էր նաեւ 20րդ դարի առաջին տասնամեակներում, չնայած մթնոլորտը յագեցած էր տագնապներով: Առաջին աղէտը վրայ հասաւ 1905ին: Դեռ չապաքինուած 1905ի վէրքերից՝ Շուշուայ հայութիւնը ենթարկուեց աւելի սոսկալի աղէտի. 1920 թ. Մարտի վերջին տասնօրեակում տեղի ունեցաւ անխնայ կոտորած, զոհուեց աւելի քան 30 հազար հայ, այրուեց, աւերուեց ու թալանուեց 7000 հայկական տուն: Եղեռնագործութեան կազմակերպիչներն էին Թուրքիայից ժամանած Նուրի եւ Խալիլ փաշաներն ու տեղի մուսաւաթների պարագլուխ Սուլթանովը:

Գեղեցկաշէն երկյարկ, եռայարկ անբրով կառուցապատուած հայոց թաղամասերը ոչնչացան, բայց այրուած տների բարձր պատերը տանջահար զոհերի կմախքների նման տասնամեակներ շարունակ կանգուն էին իբրեւ անմոռանալի վկաներ ի տես աշխարհի...

Ադրբէջանում սովետական կարգերի հաստատումից յետոյ ԼՂԻՄի (1923 թ. Յուլիս) կենտրոնը պէտք է լինէր Շուշին, սակայն չդարձաւ: Վերջին 65 տարիներին հայկական կեանքը Շուշիում մընում էր մի կերպ, սակայն վերջին դէպքերը ցոյց են տալիս, որ այն մարում է ի սպառ...

Փետրուարեան իրադարձութիւնների նախօրեակին Շուշին ունէր աւելի քան 2000 հայ բնակիչ: Դրանց մի մասը բնակւում էր հայկական թաղամասերից մէկի անվնաս մնացած հատուածում, մի մասը՝ ադրբէջանցիների հետ խառը՝ նորակառոյց չէնքերում: Քաղաքի Ե. Աբովեանի անուան ինտերնացիոնալ դպրոցն ունէր հայկական բաժին: Սակայն այսօր Շուշին թափուր է հայերից:

Շուշին տուել է գիտութեան, մշակոյթի, արուեստի, ռազմական բնագաւառի, ազատագրական շարժումների, յեղափոխական գործիչների փայլուն համաստեղութիւններ, որոնք պատիւ կարող են բերել ո՛չ միայն մի քաղաքի, այլեւ՝ մի ամբողջ ժողովրդի. վիպասան Մուրացան, պատմաբան Լէօ, հասարակական գործիչներ Ս. Սպանդարեան, Տ. Նազարեան, Ս. Հախումեան, զօրավար Հ. Լազարեան, Սովետական Միութեան կրկնակի հերոս Ն. Ստեփանեան, երաժիշտներ-կոմպոզիտորներ Կարախան, Բ. Մելիքեան, Ստ. Դեմուրեան, Դ. Ղազարեան, նկարիչ Ստ. Աղաջանեան, քանդակագործ Հ. Գիւրջեան, ազատագրական շարժման գործիչ Ա. Մանուկեան, յեղափոխականներ Բ., Փ. եւ Լ. Կնունեանցներ, Ա. Ցովհաննիսեան, Ա. Բեկզադեան, Ս. Կասեան, Ս. Տէր-Գաբրիէլեան եւ շատ ուրիշներ:

Լուսանկարներում պատկերուած աւերակները այլեւս չկան: 60ական թուականներին դրանք հողին հաւասարեցրին եւ փոխարէնը կառուցեցին բազմայարկ չէնքեր: Այսպիսով վերացան Շուշուայ հայոց ծաղկուն ազգային կեանքի վերջին տխուր յիշատակները («Հայրենիքի ձայն», 1988, թիւ 48):

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԻՄ ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀ

⁂

Իմ Արցախ աշխարհ,
Դո ամէն անգամ անուանդ տալիս
Զգում եմ լեզուիս եամը արեւի,
Խառնւում է շնչիս շունչը արեւի:
Իմ դէմ յառնում են
Քաջ ու կորովի իմ նախնիները:

⁂

Դու եկար ու մեր փողոցով անցար,
Եւ մեր փողոցում լոյսը ծիծաղեց,
Վարդերի գանգուր թեւերի վրայ
Արտոյտը երգի ուլունքներ շարեց:

Առուակը խօսեց մի անուշ լեզուով,
Ցակինք ջրերը պայծառ ցոլացին,
Բարդենիները փարուեցին իրար,
Բալենիները շռայլ ծաղկեցին:

Շենշենկան եաւը թարմութիւն բուրեց,
Համակեց վարար խինդը բոլորին,
Ինձ հետ էլ, անգին, թէ ինչ պատահեց
Այդ մասին հարցրու ձեր արտի լորին:

⁂

Խելօք եւ ուշիմ իմ նախնիները:
Ցիրաւի նրանք
Աչքի լոյսից էլ քեզ շատ են սիրել
Պաշտել են հողդ ու ջուրդ պաշտել:
Ադաւնաբոյն ես դու հիմա դարձել,
Ասահնատուն ես դու հիմա դարձել,
Բայց ես աւելի պայծառ եմ տեսնում,
Աւելի պերճ ու շքեղ եմ տեսնում
Քո գալիք օրը,
Իմ Արցա՜խ աշխարհ...

⁂

Դու վարդի դալար մի թուփ ես, Արցախ,
Սրտիս պարտէզում,
Արեւի շողին թառած արտոյտը
Քո երգն է եիւսում:

Թարքաառի զմրուխտ ջրերի խաղն ես
Իմ սրտի հովտում,
Մոռվի, Քիրսի եովերի պաղն ես
Մեր հանդ ու արտում:

Ցիրաւի այնքան շատ ես դու իմ մէջ,
Այնքան լի ու լի,
Որ դրանից էլ մնում ես աչվերս
Թանկ ու սիրելի:

ԱՐՇԱՒԻՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԱՐՑԱԽԱԿԱՆՉ

Գիշեր է նորից, քունս չի տանում.
Հեռում բոցեր են երեւում աչքիս,
Ա՜խ, չէ, բոցեր չեն, ապ ու պապերիս
Ցասումն է ժայթքում գերեզմաններից:

Նրանց ցասումը... որտե՞ղ ես, Դաւիթ-
Թողած տուն, օջախ, ծերուկ հէր ու մէր,
Թիւր հոգս ու ցաւեր, դաւեր, Սումգայիթ,
Զուեցիր, եւ ո՞ւր... տօ լաճ տնաւեր:

Մի՞թէ մոռացար գու այն... ազչկան...
(Յետոյ ի՞նչ՝ հիմա ուրիշի կին է),
Արդ վտանգուած է պատիւը նրա...
Դէ՛ հլ ու հասիր, եթէ սիրել ես:

Կոզբադինները պիղծ ու նորօրեայ
Արցախում քո հօր ոսկին են չափում,
Իսկ դու որտե՞ղ ես թրեւում հիմա,
Կամ ո՞ր պառաւի շաղգամն ես լափում...

Տուն վերադարձէք, ո՜վ մոլորեալներ՝
Դաւիթներ, Հայկեր, Տիգրաններ, թիւրեր,
Կաթիլներից է գոյանում ջրվէժ,
Եկէք ծովանանք, որ ապրենք յաւերժ:

Գիշեր է, գիշեր, քունս չի տանում,
Հեռում բոցեր են երեւում աչքիս,
Ա՜խ, չէ՛. բոցեր չեն, ապ ու պապերիս
Ցասումն է ժայթքում գերեզմաններից:

ՆՈՐԱՅՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԴԻՄՈՒՄ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ

ՍՍՀՄ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ

Ցարգելի գրչակից ընկերներ,

Երկու հանրապետութիւնների, երկու ժողովուրդների համար այս ծանր օրերին մենք դիմում ենք ձեզ, հումանիստական մեծ եւ բազմադարեայ մշակոյթի ժառանգորդներիդ: Նորից անսահման սրուել է ազգամիջեան երկպառակութիւնը՝ սերմանելով վիշտ եւ տառապանք, բերելով անվստահութիւն եւ թշնամանք: Երկու ժողովուրդներն էլ ունեն զոհեր, կորուստներ: Տեղը եւ ժամանակը չէ համեմատելու դրանք: Խնդիրն այն է, որ կանխուեն նոր աղէտները, թոյլ չտրուի ազգայնամոլական–շովինիստական կրքերի տարածում, որը նպատակ ունի նորից իրար դէմ հանելու մարդկանց՝ անմիտ եւ կոյր գժտութեամբ: Խօսելով այսօրուայ տագնապալի վիճակի մասին, մենք չենք կարող խոր ցաւով չյիշել անցեալի իրողութիւնները, դրանց զոհերին, չենք կարող արժանին չհատուցել երկու ժողովուրդների այն ներկայացուցիչներին, ովքեր բարձր մնացին նեղ ազգայնական պատուախնդրութիւնից, ցածր զգացմունքներից՝ կանխելով աւելի ծանր հետեւանքները: Մտաւորականութեան, գրողների կոչումն է մարդկանց դաստիարակել բազմաչարչար անցեալի բարոյական ամենաբարձր սկզբունքներով: Մեզ բոլորիս միաւորում է պատմութեան խորքը գնացող ընդհանուր մի ուղի, որն արտայայտւում է միասնական պայքարով, միասնական կորուստներով, բայց եւ նուաճումներով, առաջին հերթին՝ բազմազգ երկրի ստեղծմամբ:

Եղբայր հայ գրողներ, դուք շարունակողներն էք բոլոր ժողովուրդների հպարտութիւնը համարուող Խորենացու, Նարեկացու, Սայաթ–Նովայի, Աբովեանի, Նալբանդեանի, Տէրեանի, Թումանեանի լուսաւորչական եւ հումանիստական մեծ գործի:

Այսօր, երկու ժողովուրդների համար այս ծանր ժամին, մենք կոչ ենք անում ձեզ՝ գրչով ու խօսքով անել հնարաւոր ամէն ինչ, որպէսզի չտարածուի ազգային եսասիրութեան կոյր վրէժխնդրութիւնը, որպէսզի ձեր խօսքը, որն այժմ այնքա՜ն անհրաժեշտ է, ինչպէս բոլոր ժամանակներում, բխի բազմազգ միասնութեան, եղբայրասիրութեան, հաշտութեան աւանդոյթներից, որպէսզի բանականութիւնը եւ ոչ թէ անսանձ կիրքը, իմաստնութիւնը, ոչ թէ անմտութիւնը, մեծահոգութիւնը, ոչ թէ անհաշտողութիւնը լինեն ձեր խօսքում եւ գործում այս դժուար պահին:

Անկեղծ յարգանքով՝

ՍՍՀՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՓԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԱՑԹՄԱՏՈՎ, ԲԱԿԼԱՆՈՎ, ԲՈՆԴԱՐԵՒ, ԲԻԿՈՎ, ԳՈՆՉԱՐ, ՉԱԼԻԳԻՆ, ԿԱՐՊՈՎ, ՄԱՐԿՈՎ:

(*Գրական Թերթ*, 1988, թիւ 49):

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ցարգելի ընկերներ,

Երկար սպասումից յետոյ վերջապէս գրողներն արձագանգեցին Սումգայիթի արիւնոտ իրադարձութեանն ու դրա շարունակութեանը: Ցաւօք, ձեր հեռագիրը վկայում է Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ ստեղծուած իրավիճակի ոչ խոր ըմբռնումը: Ձեր բազմամսեայ լռութիւնը նաեւ դժուարացրել է ՍՍՀՄ Գրողների միութեան հետ մեր գրական կազմակերպութեան փոխգործակցութիւնը:

Այս աղէտալի ժամին, երբ նորից թափւում է հայերի արիւնը, մենք, մի կողմ դնելով խնդրի բուն էութիւնը եւ հայ ժողովրդի պահանջի պատմական արդարացիութիւնը, ամբողջապէս մտահոգուած ենք ցեղասպանութեան նոր դրսեւորումներով: Այժմ ամենից կարեւորն է դադարեցնել արիւնահեղութիւնը, ջանալ փրկել ամէն մի հայի կեանք, որը, ցաւօք, չի երաշխաւորուած ադրբեջանական ՍՍՀի տարածքում:

Դիւանագիտութիւնը վաղեմի եւ հետաքրքիր զբաղմունք է: Երբեմն՝ նոյնիսկ մարդու հրաշալի վիճակ: Բայց նա սպանիչ ու կործանարար է ազգամիջեան յարաբերութիւններում: Ամէն ինչ առաւել սարսափելի, առաւել կործանարար է դառնում, երբ այդ դիւանագիտութեան մէջ խցկւում է սուտը: Եւ, որ ամենից սարսափելին է՝ բռնութիւնը: Այնժամ, հարեւանութեան դատապարտուածութեան վիճակում, ո՛չ միայն բարեկամութեան ու եղբայրութեան, այլեւ դիւանագիտական շփման կամ երկխօսութեան չնչին հնարաւորութիւնը կաթիլ-կաթիլ սպառւում է այնպիսի մի երկրում, որը հռչակել է դեմոկրատական եւ հրապարակային վերակառուցումը, սակայն անկարող է կանխել ապա եւ՝ քաղաքական գնահատական տալ ու անել իրաւաբանական եւ բարոյական համարժէք քայլեր, որոնք կատարուած յանցագործութիւնների պատմականօրէն եւ մարդկայնօրէն արդար հատուցումը ընէին ո՛չ միայն հայ ժողովրդի, այլեւ՝ ամբողջ մարդկութեան առաջ:

Հետեւանքը երկար սպասեցնել չտուեց. Սումգայիթն այսօր Ադրբեջանում բախում է բոլոր հայկական դոները: Սա կրկնութիւնն է 1915 թուի ցեղասպանութեան, որը խլեց աւելի քան

digitised by A.R.A.R.@

մէկուկէս միլիոն կեանք, ժողովրդի գրեթէ կէսը: Սումգայիթի ցեղասպանութիւնը, իր չափերով զիջելով դրան, ոչնչով չի զիջում սպանութեան ու բռնութեան միջոցներով, տեսակով: Բայց այդ չափի ցեղասպանութիւնն էլ (անգամ չխօսելով նրա ծայրաստիճան վանդալիզմի մասին) բաւական է, որպէսզի ցնցի մարդկութեանը, նրան սարսռեցնի 20րդ լուսաւոր դարի մայրամուտին: Այդ ցեղասպանութիւնը յղանալու (հանրապետութեան ղեկավարների կողմից) եւ իրականացնելու («շարքային» կատարողների ձեռքով) համար անհրաժեշտ էր առնուազն երեք բան՝ ժառանգորդութիւն, պատմական փորձ եւ այլանդակ «վարպետութիւն»: Բոլոր այդ անհնարին բաները Սումգայիթում հնարաւոր դարձան:

Անկախ սպանուածների, անարգուածների եւ փախստական դարձածների բանակից, անկախ բարբարոսութեան ու վանդալիզմի ձեւերից (հակամարդկային սպանութիւններ, խմբակային եւ ա՛նգամ մասսայական բռնաբարութիւններ, ողջ-ողջ այրուածներ, եւայլն, եւայլն) դա ցեղասպանութիւն է հենց միայն այն պատճառով, որ մարդկանց խոշտանգել ու սպանել են ըստ էթնիկական յատկանիշի: Հայերին սպանել են (եւ սպանում են) միայն նրա համար, որ նրանք հայ են:

Ասում են՝ վատ ժողովուրդներ չեն լինում: Ցիրաւի, բոլոր ժողովուրդներն էլ արժանի են յարգանքի, անկախ նրանից, թէ իրենց պատմական զարգացման ո՞ր աստիճանին են գտնւում: Բայց եւ չի կարելի չհամաձայնել, որ ամէն ժողովուրդ ունի իր տականքները: Եւ այս՝ 1988 թուականին արուած ապշեցուցիչ յայտնագործութիւնը եղաւ այն, որ կան իրենց տականքներից սահմանազատուելու անընդունակ ժողովուրդներ: Նման պարագայում հասկանալի չէ, թէ ինչա, Սումգայիթից յետոյ, ինչպէ՞ս պիտի յարաբերութիւններ վերստեղծուեն այդպիսի մի ժողովրդի հետ, եթէ այդ ժողովուրդը, նրա մտաւորականութիւնը, նրա գրողները, մենք սա ընդգծում ենք, երկու բառ չգտան ո՛չ միայն ցաւակցելու կամ կարեկցելու, այլեւ՝ նոյնիսկ զղջման համար:

Մենք բացայայտօրէն գերագնահատել ենք քաղաքակրթութեան յաջողութիւնները:

Հայ եւ ադրբեջանցի գրողներին սովետական գրողների, ՍՍՀՄ գրողների միութեան վարչութեան բիւրոյի յղած դիմումը, անկախ այն բանից, որ այն հետապնդում է ամենազգնիւ նպատակներ, ի սկզբանէ չի կշռադատուած եւ չունի հիմնափոխիչ բովանդակութիւն, ռեալիստական չէ եւ բարոյական առումով անփոյթ է, քանզի հաւասարութեան նշան է դնում, բարոյական հաւասարութիւն է փնտռում այնտեղ, ուր այն չկայ եւ չի էլ կարող լինել, եւ դա բոլորին քաջ յայտնի է (վկան՝ խաղաղ ցոյցերը

digitised by A.R.A.R.@

Հայաստանում, որպէս մարդկութեան կեցութեան միանգամայն յատուկ ձեւ, եւ Սումգայիթը՝ դարձեալ որպէս մարդկային կեցութեան միանգամայն յատուկ ձեւ):

«Ցեղասպանութիւն» սառը, գրեթէ սառեցնող բառի յետեւում մարդու եւ ժողովրդի ամենասարսափելի ողբերգութիւնն է, ո՛չ միայն ֆիզիկական, այլեւ՝ հոգեւոր կործանումը:

Մինչեւ չվերացուի այդ հաւասարութեան նշանի խոր անբարոյութիւնը, մինչեւ որ ներողութեան խօսքեր չասուեն եայ ժողովրդին, մինչեւ որ քաղաքական գնահատական չտրուի արիւնոտ Սումգայիթին եւ նրա ամբողջ շարունակութեանը, որը եղաւ կատարուածի փաստական անպատժելիութեան հետեւանքը, իսկ գրական կեանքում մինչեւ որ արժանի գնահատական չստանան երկրում եւ արտասահմանեան ուղեւորութիւնների ընթացքում Ադրբեջանի գրական կազմակերպութեան ղեկավար եւ նրա ճանաչուած լիդեր Անարի թոյլ տուած նիզվիտական, ամօթալի զըրպարտութիւնները, մի մարդ, որը բանը հասցնում է այնտեղ, թէ իբր Սումգայիթ չի եղել, եղել է միայն հայ ժողովրդի մազոխիզմ, ժողովուրդ, որը պատրաստ էր Սումգայիթ հնարելու (ֆրանսիական «*Ֆիգարո*» թերթ), հայ եւ ադրբեջանցի գրողների միջեւ եւ ընդհանրապէս որեւէ երկխօսութիւն լինել չի կարող:

Հարցի էութիւնն այն է, որ Հայաստանում երկրի վերակառուցումից եւ դեմոկրատական հրապարակայնութիւնից ծընունդ առած Ղարաբաղեան համաժողովրդական շարժմանը (փողոց էին դուրս եկել հարիւր հազարաւոր մարդիկ) Ադրբեջանը պատասխանեց Սումգայիթով:

Ցաւօք, դէպքերի լոգունգային մեկնաբանումը, կենտրոնական մամուլի ամօթալի պահուածքը խեղաթիւրել են իրավիճակի էութիւնը, այն է՝ հայ ժողովրդի մի մասն ուզում է վերամիաւորուել միւս մասի հետ, ընդ որում՝ այն մասի, որն ահա եօթանասուն տարի շարունակ ենթարկւում է դաժան խտրականութեան եւ դա էլ աւարտուեց Սումգայիթով:

Չենք կարող չասել, որ հարցի միակ արդարացի լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի անջատումը Ադրբեջանական ՍՍՀից: Այսինքն՝ նրա կարգավիճակի փոփոխումը, պրոբլեմի քաղաքական լուծումը:

Մենք միշտ հղել ու մնում ենք հաւատարիմ ո՛չ միայն ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամութեան գաղափարին, այլեւ՝ նրա էութեանը («*Գրական թերթ*», 1988, թիւ 49):

Ցարգանքներով՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

digitised by A.R.A.R.@

ՂԱՐԱԲԱՂՑԻ ՄԻ ԱՂՋԿԱՅ

Գնայինք Քիրս ու Մոով,
Թարքառից մինչ Զրաբերդ,
Մէկ համերաշխ, մէկ խռով՝
Զրուցէինք իրար հետ:
Դադիվանքի խաչքարին
Մի գոյգ մոմեր վառէինք,
Գանձասարի գագաթին
Հայեացքներս յառէինք:
Շուշուայ ճամբան մեր առաջ,
Ես՝ մի Սմբատ գօրավար,
Գրոհէի անձնահանց
Սիրուդ բերդերը անառ:
Որպէս աւար, որպէս կուռք,
Տանէի քեզ Նորաշէն,
Հաւաքուէին մայի ու քոյր,
Որ ընծաներ քեզ բաշխեն:
Լինէիր դու դշխուհիս,
Մէջքիդ՝ գօտի արծաթէ,
Քո սեւանուռ աչքերից
Բախտիս աստղիկը ժայթքէր...
Դառնայիր դու կին ու մայր,
Շուրջդ յսուէր մանկան ճիչ,
Տեսնէր աշխարհը համայն
Ղարաբաղը առանց վիշտ:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

***

Վերջին տասնամեակին անհամար եղան լիբանանեան եւ խորհրդային այն պատճառները, որոնք ընթերցողը զրկեցին հայրենի մշակութային կեանքին մասին ամբողջական տեղեկութիւններ ունենալու պատեհութենէն: Կապը պարագայական եղաւ միշտ ու տեսցուած տեղեկութիւնները՝ մասնակի, թերթի մը սիւնակէն կամ զբօսաշրջիկի մը բանիւ բերանոյ կատարած հաղորդագրութենէն քաղուած կցկտուր բաներ:

Այս պատճառներով անծանօթ մնաց մեզի ի միջի այլոց նաեւ բանաստեղծ Սասուն Գրիգորեանի խմբագրած «Մուսաները չլռեցին» խորագրուած ժողովածուն, որուն մասին մենք բախտ ունեցանք կարդալու երկու գրախօսականներ միայն, «Գրքեր-ի աշխարհ»ի եւ «Գրական թերթ»ի էջերուն, յաջորդաբար ստորագրուած Գէորգ Աբգարեանի եւ Կարէն Յովակիմեանի կողմէ: Այս երկու մտաւորականներուն գրութիւններէն եւ Սերօ Խանզադեանի յառաջաբանէն արտագրուած վկայութիւնները հարեւանցի գաղափար մը կու տան հատորին բովանդակութեան եւ նկարագիրին մասին:

Հայրենական պատերազմին զոհ 350 հազարէ աւելի մեր երիտասարդները ոգի ի բուին կուռեցան նաեւ ա՛յն յոյսով, որ յաղթանակէն ետք հայրենական հատուցումներ պիտի ըլլան իրենց, պիտի արքագրուին սահմանային անիրաւութիւնները: Բարձրաձայն բարբառուած թէ լռելեայն տրուած այդ խոստումները եւս դրժուեցան ու անարդարութիւնը դարձեալ սկսաւ թագաւորել կրեմլի «փարոսներէն»:

Նահատակ այդ բիւրերուն մէջ կային թարմ տաղանդներ, Հայաստանի բոլոր շրջաններէն, ընդ որս եւ զարաբաղցի օժտեալներ, որոնցմէ «Ուրրաք» շարաթաթերթին արամադրած Սասուն Գրիգորեանի փունջէն մեր ընթերցողներուն համար կ'անջատենք զարաբաղեան երկու նչխարհ...

digitised by A.R.A.R.@

***

Սիրելի լանասանդ Սասուն Գրիգորիանը, առասպելական խանգեր թափելով, ահա 30 տարի լենկած գիրք ու քարոզ, կանայան խրամատներ ու հանգած օջախներ, մեկ առ մեկ, հատիկ առ հատիկ հաւաքում է նահատակուած գրող, նկարիչ, դերասան, երաժիշտ, լրագրող ազգերի թողած մասունք-նշխարները: Եւ ոչ միայն զոհուածների...

Ի՞նչ նուիրական գործ: Ինչպիսի քանասիրութիւն եւ ինչպիսի պաշտամունք դէպի այն, ինչ ծագել է ոպանուած մուսաներից...

Քիչ է ասել, թէ սա գրական-գեղարուեստական եւ պատմաքանասիրական գործ է: Ոչ միայն: Այստեղ պատմական անցեալներ կան, մատենագիտութիւն. գիտնականի ազնիւ քրտինք...

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

***

Փաստը տխուր է, բայց չեչել չեմ կարող. քանասանդ Սասուն Գրիգորիանի մանկութիւնը բաշկացած է եղել իր հօր սեւ թղթից, ողբ ու մրմուրից.

Իմ մանկութիւնը պատերազմ էր, քացղ,
Հօրս սեւ թուղթն էր, ողբ էր ու մրմուր...

Այսպիսի ապրումների գնով է ձեռք բերուել «Մուսաների» չլռեցին»:

Հեղինակն անօրինակ սիրով է կերտել սոյն յուշարձանը, որի ճակատին գրոչմուած է. «Նուիրում եմ Հայրենական մեծ պատերազմում զոհուած հօրս՝ Սերոբ Գրիգորի Թորոսեանի պայծառ յիշատակին»: Կրկնում եմ, փաստը տխուր է, բայց ինձ այնպէս է թուում, որ եթէ Սասուն Գրիգորեանն անձամբ ապրած չլինէր իր հօր զսեւ թուղթը», նոյնչափ նուիրաբերութիւն չէր դրսեւորի գրքում ներկայացուած իւրաքանչիւր արուեստագէտի նկատմամբ: Ամէն զոհի հետ նա վերապրել է իր հարազատի կորուստը («Գրքերի աշխարհ», 1990, *թիւ* 5):

ԳԷՈՐԳ ԱԲԳԱՐԵԱՆ

***

Թերթելով այս յուշամատեանը՝ ցաւով ենք իմանում, որ պատերազմը հայ ժողովրդից խլել է առնուազն 27 տաղանդ՝ կոմպոզիտոր, երաժիշտ ու մենակատար, որ իրենց կտաւները յուերթ անազարտ են թողել 06 նկարիչ ու քանդակագործ, որ հայ բեմը եւ կինեմատոգրաֆիան զրկուել են 37 նշանաւոր, ու ծանր՝ 45 ժուռնալիստ կորուստ է կրել խորհրդահայ մամուլը («Գրական թերթ», 1990, *թիւ* 20):

ԿԱՐԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԵԹԷ ՊԻՏԻ ՄԵՌՆԵՍ

Արցախից բացի ոչ մի տեղ չապրես,
Ծնուել ու մեռնել միայն Արցախում,
Իմ խաչենագետ, միայն դու չամպես,
Սեւ–սեւ ամպեր են սնարիս ծխում:

Թշնամին մահ է սփռում շուրջբոլոր,
Հնձում անխնայ՝ ահել ու ջահել,
Թէկուզ խոցուեմ էլ, մեռնեմ վիրաւոր,
Մայր իմ, կ'ուզէի քո գրկում թաղուել:

Իմ արեամբ եթէ սնուի մի կակաչ,
Իմ սիրուց եթէ բացուի մի կոկոն,
Մահն անգամ էլ ինձ չի գայ ընդառաջ,
Եթէ մեռնում ես, մեռիր քո կամքով:

Արտաշէս ՍԱՐԻՆԵԱՆ
(1922–1942)

*

Հանդիպեցիր երէկ դու ինձ
Ղազանչեցոց վանքի բակում,
Կորցրի ինձ խենթութիւնից,
Ուշքի եկայ, չկայիր դու:

Կը գամ վանքին պահակ դառնամ,
Մոմ կը վառեմ գիշեր ու զօր,
Միայն քէ դու մէկ էլ դառնաս
Հպարտ անցնես վանքի դռնով:

Ես քո զուլն եմ, խոցա՛, Տէր իմ,
Հանդիպեցրու մէկ էլ նրան,
Երդում եմ ես Գանձասարով
Իմ սէրը սուրբ միշտ կը մնայ:

Թեւան ԱՀԱՐՈՆԵԱՆ (ԹԵՎԱՌՎԷ)
(1912–1945)

digitised by A.R.A.R.@

ՀԱՑԱԴՈՒԼԻ ԵՒ ՆՍՏԱՑՈՑՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Այսօր պիտի երգեմ ես ձեզ, հայոց քաջեր,
Որ չէք դարձել դեռ պատմութիւն,
Բայց դարձել էք լեգենդ։
Դուք մեր գոյամարտի արդար ընթացք,
Ազգի պարտադրուած, հարկադրուած ծնունդ,
Լուռ մարմնացում քաջաման ու բոզոքի·
Դուք մեր ժողովրդի արթուն պատիւ,
Անձայն զոհաբերում։
Ցոժարակամ ձեր ուսերին առաք՝
Լեռնաբարդուած, կնճռոտ, դժնի
Բախտը ձեր պապերի,
Որպէս ձեր ուժերին արժանի բեռ։
Մի–մի Սամուէլ, Վարդան,
Խենք ու խելառ, բայց իմաստուն Դաւիթ,
Ֆիդայիներ վերածնուած
Ու Ժառանգներ Անդրանիկի։
Դուք իմ ժողովրդի գաղտնագրուած բնազդ,
Առողջ տրոփիւնը նրա երակների
Եւ մակարդակը արեան·
Ձեզ պահապան լինի ոգին հայոց···

ՑԱՍՄԻԿ ԴԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բապին

ՆԱԵ՛Ի ՀԱՅԱԴՈՒԼՈՎ...

Խորհրդային Միութեան 70ամեայ տիրակալութեան տակ գործուած անիրաւութիւնները սրբագրելու եկած ժողովուրդներուն մէջ թերեւս կարելի չէ յիշել երկրորդ մը, որուն պայքարը բարոյական առումով հաւասարէր դարաւոր պայքարի վեհապանծ մակարդակին։

Ու այս շարժումին իրենց այլապէս բերած նպաստին մէջ շոնդալից խոյանքի մը չափ սիրալի եղաւ Վիկտոր Համբարձումեանի, Սօս Սարգսեանի, Զորի Բալայեանի եւ միւս մտաւորականներուն հացադուլային անբարբառ ցոյցը։

Երբ աստղերը հմտօրէն վերծանող ակադեմիկոսը, մեծախոով անձնաւորութիւնները վերաշնչաւորող արուեստագէտը, անուանի գրագէտներն ու գիտնականները դուրս կու գան աստղերու ձգողական մթնոլորտէն, կը մոռնան պահ մը բեմին յուզումը, կոնակ կը դարձնեն արարչական պատճառ այլասանոցներուն, եւ իրենց կոչումներէն աւելի ուժգին թափով մը կը զգան վոսնգուած հայրենիքին կոչը, ասիկա ինքնին գիւցազներգութիւն պիտի համարենք, թող որ անդին, որուն օր մը անպայման պիտի յաջորդէ գրաւորը, թեւաւորը, երգայինը, համանուագայինը...

Մեր ժողովուրդը, կրօնական թէ աշխարհական իր բոլոր խաւերով, նուիրապետական աթոռներու գահակալներէն, հանրային բարձրագոյն մակարդակներու վրայ գործող դէմքերէն մինչեւ խոնարհագոյն անձը, ներառեալ աշակերտական ու ուսանողական բոլոր ջոկատները յուզումով, հիացումով ու հպարտութեամբ հետեւեցան մեր գիտնականներուն եւ արուեստագէտներուն զոհաբերական այդ ելոյթին, որ օրինակելի պիտի մնայ անտարակոյս եւ այսօրուան ու վաղուան պայքարին պիտի բերէ ուժեղ մասնակցութիւն մը։

Վիկտոր Համբարձումեանի, Սօս Սարգսեանի եւ իրենց գաղափարակից մտաւորականներուն հացադուլային ցոյցը անտարբեր չձգեց նաեւ աշխարհի գիտնականներն ու արուեստագէտները, որոնց կոչերն ու արտասանած խօսքերը անարձագանգ չմնացին ճշմարտութեան հետամուտ հոգիներուն մէջ եւ օր մը անպայման տեղ պիտի գրաւեն ճշմարտութիւնների գիրքերուն մէջ։

Ինչ խօսք, որ կրեմլի իշխանաւորէն կը սպասուէր, որ ըմբռնէ գիտութեան, արուեստին, արդարին, ճշմարիտին միայն նուիրուած այս մտաւորականներուն զոհաբերութեան տուն տուող խորունկ պատճառը եւ պատճառին արդարութիւնը, եւ Ստալինի անմիջական ժառանգորդներուն անարդար ժառանգութիւնը պաշտպանելու փոխարէն՝ կիրարկէր ի՛ր ձեւակերպած վարդապետութիւնը, բայց, ցաւօք, ցայսօր ու Ղարաբաղի հարցին առընչութեամբ մա՛նաւանդ, ինք եւս գարձաւ ու մնաց Ստալինի ժառանգորդներէն մէկը, ուժի մէջ պահելով ողբացեալ Սախարովի ախտանանչումը, թէ «Հրապարակայնութիւնը ճնշուում է հենց այն պահին, երբ խիստ անհրաժեշտ էր»։

digitised by A.R.A.R.@

Վիկտոր Համբարձումեան, Զօրի Բալայեան, Սօս Սարգսեան,
Վաչագան Գրիգորեան եւ Սիմէոն Բարայեան

ՀԱՑԱԴՈՒԼ...

Գիշերները հիմա ուշ են լուսանում. ի՞նչ իմանաս, թէ մեր ժողովրդի դէմ որտեղ են նոր դաւեր նիւթւում: Եւ աւանդական հարի լոյսի հետ մի բօթ, մի գոյժ ցնցում են մեզ: Արդէն տարիներ:

Առաւօտ է: Նախաճաշի սեղանը պատրաստ է: Դպրոցական դստրիկս ոնց որ խռով լինի, մռայլ է: Ի՞նչ է պատահել: Աչքերն ասում են՝ գիտեմ, չեմ ասում: Ինձ խնայում է: Ցոգնել է իմ ղղաբդիո շարժումներից, արցունքներից: Այն է պատահել, որ երեկոյեան տնեցիները լսել են, ինձ չեն ասել: Ինձնից թաքցրել են: Իսկ հիմա ռատիոյից եմ իմանում: Զօրի Բալայեանը քաղաքական հացադուլ է յայտարարել: Մեր մի կտոր հացին լեղի է խառնւում: Մենք ճաշակենք, իսկ Զօրի՞ն: Զօրին զաւակներ ունի: Աղջիկս խռովում է, հրաժարւում հացից, քաղցած է գնում դպրոց:

(...) Հայ եւ հացադուլ: Մա՜նաւանդ՝ Զօրի Բալայեան եւ հացադուլ: Անխոնջ, ԱՆԴՈՒԼ այս մարտիկը, ամենահաս ու Արցախով ապրող հայորդին այս ի՞նչ քայլի է դիմել: Պայքարի նրա զինանոցը թւում էր անսպառ: Միրսն է գրել ազգային-ազատագրական պայքարի հիմքում: Ու հիմա անհեթեթ է հնչում. Զօրի Բալայեանը, որ բանտարկեալ չէ, այլ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի պատգամաւոր, որի անունը, որպէս գրող, հրապարակախօս, բժիշկ, ճանապարհորդ, սպորտի վարպետ, քաջածանօթ են հայնարձակ է հայրենի երկիրն իմ՝ յայտնի տողով բնորոշուող տարածքներում ապրող տասնեակ ազգեր ու ազգութիւններ եւ որոնց համար ինքը Նանէնական-մարդասիրական քիչ գործ չի արել,— քաղաքական հացադուլ է յայտարարել: Սահմանադրական բոլոր միջոցներով նա պայքարել է իր կրկնաբանտարկուած Արցախը մայր Հայաստանին միացնելու համար: Ժողովուրդը միաբանուած է: Արդարացի պահանջ Արցախում ապրող հայ ժողովրդի: Արդարացի պայքար Հայաստանում ապրող հայ

digitised by A.R.A.R.@

ժողովրդի: Բայց դարձեալ խարկանք, յուսախաբութիւն: Եւ այն էլ ամենաբարձրաստիճան, կենտրոնական մարմինների հակահայկական դիրքորոշումից: Օրհասական վիճակի մէջ է Զօրի Արցախը, բոլորիս Արցախը: Էլ ո՞ւմ հաւատալ, ինչի՞ հաւատալ: Ուրիշ ի՞նչ դէնք ու միջոց կայ պայքարելու:

(...) Զօրի Բալայեանի թիկունքին որպէս հացադուլաւոր կանգնել է Վիկտոր Համբարձումեանը՝ չորս քսան տարին երկու տարի առաջ բոլորած ալիքահամբաւ գիտնականը, Նիւտոնի թիկնոցը կրելու պատուին արժանացան տիտղոսակիր հայրը: Վիկտոր Համբարձումեան, հայ ժողովուրդ, աստղագիտի երկինք, Բիւրական, հազար բան, բայց հիմա ամէնի բերանը փակող մի բառ՝ հացադուլ: Նրա ձայնը, բողոքի ճիչը կը լսեն: Սախարովի ձայնը տարիներ շարունակ լռեցրին, պաշտամենական դերընթեր նախագահութիւնը թոյլ չտուեց, որ պատգամաւորներն ու երկիրը մինչեւ վերջ լսեն իրենց զաւակի՝ հենց դարի ու ալիքարհի զաւակի ձայնը, կերկեր ու ճչմարիտ ձայնը: Սեպտեմբերի 18ին՝ աստղախօսի ծննդեան օրը, նրա իմաստուն զրոյցներն էլ շարունակում վայելել անդադրում Զօրի Բալայեանը: Հաւատում եմ՝ հացադուլից նա ոչ միայն յաղթանակով դուրս կը գայ, այլեւ Համբարձումեանի մասին մինչեւ այժմ մոռացուած գրքի ձեռագիրը ձեռքին:

Սօս Սարգսեան եւ... հացադուլ... Եգեռնից փրկուած, տուն-տեղ կորցրած Զօրի Միրոյի կերպարը չէ, որ կերտում է իր ժողովրդի դարդ ու ցաւերով ապրող արուեստագէտը: Ինքն է հիմա իր կերպարի տէրը:

Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներ Վաչագան Գրիգորեանը, Սեմէոն Բալայեանը միացել են հացադուլաւորներին: Նրանք՝ Զօրի Բալայեանի հետ, Արցախի ճչմարտութիւնն էին փորձում հասցնել վերին ատեաններ, բայց... Լռութիւն, լռութիւն անսահման, անտարբերութիւն...

Այս քանի օր է, ինչ սիրտս կծկւում է, լեղի դառնում այն մի կոտոր հացը, որ կիսում եմ: Ո՞ւմ հաւատաս, ի՞նչ է ապասում մեզ...: Բոլոր միջոցներով, ճանապարհներով թոյն են կաթեցնում, ոտի, կեղծիքի լորձանք են չաղ տալիս, միայն թէ մոլորեցնեն մարդկանց, միջազգային կարծիք ստեղծեն՝ Մոսկուան ու իր Բաքուն ճիշտ են, հայերը անարդար են, հայերն ուզում են Ադրբեջանից տարածքներ գաւթել...

Հացադուլ...: Հայ ժողովուրդն իր գոյութեան հազարամեակների ընթացքում իր բազմաթիւ թշնամիների, իր հողը մտած ոտքների հետ խօսել ու պայքարել է ճշմարտութիւնը դարձրած զէնք: Հացադուլը զէ՞նք է: Մեր հերոսական պատմութեան երեւելիներն են գետի նման հոսում հիմա իմ աչքերի առջեւով, վրէժի ու ցասման այդ գետին իրենց արտի արիւնն են բերում գրչի, մտքի, խօսքի, հողի մարդիկ՝ որպէս արդարութեան, ճչմարտութեան մունետիկներ:

Հայ ժողովրդի ընտրեալ զաւակների հացադուլը մայր հայրենիքի կողմն է շրջել արտերկրի հայութեան հայեացքը: Միակամութեան, համախմբութեան ժամ է, զօրանչում են զանգերը միասնութեան: Օն, անդր առաջի ժամ է, եւ մեր երկնքում, մեր հողի վրայ, մեր սրբազան լեռան վրայ մենք մի պատգամ ենք կարդում. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւատական ուժի մէջ է...»:

Հացադուլային զանգի լուռ զօրանչները հասնում են ալիքարհի կարեկից ժողովուրդներին: Հաւատանք, որ ձայները օրապուռ եւ ցրելու, խլացնելու մէջ վարպետացած կենտրոնը այս անգամ փորձի լսել իր սրտի ձայնը: Ալիքարհը մեր դէմ չատ անգամ է ականջ, սիրտ ու աչք փակել, այլեւս իրաւունք չունի:

(...) Հաց եւ հացադուլ: Ես նորից Զօրի ձայնն եմ լսում. «Կարծում էի, հաւանաբար, որ եթէ ժողովուրդը տառապում է, եթէ նա սոված է, ապա կ'ընդունի նոյնիսկ թուքումբով ծածկուած հացը»:

Երէկ Վիկտոր Համբարձումեանի ծննդեան օրն էր:

Ալիքարդ գիտնականը իր զաւակների հետ հացադուլը շարունակում է: Սա կռիւ է: Պայքար է: Ո՞վ կը յաղթի:

Վաղն ի՞նչ օր է լինելու: Այդ հարցի պատասխանը չգիտեն նաեւ նրանք, ովքեր ահաւոր դժուար օրի առաջ են կանգնեցրել երկիրն ու նրա ժողովրդին («Հայրենիքի ձայն», 1990, թիւ 39, յապաւումներով):

ՀՐԱՉԵԱՑ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՑԱԴՈՒԼԱՒՈՐՆԵՐԻՆ ԶՕՐԱՎԷԳ Է ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՑՈՒԹԻՒՆԸ

Սոս Սարգսեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնից հաղորդում են, որ Հ.Յ.Դ.ի Հայ Դատի Արեւմտեան Ամերիկայի յանձնախումբը դիմել է Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտի՝ Կալտեկ, Սթանֆորդի եւ Բերկլիի համալսարանների գիտական անձնակազմերին, ասպիրանտների միջազգային ընկերակցութեանը, Ամերիկայի հայ գիտնականների միութեանը, առաջարկելով պաշտօնապէս զօրավիգ կանգնել ականաւոր գիտնական Վիկտոր Համբարձումեանի ու ճանաչուած գրող-հրապարակախօս Զօրի Բալայեանի պայքարին։ Հայ Դատի գրասենեակը կապուել է մարդու եւ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների պաշտպանութեան միջազգային զանազան կազմակերպութիւնների հետ, խնդրելով նրանց համերաշխութիւնը եւ օգնութիւնը հայ հացադուլաւորներին։

Նմանատիպ խնդրանքով նրանք դիմել են նաեւ ամերիկեան կոնգրեսականներին, որոնց յղած նամակում շարադրուած են հացադուլի դրդապատճառներն ու հետապնդած նպատակները։ Մոսկուա է գործուղուել Հ.Յ.Դ.ի Լոս Անճելըսի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Գերճ Կարապետեանը։ Նա տեղում կը կազմակերպի օտարերկրեայ թղթակիցների հանդիպումը հացադուլաւորների հետ։

Ամէնի արեւմտեան շրջանի ազգային իշխանութիւնները, կրօնական, մշակութային, կրթական, մարզական եւ այլ բնոյթի հաստատութիւնները բազմաթիւ հեռագրեր են առաքել ի պաշտպանութիւն հացադուլաւորների։ Ըստ տեղեկութիւնների նման ցայլերի է դիմում նաեւ արտասահմանեան միւս համայնքների հայութիւնը («Հայրենիքի ձայն», 1990, թիւ 38)։

Զօրի Բալայեան

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

digitised by A.R.A.R.@

Մասկոտան Ակրբիջանի գեկոմարտ Քեռնը թույլ է տալիս հրամանագիր բնդունելու ինքնտիպ մարդի տարաբնջում նոր վարչական կյուռեր ու անտեսություններ ստեղծելու մասին, հետագծելով գանգրեսս նպատակ՝ ադրբիջանականացնել Ղարաբաղը, ինչպես դա արուել է Նախիջևանի հետ:

Չի կարելի թույլ տալ, որ լիքաբ յուսալ որ Ղարաբաղեան շարժումն արտաս գրեն նրանք, ովքեր գործում էն, թե սրբագրեսս Քեռնը կարելի է նպատակին հասնել (ինորիրդային Հայաստան» 2 Մայիս 1991):

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

ԴՈՒ ՅԱՒԵՐԺՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՆՔ ԵՍ, ԱՐՑԱԽ

Զորի Բալայեանին

Արցախական հպարտ աշխարհ, դու պողպատէ սուր ու վահան
Վաղնջական քո պատկերով դու կանգուն ես ու անվարան:

Արիւնարբու դարեր եկան ու ոտքիդ տակ դարձան փոշի,
Դու ծփանքիդ շունչը տուիր մեր հոագոյն սուրբ դրօշին:

Հողդ մի բուռ՝ բազմալեգեոն, դու լեգեոնդար ոգի անշէջ,
Գողգոթայի դու քո ճամբան մահառումով անցար անվերջ:

Դու հայութեան Արցախ ոստան, յաղթաբազուկ ու քաջարի,
Մեծ Մաշտոցի շունչն եմ առնում քո սրբավայր Գանձասարից:

Կանգնել ես դու այսօր ոտքի՝ ոչ կուրօրէն եւ ոչ անմիտ,
Այլ ելել ես մեծ պայքարի քո պահանջով արդարամիտ:

Շուրջդ ինչքան ալեկոծուեն ու տարածուեն տագնապ ու դող,
Մնալու ես դու աներեր Ամարասի պէս լուսաշող:

Կերտել ես դու վանք ու տաճար, գրել գրքեր գիշեր ու տիւ,
Որոնցով էլ դու յաղթել ես ոսոխներին քո բազմաթիւ:

Հաւատում եմ քո սրբազան պայքարին ու յաղթանակին,
Քանզի համայն հայութիւնն է ամուր կանգնած քո թիկունքին:

ՆՈՐԱՑՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻՆ, ԶՕՐԻ ԲԱԼԱՑԵԱՆԻՆ, ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԵՒ ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԻՒՍ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

Մոսկուա

Խոր յուզումով տեղեկացանք ձեր հացադուլի յայտարարութեան մասին, իբրեւ յուսահատ բողոք, ընդդէմ մինչեւ երկինք աղաղակող անարդարութիւնների, ողբերգական կացութիւնների, որոնց ենթարկուած է Լեռնային Ղարաբաղի ողջ հայ ազգաբնակչութիւնը, մա՛նաւանդ վերջին ամիսներին, որոնց միակ մեղքն այն է, որ կամենում են ազատ շնչել:

Մենք հայրական վշտի եւ բողոքի մեր ձայնն ենք բարձրացնում համայն մեր ժողովրդի հետ միատեղ եւ ողբում ենք դառը ճակատագիրը ղարաբաղցի մեր հաւատացեալ զաւակներին ու հոգեւին խոնարհւում ենք ձեր հերոսական արարքի առաջ, որ արտայայտում է ողջ հայ ազգի խղճի սրբազան աղաղակը:

Մեր հայրապետական պարտքն ենք համարում այսօր իսկ Սուրբ Էջմիածնից մեր աղերսը յղելու Խորհրդային Միութեան պրեզիդենտին, կոչ անելով նրա մարդասիրական եւ արդարութեան զգացումներին:

Ձեր այս տառապանքի պահերին լսեցէք ձայնը Յիսուսի· «*Երանի՝ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին*»:

Ընդունեցէք մեր սրտակցութիւնը, մեր քաջալերանքը, մեր օրհնութիւնը:

Կաթողիկոս Ամենայն Հայոց
ՎԱԶԳԷՆ Ա.

15 Սեպտեմբեր 1990 թ.
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@

ԽՍՀՄ ՊՐԻԶԻԴԵՆՏ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Կրեմլ, Մոսկուա

Ի լրացումն մեր 13 Սեպտեմբերի հեռագրի, բեկեալ սրտով կրկին դիմում ենք Ձերդ գերազանցութեան, Ձեր մարդասիրական զգացումներին, որ խնայէք կեանքը հացադուլ յայտարարած ժողովրդական պատգամաւորներ՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանի, լրագրող Զօրի Բալայեանի, արուեստագէտ Սօս Սարգսեանի, Լեռնային Ղարաբաղի պատգամաւորների եւ միւսների, որոնց յուսահատ ադերսանքն է, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում վերականգնուի խորհրդային իշխանութիւնը ուղղակի Ձեր պրեզիդենտական հեղինակութեան ներքոյ, որ կը լինի իրապէս արդար մի վերաբերմունք Ձեր կողմից՝ փրկելու համար այդ մարզի հայ ազգաբնակչութիւնը Ձեզի արդէն ծանօթ, անդունդի եզրին հասած ողբերգական կացութիւնից:

Ամենախորին յարգանքով
Կաթողիկոս Ամենայն Հայոց
ՎԱԶԳԷՆ Ա.

15 Սեպտեմբերի 1990 թ.
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@

ՆԱՄԱԿ ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Նրբեմնի «Ռուսաստանի հպատակ», իսկ այժմ առաջնորդում ոչ յայտնի հանրապետութեան կազմում գտնուող դարաբաղցին համբերում է ամէն ինչի: Քար է ուտում, բացախ է խմում եւ, հաւատացէք, յարգելի Միխայիլ Սերգեւիչ, աւելի շուտ փորձում է ձեր համբերութիւնը, յուսալով, որ Դուք, վերջապէս, կը հասկանաք ամենագլխաւորը. եթէ դարաբաղցուն աղաւ ցորենի պէս, ապա նրանից Հայրենիք դուրս կը գայ: Հայրենիք, որն այսօր պաշտպանութեան կարիք ունի բոլոր նրանցից, ովքեր հայերի ցեղասպանութիւնն են իրականացնում, ֆոդարկելով Գորբաչովի անուամբ: Ահա թէ ինչու այսօր դարաբաղցին «Սումգայիթի», «Բաքուի» սարսափներն անցընելով, անասելի զրկանքների ու կորուստների գընով, յենուելով իր աւանդական փրկարարական հաստատակամութեան ու համբերատարութեան վրայ, փորձում է Գորբաչովին փրկել... Գորբաչովից, որպէսզի փրկի վերակառուցումը, որին վտանգ է սպառնում (*«Հայրենիքի ձայն»*, 1990, թիւ 39):

ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

ԻՆՉՈՒ ՀՐԱԺԱՐՈՒԵՑԻՆՔ

Ղարաբաղի մի խումբ կանայք, ինչպէս յայտնի է, մամուլով յայտարարել էին ու դիմել Կրեմլի ղեկավարութեանը, որ միանալու են Մոսկուայում հացադուլի նստած Արցախի պատգամաւոր Զօրի Բալայեանին, եթէ չթաւարարուի նրա պահանջը:

Սեպտեմբերի 18ին Մոսկուայում մենք այցելեցինք Զ. Բալայեանի հետ հացադուլի նստած Վիկտոր Համբարձումեանին, Սօս Սարգսեանին եւ միւսներին: Այդ օրը աշխարհահռչակ աստղաֆիզիկոսի ծննդեան «տօնն» էր: 82ամեայ ակադեմիկոսը, Զօրի Բալայեանը, բոլորը միաբերան խնդրեցին եւ պահանջեցին, որ մենք հրաժարուենք հացադուլի մտից:

— Ես չեմ ուզում, որ դարաբաղցի կինը իջնի այնքան, որ հացադուլի նստի, երբեք...: Բա մենք ձեզ համար չե՞նք պայքարում: Դուք պէտք է զնաք: Ես չեմ ուզում, որ որեւէ դարաբաղցի կին այստեղ գայ,— անվերջ պահանջում ու կրկնում էր Բալայեանը,— եթէ Համբարձումեանն էլ է հացադուլ արել, դա արդէն լուրջ է:

Անսալով նրանց խնդրանք-պահանջին, մենք հրաժարուեցինք հացադուլի մտից: Բայց որոշեցինք հանդիպումներ ունենալ տարբեր ուղղութիւններով, որպէսզի ինչ-որ չափով ազդենք հասարակական կարծիքի վրայ: Եւ դա պէտք է անել: Ամէն մէկս գործ ունի մեր ընդհանուր մեծ գործում (*«Հայրենիքի ձայն»*, 1990, թիւ 39):

Ա. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Մոսկուա

ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԴՈՒԼԱՒՈՐՆԵՐԻՆ

ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւոր, ԽՍՀՄ գրողների միութեան վարչութեան առաջին քարտուղար Վ. Վ. Կարպովը, ԽՍՀՄ գրողների միութեան Մոսկուայի կազմակերպութեան վարչութեան նախագահ Ա. Ա. Միխայլովը եւ ԽՍՀՄ գրողների միութեան վարչութեան խորհրդական Ա. Ա. Օհանեանը այցելեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներ Վ. Հ. Համբարձումեանին եւ Զ. Հ. Բալայեանին:

Տեղի ունեցաւ բարեկամական զրոյց, որի ընթացքում Վ. Վ. Կարպովն ըսաւ, որ Հայաստանի եւ Արցախի հետ կապուած բոլոր հեռագրերն ու նամակները օրերս կը յանձնի ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին («Հայրենիքի ձայն», 1990, թիւ 39):

digitised by A.R.A.R.@

Ռադիո

ՎՏԱՆԳԻ ՏԱԿ...

Լենինեն Ստալին, Ստալինեն Խրուշչեւ ու Խրուշչեւէն մինչեւ Բրեժնեւ արիւնոտ իրադարձութիւնները երբեմ պակաս չեղան Խորհրդային Միութեան մէջ կամ խորհրդային ազգեցութեան գօտիներուն, պատճառ դառնալով միլիոնաւոր մարդոց յանիրաւի ոչընչացման:

Քաղաքացիական պատերազմներով տարածութիւններ ու ժողովուրդներ իրեն ենթարկելու Լենինի դաժան սկզբունքը ծանօթ է աշխարհին:

Քառասուն միլիոնէ աւելի գլուխ կերած հօրգլխանի հրէշը ծանօթացնելու հարկ չկայ:

Մարդիկ չեն կրնար մոռնալ Պուտափեշտի փողոցները արիւնով ներկած Խրուշչեւի քաղաքագործութիւնը ու Պերլինի մէջ բարձրացուցած ամօթի պատը:

Իսկ Չեխոսլովաքիա ներխուժած բրեժնեւեան հրասայլերը դեռ կը գղրդան մարդոց յիշողութեան մէջ ու Ափղանստանի երկինքին տակ թափուած արիւնը դեռ կը պղպջայ, արիւն-արցունք համելով ափղան եւ խորհրդային մայրերու աչքերէն:

Հոկտեմբերեան յաղթանակէն մինչեւ 1985 թուականը, ամբողջ 68 տարի, կարմիր գիծեն ներս ու արքանեակ երկիրներու ժողովուրդներուն շնչելու իրական ազատ մը տրուեցաւ միա՛յն Գորբաչովեան վարդապետութեան օրերուն, հրապարակայնութեան ու վերակառուցման հոչակումէն ետք, ու նշմարտութեան ծարաւի մարդիկ սկսան երբեմն կայծակնային արագութեամբ ու մերթ դանդաղօրէն խորտակել երկաթէ վարագոյրները, ֆանդել ամօթի պատերը ու չորցնել ճահիճները:

Հրապարակայնութեան ընծայած այս բացառիկ առիթով խանդավառ խորհրդային հանրապետութիւններուն մէջ առաջինները մէկը, ինչպէս եաստատեցին լաւատեղեակները, հանդիսացաւ հայ ժողովուրդը, որ սակայն, յա՛տկապէս Ղարաբաղեան հարցին առընչութեամբ՝ եղաւ նոյն հրապարակայնութենէն պատրանաթափ առաջին ժողովուրդը, երբ իր պատմական ու անհերքելի իրաւունքները վերականգնելու արտօնուած բաղձանքը բախեցաւ դարձեալ ստալինեան վարագոյրներուն, խրուշչեւեան պատերուն ու բրեժնեւեան ճահիճներուն:

Հրապարակայնութիւնը վտանգի տակ է կ'ընսեն հայրենի մեր մտաւորականները ու մտաւոգիչ է իրենց մտատանջութիւնը՝

Անցել է արդէն երեք տարի, իսկ վերակառուցման պտուղները դեռ չշօշափելի չեն: Եւ ընդդիմադիր ուժերը կամաց-կամաց գլուխները հանել են խրամատներից («Գրական թերթ», 1988, *թիւ* 22):

Վերակառուցումը ծուլանում կամ ձգձգում է հասնել ազգային հարցին, որովհետեւ ստալինեան ինտերցիան ազգային հարցում դեռ խոր արմատներ ունի («Խորհրդային Հայաստան», 17 *Սեպտեմբեր* 1989):

ՊԵՐՃ ՉԻՑԹՈՒՆՑԵԱՆ

Միակ նաւը, որ այսօր կարող է փրկել Արցախ կղզին, «վերակառուցումն» է: Եւ ամբողջ ողբերգութիւնն այն է, որ հենց վերակառուցումն էլ փրկութեան կարիք ունի («Երեկոյեան Երեւան», 19 *Սեպտեմբեր* 1989):

ՋՕՐԻ ԲԱԼԱՑԵԱՆ

Ժողովուրդը երկար էր սպասում վերակառուցմանը, եւ վերակառուցողը պէտք է ոչ թէ նա լինէր, այլ... երկրի ղեկավարութիւնը...: Բայց... Արցախի օրինակը ցոյց տուեց, որ գոնէ ազգային հարցում կենտրոնական ղեկավարութիւնը չի վերակառուցուել եւ մնացել է հին դիրքերում («Երեկոյեան Երեւան», 30 *Սեպտեմբեր* 1989):

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

Վերակառուցումը ազգային հարցում գոփում է տեղում եւ կասեցուում վերից («Գրական թերթ», 1989, *թիւ* 49 — ՀԳ. միութեան յայտարարութիւն):

Իրադարձութիւնները ցոյց են տալիս՝ մենք բարոյապէս անպատրաստ էինք իրական դեմոկրատիային: Եւ եթէ ժողովուրդը արագօրէն սովորում է դեմոկրատիայի հայեցակետը, ապա ղեկավարութիւնը հեշտօրէն չի բաժանուում հին-մտածելակերպից ու գործելակերպից («Դիպուածիւն», 14 *Սեպտեմբեր* 1989):

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԵԱՆ

Հայ ժողովուրդն ամբողջ հոգով ապաւնդում է հրապարակայնութեան ու վերակառուցման ճակատագրի համար:

ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բագին

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ...

Վերատին կարդանք Գորբաչովի ապառնալիքը.

«Իսկ դուք մտածե՞լ էք Բաքուի երկու հարիւր հոգ հազար հայերի մասին»։

Երբ կայսրութեան մը նախագահը այսպէսի սպառնալից հարցումներ կ'ուղղէ արդարութեան ծարաւի իր հպատակ ժողովուրդներէն մէկուն, ուրիշ բան ըրած չըլլար, եթէ ոչ՝ քանիւ եւ գործով գինել արեան ծարաւի միւսը, հրահրել արդէն բորբոք միւսին թալանելու, սպաննելու ու տիրելու բնազդները։

Եւ եղաւ ճի՛շդ այդպէս, այսինքն ա՛յնպէս, որ Բաքուի արիւնկղակները խորհրդային քաղաքական ու զինական ոգի ուժերը իրենց թիկունքին գալէ ետք միայն սկսան ազատ-համարձակ գործել...

Ղարաբաղեան հարցին կապակցութեամբ Գորբաչովի մատնած քաղաքական նոյն վարքագիծին պատճառով էր, որ մեր մտաւորականները յանախ անդրադարձան 16 Մարտ 1921ին Մոսկուայի մէջ կնքուած ռուս-թրքական դաշնագրին, որով Արեւելեան Հայաստանի գրեթէ կէսը նետուեցաւ Թուրք մարդակերներու երախը։ Ղարաբաղի առիթով կրկնելուողը նոյն դաշնագրին ոգին էր արդարեւ, որ ստիպեց մարդոց ցաւագինօրէն ըսել, թէ՝ «Ներեւում է դրանով Մոսկուան չի կշտացել» (*Ս. Խանզադեան*)։

Զօրի Բալայեանի մէկ ուրիշ գրութենէն ընթերցողը իմացաւ նոյնպէս, որ «ադրբեջանական գործօնով» հայ ժողովրդին սպառնալու մարտական տրամադրութեան մէջ Գորբաչովը առանձին չէ, գործակիցներ ալ ունեցած է, տեսէք.

«Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի 1988 թ. մայիսեան պլենումում Ե. Կ. Լիգաչովը նոյնպէս զարաբաղցիներին սպառնաց "ադրբեջանական գործօնով"»։

Փոխանակ արդար ըլլալու եւ պատմական իրաւունքները վերականգնման ոգիով վերահաստատելու, վերակառուցման վարդապետութեամբ հուչակուած Գորբաչով-Լիգաչովները շարունակ հոլովեցին «ադրբեջանական գործօնը», որուն արիւնոտ հետեւանքները ծանօթ են ամէնուն...

«Ադրբեջանական գործօ՛նը», այն ալ՝ «Լենինեան բարեկամութեան արեւի ներքոյ...»։

207000 ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1988 թուականին, Ղարաբաղեան շարժման առաջին իսկ օրերին՝ ԽՄԿԿ Գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը հարց տուեց Ս. Կապուտիկեանին եւ ինձ. «Իսկ դուք մտածե՞լ էք Բաքուի երկու հարիւր հոգ հազար հայերի մասին»։ *Ես ապշած էի բուն հարցից, էութիւնից ու մտքից, ի վերջոյ, հարցի փաստից։ Ապշեցրեց այն, որ նման հարց տուեց հենց ինքը՝ վերակառուցման ձեռնարկողը* («Սովետական Հայաստան», 1 *Սեպտեմբեր* 1989)։

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

*
* *

Այն օրերին Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները գտնուում էին Ղարաբաղում։ Բայց նրանք չէին նըպաստակադրուել խորամուխ լինելու կատարուածի մէջ։ Հանրապետութեան կուսկենտկոմի նախկին առաջին քարտուղար Բաղիրովի ներկայութեամբ կենտկոմի քարտուղար Օրուջեւը հայերին դիմելով ասաց. «Ահա հարիւր հազար ադրբեջանցիներ կը յարձակուեն Ղարաբաղի վրայ, այն ժամանակ կ'իմանա՞ք...»։ *Յաջորդ օրը հարեւան ադրբեջանական Ադդամ քաղաքից դէպի Ստեփանակերտ շարժուեցին, ճիշտ է՝ ոչ հարիւր հազար, բայց մօտ տասնհինգ հազար ադրբեջանցիներ։ Ամէն ինչ յընթացս ջարդող ու այրող աւազակախումբը կանգնեցուեց հայկական շրջկենտրոն Ասգերանում* («Վանգարդ», 11 *Փետրուար* 1990)։

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

*
* *

...Ասգովը հենց սկզբից վերցրել էր ըստ իրեն միակ ճիշտը՝ ահաբեկման տակտիկան։ Եղաւ մի պահ, երբ նա դիմեց իր զինանոցի վերջին միջոցին եւ ոչ թէ ասաց, այլ մեր երեսին շպրտեց հետեւեալ խօսքերը.

— Գիտէ՞ք, որ մարզի սահմանամերձ Ադդամի շրջանում հարիւր հազարաւոր ասկերներ են կանգնած՝ պատրաստ ներխուժելու Ղարաբաղ։ Դա ձեզ ոչի՞նչ չի ասում («Խորհ», 1989, *թիւ* 12)։

ԵՂԻՇԵ ՍԱՐԳՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գ. ԷՄԻՆ

Ո՞ՒՐ ԵՍ, ՌՈՒՍԱՍՏԱՆ

1.

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն,—
Դո՛ւ, որի մասին
Ես քա՞ջ գիտէի դեռ ա՛յն ժամանակ,
Երբ ցեղախո՛ւմբ էր ցրուած ցեղերի
Ժողովուրդը քո,
Եւ դեռ չէ՞ր դրուած
Հիմքը քո երկրի
Ու քո պետութեա՛ն—
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն...

2.

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն,—
Չէ՞ որ մենք հնո՛ւց եղբայր ենք եղել,—
Սիրել միեւնո՛յն բարեկամներին,
Ատել միեւնո՛յն թշնամիներին
Եւ օգնել իրար սիրով ու սրով.—
Կիեւի Ոսկէ Դարպասների տակ,
Վառնա քաղաքում,
Կազանի բերդում,
Հին Գրիւնվալդում,
Եւ պարիսպի տակ,
Սուրբ Կոնստանդինի,—
Երի՞ցս օրհնեալ
Եւ հօթնապատի՞կ անգամ նզովեալ,
Այն հի՞ն քաղաքի,
Որի անկումը սկի՞զբը եղաւ
Զորս հարիւր տարուայ իմ տառապանքի՛
Եւ նախերգա՛նքը՝
Զորս հարիւր տարուայ ա՛յն անարգանքի,
Որ խարանուա՞ծ է ճակատին քո տան.—
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն...

digitised by A.R.A.R.@

3·

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն…
Զէ՞ որ իմ ու քո
Օգո՛ւտն ու շա՛հը,
Բարի՛ն ու չա՛րը
Միշտ ընո՛ղնն է եղել·—
Երբ ինձ տանջե՛լ են,
Կամ ինձ նեղե՛լ են,
Սահմանքս շեղե՛լ·—
Դո՛ւ էլ ես նեղուել,
Երբ քե՛զ են դատել,
Ինձանից զատել,
Կամ քեզ նեղել են—
Ե՛ս էլ եմ նեղուել…
Երբ քեզ նշմարիտ ուղուց շեղե՛լ են—
Ե՛ս էլ եմ շեղուել·
Եւ, հազարի՛ց մէկ,
Թէ երջանի՛կ ենք մենք կեանքում եղել՝
Լոկ ա՛յն ժամանակ,
Երբ միասի՛ն ու մէկտե՛ղ ենք եղել,
Մէկտե՛ղ սուրբ գինի ու արիւն հեղել,
Մէկտե՛ղ պաշտպանել պատի՛ւը քո տան—
Պատի՛ւը իմ տան
Պատիւը մեր տան—
Նոյն բարեկամնե՛րն
Ու թշնամինե՛րն ունեցող մեր տան·—
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն:

4·

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն…
Այդ ի՞նչ պատահեց
Եւ ինչպէ՞ս եղաւ,
Որ, հաւատարի՛մ քո հին նամակին,
Կամ քեզ պարսաւող
Սո՛ւտ առասպելին այն աւանդական·—
Թէ «*Հարո՛ւստ է մեր հողը, ընդարձա՛կ,*
Բայց չկա՛յ մեզ մօտ ոչ կանո՛ն, ոչ կա՛րգ,
Եկէ՛ք, օտարնե՛ր, մեր հողին տիրէ՛ք,
Եկէ՛ք, ձեր լուծը մեր վզի՛ն դրէք»—
Դո՛ւ,

digitised by A.R.A.R.@

Քո մայր հողն ու տունը հայրական
Տուիր՝ ո՞ւմ ուզես—
Ռիւրիկովներից,
Թաթար-մոնղոլից,
Ու պրուսացուց
Մինչեւ... Քեմալն ու
Վայրի վոհմակը ստալինական...—
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն:

5·

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն·—
Այդ ինչպէ՞ս եղաւ
Եւ ի՞նչ պատահեց
Որ դո՛ւ, յարկի տակ
Սեփական քո տա՛ն
Թոյլ տուիր, որ,— ո՛վ եւ ե՛րբ ուզենայ,
Քեզ արած հլու նեցուկ ու յենակ,
Աշխատող ստրուկ
Եւ կռուող բանակ,—
Քո սո՛ւրբ անունից ու քո անունո՛վ,
Քո արտասուքո՛վ եւ քո արիունո՛վ,
Սեփական քո հողն ու տունը պղծի՛,
Քո անուամբ ոնի՛ր ու նախնի՛ր գործի,
Քո ձեռքով օգնա՛ծ քո ոսոխների՛ն,
Քո ձեռքով մորթա՛ծ քո եղբայրներին—

Ինչպէս դեռ երէ՛կ,
Թալեաթի ձեռքով՝
Խոշտանգելո՛վ քեզ պաշտպան հայերին·

Քեմալի ձեռքով՝
Խլելով հայոց հո՛ղը հայրենի,

Թուրք-ստալինեան գաղտնի դաշինքով՝
Խլած ե՛ւ Արցախ, ե՛ւ Նախիջեւան·—

Առանց հող թողած մի հի՛ն ժողովուրդ,
Առանց ժողովուրդ՝ հո՛ղը հայկական՝
Խախտած դրանով
Նաեւ... սահմա՛նն ու հիմքե՛րը քո տան...—
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն...

digitised by A.R.A.R.@

6·

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն,
Եւ երկա՞ր պիտի
Ուրիշի ձեռքո՛վ,
Ուրիշի մեղքո՛վ,
Դու դաւանանե՛ս քո եղբայրներին,
Դարձած դարաւոր
Ու արիւնախո՛ւմ քո դահճին պաշտպան,—
Զաւթի՛չ համարուես արար աշխարհում,
Ստրո՛ւկ մնալով յարկի տակ քո տան…
Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն:

7·

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն:
Դո՛ւ, որ թէեւ կա՛ս
Որպէս հող, երկիր ու բնակչութիւն,
Քաղաք ու ոստան
Եւ… ազգանո՛ւն ես կրում ռուսական—
Բայց… արի՛ւն ունես թաթար ցեղերի,
Եւ այտոսկրնե՛ր Չինգիզ խաների,
Շեղ աչքե՛ր ունես Լենկ-Թեմուրների
Եւ… «թուրքական թա՛մբ»՝ ուղեղիդ վրայ…
Որ բարբառում ես օտար ակցենտով,
Գործում օսմանցի փաշայի կամքով,
Եւ… վատ գիտես քո՛ լեզուն մայրական,—
Ինչպէս քո օգուտն ու շահն իսկական…—

Ո՞ւր ես, Ռուսաստա՛ն:

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

1964 թ· Երեւան

(*«Անդարդ»*, 1990, 17 Յունուար)

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԻ 853 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՄԱՆՈՐԸ

Օտարաշուրթ կողոպտիչների ասպատակութիւններից Արցախը շնչահեղձ էր լինում: Անառիկ էր մնացել միայն Գտիչ ամրոցը, որի տէր Նսային իր մէկ հազարեակ քաջերով դիւցազնաբար մարտնչում էր հազարեակն՝ երկու հարիւր հազարանոց բանակի դէմ ու մնում անպարտելի: Հրոսակապետ Բուղան շարունակում էր պաշարել Գտիչը՝ յոյս ունենալով, թէ ուր որ է ամրոցի պաշտպաններին կը մատնի սովի: Աշխարհի այլուայլ կողմերում բազում բերդեր ցուանած հազարական երեւելի զօրականները մատների վրայ հաշուումներ էին անում եւ Բուղային հաւաստիացնում, թէ ամրոցում սպառելու վրայ է անունը եւ մինչեւ Ամանորը քաղցն այնպէս կը տանջի, որ նրանք իրար միս կ'ուտեն:

Բայց ահա եկաւ հայկական Ամանորը եւ կատարուեց անսպասելին: Եղբերափոդերի ու ծնծղաների տօնական համանուագը Գտիչի աշտարակներից յորդաց Տոդասարի լանջերն ի վար եւ ունկնդրելի դարձաւ թշնամուն: Հայերն իրենց Ամանորը տօնում էին եին օրերին յատուկ խելաեեղ պերճութեամբ:

— Դա հաւանաբար իսկական տօնախմբութիւն չէ, պարզապէս սովը խենթացրել է արցախցիներին,— կասկածամիտով ասաց Բուղան ու սպասեց նոր լուրերի:

Փիլ յծտոյ զօրապետին զեկուցեցին, որ հայերը հարիւր ոչխար են ուղարկել իրենց:

— Ի՞նչ,— զարմանքից քարացաւ Բուղան:

— Այո՛, զօրապետ, Նսայի իշխանը իր բանբերի միջոցով ապապրել է հետեւեալը, «Զօրապետդ Բուղա, ընդունիր իմ այս խաշինքը, որպէս հայկական Ամանորի ընծայ: Պապենական աւանդութեամբ Նոր տարուայ ճոխ սեղանից հայը պարտաւոր է բաժին հանել իր շեմի կողմով անցնող օտարականին: Անուշ արէք հայկական միսը եւ յիշէք՝ դուք անցուորէք, մենք՝ տանտէր: Ձեզ նման շատերն են եկել ու անցել: Դուք էլ կ'անցնէք, եւ Արցախը կը մնայ հայկական» («Գրական թերթ», 1991, թիւ 1):

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Բագին ԴՈՒՔ ԱՆՑՈՒՈՐ ԷՔ, ՄԵՆՔ՝ ՏԱՆՏԷՐ

Հայկ Խաչատրեանի «Արցախի 853 թուականի Ամանորը» անուն քովի պզտիկ գրութեան մէկ հաստատումէն առնուած այս խորագիրը եղած է Արցախի հայութեան անյեղլի կարգախօսը բոլոր դարերուն ու նոյնը կը մնայ հազարացի ներխուժողները փոխարինած նոր հազարացիներուն մոլեգնութեան առեն եւս՝ այսօ՛ր. «Դուք անցուոր էք, մենք՝ տանտէր»:

Արդարեւ, միայն վերջին երեք տարիներուն չէ, երեսուն տարիներուն չէ, երկու անգամ երեսուն ու աւելի տարիներու վրայ Արցախի մեր հարազատները կը պայքարին այնքան յախուռն չնկանութեամբ իրենցմէ «խլուած» եւ այնքան մեծ լրջութեամբ ազերիներուն «չընորհուած» հայրենի այդ կտորին համար, որպէսզի անիկա, այդ չքնաղ եզերքը գերծ մնայ Նախիջեւանի տխուր ճակատագրէն:

Ու պատմութիւնը կրնայ հպարտութեամբ արձանագրել, որ գուր չանցաւ այնքան աւիւն ու արիւն արժած իրենց ոգորումը, որ իր ուժն ու թափը կ'առնէր Ղարաբաղի կորիճ նախահայրերուն աւանդները խտացնող իշխան եւ սայիի հայրենական իմաստուն համոզումէն. «Դուք անցուոր էք, մենք՝ տանտէր»:

Գակառ բարացուցական չէ Հայկ Խաչատրեանի արձանագրած միւս ճշմարտութիւնը, պաշարման վիճակի մէջ «խելահեղ պերճութեամբ» Ամանոր տօնելու անդիմադրելի մղումը եւ այդ առհաւական արժանիքին լրացուցիչ գիծը հանդիսացող ընծան, խաշինքը, ի վայելումն պաշարող բանակին, աւիրողներուն, արիւնախումներուն:

Բոլոր պարագաներուն հիանալի է իրականութենէն աւելի՛ իրական այս հեքիաթը, պաշարուած ընիկներուն ցոյց տուած պաղարիւնութիւնը, որ գործոն ուժի վերածուած է մեքիքներուն ժառանգորդ այսօրուան մեքիքներուն մտածողութեան ու ապրումներուն մէջ, ընդդէմ ազերի ներխուժողներուն, որոնց ներեսին կը շպրտուի ամէն օր.

«Դուք անցուոր էք, մենք՝ տանտէր»:

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԵԱՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ

Մեր ժողովուրդը, ասես, արթնացաւ, կրկին վերածնուեց, մաքրուեց լճացման տարիների տիղմից ու բորբոսից («Արմենիա», 11 *Ցուլիս* 1988)։

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Ես անսահման չնորհակալ եմ իմ ճակատագրից, որ առիթ ունեցայ մեր ժողովրդի հոգեւոր ու համապարփակ զարթօնքի ականատեսը լինելու։ Զարթօնք, որն իմ կարծիքով, իմ համոզմամբ համազոր է 451 *Թուականի Աւարայրին եւ* 1918 *Թուականի Սարդարապատին* («Աւանգարդ», 14 *Հոկտեմբեր* 1988)։

ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Այո, հազար երանի մեզ, որ ապրեցինք ու տեսանք 1988 *Թուականը, Թատերական հրապարակում, որ արժանի է հետագայում Ազատութեան հրապարակ կոչուելու, համահաւաք ու միասնական տեսանք անմիաբան համարուած մենք մեզ* («Գրական թերթ», 1988, *Թիւ* 47)։

ՌԱՑԱ ԽԱՍԱԳԵՏԵԱՆ

Հզօր ցոյցերն ու համաժողովները՝ նուիրուած մայր հայրենիքի հետ Արցախի վերամիաւորմանը, ի յայտ բերեցին հայ ժողովրդի հոգեւոր վեհ նկարագիրը, անկոտրում ոգին («Գարուն», 1988, *Թիւ* 12)։

ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Արցախցիների մէջ ոգու ամրութիւնը իրենց լեռների ու բերդերի պէս պինդ է՝ նստած («Երեկոյեան Երեւան», 9 *Սեպտեմբեր* 1989)։

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿԵԱՆ

Արցախեան շարժումը հուժկու ալեկոծութեամբ մաքրեց մեր ժողովրդի ներաշխարհը մանր կրքերից, եսապաշտական-քաղքենիական տիղմից («Գրական թերթ», 1989, *Թիւ* 32)։

ԻԳՆԱՏ ՄԱՄԵԱՆ

Մարդիկ փոխուեցին՝ նոր, իրենց էլ անյայտ յատկութիւններ վեր հանեցին հոգու խորքերից, համոզուեցին, որ կարող են տէր կանգնել հայրենի հողին («Գրական թերթ», 1989, *Թիւ* 35)։

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ

Լեռնային Ղարաբաղը նոր Սարդարապատ է մեզ համար («Աւանգարդ», 4 *Մայիս* 1990)։

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

Արցախը նոր կենսաերակներ բացեց մեր համազգային գիտակցութեան մէջ, մեզ նորովի կամրջեց մեր արմատներին, արթնացրեց թմբիրից ու անիմաստ լաւատեսութիւնից («Աւանգարդ», 13 *Ցուլիս* 1990)։

ՄԵԼԻՔՍԵԹ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ով գիտէ թէ շատ ծանօթ է հայ ժողովրդի պատմութեանը, չի կարող չիմանալ, որ այդ պատմութիւնը հենց անկախութեան համար դարերով ձգուած մի անընդմէջ պայքար է եղել եւ, համոզուած եմ, դրա չնորհիւ է, որ յարատեւել ենք ու կանք։

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐՑԱԽԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԶԱՅՆԵՐ

(ԽՄԲԱԳԻՐ՝ ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ)

Արցախեան Պահանջատիրական Շարժումէն տասնամեակ մը առաջ, 1978ին, Միւնիխի Հայկական Հարցերի Հաստատութիւնը հրատարակեց Լեւոն Մկրտչեանի կազմած եւ ծանօթագրած «Հայրենական ձայներ» անուն վաւերագրական նիւթերու ժողովածուն, որ կ'ընդգրկէ 11 փաստաթուղթեր, որոնց հինգը (փաստաթուղթ թիւ Բ., Զ., է., Ը. եւ ԺԱ.) կը շօշափեն Արցախի եւ շրջանի հայ ազգաբնակչութեան մասայլ ճակատագիրն ու տարբերները:

Առաջին գրութիւնը՝ «Արցախի 2500 հայերի բողոքագիր դիմումը Խրուշչովին», *ինչպէս կ'երեւի խորագիրէն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայկական շրջանները ներկայացնող յուշագիր մըն է, որ շրջանառութեան մէջ դրուած է 1963ին: Այս փաստաթուղթը ո՛չ միայն փաստական ու թուական տուեալներով կը պարզէ արցախահայութեան տուեալ ժամանակի ծանր կացութիւնը, այլեւ՝ նախորդ տասնամեակներու հակահայ հետեւողական քաղաքականութեան հետեւանքները: Բացի այդ, յուշագիրը լաւագոյնս կը բացայայտէ իր դիրքերուն վրայ աներեր մնալու արցախահայութեան վճռականութիւնն ու անպարտելի ոգին՝ իբրեւ իր ինքնութեան արմատներուն անհահանջ հաւատքով կառչած եւ միայն «ուժի դիրքերից» հարցերը լուծելու հակահայ քաղաքականութեան դէմ ծառացող մարտունակ հայութիւն:*



digitised by A.R.A.R.@

Երկրորդ նիւթը՝ արցախահայութեան մէկ այլ կոչն է, այս անգամ ուղղուած՝ «Հայաստանի ժողովրդին, կառավարութեանը, կուսակցութեան կենտկոմին եւ հասարակական կազմակերպութիւններին»։ Իր տեսակին մէջ եզակի այս կոչը (առաջին կոչը, որ հասցէագրուած է Հայաստանի հայութեան) խմբագրուած է 1967 Սեպտեմբերին եւ սփիւռքահայ մամուլի էջերուն լոյս տեսած նոյն թուականին։ Ղարաբաղի անշնչելի եւ անապահով մթնոլորտը ներկայացնելով՝ այս կոչը, առաջին հերթին, կ'ընդգծէ հետեւեալ ճշմարտութիւնները.

«Անարգւում է մեր պատիւը, բռնադատւում են մեր իրաւունքներն ու արժանապատուութիւնը։ Ոչ ոք չի լսում մեր բողոքի ձայնը, ոչ մէկը ականջ չի դնում մեր աղերսանքին։ Հարիւրաւոր դիմումներ նոյնիսկ յղել Մոսկուա՝ կենտրոնական Կառավարութեանը, Ադրբեջանի ղեկավարութեանը, եւ այդ բոլորի պատասխանը եղել է կամ բար լռութիւնը, կամ մոլի հալածանքը մեր եւ մեր զաւակների հանդէպ»։

Ապա, տասնեակ դէպքերէն քանի մը հատը ներկայացնելէ ետք («որպէսզի պատկերացնէք թէ ինչ է կատարւում Ղարաբաղում»), կոչը ամբողջականօրէն կը մերկացնէ Ադրբեջանի կոյր ազգայնամոլ վարիչներուն հակահայ եւ հակամարդկային ձուլման, իւրացման, նեղդիպոխման եւ հալածանքի դաժան երգիրը եւ, առ այդ, կ'աղաղակէ.

«Հայ ժողովո՛ւրդ — քո հատուածներից մէկը, որ դարերի մռայլ ու դաժան ճնշապարհին միշտ բարձր է պահել քո անունը եւ անեղծ՝ իր ինքնութիւնը, եիմա օրհասական վտանգի տակ է։

«Լեռնային Ղարաբաղը՝ արդէն անուժ եւ անօգնական, կորցրել է ամէն ապաւէն։ Մայր ժողովո՛ւրդ, որտեղ էլ որ կաս, էհզ նոյնիսկ դիմում։ Դու ես մեր յոյսն ու ապաւէնը։ (...) Իր դաւանած ղեկավարների ձեռքով ադրբեջանական շովինիստին ի կեր նետուած Ղարաբաղը սպասում է քո փրկարար ձայնին, հայ ժողովո՛ւրդ, մայր ժողովո՛ւրդ»։

Սրտաճմլիկ, բայց առնական այս կոչին կը յաջորդէ բանտէն իր հայրենակիցին՝ Միքայէլ Սողոմոնեանին յղուած Բենիկ Մովսիսեանի նոյնքան յուզիչ նամակը, ուր «Մուսաւաթիստի որդի՝ ՍՍՀՄի անդամ, գպրոցի դիրեկտոր, Ձեզ շատ յայտնի Արշաղ Մամեդովի» կողմէ յօշոտուած, ապա պատառներու վերածուած իր զաւկին գիրքը հողին յանձնած, ապա անիրաւաբար «այժմ բանտի բնակիչ Բենիկ Մովսիսեան» ո՛չ միայն լայն կը բանայ իր անձնական ողբերգութեան մթին ծալքերը, այլեւ անջնջելի գիծերով կը պատկերացնէ թէ՛ հայրենասէր ու գաղափարապաշտ հայ երիտասարդի իր դիմագիծը եւ թէ Արցախի ընդհանուր վիճակն ու ճակատագիրը, երբ որդեկորոյս հայրը կը գոռայ.

«... Իմ զաւակից թա՛նկ Արցախ, իմ զաւակի գերեզմա՛ն Արցախ, հայութեան միջնաբե՛րդ Արցախ, քո զաւակները քո բանտերից անգամ բաժին չեն ստանում, մեզ տարել են Բաքուի բանտերը, որպէսզի ֆիզիքապէս ոչընչացնելը աւելի հեշտ լինի։ Հա՛յ ժողովուրդ, դու մի՛ սպասիր հերթով մորթուելուն։ (...) Արցախը Հայաստանի համար մորթուած զաւակ չէ, մորթուելու վտանգի տակ է...»։

«Արցախի հայութեան կացութիւնը պարզող մի նամակ-փաստաթուղթ» *խորագրեալ նախաբերջին նիւթը յաւելեալ մանրամասնութիւններ կը փոխանցէ՝ Հայաստանէն կամայական դեկրետով մը անջատուած Արցախի մասին։ 27 Նոյեմբեր 1972ին, Սփիւռքի մէջ եւ առաջին անգամ ըլլալով հրատարակուած այս փաստաթուղթը, ինչպէս նախորդները, կը պարզէ ողբերգական կացութիւնը Հայաստանէն եւ առհասարակ հայութենէն ու աշխարհէն մեկուսացուած Լեռնային Ղարաբաղի, իսկ առաւել եւս՝ յարակից հայկական շրջաններուն, որոնցմէ շատերը ծրագրուած կերպով հիմնովին քանդուեցան, «որպէսզի չարագործութիւնը վկայող ոչինչ չմնայ»։*

Ղարաբաղի զանազան շրջաններուն մէջ գործադրուած սպանութիւնները, ահաբեկումները, հայ մտաւորականներու դէմ նիւթուող հալածանքները, ձուլման գործնական միջոցառումները եւ այլ փաստեր առարկայական մօտեցումով ներկայացնելէ ետք, փաստաթուղթը կ'եզրափակէ.

«Մանր, յուսահատ վիճակ է ապրում Հայոց Ղարաբաղը։ Ղարաբաղցին շատ է բողոքել, ելել է՝ ընդվզել է իր արդար իրաւունքները պաշտպանելու համար, բայց մնացել է միշտ անպաշտպան։ (...) Եթէ չեն ցաւում ուրիշների սրտեր, եթէ այնպիսին են նրա հետ եղ-

digitised by A.R.A.R.@

բայրացածները, ապա ի՞նչ են մտածում արիւնակից եղբայրները, հայ եղբայրները»։

«Հայրենական ձայներ» հատորը կը փակուի անուանի արձակագիր Սերօ Խանզադեանի Լէօնիտ Գրեժնեւի յղած նամակով եւ «Մեկնութիւններ Սերօ Խանզադեանի նամակին առիթով» փաստաթուղթով։ Սերօ Խանզադեան, մեկնելով յատուկ յանձնարարութեամբ եւ հրաւէրով Լեռնային Ղարաբաղ գտնուած օտար լրագրողներ՝ Հնդիկ Սարադա Միտրայի եւ իրաքցի Ամէլ Խապանի ազգրեթանական «թելադրուած» փաստաթղթերով եւ հակահայ «տպաւորութիւններ»ով անճիշդ ու ստայոգ տեղեկութիւններ փոխանցող յոդուածէն, կը պահանջէ լրջօրէն քննարկել հարցը, երբեւէն հանել ճշմարտութիւնները խեղաթիւրած եւ հիւր լրագրողները մոլորեցուցած ապերի պատասխանատուները, զանոնք հաշուետուութեան կանչել եւ արդար լուծում մը բերել ա՛յն կոստացող հարցին, թէ՝ «Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչութիւնը երբեմ կամովին չի ընդուներ այսօրուայ «բախտը», համածայն որի իրականում կտրուած է հայրենիքից», որուն եւ պէտք է վերակցուի՝ «որպէս Լենինեան ազգային քաղաքականութեան նոր յաղթանակ»։

ԱՐՑԱԽԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ «ԱՍՊԱՐԷԶ»Ի)

1988ին, Լոս Անճելըսի մէջ, «Ասպարէզ» օրաթերթը հրատարակեց 224 մեծադիր էջերէ կազմուած «Արցախեան տարեգրութիւն» պատկերազարդ ժողովածուն, խմբագրութեամբ՝ Աբօ Պողիկեանի եւ Եդուարդ Աբէլեանի։

Զորս բաժիններէ կազմուած այս ժողովածուն կը բացուի Աբօ Պողիկեանի ստորագրութիւնը կրող «Փոխան յառաջաբանի» խորագրեալ ներածականով, որ հայ մարդու ազգային-հաւաքական գիտակցութեան վրայ Արցախեան Ազատամարտի Շարժման ունեցած խոր ազդեցութիւնն անդրադառնալով՝ իրրեւ հոգեփոխիչ երեւոյթ, կ'ընդգծէ աւաւել սուր թափով եւ կազմակերպ ուժերով պայքարը շարունակելու վճռականութիւնը եւ, առ այդ, կը գրէ.

«Ահա այս շարունակուող ու վճռական պայքարին կը նուիրուի «Ասպարէզ»ի 80ամեակի առթիւ հրապարակուած մեր հրատարակութիւնը, ըստ էութեան կիսատարտ, եւ նիւթին ամբողջական հատուցում մատուցելու իր ճիգին մէջ մեր թերի այս աշխատութիւնը»։

Ապա, աւելցնելէ ետք, որ Արցախեան Հերոսամարտին զուգահեռ՝ հայ ստեղծագործ միտքը նաեւ պիտի շարունակէ արուեստի աշխարհ փոխադրել ուսանելի դրուագները եւ պահերը, որոնք պիտի ամբողջանան եւ վերջ գտնեն հայութեան յաղթանակով, «Փոխան յառաջաբանի» գրութիւնը կ'ընդգծէ.

Այս համոզումն է, միայն, որ մեզի կը թոյլատրէ եւ յանդգնութիւն կը ներշնչէ հրատարակելու գիրքմ մը, որ կը կրէ «Արցախեան տարեգրութիւն» շատ յատկանշտ խորագիրը։

Փոխան խմբագրականի գրուած այս մուտքին երկրորդ մասով կը ներկայացուին ժողովածուին չորս բաժինները, որոնք կ'աւարտին հետեւեալ վճռական նախադասութիւններով.

«Պայքարը պիտի աւարտի յաղթանակով։ Ուրիշ ելք կարելի չէ՛։ Ուրիշ ելք ընդունելի չէ՛ Արցախի, Հայաստանի ու Սփիւռքի հայութեան համար։

digitised by A.R.A.R.@

«Եւ պիտի յաղթանակե՛նք»։

Ներածականին կը յաջորդէ ժողովածուին առաջին բաժինը՝ «Արցախի հարցի վերաբերեալ որոշումներ»։ Խորհրդային մամուլէն քաղուած այս ոչ ամբողջական թղթածրարը լուսագոյնս կը ներկայացնէ պաշտօնական մարմիններու, խորհրդային վարիչներու եւ ժողովներու կեցուածքները՝ Արցախի Հարցին գծով։

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արցախեան Պահանջատիրական Պայքարի ընթացքին արտայայտած կեցուածքը մերկայացնող գրութիւններ» խորագրեալ երկրորդ մասը կազմուած է «Դրօշակ»ի եւ «Ասպարէզ»ի կարգ մը խմբագրականներէն։ Նաեւ ներկայացուած են Հ.Յ.Դ. Բիւրոյի, Հ.Յ.Դաշնակցութեան 24րդ Ընդհ. ժողովի եւ հայ քաղաքական ազգային երեք կուսակցութիւններուն՝ Ս.Դ.Հ.Կ.ի, Հ.Յ.Դ.ի եւ Ռ.Ա.Կ.ի վերին մարմիններուն ստորագրութիւնը կրող պահանջատիրական յայտարարութիւնները։

Ժողովածուին երրորդ մասով՝ «Հատընտիր՝ Արցախեան Պահանջատիրութեան անդրադարձող գրութիւններու», որ կը գրաւէ գրեթէ հատորին կէս ծաւալը՝ 102 էջ, կը հրատարակուին Հայաստանի եւ Սփիւռքի մամուլի էջերուն լոյս տեսած դեղարուեստական ու հրապարակագրական գրութիւններ, բաց նամակներ, պաշտօնական ելոյթներ ու պաշտօնական կոչեր, որոնք, ինչպէս կը հաստատէր «Փոխան յառաջաբանի»ն, Արցախեան Պահանջատիրութեան հետ ունեցած իրենց ուղղակի եւ անուղղակի առընչութիւններով՝ «ժամանակի ու Շարժումի ոգին կը մարմնացնեն որոշ չափով»։ Վերոնշեալ նիւթերը կը կրեն ստորագրութիւնները Սուրէն Այվազեանի, Իգոր Մուրադեանի, Գենադի Եսայեանի, Մանուէլ Սարգսեանի, Վայէ Սարուխանեանի, Ալվարդ Պետրոսեանի, Միլվա Կապուտիկեանի, Հենրիկ Պօղոսեանի, Գրիգոր Ջանիկեանի, Եղիշէ Սարգսեանի, Լեւոն Մելքըմշեանի, Արմէն Յովհաննիսեանի եւ ուրիշներու։

«Ժամանակագրութիւն» խորագրեալ վերջին բաժինը ժողովածուին, որ կ'երկարի 57 էջերու վրայ, պատրաստուած է «Ասպարէզ»ի երիտասարդ աշխատակից Արամ Գուլումճեանի կողմէ։ Ժամանակագրութիւնը, որ հիմնուած է «Ասպարէզ»ի էջերուն լոյս տեսած ամէնօրեայ հեռագրալուրերուն եւ լրատուական հաղորդումներուն վրայ, կ'ընդգրկէ 1988 տարուան 8 Փետրուար–28 Հոկտեմբեր ժամանակաշրջանը։ «Արցախեան տարեգրութիւն» հատորին էջերը հարստացած են վաւերագրական արժէք ունեցող գունաւոր եւ սեւ-ճերմակ լուսանկարներու պատճէններով։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

(ՀԵՂԻՆԱԿ՝ ՍԵՐԳԷՅ ՄԵԼՔՈՒՄԵԱՆ)

1989ին, Երեւանի «Լոյս» հրատարակչատունը ընթերցող հասարակութեան ներկայացուց Սերգէյ Մելքումեանի «Լեռնային Ղարաբաղ» անուն հատորը, նուիրուած՝ Լեռնային Ղարաբաղի տնտեսաաշխարհագրական հարցերուն, մարզի բնական պայմաններուն, տնտեսութեան ճիւղերու ձեւաւորման, զարգացման, հնարաւորութիւններու եւ յարակից հարցերու։

Հատորը կը բացուի տնտեսագիտութեան դոկտոր-պրոֆեսոր Եու. Մ. Սուվարեանի «Յառաջաբան»ով, որ Լէոյի, Բաֆֆիի, Մակար Բարխուդարեանցի եւ Երուանդ Լալայեանի շատ արժէքաւոր ուսումնասիրութիւնները նշելէ ետք, առաջին հերթին դիտել կու տայ, որ եօթը տասնամեակ շարունակ ստալինեան-բաղիրովեան «երկաթեայ սեւ վարագոյրը» ո՛չ միայն ինքն Լեռնային Ղարաբաղի դաժան իրականութիւնը հայ մտաւորականներէն եւ ժողովուրդէն հեռու պահելու յատակ դիտաւորութեամբ, այլեւ նոյնիսկ արգիլեցաւ Ե. Հայաստանի մէջ Արցախի նուիրուած ուսումնասիրութիւններու լոյս ընծայումը («Եօթ փակի տակ էր դրուած մարզի ստեղծման պատմութիւնը») եւ գրական շուկան, Ադրբէջանի մէջ, ողողուեցաւ պղտոր հեղեղովը «կեղծ, բացայայտ ազգայնամոլական բրնոյթի գրուածքներով, որոնց նպատակն էր յայտարարել, որ Արցախը հայկական չէ»։

Այս փաստին եւ հայկական պարտադիր լռութեան անդրադառնալէ ետք, Եու. Մ. Սուվարեան համառօտ կերպով կը ներկայացնէ Գատմական Հայաստանի մաս կազմած Արցախ նահանգի լեռնային հատուածը, որուն մէկ մասն է այժմու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը։ Կ'անցնի Խամսայի Մելիքու-

digitised by A.R.A.R.@

թիւններուն, թշնամիներուն դէմ Արցախի հայութեան մղած հերոսամարտերուն, չուրջ 300 տարի առաջ, Գանձասար վանքի մէջ գումարուած համագումարին եւ անկէ բխած «Հայաստանը Ռուսաստանի հետ միաւորելու գաղափարին, Հոկտեմբերեան յեղափոխութեան եւ Անդրկովկասի մէջ Ստալինի վարած հակահայ քաղաքականութեան, արցախահայութեան պարտադրուած ծանր լուծին, Նարիմանովներու կամայական որոշումներուն, ահաբեկումներուն եւ շրջանը հայ ազգաբնակչութենէն պարպելու նպատակով կիրարկուած հետեւողական հալածանքներուն ու ճնշումներուն։

«Ապա, ներածականին երկրորդ բաժինով, նախ կը յայտնէ, որ տարիներու վրայ երկարած բնախնդիր ուսումնասիրութեան արդիւնք հանդիսացող «սոյն աշխատութիւնը մեր՝ արդէն աւարտուող դարի ընթացքում, ցաւօք դեռեւս առաջին ծաւալում մենագրութիւնն է, որը բովանդակում է Լեռնային Ղարաբաղի պատմա-տնտեսաաշխարհագրական բնութագիրը, արժէքաւոր տեղեկութիւններ է տալիս մարզի էկոնոմիկայի, մշակոյթի, բնակավայրերի մասին»։

Այս արժեւորումէն ետք, Սուվարեան հակիրճ տողերով կը ներկայացնէ Ս. Մելքումեանի աշխատասիրութեան 12 բաժինները եւ կ'եզրակացնէ, որ պատմական տեղեկատուի նշանակութիւն ունեցող այս հատորը պիտի ըլլայ ուղեցոյց բոլոր անոնց՝ որոնք աւելի բազմակողմանի եւ խոր ուսումնասիրութեան նիւթ պիտի դարձնեն Լեռնային Ղարաբաղի պատմութիւնը, տնտեսութիւնը, մշակոյթը եւ ճարտարապետութիւնը։

Լեռնային Ղարաբաղի ձարտար գիւղի զաւակ Սերգէյ Մելքումեան, առաջին բաժինով, հետաքրքրական մօտեցումով ընթերցողին կը ներկայացնէ Լեռնային Ղարաբաղի բնական պայմաններն ու կենդանական, բուսական եւ բնական հարստութիւնները,— լեռները, ձորերը, գետերը, հարթավայրերը, անտառները, հանքերը, հանքային աղբիւրները, կենդանիները, բոյսերը, բերքը, կլիման եւ այլ մանրամասնութիւններ։

Երկրորդ բաժինը՝ «Պատմաշխարհագրական համառօտ ակնարկ», դարձեալ ամփոփ գիծերու մէջ, կը խօսի Պատմական Հայաստանի մաս կազմած Արցախ եւ Ուտիք նահանգներու մասին։ 20 դարու վրայ երկարող Արցախի պատմութիւնը թուականներով եւ փաստացի տուեալներով ընթերցողին ներկայացնելէ ետք, կ'անդրադառնայ Լեռնային Ղարաբաղը կամայական կարգադրութեամբ Ադրբէջանի

ԱՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

ԵՐԵՎԱՆ „ԼՈՒՅՍ" 1990

«կազմի մէջ պրեսստանկաներէն մտցնելու հրէշաւոր պատմութեանը եւ յարակից այլ հարցերի»։ Ապա, բռնամիջոցներն ու ճնշումները, հալածանքներն ու հակահայ որոշումները իրարու հետ ունենալով՝ կը քննարկէ 1988-89 տարիներուն ծաւալած ինքնորոշման համազգային շարժումը եւ յարակից այլ հարցեր։

«Լեռնային Ղարաբաղի Իմքնավար Մարզի վարչական կառուցուածքը եւ բաղաքները» բաժինը հանգամանօրէն կանգ կ'առնէ Ստեփանակերտ եւ Շուշի քաղաքներուն վրայ։ Այս եւ շրջանի միւս քաղաքները դարձեալ կը ներկայացուին գիտական մօտեցումով։ Մարդկային, տնտեսական, մշակութային, վարչական, ճարտարարուեստական զարգացումը, հարցերն ու բնութենական պայմանները ամբողջական գաղափար մը կը փոխանցեն Ստեփանակերտի, Շուշիի, Հադրութի եւ միւս աւաններուն մասին։

Կը յաջորդէ «Բնակչութիւնը, նշանաւոր գործիչները, սովորոյթները» բաժինը, որ փաստացի տուեալներով ընթերցողին ընդհանուր պատկեր մը կը փոխանցէ ազգաբնակչութեան, կատարուած տեղաշարժերուն, հայ բնակչութեան ամամայ արտահոսքին, տեսակարար կշիռի կրճատման պատճառներուն, արցախահայու խրոխտ տիպարին, հոգեբանութեան, ազգային գիմագիծին, զարաւոր բարքերուն, կենցաղին եւ նշանաւոր գործիչներուն մասին։

digitised by A.R.A.R.@

Հինգերորդ բաժինը հատորին՝ «Տնտեսութեան բնութագիրը», յայն էջեր կը բանայ՝ Լեռնային Ղարաբաղի տնտեսութեան ճիւղերը լուսաբանելու նպատակով։ Ս. Մելքումեան հանգամանորէն կը ներկայացնէ մարդի արդիւնաբերութիւնը, դիւղատնտեսութիւնը, երկրագործութիւնը միջոցները (ճամբաներ, կամուրջներ, երկաթուղագիծեր, նաւթատար խողովակներ, էլեկտրական ցանցեր, եւայլն), անցնելու համար կրթական-մշակութային եւ առողջապահական երեսը ընթերցողին պարզելու աշխատանքին։ Այս բաժնին մէջ եւս հեղինակը մեծապէս կ'օգտագործէ փաստացի տուեալներն ու թուականները՝ ընթերցողին ամբողջական պատկեր մը փոխանցելու առաջադրանքով։

Խիստ չահեկան այս էջերէն ետք, հատորին կէսէն աւելին (էջ 114–276) գրաւող յաջորդական հինգ բաժիններով (7–11), «հեղինակը շատ հակիրճ, բայց դիպուկ ու հետաքրքիր ձեւով լուսաբանում է ինչպէս մարդի վարչական շրջանների, այնպէս էլ դրանց սահմաններում գտնուող բոլոր բնակավայրերի բնական, պատմական, դեմոգրաֆիական, սոցիալ-տնտեսական պատկերը»։

Ասկերանի, Մարտակերտի, Մարտունիի, Հադրութի եւ Շուշիի շրջաններուն մաս կազմող աւաններն ու գիւղերը կը ներկայացուին խիտ, բայց ամբողջական գիծերով՝ իբրեւ պատմութիւն, մշակութային-տնտեսական արժէք, բնութիւն, կլիմայ, մարդկային-կենդանական եւ բուսական կեանք, բարքեր ու նկարագիր, պարզ խօսքով՝ փաստացի տուեալներով եւ թուականներով ներկայացող իրրեւ ամբողջական պատմութիւն, որուն «բազմակողմանի տուեալների արժէքը մեր այժմեան ու հետագայ պատմութեան համար դժուար է գնահատել», ինչպէս կ'ընդգծէ հատորին գրախօսը։

Սերգէյ Մելքումեանի 303 էջեր հաշուող «Լեռնային Ղարաբաղ» աշխատասիրութիւնը, որ նաեւ հարստացած է ընթերցողը կողմնորոշող գունաւոր լուսանկարներու պատճէններով, կը փակուի «Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլիմներն ու ուղիները» վերլուծական աշխատասիրութեամբ, որ եօթանասուն տարուայ համազգային ողբերգութեան պատճառները, կամայական որոշումները, հարցերն ու տագնապը հանգրուան առ հանգրուան քննարկելով՝ կանգ կ'առնէ Փետրուարեան Շարժման փուլերուն, համայն հայ ժողովուրդի ակնկալութիւններուն եւ յուսախաբութիւններուն վրայ, յանգելու համար ա՛յն եզրակացութեան, ըստ որում՝

«Արցախ-Ղարաբաղ աշխարհի վերամիաւորումը Մայր Հայաստանին յիրաւի նոր դարաշրջան է բացում հազարամեակների պատմութիւն ունեցող հայ ժողովրդի հետագայ ճակատագրի համար»։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ՀԳ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ)

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիան 1988ին հրատարակեց «Լեռնային Ղարաբաղ» անուն հատորը, «Պատմական տեղեկութիւններ» ենթախորագրով։ Միութենական եւ ռուսերէնի տիրապետող ընթերցողներուն համար նախատեսուած այս գործը խմբագրած են խումբ մը ակադեմական մասնագէտներ, Գ. Գալոյեանի ղեկավարութեամբ։ Գ. Գալոյեան, Գ. Սարգսեան, Վ. Բարխուդարեան, Վ. Խոջաբեկեան, Հ. Սիմոնեան, Կ. Խուդավերդեան, Լ. Խուրշուդեան, Վ. Միքայէլեան, Գ. Մուրադեան եւ Բարսեղով, որոնք պատրաստած են «Լեռնային Ղարաբաղ» հատորը կազմած ուսումնասիրութիւնները, յունահռոմէական պատմիչներ Ստրաբոնի, Պլինիոս Աւագի, Պտղոմէոսի, Պլուտարքոսի եւ Դոն Կասիոսի, հայ պատմիչներ Ագաթանգեղոսի, Մովսէս Խորենացիի, Կաղանկատուացիի, Ուռհայեցիի եւ հայ, յոյն, հռոմէացի եւ այլազգի պատմագիրներու ուսումնասիրութիւնները, վկայութիւնները, հիմնաւորումներն ու փաստերը օգտագործելով կ'ընդգծեն ա՛յն ճշմարտութիւնը, որ հնագոյն ժամանակներէն մինչեւ օրս Ղարաբաղի ազգաբնակչութեան մէջ հայ բնիկները ջախջախիչ մեծամասնութիւն եղած են։ Այսպէսով, անոնք ո՛չ միայն կը հերքեն պատմութիւնը նենգափոխել նկրտող ագերի «ակադեմիկոսներ»ուն հայ բնիկները իբրեւ ջարդերէ փախած ելեւոյներ ներկայացնելու ծրագ-

digitised by A.R.A.R.@

բրած ու հետաքրքրական պատմագիտական նյութերով կը հատուցանեն, որ դարձեալ չարաբաստիկ Արցախ աշխարհի կեդրոնը հանդիսացած այս փոքրիկ հոգատարածքին վրայ դրսի թիւն ունեցած եւ զարգացած է հայկական եղակի բազաբակրիտութիւն, որուն ամենուրեք վկայութիւնները կը հանդիսանան հայ ժողովուրդի պատմութեան ու մշակոյթի նիւթական եւ հոգեւոր նուաճումները:

Ըստ «Աշխարհացոյց»ի Արցախը եղած է Պատմական Հայաստանի 15 աշխարհներէն մէկը, որ կը տարածուէր Կուր եւ Արաքս գետերուն միջեւ՝ Սիւնիքէն արեւելք: Անիկա երբեմն կոչուած է Փոքր Սիւնիք: Արաշէսեան եւ Արշակունիներու հարստութեան շրջանին, Արցախը մաս կը կազմէր հայկական պետութեան, իսկ 387ին, բաժնուելէն ետք, Սասանեանները զայն ժամանակաւորապէս կցեցին Ատրպատականի մարզպանութեան: Թ.–ԺԴ. դարերուն, Արցախի մէջ, որ այդ շրջանին ծանօթ էր Խաչէն անուամբ (ասիկին Արցախի մէկ մասը), կային 14 հայկական իշխանութիւններ, որոնք պարսիկ շահերու կողմէ ժե. դարուն ներքին իրաւունքներ ստացան: Անոնցմէ յատկապէս յայտնի են Ղարաբագի Խամսայի ժելիքութիւնները՝ Դիզակայի, Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի եւ Դիզակի: Մելիքութիւնները պատմութեան ընթացքին ժԸ. դարու երկրորդ կիսուն:

1813ի Գիւլիստանի պայմանագրով Իւսուսատանին կցուեցան Արեւելահայաստանի հիւսիս-արեւելեան շրջանները, ինչպէս նաեւ՝ Դանձակի եւ Ղարաբագի խանութիւնները, իսկ 1828ին, Թիւրքմենչայի պայմանագրով՝ Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները: 1867ին Նախիջեւանը մեծացուեցաւ Երեւանի նահանգին, իսկ Վեռնային Ղարաբաղ՝ Եկատերինոսլաւի: Վարչատարածքային այս բաժանումը պահպանուեցաւ մինչեւ 1917:

Պատմական վերնշեալ տուեալները փաստերով եւ դիտական բծախնդրութեամբ ներկայացնող ուսումնասիրութիւնները նաեւ կը ներկայացնեն Արցախ-Խաչէնի (Ղարաբաղ) ազգագրական կազմը, իսկ ամփոփ գիծերով՝ Վեռնային Ղարաբաղի 4400 քառ. քիլոմէթրի տարածքին վրայ գտնուող պատմական ու մշակութային հայկական կոթողները, անոնց անմիջաբար եւ ապատնայրի ոսկի գտնուող ճակատագիրը, ծագրուած քանդումները, ակամահարու մնացորդները, եւ այլն:

«Վեռնային Ղարաբաղ» հատորի էջերուն նաեւ անդ գտած են պատմական ու պատմական արժէք ներկայացնող փաստաթուղթերուն, համաժամանակագրութիւններուն եւ որոշումներուն, որոնք աւելի եւս կը լուսաբանեն Ղարաբաղեան Պահանջատիրական Շարժման կուրծքը:

ԱՐՑԱԽ–ՂԱՐԱԲԱՂԸ՝ ԻՐ ԱՆՑԵԱԼՈՎ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՎ

(ՀԵՂԻՆԱԿ՝ ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ)

Հ. Ս. Դաշնակցութեան «Յեղափոխական գրադարան»էն, 1988ին, Աթէնքի մէջ լոյս տեսաւ ծանօթ մտաւորական Լեւոն Մկրտչեանի «Արցախ–Ղարաբաղը՝ իր անցեալով եւ ներկայով» հատորը, որուն առաջին 64 էջերը կը գրաւեն Արցախի համառօտ պատմութիւնը՝ Ք.Ա. վեցերորդ դարէն մինչեւ 1988 Փետրուար:

Փետրուարեան համաժողովրդային Շարժման նախապատմութեան վրայ հպանցիկ ակնարկ մը նետելէ ետք, Լեւոն Մկրտչեան, առաջին հերթին, հանգամանորէն կ'անդրադառնայ խորհրդային եւ միջազգային տեղեկատուական միջոցներուն «միտումնաւոր ու ապակողմնորոշիչ արտայայտութիւններու» փաստին, յանդելու համար այն եզրակացութեան, որ պատմական դարաւոր անցեալ ունեցող եւ 1923էն ասդին միայն իբրեւ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» անունով պաշտօնապէս գոյութիւն ունեցող այս հայկական հողամասին պատմական հոլովոյթը պարզելու փոխարէն՝ հարցը ներկայաց-

digitised by A.R.A.R.@

ւեցաւ հայ քրիստոնեայ–մահմեդական ազգերի կրօնական գունաւորումով, ուշադրութիւնը պատմական ճշմարտութենէն չեղելու նպատակով։

Ազատեղեկատուական այս քաղաքականութեան հետապնդած նպատակներուն մերկացումը կատարելէ ետք, իր ուսումնասիրութեան երկրորդ բաժինով Լ. Մկրտչեան ամփոփ գիծերու մէջ կը ներկայացնէ պատմական Մեծ Հայքի մաս կազմած եւ աւելի քան 72 հազար քառ. քիլոմէթր տարածութիւն ունեցող Արցախի եւ Ուտիքի պատմութեան հոլովոյթը՝ երրորդ դարէն մինչեւ այս դարասկիզբի առաջին տարիները։ 12 էջերու վրայ երկարած երրորդ բաժինը ուսումնասիրութեան, պատմական փաստերով, լուսարձակի տակ կ'առնէ Ղարաբաղը իւրացնելու նպատակով ազգերի վարիչներուն վարած սպառնական քաղաքականութիւնը՝ Ռուսական յեղափոխութենէն մինչեւ Ադրբէջանի խորհրդայնացում (1917 Փետրուար – 1920 Օգոստոս)։

Ղարաբաղի հայութեան դարաւոր գոյամարտը, ներկայացուցչական համագումարները, ազերիական ծաւալապաշտ քաղաքականութիւնը եւ յարակից մարտամանութիւններ կէտ առ կէտ պարզաբանելով՝ չորրորդ բաժինով հեղինակը կը ներկայացնէ Հայաստանի խորհրդայնացման (29 Նոյեմբեր 1920) յաջորդած վերիվայրումները, որ կը սկսի Նախիջեւանը, Զանգեզուրը եւ Ղարաբաղը պաշտօնապէս Հայաստանի մաս կազմող շրջաններ յայտարարող Նարիմանովի հանրածանօթ յայտարարագիրով, կ'անցնի 16 Մայիս 1921էն Մոսկուայի մէջ ստորագրուած թուրքեւխորհրդային համաձայնագրութեան հետեւանքներուն, ազերիական իրերայաջորդ սադրանքներուն եւ կ'աւարտի 7 Յուլիս 1923ի դեկրետով «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» ստեղծելու եւ զայն Ադրբէջանի կազմին մէջ պահելու ստալինեան դաւադրութեամբ։

Խորհրդային կեդրոնական իշխանութեան բացայայտ օրհնութեամբ Բաքուի վարիչներուն վարած հակահայ հետեւողական քաղաքականութիւնը, պատմական սխալը սրբագրել տալու նպատակով վերջին 70 տարիներուն կարգ մը համայնավար հայերու որոնած լուծման ուղիները եւ 1960էն ասդին ծայր տուած շրջանի կացութիւնը բարելաւելու փորձերը, դիմումները, հաւաքական նամակներն ու բողոքները սեղմ գիծերու մէջ կը ներկայացուին



նախավերջին մասով։ Ապա, Լեւոն Մկրտչեան կ'անցնի Ղարաբաղը եւ հայկական միւս երկրամասերը Ադրբէջանի հանրապետութեան կազմին մէջ պահելու հեռանկարներու քննարկման աշխատանքին։ Թիւերով ու անվիճելի փաստերով ընդգծելէ ետք շրջանի հայութեան ապրած ազգագրական, մշակութային, քաղաքական եւ հոգեբանական ահաւոր կորուստները, ճնշումները, հալածանքները, սահմանափակումներն ու ջարդերը, Լ. Մկրտչեան կ'ընդգծէ պատմական այն ճշմարտութիւնը, «թէ ինչու անսպասելի չէր 1988ի փետրուարեան ընդվզումը, որը պայմանաւորուած է առարկայական ու ենթակայական այլեւայլ հանգամանքներով, պատմութիւնից ժառանգութիւն ստացուած թելադրանքներով եւ այսօրուայ կացութիւնը արմատապէս շրջելու անխորտակ կամքով»։

Հայերէնով, անգլերէնով եւ ֆրանսերէնով լոյս տեսած այս գիրքը կը փակուի «Արցախեան ընաշխարհ ու մշակոյթ» պատկերներու շարքով, որ 14 գունաւոր եւ 16 սեւ–ճերմակ լուսանկարներու պատճէններով կը ներկայացնէ Արցախ բնաշխարհն ու իր պատմական եւ մշակութային կոթողները։

digitised by A.R.A.R.@

«ԲԱԳԻՆ»Ի 1989Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Վ. ԴԱՒԹԵԱՆ	Ճակատագիր	1–2
Ժ. Ս. ՑԱԿՈԲԵԱՆ	Եղերերգ մեռեալ քաղաքի	1–2
ՄԵՏԱՔՍԷ	Մէկ է, մենք կ'ապրե՛նք	1–2
Գ. ԷՄԻՆ	Հայաստանի հրեշտակը	1–2
Լ. ԴՈՒՐԵԱՆ	Դու անխիղճ, անխիղճ	1–2
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Երկրաշարժ	1–2
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տեսիլ յայտնութենական	1–2
» »	Տեսլապաշտ ցանկութեամբ	5–6
» »	Նահատակներ Սումգայիթի	7–12
Հ. ՄՈՒՐԱԴԵԱՆ	Լսում եմ ձայներ	1–2
Դ. ՑՈՎՀԱՆՆԷՍ	Ի խորոց սրտի	1–2
Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	7 Դեկտեմբերի 1988	1–2
Ա. ՍԱՀԱԿԵԱՆ	Դիմացիր, ժողովուրդ	1–2
Շ. ԱԶՆԱՒՈՒՐ	Քեզի համար, Հայաստան	1–2
C. AZNAVOUR	Pour toi, Arménie	1–2
» »	For you, Armenia	1–2
Տ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Բանաստեղծութիւններ	3–4
» »	Կոպիտ պոեզիա — Թղթէ վարդ	3–4
» »	Մեղրէ վնաս	3–4
» »	Տօնն անցաւ	3–4
» »	Օրը կապոյտ է	3–4
» »	Առաւօտ	3–4
Ա. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ	Սիրաշաբթի	3–4
» »	Ալլէ՛... հոպ	3–4

digitised by A.R.A.R.@

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
ՎԱՋԳԷՆ Ա. ԵՒ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Հ.Ց.Դ. ԲԻՒՐՕ ԵՒ	Կոչ մեր ժողովուրդին	1-2
Ռ.Ա.Կ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ	Կոչ հայ ժողովուրդին	1-2
Հ.Ց.Դ. ԲԻՒՐՕ	Կոչ Սփիւռքի հայութեան	1-2
Ս. ԽԱՆՋԱԴԵԱՆ	Անկոտրում է մեր հաւատը	1-2
» »	Արիւնոտ վարագոյրը դեռ չի պատռուել	7-12
ՀՐ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Խօսք ցաւի եւ առնականութեան	1-2
Մ. ՍԱՐԳՍԵԱՆ	Կանգնի՛ր, ինչպէս լոյս լեռն է մեր կանգուն	1-2
Պ. ՋԷՑԹՈՒՆՑԵԱՆ	Տոկա՛, երկիր, ի՞նչ վերնագիր ինչո՞ւ վերնագիր	1-2
Ց. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Դիմացիր, ազգ իմ	1-2
ՀՐ. ԹԱՄՐԱԶԵԱՆ	Սուրբ է քո ուղին	1-2
Կ. ՍՈՒՐԷՆԵԱՆ	Բիբլիական աղէտ, բիբլիական յոյս	1-2
» »	Կը գայ ժամանակը	7-12
Ս. ՍԱՐԳՍԵԱՆ	Հայոց վիշտը անհուն «մի ծով»	1-2
Գ. ԱՆԱՆԵԱՆ	Ցաւը սեղմենք մեր կոկորդներում եւ... ապրենք	1-2
Գ. ԱՐՇԱԿԵԱՆ	Խաչերն աւելացան մեր հողում	1-2
Կ. ՍԻՄՈՆԵԱՆ	Մեր ցաւը, տառապանքն ու յոյսը	1-2
Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Հողը յիշում է իր տիրոջ	1-2
» »	Արցախեան քրոնիկոն (Ա.)	7-12
ՎԱՋԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Թէեւ բոլորս բացատրելի կերպով	1-2
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Ես եկայ ու տեսայ	1-2
» » »	Հայ գիրքը՝ այգեստանն հայուն	7-12
Գ. ԽԱՆՋԵԱՆ	Մեռածները հրամայում են ապրել	1-2
» »	Խիղճը՝ առաջնորդ եւ զօրավիգ	1-2
Մ. ՆԵՍՏԵՐՉՈՒԿ	Ցաւը՛դ տանեմ, Հայաստան	1-2
Վ. ՍԱՆԹՐԵԱՆ	«Ես գլուխ եմ խոնարհում տաղանդաւոր հայ ժողովրդի առջեւ»	1-2
Մ. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Փակ աչքերով այցի գամ քեզ	1-2
Հ. ԽԱՉԱՏՐԵԱՆ	Դիմանալ, տոկալ	1-2
Ն. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Լոյսի շող մը	1-2
Ի. ՄԱՄԵԱՆ	Խօսք ցաւի եւ առնականութեան	1-2
Ց. ՁԵՓԻՋԵԱՆ	Նորից գօտեմարտ է	1-2
Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ	Ցարատեւելու ճամբան դու լաւ գիտես	1-2
Ա. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ	Լենինական, Լենինական	1-2
Ռ. ՇԱՌՈՑԵԱՆ	Զծնուածների պահանջով	1-2

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Հ. ՏՕՆՈՑԵԱՆ	Բանաստեղծութիւններ	3–4
Ե. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Մի նշխարք խունկ՝ երկրաշարժին զոհ գնացած գրչակից ընկերներիս շիրիմներին	3–4
Հ. ՍԱՀԵԱՆ	Նորից եկել	3–4
Շ. ԱԶՆԱՒՈՒՐ	Քաղաքից քաղաք (Թարգմ. Ս. Ցարուբիւնեան)	3–4
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Կը լռեմ վէրքը քարին	3–4
Մ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Ձամբ քար	3–4
» »	Արաքսի հետ	3–4
» »	Դաշոյն	3–4
» »	Պատմութիւն ու խս	3–4
Վ. ՕՇԱԿԱՆ	Ինքնութիւն	5–6
Ա. ԹԵՐԶԵԱՆ	Սերմնացանները	5–6
Ս. ՎԵՐՄԻՇԵՒԱ	Սումգայիթ	5–6
Ի. ՄԱՄԵԱՆ	Պ. Վահարզադէին ի պատասխան՝ (նրա «Հողից բաժին չեն տայ» գազրախօսութեանը)	7–12
Փ. ԱՆԹԱՊԵԱՆ	Ի՞նչ էք ուզում իմ ժողովրդից	7–12
Ե. ՁԱՐԵՆՑ	Խորհրդային Ադրբեջանին	7–12
Գ. ՍԱՐԵԱՆ	Ադրբեջան	7–12
Մ. ԴՈՒԴԻՆ	Մերթ սեւ եղեռն, մերթ Սումգայիթ (Թարգմ. Ի. Մամեան)	7–12
» »	Կրկնուող յիշողութիւն (Թարգմ. Ն. Պետրոսեան)	7–12
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Արձանները	7–12
Վ. ԲԱԲԱՑԵԱՆ	Բանաստեղծութիւններ	7–12

ԱՐՁԱԿ

Պ. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Անսովոր լռութիւն	3–4
» »	«Կարմիր մամուռ»	3–4
» »	Նոր կատարածուն	3–4
Ե. ՏԵՄԻՐՃԵԱՆ	Հայաստանի մէջ	3–4
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Իմ արահետով	5–6
Գ. ԱԲԷԼԵԱՆ	Անմա հարսը	5–6
» »	Անմա հարսը	7–12
Ժ. ԺԻՐՈՏՈՒ	Տրովադայի պատերազմը տեղի պիտի չունենայ	5–6
» »	Տրովադայի պատերազմը տեղի պիտի չունենայ	7–12

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Հ. ՍԱՀԵԱՆ	Մենք մերն ենք լինելու	1–2
ՀԳՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ	Պ. Ղուկասեան, Տ. Յովհաննիսեան Վ. Մովսիսեան	3–4
Վ. ԴԱՒԹԵԱՆ	Բարի ճանապարհ	3–4
» »	Տանիա Յովհաննիսեան	3–4
» »	Արարատ Մկրտումեան	3–4
» »	Բաց նամակ՝ Եւգենի Եւտուշենկոյին	7–12
Ա. ՇԷԿՈՅԵԱՆ	Թռիչքներ երազում եւ արթմնի	3–4
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Ճակատագրական ճամբարաժան	3–4
Ս. ՍԱՐԻՆԵԱՆ	Գրական նոր սերունդի դիմանկարը	3–4
Հ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ	Էլի գարուն կը գայ	3–4
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՆ ԵՒ...»	Ապրել, բանի մի ափաչափ հող կայ	3–4
Շ. ԱԶՆԱՒՈՒՐ	Հայրենիքիս յիշատակները (Թարգմ. Գ. Ջանիկեան)	3–4
Վ. ՄԵԼԻՔՍԷԹԵԱՆ	Զրոյց՝ Հենրիկ Մալեանի հետ	3–4
Գ. ԱԲԱՋԵԱՆ	Ի խորոց սրտի	3–4
» »	Դարի բանաստեղծը	5–6
Գ. ՋԱՆԻԿԵԱՆ	Հրանտ Հրահան	3–4
» »	Դարձ հայրենիք	7–12
ՀՐ. ՂԱՓԼԱՆԵԱՆ	Պետք է բարձրացնել չափանիշները	3–4
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ	Յովսէփ Թադեւոսեանի նամակը Սիմէոն Յակոբեանին	3–4
ԷԴ. ՋՐԲԱՇԵԱՆ	20րդ դարու հայ գրականութեան ազգային իւրայատկութեան մասին	3–4
Ա. ՅԱԿՈԲԵԱՆ	Սառոյցի տակ էլ գետը հոսում է	5–6
Ա. ԱԼԻՔԵԱՆ	Կարմիր ագիտացիայի եւ ապիտակ ակացիայի մասին	5–6
«ՆԱՅԻՐԻ»	Վերջին զոհը (ընկեր Անդրանիկ Թերզեան)	5–6
Գ. ԱՐՇԱԿԵԱՆ	«Օրը սեւ ամպ կը պտտէ մեր գլխին»	5–6
«ԱՆ-ՆԱԳԷՏ»	Արաբական արդի բանաստեղծութեան տագնապը	5–6
» »	» » »	7–12
Բ. ԿՌԱՆԵԱՆ	Բիւզանդ Կոնտամանեանի արուեստը	5–6
Ա. ՓՈՂԻՆԵԱՆ	Հայրենիքը փշալարի մէջ	7–12
Ա. ԱԻԱԳԵԱՆ	Ցիշելը մեր խղճի պարտքն է	7–12
Ս. ԹՈՒՌԵԱՆ	Խղճի թելադրանքով	7–12
Տ. ԹԱՂԱՏՐԵԱՆ	1949 թուականի Յունիսի 14ի սահմոկեցուցիչ գիշերը	7–12
Ռ. ՓԱՄԱԼԵԱՆ	Աքսորի՝ տարբերակը	7–12
Հ. ՓԵՆԴԵՐԵԱՆ	1949ի աքսորը եւ 1989ի արտագաղթը	7–12
Ն. ԱԴԱԼԵԱՆ	1949 թուականի երկար գիշերը	7–12
Ս. ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ	Հատուցման շեմին	7–12
Տ. ԹԱՄԱԼԵԱՆ	Բաց նամակ Երեւանից	7–12
Գ. ԷՄԻՆ	Ինքնակամութեան դամբանոցով	7–12

digitised by ARA

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Վ. ԳԷՈՐԳԵԱՆ	* * *(Ապրիլի 20ին)	7–12
Լ. ԱԶՐՈՑԵԱՆ ԵՒ Զ. ԲԱԼԳԵՌԶԵԱՆ	Սումգայիթի ստուերը	7–12
Ռ. ԴԱՒՈՑԵԱՆ	Արդարութեան ճանապարհին	7–12

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

• Երկրաշարժի մասին
— ԶՕՐԻ ԲԱԼԱՑԵԱՆ 1–2

• Հայրենադարձներու ոդիսականին մասին
— ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ .. 5–6

• Ռուս գրողներ Սումգայիթի մասին
— ՎԵՆԻԱՄԻՆ ԿԱՒԵՐԻՆ, ՄԻԽԱՅԻԼ ԴՈՒԴԻՆ 7–12

• Սումգայիթի մասին
— ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ, ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼԻՏՈՆԵԱՆ, ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ ԽԶՄԱԼԵԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 7–12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ցաւը մերն է, ու ցաւէն վեր՝ մեզի եզբ 1–2
Քեզի համար, Հայաստան 1–2
Շարլ Ազնաւուրի ճախաձեռնութիւնը՝ «Քեզի համար, Հայաստան» 1–2
Ռոսթրոփովիչ՝ ի նպաստ Հայաստանի 1–2
Եւ այլ լուրեր 1–2
Դեհ, ե՞կ, ընթերցող ու մի խենթանայ 3–4
Շարլ Ազնաւուր 3–4
Ժան Ժիրոտու 5–6
Բարձրացող վարագոյրներու ետին 5–6
Պատմութեան ամփոփումը 5–6
Ճշմարտութեան լոյսով 5–6
Թուականներու յաճախանիշը 7–12
Ոճրագործ երէշներ 7–12
Ադրբեջանի մասին 7–12

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

3–4, 5–6, 7–12

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Contes Arméniens (*Chaké Der Melkonian-Minassian*) 3–4
«Բերքահաւաք — Բ. հատոր» (*Վահէ-Վահեան*) 3–4
«Երկեր» (*Յակոբ Մնձուրի*) 3–4
«Միացեալ, անկախ Թուրանիա» (*Զարեւանդ*) 7–12
«Գրական-պատմական վերլուծական էջեր» (*Եդուարդ Տասնապետեան*) 7–12

«ԲԱԳԻՆ»Ի 1990Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Ա. ՇԷԿՈՅԵԱՆ	Բախտ	1–2
» »	Ամարաս	9–12
» »	Արցախ	9–12
» »	Արցախեան ձմեռ	9–12
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Աստղանիշ	1–2
» »	Մէջբերում	1–2
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Անձկութեան ժամեր	1–2
» »	Պարզ քաղաքացիի մը առօրեայ երգերէն	5–6
Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ	Մոռցուած բանաստեղծի մը շիրիմին առջեւ	1–2
Թ. ԲՈԼՈՐՋԵԱՆ	Բանաստեղծութիւններ	1–2
Մ. ՅԱԿՈԲԵԱՆ	Մի սիրտ է միայն	1–2
ՋԱԻԱԽԵՑԻ	Բրուտի թագին	1–2
Ա. ԽՆԿՈՅԵԱՆ	Արմատներն ու տերեւները	1–2

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ	Առակ	1-2
Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Առիւծն ու արջուկը	1-2
» »	Աւանակին ուղեղը	1-2
Ց. ՇԻՐԱԶ	Մարգարիտն ու փրփուրը	1-2
» »	Վիշտը	1-2
Ա. ԱՐՄԱՆ	Անդրանիկ Թերզեանի հետ	3-4
Պ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	Թեհլիրեանի փողոցում	3-4
Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Երազանք	3-4
» »	Սով	3-4
» »	Ցոլում	3-4
» »	Լուսնային	3-4
» »	Իրգ	3-4
» »	Սփիւռք	3-4
» »	Նուիրուած Աստուծոյ	3-4
» »	Տաղաւար	3-4
» »	Այսօր	3-4
» »	Նուագներ	3-4
» »	Ծաղիկ	3-4
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Ոգեկոչում	3-4
» »	Որոնում	3-4
» »	Սպասում	3-4
» »	Մենութիւն	3-4
» »	Երբ նայուածքդ	3-4
» »	Պատկեր	3-4
» »	Ամայի՜, անլո՜յս, անձա՜յն	3-4
ՎԱՐԱՆԴ	Ցովհաննու — 14	3-4
» »	Արցախ — 88	9-12
Ա. ԴԱՐԲՆԻ	Քծնողի կոշտուկը	3-4
» »	Դրախտային պղպեղը	3-4
» »	Սիրահարուած քնանդատը եւ սոխակը	3-4
» »	Արջի ընտրութիւնը	3-4
» »	Կրիայի անոնիմները	5-6
» »	Մանկաւիկը	5-6
» »	Ֆորմալիստ կաչաղակը	5-6
» »	Առակի քնարկումը	5-6
ՄԱՐՈՒՇ	Պատարագ	5-6
» »	Եւ դարձ	5-6
» »	Աստղիկ առ Վահագն	5-6
» »	Նուիրում	5-6
Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Անանուն կղզին	7-8
» »	Կարիք	7-8
» »	Աղքատի տարին	7-8
» »	Ելից	7-8
Վ. ԲԱԲԱՅԵԱՆ	Բանաստեղծութիւններ	7-8
Փ. ՁԵՐԱՆԵԱՆ	Ծառ անապատական	7-8

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՎ
Ց. ՇԻՐԱԶ	Ղարաբաղի Ողբը	9–12
Հ. ՍԱՀԵԱՆ	Ծառս ես լինում	9–12
» »	*** (Ուզում եմ կորչել...)	9–12
Ց. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	Արցախեան երգեր	9–12
Ժ. Ս. ՑԱԿՈԲԵԱՆ	Բռունցնե՛րը ղարաբաղեան	9–12
Ռ. ԴԱՒՈՑԵԱՆ	Ղարաբաղ	9–12
Վ. ԴԱՒԹԵԱՆ	Իմ հարեւաններին	9–12
Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ	Երկխօսութիւն իմ ու իմ միջեւ	9–12
Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Փետրուարեան օրեր — 1988	9–12
Ց. ՄՈՒՍԱՑԷԼԵԱՆ	Ղարաբաղ	9–12
Դ. ՑՈՎՀԱՆՆԷՍ	Արցախականք	9–12
Կ. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ	Արցախ	9–12
Մ. ՍԱՐԳՍԵԱՆ	Արցախին	9–12
Վ. ՕՇԱԿԱՆ	Հոգեհանգիստ Արցախի զոհերուն	9–12
Մ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Զուարթ երգ	9–12
» »	*** (Օ՛, իմ լեռնաստան...)	9–12
» »	Լերմոնտովը Շուշիում	9–12
Ա. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Գիւղ Աւետարանոց (Արցախ)	9–12
Բ. ՋԱՆԵԱՆ	Իմ Արցախի հովիտներում	9–12
» »	Արցախեան երգեր քոնը մնացին	9–12
» »	Ղարաբաղիս հորովելը	9–12
Ա. ԳՐԱՇԻ	Ճամբաները Ղարաբաղի	9–12
» »	Քո Ղարաբաղի ժայռերի նման	9–12
» »	Իմ սրտի մէջ	9–12
» »	Քո գիրկն եմ գալիս	9–12
» »	Ղարաբաղ	9–12
» »	Արի գնանք Ղարաբաղ	9–12
» »	*** (Թափառական քո գուսանն եմ...)	9–12
» »	Երգ պատի մասին	9–12
» »	*** (Միծեռնակն իմ սրնգով)	9–12
» »	*** (Ու՛ր էլ, ես գնամ...)	9–12
Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ	Ղարաբաղ	9–12
Ա. ՍԱՐԳՍԵԱՆ	Ամարաս	9–12
» »	Հայրենի Արցախ	9–12
Վ. ՑԱԿՈԲԵԱՆ	Մեսրոպ Մաշտոցն Ամարասում	9–12
ՀՐ. ԲԵԳԼԱՐԵԱՆ	Մեր համբերութիւնը	9–12
» »	Հայկեան նետը	9–12
» »	Ղարաբաղցին	9–12
Ռ. ԵՍԱՑԵԱՆ	Արցախ	9–12
Է. ԵՍԱՑԵԱՆ	Դրանով եմ ես միշտ եպարտ...	9–12
» »	*** (Իմ մէջ կարօտների...)	9–12
ՀՐ. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ	Ի լուր ամենեցուն	9–12
Ա. ՎԵՇՈՒՆԻ	Ազրբայջան	9–12
ՍԱՐՄԵՆ	Էքսպրոմտ	9–12
Օ. ՍԱՐԻԼԵԼԻ	Երեք լեռ	

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
	(Թարգմ. Վլ. Աբրահամեան)	9–12
Բ. ՎԱՀԱԲԶԱԴԷ	Հոգից բաժին չեն տայ	9–12
Ի. ՄԻՔԱՑԷԼԵԱՆ	Ես ծնուել եմ նրա լոյսից	9–12
Կ. ՓԵՐՈԲԵԱՆ	Արցախ	9–12
Ս. ՄՈՒՐԱԴԵԱՆ	Թթենի	9–12
ԵՐ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Արցախ	9–12
Դ. ՄԻՔԱՑԷԼԵԱՆ	Թթենի	9–12
Ա. ԴԱՆԻԷԼԵԱՆ	Իմ Արցախ աշխարհ	9–12
Ն. ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ	Արցախակաճչ	9–12
Գ. ՕՀԱՆԵԱՆ	Բերդասար	9–12
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Ղաբաբաղցի մի աղջկայ	9–12
Ա. ՍԱՐԻՆԵԱՆ	Եթէ պիտի մեռնես	9–12
Թ. ԱՀԱՐՈՆԵԱՆ	*** (Հանդիպեցիր երէկ դու ինձ...)	9–12
Ց. ԴԱՐԵԱՆ	Հացադուլի եւ նստացոյցի մասնակիցներին	9–12
Ն. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	Դու յաւերժութեան երկունքի ես, Արցախ	9–12
Գ. ԷՄԻՆ	Ու՞ր ես, Ռուսաստան	9–12

ԱՐՁԱԿ

Պ. ՍՆԱՊԵԱՆ	Ձին	1–2
Գ. ԱԲԷԼԵԱՆ	Անմա հարսը	1–2
» »	» »	3–4
» »	» »	5–6
» »	» »	7–8
Ժ. ԺԻՐՈՏՈՒ	Տրովադայի պատերազմը տեղի պիտի չունենայ	1–2
» »	» » »	3–4
» »	» » »	5–6
» »	» » »	7–8
Ա. ԵԱՌՈՒԿԵԱՆ	Հիւանդանոց	1–2
» »	Հին երազներ, նոր ճամբաներ	3–4
Ռ. ՑԻԼԵԱՆ	Հեքիաթ՝ անծանօթ ինքնակենսագրութիւն	3–4
Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Հայաստանասէրներ	5–6
» »	» » »	7–8
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Հրաշք Տաթեւի	7–8
ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ	Ո՞վ է ապրում	7–8
Գ. ՄԱՀԱՐԻ	Անդամ-բաբադան Հայաստան է	9–12
Լ. ՀՈՒՐՈՒՆՑ	Պատասխան տուր ինձ	9–12

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ ԽՈՐԱԳԻՐ ԹԻՒ

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ	Հայաստանի — եւ Սփիւռքի — նոր բանաստեղծներուն	1–2
Բ. ԵՂԻԱՑԵԱՆ	Առակը գրականութեան մէջ	1–2
» »	» » »	3–4
» »	» » »	5–6
«ԱՆ-ՆԱԳԷՏ»	Արաբական արդի բանաստեղծութեան տագնապը	1–2
Զ. ԳՈՂԱԲԶԵԱՆ	Նահատակների մեծագոյն յուշարձանը վերածնուած Հայաստանն է	3–4
» »	Սփիւռքահայութեան ներկայացուցիչներու ժողովը	3–4
Գ. ՄԱՀԱՐԻ	Ա. Արմանի «Հայրենիքի եւ սիրոյ» երգերը	3–4
Հ. ՍԵՒԱՆ	Բանաստեղծն ու թարգմանիչը	3–4
Ս. ԱՑՎԱԶԵԱՆ	Կոմպոզիցիայի հարցը	3–4
Վ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ	Արտօ Զաքմաքչեանի «Կոմիտաս»ը	3–4
Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ	Արտօ Զաքմաքչեան	3–4
Վ. ԼԱԳՐՈՒՇ	«Մեղադրում է Հերոսիման»	3–4
Ց. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Վարանդի «Մեղքի վարդեր»ը	3–4
Ռ. ՑՈՎՍԷՓԵԱՆ	Լոյս՝ հեռաւոր ու մօտ, այսօր ու վաղը ստեղծուող պատմութեան (Ա.)	5–6
» »	» » »(Բ.)	9–12
ՀՐ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Վերակառուցման անխորտակելի ոգին	5–6
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Ինքնաճանաչման բարդութիւնը	5–6
Ց. ՄԵԼՔՈՆԵԱՆ	Դիմանալ նաեւ լաւ ժամանակին	5–6
Ա. ՍԱՀԱԿԵԱՆ	Մի՛ խաբուէք	5–6
Կ. ՍԻՄՈՆԵԱՆ	Նահանջի ճանապարհ չկայ	5–6
Պ. ՋԷՑԹՈՒՆՑԵԱՆ	Մի՛ վախեցէք ճշմարտութիւնից	5–6
Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ	Զրօսանքի պահ մը հայ լեզուի մրգաստանին մէջ	7–8
Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ	Աւետիս Ահարոնեանի մի նամակը	7–8
Լ. ԿԷՐԿԷՐԵԱՆ	Օսքար Ուայլտ եւ գեղեցիկը	7–8
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Բաց նամակ արտասահմանի հայ մտաւորականութեան, եթէ ողջ է դեռ	7–8
Վ. ԹԷՓԷԵԱՆ	Խնդրագիր անոնց համար	7–8
ՎԱՋԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ	* * * (...Փետրուարի վերջերին)	9–12
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Հայրապետական խօսք՝ հայ ժողովուրդին	9–12
Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ	Ղարաբաղ = Արցախ	9–12
Գ. ՋԱՆԻԿԵԱՆ	Նահատակի փշեպսակը	9–12
Ե. ՍԱՐԳՍԵԱՆ	Մօտ անցեալի եհտոբերով	9–12

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Լ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ	Վարք Մեծաց	9–12
ԱՒԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ	Վարպետի յիշատակարանը	9–12
ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ	Ղարաբաղեան գրառումներ	9–12
Ի. ՄԱՄԵԱՆ	Մեզի մեր սարերն են	9–12
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ	Քարեղէն եւ ոգեղէն վկայութիւններ	9–12
Ս. ԹԱՆԶԱԴԵԱՆ	Սիրելի զաւակներս	9–12
Հ. ՄԱԼԵԱՆ	Այս օրերին ես լսեցի իմ ազգի ձիչը	9–12
Ա. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ	Արցախի հարցը	9–12
Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ	Արցախը եւ ազգային սուվերենութիւնը	9–12
Բ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ	Վերադարձ	9–12
Ց. ԿԱՐԱՊԵՆՑ	Ժամանակին տղաս աստղերն էր ուզում, իսկ հիմա՝ Ղարաբաղը	9–12
Ա. ՂԱԶԱՐԵԱՆ	Արցախցիներ	9–12
Հ. ՍԻՄՈՆԵԱՆ	Տագնապների եւ յոյսերի ժամանակը	9–12
Դ. ՄԻՒՔԱՑԷԼԵԱՆ	... Ու հայերէն կը զօղանչի օրը	9–12
Պ. ԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Արդար սպասումների հաւատով	9–12
Շ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Ցեղափոխութիւնից յեղափոխութիւն	9–12
Ռ. ԽԱՍԱՊԵՏԵԱՆ	Այրուելով սպառուեց	9–12
Վ. ԴՄԻՏՐԻԵՒՍԿԻ	Ղարաբաղեան սիմֆոնիա	9–12
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Հայրենի տունը կանչում է	9–12
Ա. ԱՂԱԲԱԲԵԱՆ	Բռունցք	9–12
Ս. ՍԱՐԻՆԵԱՆ	Ժան Անդրեանի յիշատակին	9–12
Ն. ԱՒԱԳԵԱՆ	Ղարաբաղ	9–12
» »	Անքնութիւն	9–12
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Արցախահայ մշակոյթի գրական ածուն	9–12
Զ. ԹԱԼԱՓԵԱՆ	Հաւասար ներարների քաղաքականութիւնը	9–12
Ա. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	«Ինքը՝ Աստուածը» եւ ես	9–12
Փ. ԱՂԱԽԱՆԵԱՆ	Սովետահայ գրողները Ադրբեջանի եւ ադրբեջանական ժողովրդի մասին	9–12
Թ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Կէօթէ եւ Հիդայաթ	9–12
Գ. ԱՂԱԶԱՆԵԱՆ	Բաց նամակ Բախտիար Վահաբզադեհ	9–12
Ռ. ԴԱՒՈՑԵԱՆ	Վտանգաւոր «առողջութեան» դիրքերից	9–12
Ռ. ԱՌԱՔԵԼԵԱՆ	Հիմա՞ էլ լռենք	9–12
Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ	Բաց նամակ Մ. Ս. Գորբաչովին	9–12
Ռ. ՄԱԴՈՑԵԱՆ	Լինենք միասնական եւ հաւատանք մեր գալիքին	9–12
Վ. ՍԱՆԹՐԵԱՆ	«Ճշմարտութիւնը հուժկու ձայն ունի»	9–12
Ա. ՍԱԽԱՐՈՎ	Նամակը	9–12
Ե. ԲՈՆՆԵՐ-ՍԱԽԱՐՈՎ	Կանխել հայերի երկրորդ ցեղասպանութիւնը	9–12
Բ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ	«Տեսայ գարնան ծաղկումը, երբ ամէն ինչ ուժ է հաւաքում...»	9–12
Ա. ՂԱԶԻԵԱՆ	Շուշի	9–12
ՀՐ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ	Հացադուլ	9–12

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ ԽՈՐԱԳԻՐ ԹԻՒ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

• Արուեստագէտներու ոդիսականին մասին 3–4
— ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ, ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԵԱՆ, ՆՈՐԻԿ ԼԵՒՈՆԵԱՆ, ՑՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

• Արցախի եւ Արցախեան շարժումի մասին 9–12

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆԵԱՆ, ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ, ԳՐ. ՑԱՐՈՒԹԻՒՆՈՎ, ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, ԶՕՐԻ ԲԱԼԱՑԵԱՆ, ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ, Մ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՀՐԱՉԵԱՑ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, ԱՌՊԵՐ ԵՐԵՒԱՆԼԻ, ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ, ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ, ՄԻԽԱՑԻԼ ԴՈՒԴԻՆ, «ԱՐՄԷՆՓՐԷՍ», ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ, ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ, ՇԱՀԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ, ԳԷՈՐԳ ԱՂԱԽԱՆԼԵԱՆ, Ս. ՎԱՐԴԱՆԵԱՆ, ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ, ՖԻՈԴՈՐ ԱԲՐԱՄՈՎ, ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ, ՍԵՐԳԷՑ ԲԱՐՈՒԶԴԻՆ, ԼԷՈՆԻԴ ՀՈՒՐՈՒՆՑ, ԱՋԱՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, ՍԵՐԳԷՑ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ, ՊԵՈՏՐ ԿՈՇԵԼ, ԵՂԻՇԷ ՍԱՐԳՍԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹԵԱՆ, Խ. ՍԱՃԱՐԵԱՆ, ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ, ԱՐՏԱՇԷՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ, ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ, ՌՈՒԶԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ, ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ, ՊԱՐՈՑՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ, ՄԱՔՍԻՄ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ԱՂԱՍԻ ԱՑՎԱԶԵԱՆ, ՌԱՒՍԱ ՊՕՂՈՍԵԱՆ, ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆ, ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ, ԳԷՈՐԳ ԱԲԳԱՐԵԱՆ, ԿԱՐԷՆ ՑՈՎԱԿԻՄԵԱՆ, Ա. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ, ԳԷՈՐԳ ԷՄԻՆ, ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԵԱՆ, ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ, ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ, ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԵԱՆ, ՌԱՑԱ ԽԱՍԱՊԵՏԵԱՆ, ԴԱՒԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ, ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿԵԱՆ, ԻԳՆԱՏ ՄԱՄԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ, ՄԵԼԻՔՍԵԹ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ժան Ժիրոտու 1–2
Մահ՝ Անդրանիկ Ծառուկեանի 1–2
Կսկծալի կորուստներ 3–4
Անհեթեթ փութկոտութիւններ 3–4
Ցարութիւն Փափազեան 3–4
Ժան Տէր Մերկերեան 3–4
Հայաստանասէրները 5–6
Վերստին յաւելուած 5–6
Ռուբէն Յովսէփեան 5–6
Արմէն Մարտիրոսեան 5–6
Կարէն Սիմոնեան 5–6
Պերճ Զէյթունցեան 5–6
Արեւմուտքէն Արեւելք 7–8
Խղճմտանքի մը ձայնը 7–8
Լրացուցիչ նոթեր 7–8
Արցախի ոգին 9–12

digitised by A.R.A.R.@

ՆՇՄԱՐՆԵՐ

Արիւնը արիւնէն 9– 12
Հարազատ–անհարազատ 9–12
Անադամ–բարդամ 9–12
Ամէնից աւելի 9–12
Նպաստընկալներու չտեսութիւնը 9–12
Էէոնիդ Հուրունց 9–12
Թաթար Ալիեւի թրքութիւնը 9–12
... եւ Անադաս Միկոյեանի թաթարութիւնը 9–12
«Գնացէք Ադրբեջան...» 9–12
Դժուար է դիմանալ... 9–12
Վշտունեան անհեթեթութիւն 9–12
Սարմենեան էքսպրոմտ 9–12
Օսման Սարիլելի 9–12
Միայն թէ... 9–12
«Արնաբաշ»ը եւ միւսները 9–12
«...Ստորաբար» 9–12
Մեծ ենգափոխներուն՝ պզտիկ կոչ մը 9–12
Հայազգի վիժուկը 9–12
Գորբաչովեան բարոյականութիւն... 9–12
Մեզի համար 9–12
Նա՛ւ հացադուլով... 9–12
Վտանգի տակ... 9–12
Ադրբեջանական գործօնը 9–12
Դուք անցուոր էք, մենք՝ տանտէր 9–12

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Գ. Նարեկացիի Աղօթամատեանը՝ արաբերէնով
(Թարգմ. *Հայր Ժորժ Ագրէ*) 3–4
Վ. Այգեկցիի «Աղուէսագիրք»ը՝ արաբերէնով
(Թարգմ. *Յակոբ Միքայէլեան*) 3–4
«Մուսա Լեռը եւ Մուսա լեռնցին» 3–4
«Սահմանավէճեր» (*Լէօ*) 3–4
«Քրիստափոր Միքայէլեան» (*Երուանդ Ֆրանգեան*) 5–6
«Գառգոս» (*Թորոս Թորանեան*) 5–6
«Հին արմատներէն նոր ընձիւղումներ» (*Գարեգին Բ. Կաթողիկոս*) 6–6
Ժողովուրդին հետ (*Արամ Արք. Քէշիշեան*) 7–8
«"Մարզիկ" պաշտօնաթերթի խմբագրականներ» 7–8
«Խանասորայ Վարդանի յիշատակարանը» (*«Կայծեր» մատենաշար*) 7–8

digitised by A.R.A.R.@

ՀԵՂԻՆԱԿ ԽՈՐԱԳԻՐ ԹԻՒ

ԱՐՑԱԽԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ. Մկրտչեանի *«Հայրենական ձայներ»*ը 9–12
*«Ասպարէզ»*ի *«Արցախեան տարեգրութիւն»*ը 9–12
Ս. Մելքումեանի *«Լեռնային Ղարաբաղ»* 9–12
ՀԳ Ակադեմիայի *«Լեռնային Ղարաբաղ»*ը 9–12
Լ. Մկրտչեանի *«Արցախ–Ղարաբաղը՝ իր անցեալով եւ ներկայով»* 9–12

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

1–2, 3–4,

digitised by A.R.A.R.@

ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Անտոն Քոչինեան / Բագրատ Ուլուբաբեան / Գր. Ցարուբիւնով / Վիկտոր Համբարձումեան / Ջորի Բալայեան / Վաչագան Գրիգորեան / Մ. Ա. Գասպարեան / Հրաչեայ Մաթեւոսեան / Աբպեր Երեւանլի / Համօ Սահեան / Սերօ Խանզադեան / Միխայիլ Դուդին / «Արմէնփրէս» / Հրաչիկ Սիմոնեան / Վահանգն Դաւթեան / Շահէն Մկրտչեան / Գէորգ Աղախանլեան / Ս. Վարդանեան / Հայկ Խաչատրեան / Ֆիոդոր Աբրամով / Հենրիկ Թումանեան / Սերգէյ Բարուզդին / Լէոնիդ Հուրուցց / Ազատ Եղիազարեան / Սերգէյ Մելիքոնեան / Պետոր Կոշել / Եղիշէ Սարգսեան / Անդրանիկ Հասրաթեան / Խ. Սաճարեան / Անահիտ Սահինեան / Արտաշէս Բալանթարեան / Պերճ Զէյթունցեան / Ռուզան Զաքարեան / Գագիկ Սարգսեան / Պարոյր Մուրադեան / Մաքսիմ Յովհաննիսեան / Աղասի Այվազեան / Ռափսա Պողոսեան / Հենրիկ Իգիթեան / Ցակոբ Ցակոբեան / Գէորգ Արգարեան / Կարէն Յովակիմեան / Ա. Այեքսանեան / Գէորգ Էմին / Վալերի Միրզոյեան / Ռազմիկ Գաւոյեան / Սիլվա Կապուտիկեան / Կարէն Սիմոնեան / Ռայա Խաչապետեան / Դաւիթ Գասպարեան / Էդուարդ Իսաբեկեան / Իգնատ Մամեան / Սամուէլ Շահմուրադեան / Մելիքսեթ Մելիքոնեան:

ԱՅԼ ՆԻՒԹԵՐ

ՆՇՄԱՐՆԵՐ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ղարաբաղին նուիրուած *«Բագին»*ի այս բացառիկին համար մեր պատրաստած ու մէկտեղած նիւթերը նախատեսուած էջերու սահմանէն անցին անցան, որով հարկադրուեցանք զանոնք վերապահել մեր յաջորդ թիւերուն:

Վերապահուած այդ շարքին մէջ ծաւալուն կամ համառօտ յօդուածներ ունին Պերճ Զէյթունցեան, Վարդգէս Պետրոսեան, Սերօ Խանզադեան, Գէորգ Գեւորգեան, Այվարդ Պետրոսեան, Բագրատ Ուլուբաբեան, Լեւոն Հախվերդեան, Մարօ Մարգարեան, Հայկ Խաչատրեան, Աղաւնի եւ ուրիշներ:

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (զոյգ թիւ)	1500 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին	9000 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (զոյգ թիւ)	80 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ԱՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturelle SHAGHZOYAN

Bourdj Hammoud — Liban

digitised by A.R.A.R.@